

ՀԱՅԿ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ГОСУДАРСТВЕННЫЙ ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ АРМЕНИИ

В. А. АБРАМЯН

РЕМЕСЛА В АРМЕНИИ

IV - XVIII В.В.

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1956

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

9(47.925)

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

Վ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

IV - XVIII դդ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1956

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

A III
592

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երկրի արհեստների ու նրանց զարգացման ընթացքի ուսումնասիրությունը շատ կարևոր տեղ է գրավում տրվյալ երկրի պատմության մեջ։

Մինչկապիտալիստական հասարակական ֆորմացիայում արհեստը, որպես մանր արտադրություն, նախորդել է արդյունաբերությանը։ Այդ՝ «արդյունաբերության արխայիկ ձևը» (ըստ Լենինի), որ հազարամյակների անցյալ ունի, միշտ հենվել է բացառապես ձեռքի աշխատանքի և պրիմիտիվ, հազիվ դիֆերենցված գործիքների վրա՝ նախապես բավարարելով հենց արտադրողի անմիջական կարիքները։ Հետզհետե մասնագիտացվելով, այն, դեռևս որպես լոկ տնային արհեստ, սկսել է բավարարել նաև տվյալ գյուղական համայնքի պահանջները, իսկ ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգերում, բաժանված լինելով երկրագործությունից (բայց չվերանալով որպես գյուղական տնտեսության մի օժանդակ ճյուղ), ավելի կատարելագործվելով ու մասնագիտացվելով, բավարարել է ոչ միայն արքունի պալատի, ստրկատիրոջ և ֆեոդալական (ոստանի) կամ կրոնական հաստատության պահանջները, այլև քաղաքային և արտաքին շուկաների պահանջներն ու պատվերները։

Այդ հասարակական կարգերում ապրանքային արտադրությունը չէր կարող ավելի զարգանալ և հասցնել կապիտալիստական հարաբերություններին, բայց արհեստների դերն այնքան խոշոր է եղել ստրկատիրական և ֆեոդալական կարգերում, որ առանց դրա ուսումնասիրության, տվյալ կարգերն ապրող երկրների պատմության ուսումնասիրությունը չի կարող լինել իսկական գիտական։

Հայաստանն անցել է հասարակական այդ բոլոր ֆորմացիաները և արհեստների զարգացման համար միշտ ունեցել է հումքի հարուստ բազա (հանքեր, անասնապահություն, երկրագործություն, անտառներ, քար, ներկատու նյութեր և այլն)։ Միաժամանակ Հայաստանը, հանդիսանալով Արևելքի և Արևմուտքի տնտեսական-կուլտուրական հարաբերությունների հանդիպման և քաղաքական բախումների ասպարեզ, գոնվելով տարանցիկ առևտրի նշանավոր ուղիների վրա, արհեստագործական արտադրանքով մեծ չափով մասնակից է եղել այդ առևտրին և իր համապատասխան բաժինն ունեցել նրա մեջ։

Հայաստանի տնտեսական կյանքի, հատկապես նրա արհեստագործության զարգացման արտադրանքի մասին պահպանվել են

ոչ միայն հայ և օտար գրավոր աղբյուրներ, այլև մեզ հասել են նյութական կուլտուրայի բազմաթիվ և բազմազան նմուշներ ու հայ արհեստավորների պահպանած զգալի արտադիցիաներ։

Հայտնի է, որ Հայաստանը հռչակված է եղել իր մետաղագործությամբ, ոսկերչությամբ (իրենց բազմաթիվ ճյուղերով), քարակոփությամբ, շինարարական արվեստով, կավագործությամբ, ներկերի արտադրությամբ և այլն։ Այս ամենի մասին, դրժբախտաբար, եղել են միայն մասնակի ուսումնասիրություններ, այս կամ այն առիթով առանձին ասույթներ, բայց որևէ ամբողջական ուսումնասիրություն դեռևս չունի հրապարակի վրա, որը ընդհանուր և ամփոփ պատկերացում տար արհեստների մասին։

Երկար ժամանակ է, ինչ մենք զբաղվում ենք Հայաստանի արհեստների և նրանց զարգացման պատմության հարցերով միայն, ու մեր համեստ ուժերը նվիրել ենք այդ խնդրի լուսաբանմանը, դերադասություն տալով ամենակարևոր և համեմատաբար քիչ ուսումնասիրված բնագավառներին՝ մետաղագործությանը և ոսկերչությանը։ Մյուս արհեստներին անդրադարձել ենք ո՛չ այնքան խորացրած ձևով՝ ո՛չ միայն այն պատճառով, որ նրանք երկրորդական տեղ են գրավել, որքան այն պատճառով, որ դրանք առավել չափով ուսումնասիրված են հատուկ մասնագետների կողմից, ինչպես՝ շինանյութը, կավագործությունը և այլն։

Մենք առանձին ընդարձակ գլուխ ենք նվիրել մետաղագործությանը։ Գրավոր աղբյուրների և նյութական փաստերի հիման վրա ցույց ենք տվել մետաղագործության առանձին ճյուղերի՝ դարբնության, պղնձագործության, զինագործության, ոսկերչության, արծաթագործության զարգացումը և նրանց հնագույն օջախները։ Հայ պատմիչները, սկսած Բուզանդից, նկարագրել են իշխող դասի ճոխ ու զեխ կյանքը, նրանց զինված ջոկատների զենքերի տեսակները, այն ճոխ զարդերը, որոնցով պճնվում էին իշխող դասի կանայք և աղամարդիկ։

Ֆեոդալիզմի սկզբնական շրջանում, IV դարից սկսած, երբ դեռ զարգացած չէին քաղաքները և ֆեոդալ կալվածատերը իր կալվածքի սահմաններից դրսեն դուրս չէր եկել, արհեստավորության արտադրանքը բավարարում էր ավելի նեղ շրջանի պահանջները։ Արհեստավորները մեծ մասամբ աշխատել են սիրող դասի պահանջի և պատվերի համաձայն։ IX դարի երկրորդ կիսից արտադրողական ուժերի աճը, առևտրի աշխուժացումը, քաղաքների ծաղկումը է՛լ ավելի են խորացնում աշխատանքի բաժանումն արհեստների ներսում և, հատկապես, մետաղագործության մեջ՝ բավարարելու համար թե՛ զարգացող քաղաքային դասի և թե՛, որոշ չափով, գյուղի պահանջները։

X—XIII դդ. և ապա հետագայում՝ XVII — XVIII դդ. հայ առևտրական դասի ներկայացուցիչները ո՛չ միայն պղնձյա կահկարասիքի, այլև պերճանքի առարկաների գործածության մեջ նույնիսկ աշխատում էին մրցել ֆեոդալների հետ։ Վանքերին առընթեր աշխատող ոսկերիչ արհեստավորները պատրաստում էին ամեն տեսակի եկեղեցական սպասներ ու զարդարանքներ։ Այս արհեստն այնքան առաջ գնաց, որ թանկագին մետաղներից պատրաստված պերճանքի առարկաները արտահանվում էին նաև Հայաստանից դուրս, դեպի Արաբական խալիֆայություն և Բյուզանդիա։ Նյութական մնացորդները հաստատում են, որ ոսկերչության մեջ կիրառվել են ութ տարբեր տեխնիկական պրոցեսներ = զարդարումներ՝ ձուլում, դրվագում, փորագրություն, սևադ, դրոշմում, թել և հատիկավոր զարդ (չիֆթիշիի), արծնակիտում (էմալ) և ինկրուստացիա։

Ինչպես մետաղագործության, այնպես էլ ոստայնանկության արհեստին նվիրված է առանձին գլուխ, որի մեջ ցույց ենք տալիս Հայաստանում եղած նյութական բազայի հիման վրա IV — XVIII դդ. ջուլհակության զարգացումը։ Հայ պատմիչներից, վիմական

արձանագրություններից և եվրոպացի ճանապարհորդների տվյալներից քաղած փաստերի հիման վրա ցույց ենք տվել, որ Հայաստանը գործվածքներ արտադրելու համար ուներ հարուստ նյութական բազա՝ բամբակ, մետաքս, վուշ, չհաշված բուրդը։

Հայաստանի կլիմայի բազմազանությունը նպաստավոր է եղել ո՛չ միայն անասնապահության, երկրագործության և այգեգործության զարգացման համար, այլև Հայաստանի դաշտավայրերում, հատկապես Արարատյան դաշտում, կուլտուրական բույսերի մշակման համար։ Գործվածքների արտադրության համար խոշոր նշանակություն ունեին և շատ կարևոր տեղ էին բռնում ներկերը։ Հույն, արաբ և հայ պատմիչները հատուկ նշել են Հայաստանի բյուրեղային և բուսական ու կենդանական ներկերի գոյությունը։ Դրանց մեջ արժեքավորը, որը շատ հարգված էր և որով ներկում էին արքայական պատմուճաններ— ծիրանիներ, թանկարժեք կտորներ, գորգեր, վարագույրներ, դա «որդան կարմիրն» էր, որին արաբ պատմիչներն անվանում էին «ղիրմիզ»։

Այդ բաժնում կանգ ենք առել նաև գործվածքների արտադրական գործիքների և տեխնոլոգիայի վրա։ Սա ամենադժվարին հարցերից է, որովհետև, ինչպես գիտենք, այդ առթիվ գրավոր հիշատակություններ չկան, իսկ նյութական մնացորդները չեն պահպանվել, քանի որ դաղգահների հիմնական մասերը, մանավանդ միջնադարում, եղել են փայտից։ Այդ հարցը լուսաբանելու համար դիմել ենք արձանագրությունների մեջ պահպանված եզակի, բայց արժեքավոր տրվյալներին, ապա մանրանկարչության մեջ եղած փաստերին և վերջապես Դվինի ու Անիի պեղումներից հայտնաբերված ոսկրե գործիքների մնացորդներին, որոնք օգտագործվել են գորգագործության և ասեղնագործության մեջ։ Մանրամասն կանգ ենք առել նաև գործվածքներ պատրաստելու եղանակի վրա՝ սկսած մանելու, ներկելու պրոցեսից մինչև պատրաստի կտոր ստանալը։ Ձեռագրերի կազմերի աստառների ու նյութական հավելագյուտ մնացորդների հիման վրա ցույց ենք տվել Հայաստանում արտադրվող կտորների տեսակները, նրանց վրայի զարդանախշերը և ապա՝ խոսել ենք այդ գործվածքներն արտադրող կենտրոնների մասին։ Առանձին բաժին, թեև համառոտակի, նվիրել ենք մնացած արհեստներին։ Աշխատել ենք պատմիչների ասույթները հիմնավորել նյութական կուլտուրայի տվյալներով։

Պատմական փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանի արհեստավորները, նրանց թվում նաև մետաղագործները և ոստայնանկները, երկրի անընդհատ ավերածությունների պատճառով, մոտ 3 դար (XIV — XVI) մեծ մասամբ արտագաղթել են երկրից, բայց և այնպես XVII դարի 30-ական թվականներից, ինչպես հաստատում են ոսկերչական արվեստի և գործվածքների նմուշները, վերոհիշյալ արհեստները նորից ապրում են զարգացման մի նոր շրջան։ Նյութական կուլտուրայի մնացորդները, պատմիչների և արձանագրությունների տվյալները բերել են մեզ այն համոզման, որ գլխավոր արհեստների վարպետները, հատկապես մետաղագործները և ջուլհակները, միջնադարում համախմբված են եղել առանձին եղբայրությունների՝ համքարության մեջ։ Թեև այդ ժամանակներից չեն մնացել համքարության կանոնագրերը, սակայն արհեստավորական թաղամասերի գոյությունը, սկսած X դարից և հատկապես XVIII — XIX դարերից մնացած դարբնության, ոսկերչության և այլ կանոնագրերը իրավունք են տալիս չկասկածելու միջնադարում նման կազմակերպությունների գոյության մասին։

Հիմնականում այս խնդիրներն ենք շոշափել տվյալ աշխատության մեջ, իսկ թե ինչ չափով է հաջողվել մեզ իրագործել մեր նպատակը, այդ ցույց կտա անաչառ քննադատությունը։

Եթե սկզբնաղբյուրներից բացի հայ ժողովրդի պատմության այս կամ այն հարցի շուրջը կան առանձին մենագրություններ,

ապա արհեստների ուսումնասիրության բնագավառում չունենք դեռևս ամբողջական աշխատություն, որի անհրաժեշտությունը շատ ավելի խիստ է զգացվում։

Միայն սովետական կարգերի հաստատումից հետո հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը պատշաճ հիմքերի վրա դրվեց։ Հայ ժողովրդի պատմությունը, նրա անցյալն ու ներկան ուսումնասիրելիս մարքսիստ պատմաբանները քննադատական մոտեցում հանդես բերեցին հայ մատենագրական և, ընդհանրապես, այդ ուղղությամբ գրված աշխատությունների նկատմամբ և ստեղծեցին առանձին մենագրություններ։ Գրավոր աղբյուրներին զուգահեռ խորացնելին ուսումնասիրության ենթարկվեցին նյութական կուլտուրայի հարուստ մնացորդները, որոնք ձեռք էին բերվում նորանոր պեղումների միջոցով՝ Սովետական Հայաստանի տերիտորիայում։

Սովետահայ պատմագրությունը, զինված մարքսիզմ-լենինիզմի թեորիայով, սկսեց լուսաբանել նաև հայ ժողովրդի պատմության տարբեր շրջանների տնտեսական հարցերը։

Անհրաժեշտ ենք համարում այստեղ հիշատակել այն բանասիրների ու պատմաբանների աշխատությունները, որոնք նվիրված են Հայաստանի տնտեսությանը, կուլտուրային և կենցաղին, որտեղ որոշ չափով շոշափվել են նաև միջնադարյան Հայաստանի քաղաքների, արհեստների և արտադրության հետ կապված հարցերը։

Այս տեսակետից հայագիտության մեջ զգալի աշխատանք է կատարել ակադ. Ն. Յա. Մառը, որ գիտական ասպարեզ է իջել XIX դարի վերջերին։

Մեզ այստեղ զբաղեցնում են նրա այն ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են հնագիտությանը, աղգագրությանը և մասամբ ֆոլկլորին, ուր շոշափված են արհեստների և արվեստների որոշ հարցերը։ Ն. Յա. Մառը դեռևս 1919 թ. իր առաջադրած թեզերում նշել է, որ հայագիտը չի կարող հենվել միայն բանասիրության վրա, որովհետև հնագիտությունն իր օժանդակ դիսցիպլինների և աղգագրությունը, ֆոլկլորի հետ միասին, պակաս չափով չպետք է հետաքրքրեն հայագետին, քան լեզվաբանությունը և գրականությունը[1]։

Մառն իր ուսումնասիրությունների ընթացքում ցույց է տվել, որ կովկասագիտական հետազոտությունների առաջադիմական և կարևոր սկզբունքներից մեկն էլ այն է, որ Կովկասի ժողովուրդների պատմության հարցերը չի կարելի քննության առնել ինքնամփոփ, առանց նկատի ունենալու Մերձավոր արևելյան երկրների պատմությունը։ Նա իր աշխատությունների մեջ նշել է նաև հայերի ու վրացիների դարավոր կուլտուրական կապերը, նրանց կուլտուր-պատմական հարցերում եղած ընդհանրությունները։

Ակադեմիկոս Մառը մնայուն մեծ աշխատանք է կատարել հատկապես նյութական կուլտուրայի մնացորդների հավաքման գործում։ Նրա երկարամյա պեղումներն Անիում եկան լրացնելու Բագրատունյաց շրջանի դրավոր պատմության պակասը. սակայն նա չկարողացավ Անիից ձեռք բերված այդ հարուստ պեղածո նյութերը ենթարկել ավելի մանրազնին ուսումնասիրության, որը, անշուշտ, նոր լուսաբանում կարող էր տալ Հայաստանի տնտեսական հարցերին։

Մառը ի վիճակի է եղել միայն կազմել այդ նյութերի համառոտագրությունը. նա իր «Անի» վերնագիրը կրող աշխատության մեջ, խոսելով Բագրատունիների դինաստիայի մասին, չի կարողացել նյութական մնացորդների հիման վրա պատմական էպոխան ավելի հստակ բնութագրել և ներքին դասակարգային պայքարի հարցերին տալ ճշգրիտ պատասխան։ Այդ պատճառով էլ Անիից ձեռք բերված արժեքավոր նյութերը դեռևս կարոտ են հատուկ ուսումնասիրության։

Օրինակ, նա՝ դերագնահատելով սելջուկ թյուրքերի դերը, բոլորովին հաշվի չառնելով նրանց զարգացման աստիճանը, նրանց է վե-

1 Տե՛ս Н. Марр, Кавказ и памятники его духовной культуры, Петроград, 1919, стр. 5.

բազրում Հայաստանի կուլտուրայի բարգավաճումը որոշ շրջանում։ Մենք գիտենք պատմությունից, որ սելջուկները ո՛չ թե նպաստել են Հայաստանի տնտեսության և կուլտուրայի զարգացմանը, այլ հետ են մղել այն, ուստի սխալ և անհիմն է Մառի այն կարծիքը, որ իբր թե սելջուկները նպաստեցին երկրի զարգացմանը. նա նույնիսկ գովերգում է Շադդադյան ցեղի տիրապետության շրջանը Հայաստանում[1]։ Մառը իր այդ սխալ տեսակետի մեջ այնքան հեռու գնաց, որ նույնիսկ բարերար ազդեցություն վերագրեց մոնղոլական աշխարհակալությանը, այնինչ, հանրածանոթ փաստ է, որ մոնղոլները իրենց հարկային քաղաքականությամբ ո՛չ միայն Ռուսաստանը, Անդրկովկասը, այլև Հայաստանը կործանման հասցրին։ Ահա այս սխալ դրույթից ելնելով, Մառը «Անի» աշխատության մեջ հայ ժողովրդի մասին ոչ իրավացիորեն գրում է. «Հայ ժողովուրդը սկսել է իր ազատությունը տեսնել օտար տիրապետության հաջողությունների և աշխատավոր բնակչության համար այն ժամանակ ավելի արդար նոր կարգեր հաստատելու մեջ»[2]։

Մառի վերոհիշյալ թեզի բովանդակությունը միանգամայն հակասում է իրականությանը. հակառակ այդ դրույթին, մոնղոլների և առհասարակ օտար տիրապետությունների ժամանակ հայ ժողովուրդը ո՛չ միայն ենթարկվել է ծանր շահագործման, այլև նրա ֆիզիկական գոյությունը դանվել է վտանգի տակ, ինչպես դա ակնհայտ կերպով տեսնում ենք XV դարում թուրքմենական ցեղերի, իսկ XVIII դարում պարսկա-օսմանյան տիրապետողների ժամանակ։

Չնայած վերոհիշյալ սխալներին, նրա աշխատություններում, հատկապես պատմության և հնագիտության հարցերում, կան շատ արժեքավոր և ուսանելի բաներ։

Հայ ժողովրդի պատմության ու հատկապես արվեստի և նյութական կուլտուրայի ուսումնասիրության գործում մեծ աշխատանք է կատարել ակադեմիկոս Հ. Օրբելին։ Նա՝ մասնակցելով Անիի սիստեմատիկ պեղումներին՝ դեռևս 1911 թվին գրել է «Անույ ավերակներ» վերնագիրը կրող աշխատությունը, որտեղ համառոտակի տվել է Անիի զարգացած շրջանի պատմությունը, այն հիմնավորելով պեղումներից հայտնաբերված նյութերով, իսկ Անիի պեղումներին նվիրված առանձին «Կատալոգ»-ում նույնպես համառոտակի բնութագրել է հայտնաբերված մետաղյա ու կավե իրերը և մետաքսյա գործվածքները։

Հայաստանի պատմության բազմաթիվ հարցեր լուսաբանվել են ակադեմիկոս Հ. Մանանդյանի կողմից. դրանց մեջ՝ Հայաստանի տնտեսությանը, քաղաքների զարգացմանը և առևտրական հարաբերություններին վերաբերող հարցերը գրավում են մեծ տեղ։ Ակադեմիկոս Մանանդյանի արժեքավոր և կապիտալ աշխատությունների շարքին է պատկանում 1930 թ. լույս տեսած «О торговле и городах Армении» մենագրությունը[1], որտեղ հեղինակն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել և վերլուծել է Հայաստանի քաղաքների զարգացումը և առևտրական հարաբերությունները՝ սկսած ադեմենյան շրջանից մինչև XV դարը։ Նա նույն հարցերին է նվիրել իր «Քաղաքները և առևտուրը X—XI դարերում» աշխատությունը, որի մեջ առաջ է քաշել քաղաքների և առևտրական հարաբերությունների հետ կապված նոր պրոբլեմներ։ Բացի այդ՝ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» արժեքավոր մենագրության մեջ առանձին գլուխ է նվիրել ֆեոդալիզմի վաղ շրջանի արհեստների զարգացման խնդրին, տալով մեր միջնադարյան պատմության տնտեսական հարցերի նոր լուսաբանում։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը, սակայն, այդ աշխատությունների մեջ ավելի շատ կանգ է առել քաղաքների ու առևտրական հարաբերությունների, քան թե արհեստների ու նրանց առանձին ճյուղերի զարգաց-

[1] Н. Я. Марр, Ани, Ереван, стр. 25, 32, 42.
[2] Նույն տեղում, стр. 59.

[1] Այս աշխատությունը, վերանայված ու հարըստացված նոր նյութերով, վերահրատարակվեց 1954 թ.։

ման վրա։ Բացի դրանից, հեղինակը հարկ եղածից ավելի շատ է գերագնահատել տարանցիկ առևտրի դերը Հայաստանի քաղաքների ու արհեստների զարգացման գործում։

Կովկասագիտության ասպարեզում մեծ արժեք են ներկայացնում Ս. Եղիազարովի գրած «Исследования по истории учреждений в Закавказьи» աշխատության երկրորդ մասը։ Նա առաջինն էր, որը զբաղվեց XVIII — XIX դդ. Կովկասի, հատկապես Թիֆլիսի, արհեստավորության և նրանց համքարային կազմակերպությունների ներքին հարցերով։ Այս մենագրության հեղինակը ավել է Անդրկովկասի համքարության ո՛չ միայն կառուցվածքի պատկերը, այլև նրանց ներքին կարգ ու կանոններին վերաբերող տեղեկությունների հանրագումարը։ Եղիազարովի այս աշխատության առավել արժեքավոր կողմերից մեկն էլ այն է, որ նա Կովկասի հարցերը քննելիս լրիվ չափով օգտագործել է եվրոպական քաղաքների համքարային կազմակերպությունների փաստերը։ Այս աշխատության մեջ հեղինակի հիմնական նպատակն է եղել մանրամասն ուսումնասիրության ենթարկել Թիֆլիսի համքարային կազմակերպություններին վերաբերող հարցերը, իսկ Հայաստանի մասին բավարարվել է միայն հիշատակելով Երևանի արհեստավորական թաղերից մեկը և մի քանի փաստաթղթեր բերելով Ախալցխայի ու Էրզրումի համքարության կանոնադրերից, որոնք պատկանում են XIX դարին։

Ընդ սմին պետք է հիշել նաև նույն Ս. Եղիազարովի «Исследования по истории армянского права публичного и частного». Выпуск I. Государственный, общественный, хозяйственный и юридический строй Армении в X—XIII вв. по надписям г. Ани и Ширака», (Киев, 1919) աշխատությունը։

XIX դարի Հայաստանի քաղաքներից՝ Երևանի համքարության մասին գրել է Երվանդ Շահազիզը իր «Հին Երևան» աշխատության մեջ, որտեղ շատ համառոտ ձևով թվել է այն արհեստները, որոնք XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին գոյություն են ունեցել Երևան քաղաքում։

Միջնադարյան Հայաստանի գործվածքների ու հատկապես հայ տարազի մասին Վենետիկում 1924 թվականին լույս է տեսել Ղ. Հացունու աշխատությունը՝ «Պատմություն հին հայ տարազին», որի մեջ հեղինակը բացառապես տալիս է տեղեկություններ վերցրած հայ պատմիչներից։ Այդ աշխատության մեջ հեղինակը նպատակ չի դրել խոսելու միջնադարյան Հայաստանում արտադրված գործվածքների տեսակների, տեխնիկայի և առհասարակ արհեստավորների ներքին փոխհարաբերության մասին։ Նա գլխավորապես նկարագրում է իշխող դասի՝ թագավորների, իշխանների և հոգևորականների հագուստները։ Աշխատավորության տարազի մասին քիչ տեղեկություններ կան։

Հայ կուլտուրայի վերաբերյալ արժեքավոր աշխատություն է հանդիսանում պրոֆ. Խ. Սամուելյանի Հայաստանի կուլտուրային նվիրված երեք հատորանոց աշխատությունը[1]։ Հեղինակը II հատորում առանձին գլուխ է նվիրել արհեստներին։ Չնայած այդ տեղեկությունները վերաբերում են հնագույն շրջանին, սակայն այդ կարևոր է այնքանով, որ մենք որոշակի պատկերացում ենք ունենում միջնադարից առաջ Հայկական բարձրավանդակում ապրող ժողովուրդների ու ցեղերի մոտ գոյություն ունեցող արհեստների և նրանց տեխնիկայի զարգացման ընթացքի մասին։

Միջնադարյան Հայաստանի քաղաքների ուսումնասիրության գործում արժեքավոր մենագրություն է պատմ. գիտ. թեկնածու Ասլան Շահնազարյանի «Դվին» վերնագիրը կրող աշխատությունը։

Հեղինակը հայ և արաբ պատմիչների հաղորդած փաստերի հիման վրա տվել է Դվին քաղաքի պատմությունը՝ սկզբից մինչև վերջը։ Այդ աշխատության մեջ՝ խոսելով Դվինի

1 Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, 2-րդ հատ., Երևան, 1941։

առևտրական հարաբերությունների զարգացման մասին, միաժամանակ արաբ աշխարհագիրների ասույթների հիման վրա հեղինակը հիշատակել է Դվինում արտադրվող բազմատեսակ գործվածքների, գորգերի մասին, սակայն նա հնարավորություն չի ունեցել օգտագործելու նյութական մնացորդները, որովհետև պեղումները Դվինում դեռ չէին սկսվել։

Դվինի և Անիի ջնարակած ու հախճապակյա կերամիկայի հարցով զբաղվել է Բ. Շելկովնիկովը, որը գրել է առանձին մենագրություններ։ Հեղինակին հաջողվել է մանրազնին ուսումնասիրությամբ պարզել Դվինի և Անիի տեղական կերամիկայի արտադրության տեխնիկայի հետ կապված հարցերը, ինչպես և որոշել է տարբեր երկրներից ներմուծված նյութերը, ելնելով այդ երկրների բնորոշ օրնամենտների ու տեխնիկայի սկզբունքից։

Միջնադարյան արհեստների և քաղաքային կյանքի զարգացման հարցերն ուսումնասիրելու գործում կարևոր և արժեքավոր աշխատություն է նաև Դվինի պեղումներին նվիրված, պեղումների ղեկավար դիտ. դ-ր Կ. Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատությունը։ Հեղինակը Դվինի սիստեմատիկ պեղումներից ձեռք բերած հարուստ նյութական մնացորդների հիման վրա ցույց է տվել տարբեր արհեստների զարգացումը և Դվինի կապը Հայաստանի քաղաքների ու այլ երկրների հետ։ Նա հատկապես կանգ է առել մետաղագործության (դարբնության, զինագործության, ոսկերչության) առանձին ճյուղերի վրա։ Հեղինակը պարզաբանել է նաև IX — XIII դարերում գործվածքների արտադրության հետ կապված առանձին ճյուղերը և մի շարք այլ արհեստների վիճակը։ Նա իր թեզերը միաժամանակ հիմնավորել է հայ և արաբ պատմիչների ասույթներով։

1949 թվականին լույս տեսավ պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանի «Հայկական բարձրաքանդակները IV—VII դարերում» ուսումնասիրությունը, որի մեջ հեղինակը քանդակների կապակցությամբ խոսում է նաև ոսկերչական արհեստին վերաբերող տերմինների մասին, որոնք գործածվել են մեր պատմիչների կողմից։

1951 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» № 12-ում լույս է տեսել պատմ. գիտ. թեկնածու Լ. Խաչիկյանի հոդվածը «1280 թվին Երզնկայում կազմակերպված եղբայրությունը» վերնագրով։ Այդ հոդվածում հեղինակը ձեռագրում եղած մի փաստի հիման վրա աշխատել է ապացուցել, որ XIII դարում Երզնկայում գոյություն են ունեցել համքարային կազմակերպություններ, որոնք միավորվել են եղբայրության սկզբունքով։

Անժխտելի փաստ է, որ համքարային կազմակերպությունները Հայաստանի քաղաքներում եղել են դեռևս Բագրատունիների ժամանակ[1]։

Միջնադարյան քաղաքներից Երզնկան դեռևս XII դարում նույնպես կարևոր կենտրոններից մեկն էր՝ իր գործվածքների արտադրությամբ և առևտրով։ Ինչ խոսք, որ ինչպես մյուս քաղաքներում, այնպես էլ այստեղ արհեստավորներն ընդգրկված են եղել առանձին համքարության մեջ։ Սակայն Լ. Խաչիկյանի հոդվածում հիշատակված փաստաթուղթը մեզ չի տալիս լրիվ գաղափար համքարային կազմակերպության ներքին փոխհարաբերության մասին։ 1280 թվականի փաստաթուղթն արհեստավորների ներքին կյանքի մասին քիչ բան է ասում մեզ։

---

[1] Այդ մասին մենք գրել ենք մեր «Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում IX—XIII դդ.» աշխատության մեջ, Երևան, 1946։

ԴԱՆԻԵԼ ԱՌԱՋԻՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Հայկական բարձրավանդակը III — IV դարերում ևս շարունակում էր մնալ կովախնձոր հետզհետե հզորացող Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև։ Դրանցից յուրաքանչյուրն իր ագրեսիվ քաղաքականությամբ ազդում էր Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքի վրա։

Հայաստանի անկախությունը և միասնականությունը պահպանելու բոլոր փորձերը մատնվեցին անհաջողության։

Տնտեսապես մասնատված, կենտրոնախույս ֆեոդալների ներքին պայքարից թուլացած երկրի բախտը որոշեցին երկու կատաղի մրցակից ուժեղ պետությունները և 387 թվականին Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև, միաժամանակ պահպանելով ոչ միայն ներքին լայն ինքնավարությունը, այլև երկու վասալ թագավորական իշխանությունները։

Հայ պատմիչների հաղորդումներից պարզվում է, որ Սասանյան Պարսկաստանի կողմից Հայաստանի նշանավոր կենտրոնները՝ Արտաշատը, Վաղարշապատը, Նախճավանը, Երվանդաշատը, Վանը, Տիգրանակերտը և այլ քաղաքներ խիստ տուժել և անգամ ավերման էին ենթարկվել։

V—VII դարերում մարզպանների միջոցով կառավարվող Արևելյան Հայաստանը լի էր արյունալի կռիվներով և ապստամբություններով։ Հայ նախարարների մեծ մասն իրենց անկախությունը և իրավունքները պահպանելու համար օգտագործեցին ժողովրդի դժգոհությունն ու ընդվզումները և պայքարի դուրս եկան Պարսկաստանի դեմ։ V դարի երկրորդ կեսին, հատկապես 451 թվականին և 481—84 թթ., հայ ժողովրդի հերոսական պայքարը Սասանյան բռնակալների ոտնձգությունների դեմ, իրենց կորցրած անկախությունը վերականգնելու համար, պսակվեց որոշ հաջողությամբ։ Մարզպանական Հայաստանը ձեռք բերեց ներքին անկախություն, որը նպաստեց երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացմանը։ Այս բարենպաստ պայմանները, որոշ ընդմիջումներով, շարունակվեցին մինչև VII դարի երկրորդ կեսը։ Տնտեսական զարգացումը ընթանում էր նախարարների կալվածքների հզորացման գծով։ Քա-

ղաքներից կարելի է նշել միայն Դվինը, մյուսները դարձել էին սովորական ավաններ։

Այդ վաղ միջնադարում, երբ արտադրական ուժերը դեռևս գտնվում էին համեմատաբար ցածր մակարդակի վրա, և իշխում էր բնատնտեսությունը, արհեստագործությունը չէր կարող ավելի խորացրած ձևով մասնագիտանալ։ Գյուղացիներն իրենց տերերին հայթայթում էին ո՛չ միայն գյուղատնտեսական մթերքներ, այլև նրանց բավարարում էին արհեստագործական արտադրանքներով։

Ֆ. Էնգելսը վաղ միջնադարի մասին գրում է. «Միջնադարյան հասարակության մեջ, մասնավորապես առաջին դարերում, արտադրությունը գլխավորապես սեփական սպառման համար էր։ Նա առավելապես բավարարում էր միայն արտադրողի ու նրա ընտանիքի կարիքները։ Իսկ այնտեղ, որտեղ ինչ գյուղում անձնական կախման հարաբերություններ գոյություն ունեին, արտադրությունը բավարարում էր նաև ֆեոդալի կարիքները։ Հետևապես այստեղ փոխանակություն գոյություն չուներ, և արդյունքներն ապրանքի բնույթ չէին ընդունում։ Գյուղացիական ընտանիքն ինքն էր արտադրում այն ամենը, ինչ որ պետք էր իրեն՝ գործիքները և հագուստը, ինչպես նաև կենսամթերքները։ Ծախելու համար արտադրել սկսեց նա միայն այն ժամանակ, երբ նա սեփական սպառումից և ֆեոդալ տիրոջ բնապարհակները վճարելուց հետո, սկսեց ավելցուկ արտադրել, հասարակական փոխանակության հանվածև վաճառքի համար նշանակված այդ ավելցուկն ապրանք էր դառնում»[1]։

Ինչպես հայտնի է, Մարքսը գյուղատնտեսական և արհեստագործական աշխատանքի միացումը համարում էր նատուրալ տնտեսության հատկանիշը, սակայն, իհարկե, այդ չէր բացառում առևտուրը. սպառումից մնացած ավելցուկը կարող էր հանվել վաճառքի և այդ ավելցուկը շրջանառության պրոցեսում կարող էր ապրանք դառնալ։ Ուստի կարող ենք ասել, որ քաղաքային արհեստավորները սկզբից և եր արտադրում էին փոխանակության համար. սակայն նրանք իրենց սեփական կարիքների մեծ մասը բավարարում էին իրենց արտադրությամբ. չնայած արհեստավորներն ունեին այդի, հողամաս և անասուններ, բայց և այնպես ապրանքների արտադրությունը դեռ նոր էր ծագում, ուստի դրա համար էլ տիրում էր սահմանափակ փոխանակություն և սահմանափակ շուկա։

Ինչպես Եվրոպայում, այնպես էլ պատմական Հայաստանում ազգարնակչության զբաղմունքը վաղ միջնադարում եղել է երկրագործությունը և անասնապահությունը, սակայն որպես օժանդակ աշխատանք, գյուղացին պարապել է նաև տնայնագործությամբ։ Հայաստանի շինականն ինքն էր պատրաստում գրեթե բոլոր տեսակի արտադրանքները իր սեփական կարիքների համար, և այդ աշխատանքը կատարում էր ո՛չ միայն տղամարդը, այլև կինը։ Վերջինիս անբաժան գործն է համարվել բրուտությունը, ջուլհակությունը, գորգագործությունը։ Հայ շինականը չէր կարող այդ սահմաններից դուրս գալ, որովհետև արտադրողական ուժերը այն աստիճանի չէին հասել, որ հնարավոր լիներ աշխատանքի լայն բաժանումը և դրանով պայմանավորվող արհեստի անջատումը գյուղատնտեսությունից, որպեսզի արհեստը դառնար տնտեսության եկամուտի հիմնական աղբյուրը։

Ամենահին արհեստները պատմական Հայաստանում եղել են կավագործությունը և դարբնությունը։ Պատրաստվել են կավե, երկաթե և պղնձե բոլոր տեսակի անհրաժեշտ իրեր, ինչպես, օրինակ, գյուղատնտեսական գործիքներ, սառը զենքեր, տնային կահ-կարասիք։ Վաղ միջնադարյան դարբնի աշխատանքն ընդգրկում էր մի շարք արհեստներ, որոնք հետագա դարերում բաժանվեցին մասնագիտական առանձին ճյուղերի։ Եթե սկզբ-

---

[1] Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, 1953, էջ 348։

նական շրջանում դարբինը կատարում էր դինադործի, պղնձագործի, պայտարի, կողպեքարարի գործ, ապա հետագա դարերում սրանցից յուրաքանչյուրն ուներ իր առանձին մասնագիտացած արհեստավորը։ Ֆեոդալիզմի վաղ շրջանում, երբ դեռ զարգացած չէին քաղաքները և կալվածատերն իր կալվածքի սահմաններից դրեթե դուրս չէր եկել ու տնտեսական թույլ հարաբերության մեջ էր իր հարևան ֆեոդալ իշխանի հետ, արհեստավորի արտադրանքը գնում էր ավելի նեղ շրջանի պահանջների բավարարման ուղղությամբ։ Արհեստավորները մեծ մասամբ ապրել են ֆեոդալների դղյակներին կամ վանքերին կից, աշխատել են ժամանակակից տիրող դասի պահանջների ու պատվերի համաձայն, նրանց անձնական կարիքների համար։

Հայտնի է, որ Հայաստանը միշտ էլ մասնակցել է արտաքին առևտրին, որի ընթացքում, անշուշտ, ժամանակակից ֆեոդալները հարևան և հեռավոր երկրներից ներմուծել են թանկարժեք իրեր, սակայն այս հանգամանքը չէր կարող բացատրել Հայաստանում սեփական արդյունագործության զարգացումը։ Անտարակույս, Հայաստանի ֆեոդալ իշխաններն իրենց կենցաղային իրերի ու զենքերի մեծագույն մասը տալիս էին պատրաստելու տեղական արհեստավորներին. ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Մենք ունենք բավականաչափ հարուստ տվյալներ հայ մատենագրական աղբյուրներում, որոնք ոչ միայն հիշատակում են տեղական արհեստավորների գոյությունը, այլև խոսում են նրանց արտադրանքի մասին։ Օրինակ՝ V դարի պատմիչ Ղ. Փարպեցին Արարատյան դաշտի նկարագրության մեջ ասում է. «... գանձել անձանց շահս և զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովքն, զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձսն յոսկէհուռս պաճուճեալս ընդելուզանեն»[1]։

Մ. Խորենացին, խոսելով Հայաստանում Տամիրամ թագուհու կատարած շինարարության մասին, ասում է. «Աստ իմն ակնակատույց լեալ այրասիրտն այն և կաթոռն Տամիրամ, հրաման տայ բիւրոց և երկու հազար արանց անարուեստից գործաւորաց յԱսորեստանեաց և յայլոց իշխանեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենեքին կատարեալք իցեն ի յարուեստագիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին»[2]։

Հայ պատմիչների վերոհիշյալ վկայություններից պարզվում է, որ Հայաստանում եղել են մեծ քանակությամբ արհեստավորներ, որոնք աշխատել են գլխավորապես իրենց իշխանների կարիքները բավարարելու համար։ Անիի և Դվինի պեղումներից դուրս եկած իրերի զգալի մասը թե՛ տեխնիկայի և թե արվեստի տեսակետից միանգամայն հաստատում է այդ վկայությունները. ուստի կասկած չի կարող լինել, որ այդ իրերի մեծ մասը հանդես է եկել որպես հատուկ պատվերի արդյունք և բավարարել սոցիալական առանձին խավերի կարիքները։

Նման իրերով հարուստ էին նաև Սասանյան Պարսկաստանն ու Բյուզանդիան, որոնց հետ Հայաստանը միշտ էլ ունեցել է առևտրական և կուլտուրական սերտ հարաբերություններ։ Բնական է, որ Հայաստանի և իր հարևան այդ երկրների միջև պետք է, որ գոյություն ունենար ո՛չ միայն պատրաստի ապրանքների, այլև հում նյութերի փոխանակություն, այս հանգամանքը ավելի էր նպաստում երկրի ներքին արտադրության զարգացմանը։ Հայաստանում գտնված այդ ժամանակաշրջանի արտադրանքները իրենց արվեստով շատ նման են նույն ժամանակների

[1] Ղ. Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ, 21։

[2] Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 56։

Պարսկաստանի համանման իրերին, բացառությամբ որոշ առանձնահատկությունների։ Օրինակ՝ Անիում գտնված մի շարք իրեր, որոնց թվում նաև բրոնզե և պղնձե մոմակալները, իրենց տեխնիկայով ու արվեստով նման են Պարսկաստանում գտնվածներին։ Լենինգրադի Պետական Էրմիտաժի Արևելյան բաժնում ցուցադրված Սասանյան արծաթե ափսեները ցույց են տալիս արտադրության տեխնիկայի բնույթը և հասարակական այս կամ այն խավին պատկանելը։ Նյութական կուլտուրայի այդ մնացորդները արտացոլում են թագավորների և ընդհանրապես ազնվական դասի կենցաղն ու զբաղմունքը, իշխող դասի ներքին հարաբերությունները։ Այդ իրերի մեջ ամենաբնորոշը ազնվական դասի որսորդական և առհասարակ զինվորական կյանքն արտացոլող ափսեներն են, ինչպես, օրինակ, պարսից Խոսրով թագավորի զինավարժությունը, Շապուհ Բ-ի որսի տեսարանը և այլն։ Մի այլ ափսեի վրա քանդակված է Կավատի որդի Խոսրով թագավորը, շրջապատված չորս սատրապներով, որ ցույց է տալիս այդ ժամանակվա Իրանի վարչական կառուցվածքը և նրա զինվորական ուժի չորս հատվածները։ Ավելի հետաքրքրական է Շապուհ Գ-ի որսի տեսարանն արտահայտող մի այլ ափսե։ Թագավորների և ֆեոդալների անմիջապես գործածության այդ իրերը պատրաստված են հատուկ պատվերով և, անշուշտ, այնպիսի արհեստավորների ձեռքով, որոնք աշխատում էին արքունիքին կից և միայն վերջինիս կարիքների համար։ Էրմիտաժի հիշված ափսեներից մեկի, Շապուհ Գ-ի որսի տեսարանին հար և նման, սակայն ավելի կոպիտ արվեստով, մի քանդակ ունենք քարի վրա, որը գտնված է Զվարթնոցի ավերակներում և, որն ագուցված է եղել պատի մեջ։ Այդ բարելյեֆը պատրաստված էր Հայաստանում և, անշուշտ, հայ վարպետների ձեռքով։ Այդ հին բեկորը օգտագործված է Զվարթնոցի կառուցման ժամանակ և ոչ մի կապ չունի շենքի ընդհանուր կառուցողական արվեստի հետ։ Բարելյեֆի վրա ևս զգեստի առաջին մասը շրջանաձև է ու երկար, ինչպես ափսեի վրա քանդակված Շապուհ Գ-ի տարազը, որը գործածական է եղել IV—VI դդ. Պարսկաստանում, Բերևս և Հայաստանում։ Այս մանրամասնությունը բացատրվում է երկու հարևան երկրների կուլտուրական մոտիկությամբ և փոխազդեցությամբ։ Զվարթնոցում հայտնաբերված այդ բարելյեֆը պատահական չէ. Արթիկի շրջանում ևս հայտնաբերվել է մի այլ բարելյեֆ, որի վերևի մասը կոտրված է [1]։

Հայաստանի քաղաքները, վաղ միջնադարից սկսած, ինչպես հիշատակել են հայ և օտար պատմիչները, խոշոր դեր են խաղացել առևտրի մեջ։ Այդ քաղաքները ընկած էին տրանզիտ առևտրի ճանապարհների վրա։ Այդ առևտրական կենտրոնների մասին մանրամասն գրել է ակադեմիկոս Հ. Մանանդյանը [2]։ Հռոմեական ու պարթևական շրջանում Հայաստանի վրայով էր կատարվում Սևծովյան երկրների առևտուրը։ Բյուզանդական ու Սասանյան շրջանում տարանցիկ առևտրական գծի վրա էր ընկած Արտաշատը։ Այդ մասին հիշվում է նաև Հուստինիանոսի կոդեքսում։

Մարզպանական շրջանում նոր ծաղկող Դվինը խոշոր դեր է խաղացել առևտրի մեջ։ Այս քաղաքներով փոխադրվում էին նաև չինական մետաքսը և զանազան անուշահոտ համեմունքներ։ Դվինի առևտրականները աշխույժ առևտուր էին կատարում Հնդկաստանի, Վրաստանի և հատկապես Բյուզանդիոնի (Կոստանդնուպոլսի) հետ։

VII դարի 40-ական թվականներից մինչև VIII դարի սկիզբը Հայաստանը դառնում է արաբական հրոսակախմբերի ամենավայրագ ու ավերիչ պատերազմների թատերաբեմ։ Միայն VIII դարի սկզբին Հայաստանը վերջնականապես անցնում է խալիֆաթի տիրապետության տակ։

---

[1] Երևանի Պետական պատմական թանգարան։

[2] Տես Я. А. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1954.

Արաբական խալիֆայությունը վերջնականապես իր դիրքերն ամրացնելով Արևելքում՝ Օմայանների դինաստիայի (661—750 թթ.) սկզբնական շրջանում Հայաստանում վարում էր համեմատաբար ավելի մեղմ քաղաքականություն։

Հայաստանի իշխան Թեոդորոս Ռշտունուն հաջողվում է 651 թ. հաշտության պայմանագիր կնքել Մուավիայի հետ և համեմատաբար մեղմ պայմաններով ընդունել վասալական կախումը խալիֆայից։ Սակայն խալիֆայությունը, ինչպես իրեն հպատակ մյուս երկրներում, այնպես էլ ֆեոդալական Հայաստանում շատ շուտով սկսում է փոխել իր քաղաքականությունը. ծանրանում է արաբական լուծը, որն ավելի դաժան է դառնում հատկապես Աբբասյանների տիրապետության շրջանում (750 — 856 թթ.)։ Այդ ժամանակից երկիրը տնտեսապես ավելի է քայքայվում, ծանրանում են հարկերը, թուլանում են առևտրական հարաբերությունները, կենտրոնական քաղաքները տարանցիկ առևտրի մեջ կորցնում են իրենց դերը և դառնում ռազմա-վարչական կենտրոններ։ Արաբական խալիֆայությունը իր այս միջոցառումներով ցանկանում էր ո՛չ միայն տնտեսապես քայքայել երկիրը, այլև վարում էր Հայաստանի ռազմական ուժի ոչնչացման քաղաքականություն։ Այդ նպատակին հասնելու համար արաբական կառավարիչները ոչնչացնում են շատ նախարարական տներ, փոխարինելով նրանց արաբ հողատեր էմիրներով ու առևտրականներով։ Վերջիններիս բերում ու բնակեցնում են Հայաստանի խոշոր ու վաճառաշահ քաղաքներում և արդավանդ վայրերում՝ Դվինում, Նախճավանում, Խլաթում և այլն, որտեղ առաջացան արաբական էմիրություններ։

Հարուն-ալ-Ռաշիդի մահվանից հետո արաբական խալիֆայությունը տնտեսական և քաղաքական տեսակետից ապրում էր իր մայրամուտը։ Ստեղծված ֆինանսական ճգնաժամն անդրադարձել էր բանակի վրա և թուլացման ու քայքայման հասցրել նրան։

Բյուզանդիայի հզորացումը Արևմուտքում և Բահիրյանների ու Սամանյանների իշխանությունների առաջացումը Միջին Ասիայում առաջ են բերում տնտեսական վերելք և մի ջաղգային տարանցիկ առևտրի աշխուժացում. Հայաստանը նորից ներգրավվում է միջազգային կարավանային առևտրում։

Սկսվում է տնտեսական վերելք, որի հետևանքով տնտեսապես և քաղաքականապես ուժեղանում են մի շարք հայ նախարարական տներ։ Ուժեղանում է հայ ժողովրդի ազատագրական պայքարը խալիֆայության դեմ։

Ներքին գահակալական կռիվները խալիֆայության կենտրոնում, հպատակ երկրների ազատագրական ապստամբությունները, որոնցից ամենագլխավորն էին Բաբեկի առաջնորդությամբ (816—837 թթ.) կազմակերպված ապստամբությունը և Հայաստանում 851—855 թթ. տեղի ունեցած համաժողովրդական ապստամբությունները, մյուս կողմից՝ Բյուզանդիայի ռազմական ու քաղաքական առաջխաղացումը դեպի Արևելք պատճառ դարձան խալիֆայության թուլացման և Հայաստանում առանձին նախարարական տների ուժեղացման։

IX դարի երկրորդ կեսից, երբ արդեն թուլացել ու քայքայման էր հասել արաբական խալիֆայությունը, Հայաստանում և նրա սահմանակից երկրներում ուժեղացել էին մի կողմից՝ առանձին արաբ էմիրները, իսկ մյուս կողմից՝ հայ իշխանական մի քանի տներ. սրանց մեջ աչքի էին ընկնում Բագրատունիները, Արծրունիները և Սյունյաց իշխանությունները, որոնք՝ ձեռք բերելով խոշոր կալվածքներ՝ ձգտում էին դուրս գալ արաբական տիրապետությունից։

Հայաստանի իշխանական այդ տներից ավելի ծանրակշիռ տեղ էր գրավում Բագրատունյաց իշխանությունը, որ սկզբից և եթ ընդհանուր լեզու գտավ արաբ նվաճողների հետ և դարձավ նախարարական Հայաստանի ամենաազդեցիկ ֆեոդալական տունն։ Բագրատունիները, Կոգովիտ գավառի երբեմնի տերերը, հետզհետե ուժեղանալով, հաս-

տատվում էին Հայաստանի միջնաշխարհում և իրենց կալվածքներն ընդարձակում ի հաշիվ էմիրությունների և հայ իշխանների (հատկապես Մամիկոնյանների և Կամսարականների), որոնց կալվածքները ձեռք են բերում զենքի ուժով, կամ գնման ճանապարհով:

817—837 թթ. Բաբեկի դխավորած Ատրպատականի ու հարևան երկրների և Հայաստանի 851—855 թթ. տեղի ունեցած համաժողովրդական ապստամբությունները արաբների կողմից ճնշվում են մեծ դաժանությամբ, սակայն վերջիվերջո խալիֆայությունը այնքան էր ջլատվել, որ հարկադրված է լինում զիջել:

Աշոտ Բագրատունին, Հայաստանի կառավարիչ նշանակվելուց հետո, կարողանում է իր շուրջը համախմբել երկրի ռազմական ուժերը, ապա 885 թ. հռչակվում է Հայաստանի թագավոր: Սրանով Հայաստանի մեծ մասը ձեռք է բերում փաստական անկախություն: Աշոտ թագավորի որդի Սմբատ Ա-ը հետամուտ է լինում իր պետության սահմաններն ընդարձակելուն, 892—893 թթ. նա դրավում է նաև Դվին քաղաքը:

Երկարատև պատերազմներից հոգնած և ավերված երկրին անհրաժեշտ էր խաղաղություն, որը հաստատվեց Աբասի (928—952) և նրա հաջորդների օրով: Մոտ հարյուր տարի Հայաստանի բնակչությունը, զերծ մնալով կռիվներից, հնարավորություն ունեցավ իր ուշադրությունը նվիրել երկրի ներքին բարեկարգությանը: Երկիրը ապրում է մինչ այդ չտեսնված տնտեսական վերելք: Անիի թագավորության քաղաքական հզորությունը իր գագաթնակետին հասավ Գագիկ Ա-ի (990—1020) ժամանակ:

IX—XI դարերում Հայաստանում անցնում էին տարանցիկ առևտրի մեծ ճանապարհներ: Սրանցից առաջինը, որ նոր մագիստրալ էր և ուներ խոշոր տնտեսական նշանակություն, արաբական խալիֆայության կենտրոնական քաղաքներից Հայաստանի վրայով անցնում էր դեպի Տրապիզոն: Այդ առևտրական գիծը գալիս էր Հերից (Խոյից)՝ Նախճավան — Դվին — Անի — Կարս — Արծն և ապա Տրապիզոնի վրայով կապվում Սևծովյան երկրների հետ: Այս առևտրական ճանապարհը Դվինի մոտ բաժանվում էր երկու ճյուղի, որոնցից մեկը տանում էր դեպի հյուսիս-արևելք՝ Պարտավ (Բարդա—Ադրբ. ՍՍՌ) քաղաքը, իսկ մյուս գիծը՝ դեպի Բրիլիսի: Այն գիծը, որը Դվինը կապում էր Պարտավի հետ, անցնում էր երկու ուղղությամբ՝ Դվինից դեպի Բերդկունք (այժմյան Սևանի շրջանում գտնվող Աղկալա ամրոցի և Հայրավանքի կենտրոնում եղած Աղատ քաղաքի տեղը) և ապա Կաղանկատույք գյուղի մոտով՝ դեպի Պարտավ: Իսկ մյուս գիծը Դվինից դեպի Պարտավ անցնում էր Նորաշենով և Արփա գետի վրայով:

Կարևոր նշանակություն ուներ նաև Դվինից Բրիլիսի տանող առևտրական գիծը, որն այժմյան Լենինականի մոտ բաժանվում էր երեք ճյուղի:

Առաջին ճյուղն անցնում էր Ջորագետ (այժմ Դեբեդ) գետի հովտով, երկրորդը՝ Կալինինոյի, իսկ երրորդը՝ Ախալքալաքի և Բորժոմիի վրայով դեպի Բրիլիսի[1]:

Բացի հյուսիսային այդ մագիստրալից, IX—XI դարերում կարևոր նշանակություն ուներ նաև հարավային գիծը, որն անցնում էր Հերից (Խոյից) դեպի Վան և Բերկրի, ապա Վանա լճի հյուսիսային ափերով Արճեշի, Խլաթի և Բաղեշի (Բիթլիսի) վրայով ձգվում էր դեպի հարավ և միանում Մուշարկինին ու Ամիդին. այստեղից գիծը բաժանվում էր մի քանի ճյուղերի:

Հայ մատենագրական աղբյուրները ցույց են տալիս, որ այս շրջանում Հայաստանի հյուսիսային մասում գտնվող վերոհիշյալ քաղաքները՝ ներգրավվելով արտաքին առևտրի մեջ, կարողանում են ստեղծել իրենց համար միաժամանակ փոխանակության ներքին շուկա, որի հիման վրա կենտրոնական քաղաքներում արագ թափով զարգանում են

---

1 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 183—202:

թե՛ առևտուրը և թե՛ արհեստները: Անտարակույս, այս ամենը խիստ նպաստել է նաև արհեստների ճյուղավորմանն ու զարգացմանը:

Կ. Մարքսը, խոսելով միջնադարյան արհեստների մասին, գրում է. «Հողի սեփականությունն անհրաժեշտ է արտադրության այդ եղանակի լրիվ զարգացման համար, ինչպես գործիքների սեփականությունն արհեստագործական արտադրության զարգացման համար»[1]:

Հայաստանում ևս արհեստավորները տեր էին իրենց արտադրության միջոցներին:

Սեփ երկրագործ շինականը գյուղատնտեսական աշխատանքի հետ զուգընթաց արհեստագործական արտադրանքով իր անմիջական կարիքներն էր բավարարում, իսկ ֆեոդալական դղյակին կից արհեստավորները բավարարում էին իրենց տերերի պահանջները և աշխատում նրանց պատվերով, ապա արհեստավորների մի որոշ խավ էլ կապված էր վանքային հաստատություններ հետ, աշխատում էր այդ վանքերին կից գոյություն ունեցող «գործատներում», արտադրում էր նույնպես պատվերով և բավարարում վանքերի ու նրանց միաբանությունների պահանջները: IX դարի երկրորդ կեսից հետո երկրի տնտեսական կյանքի զարգացման հետևանքով արհեստը մասնագիտանալով, անջատվում է գյուղատնտեսությունից և կենտրոնանում նոր զարգացող քաղաքներում: Հանդես են գալիս նորանոր քաղաքներ ու ավաններ: Նախկին ֆեոդալական դղյակները, առևտրական հանգույցները և ռազմական նշանակություն ունեցող վայրերն աստիճանաբար փոխում են իրենց բնույթը կենտրոնացնելով իրենց շուրջը մեծ չափերի հասնող «անաշխատ» տարրեր, մանավանդ գյուղական քայքայվող տնտեսություններից, որոնք մեզ հայտնի են ռամիկ անունով: Այդ բազմամարդ քաղաքներում կենտրոնացած բազմատեսակ խավերի պահանջները բավարարելու համար արհեստավորությունը դուրս էր հանում իր արտադրանքը և նպաստում ներքին շուկայի զարգացմանը:

Ինչպես հայտնի է, ապրանքային արտադրությունը գոյություն է ունեցել շատ վաղուց՝ ինչպես ստրկատիրական, այնպես էլ ֆեոդալական ֆորմացիաներում:

Սակայն այդ ժամանակներում ապրանքային արտադրությունը և ապրանքային շրջանառությունը, մանավանդ ֆեոդալական հասարակարգի վաղ և զարգացած շրջանում, գտնվում էին այնպիսի նեղ շրջանակներում, որ չէին կարող տիրապետող կշիռ ունենալ: Այստեղ արտադրանքի գերակշռող մասսան սեփական սպառման էր դնում, ուստի չէր կարող ապրանք դառնալ. «...Ուրեմն և արտադրության հասարակական պրոցեսը յուր ամբողջ լայնությամբ ու խորությամբ դեռ շատ քիչ է ենթարկվում փոխանակարժեքի»[1]:

Ապրանքային արտադրությունը սկսում է զարգանալ միայն ֆեոդալիզմի քայքայման ժամանակներից, բայց և այնպես ֆեոդալիզմի պայմաններում, հատկապես Առաջավոր Ասիայի՝ Արևմուտքի և Արևելքի միջև տարվող տարաբնույթ կարավանային առևտրի պայմաններում, նպաստում էր ապրանքային շրջանառության, առևտրական հարաբերությունների զարգացմանը և ներքին շուկայի լայնացմանը: Այս շրջանում արհեստներով շարունակում էին զբաղվել նաև գյուղի շինականները, պահպանվում էին և ֆեոդալական դղյակների, մանավանդ խոշոր վանքերին կից արհեստանոցները. սակայն պետք է նշել, որ դրանց արտադրանքը այլևս չէր կարող բավարարել աճող պահանջները: Քաղաքի բնակչությունը հետզհետե աճում էր ի հաշիվ գյուղում տնտեսապես քայքայվող տարրերի, որոնց մի ղգալի մասը պետք է խտացներ արհեստավորների շարքերը:

Քաղաքների աճման հետ մեծանում էր և գյուղատնտեսական մթերքների պահանջը, իսկ գյուղերում՝ արդյունագործական ապ-

---

[1] К. Маркс, Капитал, т. III, ч. II, 1928, стр. 280.

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1933 թ., էջ 135:

բանքների պահանջը, որը նպաստում էր ապրանքափոխանակությանը, առևտրի զարգացմանը։

Հայաստանում գոյություն ունեցող հարուստ մետաղահանքերի բազայի վրա ավելի մեծ չափով էին զարգանում մետաղագործության մի շարք ճյուղերը, ինչպես՝ դարբնությունը, զինագործությունը, պայտարությունը, փականագործությունը, ոսկերչությունը (արծաթագործության հետ)։

Միջնադարյան Հայաստանի քաղաքների կարևոր և զարգացած արհեստներից մեկը՝ կավագործությունը X—XIV դդ. աչքի էր ընկնում իր ինքնուրույնությամբ և բազմազան արտադրությամբ, որ հաստատվում է հատկապես Դվինի և Անիի պեղումներից ստացած հարուստ նյութերով։ Հայաստանի քաղաքների բրուտանոցներում արտադրվել են ո՛չ միայն հասարակ կավանոթներ, այլև բարձր արվեստով ու տեխնիկայով պատրաստված, ջնարակած և հախճապակյա անոթներ, որոնց զգալի մասը հանդիսացել է նաև վաճառքի ապրանք։

Արհեստների մեջ կարևոր տեղ էին բրոնզում և գործվածքները, որոնց համար երկրում նույնպես կար հում նյութի հարուստ բազա։ Ֆեոդալիզմի ծաղկման և վերելքի շրջանում (X—XIII դդ), մի կողմից՝ իշխող և շահագործող դասերի շռայլ ու զեխ կյանքը, մյուս կողմից՝ նոր զարգացող քաղաքային դասը պետք է որ պահանջ առաջադրեին, որպեսզի հյուսվածքների դործը է՛լ ավելի զարգանա և արտադրվեն բազմատեսակ զարդանախշերով կտորներ, դորդեր, կապերտոններ և այլն։ Ջուլհակ կամ դորգագործ արհեստավորները պետք է բավարարեին նաև հոգևորականների — վանքերի պահանջներն ու ռազմիկների կարիքները։

Հայաստանում արտադրվող գործվածքների որոշ մասը, մանավանդ դորգերը, մինչև X դ. որպես «նվեր» ուղարկվում էին արաբական խալիֆաթ և բյուզանդական կայսրություն։

Գործվածքների հետ սերտորեն կապված էր ներկերի արտադրությունը։ Ինչպես հայտնի է գրավոր շատ փաստերից, Հայաստանում արտադրված ամենակարևոր ու արժեքավոր ներկը՝ «որդան կարմիրը» վաղուց արտահանվում էր Արևելքի և Արևմուտքի անգամ հեռավոր երկրները։

Զարգացած և տարածված արհեստների թվին էր պատկանում հյուսնությունը, որ պատրաստում էր գյուղատնտեսական իրեր, կահույքներ և շենքերի փայտյա մասեր։ Ավելի հարդի ու զարդացած էր քարակոփությունը և որմնադրությունը, հատկապես IX—XVIII դարերում։ Քարտաշ և որմնադիր վարպետների միջոցով էին կառուցվում աշխարհիկ և եկեղեցական շենքերը, բերդերը, հասարակական-պետական զանազան կառույցները, հյուրատները, կամուրջները և անգամ ժայռափոր եկեղեցիներ, որոնց լավագույն նմուշները պահպանվել են մինչև օրս Կոտայքում, Վայոց ձորում։

Փորագիր արվեստագետների ձեռքով մշակված են հայ ժողովրդի կուլտուրայի մեջ զգալի տեղ գրավող խաչքարերը, փայտյա խոյակները, դռներն ու գրքակալները։ Դրանք զարդարված են բազմազան չկրկնվող նուրբ օրնամենտներով, որ հատուկ է հայկական արվեստին։

Վերոհիշյալ արհեստները զարգացած էին հատկապես Հայաստանի հետևյալ քաղաքներում՝ Դվինում, Անիում, Կարսում, Արծնում, Կարինում, Վանում, Խլաթում, Երզնկայում, ուստի անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել այդ քաղաքներից մի քանիսի ներքին կյանքի մասին։

Հայաստանի հնագույն քաղաքներից մեկը, Դվինը, որը հիմնադրվել է IV դարում, Արտաշատի անկումից հետո, մարզպանական, արաբական և հետագայում Բագրատունիների շրջանում դառնում է առևտրական, վարչական, տնտեսական և կուլտուրական խոշոր կենտրոն։ Դվինով էին անցնում չինական մետաքսը, թանկարժեք կտորները, անուշահոտ յուղերը և համեմունքները։

VI դարի բյուզանդացի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու վկայությամբ «Դվինը շատ բարեբեր վայր է, ունի առողջարար օդ, լավ ջուր, Դվինից մինչև Բեոդոսիոպոլիս (Կարին) 8 օրվա ճանապարհ է, այնտեղ շատ հարմար է ձիով գնալու համար, բազմամարդ գյուղերն ընկած են իրար կողքի և ղբաղվում են առևտրով. այստեղ են գալիս Հնդկաստանից, Հարևան Վրաստանից, Պարսից և մինչև անգամ հոռոմներին հպատակ համարյա բոլոր ժողովուրդները այնտեղ էին բերում ապրանքներ, որոնցով նրանք առևտուր էին անում»[1]:

Դվինն ունեցել է մեծ թվով բնակչություն, որ երևում է պատմիչների տված տեղեկություններից: VII դարի պատմիչ Սեբեոսը և այլ պատմիչներ հիշում են արաբների կողմից 640 թ. Դվինից 35000 հոգի գերի տանելու և 12 հազար հոգի սպանելու մասին: «Եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին... Եւ խաղացուցին զբազմութիւն գերւոյն լե (35) հազար հոգի»[2]: Այդ թվականների մասին հիշատակում է նաև XIII դարի պատմիչ Վ. Բարձրբերդցին[3]:

Ճիշտ է, հաճախ վտանգի ժամանակ շրջակայքի բնակչությունը ապաստան էր գտնում պարսպապատ քաղաքներում և բերդերում, սակայն Դվինի ավերակների այժմյան մեծ տարածությունը ցույց է տալիս, որ, իրոք, քաղաքն ունեցել է հոծ բնակչություն: Ս. Լաստիվերտցին, պատմելով սելջուկ թուրքերի արշավանքների մասին, գրում է. «Բազում և անհամար հոգիք ի վերագոյն գաւառացն, վասն տեղեացն ամրութեան՝ անդր ժողովեալ էին»[4]:

Նույնը ասում է նաև Կիրակոս Գանձակեցին Կարին քաղաքը գրավելու առթիվ. «Եւ զի յոյժ բազում ամբոխ էր ի ժամանակին յայնմիկ, քաղաքն, լցեալ քրիստոնէիւք և տաճկօք, այլև ամենայն գաւառն անդր հաւաքեալ էր»[1]:

Հետագայում, խալիֆայության հաստատումից հետո, մանավանդ Աբասյանների դինաստիայի ժամանակ, շնորհիվ նրանց վարած դաժան քաղաքականության, Հայաստանի շատ երկրամասերի, մասնավորապես Դվին քաղաքի, վիճակը դառնում է անտանելի: Ծանր հարկերի պատճառով ժողովրդի կրած տանջանքները, արաբական կայազորների ծախքերը, տիրապետողի ծանր լուծը, որը տևեց մոտ երկու և կես դար, պատճառ դարձան մի շարք համաժողովրդական բնույթ կրող ապստամբությունների: Անշուշտ, այդպիսի պայմաններում Դվինը, ինչպես նաև Հայաստանի մյուս քաղաքները չէին կարող այլևս առաջ գնալ և աճել, նրանք քայքայվում և դադարում են տնտեսական խոշոր դեր կատարելուց, դառնալով սոսկ ռեզիդենցիա կամ զորակայան՝ արաբական զորքերի համար: Միայն X դարի երկրորդ կիսից, Բագրատունիների ժամանակ, Հայաստանում սկսում է խաղաղ և հանգիստ կյանք տիրել: Դվինը, ընկած լինելով հյուսիսային առևտրական ճանապարհի հանգույցում, որոշ չափով վերականգնում է իր դրությունը, ուր նույնիսկ զարգանում է տեղական արդյունաբերությունը և դառնում արհեստավորական ու առևտրական կենտրոններից մեկը: Քաղաքը ո՛չ միայն մասնակից է դառնում տարանցիկ առևտրին, այլև իր համար ստեղծում է ներքին շուկա, որ առիթ է տվել հայ պատմիչներին նրան անվանել «շահաստան», «մայրաքաղաք», «մեծ քաղաք»:

X դարի պատմիչ Թովմա Արծրունին, երբ նկարագրում է Դվինը երկրաշարժից առաջ, հիշատակում է նրա մեծության և առևտրական կենտրոն լինելու մասին: «...Մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու, որ Բլուրն Նորուն

---

[1] Прокопий Кесарийский, 181—182.

[2] Սեբէոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ 110:

[3] Վ. Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 93:

[4] Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912, էջ 95:

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 264:

ասի, յորում շահաստանն Դուին, մարդախիտ, պարսպատուր պատնիշօք պատուարեալ և տուր-և-առիկ վաճառականութեամբ և ապրի-ազգի պղծութեամբ յափրացեալ յղփացեալ՝ զնա ի հիմանց տապալեալ»[1]: Նույն հեղինակը հիշում է, որ 893 թվականի Դվինի երկրաշարժի ժամանակ այնտեղ մեռել է 70 հազար հոգի:

Որքան էլ Բուլմա Արծրունու ցույց ված թվերը չափազանցված լինեն, այնուամենայնիվ փաստ է, որ Դվինը X և XI դարերում եղել է առևտրական-արհեստավորական աշքի ընկնող կենտրոն և նույնիսկ երկրաշարժից հետո էլ իր կենսունակությունը չի կորցրել:

Ըստ արաբ պատմիչներ Իբն-Հաուքալի և Ալ-Իստախրիի վկայության, Դվինում պատրաստում էին ամենաթանկարժեք գործվածքները, որոնցից նրանք արժանի են համարում հիշատակելու մարիցինի դոտիները, գլխի ծածկոցները, բարձերը ու բազմոցի երեսները, վարագույրները և այլն[2]:

Միջնադարյան Հայաստանի ամենախոշոր քաղաքը Դվինից հետո եղել է Անին: Պատմության մեջ Անին, որպես ֆեոդալական ամրոց, հիշատակվում է դեռևս մեր թվանակության V դարում, սակայն դրանից առաջ էլ նա եղել է Հայաստանի հնագույն վայրերից մեկը, ինչպես այդ մասին վկայում են նյութական կուլտուրայի մնացորդները (բերդշենները, կիկլոպյան ամրոցները, դամբարանները և այլն):

Նյութական կուլտուրայի մնացորդները և պատմական հիշատակությունները ապացուցում են, որ Անին մինչև VIII դարը պատկանել է Կամսարականների տոհմին և եղել է սոսկ ֆեոդալական ամրոց: Բագրատունիներին անցնելուց հետո X — XI դարերում Անին դառնում է խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոն և իր տնտեսական ու քաղաքական կշիռով խոշոր տեղ գրավում Արևելքում:

Երբ արաբական խալիֆայության օրոք Բագրատունիները ծանրակշիռ դերք են գրավում և խոշոր կալվածներ ձեռք բերում միջնաշխարհում, Աշոտ Գ-ի (953—977) ժամանակ, 961 թ. իրենց մայրաքաղաքը դարձնում են Անին: Բագրատունիների տիրապետության առաջամանակյա խաղաղ պայմանները հնարավորություն տեղծեցին Անի քաղաքի զարգացման համար: Աղգաբնակչության աճման հետ միասին անհրաժեշտություն է զգացվում քաղաքն ընդարձակել, որի համար էլ կառուցվում են նոր պարիսպներ և շենքեր: Անիի առաջին պարիսպն իր բուրգերով և աշտարակներով, որ կառուցվել է Աշոտ Գ-ի ժամանակ, տարածվում էր դեպի Ծաղկոցաձորը: Ըստ ճարտարապետ Թ. Թորամանյանի՝ այդ ժամանակաշրջանին են պատկանում պալատի արևմտյան դուռը և ջրամբարը: Հետագայում, քաղաքի ընդարձակման հետ միասին, կառուցվել են նոր պարիսպներ՝ Սմբատ Բ-ի օրով, դլխավորապես քաղաքի հյուսիսային կողմում: Այդ պարիսպների բարձրությունը հասնում էր 8—10 մետրի, իսկ լայնությունը՝ մեկ մետրի, որով և ապահովվում էր քաղաքի պաշտպանությունը[1]:

X — XI դարերում Անին այնքան է մեծանում, որ դրսից նոր եկող բնակչությունը և քաղաքացիների որոշ մասը բնակություն է հաստատում քաղաքի գլխավոր պարսպից դուրս: Թորամանյանը իր աշխատության մեջ մանրամասն տեղեկություն է տվել Անիի պեղումների արդյունքների մասին՝ կապված քաղաքի լայնացման խնդրի հետ: Բուն քաղաքը, ըստ հեղինակի, համարվում է պարսպից դուրս եղածը: Նա այդ եզրակացությանը հանգել է, նկատի ունենալով պարսպից դուրս՝ մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա կառուցված եկեղեցիների և մատուռնե-

---

[1] Թ. Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 371:

[2] Я. А. Манандян, О торговле и городах Армении, 1954, стр. 227—228.

[1] Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, II, Երևան, 1942, էջ 323:

րի գոյությունը: Բացի այդ, նշված վայրում գտնվել են նաև հասարակաց բաղնիքների մնացորդներ, իսկ կես կիլոմետր հեռավորության վրա՝ բնակելի շենքերի մնացորդներ: Ախուրյան գետի ափին և քաղաքի հարավային ու արևմտյան կողմում կան քարայրներ և գետնափոր ստորերկրյա բնակարաններ, ուր ապրել է քաղաքի ստորին աշխատավոր խավը, որի մեջ կային արհեստավորներ և մանր առևտրականներ:

Անիի պեղումները եկան հաստատելու, որ Հայաստանի քաղաքները այդ ժամանակաշրջանում կարողացել էին ստեղծել իրենց ներքին փոխանակային բազան և որ դրանց զարգացումը չէր պայմանավորվում միայն տարանցիկ առևտրով: Արտաքին առևտրին Հայաստանը մասնակցում էր հում նյութով և իր արտադրանքով, որ պատրաստվում էր տեղական արհեստավորության կողմից՝ բավարարելու համար լայն շուկայի պահանջները: Եթե մենք մատենագրական աղբյուրներից քիչ տեղեկություններ ունենք մասսայական իրերի արտադրության մասին, ապա բազմաթիվ փաստեր կան նյութական կուլտուրայի մնացորդներից՝ այդ հանգամանքը հաստատելու համար: Անիի պեղումներից ստացված նյութական կուլտուրայի բազմատեսակ նմուշները (կերամիկայի, ապակու, ոսկրի, կտորի և մետաղյա իրերի) ցույց են տալիս, որ Անին, լինելով խոշոր առևտրական քաղաք, ո՛չ միայն ներմուծել է պարսկական, արաբական և չինական ծագում ունեցող իրեր, այլև ունեցել է իր սեփական արտադրությունը: Այդ են ապացուցում նաև վիմական արձանագրություններում հիշատակված արհեստավորական թաղամասերը, մատենագրական աղբյուրներում մատնանշված պատրաստի արտադրանքների բազմաթիվ տեսակներն ու անունները, որոնց պետք է ավելացնել նաև պղնձաձուլարանի [1] ու աղյուսի գործարանի գոյության փաստը և Անիի խոշոր հյուրանոցը, որ դարեր շարունակ ծառայել է քարավանների կարիքներին: Ահա այդ է պատճառը, որ մեր մատենագիրների կողմից Անին արժանացել է «տիեզերահռչակ», «շահաստան» և «մեծ քաղաք» կոչումներին:

XI դարի պատմիչ Արիստակես Լաստիվերացին ունի խիստ համառոտ, բայց արժեքավոր հիշատակություններ Հայաստանի մի շարք քաղաքների առևտրի և ճոխության մասին: Պատմիչը Անին անվանում է «տիեզերահռչակ», Արծն քաղաքը ամենամեծ և նշանավոր քաղաքներից՝ «մեծանիստ և ի շահաստան քաղաքս մեր» [1], ապա ավելացնում է. «Հոյակապ և ակնառուր էր ամենայն աշխարհաց, իբրև զքաղաք որ ի վերայ լերինն կայցէ. և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր... Վասն որոյ և վաճառականք սորա փառաւորք, և օգնողք թագաւորք ազգաց: Եւ իբրև ակն մի պատուական լուսագեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեսին գեղեցիկ, բոլորովին զարդարուն» [2]:

Բյուզանդական պատմագիր Կեդրենոսի վկայությամբ Արծնը պարիսպ չունեցող բաց քաղաք էր, հարուստ և բազմամարդ, ուր ապրում էին հայեր և ուր կային բազմաթիվ վաճառականներ, իսկ Մ. Ուռհայեցին վկայում է, որ Արծնը ունեցել է 150 հազար բնակիչ:

Վերոհիշյալ տեղեկությունները անվիճելիորեն հաստատում են Արծնի մեծության, բազմամարդության և առևտրի ու արհեստագործության նշանավոր կենտրոններից մեկը լինելու փաստը: Իսկ Անի քաղաքի մեծության և ազդաբնակչության զեխ և հղփացած կյանքի մասին տեղեկություն է հաղորդում նաև ուշ շրջանի պատմագիրներից Աբրահամ Կրետացին, որը, անտարակույս, օգտվելով գրավոր հին հիշատակություններ-

---

[1] Հ. Օրբելի, Անվո ավերակները, «Արարատ» ամսագիր, 1911, № 8, էջ 660:

[1] Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912, էջ 63:

[2] Նույն տեղում, էջ 78—79:

րից, հանգամանորեն նկարագրում է Անիի ազգաբնակչության կենցաղը, նիստ ու կացը, երբ դեռ Անին չէր ենթարկվել ավերածության։ «Զորրորդ՝ ծուլութիւնն տիրեալ առ ամենեսին, զի առանց աղախնեայց և ծառայից ոչ լինէին, և հետիոտս չկեղեցին ոչ ընթանային, ոմանք գրաստիւ, և այլք ի գրաստէ իջանել ո՛չ կամէին, այլ զժամարարն արտաքս կոչէին և բարձրացուցանել տային զԱւետարանն և համբուրէին, և այնպէս զնըշխարս առեալ գնային ի թաղերս, ի թէատրօնս և ի ասպարէզս ձիարշաւանաց։ Հինգերորդ՝ ագահութիւնն ևս քան զևս, և արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն, զի այնպէս ագահ էին, մինչ զի զմիմեանց բարիսն յափշտակէին» [1]։

X — XI դարերում պակաս զարգացած չէր նաև Կարսը, որը Բագրատունի Աբաս թագավորի օրոք (928—953 թթ.) դարձավ թագավորանիստ քաղաք։ Կարսը, որ զարգացած արհեստագործություն ուներ, առևտրական հարաբերություններով կապված էր Արտանուջի և Սևծովյան նավահանգիստների հետ։ Ա. Լաստիվերտցին հիացմունքով է խոսում նաև Կարս քաղաքի մասին. «Հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ» [2]։ Արտանուջն, ըստ Կոստանդին Միրանածնի, լինելով առևտրական կենտրոն, կապված էր ո՛չ միայն Իբերիայի, Աբխազիայի, այլև Հայաստանի մի շարք քաղաքների, առաջին հերթին Կարս քաղաքի հետ։ Միջազգային առևտրի հանգույցումն էր պոնտական քաղաքներից նաև Տրապիզոնը։ Ըստ արաբ պատմիչ Ալ-Մասուդիի, Տրապիզոնում ամեն տարի կազմակերպվում էր տոնավաճառ, ուր գալիս էին հույն, հայ և արաբ վաճառականները։

Տրապիզոնի մասին բավական արժեքավոր տեղեկություններ է թողել նաև արաբ աշխարհագիր Ալ-Իստախրին, ըստ որի հունական ապրանքները այդտեղից էին փոխադրում Հայաստան և այստեղից դեպի արևելյան այլ երկրներ։ Այսպիսով Հայաստանը առևտրական հարաբերության մեջ էր արաբական տիրապետության ենթակա մի շարք երկրների, քաղաքների, ինչպես նաև Բյուզանդիայի հետ։ Սերտ կապ կար Դվինի և Պարտավ քաղաքի միջև։ Պարտավը այն ժամանակ հանդիսանում էր շատ նշանավոր առևտրական կենտրոն։ Հայաստանից այնտեղ արտահանվում էր ոչ միայն հում նյութ, այլև պատրաստի մետաքսյա գործվածքներ, դորգեր և այլն։

X — XIV դարի քաղաքներից աչքի էր ընկնում նաև Վանը, որը իր ծաղկման շրջանն ապրել է X — XI դարերում, Արծրունիների իշխանության ժամանակ, և եղել է Հայաստանի խոշորագույն քաղաքական, տնտեսական և կուլտուրական կենտրոններից մեկը, որտեղ զարգացած էր առևտուրը և արհեստը։ Վանը այն ժամանակ մրցում էր Դվինի, Անիի և Կարսի նման քաղաքների հետ։ Այստեղ զարգացած էին բոլոր տեսակի արհեստները, հատկապես ոսկերչությունը։ Վանը տնտեսական և առևտրական հարաբերություններով կապված էր ո՛չ միայն Հայկական բարձրավանդակի քաղաքների հետ, այլև Միջագետքի ու Ասորիքի մի շարք քաղաքների, ինչպես, օրինակ, Նիսիբինի, Ամիդի, Սոեսիայի և Անտիոքի հետ։ X դարի բարգավաճ կյանքի օգտին է խոսում նաև այն փաստը, որ արաբ պատմիչ Իբն-Հաուքալը Բագրատունիներին ենթակա երկրամասերը համարում էր խալիֆաթի ամենահարուստ երկրներիից, որոնք ավելի շատ հարկ էին ուղարկում արքունի դանձարանը, քան հայկական մյուս իշխանությունները։ Այս փաստերը վկայում են, որ X — XI դարերում Հայաստանի մի շարք քաղաքներ ո՛չ միայն սոսկ առևտրական կենտրոններ էին, այլև աչքի էին ընկնում իրենց զարգացած արհեստներով ու արդյունագործությամբ։

Տարանցիկ առևտրի աշխուժացումը և ներքին շուկայի է՛լ ավելի լայնացումը ավելի

---

[1] Ա. Կ ր կ ա շ ի, Պատմութիւն անցից Եւրոպ և Նադր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 103։

[2] Ա. Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 91։

անկուշտ էին դարձրել շահագործող դասերին, որոնք իրենց կալվածքներում արտադրված և դյուղացիներից ու արհեստավորներից հարկերի դիմաց ստացած արտադրանքով մասնակցում էին առևտրին: Չմոռանանք ասելու, որ ֆեոդալներն արդեն այդ շրջանում հարկերի մեծ մասը գանձում էին դրամով: Այդ էր պատճառը, որ դյուղացիները և նույնիսկ արհեստավորները իրենց արտադրածը ստիպված էին կիսագին վաճառել շուկայում, կամ թե վաշխառուներից տոկոսով դրամ վերցնել, որպեսզի ժամանակին վճարեն ֆեոդալի կողմից պահանջվող հարկը:

Ֆեոդալիզմի վերելքի շրջանում ֆեոդալ իշխանները, բարձր հոգևորականությունը և հարուստ վաշխառուները, ի հաշիվ շինականների ու ռամիկների վաստակի կորզման, վարում էին ցոփ կյանք: Նրանք, չբավականանալով տեղական արտադրանքով, հեռավոր երկրներից ներմուծում էին պերճանքի ու շքեղության թանկագին իրեր, որոնց նմուշները (հատկապես հախճապակյա անոթներ) մեծ քանակությամբ գտնվել են Անիում և Դվինում: Դրանք կարող էին ծառայել միայն իշխանների պալատների ու ազնվականների բնակարանների համար որպես զարդ:

Այս շրջանում մեծ չափերի հասնող շահագործման ու կամայականությունների հետևանքը եղավ այն, որ երկրում ծավալվեցին գյուղացիական շարժումները, որոնցից Թոնդրակեցիների հզոր շարժումը տևեց մինչև XI դարի կեսերը:

Այս շարժմանը գյուղացիության հետ միասին մասնակցում էին նաև քաղաքի ստորին խավերը, որոնց թվում նաև արհեստավորները, որոնք նույնպես շահագործման էին ենթարկվում ֆեոդալ իշխանների և տեղի վաշխառուների կողմից:

Անդրադառնալով Հայաստանի քաղաքների ընդհանուր և ներքին տեսքին, քաղաքաշինարարության սկզբունքների հարցին, ավելորդ չի լինի անալոգիայի համար նախապես վերհիշել շատ բաներով մեծ նմանություն ունեցող այն ժամանակվա Միջին Ասիայի մի քանի քաղաքներից որոշ օրինակներ:

Դրանցից Բուխարան, Սարայը և ուրիշները, որոնք սկզբում նույնպես եղել են ֆեոդալական ամրոցներ, ժամանակի ընթացքում վերածվում են խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոնների, որտեղ, Դվինի ու Անիի նման, ստեղծվում են արհեստավորական ու առևտրական հատուկ թաղամասեր:

Ակադ. Վ. Բարթոլդի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Միջին Ասիայի մեծ քաղաքները բաղկացած են եղել 3 մասից. առաջին մասը նա անվանում է «Քուհենդուզ» — միջնաբերդ, երկրորդը՝ «Շահրիստան», որ համարվում է բուն պարսպապատ քաղաքը, իր մի քանի մուտքերով և ուր ապրում էին ազնվականները իրենց մերձավորներով, իսկ «Ռաբադ»-ը քաղաքի այն մասն էր, որ պարիսպներին կից էր ու համարվում էր քաղաքի արվարձանը, ուր գտնվում էր նաև շուկան: Այդ մասումն էին ապրում աշխատավորները և բնակչության ստորին այլ խավերը [1]:

Հայաստանի քաղաքներից Անին, որը պարիսպների ներսում բռնում էր 175 հեկտար տարածություն, կարող էր բավարարել թե՛ թագավորական տոհմին, թե՛ պաշտոնյաներին, եկեղեցականներին, և թե՛ առևտրա-արհեստավորական դասի մեծ մասին, որն այդտեղ ուներ խանութներ և արհեստանոցներ, հատուկ թաղամասերով:

Մեր կարծիքով, «Շահրիստանը» քաղաքի այն մասն էր, ուր գտնվում էին նաև առևտրական և արհեստավորական թաղերը: Անի քաղաքի կենտրոնական մասում կառուցված մզկիթի վրա եղած արձանագրությունից պարզվում է, որ հատուկ օրենքով նախատեսված էր բամբակի և քաթանի առևտուրը կատարել այդ նույն մզկիթի մոտ: Միաժամանակ, պեղումների ընթացքում պարսպից

---

1 В. Бартольд, Историко-географический обзор Ирана, СПБ, 1903; стр. 8—9 и 29.

ներս հայտնաբերված խանութների, պղնձաձուլարանի և աղյուսի արհեստանոցի մնացորդների գոյությունը նորից հաստատում է նաև արհեստավորական դասի առկայությունը «Շահրիստան»-ում, որը, սակայն, չի բացատրում նաև այն, որ «Քուհենդուզ»-ից դուրս «Շահրիստան»-ում կային առանձին թաղամասեր՝ ազնվականության և հոգևորականության համար: Եթե ընդունենք, որ Դվինի և Անիի պարիսպներից ներս եղած այդ ընդարձակ տարածության վրա բնակվում էր միմիայն ազնվականությունը, նշանակում է սկզբունքորեն ժխտած կլինենք այդ քաղաքների գերակշռող դերը առևտրի և արհեստագործության ասպարեզում, նրանց խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոն լինելու փաստը, քանի որ քաղաք հասկացողությունը տնտեսական կատեգորիա է, և ազգաբնակության մեծ մասը պետք է լիներ քաղաքային դասը (արհեստավորներ և առևտրականներ) և արտադրության եղանակի մեջ արդյունագործությունը պետք է գերակշռողը լիներ: Իսկ «Ռաբադ»-ում, ինչպես վերը նշեցինք, ապրում էին ռամիկները, այն է՝ վարձու աշխատողները և այն արհեստավորները, որոնք «Շահրիստան»-ում խանութ բանալու հնարավորություն չունեին, ապա ջրկիրները, փայտահատները, քարտաշները, բեռնակիրները և այլն: «Ռաբադ»-ում ապրող բնակչության մեջ բավական մեծ թիվ էին կազմում նաև երկրագործությամբ ու այգեգործությամբ պարապողները, որի փայլուն ապացույցն են հանդիսանում պեղումների ընթացքում բացված հնձանները, մեծ թվով գինու կարասները և առուների հետքերի գոյությունը:

Սակայն Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի նորմալ ընթացքը խոչընդոտ էին հանդիսանում մի կողմից՝ երկրի ներսում արաբ էմիրների և հայ իշխանների միջև տեղի ունեցող պայքարը, մյուս կողմից՝ Բյուզանդական կայսրության կործանարար ագրեսիվ քաղաքականությունը. հետագայում, սելջուկ-թուրքերի արշավանքները նույնպես բացասաբար ազդեցին երկրի ներքին կյանքի նորմալ զարգացման վրա: Անշուշտ, այդպիսի պայմաններում շատ դժվար էր երկրում ստեղծել միացյալ ուժեղ իշխանություն, մանավանդ որ Հայկական բարձրավանդակը, լինելով Արևելքի ու Արևմուտքի մրցակցության շահերի բախման ասպարեզ, գրեթե անհնարին էր դարձնում այդ կենտրոնացման փորձերը: Հայաստանի նվաճմանը ձգտող պետություններից ամեն մեկն աշխատում էր երկպառակություն առաջացնել երկրի ներսում և պաշտպանել իր քաղաքականության կողմնակից կենտրոնախույս ֆեոդալ իշխաններին: Բյուզանդիան Վասիլ Բ. կայսրի օրոք Հայաստանի նկատմամբ ուժեղացրեց իր գավթողական քաղաքականությունը, որի հետևանքով հայերի ռազմական դիմադրական ուժը հետզհետե թուլացավ: Կայսրության առաջին հարվածն իջավ հայ խոշոր ազնվականության տիրական իրավունքների վրա և այդ նպատակով կատարվեցին նույնիսկ տեղահանումներ:

XI դարի պատմիչ Արիստակես Լաստիվերացին ավելի մոայլ գույներով և նկարագրում այդ տեղահանման հետևանքները. Հովհաննես-Սմբատի մահից հետո, երբ պետության հիմունքները խախտվում են, հալածանքի պատճառով՝ «ելին իշխանքն ի հայրենի ժառանգութենէ իւրեանց, և եղեն պանդուխտ յաւտար երկիր. յորում աւերեցան գաւառք և գնացին յաւտար տանն Յունաց»[1]:

Ապա պատմիչը նկարագրում է, թե ինչպես ազնվական դասի հետ միասին գաղթում է նաև հայկական զորքը. «Հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարս[ս] և ոմն ի Յոյնս, և ոմն ի վիրս: Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց... մոնչեն ուր և են իբրև զկորիւն առիւծուցն ի խշտիս իւրեանց»[2]:

Այսպիսով, Հայաստանի ներքին և արտաքին աննպաստ պայմանները հեշտաց-

1 Ա. Լաստիվերտցի, էջ 51:
2 Նույն տեղում, էջ 58:

նում են թշնամիների ներխուժումը։ Կայսրությունը՝ քայքայելով Հայկական բարձրավանդակի ռազմական ուժը՝ ինքն ևս անկարող եղավ պաշտպանել Հայաստանի սահմանները սելջուկ-թուրքերի արշավանքներից։

1048—1071 թթ. սելջուկ-թուրքերը վերջ տվին բյուզանդական իշխանությանը Հայաստանում։ Գրիգուրի և Իբրահիմ Յանալի (1048—1049 թթ.), Տուղրիլի (1054 թ.) և Ալփ-Արսլանի (1063—1072 թթ.) ասպատակությունների ժամանակ երկիրը ենթարկվում է թալանի և մեծ ավերածությունների։ Հայաստանի առևտրական արդյունագործական կենտրոնները՝ Դվինը, Անին, Արծնը, Կարսը և Խլաթը ավերվում են և ամայանում։ Այդ անցքերի մասին Արիստակես Լաստիվերացին գրում է. «... և այսպիսի ձեռնարկութեամբ ապականեցին զաշխարհս մեր, ո՛չ միանգամ, այլ երիցս անգամ մի ի միոյ վերայ դարձ արարեալ՝ մինչև առհասարակ հատաւ երկիրս ի բնակչաց, և բարձաւ կառոյց անասնոց»[1]։ Պատմիչն ավելի մռայլ գույներով է նկարագրում Արծն քաղաքի ավերածությունը. «... Հասին ի վերայ անօրինացն ժողովք իբրև շունք քաղցեալք, և շրջապատեցին զքաղաքն. և մտին իբրև հնձողք ոճոյ ագարակի, և սուր առն ի վերայ եդեալ հնձեցին մինչև անջատեցաւ ի կենդանւոյ քաղաքս... Անդանօր էր տեսանել տեսիլ ողորմագին և զարհուրական յոյժ. զի ամենայն քաղաքն լի էր դիակամբք անկելոցն, վաճառափողոցք և նրբափողոցք և ընդարձակ սրահք։ ...Այսօրիկ են չարաչար պատմութիւնք քո, ո՛վ քաղաք երջանիկ և երանելի, յղփացեալ, ականաւոր ի մէջ աշխարհաց»[2]։

Մեծ ավերածություններ է կատարում Ալփ-Արսլանը Անիում։ «...Մտեալ յաշխարհս մեր,— գրում է նույն պատմիչը,— ահ և երկիւղ հասուցանէր հեռաւորաց և մերձաւորաց. կոխէր, տապալէր զաշխարհս բազում, մինչև եհաս ի քաղաք՝ որ զմեղս իւր ի կատարումն լրիւ իւրով ունէր։ ....Անդ էր տեսանել զվիշտս և զտագնապս իւրաքանչիւր հասակի. զի ի դրկաց մարցն յափշտակեալ լինէին մանկունք՝ անողորմաբար զքարի հարեալ, և մարքն արեամբ և արտասուօք զմանկունս իւրեանց թանային. զհայր և զորդի մի սուր խողխողէր ... և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր. և վաշխն և նենգութիւնն որ ի նմա՝ խափանեցաւ»[1]։

Սելջուկյան արշավանքների հետևանքով խիստ ավերվել էին Հայաստանի ո՛չ միայն հարավային, այլև հյուսիսային մասերը։

Մելիք-Շահի մահից հետո սելջուկյան պետությունը քայքայման է դիմում. սրան նպաստում են գահակալական կռիվները և պետության ղեկավարության հանձնումը խնամակալներին-աթաբեկներին, որոնք, գահաժառանգների անչափահաս լինելու պատճառով, փաստորեն իրենք էին կառավարում երկիրը։ Այս աթաբեկների օրով սրվում է ներքին պայքարը, գլուխ են բարձրացնում ֆեոդալական բոլոր այն տները, որոնք զրկվել էին իրենց կալվածքներից, իսկ մյուս կողմից՝ նախկին իկտադարները (խոշոր հողատերերը) չէին ցանկանում ենթարկվել կենտրոնական իշխանության և ձգտում էին անկախություն ձեռք բերել։ Այսպիսով, XII դարի առաջին քառորդում քայքայվում է սելջուկյան պետությունը Առաջավոր Ասիայում և ստեղծվում են մի շարք մանր իշխանություններ՝ էմիրություններ։ Հայաստանի կենտրոնական քաղաքներից Դվինը, Անին, Կարսը, Մանազկերտը, Կարինը դառնում են զանազան էմիրությունների կենտրոններ. իսկ այս ժամանակ հայ ֆեոդալական տներից մնացել էին միայն Զորագետի Կորիկյանց ու Կապանի Սյունյաց թագավորությունները և մի քանի մանր իշխանություններ՝ Ռշտունիքում ու Սասունում, որոնք ապաստան էին գտել իրենց երկրների անա-

---

[1] Ա. Լաստիվերացի, էջ 93—94։

[2] Նույն տեղում, էջ 83—84։

[1] Ա. Լաստիվերացի, էջ 165—167։

ոիկ լեռներում։ Գանձակի էմիրությունից բացի, խոշոր էմիրություններ էին Հանդիսանում Դվինը և Անին, որոնք գտնվում էին Շադդադյան տոհմի ձեռքին, իսկ Խլաթում և Մանազկերտում իշխում էին Շահարմենները։

Հայաստանում հիմնված այս մի շարք անկախ էմիրություններն անընդհատ հակամարտության մեջ էին միմյանց հետ՝ իրենց տերիտորիաներն ընդարձակելու համար։ Այդ երևույթը խիստ բացասաբար էր ազդում Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի վրա։ Ահա այս հանգամանքները ևս բավական նպաստեցին վրացական համեմատաբար ուժեղ պետության առաջխաղացմանը։

Սելջուկյան արշավանքներից համեմատաբար քիչ էր տուժել Վրաստանը, որովհետև նա գտնվում էր սելջուկների առաջխաղացման գլխավոր ճանապարհներից դուրս։

Թուրք-սելջուկների տիրապետությունից ազատագրված հյուսիսային Հայաստանը ամբողջապես անցնում է Զաքարյաններին, որոնց ներկայացուցիչները ամիրսպասալարի (զորքի հրամանատարի) պաշտոն ունեին վրաց արքունիքում։ Իշխանական այս տոհմից ծագած զորապետները կարճ ժամանակամիջոցում վրաց-հայկական միացյալ բանակի ուժով ազատագրում են Արարատյան ամբողջ նահանգը, Ուտիքը և Սևանա լճի շուրջը գտնվող բոլոր հայկական գավառները ու հաստատվում այդ տերիտորիաներում։ Վայոց ձորում և Սյունիքում, Զաքարյանների օժանդակությամբ, սկսում են իշխել Օրբելյանները (Օրբելները), որոնք մինչև այդ Վրաստանում կորցրել էին իրենց կալվածները։ Սրանք արդեն ենթակա էին Զաքարյաններին։ Բացի սրանցից, Հայաստանի տարբեր մասերում ստեղծվել էին մի շարք հայկական մանր իշխանություններ, որոնցից հայտնի են Վաչուտյանները։

Այսպիսով, Զաքարյանների տիրապետությունն ընդգրկում էր ո՛չ միայն Բագրատունիների նախկին սահմանները՝ Շիրակը, Անին և Զորագետի թագավորությունը, այլև Դվինը իր շրջակայքով, որը սելջուկյան արշավանքներից առաջ գտնվում էր մահմեդական էմիրության ձեռքին, ապա նաև Սյունիքը։

XII — XIII դարերի հայկական ֆեոդալիզմի մասին խոսելիս չպետք է սահմանափակվել միայն աշխարհիկ ֆեոդալների հիշատակությամբ, այլ պետք է նկատի ունենալ նաև հոգևոր ֆեոդալներին։ Զաքարյանները իրենց իշխանության օրոք գլխավորապես իրենք էին նշանակում նոր եպիսկոպոսներ, կառուցում նոր եկեղեցիներ, վանքեր և նրանց հատկացնում էին մեծ քանակությամբ կալվածքներ։ Հայ մատենագիրներից Մխիթար Գոշը հաղորդում է, որ անգամ պատերազմական ավարի $1/50$ մասը օրենքով նախատեսված էր եկեղեցուն։

Աշխարհիկ և եկեղեցական ֆեոդալները խոշոր կալվածքներ են ձեռք բերում, մի կողմից՝ քայքայվող ազատ գյուղացիների հաշվին և մյուս կողմից՝ գնման ճանապարհով. ճորտ գյուղացին վճարում էր ո՛չ միայն հողային հարկ և գլխահարկ, այլև տալիս էր եկեղեցական հարկ, որն այդ ժամանակ կրկնապատկվել էր։

XII դարում և XIII դարի սկզբներին ճորտ գյուղացիության դրության և նրա անձնական կախման մասին տեղեկություններ են հաղորդում այդ դարերի վիմական արձանագրությունները և Գոշի «Դատաստանագիրք»-ը, որոնք հաստատում են ճորտ գյուղացիության ծանր վիճակը։ Այդ հարցի վրա մանրամասն կանգ առնելու նպատակ չունենալով՝ հարկավոր ենք համարում միայն մատնանշել գոյություն ունեցող դրությունը։ Մատենագրական փաստերը հաստատում են գյուղացիների կախյալ վիճակը, որոնք երբեմն նվիրվել են հողի հետ միասին [1]։

XII — XIII դարերում, արտաքին և ներքին խաղաղության շնորհիվ, Հայաստանում

---

1 Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 68—70։

մի շարք քաղաքներ սկսում են վերակենդանանալ։ Այդ դարերում Հայաստանը առևտրական հարաբերություններով կապված էր, մի կողմից՝ Պարսկաստանի, Միջին Ասիայի, իսկ մյուս կողմից՝ Սև ծովի վրայով եվրոպական երկրների հետ։ Նորից վերսկսվում է Սևծովյան առևտուրը և նշանակալից չափով աշխուժանում է տարանցիկ առևտուրը դեպի Տրապիզոն։ Պատմական փաստերը հաստատում են, որ առևտրական հայ գաղութներ կային արդեն նույնիսկ Ղրիմում, Սևծովյան այլ մարզերում։ Մարկո Պոլոյի (XIII դ.) հաղորդածներից և իտալական աղբյուրներից երևում է, որ Հուլավույան իշխանության ժամանակ Ճենովայի ու Վենետիկի առևտրականները իրենց առևտուրը կատարում էին Հայաստանի վրայով դեպի Թավրիզ և Սուլթանիե։ Նրանք Թավրիզում ունեին նույնիսկ իրենց առևտրի գրասենյակը և կոնսուլությունը[1]։

Հայաստանի կենտրոնական քաղաքներից Դվինում, Անիում, Կարսում, Մանազկերտում, Խլաթում և Կարինում նորից աշխուժանում է առևտուրը և աճում է կուլտուրական կյանքը։ Արդեն ոչ միայն առևտրականները, այլև արհեստավորությունն իր արտադրանքով մասնակցում էր առևտրին, որը նպաստում էր երկրի ներքին ապրանքափոխանակության լայնացմանը։ Կային արդյունագործական ձեռնարկներ, արհեստանոցներ և արհեստագործական կազմակերպություններ։ Հայաստանի ներքին շուկայի լայնացման գործում խոշոր տեղ ուներ արհեստավորական արտադրանքը։ Հիշյալ ժամանակաշրջանում արհեստները, համեմատած նախկինի հետ, նոր թափ են ստանում, որքանով զարգանում և առաջ էր գնում քաղաքային կյանքը Հայաստանում, իսկ արհեստավորության աշխատանքը դառնում էր բազմակողմանի։

Մի կողմից գյուղատնտեսության զարգացման, հատկապես բերքատվության բարձրացման համար պահանջվող ավելի ամուր և կատարելագործված գործիքների կարիքը, և մյուս կողմից՝ քաղաքների աճը (ներքին և արտաքին առևտրի զարգացման կապակցությամբ), է՛լ ավելի ուժեղացնում են արհեստագործության մեջ գոյություն ունեցող աշխատանքի բաժանումը և արհեստների մասնագիտացումը։

Արհեստների մասնագիտացման կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում այստեղ առաջ բերել արաբական մի աղբյուր, որը թեև վերաբերում է արաբական երկրների արհեստներին, սակայն նույնքան էլ կարող է վերաբերվել և Հայաստանին։

Երևանի Պետական Մատենադարանի № 695 ձեռագիր ժողովածուի 187 էջում կա 1221 թ. արաբերենից հայերեն թարգմանված մի հետաքրքիր հատված, որը երազացույցի մի մասն է. սակայն այստեղ կարևորն այն է, որ ցույց է տրված, թե ի՛նչ արհեստներ կային այն ժամանակ և ժողովուրդն ի՞նչ կարծիք ուներ այս կամ այն արհեստավորի մասին, կամ թե ի՞նչ տեղ է գրավել այս կամ այն արհեստը։

«Ջինչ արուեստ կայ որ կու բանի. հանց ասեն դարբին տեսանես յերազի մեծ մարդ է, թէ ինքն դարբնութիւն առնէ, գանձ գտանէ. թէ լինի դարբին զմարդու բանն յատեանն կատարէ... գուսանն հանց մարդի լինի որ յայլոց շահ գայ. սլեհարարն հանց լինի որ օգնական է. սառաճն և մազմանն կանայք լինին, լկամ արարն ատենահաս մարդ լինի. նետարարն ուղորդախօս մարդ լինի և ուղորդ. թամբարարն իրաւարար մարդ լինի, նալպանդ յայլոց լաւարար մարդ լինի։ Կողպայքարարն առաջնորդ մարդ լինի, փորէզիկն ... պղնձագործն հաւատացեալ մարդ է և չարշարակոտ. ցորենածախն երկրակալ մարդ է, ոսկերիչն ստախօս, ներկարարն հանց մարդ լինի, որ իւր ձեռնէն լաւութիւն գայ յայլոց և դէպ ինքն սուտ շատ ասեն. լկամարարն սրբահաւատ մարդ է. աղօթարարն յերազն լաւ մարդ լինի, դերձակն հաւատով մարդ է, մուճկրարն և ջուլհակն հանց մարդ լինին որ զայլոց բարին կամենան. սպասարարն և բրուտն հայելեցոյն

[1] Я. А. Манандян, О торговле и городах Армении, 1954, էջ 286—287։

լաւ մարդ լինին. նայ ևս գիտնական լինին որ գայլոց փուտ հանեն. հալաւարարն սրբահաւատ մարդ է. հացրարն ուղորդարար և պարոն լինի, դրամաղարկն և փողզարկն, պըկաղարկըն տօպոպղարկն և այլն ի յայս նման ամենն անիրաւ մարդիք են և սոցին ծայնն ամենևին հիւանդութիւն է... բամպակածախն հիւանդութիւն է, հաճամն կամքն կատարի, հիւիսն և մոքերիկն և խարապանդայն, և ուղտապանն և ըռքեպարն այդ ամէնդ թատպիրարար մարդիք են, մայալումն գլխաւոր մարդ է, պարտիզպանն և բաղնէպանն, և դարպասպանն, այս ամէնն դանձ են տղայք, և քարգործն հարուստ մարդ է և հարկևոր, ջահրարն տխմար մարդ, փայտ կտրողն ճաշուշ է, նատաւն դշրափախուց մարդ է, սանտրարն լաւ մարդ է, հուլնարարն, հալալբան մարդ է»:

Արհեստագործությունը պետք է բավարարեր արդեն ո՛չ միայն աղնվականության, այլև գերազանցորեն քաղաքային դասի և գյուղացիության աճող պահանջները, պատրաստելով ամեն տեսակի իրեր թե՛ տեղական շուկայի և թե՛ արտասահմանի համար:

Արհեստավորները ունեցել են իրենց հատուկ թաղամասերը և կազմակերպված են եղել համքարության մեջ: Օրենքների մշակման և հաստատման գործում, լինի դա քաղաքացիական, թե կրոնական, խոշոր դեր ուներ քաղաքային նոր դասը, և այդ օրենքները նպաստում էին առևտրական հարաբերությունների կարգավորման ու է՛լ ավելի լայնացման գործին: Սակայն պետք է նշել, որ քաղաքային դասի այդ իրավունքները, որ ձեռք էին բերվել ֆեոդալ իշխանների դեմ մղած երկարատև պայքարի ընթացքում, դեռևս սահմանափակ էին:

Ինչպես նշեցինք, ապրանքային արտադրությունը ֆեոդալական հասարակարգում ավելի ուժեղացավ և լայն ծավալ ստացավ հատկապես քաղաքների զարգացման հետ համընթաց, որովհետև այն սերտորեն կապված էր առևտրական հարաբերությունների ծավալման հետ. վերջինը իր հերթին պայմանավորվում էր արտադրողական ուժերի զարգացումով և արհեստների ներսում տեղի ունեցած աշխատանքային բաժանումով:

Արտադրողական ուժերի զարգացումը, երկրագործությունից արհեստների անջատումը ավելի ևս նպաստում են ապրանքաշրջանառության լայնացմանը, որովհետև գյուղում արհեստավորները զբաղվում էին զուտ գյուղատնտեսության հետ կապված արհեստներով (դարբնություն, պայտարություն), իսկ մնացած արհեստները անջատվում են հողագործությունից և կենտրոնանում քաղաքներում: Գյուղացիությունն արդեն իր մյուս պահանջները բավարարելու համար ապրանք-փոխանակության մեջ էր մտնում քաղաքի արհեստավորների հետ, հետևապես քաղաքի արհեստավորները պետք է բավարարեին ոչ միայն քաղաքում հետզհետե աճող բնակչության պահանջները, այլև գյուղի բնակչության: Անդամ գյուղացիության արդ ու զարդի կարիքները՝ արծաթից, վարշաղից և երբեմն էլ ուլունքից՝ կատարում էին այն ոսկերիչները, որոնք ապրում և աշխատում էին քաղաքներում: Մյուս կողմից՝ քաղաքի ոսկերիչ արհեստավորները իրենց նուրբ արտադրանքի մի մասը, արդ ու զարդերը, ոստայնագործներն իրենց պատրաստած գորգերի, դիպակների, բեհեզների մի մասը ուղարկում էին խալիֆայությունը և բյուզանդական կայսերությունը «նվեր» և կամ վաճառքի էին հանվում նրանց շուկաներում: Քաղաքներում կենտրոնացած էր նաև արհեստավորների մի այնպիսի խավ, որը զբաղվում էր տարբեր արհեստավորների (դարբնի, պայտարի, ջուլհակի, հյուսնի, քարտաշի, ոսկերչի) համար աշխատանքային գործիքներ պատրաստելու գործով, որոնց արտադրությունը որպես ապրանք մտնում էր շուկա և լայն շրջանառություն գտնում: Շուկայական հարաբերությունների լայնացումը և ապրանքների շրջանառությունը կապված էր մասսայական արտադրության հետ: Եթե այդ տեսակետից մոտենանք հարցին, կտեսնենք, որ IV — X դարերում Հայաստանում արհեստավորների արտադրության մեջ մեծ տեղ էր գրավում

պատվերի պահանջը, սակայն հետագա դարերում, մասնավորապես X—XIII դդ և ավելի ուշ, երբ կարիք է զգացվում ավելի շատ արտադրելու, անհրաժեշտ է դառնում, որպեսզի յուրաքանչյուր ճյուղի արտադրողը մտածի նոր մեթոդների ու նոր միջոցների մասին՝ որքան հնարավոր է քիչ ժամանակ կորցնել և շուկային տալ ավելի շատ, քանակությամբ ապրանք, բավարարել ժողովրդի աճող պահանջը և ավելի սերտ առևտրական կապեր ստեղծել ուրիշ երկրների հետ: Այդ իսկ տեսակետից մենք արհեստների տարբեր ճյուղերում՝ մետաղագործության, կերամիկայի, ոստայնանկության մեջ արդեն տեսնում ենք տեխնիկայի զարգացում և մասսայական արտադրության ուժեղացում: Վերոհիշյալ թեզը հիմնավորելու համար հարկ ենք համարում նյութական հարուստ մնացորդների օրինակներով բացատրելու այդ երևույթի ուժեղացումը X դարից հետո:

Այսպես, մետաղագործության ասպարեզում ապրանքային արտադրության զարգացման հետևանքով սկսվում է արդեն սահմանափակվել յուրաքանչյուր իրի համար մի օրինակ մոդել պատրաստելու պրակտիկան. Եթե առաջ յուրաքանչյուր պատվիրատուի համար մետաղյա իր կամ զարդ պատրաստում էին առանձին մոդելներով, որը պահանջում էր երկարատև աշխատանք, իսկ ավելի նուրբ ու բարդ գործի դեպքում՝ մոմե մոդելով, ապա՝ X դարից հետո հատուկ մոդելները հիմնականում դուրս են մղվում, կամ որպես բացառություն են կիրառվում: Դրան հակառակ հրապարակ են գալիս կաղապարներ, տրաֆարետների ձևով, որոնց միջոցով ձուլվում են մեծ քանակությամբ մետաղյա իրեր՝ շուկայական պահանջը բավարարելու համար: Շատ հաճախ օգտագործում էին նաև ոսկեդույն, արծաթագույն համաձուլվածք, որը ավելի էժան էր նստում և բավարարում էր քաղաքի միջին խավի պահանջները:

Կերամիկայի արտադրության բնագավառում մենք նույնպես տեսնում ենք փոփոխություն, հատկապես ջնարակած խեցանոթներ պատրաստելու եղանակում:

Եթե սկզբնական շրջանում հատուկ պատվերով կավանոթների վրա ձեռքով պատրաստում էին գծագարդեր, բուսական նախշեր և կենդանակերպ ու մարդակերպ նկարներ, որի համար անհրաժեշտ էր հատուկ շնորհք, ապա՝ հարմարվելով ներքին շուկայի պահանջներին՝ XII — XIII դարերում և ավելի ուշ այդ բոլորը կատարում էին դրոշմելու տեխնիկայով:

Մենք գիտենք, որ մեծ մասամբ միայն վերնախավի պահանջներն էին բավարարում ջնարակած անոթները, որոնց վրա պատրաստում էին գեղեցիկ զարդանախշեր՝ օգտագործելով ամենաթանկարժեք օքսիդներ (կոբալտ, անագ և այլն), սակայն քաղաքային կյանքի զարգացման հետ զուգահեռ պահանջ զգացվեց արտադրել ավելի շատ ջնարակած անոթներ ու ափսեներ: Դրանց կարիքն արդեն զգում էր նաև քաղաքի ունևոր ու միջին խավը, սակայն այն տարբերությամբ, որ քանդակների, զարդանախշերի մեջ այժմ արդեն մտցվում էր պարզություն, մեծ մասամբ կատարում էին գծագրերով խճողված նախշեր: Բացի դրանից, անգոբը հեռացվում էր միայն գծագրի ձևով, որպեսզի ավելի հեշտ և արագ լինի աշխատանքի կատարումը: XII — XIII դարերում զարդանախշերի մեջ գերիշխում են ճառագայթաձև, շախմատաձև կամ միագույն ջնարակներ: Այս տիպի անոթների թիվը բավական մեծ է Անիի և Դվինի պեղումներից ստացված նյութերի մեջ:

Նույն երևույթը մենք նկատում ենք նաև ապակեգործության ասպարեզում. Եթե մինչև X դարը ապակյա անոթները լինում էին տարբեր գույներով, կամ նրանց վրա կային փորագիր ու վերագիր ուռուցիկ նախշեր, ապա XII — XIII դարերում (և ավելի ուշ) ապակյա անոթները պատրաստվում են հասարակ ձևով, առանց զարդանախշերի և մեծ մասամբ սպիտակ, կանաչավուն ու դեղնավուն, որով բավարարվում էր շուկայի պահանջը: Բացի այդ, սկսվում է հասարակ ապակյա ապա-

բանջաննների ծավալուն արտադրություն, որը փոխարինում է ոսկու ու արծաթե զարդերին և բավարարում է շուկայի անհամեմատ լայն պահանջները։ Այդպիսի ապակե անոթներ և ապակե ապարանջաններ մեծ քանակությամբ հայտաբերվել են Անիի և ապա Դվինի ու Ամբերդի պեղումներից։

Այս նույն երևույթը նկատվում է նաև սենյակների ներսի կողմից շքաղյուսներից ու դիպսերից պատրաստված զարդարանքների վրա. եթե նախապես դիպսից զարդանախշ պատրաստելու համար փորագրում էին, ապա XIII դարում արդեն տիրապետում էր կաղապարներով թափվող զարդաքանդակը։

Ապրանքային արտադրության զարգացման ազդեցությունը շատ բնորոշ ձևով երևում է նաև գործվածքների վրա. քանի դեռ քաղաքային կյանքը և շուկայական պահանջը զարգացած չէր, գործում էին նուրբ կտորներ, որոնց զարդանախշերի մեծ մասը կատարվում էր գործելու պրոցեսում։ Այդպիսի նուրբ կտորներ արտադրվում էին աղնվականության ու հոգևոր դասի համար, իսկ որոշ մասը արտահանվում էր Բյուզանդիա և Պարսկաստան, որպես «նվեր» կամ վաճառքի նյութ։ X դարի պատմիչների մոտ շատ հաճախ հիշատակվում են «ոսկեճամուկ», «ոսկեթել» դիպակներ, սակայն XII դարից սկսած՝ թե՛ մատենադրական տվյալները և թե՛ ձեռագրերի կազմերի ներսի կողմից փակցրած աստառների մեծ մասը հաստատում են, որ այդ թանկարժեք կտորների կողքին մեծ քանակությամբ արտադրվել են բազմատեսակ ու բազմագույն կտորներ, որոնք, պարզ է, արդյունք էին միմիայն շուկայում աճող պահանջի։ Այդ նույն պահանջի հետևանքով էլ զարդանախշերի ու գործելու տեխնիկայի մեջ կատարվում է փոփոխություն։ Կիրառվում են նոր միջոցառումներ շատ և արագ արտադրելու համար. XII դարից հետո դաջածո կտորների արտադրությունն է՛լ ավելի է լայնանում ու դառնում բազմակողմանի։ Արտադրում ու դաջում էին այնպիսի զարդանախշերով կտորներ, որ ոչ միայն դեկորատիվ նշանակություն ունեին, այլև օգտագործվում էին հագուստների համար. հատկապես XV—XVII դարերում գերիշխում են բուսական և չնչիմաձև զուգահեռ զարդանախշերը։

Եթե մինչև X դարը ձեռքի գծագրով էին զարդանախշեր անում միագույն կտորի վրա, որը պահանջում էր շատ ժամանակ և հատուկ ունակություն, ապա դրանից հետո գործածության մեջ են դրվում փայտե տրաֆարետները, որոնք հեշտացնում և էժանացնում են աշխատանքը։ Այսպիսով, դաջածո կտորներն արդեն շուկայի պահանջները բավարարելու համար դառնում են միանգամայն ձեռնտու, նախ՝ էժան էր նստում, և ապա՝ արտաքին գեղեցկությամբ ու իր զարդանախշերով ո՛չ միայն հետ չէր մնում գեղեցիկ գործվածքներից, այլև դառնում էր ավելի բազմազան, քանի որ գործելու միջոցով հնարավոր չէր բարդ ու դժվարին զարդանախշեր կատարելը, մինչդեռ այդ միանգամայն հնարավոր է դառնում դաջելու շնորհիվ։ Շուկայի պահանջից ելնելով և հաշվի առնելով ազգաբնակության էթնիկական կազմը՝ հատկապես XI դարից սկսած հայ արհեստավորները արտադրել են նաև այնպիսի կտորներ և մետաղյա իրեր, որոնց վրա գերիշխել են ո՛չ հայկական զարդանախշերը և կամ արաբական գրերը։

Մեր կարծիքով, այդպիսի իրերի մեծ մասը սկզբում պատրաստվել է հատուկ պատվերով, իսկ X դարից հետո որոշ քանակությամբ արտադրվել է նաև շուկայի համար։ Անիի և Դվինի պեղումներից դտնվել են այնպիսի իրեր, որոնց օրնամենտները և նրանց նրբությունը ցույց են տալիս, որ դրանք կամ ներմուծված են և կամ հայ արհեստավորները պատրաստել են պատվերով. բայց կան նաև այնպիսի իրեր, որոնցից պարզ երևում է, որ դրանք արտադրվել են շուկայի համար։ Հնարավոր չէ ամբողջ արտադրանքը համարել ներմուծված, եթե մանավանդ հաշվի առնենք նաև ժամանակի փոխադրական միջոցների դժվարությունը։ Մյուս կողմից՝ Հայաստանը դտնվել է սելջուկների, մոնղոլների, հետագայում թուրքմենական ցեղերի և պարս-

կական ու օսմանյան տիրապետողների ձեռքի տակ, և, պարզ է, որ հայ արհեստավորները պետք է բավարարեին նաև նրանց պահանջը։

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ, իրոք, շուկայական պահանջը ինքնըստինքյան պատճառ է հանդիսանում, որպեսզի արհեստավորներն է՛լ ավելի մասնագիտանան և աշխատանքի բաժանումը է՛լ ավելի խորանա։ Բերենք երկու օրինակ. եթե առաջ դարբինը պատրաստում էր և՛ գյուղատնտեսական գործիքներ ու զենքեր, և՛ տնային կահկարասիք ու զարդեր, որոնց համար դարբնից պահանջվում էր համապատասխան ունակություն ու ճաշակ, ապա այժմ այդ բոլորը մի արհեստավորի ուժերից վեր էր։ Նույնը կարելի է ասել նաև ոստայնագործության վերաբերյալ։ Եթե սկզբում ջուլհակը ինքն էր գործում բոլոր տեսակի գործվածքները, սկսած հասարակ կտավից մինչև ամենալավ դիպակները, կատարելով նաև ճախարակի ու ներկարարի պարտականությունը, X դարից հետո արդեն ոստայնանկների մոտ ևս կատարվում է աշխատանքի ավելի լայն բաժանում ու ստեղծվում են մի շարք առանձին արհեստներ. մեր պատմիչները հիշատակում են կտավագործի, բեհեզագործի, կապերտագործի, գորգագործի, ջահրարարի, ներկարարի և այլ մասնագետ արհեստավորների։ Նույնը կարելի է ասել նաև սառաջության, կոշկակարության և մյուս արհեստների վերաբերյալ։ Այս բոլորը ցույց է տալիս թե աշխատանքային ինչպիսի խորը բաժանում գոյություն ուներ արհեստների ներսում։

Ինչպես նշեցինք, ապրանքափոխանակության զարգացումը ուժեղանում է հատկապես X դարից հետո։ Այդ շրջանում քաղաքային տնտեսությունը, որ ուժեղ կերպով կապված էր միջազգային առևտրի հետ, իր բնույթով բոլորովին տարբերվում է գյուղի տնտեսությունից և հետզհետե այդ երկուսի մեջ հակասությունն ավելի է խորանում։ Ինչպես մի շարք երկրների, նույնպես էլ Հայաստանի միջնադարյան քաղաքներում գերիշխում էր մանր ապրանքային արտադրությունը՝ շնորհիվ այն բանի, որ արտադրողը (արհեստավորը) տեր էր արտադրության գործիքների և՝ ճորտ գյուղացու համեմատությամբ՝ ավելի ազատ էր ու արտոնյալ, թեև հարկատու էր պետությանը և որոշ չափով կախման մեջ էր ֆեոդալից։ Եթե արհեստավորը ֆեոդալից լրիվ կախման մեջ լիներ, ինչպես շինականը, պարզ է, որ նա հնարավորություն չէր ունենա բավարարելու շուկայի պահանջները։ Ըստ պատմական փաստերի, արհեստավորները պետության և ֆեոդալի նկատմամբ ունեցել են կոռային պարտավորություն, մասնակցել են պետական նշանակություն ունեցող կառուցումներին ու առանձին ֆեոդալական իշխանների կողմից ձեռնարկած շինարարական աշխատանքներին։ Պատմիչների մոտ հիշատակված հարկերից բաժը և դռնակիրը, մեր կարծիքով, ո՛չ միայն վերաբերում են առևտրականներին, այլև արհեստավորներին, մանավանդ, որ այդ շրջանում արհեստավորը միաժամանակ իր ապրանքի վաճառողն էր և՝ որպես վաճառող՝ առևտրական, որը պարտավոր էր մուծել պետական հարկ մաքսի ձևով։ XIII դարի պատմիչ Կ. Գանձակեցու և վիմական արձանագրությունների տվյալներից երևում է, որ մոնղոլների տիրապետության օրով, ինչպես և դրանից առաջ, հարկադրման են ենթարկվել նաև արհեստավորները։

Բազմաթիվ հիշատակություններ կան նաև դրամական կուտակումների մասին։ Մատենադրական տվյալներն ապացուցում են, որ ֆեոդալներից շատերն իրենց եկամուտների խոշոր մասը պահում էին դանձի ձևով, իսկ այդ դանձի արագ կուտակումը կարող էր տեղի ունենալ միայն առևտրա-վաշխառուական կապիտալի զարգացման պայմաններում։ Հիշատակում են նաև կարմիր դուկատի մասին. Ճար անունով մեկը գրում է, թե՝ իր հայրը գնել է Գետիկը 40 հազար կարմիր դուկատով. մի ուրիշ տեղ հիշատակում են 10 հազար սպիտակի (արծաթ դրամ) մասին և այլն։

XIII դարի սկզբներին առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչներից

էին Տիգրան Հոնենցը, ավելի ուշ՝ Ավետիսը Սահմադինը և մանազկերտցի Ոսկիը։ «Հիշյալ Ոսկիը ամենաաչքի ընկնող ներկայացուցիչն էր հայ ազգի առևտրական բուրժուազիայի, որ XIII դարում անուն էր հանել իր ձեռնարկություններով և, ի միջի այլոց, Թիֆլիսում 1251 թվականին Կաթողիկե եկեղեցու (այժմ Մեյդանի սուրբ Գեորգ) կառուցումով, իսկ նրա երեք թոռները՝ Սուջահաթ, Առյուծ և Ջալապը՝ Վանքի եռասեղան և եռագմբեթ տաճարի շինությամբ»[1]։ Խոշոր վաշխառու և առևտրական Հոնենցը իր ձեռքումն էր կենտրոնացրել մեծ քանակությամբ կալվածքներ, որ ձեռք էր բերել գնման և կամ իր մոտ գրավ դրած հողերի հաշվին։ Արձանագրական տվյալներից երևում է, որ տանեցի հայ փողատեր Սահմադինը 1264 թ. գնում է Երևանը իր շրջակայքով՝ «հողով և ջրով»։ Հողատիրությունն այլևս ժառանգաբար չէր անցնում մեկից մյուսին. հողերը, այգիները, ջրաղացները, ձիթհանները, հյուրանոցները, քարվանսարաները, արհեստանոցներն ու խանութները ձեռք էին բերվում փողով։

XII դ. հաջորդող արձանագրությունների մեջ բազմաթիվ հիշատակություններ կան կրպակների, այգիների, այլևայլ կալվածքների ու արդյունագործական ձեռնարկների գնման, կամ իրենց «հոգու փրկության» համար վանքերին նվիրելու դեպքերի մասին։ Եկեղեցիներին նվիրում էին ո՛չ միայն սեփական կալվածքները, այլև դանձով գնածները, որոնք ցույց են տալիս, թե հողը դարձել էր առևտրի առարկա, դրա հետևանքով ավելի էր ուժեղանում վաշխառուական կապիտալը, որ իր կուտակումը կատարում էր ի հաշիվ ստորին խավերի։

XII — XIII դարերում է՛լ ավելի, քան նախորդ դարերում, զարգանում է քաղաքային կյանքը։ Անիում և Հայաստանի մյուս խոշոր քաղաքներում ձևավորվում և ուժ է ձեռք բերում քաղաքային դասը՝ արհեստավորները և առևտրականները։ Ներքին շուկայի լայնացման հետևանքով առևտրի մեջ էին ներգրավվում նույնիսկ քաղաքամերձ ավանները։ Վաշխառուական կապիտալը կատարում էր իր քայքայիչ դերը քաղաքում և գյուղում։ Այս պայմաններում շուկայի գների կանոնավորման հարցը պետք է որ դրաղեցներ արհեստավորությանը։ Վերջինս պետք է հանդես դար միացյալ ուժերով, որպեսզի դիմադրեր ֆեոդալների, առևտրականների ու վաշխառուների ոտնձգություններին։ Միևնույն արհեստի մարդիկ համախմբվում էին առանձին եղբայրությունների — համքարական կազմակերպությունների մեջ, ղեկավարությունը հանձնելով ընտրովի ավագներին։

Համքարությունները քաղաքներում ունեին առանձին թաղեր, որոնց մասին կան վկայություններ վիմական արձանագրություններում[1]։

Հայաստանի արհեստավորական եղբայրությունները հիմնականում նման էին Եվրոպայի, Բյուզանդիայի և Միջին Ասիայի քաղաքներում գոյություն ունեցող ցեխերին, համքարություններին։

Միջնադարյան նշանավոր հայ գործիչներից Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին իրենց առակներում նշում են ո՛չ միայն արհեստավորական կազմակերպությունների միջև տեղի ունեցած վեճերը, այլև ֆեոդալներին ու վաշխառուներին հիշեցնում են, որ չպետք է շինականներին ու արհեստավորներին ենթարկել ծանր հարկադրման, որովհետև նրանք կարող են միանալ ու ապստամբել։ Գոշը իր մի շարք առակներում խոսում է ուժեղների կողմից թույլերին արհամարհելու փաստի մասին, իսկ Վարդան Այգեկցու առակներում դասակարգային ներհակությունն ավելի սուր կերպով է արտահայտվում. օրինակ, մի առակում նա ասում է. աշխարհում մարդիկ կան, որոնք միշտ աշխատում և վաստակում են ինչպես մեղուներ,

[1] Լ. Մելիքսեթ-Բեկ, XIV դարու Այրանի որդի Սարգսի քառալեզվյան հոգևոր արձանագրության մասին։ Տեղեկագիր Հայկական ՍՍՌ ԳԱ, 1946, № 7, էջ 36։

[1] Կ. Կոստանյան, Վիմական տարեգրեր, էջ 95, 78, 169, 223։

իսկ թագավորները, իշխանները և հոգևորականներն ուտում են նրանց վաստակը. կամ մի այլ տեղ գրում է, որ հարուստները ծծում են ժողովրդի ուղեղը և հաճախ է պատահում, որ աղքատը դրանից մեռնում է։

XIII—XIV դարերի սոցիալական անարդարությունների դեմ իր բողոքն է արտահայտել միջնադարյան բանաստեղծ Ֆրիկը։ Նրա բանաստեղծություններից շատերը ուղղված են մոնղոլական հարկային ծանր քաղաքականության դեմ։

Հայաստանի խաղաղ կյանքը խախտվում է սկսած XIII դարի 30-ական թվականներից, մոնղոլական արշավանքների ժամանակ, երբ երկիրն ավերման ու կողոպտման է ենթարկվում։ Մոնղոլական հրոսակախմբերն իրար ետևից դրավում են Հայաստանի քաղաքները, չնայած սրանց (քաղաքների), մանավանդ Անիի, բնակչության հերոսական դիմադրությանը։

Մոնղոլական տիրապետության ժամանակ, հայ խոշոր ֆեոդալական տներից մի քանիսը դարձան նրանց վասալները, մասամբ վերականգնելով իրենց տերունական իրավունքները, պարտավորվելով հարկ վճարել և իրենց զորքով օգնել նրանց։

Մոնղոլական նվաճումներից զերծ մնաց միայն Կիլիկիայի հայկական թագավորությունը։ Մոնղոլական ավերիչ կարգերում և դաժան լծի տակ ամենից շատ տուժեց հայ աշխատավորությունը։ Ապստամբական փորձերը ճնշվում էին դաժանորեն։ Գյուղացիության շահագործումը հետզհետե ավելի հրեշավոր չափերի էր հասնում։ Հարկադրման էին ենթարկվում բոլոր տեսակի եկամուտները և աշխատունակ տղամարդիկ։ Այդ բազմազան հարկերից հիշենք՝ մալը, դամղան, կոպչուրը, թաղարը, նեմրին։ Բացի պետական հարկերից, գյուղացիությունն ուներ որոշ պարտավորություն ֆեոդալների նկատմամբ և տալիս էր տասանորդ նաև եկեղեցուն։

Մոնղոլական խանների ամբողջ քաղաքականության էությունն այն էր, որպեսզի նվաճված երկրներում ոչնչացվի խոշոր հողատիրությունը։ Այդ նպատակով էլ աշխարհիկ ֆեոդալներից խլում էին նրանց կալվածքները, բայց որոշ ժամանակ եկեղեցուն տալիս էին բավականին արտոնություններ, որպեսզի կարողանան նրա միջոցով ամրացնել իրենց դիրքերը։

Վերոհիշյալ հանգամանքը նկատի ունենալով, հայ ֆեոդալներն իրենց կալվածքների մի զգալի մասը նվիրում էին վանքերին, որոնց մասին վկայում են այդ դարերի բազմաթիվ վիմական արձանագրությունները։ Ֆեոդալական կալվածքների մի մասն էլ անցնում է վաճառականների, վաշխառուների ձեռքը, որոնց դիմաց վճարում էին բավական չնչին գումար։

Այդ ժամանակ առևտուրը գերազանցորեն տարանցիկ բնույթ էր կրում, ներքին շուկայական հարաբերությունները սահմանափակվել էին և այլևս չէին նպաստում արհեստագործական և գյուղատնտեսական արտադրանքների վաճառմանը։ Այդ բոլորի պատճառը մոնղոլների վարած ծանր հարկային քաղաքականությունն էր և ներքին ուժերի մասնատումը, որը հասցրեց երկիրը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ճգնաժամի։

Հայաստանի հյուսիսային մադիստրալի վրա ընկած քաղաքները, զրկվելով առևտրից ստացվող եկամուտից, խիստ տուժում էին նաև ներքին արտադրության քայքայումից, որը նրանց եկամուտի հիմնական աղբյուրն էր։ Բացի ծանր հարկերից, նաև այդ էր պատճառը, որ XIV դարի սկզբներին Հայաստանից սկսվում է մեծ արտագաղթ, ամայանում է հյուսիսային քաղաքների մեծ մասը՝ հատկապես Անի քաղաքը։ Դարի վերջին արդեն Անին նմանվում էր գյուղի, իսկ Դվինը՝ որպես քաղաք՝ համարյա դադարել էր գոյություն ունենալուց։ Երկրի արևմտյան քաղաքները նույնպես կորցրել էին իրենց նախկին դերը։ Արհեստագործությունը զրկվել էր զարգացման բոլոր հնարավորություններից։ Անիի արհեստավորների մի սուվար մասը հասնում է նույնիսկ Վոլգայի ափերը և Ղրիմ։

XIV — XVI դարերում Ղրիմը, հատկապես

Կաֆա քաղաքը, դառնում է հայկական կուլտուրայի օջախներից մեկը։ Ղրիմի հայկական գաղութը կապված էր Սև ծովի արևելյան ափերի և Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերի հետ։ Վերջիններս Ղրիմի հայ առևտրականների միջոցով կապվում էին նաև ռուսական քաղաքների հետ։

XI — XIV դարերից սկսած հայ գաղութներ են ստեղծվում Մոլդավիայում, Գալիցիայում, Բուկովինայում և այլ վայրերում։

XIV դարից Արևմտյան Ուկրաինայի մայրաքաղաք Լվովը դարձել էր Եվրոպայի հայ գաղութների մեջ ամենախոշոր և կուլտուրական կենտրոնը, որտեղ կար զարգացած արհեստագործություն ու առևտուր։

XI դարից սկսած, դեռևս սելջուկյան արշավանքներից էլ առաջ, Բյուզանդական կայսրությունը բռնի ուժով Հայաստանից գաղթեցրեց ահագին բազմություն, հատկապես երկրի ռազմական ուժը։ Սելջուկյան արշավանքների ժամանակ այդ արտագաղթն է՛լ ավելի ուժեղացավ դեպի արևմուտք։ Այդ մեծաքանակ բնակչության մի մասը բնակություն հաստատեց լեռնային Կիլիկիայում, և 1080 թվականից հիմք դրվեց հայկական Ռուբինյան իշխանությանը։

Կիլիկիայի հայ իշխանները, պայքարելով Բյուզանդական կայսրության դեմ, հետզհետե ընդարձակեցին իրենց սահմանները, տիրեցին նաև դաշտային Կիլիկիայի արգավանդ գավառներն ու առևտրական քաղաքները՝ Տարսոնը, Ադանան, Մամեստիան, Այասան, որոնք ընկած էին տարանցիկ առևտրական ճանապարհի վրա ու առևտրական հարաբերություններով կապված էին Փոքր Ասիայի, Սիրիայի, Կոստանդնուպոլսի և Սևծովյան մյուս կարևոր նավահանգիստների հետ։

Հայկական Կիլիկիան իր ծաղկման շրջանն ապրեց հատկապես Լևոն *II*-ի թագավորության օրով, որի ժամանակ Կիլիկյան երկիրը հզորացավ քաղաքականապես, կուլտուրապես ու տնտեսապես։ Կենտրոնը դարձավ Սիս քաղաքը։ Վերոհիշյալ պայմանները հնարավորություն տվեցին զարգացնելու գյուղատնտեսությունը, արհեստագործությունն ու առևտուրը։ Ավելի ուժեղացան առևտրական հարաբերությունները, մի կողմից՝ Եվրոպայի, մյուս կողմից՝ Ասիայի հետ։

Կիլիկիան ուներ հարուստ հանքային բազա, որը նպաստեց մետաղագործության հետ կապված մի շարք արհեստների զարգացմանը. հիշենք թեկուզ 1285 թվականի հատուկ պայմանագիրը, կնքված եգիպտական սուլթանության ու Կիլիկիայի հայկական թագավորության միջև, որի համաձայն ամեն տարի Կիլիկիան պետք է արտահաներ 10 հազար երկաթյա ձող։ Կիլիկիան հարուստ էր նաև ոսկու և արծաթի հանքերով, իսկ Տավրոսի լեռներում կար մեծ քանակությամբ կապար։

Հայկական Կիլիկիայի հարուստ և առատ արոտավայրերը հնարավորություն էին ստեղծել տեղում զարգացնելու անասնապահությունը, որ առատ հումք էր մատակարարում բրդյա գործվածքների համար։ Բացի այդ, Կիլիկիայում հնարավորություն կար զարգացնելու կուլտուրական բույսերի մշակումը (բամբակ, վուշ, կանեփ), որը նույնպես նպաստում էր բաղմատեսակ գործվածքների արտադրությանը։

Կիլիկիայի Տարսոն, Ադանա, Մամեստիա, Այասա և այլ հարուստ քաղաքներում զարգացած էին թե՛ առևտուրը և թե՛ արհեստի բոլոր ճյուղերը, որոնք ո՛չ միայն բավարարում էին ներքին շուկայի պահանջը, այլև արտահանում էին երկրից դուրս լավագույն գործվածքներ, գորգեր, ոսկյա և արծաթյա ձեռարվեստի նմուշներ։

Կիլիկիայում զարգացած արհեստներից էին՝ մետաղագործությունը իր տարբեր ճյուղերով, ջուլհակությունը, գորգագործությունը, կաշեգործությունը, հյուսնությունը և այլն։ Այդ արհեստների մեջ ավելի առաջ էր գնացել ոսկերչությունը, տալով ավելի բարձր գեղարվեստական արժեք ներկայացնող ոսկե և արծաթե իրեր ու զարդեր։

Ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում արհեստավորները ընդգրկված

էին «եղբայրության» (համքարային կազմակերպության) մեջ և ունեին իրենց հատուկ թաղամասերը։ Սակայն Կիլիկիայի զարգացման ու ծաղկման շրջանը երկար չտևեց։ Այդ քաղաքները ավերվեցին հատկապես եգիպտական մամլուքների արշավանքներից։ Կիլիկիայի հայկական թագավորության անկումը տեղի ունեցավ, մի կողմից, ներքին ֆեոդալական կենտրոնախույս ձգտումների ուժեղացման պատճառով, մյուս կողմից՝ արտաքին հարձակումների հետևանքով, որոնք XIV դարի վերջին ոչնչացրին Կիլիկիայի անկախությունը։

Մոնղոլական իշխանության քայքայմանը հաջորդող թյուրք-թաթարական խանների կատաղի պայքարը, որ սկսեց XIV դարի կեսից, և ապա Լենկ-Թեմուրի արշավանքները, Ղարաղոյունլուների ու Աղղոյունլուների պայքարն ու տիրապետությունը ավելի քան ավերեցին երկիրը։

Թեմուրի արշավանքների ծանրությունը ընկած էր հայ գյուղացիության վրա, որովհետև նրանք, բացի ֆեոդալական պարտավորությունից ու հոգևորական հարկից, հարկատու էին նաև պետությանը. այս բոլորին ավելանում էր Լենկ-Թեմուրի բանակը կերակրելու և խնամելու հոգսը։ Շատ ծանր էր նաև արհեստավորների վիճակը, նրանք նույնպես հարկ էին վճարում պետությանը, իսկ արհեստավորներից շատերին գաղթեցնում էին Միջին Ասիա՝ Սամարղանդ՝ աշխատեցնելու համար։

XV — XVI դարերում, անվերջ պատերազմների ու գերեվարությունների ընթացքում, մեծ թվով հայ գերիներ քշվեցին Եգիպտոս, Արաբիա, Բաղդադ, Միջին Ասիա, որպես վաճառքի ապրանք։

Կոտորածներից, գերեվարությունից ու արտագաղթից հետո բուն Հայաստանում արհեստագործությունը և համքարային կազմակերպությունները կորցրին իրենց նշանակությունը. դրան նպաստեցին մանավանդ անընդհատ պատերազմներն ու ծանր հարկադրման հալածանքները։

Հայաստանի քաղաքներից շատ քչերն էին, որ պահպանել էին առևտուրն ու արհեստը։ Այդպիսի քաղաքներից XV դարում աչքի էր ընկնում Երևանը, որը 1440 թվականին դարձավ Արևելյան Հայաստանի վարչական կենտրոնը։

Հետագայում, հատկապես XVII դարում, Երևանի դերն ու նշանակությունն ավելի է մեծանում և քաղաքը դառնում է ո՛չ միայն վարչական, այլև խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոն։

XVI դարում առաջ են գալիս փոքր քաղաքներ, ինչպես Ջուղան, աշխուժանում են Կարինը, Վանը, Երզնկան, Կարսը, Մուշը և այլ քաղաքներ։ Վերոհիշյալ քաղաքներում արտադրում են ընտիր կտավներ, մահուդներ, մետաքսյա կտորներ, հանգուցավոր գորգեր, կապերտներ և այլն, սկսում է զարգանալ ոսկերչությունը, զինագործությունը, սառը զենքի կողքին հանդես է գալիս հրազենը։

Վերոհիշյալ քաղաքները, սակայն, հիմնականում, իրենց գոյությունը դեռ պահպանում են տարանցիկ առևտրի շնորհիվ։

XVI դարի սկզբից մինչև XVIII դարի 30-ական թվականները, որոշ ընդհատումներով, Հայաստանը պատերազմական թատերաբեմ էր օսմանյան Թյուրքիայի և Պարսկաստանի միջև։ Այդ կռիվների ընթացքում մի քանի անգամ Հայաստանը բաժանվում է հիշյալ երկու արևելյան բռնակալությունների միջև։

Շահ-Աբասի պատերազմների ժամանակ Արևելյան Հայաստանի բնակչության մեծ մասը, որոնց թվում նաև մեծ քանակությամբ արհեստավորներ, 1604 թվականին գաղթեցին դեպի Պարսկաստանի խորքերը։ Քայքայվեց Երևանի և Հին Ջուղայի առևտրա-արհեստավորական դասը։

1639 թ. դաշնագրից հետո, որ կնքվեց Իրանի և Թյուրքիայի միջև, երկար ժամանակով դադարեցին պատերազմական գործողությունները։ Հայաստանից քշված բնակչության որոշ մասը՝ հետզհետե վերադառնալով, տեղում մնացած իրենց հայրենակիցնե-

րի հետ կրկին ձեռնամուխ եղան քաղաքների և գյուղերի վերաշինմանը, առևտրի ու արհեստների զարգացման գործին: Սակայն հայ աշխատավոր ժողովուրդը կրկնակի շահագործվում էր խանների ու փաշաների կողմից: Սրանք անխնա կեղեքում էին գյուղացիներին և արհեստավորներին. անգամ ապահովված չէր նրանց ֆիզիկական գոյությունը:

Այդ դարերի մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս Եսայի Հասան Ջալալյանը, որից պարզվում է, որ XVII — XVIII դարերում ծանր հարկադրման էին ենթարկվում ո՛չ միայն գյուղացիությունը, այլև վաճառականներն ու բոլոր տեսակի արհեստավորները:

Պատմիչը, խոսելով XVII — XVIII դարի պարսկա-օսմանյան բռնակալների կողմից Հայաստանի բնակչության հալածանքների, թալանի և հարկադրման մասին, գրում է.

«Եւ ցրուեցան զօրքն [պարսից] ընդ երկիրս և ընդ գիւղօրայս ի Թիւ արկեալ գրովն, և քանզի յոյժ ծանր էր լուծն և ոչ կարէին տանել, վասն որոյ չարշարէին, կեղեքէին և ջարդելով առնուին:... Նոյնպէս ի վաճառականաց, և յամենայն արուեստաւորաց առին: Եւ այսպէս ամի ամի զգլուխն համարէին, և հարկահանքն եկեալ ճշիւ առնուին: Յետ այսորիկ միւս ևս կերպիւ հարկս եդին և անուանեցին զայս ապիհուրան, դարձեալ միւս ևս եդին և զայն ասացին շահզադի ախրաջար, միւս ևս յաւելին, և անուանեցին շեշտիճար, և զայս երեքպատկեցին...» [1]:

XVII — XVIII դարերում Հայաստանի աչքի ընկնող քաղաքներն էին Երևանը, Կարսը, Կարինը, Վանը, Երզնկան, Բաղեշը, Բայազետը, Մուշը և այլն: Վերոհիշյալ քաղաքները շրջապատված էին շատ այգիներով և ընդարձակ վարելահողերով: Բացի պետական պաշտոնյաներից, քաղաքներում ապրում էին արհեստավորներ, վաճառականներ, մանր առևտրականներ և չքավոր տարրեր. վերջիններս կազմում էին ղպալի առկոս: Սրանք ապրում էին օրավարձով, աշխատում էին որպես մշակներ շինարարության վրա և արդյունաբերական մանր ձեռնարկներում, որպես վարձու բանվորներ:

Քաղաքներում զարգացած էին արհեստների մի շարք ճյուղեր՝ դարբնություն, պղնձագործություն, ոսկերչություն, նալբանդություն, զինագործություն, ջուլհակություն, գորգագործություն, ներկարարություն, սառաջություն, կոշկակարություն, հյուսնություն և այլն: Սրանք տեղավորված էին առանձին թաղամասերում, նույն պրոֆեսիայի արհեստավորները ընդգրկված էին համքարություններում: Արհեստավորների մեջ կային վարպետներ, ենթավարպետներ, որոնք ունեին մեծ թվով աշակերտներ:

XVIII — XIX դարերի համքարային կազմակերպությունների մեջ ընդգրկված վարպետների և աշակերտների թվի մասին մոտավոր պատկերացում ունենալու համար անհրաժեշտ ենք համարում բերել Ս. Եղիազարովի աշխատության մեջ [1] բերած այն փաստաթուղթը, որը վերաբերում է ո՛չ միայն Թիֆլիսի, այլև Երևան, Գյումրի-Ալեքսանդրապոլ և Ախալցխա քաղաքների համքարությանը:

Ինչպես արհեստները, այնպես էլ առևտուրը XVII, հատկապես XVIII դարերի ընթացքում է՛լ ավելի են ընդարձակվում: XVII դարից սկսած հայ վաճառականներն առևտրական հարաբերություններով կապված էին մանավանդ Ռուսաստանի հետ:

Հայ առևտրականները Մոսկվայում և Աստրախանում ունեին հայկական գաղութներ, որտեղ նրանք հիմնել էին առաջին իջևանատները: Այդ կապերը Ալեքսեյ Միխայլովիչ ցարի օրով ավելի ուժեղ արտահայտվեցին Նոր-Ջուղայի առևտրականների միջոցով, որոնք՝ մեծ արտոնություններ ստանալով ցարից՝ իրենց ձեռքը վերցրին նույնիսկ մետաքսի մենաշնորհը:

[1] Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալեան, Պատմութիւն համառօտ Ազուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 15—16:

[1] Տես С. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказьи, часть II, Городские цехи. Казань, 1891, стр. 379—380.

XIX դարի առաջին քառորդում, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո միայն բարենպաստ պայմաններ ստեղծվեցին երկրի տնտեսական-հասարակական կյանքի զարգացման համար։ 1828 — 1829 թթ. Պարսկաստանից և Թյուրքիայից Ռուսաստանի տիրապետության տակ անցած Արևելյան Հայաստան փոխադրված 150 հազար հայ բնակչությունը ո՛չ միայն ստվարացրեց գյուղական բնակչության շարքերը, այլև արհեստավորական մեծ մասսա բնակվեց Անդրկովկասի քաղաքներում և զարկ տվեց արհեստագործության զարգացմանը։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ միասին, 70—80-ական թվականներից սկսեց բավական դանդաղ քայքայվել արհեստագործությունը, տեղի տալով երկիրը ներհոսող արդյունաբերական ապրանքին, իսկ արհեստավորները իրենց հերթին ստվարացրին Անդրկովկասի պրոլետարիատի շարքերը։



ԴԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀՈՒՄ ՆՅՈՒԹԻ ԲԱԶԱՆ

Հայաստանում մետաղագործության ճյուղին պատկանող արհեստների զարգացման համար կար հումքի հարուստ բազա, որովհետև Հայկական բարձրավանդակը հարուստ է եղել բազմատեսակ մետաղահանքերով (երկաթ, պղինձ, ոսկի, արծաթ)։ Դեռևս երկրորդ հազարամյակի սկզբից Հայաստանի բնիկները ծանոթ են եղել մետաղին, մշակել և օգտագործել են այն, իսկ միջին դարերում, բնականաբար, մետաղագործությունը տեխնիկական տեսակետից ավելի է կատարելագործվում ու զարգանում։ Հայկական բարձրավանդակի հանքերի մասին մեզ տեղեկություններ են հաղորդում հունա-հռոմեական պատմիչները, որոնց փաստերը վերաբերում են ավելի հնագույն շրջանին, իսկ ավելի ուշ շրջանի մասին մենք ունենք վկայություններ հայ և արաբ պատմիչների մոտ։

Հույն պատմագիրները (VI դար մ. թ. ա), հենվելով հին աղբյուրների վրա, վկայում են, որ Սև ծովի հարավ-արևելյան երկրներում ապրում էր Խալիպ անունով վարժ ու փորձված երկաթագործ մի ցեղ, որի անունը հույների մեջ դարձել էր անվանական բառ՝ «խալիպ», որով նրանք անվանում էին պողպատը, մշակված երկաթի այդ ամենաբարձր տեսակն ու ամենադժվար դարբնումի արդյունքը[1]։

Հույն պատմիչներից Ստրաբոնն է, որը՝ տալով Սպերի շրջանի նկարագիրը, նշում է, որ Սիսպիրիտիս (Սպեր) երկրի մեջ Կաբալլայի մոտ գտնվում էին ոսկու հանքեր, ուր Ալեքսանդր Մեծն ուղարկեց Մենոնին զորքով, սակայն վերջինս տեղացիներից սպանվեց[1]։ Այնուհետև Ստրաբոնը հիշատակում է ուրիշ հանքերի մասին, ինչպես սանդիքս, որ կոչվում է նաև «հայկական գույն» և նման է կալքեչի (ծիրանի-խեցի)[2]։ Այս փաստը ապացուցում է, որ իրոք IV դարում նախքան մեր թվագրությունը, հույներին արդեն հայտնի են եղել Սպերի ոսկու հանքերը, ուր մակեդոնացի աշխարհակալի կողմից ուղարկվել է Մենոն զորավարն իր զորքով՝ ոսկու հանքերը դրավելու համար, սակայն նա հանդիպել է խիստ դիմադրության տեղի բնակիչներից, որոնք խեղդամահ են արել նրան ու այդպիսով խափանել հանքերի գրավումը։ Ստրաբոնը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև հանքերում աշխատողների վերաբերյալ։ Երբ նա խոսում է խաղտիքի մասին, որ կից էր Սպերին, պատմում է, որ այդ երկիրը հարուստ է մետաղե հանքերով՝ երկաթով ու արծաթով, որ այդտեղ ապրող լեռնցիները քիչ են զբաղվում երկրագործու-

[1] Տե՛ս Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Բ. հատ., էջ 14։

[1] Ստրաբոն, Գիրք ԺԱ, ԳԼ, ԺԴ, Հ. Աճառյանի թարգմանությամբ, Երևան, 1940, էջ 61։

[2] Նույն տեղում։

թյամբ և հիմնականում շահագործում են հանքերը [1]: Իսկ հույն պատմիչներից Պլինիոսը գրում է. «Ի դրանց Կովկասեանց ընդ լերինս Կորդուացւոյ Վալլք, Սուարնք ազգք աննուաճելիք, բայց բրօղք են հանքաց ոսկւոյ» [2], իսկ Պրոկոպիոս Կեսարացին, որ մասնակցել է Միջագետքում և Փոքր Ասիայում տեղի ունեցած արշավանքներին, որպես ականատես, իր «Պարսկական պատերազմներ» երկի մեջ հիշում է երկու բերդի անուն՝ «Փարանդիոն և Բոլոն»[3], սրանց մոտ եղել են ոսկու հանքեր, որոնք շահագործվել են հանքերի վրա վերակացու նշանակված Սիմեոն անունով մի հայի կողմից[4]:

Հայաստանի բոլոր տեսակի հանքերի մասին հայ պատմագիրները հիշատակում են զանազան կապակցությամբ: Հայ պատմիչներն ընդհանրապես շատ քիչ տեղեկություններ են տալիս ո՛չ միայն Հայաստանի տնտեսական վիճակի, կենցաղի և արհեստների ու նրանց մշակույթի մասին, այլև մեր երկրի բնական հարստությունների ու նրանց օգտագործման վերաբերյալ: Հայ պատմիչներից Մ. Խորենացին Հայաստանի նահանգների կենդանական և բուսական աշխարհի նկարագրի մասին խոսելիս տալիս է թռուցիկ տեղեկություններ նաև հանքերի վերաբերյալ: Ղազար Փարպեցին հանքերի մասին հիշատակում է, երբ խոսում է Արարատյան դաշտի բերքատվության մասին:

Նույն Ղ. Փարպեցին Հայաստանի ոսկու հանքերն է հիշատակում, երբ խոսում է ոմն իշխանի ապստամբության մասին Վահանի դեմ. «երթեալ լինէր ամբաստան զՎահանայ առաջի թագաւորին Պերոզի, ասելով, թէ «Ինձ ի գործ ոսկէհատին չետ ինչ մօտ երթալ. և իւր ժողովեալ զամենայն ոսկի աշխարհին՝ խորհի երթեալ առ կայսր և կամ յաշխարհն Հոնաց, և տուեալ զոսկին՝ կամի խնդրել գունդ և ապստամբել» [1]:

Փ. Բյուզանդը, խոսելով Հակոբ Մծբնա հայրապետի մասին, պատմում է, որ նա ճանապարհորդելով Ռշտունիքով՝ «գայր հասանէր ի լեառն երկաթահատացն և կապարահատացն» [2]:

Հայ պատմիչներից Ղևոնդ երեցը հիշում է, որ Հայաստանում բացվել են արծաթի հանքեր, որոնք օգտագործվել են Աբասյանների տիրակալության ժամանակ դրամական ճգնաժամը կանխելու համար: Արաբ պատմիչ Իբն-Ի Բատուտայի աշխատությունից տեղեկանում ենք, որ Երզնկայում կային պղնձի հանքեր և շինում էին պղնձե ամաններ ու «բայսուս»-ներ (աշտանակներ) [3]: Նույն պատմիչը, խոսելով Գյումուշ քաղաքի մասին, հիշում է, որ այդ քաղաքը շատ մեծ էր և շեն, որտեղ վաճառականներ էին գալիս Իրակից, Շամից և այդտեղ կան նաև արծաթի հանքեր [4]:

X դարի պատմիչ Մովսես Կաղանկատուացին հիշատակում է. «... Հատանի ի լերանցն ոսկի, արծաթ, պղինձ և դեղնախունկ» [5]: Նույն հեղինակը, խոսելով արհեստավորների մասին, հիշում է ոսկերիչներին. «Առաքեաց գործակալս ի վերայ ազգի-ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկէծնութեան և արծաթահալութեան և երկաթահանութեան և պղնձագործութեան ունէին» [6]:

---

1 Տես Ա ր ա բ ո ն, Գիրք ԺԱ, ԳԼ, ԺԴ, հ. Աճառյանի թարգմանությամբ, Երևան, 1940, էջ 61:

2 Ինճիճեան, Նախասութիւն, Ա. հատոր, Վենետիկ, 1835, էջ 186:

3 Ըստ Ղ. Փարպեցու՝ Փարանդիոն և Բոլոն բերդերը գտնվել են Բասենում, իսկ ըստ պրոֆ. Ն. Ադոնցի, այդ հանքերը գտնվում են Սպերում:

4 «Հնուն պատմիչների վկայությունները հին Հայաստանի ոսկու հանքերի և նրանց տեղի մասին», Երևան, 1923, էջ 8:

1 Ղ. Փարպեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1907, էջ 256—257:

2 Փ. Բյուզանդ, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 38:

3 Տես Իբն-Ի Բատուտա, Երևան, 1940, թարգմանությունը Հ. Աճառյանի, էջ 31:

4 Նույն տեղում, էջ 29:

5 Մ. Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 15:

6 Նույն տեղում, էջ 190:

Հետագա դարերում հայ պատմիչներից Կ. Գանձակեցին՝ մոնղոլական հարկային քաղաքականության մասին խոսելով, հիշում է, որ երկաթահանքերն ու աղահանքերը հարկի տակ էին գտնվում. նա միևնույն ժամանակ ավելացնում է. «Այլ և զծովակս, և. զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս, զդարբինս»[1]: Իսկ XII—XIII դարերում արաբ ճանապարհորդ Յակուտիի աշխարհագրական բառարանում մատնանշված են երկաթի հանքեր Վարաժնունիքում և Բալուի մոտ, իսկ պղնձի հանքեր՝ Գուգարքում:

Հանքերի մշակման մասին մենք ունենք տեղեկություններ ավելի ուշ շրջանի մատենագիր Հակոբ Կարնեցու մոտ: Նա, լինելով XVII դարի պատմիչ՝ իր «Տեղագիր Վերին հայոց» փոքրիկ աշխատության մեջ հետաքրքրական տեղեկություններ է տալիս Գյումուշխանի հանքերի մասին. «Եւ անտի ուղիղ ի կողմն հիւսիսոյ ձորն է Ծանախոյ, ունի գիւք և փոքր բերդորայք... եւ ունի քաղաք զԿիմիուշխանան... եւ բնակիչք սորա հայ և հոռոմք բազում... և ելանէ աստի ոսկի և արծաթ ընտիր բազում, ելանէ նաև պղինձ, արճիճ և երկաթ բազում, որ Արզրում և շրջակայքն նորա լնուն»[2]:

Հ. Կարնեցու քաղվածքից պարզվում է, որ XVII դարում Հայաստանում մշակվել և օգտագործվել են ոսկու, արծաթի, պղնձի, երկաթի հանքեր, այն էլ մեծ չափով: Օտար և հայ պատմիչների վկայություններից պարզվում է, որ Հայկական բարձրավանդակը հարուստ է եղել բազմատեսակ մետաղահանքերով՝ երկաթով, պղնձով, անագով և արծաթով և որ այդ հանքերը շահագործվել են նաև օտար տիրապետողների կողմից, սակայն մշակվել են տեղացիների ձեռքով:

XVIII դարի հայ-ռուս փոխհարաբերությունների վերաբերող մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ 1724 թ. էլչի Կարապետը, երբ Պետրոս Մեծի կողմից ուղարկվում է Հայաստան որպես պատվիրակ, գալով Ղարաբաղ, իր զեկուցագրերից մեկում տեղի հանքային հարստության մասին գրում է հետևյալը.

«Էս երկրումս արճճի մադան շատ կայ, յլնց մադան կայ, որ յեթե խալէս՝ կէս վէ կէս դուրս գէ դոյ: Եւ պղինձ (ին), և արկաթին (երկաթին Վ. Ո.) չափ չկա: Եւ զօրայ շատ անխսէբ»[1]:

Որքան այս փաստաթղթում հիշատակվածը չափազանցված լինի, այնուամենայնիվ, զեկուցողը հարկ է համարել կայսրությանը տեղյակ պահել Ղարաբաղի հանքային հարստության մասին:

Հանքային նման հարստությամբ առատ էին Սյունիքը, Գուգարքը և այլ վայրեր, որոնք հետագայում ենթարկվեցին կանոնավոր շահագործման:

Ինչպես պատմական փաստերը ցույց են տալիս, դեռևս մեր թվագրությունից առաջ, նայիրցիների ժամանակ և հետագայում՝ IX — VIII դդ. ուրարտական տիրապետության օրով Հայկական բարձրավանդակը ենթակա է եղել արևելքում հզորացող ասորական բռնակալներին, իսկ հետագայում աքեմենյան Պարսկաստանի և Հունա-Հռոմեական կայսրությանը, և ապա՝ արաբների, սելջուկների, մոնղոլների ու պարսկա-օսմանյան բռնակալների հարձակումներին: Այդ բոլոր նվաճումների համար Հայաստանը ուներ ո՛չ միայն ռազմաստրատեգիական նշանակություն, այլև նա հարուստ էր բազմատեսակ հանքերով և, որպես բերքառատ երկիր, խոշոր նշանակություն ուներ նվաճողների համար, իսկ XVII — XIX դարերում Հայաստանը հանդիսանում էր ապրանքներ սպառող շուկաներից մեկը:

Վերոհիշյալ փաստերը մեզ հիմք են տալիս ասելու, որ Հայաստանում դարբնությու-

---

[1] Կ. Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 349:

[2] Հակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 15:

[1] Г. А. Ф. К. Э. Ф. С. Р А. 1739, № 2, 38 Ա. Ա. Բրամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 38:

նը, պղնձագործությունը, ոսկերչությունն ու արծաթագործությունը զարգացնելու համար կային լայն հնարավորություններ։

Բ. ԴԱՐԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (IV—XVIII ԴԴ.)

Կովկասը և նրա հետ Հայաստանը, բրոնզե դարից սկսած, մետաղամշակման բնագավառում խոշոր դեր է խաղացել։

Էնեոլիթի շրջանում պղնձից պատրաստված արտադրության գործիքները որոշ չափով դուրս մղեցին քարե գործիքները և ավելի սահմանափակեցին նրանց օգտագործման շրջանակը, սակայն չկարողացան երկար իշխել, որովհետև պղինձը իր թույլ դիմացկունությամբ և փափկությամբ նպատակահարմար չէր գործիքների ու զենքերի պատրաստման համար։ Արտադրողական ուժերի հետագա զարգացման հետևանքով հնարավոր եղավ օգտագործել սկզբում բրոնզը և ապա երկաթը, որոնք իրենց դիմացկունությամբ հնարավորություններ ստեղծեցին մետաղագործության տեխնիկայի զարգացման համար, հատկապես երկաթի մշակման ու ձուլման բարդ ձևերը կիրառելու համար։

Ինչ խոսք, որ երկաթի մշակումը ավելի մեծ դժվարությունների հետ էր կապված, որովհետև պահանջում էր ավելի բարձր ջերմություն հոլելու և ավելի կատարելագործված տեխնիկա՝ ձուլելու համար։ Մշակման այդ դժվարությունները երկաթը դարձնում էին ավելի թանկարժեք, և այդ էր պատճառը, ինչպես նշել է պրոֆ. Ա. Սամվելյանը [1], որ երկաթը սկզբնական շրջանում (բրոնզե դարի վերջում) օգտագործել են զարդարանքներ և կամ բրոնզյա զենքերի դաստակներն ու օղերը պատրաստելու համար։ Այդ հաստատվում է Լոռիի, Բայազետի, Գոլովինոյի և Սևանի քարարկղյա դամբարաններից հայտնաբերված նյութական մնացորդներով։

Երկաթի մշակումը հետագայում ցույց տվեց, որ բրոնզի համեմատությամբ այն ավելի դիմացկուն ու նպատակահարմար է թե՛ գյուղատնտեսական գործիքներ և թե՛ զենքեր ու կենցաղային իրեր պատրաստելու համար։

Երկաթի գյուտը ունեցավ այն նշանակությունը, որ նա ընդմիշտ դուրս վանեց քարե գործիքները։ Աստիճանաբար իր նշանակությունը կորցրեց նաև բրոնզը, թեև երկար դարեր դեռ պահպանեց իր գոյությունը, օգտագործվելով զարդեր, գործիքներ ու կենցաղային իրեր պատրաստելու համար։

Դեռ շատ հին ժամանակներից դարբնությունը եղել է մասսայական ու ամենից շատ տարածված արհեստը Հայաստանում։ Քանի որ այդ արհեստը կապված էր ձուլելու և կռելու աշխատանքի հետ, և հատկապես ավելի շատ գյուղատնտեսական պահանջները բավարարելու համար, այդ պատճառով երկաթի գործածությունը մենք տեսնում ենք Հայաստանի բոլոր գյուղերում և քաղաքներում։ Սկզբնական շրջանում, երբ դեռ թույլ էր աշխատանքի բաժանումը, դարբնությունը ընդգրկում էր մի շարք արհեստներ։ Դարբինները երկաթից, պղնձից, բրոնզից պատրաստում էին ո՛չ միայն գյուղատնտեսական գործիքներ, այլև զենքեր ու տնային-կենցաղային իրեր, նույնիսկ զարդարանքներ։ Ինչպես պատմությունից գիտենք, Հայաստան են ներմուծվել դեռևս հնագույն շրջանում շատ իրեր և արտահանվել որոշ նյութեր, որոնց հետ մենք ծանոթացանք նախորդ գլխում։ Սակայն դարբնության արհեստի հետ կապված արտադրանքներ պատրաստվել ու մշակվել են տեղում։ Օտար և հայ պատմիչների հաղորդումները, ինչպես տեսանք, հաստատում են, որ Հայկական բարձրավանդակում կար մետաղահանքերի հարուստ բազա, որոնց մշակումը, սկսած հնագույն ժամանակներից, կատարվում էր տեղացիների ձեռքով։

Դարբնության զարգացած և մասսայական արհեստ լինելը հաստատվում է պեղումների ընթացքում դամբարաններից, Դվինից ու

---

[1] Տես Ա. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, էջ 15։

Անիից հայտնաբերված հարուստ նյութական մնացորդներով։

1937—39 թթ. պեղումների ժամանակ Դվին քաղաքի կենտրոնական թաղամասում հայտնաբերվել է դարբնի արհեստանոց, որը պատկանում է XII—XIII դարերի սկզբին [1]։ Այստեղ գտնվել է դարբնի պատրաստած առարկաների մի մեծ կույտ, որի մեջ նկատվում են կացնի, տապարի, գամերի, շղթաների հետքեր՝ քայքայված վիճակում. դարբնի արհեստանոցի մնացորդներ բացվել են հետագա տարիների՝ 1946—52 թթ. պեղումների ժամանակ միջնաբերդում, կենտրոնական թաղամասում և ստորին պարսպի շրջակայքում։ Դարբնի արհեստանոցի հետքեր հայտնաբերվել են նաև 1907 թվականին՝ Անիի հյուրանոցի մոտ, որտեղ պատրաստել են պղնձյա մանր իրեր՝ գամեր, գոտու մասեր (չափրասաններ, կոճակներ, ուլունքներ, կրծքի քորոցներ և այլն)։ Հետաքրքիրն այն է, որ այս արհեստանոցում գտնվել է չավարտած, կիսամշակ վիճակում չափրաստի մի նմուշ։ Այս փաստն ինքնին հաստատում է, որ այդ արհեստանոցում պատրաստվել են գլխավորապես մանր տեսակի պղնձյա իրեր ու զարդեր։ Վերոհիշյալ արհեստանոցի աջ կողմում պեղումների ժամանակ գտնվել է քարից երկու օջախ [2], որոնցից մեկը ամբողջական է, իսկ մյուսը՝ կիսով չափ վնասված։ Այդպիսի դարբնոցներ հավանորեն գոյություն են ունեցել Հայաստանի մի շարք գյուղերում ու քաղաքներում, որոնք դեռևս մեզ անհայտ են։

Չնայած դարբնությունը ամենից լայն ու տարածված արհեստն էր, որի կարիքը զգում էր Հայաստանի թե՛ գյուղի և թե՛ քաղաքի բնակչությունը, և մասսայական արտադրության համար շատ կարևոր տեղ էր բռնում, բայց և այնպես, հայ մատենագիրները, ինչպես մյուս արհեստների մասին, այնպես էլ դարբնության ու պղնձագործության վերաբերյալ որևէ հիշատակություն չեն տալիս, միայն երբեմն խոսում են պղնձե ու երկաթե իրերի մասին։

Դարբնության վերաբերյալ որոշ փաստեր են տալիս վիմական արձանագրությունները և ձեռագրերի հիշատակարանները, որտեղ կարելի է գտնել անգամ դարբին արհեստավորների անուններ՝ նվիրատվության կամ այլ առիթով։

XIII դարի նվիրատվական մի արձանագրության մեջ կարդում ենք. «ի թուիս ՈԿԲ [1213] ողորմութեամբն... ես Աբգլմսեհ կրանակաոս Կոնդերս դարբին տուաք զսա երկու դուռն տներն ի սուրբ ուխտս Խծկաւնից...» [1]։ Դարբնության մասին կա նաև հիշատակված Հայաստանի Մատենադարանի № 695 ձեռագրի 187 էջում, որտեղ արտահայտված է ժողովրդի կարծիքն ու վերաբերմունքը այդ արհեստի նկատմամբ, ուստի անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել այդ բաժնում հիշատակված մի շարք արհեստներից միայն դարբնության վերաբերվող տողերը.

«Զինչ արուեստ կայ որ կու բանի, հանց ասեն դարբին տեսանես յերազի՝ մեծ մարդ է, թե ինքն դարբնութիւն առնի՝ գանձ գտանէ. թէ լինի դարբին՝ զմարդու բանն յատեանն կատարէ...» [2]։

Մի ձեռագրական հիշատակարան տալիս է դարբնի բնութագիրը, թե ինչպիսի ժրաջան աշխատանք է կատարում նա. «թուի ՈՀԲ [1223] տէր աստուած ողորմեսցի ի գաւառապետին Մրվան դարբնի, որ սարուծիկն մեր զուքէր և այլ զինչ տանս պէտք էր՝ անսըրտում աշխատէր և ոչ հապաղէր, այլ սրտով խորհրդով գործէր» [3]։

Մատենադարանի № 2743 ձեռագրի հիշատակարանում խոսվում է մի շարք ար-

---

1 Տես Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 154։

2 Տես И. А. Орбели, Каталог Анийского музея древностей, стр. 108.

1 Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, էջ 55։

2 Մատենադարանի № 695 ձեռագիրը, էջ 187։

3 Նույն տեղում, էջ 205։

հետների մասին և ապա հիշատակվում են Աբրահամ և Սիսոն դարբինների, անուննե-րը, որոնք մեծ օժանդակություն են ցույց տվել Կաթողիկեի կառուցմանը, իսկ № 3797 ձեռագիր Ճառընտիրում, որ պատկանում է XIV դարին, հիշվում է ինչ-որ Հեթում անունով դարբին [1]։ Վանում գրված № 4 185 ձեռագրի հիշատակարանում գրիչը՝ մեկ առ մեկ թվելով սուրբ Զորավոր նորակառույց եկեղեցուն իշխանների, վաճառականների և արհեստավորների կողմից կատարած նվիրատվությունները՝ հիշատակում է նաև դարբին ու պղնձագործ արհեստավորների անուններ, որոնք իրենց ձեռքով պատրաստած բուրվառներ, մոմակալներ, կաթսաներ, թասեր, խաչեր, սկիհներ և այլ իրեր են նվիրել այդ եկեղեցուն։

Դարբնության արհեստի մասսայական լինելը հաստատվում է նաև Կիրակոս Գանձակեցու կողմից տրված տեղեկություններով։ Պատմիչը, խոսելով հարկերի մասին, հիշատակում է, որ ոչ միայն քաղաքի, այլև գյուղի դարբինները հարկադրման էին ենթարկվում մոնղոլների կողմից [2]։

Դարբնության արհեստի տարածված և է՛լ ավելի զարգացած լինելը հաստատվում է նաև նրանով, որ այդ արհեստավորները այնքան շատ են եղել, որ քաղաքներում ունեցել են իրենց առանձին թաղամասերը։

Վիմական արձանագրություններից մեկում, որը վերաբերում է Հոռոմոսի վանքին, մի շարք արհեստավորական թաղամասերի թվում հիշատակվում է նաև դարբնոցների փողոցը։ Նվիրական այս արձանագրությունից պարզվում է, որ Վահան անունով մեկի կողմից Հոռոմոսի վանքին տված կուղպակներից (խանութներից) մեկը գտնվել է «դարբնո» փողոցի վրա [3]։

Չնայած «դարբնո» փողոցների մասին մյուս քաղաքներից տեղեկություններ չունենք, սակայն երկաթյա և պղնձյա իրերի նյութական մնացորդների մեծ քանակը և երկնակայի «եղբայրության» (համքարության) մասին եղած փաստերը [1] ապացուցում են, որ այդ կարևոր արհեստով զբաղվողները ամեն քաղաքում ունեցել են իրենց արհեստանոցների համար առանձին թաղամասեր։ Անգամ մինչև XIX դարի վերջերը մենք դարբինների թաղամասեր տեսնում ենք Վանում, Էրզրումում, Կարսում, Գյումրի-Լենինականում, Ախալցխայում և Երևանում։

Վիմական արձանագրություններից և Էրզրումի դարբինների համքարային կանոնագրից [2] ու, առհասարակ, Կովկասի, Ռուսաստանի [3] և այլ երկրների նույնանման կանոնագրերում եղած փաստերից պետք է եզրակացնել, որ քաղաքի դարբնոցները հեռու են գտնվել մյուս արհեստավորական թաղամասերից, նախ, քաղաքի հիմնական մասը հրդեհից ապահովելու և աղմուկից հեռու պահելու համար, իսկ մյուս կողմից՝ դարբնոցների յուրահատուկ պահանջները բավարարելու (մեծ հրապարակ — անասունների ու սայլերի համար) նպատակով։

IX — XIII դարում մետաղագործ արհեստների որոշ ճյուղերի տրվել է առաջնակարգ տեղ, ելնելով տվյալ ժամանակաշրջանի հասարակական պահանջներից։ Այդ երևույթը իր արտահայտությունն է գտել Մխիթար Գոշի առակներում։ Ըստ այդ աղբյուրի, երբ երկաթագործն ու պղնձագործն իրենց վեճը լուծելու համար դիմում են «ծերերի ատյանին», «նոքա մեծարգոյ ցուցին ղերկաթագործ ասելով, թէ հասարակաց օգտակարն պատուական է» [4]։ Նույն հեղինակը իր Դատաստանագրքում ունի առանձին կետ

---

[1] Տես Լ. Խաչիկյան, XIV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 366։

[2] Տես Կ. Գանձակեցի, էջ 349։

[3] Տես Ա. Կոստանյան, Վիմական տարեգիր, էջ 241։

[1] Տես Լ. Խաչիկյան, Տեղեկագիր, 1951, № 12, էջ 71։

[2] Տես Исследования по истории учреждений в Закавказьи, Казань, 1891. стр. 376.

[3] Տես Рыбаков, Ремесло в древней. Руси, М., 1948, стр. 123.

[4] Մ. Գոշ, Առակներ, Երևան, 1951, էջ 122։

տարբեր արհեստների գնահատման մասին, ուր ասված է, թե «օգտակար արուեստն հոդագործութիւն և դարբնութիւն է», և ապա ավելացնում է. «առաւել պատուէին երկաթագործ ու փայտագործ»։

IX դարի երկրորդ կեսից արտադրողական ուժերի համեմատաբար ավելի զարգացման հետևանքով, մի կողմից, գյուղատնտեսության զարգացան համար պահանջվեցին ավելի ամուր ու կատարելագործված գործիքներ, և մյուս կողմից՝ քաղաքների աճը և բնակչության պահանջը ավելի ուժեղացրեց աշխատանքի բաժանումը և արհեստների մասնագիտացումը։

Արհեստների բաժանման կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում հիշատակել № 695 ձեռագիր ժողովածուն, որտեղ հիշվում է 40-ից ավելի արհեստ. այս փաստաթղթում հատկապես հետաքրքիր է մետաղագործության վերաբերող հատվածը, որ ցույց է տալիս այդ արհեստի մասնագիտացումը.

«Ջինչ արուէստ կա որ կու բանի, հանց ասեն դարբին տեսանես երազին՝ մեծ մարդ է... Սլեհարար հանց լինի՝ որ օգնական է, նալբանդն՝ յալոցն լաւարար մարդ լինի, կողպայքարարը (փականագործը)՝ առաջնորդ մարդ լինի և ուղղորդ. պղնձագործն՝ հաւատացեալ մարդ է և չարչարկոտ, ... ոսկերիչն ստախոս»[1]։

Այս քաղվածքից արդեն կարելի է որոշակի գաղափար կազմել, որ XIII դարում մետաղամշակման արհեստը բաժանված էր առնվազն 6 մասնագիտական ճյուղի։ Վերոհիշյալից պարզվում է նաև այն, որ այդ արհեստների մասնագիտացումը բխում էր նրանից, որ արհեստավորները պետք է բավարարեին արդեն ո՛չ միայն զինվականության և զորքի, այլև, գերազանցորեն, քաղաքային դասի և գյուղացիության աճող պահանջները, պատրաստելով մետաղյա ամեն տեսակի գործիքներ ու իրեր։

Դարբինը, որ առաջ իր ձեռքով էր արտադրում բազմատեսակ երկաթյա գործիքներ ու իրեր, այժմ հազիվ հնարավորություն ուներ պատրաստելու միայն գյուղատնտեսության հետ կապված աշխատանքային գործիքները։

Քննության առարկա շրջանում արդեն դարբնի կողքին տեսնում ենք նաև կողպեքարար, նալբանդ, սլեհարար (զինագործ) և այլ արհեստներ. պարզ է, որ կողպեքարարը արդեն չէր զբաղվում գյուղատնտեսական գործիքների պատրաստմամբ և ո՛չ էլ սլեհարարը, նալբանդն ու լիամարարը, այլ դրանցից յուրաքանչյուրը աշխատում էր ըստ իր մասնագիտության։

Դարբին արհեստավորի ձեռքով պատրաստված արտադրանքը հիմնականում բաժանվում է 3 տեսակի.

1. Գյուղատնտեսական գործիքներ։
2. Արհեստավորների համար աշխատանքային գործիքներ։
3. Տնային և կենցաղային իրեր։

Հայկական բարձրավանդակի կլիմայական բազմազանությունը նպաստել է, որպեսզի ազգաբնակչությունը զբաղվի թե՛ երկրագործությամբ, թե՛ անասնապահությամբ և թե՛ այգեգործությամբ։

Հայաստանում կուլտուրական բույսերի մշակույթից ստացված արդյունքների հետ մենք ծանոթ ենք դեռևս ուրարտացիների, իսկ հետո՝ քսենեֆոնյան շրջանից։ Գյուղատնտեսության համար անհրաժեշտ էին աշխատանքային գործիքներ, որոնց մնացորդների որոշ մասը հայտնաբերվել է դեռևս առաջին հաղարամյակին պատկանող դամբարաններից։ Այդ պեղածո իրերի մեջ գտնվել են մանգաղներ, եղաններ՝ բրոնզից, երկաթից, որոնք չնչին տարբերությամբ իրենց ձևերով նման են միջնադարյան և նույնիսկ ավելի ուշ շրջանի մանգաղներին, իսկ վերջիններիս կոթառները ու շատ եղաններ հավանաբար պատրաստվել են փայտից և մեզ չեն հասել։

Երկժանի բրոնզե եղանի մի նմուշ գտնը-

---

[1] Մատենադարանի ձեռագիր, № 695, էջ 167։

վել է Մարտունու շրջանի Ադիաման գյուղի ցեղապետի դամբարանից, իսկ մի ուրիշ նմուշ, նույնպես բրոնզից, գտնվել է Ն. Բայազետի շրջանից։ Մինչև հիմա պեղումներից դեռևս չի հայտնաբերվել փայտյա արոր կամ եղան, բացառությամբ Յուղլանդիայի մի ճահճի միջից գտնված փայտյա արորի, որը պատկանում է առաջին հազարամյակին։ Սակայն փայտյա արորի բացակայությունը մեզ չի կարող հիմք ծառայել ասելու, որ այն գոյություն չի ունեցել։ Միջնադարյան գերեզմանաքարերից մեկի վրա, որ գտնվել է Զանգեզուրի շրջանից [1], պատկերված է մի զույգ եզ լծված արորին. մաճկալը մեկ ձեռքով բռնել է մաճից, իսկ ոտքով ամուր հենվել է խոփի վրա՝ վարի ժամանակ ուղղությունը պահպանելու համար (տե՛ս նկ. 1)։

Հնագույն երկաթյա խոփերից մեկ նմուշ հայտնաբերվել է Թոփրախ-կալեի պեղումներից, որը պատկանում է ուրարտական շրջանին։ Երկաթյա խոփի նմուշներ հայտնաբերվել են միջնադարյան վայրերից. անհրաժեշտ է նշել Զվարթնոցի երկաթյա մեծ խոփը, որը պատկանում է VIII—IX դարերին։ Նույնատիպ խոփ գտնվել է Դվինի պեղումներից [2] (տե՛ս նկ. 2), դրանք օգտագործվել են Հայաստանում մինչև XIX դարի վերջերը, միայն այն տարբերությամբ, որ վերջին շրջանում ավելի խոր ակոսներ տալու համար խոփերը պատրաստվում էին ավելի հաստ ու մեծ։

X դարի արաբ մատենագիր Ալ-Մուկադասին նշում է, որ Արտաբիլի բնակիչները (մեր կարծիքով այդ պետք է վերաբերվի նաև Հայաստանին) հողը վարել են չորս լուծ եղներով քաշվող արորով և այդ եզների յուրաքանչյուր զույգն ունեցել է իր քշող հոտաղն ու մաճկալը [3]։

Հայ պատմիչներից Մատթեոս Ուռհայեցու մոտ ևս կա կարևոր վկայություն երկրագործական արորի մասին, որ օգտագործվել է միջնադարյան Հայաստանում։ Պատմիչը, խոսելով Արծն քաղաքի [1] ավերման մասին (1049 թվականին), մեկ առ մեկ թվում է այդ քաղաքի կողոպտման մանրամասնությունը սելջուկ-թուրքերի կողմից, որտեղ հիշվում է նաև Աբրիհիմ-քորեպիսկոպոսը, որին անվանում էին Դավթուն. նրա գանձարանից վերցրել են մեծ քանակությամբ գումար ոսկուց և արծաթից, դիպակներ... ապա հիշվում է, որ այդ ազնվականի տնից դուրս էր գալիս նաև «ութ հարիւր վեցկի եզանց»[1]։

Վերոհիշյալ փաստը ինքնըստինքյան հաստատում է, որ այդ ազնվականը եղել է խոշոր կալվածատեր և իր բազմաթիվ լծկաններով մշակել ու վարել է տվել իր հողամասերը, որոնց վրա աշխատել են, անշուշտ, ճորտ գյուղացիները. սրանք, ամենայն հավանականությամբ, օգտագործել են դարբնոցներում պատրաստված երկաթյա մեծ խոփեր։

XIII — XIV դարերի հիշատակարաններում կան անվանական տեղեկություններ գյուղական մաճկալների [2] մասին, որոնց աշխատանքը կապված է գութանի հետ։

Գյուղատնտեսության համար կարևոր գործիքներ էին համարվում մանգաղն ու բահը, որոնք նույնպես պատրաստվում էին դարբնոցում։

Առաջին հազարամյակին պատկանող դամբարաններից հայտնաբերվել են բրոնզյա մանգաղներ [3], սրանք իրենց ձևով ընդհանուր նմանություն ունեն միջնադարյան մանգաղներին, միայն այն տարբերությամբ, որ վերջին շրջանում մեծ մասամբ պատրաստվում էին երկաթից։ Երկաթյա մանգաղներ գտնվել են Դվինի 1951 թվականի

---

1 Գերեզմանաքարը գտել է Պատմության թանգարանի գիտ. աշխատակից Վ. Բդոյանը։

2 Տես Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 155։

3 Տես Ա. Մուկադասի, C. M. O. M. П. K, XXXVIII, 1908, стр. 16.

1 Մ. Ուռհայեցի, էջ 103։

2 Տես Լ. Խաչիկյան, XIV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 116, 233, 418։

3 Տես մանգաղ №№ 280/32, 788/34։



Նկ. 1. Աղոր, բարձրաքանդակ տապանաքարի վրա, Սիսիանի շրջանում, XV դար։

պեղումներից [1], իսկ Անիում և Դվինում բացված դարբնոցի մնացորդների կույտի մեջ, մի շարք իրերի հետ, գտնվել են նաև մանգաղի կտորներ՝ քայքայված վիճակում (տե՛ս նկ. 3)։

Դարբնի արհեստանոցում են պատրաստվել զանազան տեսակի բահեր, որոնք օգտագործվել են ո՛չ միայն երկրագործության, այլև այգեգործության ու շինարարության մեջ փորելու կամ առու հանելու համար. բահը պատրաստվում էր ավելի սուր և ոտքի հարվածի համար ունենում էր հատուկ հարմարանք, իսկ շինարարության մեջ գործադրվող բահերը լինում էին ավելի լայն ու խոր։

Հնագույն շրջանից մենք ունենք այդպիսի օրինակ միայն Կարմիր բլուրից, սակայն Դվինի պեղումներից գտնվել է ամբողջական մի բահ [2], որի կառուցվածքից երևում է, որ այն օգտագործվել է երկրագործական ու այգեգործական աշխատանքների ժամանակ։

Բահի մի ուրիշ օրինակ գտնվել է Դվինի 1938 թ. պեղումների ժամանակ՝ դարբնի արհեստանոցի իրերի մեջ, բայց խիստ քայքայված վիճակում։ Բահի նմուշներ կան նաև Զվարթնոցի և Ախթամարի բարձրաքանդակների վրա (տե՛ս նկ. 4)։

Գառնիի, Զվարթնոցի և այլ վայրերի պեղումներից հայտնաբերվել են մեծ քանակությամբ երկաթյա գամերի ու կապերի մնացորդներ։ Այս մնացորդները հաստատում են, որ երկաթի գործածությունը խոշոր տեղ է բռնել նաև շինարարության մեջ։ Հայաստանի դարբինները դեռևս հին ժամանակներից իրենց մասնակցությունը ցուցաբերել են կառուցողական գործին, նրանք պատրաստել են ո՛չ միայն երկաթյա դռներ, այլև երկաթից պատրաստել են հատուկ կապեր, որոնցով միացնում էին անկյունաքարերը շաղախի հետ։ Այս մասին գրավոր տեղեկություններ են հաղորդում հայ պատմիչները։

Մովսես Խորենացին Գառնիի տաճարի շինարարության առթիվ գրում է. «Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամ-

[1] Մանգաղները Դվինից № 1913/177 (պահպանվում են Պետ. պատմական թանգարանում)։

[2] Տես Դվինում գտնված № 1908/428։

րոցին Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ». ապա հիշում է նաև Երվանդաշատ բերդի կառուցման ժամանակ պղնձե դռներ շինելու և երկաթյա սանդուխքներ պատրաստելու մասին [1]։



Նկ. 2. Գուբանի երկաթե խոփ, Դվինի պեղումներից, IX—X դդ.
Պետ. պատմական թանգարան

Պատմական տեղեկությունների համաձայն մեծ քանակությամբ երկաթ է գործադրվել Գագիկ Արծրունու կողմից կառուցված Ախթամարի տաճարի շինարարության վրա (ըստ Թ. Արծրունու՝ մոտ երկու հարյուր հազար լիտր երկաթ)։ «Եւ քանդի էին ի դրան արքունի գումարեալք արուեստաւորք բազումք, արք պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրէ, որք ոչ վրիպէին առնել զոր խորհէր արքայ, այլ ըստ հրամանին վաղվաղակի և գործն առնոյր զկատարումն՝ ումեմն ի նոցանէ ճարտարապետի առն իմաստնոյ և հանճարեղի հրամայէ թագաւորն շինել տաճար մի քառանկիւն [40] կանգնաւ ունելով զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և ի բարձրութիւնն, որոյ որմոյն լայնութիւնն երիւք մեծաքայլութեամբ չափով ունի զպարզուածսն, գունդ անապակ կրոց և քարի, իբրև զհալուածս կապարի և պղնձոյ ընդ միմեանս խառնեալ, և շինուած տաճարին ի հիմանց անտի մինչև ցգլուխ նորին ի թռիչս կազմեալ՝ առանց սեան... Պատմեաց մեզ և հաւատարիմ ոստիկան մի ի գործավարաց քաղաքին, եթէ եմուտ ի շինուած տաճարին երկաթ լտերս իբրև մո. [200000] եւ հաւաստապէս ճշմարտութեամբ նուազեաց զասելն, քան թէ առատութեամբն յաւելեաց ի բազումս» [1]։

Հնագիտական հետազոտությունները հաստատում են պատմիչների տվյալների ճշտությունը։

Երկաթի գործածությունը Հայաստանում շատ հին ժամանակներից է սկիզբ առնում։ Երկաթյա գամերի և արճիճի մնացորդներ նկատվել են Երվանդաշատ բերդի պարիսպներից ընկած քարերի վրա։ Երկաթակապերի մնացորդներ ակներև են նաև Գառնիում՝ Տրդատի հուշարձանի վրա. 1950—51 թթ. պեղումների ժամանակ բացված պարիսպների շարվածքից ևս երևաց, որ շարվածքի քարերը կապվել են իրար հետ երկաթե կապերով, որոնց ծայրերը ամրացվել են քարերի փոսիկների մեջ կապարով։ Քարերը երկաթով կապելուց հետո պատի երկու կողմում եղած քարերի արանքում լցրել են կրաշաղախի հեղուկ, որը ամրացնում ու միացնում է քարերը իրար հետ և արգելք է հանդիսանում օդի ներս թափանցելուն։ Երկաթյա կապեր գտնվել են նաև Անիի հին պա-

[1] Տես Մ. Խորենացի, Թիֆլիս, 1913, էջ 243 և 161։

[1] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 481—482։



Նկ. 3. Մանրապատ և դանակներ, Անիի պեղումներից, X—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան

րիսպների մնացորդների վրա։ Երկաթյա բևեռների ու կապերի օգտագործումը մենք տեսնում ենք Զվարթնոց եկեղեցու պատերի մեջ և Երևանի Կաթողիկե եկեղեցու անկյունաքարերի միացման տեղերում։ 1946—52 թթ. Դվինի պեղումների ժամանակ ևս հայտնաբերվեցին երկաթյա կապեր ու գամերի առանձին տեսակներ։ Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նույն տեխնիկան կիրառվել է նաև Դվինում, կղմինդրի և շաղախի միացման ժամանակ [1]։ VII դարի Կարմրավոր եկեղեցու կղմինդրի վրա և Դվինի 1937—52 թվականների պեղումների ընթացքում գտնվել են մեծ քանակությամբ կղմինդրի ծածկեր, որոնց վրա երևում են երկաթյա կապերի հետքեր։

Վերոհիշյալ փաստերը հաստատում են, որ երկաթագործ արհեստավորների ձեռքով պատրաստվել են հատուկ բևեռներ ու կապեր, որոնցով կատարվել են քարերի, կղմինդրների ու շաղախի ամրացումները հատկապես պատերի անկյունային մասերում։ Դարբնի աշխատանքի արդյունք են նաև մեր պատմիչների կողմից շատ հաճախ

1 Տես Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 233։

Նկ. 4. Որմնադիր վարպետ Հովհանի բարձրաքանդակը Զվարթնոցում, VII դ. Զվարթնոցի թանգարան

հիշված «դրունս պղնձիս»[1], որոնց մնացորդները, դժբախտաբար, շատ քիչ են հասել մեզ, բացառությամբ Անիի գլխավոր մուտքի և Տաթևի պարիսպի դռների: Հայաստանում ավելի շատ տարածված էր փայտյա դռների որոշ մասերը պղնձով կամ երկաթով ամրացնելու տեխնիկան:

Դարբին արհեստավորների ձեռքով են պատրաստվել տարբեր արհեստների համար գործադրվող մետաղյա աշխատանքային գործիքները, որոնց նմուշները հայտնաբերվել են պեղումների ժամանակ: Արհեստավորական գործիքների նմուշներ գտնվել են ո՛չ միայն քարարկղյա դամբարաններից, այլև Անիի ու Դվինի պեղումների ժամանակ: Այդ պեղումներից հայտնաբերվել են երկաթից մեծ ու փոքր տեսակի դուրեր, հատիչներ, որոնք օգտագործվել են հյուսների, քարտաշների ու պղնձագործ արհեստավորների կողմից: Այդ գործիքների անբաժան մասն են կազմել նաև տարբեր տեսակի մուրճերը: Հետաքրքիր են Անիի պեղումներից գտնված մի քանի դուրեր, որոնք օգտագործ-

[1] Տե՛ս Մ. Խորենացի, էջ 161:

վել են քարտաշ վարպետի կողմից[1]: Բացի դրանից, գտնվել են նաև երկաթյա այնպիսի հատիչներ, որոնք գործ են ածվել ատաղձագործի արհեստանոցում փայտը հատելու, ծակելու կամ շերտելու համար[2]: Նույն ձևի դուրեր գտնվել են նաև Դվինի պեղումներից[3]: Արհեստավորական գործիքների թվին են պատկանում նաև կացինների զանազան տեսակները, որոնք օգտագործվել են փայտ կտրելու և մեծ դերաններ տաշելու համար: Գտնվել է նաև ուրագ, որը հյուսնի ամենաանհրաժեշտ գործիքներից մեկն է, փայտյա կահույքներ և կամ գյուղատնտեսական մանր գործիքներ ու փայտյա դագդահներ պատրաստելու համար:

Հնագույն շրջանի դամբարաններից զենքերի ու զանազան իրերի հետ գտնվել են սակրեր, որոնք ո՛չ միայն որպես զենք են օգտագործվել, այլև ծառայել են հարվածելու և որևիցե իր կռելու համար: Այդպիսի սակրերի նմուշներ գտնվել են առաջին հազարամյակին և ավելի ուշ շրջանի պատկանող դամբարանների պեղումներից:

Անիի և Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերվել են կացնի տարբեր տեսակներ, որոնցից մեկը հյուսնի գործիք է, իսկ մյուսը՝ օգտագործվել է տնտեսության, շինարարության և հողագործության համար:

1907 թ. Անիի պեղումների ժամանակ բացված դարբնոցի երկաթյա իրերի մնացորդների մեջ պահպանվել էին նաև կացնի մասեր՝ քայքայված վիճակում, իսկ պարիսպների մոտ, Կարսի դռան ուղղությամբ, գտնվել են երկաթյա զանազան ձևի տապարներ: Դրանցից մեկը նեղ է և երկար: Ակադեմիկոս Հ. Օրբելին իր Անիի կատալոգում գրում է, որ այդ տիպի տապարները օգտագործվել են պատերազմի ժամանակ[1]: Սակայն, պետք է նշել, որ նրանք նման են նաև մեր այժմյան կացիններին, որոնք, ինչպես գիտենք, օգտագործվել են գյուղատնտեսության ու շինարարության մեջ: Բացի վերոհիշյալից, Անիում գտնվել է նաև մի ուրիշ տեսակի կացին (№ 06, № 2—1)[2], որը նման է մեր սովորական կացիններին և, ամենայն հավանականությամբ, օգտագործվել է փայտամշակման ժամանակ:

Կացինների ամբողջական նմուշներ գտնվել են նաև Դվինում 1946—51 թթ. պեղումների ժամանակ: Դրանցից մեկը ավելի մեծ է ու բերանից մինչև կոթառը ունի 24 սմ երկարություն. սրանով, անշուշտ, փայտ են կտրել, իսկ մեկ ուրիշը, որ չափով ավելի փոքր է, բերանի մասում ունի որոշ կեռություն. դա հիմք է տալիս ենթադրելու, որ այն օգտագործվել է տնտեսության մեջ մանր փայտյա իրեր պատրաստելու համար: Բացի կացիններից, Դվինի 1949 թ. պեղումների ժամանակ գտնվել է մի ձեռնուրագ (№ 1905/50), որ նման է մեր այժմյան ուրագներին. դրանով, հավանորեն, կատարել են տաշելու և հարթելու աշխատանք, նման մեր այժմյան հյուսնական ռանդային. կարևորն այն է, ինչպես այդ մասին հիշատակել է Կ. Ղաֆադարյանը իր «Դվինի պեղումները» աշխատության մեջ, որ այդ ուրագը կիսամշակ վիճակում է, այսինքն՝ պետք է ենթադրել, որ այն պատրաստվել է տեղում (նկ. 5,6):

Դվինի պեղումներից գտնվել են նաև սղոցի մի քանի կտորներ և երկաթյա մանդաղաձև գործիք: Բացի դրանից գտնվել է մի սանրաձև երկաթյա առարկա, որը օգտագործվել է ձիեր թիմարելու համար[3]: Հիշատակության արժանի են նաև դերձակներին, ջուլհակներին, գորգագործ-

---

1 Տես И. Орбели, Каталог Анийского музея древностей, стр. 108.

2 Նույն տեղում, էջ 110, 111:

3 Տես Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 157:

1 Տես И. Орбели, Каталог Анийского музея древностей, стр. 110.

2 Նույն տեղում:

3 Տես Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 157:

ներին վերաբերող գործիքներից՝ հերունները, մկրատները [1], թել հարթող, կարող, կոկող գործիքները, որոնք նույնպես պատրաստվում էին մետաղից (նկ. 7)։

Ջմռռանանք նշել, որ դարբնոցում երկաթից ձուլման միջոցով պատրաստում էին

Նկ. 5. Ուրագ, Դվինի պեղումներից, IX—X դդ. Պետ. պատմական թանգարան

ջրատար փոքր ու մեծ խողովակներ։ Այդ խողովակների միացման մասերից երևում է, որ երկաթագործները ծանոթ էին նաև զոդման արվեստին. հայտնի է, որ թե՛ ձուլումը և թե՛ զոդումը կատարվում են բարձր ջերմաստիճանի տակ և դրանց համար անհրաժեշտ են հատուկ հալոցներ։ Մեր մատենադրության մեջ կան հիշատակություններ անգամ միջնադարյան հալոցների մասին։ Կ. Սասնեցու մոտ հանդիպում ենք՝ «եկն նշանաւք և արուեստիւք և եհան յերկաթի հալոցէն» [2]։

Երկաթյա խողովակի մնացորդներ գտնվել են Դվինի [3], Անիի և Անբերդի պեղում-

[1] Տես Դվինից գտնված մկրատներ, № 1917/92 մեծ մկրատ, № 1848/25 միջակ մկրատ և 1905/110 փոքր մկրատ։

[2] Կ. ե պ. Սասնեցի, Ներբողեան յաղագս վարուց և մահուան ս. վարդ. Մեսրոպայ, Վաղարշապատ, 1897, էջ 49։

[3] Տես Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 160։

ներից։ Դրանցից անհրաժեշտ է հիշել 1908 թ. բացահայտված Անիի Բագրատունիների պալատի պատի սվաղի տակով դեպի դահլիճ տանող շատրվանի համար պատրաստած խողովակները։ Երկաթյա խողովակների մնացորդներ գտնվել են նաև Դվինի և Անբերդի բաղնիքի պեղման ժամանակ։ Բաղնիքների ջրատար երկաթյա խողովակներ բացվել են նաև Խերսոնեսում (Ղրիմ), Դմանիսում (Վրաստան), որոնք պատկանում են XIII դարին։

Դարբինները իրենց հիմնական աշխատանքը կատարել են կռելու միջոցով։ Երկաթը նախ շիկացվում էր դարբնի քուրայում և ապա հատուկ ունելիներով դրվում էր սալի վրա, այնուհետև՝ մեծ ու փոքր կռան-



Նկ. 6. Կացիններ, Դվինի պեղումներից, IX—X դդ. Պետ. պատմական թանգարան

ներով շիկացած երկաթյա կտորին տալիս էին ցանկացած ձևը։

Դարբնոցը ունեցել է իր համապատասխան գործիքները՝ քուրան, փուքսը, սալը,

վնդանը, գիլարանը, մամլակը, ունելիներ, տարբեր տեսակի մուրճեր և այլն։

Մեծ մուրճերը կոչվել են «կռան», իսկ ծանր մուրճերին միջնադարում անվանել են «ուռն». այդ առթիվ արժեքավոր հիշատակություն կա Ս. Օրբելյանի մոտ. երբ նա նկարագրում է Լիպարիտ Օրբելյանի զենքերը, որպեսզի ավելի պատկերավոր ու հասկանալի դարձնի վաղը կոչվող զենքի ծանրությունն ու մեծությունը, այն համեմատում է դարբնոցի «ուռի» հետ, այսինքն՝ դարբնոցի մեծ կռանի հետ. «և այնպէս զինեալ զինքն [Լիպարիտ]՝ հեծեալ ի տաճիկ երիվարն,... և զայն պողովատիկ շղթիւն երկբերանի ի յաջ ձեռինն, և զվաղրն ահագին ի ներքոյ բարձից իբր զուռն դարբնաց և կամ զսակր կոտյատր քարահատաց»[1]։

Վերոհիշյալ գործիքների գոյությունը հաստատում է, որ Հայաստանի քաղաքներում զարգացած տարբեր արհեստների համար աշխատանքային մետաղյա գործիքները պատրաստվել են դարբնի և երկաթագործի արհեստանոցում։

Պայտարություն.— Մետաղագործության մեջ կարևոր արհեստներից է համարվել պայտարությունը. եթե սկզբնական շրջանում և հատկապես գյուղում այդ աշխատանքը կատարում էր դարբինը, հետագայում՝ արհեստների մասնագիտացման ժամանակ առաջանում են հատուկ արհեստավորներ, որոնք զբաղվում են միայն պայտարությամբ (նալբանդությամբ)։ Նալբանդները նույնպես կենտրոնացած են եղել առանձին թաղամասերում, հավանաբար դարբիններին ավելի մոտ, որպեսզի հնարավոր լիներ հարմարություն ստեղծել կենդանիներին՝ ձիերին, էշերին, եղներին պայտելու համար։ Մատենադարանի № 695 ձեռագրի մեջ հիշատակվում է նալբանդությունը որպես առանձին արհեստ։

Վիմական մի արձանագրության մեջ հիշատակվում է «նալբանդնոց» փողոցը[1]։ Դվինի պեղումներից գտնված մանգաղաձև գործիքը, որը ներսից ունի տաշելու հարմարանք, օգտագործվել է սմբակներ տաշելու համար (նկ. 8,9)։



Նկ. 7. Մկրատներ, Դվինի պեղումներից, X—XIII դդ. Պետ. պատմական թանգարան

Անիի և Դվինի պեղումներից գտնվել են տասնյակներով սրածայր մեծապուխ դամեր ու տարբեր տեսակի պայտեր։

Պեղումներից գտնված դամերի մեջ կան նաև այնպիսիները, որոնք ծառայել են փայտե դռների համար, որպես զարդարանք։

Փականագործություն.— Հայաստանում տարածված արհեստ է համարվել փականագործությունը։ Դռների համար բանալիների, զանազան տեսակի կողպեքների ու ներսի

---

1 Ս. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, 1911, էջ 375։

1 Տես Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, էջ 78։

կեռ փակոցների կարիքը զգում էին Հայաստանի բոլոր բնակիչները, որոնք ապրում էին ծածկած բնակարաններում, ունենալով նաև Հարակից շենքեր։ Բացի բնակարաններից,



Նկ. 8. Մանգաղաձև դրծիք, Դվինի պեղումներից, XI դար
Պետ. պատմական թանգարան

փակի ու բանալիների կարիք ունեին քաղաքի հատուկ թաղամասերում տեղավորված խանութները և, վերջապես, զինանոցներն ու եկեղեցական հաստատությունները։

Փականագործության արհեստը է՛լ ավելի է զարգանում IX դարից հետո, երբ արդեն դարբինների փոխարեն այդ բոլորը պատրաստում են հատուկ արհեստավորներ, սրանք XIII դարում կոչվել են «կողպեքադար»[1]։ Այս դարում և ավելի ուշ շրջանում փականագործ արհեստավորները, ելնելով աղնվականության և քաղաքային դասի պահանջներից, է՛լ ավելի զարգացնում և բազմազան են դարձնում իրենց արտադրանքը՝ պատրաստելով կողպեքներ բրոնզից, երկաթից ու պղնձից։ Պարզ կողպեքների փոխարեն երևան են գալիս կենդանակերպ և մարդկանց պատկերներով կողպեքներ, որոնք պատրաստվում էին մեծ մասամբ ձուլման և կռելու տեխնիկայով։ Անիի պեղումների ժամանակ գտնվել են երեք տարբեր ձևի կողպեքներ՝ ձիու, մարդու կերպարանքով (նկ. 10,11)։

Դվինի և Անիի պեղումներից գտնվել են երկաթից դուռ փակեր, որոնք օգտագործվել են ներսի կողմից։ Դվինի 1946 թ. պեղումների ժամանակ գտնվել է բրոնզե մի մեծ բանալի, որի երկարությունն է 29 սմ։ Դա եղել է Դվինի Կաթողիկեի արևմտյան դռան բանալին, որ նման է մեր այժմյան բանալիներին, վերևի մասը օղակաձև է, իսկ բացելու մասը ունի երկու ատամ։

XVII—XVIII դարերում այդ արհեստը է՛լ ավելի է զարգանում։ Փականագործները պատրաստում էին բազմատեսակ և բարդ կողպեքներ, որոնցից մի քանի նմուշները պահպանվում են Պետ. պատմական թանգարանի ազգագրական բաժնում, դրանցից մեկի վրա (№ 4312) արձանագրված է պատրաստման ժամանակը։

Վերոհիշյալ նմուշները ցույց են տալիս, որ միջնադարյան Հայաստանում այդ արհեստը բավական տարածված է եղել. նման իրեր ավելի մեծ քանակությամբ արտադրվել են նաև հետագա դարերում։

Գ. ՊՂՆՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մետաղագործության ճյուղերից Հայաստանում զարգացած էր նաև պղնձագործությունը։ Այդ արհեստի զարգացած ու տարածված լինելը հաստատվում է Հայկական բարձրավանդակում պեղումներից հայտնաբերված պղնձե և բրոնզե կաթսաներով

[1] Տես Մատենադարանի № 695 ձեռագիր, էջ 187։



Նկ. 9. Երկաթե պայտեր, Դվինի պեղումներից, IX—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան



Նկ. 10. Պղնձե կոպեկներ, Անիի պեղումներից, X—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան

ու տնային-կենցաղային իրերի մնացորդներով. սրանց նմուշները մենք ունենք նաև ուրարտական շրջանից։

Պղնձագործ արհեստավորները իրենց արտադրանքով բավարարել են ո՛չ միայն ազգաբնակությանը տնային ու կենցաղային



Նկ. 11. Պղնձե կողպեք, Անիի պեղումներից, X—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան

իրերով, այլև, հատուկ պատվերով, կատարել են հոգևորականության պահանջները, պատրաստելով եկեղեցական սպասներ՝ մեռոնի պղինձներ, անոթներ, բուրվառներ, սկիհներ, վահաններ, խաչեր, ծնծղաներ և այլն։ Պղնձագործ արհեստավորները իրենց աշխատանքի ընթացքում կիրառել են կռելու, դրվագելու ու ճնշման տեխնիկան։ Այս արհեստը միջնադարում համարվել է կարևոր ու հարգի արհեստներից մեկը, որի մասին տեղեկություններ ենք գտնում Մխիթար Գոշի մոտ, իսկ № 695 ձեռագիր ժողովածուի մեջ հիշվում է՝ «Պղնձագործն՝ հավատացեալ մարդ է և չարչարկոտ»[1]։ Հեղինակի այս դարձվածքը ցույց է տալիս, որ իրոք, պղնձագործ արհեստավորների աշխատանքը կապված էր դժվարությունների հետ։

Պղնձագործությունը Հայաստանի գյուղերում ավելի թույլ էր զարգացած, քան դարբնությունը, որովհետև գյուղում օգտագործում էին գլխավորապես կավե անոթներ, սափորներ, կժեր, իսկ սրանց մի մասը պատրաստում էին հենց իրենք՝ բնակիչները. միայն լավ որակի, կամ թե ջնարակած անոթների արտադրությունն էր կատարվում պրոֆեսիոնալ արհեստավորի՝ բրուտի ձեռքով։ Այդ էր պատճառը, որ գյուղերում պղնձագործի հատուկ արհեստանոց ունենալու կարիքը փոքր էր։

Պղնձագործությունը զարգացած էր հատկապես քաղաքներում։ Այդ արհեստի մասսայական ու տարածված լինելու պատճառն այն էր, որ IX դարից հետո, արտադրողական ուժերի զարգացման հետևանքով է՛լ ավելի են աշխուժանում քաղաքները, զարգանում է առևտուրը, ազգաբնակությունը խտանում ու կենտրոնանում է քաղաքներում։ Այս բոլորը պայմաններ են ստեղծում ներքին ու արտաքին շուկայի առավել լայնացման համար, որ և նպաստում է պղնձագործության զարգացմանն ու ընդարձակմանը. այժմ արդեն պղնձագործը պետք է բավարարեր նաև քաղաքային դասի ու եկեղեցու պահանջները։

Պղնձագործության կարևոր ճյուղերից էր կաթսայագործությունը։ Միջնադարում կաթսաներ պատրաստվում էին զանազան չափերի, ձուլման ու կռելու տեխնիկայով։ Պղնձագործները պատվերով վերցրած իրերի մեծ մասը կռելուց հետո, դրվագման եղանակով հատուկ ձողիկների ու մուրճերի միջոցով նախշում էին, իսկ շուկայի համար արտադրվող կաթսաները պատրաստում էին ձուլ-

[1] Մատենադարանի № 695 ձեռագիր, էջ 187։

ման եղանակով։ Մեծ կաթսաների ամբողջական ձուլումը շատ դժվարությունների հետ էր կապված, միակ ելքն այն էր, որ սկզբից ձուլում էին միայն կաթսայի կողերը՝ տարբեր օրնամենտներով, իսկ հետո դրանք զոդման միջոցով միացվում էին և այդպիսով ստացվում էր ամբողջական կաթսան։

Այդ առթիվ ակադեմիկոս Հ. Օրբելին իր բանավոր մի զրույցի մեջ՝ հիմք ունենալով Դաղստանում պատրաստված կաթսաների տեխնիկան, նշում էր, որ նույն ձևով ձուլվել են նաև Անդրկովկասի ու Հայաստանի քաղաքներում պատրաստված կաթսաները՝ շուկայական պահանջներին բավարարելու համար։ Առհասարակ այդպիսի կաթսաների կողերի տախտակների ստանդարտ ձուլումը տարբեր օրնամենտներով կատարում էին առանձին արհեստավորներ և դուրս էին բերում շուկա մասսայական վաճառքի։ Այդ առանձին մասերը գնվում էին պատվիրատուի կամ արհեստավորի կողմից, իսկ նրա արտաքին ձևավորումը, կամ օրնամենտների դասավորումը մնում էր արհեստավորի ճաշակին։

Ձուլման տեխնիկայով պատրաստված մեծ կաթսայի լավագույն նմուշը գտնվել է Հաղարծինում։ Այդ կաթսայի մակագրությունից պարզվում է, որ դա ձուլված է 1232 թ. (ՈՁԱ. Ես, Զոսիմայ քահանայ, մեղապարտ, անձամբս ստացա զքոբս յարգեաց իմոց. միաբանքս եառ ինձ ի տարին Ա-ժամ Գորգա Զաւրավար տաւնին». կաթսայի քաշն է 346 կիլոգրամ։ Կաթսայի շուրթի վրա գրված արձանագրությունից ու շուրթի հաստությունից հենց հաստատվում է նրա ձուլածո լինելը. սակայն պետք է նշել, որ ոտքերը, կենդանակերպ կանթերն ու հավելվածքները, շուրթը իր արձանագրությամբ ձուլված են առանձին-առանձին, և հետո միայն զոդման եղանակով ամբողջացվել ու ստացվել է անզուգական մի մեծ կաթսա, որի նմանը դեռևս չի գտնվել ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Անդրկովկասում (նկ. 12)։

Բրոնզից ձուլածո մեծ կաթսա է հայտնաբերվել նաև Անիի պեղումներից, որը հենված է երեք հենակների վրա։

Ձուլման տեխնիկայով են պատրաստված բրոնզե № 123/1336 թասը և №№ 123/1316 և 123/1321 բրոնզե ու պղնձե բուրվառները[1], վերջիններիս վրայի կրոնական պատկերաքանդակները արված են հատուկ կաղապարի միջոցով։

Ձուլման տեխնիկայով էին պատրաստում նաև եկեղեցիների մեծ ու փոքր զանգերը։ Այդ զանգերից ամբողջական վիճակում մեր ձեռքն է հասել Հաղարծինի պղնձի մեծ զանգը, որը կշռում է 32 կիլոգրամ 800 գրամ։ Այդպիսի զանգերի համար նույնպես եղել են հատուկ կաղապարներ։

Անիի և Դվինի սիստեմատիկ պեղումների արդյունքները իրենց պղնձյա ու երկաթյա նյութերով հաստատում են մեր պատմիչների ասույթները, որ իրոք պղնձագործությունը միջնադարյան Հայաստանի քաղաքներում զարգացած է եղել մեծ չափով։ Անիի պեղումներից գտնվել են պղնձյա անոթներ, ափսեներ, փոքրիկ կաթսա, սափորներ, պատվանդաններ և այլ իրեր, որոնցից անհրաժեշտ ենք համարում հիշատակել №№ 123/1319 և 1322 սափորները, որանք արտաքուստ բավական ճոխ են, դրանցից մեկի վրա կան նաև փորագիր նախշեր, ունեն մեկական ունկ և ծորակներ տարբեր ձևի։

Հետաքրքիր է նաև № 123/1318 փոքրիկ կաթսան, որը ունի նաև կափարիչ, և իր հիմնական կառուցվածքով նման է այժմյան կաթսաներին։ Հիշատակության արժանի է № 123/1339 փոքրիկ պղնձյա ափսեանման անոթը. սա ունի 3 հենակ, կենտրոնում պատկերված է կենդանակերպ նկար, շուրջը՝ արաբական գրի նման զարդեր, շուրթիրը ատամնավոր են ու յուրաքանչյուրի վրա առանձին կան 5,6 և 9 թևանի զարդանախշեր, իսկ մեկի վրա՝ խաչաձև նախշ,— այս

1 Պահվում են Պետ. պատմական թանգարանում։



Նկ. 12. Պղնձե կաթսա, Հաղարծինի վանքից, 1232 թ.
Պետ. պատմական թանգարան

բոլորը կատարված է ճնշման տեխնիկայով (նկ. 13,14):

Անի քաղաքի պեղումների համեմատությամբ Դվինի պեղումները ավելի քիչ քանակությամբ են հայտնաբերել պղնձյա ամբողջական անոթներ ու եկեղեցական սպասներ: Միայն 1952 թ. միջնաբերդի բավական խոր շերտից գտնվել են՝ № 1917/48 պղնձե առյուծագլուխ կաթսան, 2 կանթով ու փորագիր զարդանախշերով, № 1917/47 սափորը մեկ կանթով, առանց զարդանախշի և դույլանման մի պղնձե անոթ, զարդանախշով ու ատրարական գրով: Բացի ամբողջական պղնձյա անոթներից ու սափորներից, Անիի ու Դվինի պեղումներից գտնվել են պղնձե անոթի շուրթի տատնյակ կտորներ, որոնցից մեծ մասի վրա կան տարբեր ձևի զարդանախշեր, կատարված դրվագման ու փորագրության տեխնիկայով: Անիից գտնված № 1323 թասի շուրթի կտորի վրա դրվագած են ձվաձև ուռուցիկներ, իսկ №№ 1300, 1301, 1302, 1303, 1304, 1305, 1306, 1307 անոթների շուրթերի բեկորների վրա, դրվագման տեխնիկայով արված են կետավոր և ռելիեֆ զար-

դաքանդակներ, կան նաև թասերի ու ափսեների շուրթեր գտնված Դվինից, Անիից և Անբերդից, առանց զարդանախշերի, որոնք պատրաստված են կռելու եղանակով (նկ. 15,16)։

Պղնձագործների ձեռքով էին պատրաստվում եկեղեցիների պղնձյա մեծ ջահերը, լամպաններն ու ճրագները, որոնք օգտագործվել են նաև ունևոր խավի կողմից. բացի այդ, եկեղեցիների բոլոր մոմակալները նույնպես պատրաստվում էին մեծ մասամբ պղնձից։ Մեր պատմիչները բազմիցս հիշատակում են պղնձյա մոմակալները, ջահերը, բուրվառները և այլն. սրանց նմուշները մենք տեսնում ենք մանրանկարչության մեջ։ Մեր մատենագիրները տալիս են անգամ բուրվառի առանձին մասերի անունները. բուրվառի երեք շղթաները, որոնք ամրացված են օղերից, պատմիչները անվանել են «երեք ամբառնալիք», երբեմն էլ՝ «չուանք բառնալեաց» կամ «3 չուանք». այն մասը, որով այդ շղթաները վերևում իմ մի են հավաքվում, անվանել են «վերին ագոյցն» կամ թե «ըմբռնելին ի վերին ծայրքն», իսկ «հրո ընդունարան» կոչվել է ներքևի կառուցվածքը, որտեղ այրվում էր խունկը [1]։

Բուրվառների շղթաների մի մասի վրա ամրացնում էին փոքրիկ զանգակիկներ, որպեսզի ժամասության ժամանակ խնկարկությունը ավելի էֆեկտավոր լիներ։ Անիի պեղումներից հայտնաբերված 7 հատ բուրվառներից միայն մեկը ունի ամբողջական շղթա, իսկ մյուսների վրա պահպանվում են երեք կանթերն իրենց անցքերով և երեք հավելվածքները պատրաստված գեղեցկություն տալու համար։ Բուրվառների ամբողջ դաշտը ծածկված է կրոնական քանդակներով, որոնք պատկերում են Քրիստոսի ծնունդը, մկրտությունը, խաչելությունը և հարությունը։ Անիից գտնված բուրվառներին հարմ ն նման են նաև մանրանկարչության մեջ հանդիպող օրինակները. Հացունու «Հայ տարազ» աշխատության մեջ եղած №№ 113, 114, 118, 123 մանրանկարների բուրվառների շղթաների վրա պահպանված են զանգակները։ Բացի բուրվառներից, պղնձագործ վարպետների ձեռքով են պատրաստվել նաև եկեղեցական

Նկ. 13. Պղնձե կաթսա, Անիի պեղումներից, X—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան

մոմակալները։ Չմոռանանք ասելու, որ այդ մոմակալները օգտագործվել են նաև պալատներում, իշխանական դղյակներում և հարուստ առևտրական դասի մոտ։

Եկեղեցական մոմակալների (աշտանակի) մասին, բացի հայ մատենագիրներից [1], ունենք տեղեկություն նաև արաբ պատմիչ Իբն-Բատուտայի մոտ։ Նկարագրելով Արզընդա քաղաքը, նա միաժամանակ հիշում է, որ քաղաքի ազգաբնակության մեծ մասը հայեր են, «ունեն կարգավորված շուկա և որ «նրա մեջ կան պղնձի հանքեր, որով շինում են ամաններ և «բայտուս»-ներ[2] (աշտանակներ)» (նկ. 17)։

---

1 Տես Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 354։

1 Տես Ներսես Շնորհալի, Բանք չափու, էջ 56։

2 Տես Իբն Բատուտա, Թարգմանություն արաբ. Հ. Աճառյանի, էջ 31, ըստ Աճառյանի «բայտուս» բառը պարսկերեն է, որ նշանակում է աշտանակ։



Նկ. 14. Պղնձե սափորներ, Անիի պեղումներից, X—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան



Նկ. 15. Արծաթագործի պղնձե թասանման անոթ,
Դվինի պեղումներից, X—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան



Նկ. 16. Պղնձե թաս, Անիի պեղումներից, X դ
Պետ. պատմական թանգարան

Մոմակալների մասին կա հիշատակություն նաև Մատենադարանի № 5552 ձեռագրի հիշատակարանում, որտեղ նորակառույց Զորավոր եկեղեցուն տված նվերների շարքում հիշվում են արհեստավորներից նվիրած պղնձե և արծաթե մոմակալներ, բուրվառներ ու քշոցներ։

Մոմակալների մեծ պատվանդաններ գտնվել են Անիից, որոնք ունեն երեք հենակ՝ ոտքի ձևով. դրանցից № 1326 պատվանդանի վրա պահպանվում է մեկ ոտքը, իսկ մյուսը՝ № 1327. ունի 2 հենակ։ Մակերեսի վրա փորագրված է բուսական զարդանախշ (նկ. 18)։

Միջնադարում գործածական է եղել լամպի մի ձև, որ նման է մեր այժմյան սեղանի լամպին, միայն այն տարբերությամբ, որ Անիից գտնված պղնձյա լամպի վրա չկա հարմարանք պատրույգը բարձրացնելու համար, պատրույգի շարժումը կատարվել է ներքևի խողովակի անցքով։ Այս լամպը բաղկացած է երկու կիսագնդերից, որոնց միացման տեղում, կենտրոնի վրա՝ դրվագված է երկշարք ալիքաձև գոտի։ Վերևի կիսագունդը զարդարված է դեղեցիկ օրնամենտներով, ուր աչքի են ընկնում վեցթևանի զարդանախշերն ու մեջ ընդ մեջ փոքրիկ խաչերը։ 1906 թ. Անիում նույն տիպի լամպերից գտնվել է մի ուրիշ օրինակ, ավելի պակասավոր, սրա վերին կիսագնդի օրնամենտները տարբերվում են նախորդից։ Նման լամպեր, մեր կարծիքով, գործածվել են ոչ միայն եկեղեցիներում, այլև պալատներում (նկ. 19)։

Ինչպես տեսնում ենք, ջահագործները հարյուրավոր կավե ձիթաճրագների կողքին, թեև ավելի սահմանափակ թվով, բայց պղնձից, պատրաստել են լուսավորող տարբեր ձևի լամպեր ու ճրագներ։ 1946 թ. Դվինի միջնաբերդի հորերից մեկում գտնվեց բրոնզե մի դեղեցիկ ճրագ։ Այս ձիթաճրագի պատրաստման տեխնիկան ցույց է տալիս պղնձագործության զարգացման աստիճանը։ Հետագա դարերում մետաղյա լամպերն ու ձիթաճրագները դառնում են ավելի բազմազան և քանակով առավել շատ։

Եկեղեցական սպասների մեջ կարևոր տեղ են բռնում մեծ ջահերը։

Նկ. 17. Պղնձե պատվանդան, Անիի պեղումներից, X—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան

Անիի մեծ ջահը [1] ունի 20 մետր երկարությամբ շղթա՝ կազմված 192 օղակներից, որից կախվել է 117 լուսատու կետ (նկ. 20)։

Կենտրոնական գոտու վրա կտրելու եղանակով արտահայտված են արծվի և այլ կենդանիների պատկերներ, իսկ մյուս մասերի վրա կիրառված է ճնշման տեխնիկան։ Բացի մեծ ջահից, Անիի Գագկաշենից գտնվել է նաև փոքր ջահ, որի մասերը, սակայն, չեն ամբողջանում։

Դվինի պեղումներից թեև կախովի ամբողջական ջահեր չեն գտնվել, սակայն հայտնաբերված պղնձե իրերի մեջ կան թի-

[1] Տես И. Орбели, Каталог Анийского музея древностей, стр. 110.



Նկ. 18. Պղնձե կոտտանի աշտանակ, Անիի պեղումներից, X—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան

թեղների այնպիսի նմուշներ, որոնք ընդհանուր նմանություն ունեն Անիում գտնված ջահի մասերի հետ, ամենայն հավանականությամբ նման փոքրիկ ջահեր օգտագործել են նաև պալատներում և ազնվականների բնակարաններում (նկ. 21)։

Եկեղեցական սպասների մեջ մեծ տեղ են բռնում պղնձյա քշոցները, որոնց XV—XIX դարերին պատկանող նմուշները պահպանվում են ցայսօր էջմիածնի գանձարանում։ Քշոցներ պատրաստում էին ո՛չ միայն արծաթից, այլև վարշաղից, պղնձից և արծաթապատ։ Մատենագրության մեջ կան հիշատակություններ՝ «քշոց արծաթիս պատեալ ոսկւով» կամ թե «քշոց ի սերովբէիցն տիպն՝ վեց-վեց թևօք հովանացեալ» երկու երեսայ վրայ, իւր ներքև է ըմբռնելիքն՝ մետաղեայ խողովակաձև և «ի խոնարհ ունելիքն ի փայտէ»[1]. այս քաղվածքը մեզ որոշ պատկերացում է տալիս քշոցի կառուցվածքի մասին։

Միջնադարյան Հայաստանում տնային ու կենցաղային իրերի պատրաստումը նույնպես կատարվում էր պղնձագործների ձեռքով։ Հայ պատմիչների մոտ այդ իրերի մասին գրեթե չկա հիշատակություն, սակայն նյութական մնացորդները՝ հայտնաբերված Դվինի, Անիի և Ամբերդի պեղումներից՝ հաստատում են այդ։ Կաթսաների, թասերի, ափսեների կողքին մենք ունենք հավանգներ, դաստակներ, շերեփներ, քերիչներ, քամիչներ, փոքր չափսի մկրատներ, զանազան չափսի ասեղներ, շքասեղներ, դանակներ և այլ իրեր։

Ինչպես հայտնի է, տնային տնտեսության մեջ դանակները կարևոր դեր են կատարում.

1 Վ. Հ ա ց ու ն ի, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 355։

սրանք պատրաստվել են մեծ մասամբ երկաթից, որոնց նմուշները թե՛ ամբողջական վիճակում և թե՛ կտորներով, հայտնաբերվել են Անիի, Ամբերդի և Դվինի պեղումներից [1]։

Անիի պեղումներից գտնվել են դանակներ, որոնք կորաձև են, պահպանված են ոսկրից զարդանախշած կոթառները (նկ. 123/1194)։

1946 թ. Դվինի պեղումների ժամանակ միջնաբերդից գտնվեց ձուլածո հավանդի դաստակ։ Այս գյուտը հաստատում է, որ հավանգները պատրաստված են եղել պղնձից, իսկ Ամբերդի 1936 թ. պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի քանի հավանդ, որոնց վրա կան զարդաքանդակներ. այս հավանգները պատկանում են X — XI դարերին. նույն դարերին է պատկանում նաև Դվինից գտնված դաստակը։

Անիից և Դվինից գտնվել են նաև պղնձյա փոքր քամիչներ, հացի քերիչներ (թաթագեշտաշտաքերներ), փոքրիկ շերեփներ, խաչերկաթներ։ Անիի պեղումներից հայտնաբերվել են երկու փոքրիկ կշեռք, որ հավանաբար, օգտագործել են ոսկերիչները կամ դեղագործները։

Միջնադարյան Հայաստանում կային նաև այնպիսի պղնձագործ արհեստավորներ, որոնք կատարում էին արծաթագործի պարտականությունը, պատրաստելով ավելի նուրբ և մանր իրեր՝ գնդասեղներ, շքասեղներ, բոժոժիկներ, չափրաստներ, կանացի ապարանջաններ, մատանիներ, փոքրիկ խաչեր կրծքից կախելու համար, արկղիկներ և այլն։ Այդպիսի մանր իրեր հայտնաբերվել են Դվինի և Անիի պեղումների ժամանակ։

Դվինի 1946—48 թթ. պեղումների ընթացքում գտնվել են պղնձյա չափրաստներ [2]։

Նույն տիպի չափրաստներ գտնվել են նաև Անիից [1], որոնց վրա կան բուսական ու ալիքաձև զարդեր։ Պեղումները տվել են ասեղների ու շքասեղների հարուստ նմուշներ,



Նկ. 19. Պղնձե ճրագ (լամպ), Անիի պեղումներից, X—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան

շքասեղներից շատերի գլուխները ունեն գմբեթաձևոր վերջավորություն [2] կամ թռչնաձև հավելվածք։

Պղնձագործի արտադրանք պատրաստելու համար օգտագործել են կռելու, ձուլման և դրվագման տեխնիկան։ Եթե կռելու և դրվագելու համար անհրաժեշտ էր տարբեր տեսակի մուրճ ու սալ, ապա ձուլելու համար պետք էին տարբեր կաղապարներ։ Հայաստանում

---

[1] Դվինից գտնված դանակները №№ 1917/163, 155, 166, 221, 1907/41, 170, 171, 1913/66, 67, 71, 133, 135, 136. վերոհիշյալ համարները կրող (ինչպես և հետագայում նշված) իրերը պահպանվում են Պետ. պատմական թանգարանում։

[2] Դվինի պեղումներից հայտնաբերված №№ 1905/80, 1906/207 և 1907/50 չափրաստները։

[1] Անիի պեղումներից հայտնաբերված № 123/1370 և 1371։

[2] Դվինից գտնված №№ 1913/150 և 1917/120 շքասեղները, Անիից գտնված՝ №№ 123/1435, 1436, 1442, 1431, 1444, 1449։



Նկ. 20. Պղնձե ջահ, Անիի գագկաշեն բոլորակ տաճարի պեղումներից.
Պետ. պատմական թանգարան

Նկ. 21. Պղնձե ճրագ, Դվինի պեղումներից, IX—X դդ.
Պետ. պատմական թանգարան

Հղած բազմազան կաղապարների մասին են խոսում ո՛չ միայն նյութական մնացորդները, այլև հայ մատենագրության մեջ եղած հիշատակությունները[1]։

Վերոհիշյալ փաստերը ապացուցում են, որ պղնձագործությունը զարգացած էր ո՛չ միայն Անիում ու Դվինում, այլև Հայաստանի այլ քաղաքներում։ Անիում բացված պղինձ ձուլելու երկու արհեստանոցների մնացորդները, այնուհետև՝ Դվինում 1939 թ. և հետագա պեղումների ժամանակ միջնաբերդում ու քաղաքի կենտրոնական թաղամասում բացված օջախների հետքերը և այդտեղ գտնված պղնձե ձուլվածքի մնացորդները նույնպես հիմք են տալիս մեզ ասելու, որ իրոք այդ արհեստը միջնադարյան քաղաքներում տարածված ու մասսայական արհեստներից մեկն է եղել, որը իր գոյությունը պահպանել է մինչև վերջին ժամանակները։

Անհրաժեշտ ենք համարում այստեղ մեջ բերել 1763 թվականի էջմիածնի վանքի նվերների մատյաններից մեկը, որտեղ գրանցված են վանքի կողմից տված նվերների տեսակներն ու քանակը[2]։

Այս փաստաթուղթը մեզ հետաքրքրում է այնքանով, որքանով էլ այդտեղ հիշատակվում են ոչ միայն գործվածքների, այլև արծաթե, ոսկե զարդերի ու սպասների տեսակները։ Այդ նվիրատվական ցուցակում վարդապետների, քահանաների, տիրացուների, տանուտերների, մելիքների, խոջաների անվան կողքին մենք հանդիպում ենք բազմաթիվ, անգամ տարբեր մասնագիտության, արհեստավորների անվան, որոնց թվում հիշատակվում է ոսկերիչ, պղնձագործ, դարբին, նալբանդ անունները, որոնք վանքի համար կատարել են աշխատանք և դրա փոխարեն ստացել են նվերներ։ Ինչպես, օրինակ, ոսկերիչ Մարտիրոսին նվիրում են մահուդից հագուստ, սրբիչ, շապիկ, նրա համար, որ նա կաթողիկոսի համար մոհր (կնիք-մատանի) է շինել, իսկ ոսկերիչ Ավետիսին նույնպես նվիրում են մահուդից կապա[1], իր կատարած ոսկերչական աշխատանքի համար։

Մատյանի 24-րդ էջում հիշատակվում են դարբիններ Սուլեյմանը և նրա երկու որդիները ու աշակերտները, որոնք «աշխատել են վանքի համար մեկ ամիս և ստացել են նվեր՝ խալաթներ, վանի շալ կտորից հագուստներ։ Պղնձագործ Ենոքը և նրա նման շատ ուրիշ պղնձագործներ վանքի համար պատրաստել են պղնձյա սպասներ՝ թասեր, ափսեներ, պղինձներ և նվիրել են վանքին։ Այդ սպասների վրա փորագրողի կողմից գրված են նվիրատուի անունը և ժամանակը։ Այդպիսի մեծ կոլեկցիա, մոտ 50 կտոր, էջմիածնի վանքի կողմից հանձնված է Պետական պատմական թանգարանին, որոնք պատկանում են XVII—XVIII դարերին և պահպանվում են Ազգագրական բաժնում։

1. ՋԻՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՋԵՆՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ[2]

Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած բազմադարյան բախումների ու մարտերի վկաներ են նյութական կուլտուրայի հարուստ մնացորդները, որոնց մեջ զգալի տեղ է գրավում զենքը։ Վերջինի շնորհիվ հնարավոր է բնորոշել ժամանակի ռազմական տեխնիկան։

Դեռևս հնադարյան մարդն իր գոյությունը պահպանելու, բնությունից իր ապրուստի միջոցները հայթայթելու և դիշատիչ գաղաննե-

---

[1] Տես Ն. Շ ն ո ր հ ա լ ի. Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 115։

[2] Մատենադարան, արխիվային բաժին, № 2, թղթապանակ 11, մատյան նվերների, 1763։

[1] Կապա բառի գործածության մենք հանդիպում ենք միջնադարյան առակներում։ Առակներում կարդում ենք. «Ագռաւն ժողովէը ու հագնէը կապայ». ինչպես տեսնում ենք, այդ անունը առանց փոփոխության և թե իր բովանդակությամբ պահպանվել է մինչև XVIII դարը։

[2] Ավելի մանրամասն տես մեր «Արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում», 1946 թ. աշխատության մեջ։

րից պաշտպանվելու համար ստեղծել է զենք որը սկզբնական շրջանում պատրաստվել է քարից, ոսկրից, փայտից, իսկ հետագայում նաև մետաղներից: Բրոնզի ու վաղադույն երկաթի դարին պատկանող դամբարանների պեղումները հայտնաբերել են մետաղյա տարբեր տեսակի զենքեր, որոնք հնում ունեցել են և՛ մարտական, և՛ տնտեսական իմաստի կիրառություն, ինչպես, օրինակ, քարե կամ բրոնզե տապար և այլ գործիքներ:

Ինչպես ցույց են տալիս գրավոր փաստերն ու հատկապես պեղածո նյութերը, Հայաստանում գործածված զենքերը եղել են բազմազան, որոնք դարերի ընթացքում ավելի ու ավելի են կատարելագործվել, երբեմն էլ առաջացել են զենքի նոր տեսակներ:

Միջնադարյան Հայաստանը, որ մեր ուսումնասիրության նյութն է կազմում, անհամեմատ աղքատ է զենքերի իրական մնացորդներով:

Հայաստանում զինագործության լայն տարածման մասին են վկայում պատմիչների տված տեղեկությունները գոյություն ունեցած զինապահեստների մասին, այդպիսի մի խոշոր պահեստ եղել է Դվինում [1]:

Զինագործության խոշոր կենտրոններ են եղել Կարինը և Խլաթը, որտեղ պատրաստվել են զենքեր, որոնց մի մասը նույնիսկ արտահանվել է տարբեր երկրներ:

Ինչպես արևելյան մի շարք երկրներում, այնպես էլ Հայաստանում զորամասերի հետ միշտ տանում էին զինագործ արհեստավորների հատուկ խմբեր, որոնք ճանապարհներին աշխատում էին զորքի կարիքների համար, այն է՝ վերանորոգում էին վնասված զենքերը, կամ պատրաստում էին նորերը [2]:

Միջնադարյան Հայաստանում գործածվող զենքերն ըստ իրենց ֆունկցիայի կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Հարձակողական միջոցներ՝ նետ և աղեղ, պարսատիկ, նիզակ, տեգ, գեղարդ, դաշույն, թուր, սուր, սուսեր, սվին, սակր, վաղր, մուրճ և ճիկո (ճկուռ):

2. Բերդեր քանդող մեքենաներ՝ էշ, փիլիկուան, բաբան:

3. Պաշտպանողական միջոցներ՝ վահան, զրահ և հրձիգ նյութեր:

Նետ և աղեղ.— Այս զենքը լինելով հնագույն տեսակներից մեկը, մեծ դեր է կատարել Հայկական բարձրավանդակում տեղի ունեցած բոլոր մարտերում:

Նետը կամ սլաքը, որ երբեմն կոչվել է ձիգ, փիճն, կամ դեռձակ, փոքր էր և անկոթ, պատրաստում էին օբսիդիան քարից, բրոնզից և երկաթից, իսկ շատ հին ժամանակ՝ նույնիսկ ոսկրից [1]: Նետերը լինում են տարբեր ձևի՝ տերևաձև, կողավոր, գլանաձև, նույնիսկ եռաթև և մեծ քանակությամբ պահվում էին ռազմիկի կողքից կախվող հատուկ պատյանում, որը կոչվում էր կապարճ կամ պատկանդարան [2]: Աղեղը կազմված էր երկու մասից՝ կամարից և լարից: Կամարը պատրաստում էին ճկուն փայտից և եղեգնից, իսկ լարը՝ աղիքից կամ կաշվից: Դեռևս ուրարտացիների տիրապետության ժամանակ, ինչպես պետք է ենթադրել ուրարտական և ասորեստանյան պեղածո նյութերի քանդակներից, ուրարտական հետևակը զինված էր նետ ու աղեղով: Ռազմակառքում եղած երկու մարտիկներից մեկը անպայման կրում էր նետ ու աղեղ, իսկ ռազմակառքի հետևից գնում էին աղեղնավորներ ու պարսատիկավորներ [3]:

Ուրարտացիներից հետո էլ Հայաստանում շատ երկար ժամանակ կարևոր դեր է

---

1 Տես Ղ ևոնդեայ մեծի վարդապետի Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 138:

2 Նույն տեղում, էջ 148:

1 Այդպիսի նմուշներ ունենք Շենգավիթի՝ 3-րդ հազարամյակին պատկանող բնակավայրի պեղումներից:

2 Տես Եղիշէի Պատմութիւն վարդանանց, Տփղիս, 1904, էջ 12:

3 Այդպիսի մի տեսարան քանդակված է Բալավաթի դռների վրա, որտեղ ուրարտացիները անձնատուր են լինում ասորեստանցիներին: Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերվել են հետևակ ու ռազմասայլի մեջ կանգնած բազմաթիվ աղեղնավորների քանդակագործեր:

խաղում նետ ու աղեղը, որպես առաջնակարգ զենք։

Հույն պատմիչներից Քսենոֆոնտը «Վարք Կյուրոսի» (Կյուրոպեդիա) աշխատության մեջ տեղեկացնում է, որ մարաց տիրապետության ժամանակ Կիաքսար թագավորն իրեն օգնելու համար արմեններից պահանջել և ստացել է թե՛ հետևակ և թե՛ հեծելազոր, որոնք գործ էին ածում նետ ու աղեղ [1]։

Մ. Խորենացին, նկարագրելով Հայկի և Բելի կռիվները, նշում է, որ Հայկը, տեսնելով Բելին ամբողջովին զինված զենք ու զրահով, իր ուժերը բաժանում է աջ և ձախ թևերի, «զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր», և ապա՝ «զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ, յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ պինդ զլայնալիճն, դիպուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն» [2]։

Արտաշեսյան դինաստիայի հաստատումից հետո, հատկապես Տիգրան Բ-ի թագավորության ժամանակ, հայկական բանակը ոչ միայն վերակառուցվում է և քանակապես ավելանում, այլև, շնորհիվ տեղի ունեցած երկարատև կռիվների, ձեռք է բերում ռազմական արվեստի մեծ փորձ և տեխնիկապես է՛լ ավելի է առաջադիմում։

Տիգրան Բ-ի հիմնական գործերից մեկն այն եղավ, որ բացի սահմանապահ բդեշխների հաստատումից, փոխեց նաև զորքի բնույթը։ «Հետևակամարտքն ի վերայ ոտից ձիոց բերեալք. և պարսաւորքն առ հասարակ դիպադեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք, մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք» [3]։

Հայերի հմուտ նետաձգության մասին բազմաթիվ տեղեկություններ են հասել մեզ հույն պատմիչներից։ Դիոն-Կասիոսը Տիգրանակերտի գրավման մասին խոսելիս հիշում է, որ հունական զորքը Արածանին անցնելիս՝ կռվի է բռնվում հայ զորքերի հետ։ Այս կռվում Տիգրան Բ-ն գործադրել էր հատուկ տակտիկա՝ ոչ թե վճռական մարտի բռնվել, այլ հանկարծակի հարված հասցնել թշնամուն և խույս տալ նրա հարվածներից։ Տիգրանի հեծելազորը դիմում է կեղծ փախուստի, որի միջոցին նետաձիգ արագաշարժ ձիավորները նոր ջարդ են տալիս թշնամուն [1]։

Ըստ Փ. Բյուզանդի, հայկական այն զրնդերը, որոնք կրում էին նետ ու աղեղ, մարտին մասնակցում էին հեռվից, նրանց նետերը խիստ դիպուկ և ուժեղ հարվածող էին՝ «աղեղնաւորք, անվրէպ կորովիք...» [2], մինչև իսկ նրանք կարողանում էին նետով փղեր տապալել՝ «հարկանէր զնետս փղին, և անդէն ընկենոյր զփիղն ի վերայ անձին իւրոյ» [3]։

Ինչպես Արշակունիների ժամանակ, այնպես էլ հետագայում՝ մարզպանական շրջանում, նետաձիգները կազմել են առանձին զնդեր, որոնց մեր պատմիչները անվանել են «մերկեր» [4]։

Աղեղնավորներին պատմագիրն անվանում է «մերկեր», որովհետև նրանք զրահավորված չէին, քանի որ ենթակա չէին մոտիկից հարվածելու կամ հարվածներ ստանալու, թեև կան տեղեկություններ, որ աղեղնավորները միաժամանակ կրել են նաև սուր, ըստ երևույթին, անհրաժեշտության դեպքում մոտիկից կռվելու համար, այս է վկայում Փ. Բյուզանդի տված տեղեկությունը Արտավազդ պատանու մասին [5]։

Աղեղնավորների գնդերը, որ սովորաբար դասվում էին բանակի վերջին մասում, խո-

---

1 Տես Ք ս ե ն ո ֆ ո ն տ. Կիւրոսի խրատու. պատմութիւնք, Վիեննա, 1843, էջ 44։

2 Մ ո վ ս է ս ի Խ ո ր ե ն ա ց ւ ո յ Պատմութիւն Հայոց, 1913, էջ 39, 40։

3 Նույն տեղում, Թիֆլիս, էջ 74։

1 Տես Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Տիգրան Բ. և Հռոմ, Երևան, 1940, էջ 154։

2 Փ. Բ յ ու զ ա ն դ ա ց ւ ո յ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 202։

3 Նույն տեղում, էջ 214։

4 Տես Ե ղ իշ է ի Պատմութիւն Վարդանանց, Տիխիս, 1904, էջ 138—139։

5 Տես Փ. Բ յ ու զ ա ն դ, նույն տեղում, էջ 254։



Նկ. 22. Դրվագներ Ավարայրի ճակատամարտից, մանրանկար Մատենադարանի № 1025 ձեռագրից

շար դեր են խաղացել Ավարայրի ճակատամարտում։ Այդ կռվում, ինչպես պատմիչն է նկարագրում, «ճայթմունք լարից աղեղանացն ըլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին»[1]։

Լրիվ պատկերացում ստանալու համար, ավելորդ չի լինի հիշատակել 15-րդ դարի № 1625 ձեռագրից մի մանրանկար, որ պատկերում է Ավարայրի ճակատամարտից մի տեսարան։ Նկարչի այդ մտահղացումը մեզ հնարավորություն է տալիս գաղափար կազմելու միջնադարյան մարտերում գործածվող մի քանի զենքերի մասին։ Ձեռագիր նկարի մի կողմում կանգնած է պարսկական բանակը՝ պաշտպանված փղերով, իսկ մյուս կողմում՝ փղերին և զորքին նետահարում են հայ աղեղնավորները, որոնք իրենց կողքերին կապած ունեն նաև կապարճ. աղեղնավորները հոքած դիրքով են հարվածում, որպեսզի կարողանան փղին վնասել նրա կաշվի ավելի նուրբ տեղից՝ փորի մասից (նկ. 22)։

Ավելի ուշ ժամանակների տվյալներից նույնպես երևում է, որ հայ մարտիկները եղել են լավ նետաձիգներ։ Հովհաննես Դրասխանակերտցին, որ ականատես է եղել X դարի անցքերին, խոսելով Կապույտ բերդի պաշարման մասին, գրում է. «Իսկ մարդիկ ամրոցին անձնընտիր լեալք և կորովութեամբ կշռեալ զձգտումն մեքենայից, և զնետաձիգս ի լայնալիճ աղեղանց և զքարինս ի պարսատկաց»[1]։ Իսկ Աշոտ Բ-ի կռիվների մասին խոսելիս՝ հատկապես Սևանի ճակատամարտի առթիվ, հիշում է, որ Աշոտ Բ (Երկաթը) «վաղվաղակի պատրաստէ նաւս մետասան, և ամբառնայ ի նաւս անդր իբրև արս եօթանասուն ազատս և զծառայս իւր լայնալիճ

[1] Ղևոնդ, Պատմութիւն, էջ 170, նաև՝ էջ 172։

[1] Հ. Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, 1912, Թիֆլիս, էջ 234—235։ Նաև Թ. Արծրունի, էջ 219, 220, 221։

աղեղամբք՝ արս քաջակորով և հմուտս ի ձգտումն նետաձգութեանց, որ գրեթէ ի մագոյ ոչ վրիպէին»[1]: Նույն տեղում հեղինակը գրում է, թե ինչպես կռվի ժամանակ հայ զորքերը «զոմանս միաւանիս ի թշնամեացն առնէին, և զայլս բազումս կարեվէր վիրաւորեալ սատակէին»:

Բացի գրավոր աղբյուրներից, մենք բարեբախտաբար ունենք նետի և աղեղի վերաբերյալ նյութական կուլտուրայի մնացորդներ, որոնք վերաբերում են մեր քննարկած ժամանակաշրջանին և հայտնաբերվել են միջնադարյան կենտրոններում, Անիի և մանավանդ Դվինի պեղումներից. այդ նյութերը լրացնում են մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները և ավելի պարզ գաղափար են տալիս զենքերի պատրաստման տեխնիկայի ու ձևի մասին:

1907 թ. Անիի պեղումների նյութերի հետ գտնվել են երկաթից քառակող պոչուկավոր նետի երկու ծայրեր՝ 1500 (07 № 102) և № 1498 (07 № 72), որոնք դեռևս իրենց մեջ կրում են փայտի կոթի մնացորդները: Բացի երկաթյա նետերից, հայտնաբերվել են նաև բրոնզե մի քանի նետեր՝ №№ 1503, 1528, 1543, որ պատկանում են հեթանոսական շրջանին, իսկ 1908 թ. պեղումների ժամանակ Միջնաբերդի հյուսիս-արևելյան կողմում, պալատի պատի մոտ գտնվել է երկաթից մոտ 500 նետ (08 № 22):

Միջնադարյան նետերի նմուշներ գտնվել են նաև Հայաստանի հնագույն մայրաքաղաք Դվինում (նկ. 23):

Անիում գտնված №№ 1495, 1508, 1520 նետերը իրենց ձևով նման են Դվինի № 1794/84, 1848/4, 1848/3 նետերին: Դվինի վերջին պեղումների ժամանակ (1946—1952) հայտնաբերվեցին ավելի մեծ քանակությամբ նետի սլաքներ[2], որոնք իրենց ձևով բազմազան են: Անիի և Դվինի նյութերի նմանությունը ապացուցում է, որ միջնադարյան առևտրատնտեսական այդ կենտրոնները, ինչպես կերամիկայի և մյուս իրերի, այնպես էլ զինագործության ասպարեզում գործադրել են միևնույն տեխնիկան՝ առանձին աննշան տարբերություններով:

Պեղածո իրերի մեջ, սակայն, իսպառ բացակայում է աղեղը, այս բացը մասամբ մեղմանում է միջնադարից մեզ հասած երկու բարձրաքանդակների շնորհիվ. մեկը Ամիր-Հասանի բարձրաքանդակն է, իսկ մյուսը՝ Անգեղակոթում գտնված պարոն Ավագի մահարձանը:

Հետաքրքրական է, որ այդ կոթողների վրա քանդակված աղեղների ձևի մեջ նկատվում է որոշ տարբերություն. Ամիր-Հասանի աղեղն անկյունավոր է, իսկ նույն դարին պատկանող Անգեղակոթի՝ պարոն Ավագի մահարձանի վրա քանդակված աղեղն ավելի կլոր ձև ունի:

Նետ ու աղեղի կողքին որպես հնագույն հարվածող մարտական զենք հիշվում է պարսատիկը, որի շնորհիվ թշնամուն հարվածում էին քարերով: Պարսատիկը կաշվե երկար մի երիզ է, կենտրոնը լայն և կրկնածալ գոգավոր մասով, որտեղ դրվում է պարսաքարը: Զենքի այս տեսակի մասին հաղորդում են՝ Հովհան Մամիկոնյանը[1], X դարի պատմիչ Թովմա Արծրունին[2], XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը[3] և ուրիշներ:

Դվինի պեղումների ժամանակ միջնաբերդում հայտնաբերվել են միաշափ գետաքարերից, մոտավորապես ձվի գնդիկի չափ քարեր, որոնք առանց կասկածի պարսաքարեր են: Նույն տեղում գտնվել են 15—25 կիլոգրամ ծանրություն ունեցող գետաքարեր, որոնք բերդերի վրա հարձակվելու և կամ

---

1 Հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ո ց ւ, Պատմութիւն Հայոց, 1912, Թիֆլիս, էջ 356:

2 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 161:

1 Տես Յ. Մ ա մ ի կ ո ն ե ա ն, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 236:

2 Թ. Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 214:

3 Ստ. Օ ր բ ե լ ե ա ն, էջ 36:



Նկ. 23. Երկաթե նետասլաքներ, Դվինի և Անիի պեղումներից, VII—VIII դդ.
Պետ. պատմական թանգարան գծ. Առաքել Պատրիկի

պաշտպանվելու համար ծառայել են որպես ամբաքար, նման գլաքարին։

Նիզակ, տեգ և գեղարդ.— Նիզակը եղել է հայկական զորքի ամենագործածական զենքերից մեկը։ Նա կազմված է երկու մասից. բուն զենքը վերին հարվածող սրածայր մասն է, որ կոչվում է գեղարդ[1], իսկ երկրորդ մասը՝ նիզակի երկար կոթն է, որ կոչվում է նաև նիզակաբուն և մեծ մասամբ լինում է թեթև փայտից կամ եղեգնից։

Հնագիտական պեղումներից դուրս են եկել բազմաթիվ նիզակածայրեր, որոնց կոթերը, փայտից պատրաստված լինելու պատճառով, փտել են և մեզ չեն հասել։ Նիզակները լինում են դաշույնաձև նեղ, կամ տերևաձև ավելի լայն, որի շեղբի ամբողջ երկարությամբ կենտրոնում ձգվում է ուռուցիկ ջիղ։

Հայ պատմիչները միջնադարին վերաբերող բավականին առատ փաստեր են տալիս մեզ նիզակի գործածության մասին։

Մ. Խորենացին, խոսելով Տիգրան Մեծի բանակի վերակազմավորման մասին, ոչ միայն հիշատակում է պարսավորների դիպուկ աղեղնավոր դառնալու և կամ հետևակի՝ հեծյալ դառնալու մասին, այլև նշում է՝ «շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառելալք»[2]։

Արշակունիների տիրապետության օրով հայկական բանակը բավականին հզոր էր և թվով ավելի շատ, քան հետագա ժամանակներում, Արշակ Բ-ի օրով Վասակ սպարապետի առաջին գործն այն եղավ, որ նա կազմակերպեց ուժեղ բանակ։ Այդ բանակում ծանրակշիռ տեղ էին գրավում նիզակավորները, որոնք կռիվ էին գնում թե՛ հետիոտն, և թե՛ հեծյալ։ Նիզակավորները զինված էին վրահներով։ Նրանց համար պաշտպանության ամենակարևոր միջոցը վահանն էր[3]։

Մի նկարագրությունից երևում է, որ նիզակավորները կռվի պաշտում գտնվել են առաջին շարքերում. «Զի յորժամ հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին որպէս ղևաուն մի բարձր և կամ որպէս զաշտարակ մի հաստաբեսա հզօր և անշարժ»[1]։

Ավարայրի ահավոր ճակատամարտում, որտեղ հայ ժողովուրդը ցուցաբերել է իր հերոսությունը, անձնազոհությունը, ինչպես պատմիչն է նկարագրում, ոչ միայն «...ձայթմունք լարից աղեղանցն խլացուցանէին, այլև ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք հոսէին»։ Իսկ երբ հեղինակը նկարագրում է մարտից հետո եղած սրատճմլիկ տեսարանը, ասում է՝ «Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց»[2]։

Նիզակը որպես մարտական զենք իր ոևէը պահպանել է նաև Բագրատունիների օրով և հետագա ժամանակներում, գրեթե անփոփոխ պահելով իր ձևը[3]։

Միջնադարյան հնավայրերի պեղումներից դուրս են եկել մի քանի նիզակներ, որոնցից անհրաժեշտ եմ համարում այստեղ հիշատակել Դվինից և Անիից պեղված նիզակները. դրանք իրենց ձևով յուրահատուկ են։ Դվինից մի նիզակ գտնվել է Միջնաբերդում 1946 թվականի պեղումների ժամանակ, այս նիզակը բացի խոցելու հարմարությունից, կողից ունի նաև կեռ հավելված, որ պատրաստված է զոհին ձիուց կամ պատից ցած քաշելու համար (նկ. 24)։ Նույն ձևի, միայն թե երկու կես հավելվածով նիզակ հայտնաբերվել է նաև Անիի պեղումների ժամանակ (№ 1546/08 № 50)։

Մանրանկարչության մեջ և քանդակների վրա ունենք նիզակների բազմաթիվ պատկերներ, որոնց միջոցով հնարավոր է լրացուցիչ գաղափար կազմել միջնադարյան

---

1 Տեսնում ենք մի գեղարդ գտնված Դվինում 1949 թ. 40 սմ երկարությամբ։

2 Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 74։

3 Տես Փ. Բյուզանդ, Պատմութիւն Հայոց, էջ 201։

1 Փ. Բյուզանդ, Պատմութիւն Հայոց, էջ 303։

2 Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, 1904, Տփղիս, էջ 170, 172։

3 Թ. Ալբրունի, էջ 203։



Նկ. 24. Նիզակներ Դվինի պեղումներից, IX—XIII դդ.
Գեղ. պատմական թանգարան գծ. Առաքել Պատրիկի

նիզակի ձևի և գործածության եղանակի մասին։

Նիզակի և նետի միջին օղակն է հանդիսանում տեգը կամ աշտենը, որ ունի նիզակի ձև, բայց ավելի փոքր է և կոթն էլ զգալի չափով կարճ։ Տեգը կամ աշտենը հեռվից նետվել է ձեռքով, առանց որևէ գործիքի օգնության։ Կոթը լինում էր փայտից և եղեգից, ծայրը՝ շատ հնում բրոնզից, իսկ միջին դարերում՝ երկաթից։

Մեր պատմիչների մոտ շատ հաճախ տեգի փոխարեն կիրառված է աշտեն բառը։ Այդ անվանը մենք հանդիպում ենք Հովհան Մամիկոնյանի մոտ, երբ նա խոսում է Գայլ Վահանի մասին. «Եւ ինքն առեալ զզաւրս իւր Շ. Երթեալ առ Մուշեղ. Յայր թողեալ յանցս Մեղտեայ, և երկու հարիւր այր աշտենաւորս ի Սանասայ ի ծմակն թողեալ»[1]։

Լաստիվերացին գրում է. «Եւ զանհնարինն չարիսն, զոր անդ գործեցին, թողին յիշատակ ազգաց յազգս, զի զտղայսն և զայլ ապաժամեանսն նշաւակ եդեալ, աշտէիւբ և նետիւք խաղալով, չարաշար խոցոտելով՝ սատակէին, և ոչ կաթէր ի բնութիւն նոցա գութ ողորմութեան»[2]։

XI և հաջորդ դարերի ձեռագրերի մեջ եղած նկարներում հանդիպում են պահակներ, զինվորներ, որոնք իրենց ձեռքին բռնած ունեն նիզակներ, տեգեր, սակրեր և այլ զենքեր։

Կաղանկատուացին նիզակ անվան զուգահեռ հիշատակում է մկունդը, որը, ըստ իս, ծանր նիզակն է, քանի որ Յովհաննու Ոսկեբերանի «Մեկնութիւն Եսայեայ»-ի մեջ ասված է. «Զուլեսցեն զսուսեր իւրեանց ի խոփս և զմկունդս իւրեանց մանկաղս»։

Դաշույն.— Հայկական զորքի կարևորագույն և շատ գործածական զենքերից է նաև դաշույնը, որի մարտական նշանակությունն է՝ մոտիկից հարվածել և խողխողել թշնամուն։ Դաշույնը կրում էր զինավորապես հեծելազորը։

Հայաստանում գտնված դաշույնները մեծ մասամբ երկսայրի են. եղել են նաև կեռ դաշույններ, որոնք հանդես են գալիս VII դարից հետո, այդպիսիները գտնվել են Դվինի և Անիի պեղումներից։

Դաշույնի գործածությունը շատ հին է։ Հնագույն ժամանակներում սուր դրեթե չի եղել և եղածն էլ միայն մեծությամբ է տարբերվել դաշույնից։ Պեղումներից դուրս եկած դաշույնները շինված են թե՛ բրոնզից և թե երկաթից՝ տարբեր ձևի ու չափի։ Հին դաշույնների վրա չկան կողքից կախելու հարմարություններ, ըստ երևույթին, դաշույնը ուղղակի խրել են գոտու մեջ։

Սուր, բուր, սուսեր, սվին.— Բացի դաշույնի տարբեր տեսակներից, խոցելու և հատելու զենքերի երեք հիմնական տեսակներն էլ կիրառել են Հին Հայաստանում և միջին դարերում։ Դրանցից մեկը և ամենատարածվածը՝ դաշույնի ձևի, երկսայրի, մեծ մասամբ լայն շեղբով, երկար ու ուղղաձիգ սուրն է, որը իր կենտրոնում ունենում է ակոսներ։ Այս սրով կարելի է խոցել՝ օգտագործելով միայն նրա սուր ծայրը, կարելի է նաև երկու սայրերն էլ գործածել հատելու և հարվածելու համար։

Երկրորդ տեսակը թուրն է, որի ծայրը և սայրերից մեկը միայն կարելի է գործածել, որովհետև մյուս կողմը սովորաբար բութ է լինում և թրին տալիս է անհրաժեշտ ծանրություն։ Թուրը սովորաբար որոշ չափով կեռ է լինում՝ հատելու թափն ավելի ուժեղացնելու նպատակով։ Այս տիպի թրեր հին դարերից գտնված չկան, իսկ միջին դարերում էլ՝ հավանաբար, միայն հեծյալներն են կիրառել։ Երրորդ տեսակը սուսերն է, որ թեև թրի նման ունի բռնատեղ ու պատյան, բայց ծառայել է միայն խոցելու համար։ Դրա մի հազվագյուտ բրոնզյա օրինակը գտնված է Զորագէսի կառուցման ժամանակ բացված մի դամբարանի միջից, որը պատկանում է

---

[1] Ց. Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 184։

[2] Ա. Լաստիվերտցի, Պատմութիւն, 1912, Թիֆլիս, էջ 139։

առաջին հազարամյակի սկզբներին և ունի մոտ մեկ մետր երկարություն (միայն շեղբը 91 սմ է)։ Սուսերի ամենալավ և ամուր տեսակը հայ պատմագիրները կոչում են սուսեր պողովատիկ [1]։

Մոռիկից խոցելու համար է նաև սվինը, որը դաշույնի կամ սուսերի նման երկսայրի մի զենք է, բայց զգալի չափով նրանցից կարճ։ Ագուցած է լինում փայտե կոթի վրա։

Սասանյան շրջանի վերաբերյալ կան բավականին հարուստ նյութական մնացորդներ, որոնք մեզ հնարավորություն են տալիս որոշ գաղափար կազմելու ժամանակի սուսերի, սրի և դաշույնի ձևերի մասին։

Միջնադարյան Եվրոպայից դեռ շատ առաջ, Հայաստանում թագավորների և իշխանների անմիջական գործածության համար զենքերը պատրաստում էին նաև ոսկուց ու արծաթից և զարդարում թանկագին քարերով. այդպիսի զենքեր պատրաստում էին հատուկ պատվերով և այնպիսի արհեստավորների ձեռքով, որոնք աշխատում էին արքունիքին կամ դղյակներին կից։

Փ. Բյուզանդը Ներսես Մեծի մասին գրում է. «... Զարքունական սուսերն զպղտվատիկն զոսկէպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ունէր» [2]։ Պարզ է, որ հասարակ զինվորի մարտական զենքը զուրկ էր նման թանկարժեք զարդարանքներից։

Փ. Բյուզանդի Պատմության մի այլ հատվածից երևում է, որ հայ զինվորականը կարող էր զինված լինել միաժամանակ և սուսերով և թրով։ Պապ թագավորի հրամանի առթիվ՝ հագցնել Դղյակ Մարդպետին ինչ որ անհրաժեշտ է, Բյուզանդը գրում է. «Եւ ագուցեալ զպատմուճանն մեծ, էած զգօտին ընդ մէջ իւր, զորմէ թուրն կախէր. և սուսեր ընդ մէջ ածեալ, և խորզ ի գօտւոյ դրաստից իջեալ, զթուրն և զսուսերն ծածկէր» [1]։

Հայ պատմիչները այլ զինախմբերի շարքում հիշատակում են նաև սուսերավոր գրնդերի մասին. «...Նա և ի բազում սուսերացն շողալ, և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային» [2]։

Մատենադարանի XV դարին պատկանող № 1625 ձեռագրում ծաղկող Կարապետը ցույց է տվել Ավարայրի ճակատամարտից մի դրվագ, որտեղ պարզ երևում է աջ կողմում սուսերավոր հեծելազորը։

Ի թիվս այլոց, սուսերամարտիկների մասին է հաղորդում նաև XI դարի պատմիչ Ա. Լաստիվերտցին, որ ականատես է եղել սելջուկ-թուրքերի կատարած ասպատակություններին. «Ի գալ միւսում ամին ժողովեցան իբրև արծուիք ի վերայ կերակրոյ անհամար բազմութիւնք զօրաց աղեղնաւորաց և սուսերամարտից» [3]։

Հետաքրքրական է, որ մարտի վերջնական հաղթանակը գրեթե միշտ որոշվում էր սուսերամարտով։

Միջնադարյան Հայաստանում սուրը, թուրը, սուսերը և դաշույնը մյուս զենքերի համեմատությամբ ամենից շատ տարածված և ավելի շատ գործածական զենքերն են եղել, որովհետև դրանք կիրառվել են նաև խաղաղ պայմաններում։ Բացի զինվորներից, զենքի այդ տեսակները կրել են նաև ազատները, քաղաքացիք, լեռնցիները, իշխող դասի բոլոր ներկայացուցիչները՝ իրենց տանը և դրսում։

Անիի պեղածոների մեջ բացի բրոնզյա դաշույնից, բազիլիկ պալատի նկուղից հայտնաբերվել է նաև երկաթյա մի ամբողջական սուր, որի երկարությունն է 96 սմ։ Սա

---

1 Տես Թ. Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն տանն Արծրունեաց, 1917, էջ 150։

2 Փ. Բ յ ու զ ա ն դ, Նույն տեղում, էջ 107։ Նաև՝ Թ. Ա ր ծ ր ու ն ի, էջ 467։

1 Փ. Բ յ ու զ ա ն դ, էջ 306։

2 Ե ղ իշ է ի Պատմութիւն Վարդանանց, էջ 169—170։ Նաև՝ Ց. Մ ա մ իկ ո ն ե ա ն, Պատմութիւն Տարօնոյ, էջ 83—84։

3 Ա. Լ ա ս տ իվ ե ր տ ց ու Պատմութիւն, էջ 70։

թեև երկաայրի է, բայց գլխավոր նպատակը եղել է խոցելը, իսկ անհրաժեշտ դեպքում՝ նաև թեթև հատումներ կատարելը (նկ. 25)։

Որոշ զենքերի մասին լրիվ դաղափար կազմելու համար խիստ հետաքրքրական է Մշո Առաքելոց վանքի դռան վերնասյամի փորագրությունը (XII դար), որը պատկերում է ռազմական մի տեսարան։ Այստեղ պարզ կերպով միասին նրանք հիշատակում են նաև վաղրը և ճիկոը, որոնք պատերազմական գործողություններում կատարել են գրեթե միևնույն դերը, ինչ-որ սակրը. դժբախտաբար, պատմիչները չեն նշել նրանց ձևերի միջև եղած տարբերությունը։ Այդ է պատճառը, որ դժվարանում ենք լրիվ պատկեր կազմել վաղր և ճիկո զենքերի մասին



Նկ. 25. Երկաթե սուր, գտնված Անիում, X—XI դդ.

երևում է միջնադարում գործածված նետ ու աղեղը, երկար նիզակը, ծանր վահանը ու լայն, երկսայրի սուրը։ Փայտե դռան վրա քանդակող այդ վարպետը մեծ համոզչությամբ կարողացել է տալ հիշյալ զենքերի ձևերը։

Սակր, վաղր, մուրճ և ճիկո (ճկուռ).— Մարտական զենքերի շարքին են պատկանում սակրը, վաղրը և ճիկոը, որոնք պատերազմի ժամանակ կատարել են իրենց սուր բերանով ծանր հարված տալու դեր։ Սակրի նախնական ձևին մենք հանդիպում ենք դեռևս երկրորդ հազարամյակում, մ.թ. առաջ։

Մեր թվականությունից առաջ, առաջին հազարամյակի սկզբներին պատկանող սակր ձուլելու քարե կաղապարներ գտնվել են Հայաստանում՝ Լենինականի մսի կոմբինատի շենքերի շինության վայրում և ուրարտական՝ Կարմիր բլուրում։

Հայկական բարձրավանդակում կատարված պեղումներից հայտնաբերվել են մեծ քանակությամբ սակրեր, որոնց ձևից արդեն երևում է, որ նրանց որոշ մասը գործ է ածվել որպես կացին տնտեսական աշխատանքների համար. կան նաև հատկապես ռազմական գործողությունների համար պատրաստված սակրեր։ Սակրի վերաբերյալ մեր պատմիչների մոտ կան բավականին կարևոր և արժեքավոր հիշատակություններ. սակրի հետ միասին նրանք հիշատակում են նաև վաղրը և ճիկոը, որոնք պատերազմական գործողություններում կատարել են գրեթե միևնույն դերը, ինչ-որ սակրը. դժբախտաբար, պատմիչները չեն նշել նրանց ձևերի միջև եղած տարբերությունը։ Այդ է պատճառը, որ դժվարանում ենք լրիվ պատկեր կազմել վաղր և ճիկո զենքերի մասին

Սակրը կամ սակուրը նման է տապարին և գործ է ածվել որպես ռազմական զենք՝ հարվածելու, կտրելու, ջարդելու համար։ Այն ամրացվել է հատուկ կոթի վրա՝ հարվածի թափը մեծացնելու համար։ Տապարանման երկրերան սակրին մեր պատմիչները անվանում են կտցավոր սակր։

Այսօր թեև հնարավորություն չունենք տարբերելու սակրը վաղրից, բայց դրանք տարբեր զենքեր են եղել և կազմել են սակրավորների ու վաղրավորների բոլորովին առանձին զորագնդեր[1]։

Փ. Բյուզանդը գրում է. «Եւ մինչ դեռ գայր նա (Գնել) ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում, իբրև մերձ եղև ի հրապարակն արքունի, և անդ ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք, նիզակաւորք, վաղրաւորք, սակրաւորք, սունաւորք և սպասակիրք հետեվակք»[2]։

Հ. Դրասխանակերտցին հիշատակում է, թե ինչպես արաբական խալիֆաթի դեմ մղած կռիվներում վաղրավորները հարվածում և կտրում էին հակառակորդի զրահները[3]։

---

[1] Տես Փ. Բյուզանդ, Պատմութիւն Հայոց, էջ 201—202։

[2] Նույն տեղում, էջ 183։

[3] Տես Հ. Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 312։

Իսկ X դարի պատմիչ Թ. Արծրունին հիշում է. «Եւ բազմութիւն զինուորաց վառելոց աստի և անտի. և վարուցատրք և սակրատրք այսր անդր քշել զամբոխն գոռիեալ»[1]։

Այստեղ մեջ բերած զենքերի տեսակներից շատերի անունը ևս մինչև այժմ չի պարզված։ Վաղակը սրի լայն և ծանր տեսակն է, որը լինում է մերկապատյան և երկսայրի, ուրեմն նույնն է, ինչ որ սուրը, բայց վերջինս կարող է ավելի ընդհանուր անուն լինել երկսայրի սրերի մի քանի տեսակների համար։ Ինչպես վերևում տեսանք, Թ. Արծրունին հիշատակում է վաղակավոր զորքի տեսակ։ Վակուր բառը, որ հիշատակված է Թ. Արծրունու Պատմության մեջ, խիստ անորոշ է։ Ըստ գործածության տեղի (վաղրից հետո և սուսերից առաջ) միանգամայն անհնարին է նրա պարզաբանությունը. բայց մեզ թվում է, թե իրավացի են Նոր Հայկազյան բառարանի կազմողներն ու Ստ. Մալխասյանցը, որոնք կարծում են, որ գխագիր Ս և վ գրերի հնագույն ձևերի շփոթության է առաջ եկել, և այդ բառը պետք է կարդալ ոչ թե վակուր, այլ սակուր, որը սակրի ավելի ճիշտ ձևն է։

Վաղրը (սեռ. վաղեր) մարտական կացնի տեսակներից մեկն է, սխալ ենթադրությամբ մի շարք գրքերի մեջ վաղրը բացատրել են իբրև սրի մի տեսակը։

Ստ. Օրբելյանի մի տեղեկությունից պարզվում է, որ զինվորները վաղրը կախում էին իրենց ազդրից ներքև և նա նման է եղել դարբնի ուռին (մեծ մուրճին) ու քարհատների կտցավոր սակրին։

«Եւ զվաղրն ահագին ի ներքոյ բարձիդն իբր զուռն դարբնաց և կամ զսակր կտցաւոր քարահատաց՝ անցեալ ի մէջ ռազմատոր հանդիսին»[2]։

Պատմիչի այս քաղվածքից արդեն որոշակի տարբերություն ենք տեսնում վաղրի և սակրի միջև ձևի տեսակետից։ Վաղրը սակրից եղել է մեծ և հնարավոր չի եղել ամբացնել գոտուն, ուստի սովորություն է եղել ազդրի վրայից կախելը։

Մ. Խորենացու, Հ. Մամիկոնյանի և Ջենոբ Գլակի պատմությունների մեջ սակրի և վաղրի փոխարեն մի քանի անգամ հիշատակվում է մուրճը։ Մ. Խորենացու մոտ հիշատակված մուրճը նմանեցվում է կտցավոր սակրին։

VII դարի պատմիչ Հ. Մամիկոնյանը նկարագրում է թե ինչպես Սմբատը թշնամու սաղավարտը ոչնչացնում է մուրճի հարվածով. «Եւ հասեալ Սմբատայ՝ եհար մրճովն ի վերայ գագաթանն, և գոգեաց սաղաւարտն, և գլխոյն ոսկրն ի ներքո պատառեաց և տեղի տայր սաղաւարտն մրճին Սմբատայ, որ և հաղիւ կարաց հանել»[1]։

Ուրեմն մուրճով խփում էին սաղավարտի գլխին՝ նրա սրածայր գագաթը գոգելու և նրա մեջ թշնամու գլուխը ջախջախելու նպատակով։

Պեղումներից, դժբախտաբար, մեզ հայտնի է միայն մեկ սակր, որ գտնվել է Անիում։ Այդ սակրը (07—101) երկաթից է և նեղ ու երկայն իր ձևով նման է մարտական սակրերին։ Վաղրերի ու սակրերի պատկերը հանդիպում է ձեռագրական մանրանկարչության մեջ։

Արժեքավոր փաստ է XI—XIV դարերի ձեռագրերի (ձեռագիրներ 6201 և 8772) նկարները, որտեղ պատկերված է Հուդայի մատնությունը. նրան շրջապատող զինվորները ձեռքներին բռնած ունեն երկբերան և միաբերան, կեռ ու երկար ձողերի վրա ամրացված զենքեր, որոնք ամենայն հավանականությամբ, համապատասխանում են պատմիչների մոտ հիշատակված վաղրերին[2] (նկ. 26)։

Երկսայրի սակրաձև զենքերը իրենց գոյությունը շարունակեցին մինչև XVIII—XIX դարերը, թեև վաղուց արդեն հրազենը գտնը-

---

1 Թ. Արծրունի, էջ 248։

2 Ստ. Օրբելյան, էջ 375։

1 Ց. Մամիկոնեան, էջ 224, նաև՝ էջ 91։

2 Տես նաև Մատենադարանի №№ 8772 և 6472 և այլ ձեռագրեր։

Եվ. 26. Մատենադարան Մաշտոցի անվան. Ա 8172. Տետրակ

Նկ. 27. Մանրանկար XVI դարի, Պետ. Մատենադարանի № 5472 ձեռագրից

ված էր։ Այս ուշ շրջանի սակրերը, ինչպես նաև զենքի մի շարք այլ տեսակներ, իրենց ձևերով խիստ մոտեցել և գրեթե նույնացել են պարսկական զենքերի տեսակներին։ Դա հետևանք է այն բանի, որ հայերը, կորցնելով իրենց ազգային իշխանությունը, վաղուց արդեն գտնվում էին Իրանի և Թյուրքիայի դերիշխանության ներքո։

Գործոն զենքերի թիվը լրացնելու համար անհրաժեշտ է հիշատակել հին հեղինակների մոտ հիշատակված վարոցը, որը մի հատագլուխ մահակ է, ծայրը սովորաբար մեծ գամերով ամրացված։ Զենքի այս խիստ պրիմիտիվ տեսակը ծառայել է գլուխ ջախջախելու համար։ Եղել են հատուկ զորախմբեր, որոնք գլխավորապես վարոցներով են զինված եղել և կոչվել են վարոցաւորք։

Վերևում թված զենքերը գրեթե բոլորն էլ տեղական են և ինչպես հին դարերում, նույնպես էլ միջնադարում պատրաստվել են հատուկ զինական արհեստանոցներում։ Ուրարտացիների ժամանակներից մեզ հայտնի է Կարմիր բլուրի զինանոցը, որտեղից 1936 թվականին գտնվել է նաև բրոնզե կացին ձուլելու կաղապար, իսկ միջին դարերում զենք պատրաստելու ամենանշանավոր արհեստանոցները եղել են Դվինում և Հետադայում նաև այլ քաղաքներում (Անի, Արծն և այլն)։ Պարզ է, որ Արշակունիների ժամանակ էլ զենքերը պատրաստված պետք է լինեին զորանոցներին ու զորականներին կից հատուկ արհեստանոցներում, որոնք, սակայն, դժբախտաբար, դեռևս ուսումնասիրված չեն։ Այդ տեսակետից կարծում ենք, որ Գառնի ամրոցի և Արմավիրի ապագա պեղումները պետք է տան այս հարցը ճշտող հարուստ նյութ։

Մատենադարանի՝ XVI դարի № 5472 ձեռագրի 80-րդ էջում Մակեդոնացու և Դարեհի կռիվը պատկերող նկարի մեջ ու-

շագրավ է, որ, սառը գենքից բացի, առաջին անգամ հանդիպում է կարճ փողով մի հրացան (նկ. 27)։

Միջնադարյան Հայաստանում պատերազմների ժամանակ բերդերը քանդելու և քաղաքները նվաճելու համար գործադրել են հատուկ մեքենաներ, որ այս կամ այն առիթով հիշատակել են մեր պատմիչները և տվել նրանց անունները՝ էշ, փիլուկուան և բաբան։

Միջնադարում քաղաքների պաշտպանության գլխավոր միջոցը հանդիսանում էր պարսպապատումը։ Դարեր շարունակ Հայաստանը դիմադրել է արտաքին թշնամիների հաճախակի հարձակումներին, ուստի Հայաստանի գլխավոր քաղաքները գրեթե բոլորն էլ պարսպապատված են եղել։ Բացի քաղաքներից, կային մի շարք ամրոցներ, որոնք խոշոր պաշտպանական դեր էին կատարում, ինչպես, օրինակ՝ Արտագերսը՝ Շապուհի զորքերի դեմ, Կապույտ և Երինջակ բերդերը՝ արաբական արշավանքների ժամանակ և այլն։

Հայաստանի հիշյալ քաղաքները հանդիսացել են տեղական բնակչության պաշտպանության վայր՝ սկսած Հունա-Հռոմեական արշավանքների ժամանակներից. պատերազմների միջոցին այդտեղ է ամրացել ու պատսպարվել նաև շրջակա գյուղերի բնակչությունը. այդ մասին մեր պատմիչները բազմաթիվ հիշատակություններ ունեն։ Օրինակ, Ա. Լաստիվերտցին գրում է. «Բազում և անհամար հոգիք ի վերագոյն գաւառացն, վասն տեղեացն ամրութեան՝ անդր ժողովկալ էին»[1]։ Կիրակոս Գանձակեցին Կարին քաղաքը դրավելու առթիվ գրում է. «Եւ զի յոյժ բազում ամբոխ էր ի ժամանակին յայնմիկ, քաղաքն, լցեալ քրիստոնէիւք և տաճկօք, այլև ամենայն գաւառն անդր հաւաքեալ էր»[2]։

Մ. Խորենացին գրում է, որ պարսկական զորքերը պաշարելով Տիգրանակերտ քաղաքը, նրա նվաճման համար գործադրում են էշ կոչված մեքենան. «Եւ Յունացն մատուցեալ մեծաւ բռնութեամբ յեցուցին ի պարիսպըն զկոչեցեալ էշսն»[1]։

Մ. Խորենացու նկարագրությամբ այս մեքենան անիվավոր էր, վերևը հաստ փայտերով ծածկած։ Մարդիկ, պաշտպանվելով այդ փայտե պատնեշի տակ, մեքենան մոտեցնում էին պատին և նրա տակից հատուկ կացիններով, մուրճերով ու սակրով քանդում էին պատերի հիմքերը, պատը փուլ բերելու կամ նրա վրա ծակեր գոյացնելու դիտավորությամբ։ Այդ մեքենան կոչվել է նաև խոյ։

Հեթում պատմիչը, խոսելով Հուլաուի արշավանքների մասին, քանդող մեքենաների շարքում հիշում է նույն էշը, կոչելով այն իշավայրի[2]։

Պարիսպները քանդող մեքենաներից մեկն էլ կոչվել է փիլիկուան (նաև փիլիկոն, փիլիկան, փիլիպա և այլն), որը ըստ երևույթին, էշից տարբերվել է միայն նրանով, որ քանդելու գործիքը հարմարեցված է եղել իրեն՝ մեքենայի վրա[3]։

Կ. Գանձակեցին փիլիկուան մեքենայի գործադրման մասին հիշատակում է Գանձակի գրավման նկարագրության մեջ. «...Եւ յանկարծակի հասին զօրք թաթարին, և պատեցին զքաղաքն յամենայն կողմանց, և մարտ եղեալ մարտնչէին ընդ նման բազում մեքենայիւք, և հարին զայգեստանն՝ որ շուրջ զքաղաքաւն էին։ Ապա փլուցին և զպարիսպ քաղաքին Փիլիկուանօք յամենայն կողմանց և ոչ եմուտ ի քաղաքն ի թշնամեացն, այլ վառեալք զինու պահեցին զքաղաքն շաբաթ մի. իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին՝ թէ առաւ քաղաքն ի թշնամեացն, մտեալ իւրաքանչիւր ոք ի տուն իւր՝ այրեաց ի վերայ իւր զինուածն»[4]։ Բացի քանդող մեքենաներից, քաղաքների նվաճման համար գործադրել են նաև քար նետող մեքենա, որը կոչվել է բա-

1 Ա. Լաստիվերտցի, էջ 95։
2 Կ. Գանձակեցի, էջ 264։

1 Մ. Խորենացի, էջ 290։
2 Տես Հեթում պատմիչ, էջ 47։
3 Տես Ա. Լաստիվերտցի, էջ 102—103։
4 Տես Կ. Գանձակեցի, էջ 222—223։

բան: Պատմիչների նկարագրությունից երեվում է, որ բաբանը ահռելի մեքենա է եղել, երանք նույնիսկ հիշատակում են բաբանի նետած քարի քաշը, որը հավասար է եղել 60 լիտրի [1]:

Քար նետող բաբանը գործադրվել է ոսկեղենների ու թաթարների ժամանակ: Շատ հաճախ այդ մեքենան կոչվել է նաև լատիներեն բառով՝ բալիստր:

Կային նաև աշտարակաձև փայտյա հատուկ սարքավորումներ, որոնք մոտեցնում և հենում էին քաղաքի պարիսպներին ու նրանց վրայով վահանով պաշտպանված զորքը խիտ շարքերով մտնում էր քաղաք:

Ինչպես մի շարք փաստեր ցույց են տալիս, այդ մեքենաների դեմ կռվել են հատուկ պատրաստված վառելանյութերով: Մ. Ուռհայեցին պատմում է՝ «...Յայնժամ Վասիլն ձայն տուեալ առ ամենայն քաղաքն և ասէր. «Ով ոք կարասցէ ելանել և հրով այրել զբաբանն զայն, առցէ յինէն տուրս բազում ոսկւոյ և արծաթոյ...»: ...Եւ յայնժամ յառաջ եկեալ Փռանգ մի ... Եւ խնդրեաց զօրաւոր և քաջ ձի և զգեցեալ զրահս և եդեալ սաղաւարտ ի գլուխն և առեալ թուղթ՝ կապեաց ի ծայր ռմբին և երեք շիշ նաւթ դրեալ ի ծոց իւր՝ և թղթաւորի պատճառանօք յառաջ ելեալ... և գնայր... և եկեալ Փռանգն առաջի բաբանին՝ զտեղի առեալ և ոչ գնայր. և կարծէին ընդ մեծութիւն բաբանին կայ և հիանայ՝ և ի նոյն ժամայն հանեալ զմէկ շիշն և հարկանէր զբաբանն. և որպէս զարծիւ շուռ առեալ զբաբանովն՝ նա հարկանէր զմիւս այլ շիշն. և դարձեալ շուրջ եկեալ և զերրորդ շիշն զարկանէր զբաբանն. և ահաւոր բորբոքեցաւ հրով, և Փռանգն դարձաւ ի փախուստ»[2]:

Հատկապես այդ մեքենաներից պաշտպանվելու և առհասարակ թշնամու մոտեցումն արգելելու համար քաղաքները շինում էին ջրով շրջապատված վայրերում (Արտաշատ, Անի) կամ ժայռոտ տեղերում: Հաճախ բերդերը շրջապատում էին արհեստական ջրային գոտիով և այլն:

Բացի վերոհիշյալ մեքենաներից, գործածվել են նաև մի շարք գազային նյութեր, ինչպես հրացանը, որ եղել է հուր ձգող գործիք և նետվել է հատկապես նավերի վրա [1]: Իսկ Թ. Արծրունին մեզ ծանոթացնում է նաև այդ հրձիգ նյութերի բաղադրության հետ [2]:

Հրացանությունից և ռումբերից պաշտպանվելու համար մարդիկ զրահավորվում էին [3], իսկ պարիսպներն ու շենքերը հրդեհից ղերծ պահելու համար՝ ծածկում էին հատուկ կաշիներով:

Զրահներ.— Միջնադարյան Հայաստանի հայկական զորքի պաշտպանության հիմնական միջոցներից մեկն է եղել հենց զրահավորումը: Պաշտպանական հագուստների մասին մենք տեղեկություն ունենք դեռևս Հերոդոտի ժամանակներից: Սպառազինված հայ զորքին պատմիչներն անվանել են «երկաթապատը», «զրահաւորը», «զրահապատը», «պատենապղենք», «շերտաւորը» [4]: Պաշտպանական այդ զգեստը պատրաստվում էր մետաղից, նաև կաշվից [5] կամ չայրվող մազից: Մետաղե զրահները լինում էին՝ հյուսվածքաձև, օղակաձև և շերտավոր: Շատ հաճախ մետաղե հագուստի որոշ մասը հյուսված էր լինում կաշվե աստառի հետ: Սպառազինվում էին ոչ միայն մարդիկ, այլև ձիերը [6]:

Մ. Խորենացին, խոսելով Տիգրանի զորքի մասին, հիշում է, որ «մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք... և որ ի նոցայցն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք, ղիշնամիսն արտահայածել» [7]:

---

1 Տես Ա. Լաստիվերտցի, էջ 103:
2 Տես Մ. Ուռհայեցի, էջ 120—121:

1 Տես Ա ե ր է ս ի ե պ ի ս կ ո պ ո ս ի Պատմութիւն, Երևան, 1939, էջ 148: Նաև՝ Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ո ց ի, էջ 160:
2 Տես Թ. Ա ր ծ ր ու ն ի, էջ 219—220:
3 Նույն տեղում, էջ 220:
4 Տես Փ. Բ յ ու զ ա ն դ, էջ 130, 137, 203:
5 Տես Մ. Խ ո ր ե ն ա ց ի, էջ 305:
6 Տես Թ. Ա ր ծ ր ու ն ի, էջ 22:
7 Մ. Խ ո ր ե ն ա ց ի, էջ 74:

Զրահով պաշտպանված էր լինում ոչ միայն զինվորի իրանը, այլև բազուկները, ազդրերը, իսկ գեմքի և գլխի պաշտպանության համար կային հատուկ ծածկոցներ [1]։

Մ. Խորենացու մոտ հիշատակված «տախտակս պղնձիս թիկանց և լանջաց» համապատասխանում է վարպանակին։ Լանջանոցը մեր պատմիչներն անվանել են նաև ճօշ [2]։

X դարի պատմիչ Թ. Արծրունին հիշատակում է մազե զգեստների մասին, որոնցով զինվորները պաշտպանվում էին հրդեհից. «Եւ որք մերձ առ պարսպօքն զճակատն վառէին և զմարտն գրգռէին՝ զգեստն ինքեանց յասուէից կազմեալ... աներկիւղ մնալով ի հրոյն տոչորմանէ...»[3]։

Միջնադարում գործածված զրահները կարելի է բաժանել երեք մասի. առաջին՝ գլխանոց, երկրորդ՝ իրանի պահպանակ (լանջապան) և երրորդ՝ բազուկների ու ազդրերի պահպանակներ (պահպանակք բարձի և բազկի)։

Բացի վերոհիշյալից պետք է ասել, որ հայկական զորքի որոշ գնդերն ունեցել են նույնիսկ իրենց հատուկ տեսակի ու դույնի համազգեստը. թեև եղել են նաև այնպիսի զորամասեր, որոնք զրահավորված չեն եղել։ Վարդանանց պատերազմի ժամանակ պարսիկ հազարապետ Միհրներսեհը հետաքրքրվում է, թե հայկական 60 հազարանոց բանակից քանի հոգի սպառազինված են և դրանցից քանի՞ հոգի մերկ են [4]։

Վահան.— Միջնադարյան պաշտպանական կարևոր զենք է վահանը, որի միջոցով բաց դաշտում պաշտպանվել են հակառակորդի հարվածներից։ Վահանը հնում պատրաստում էին ոչ միայն մետաղից, այլև փայտից՝ ծառի հաստ ճյուղերից հյուսված և կաշեպատ [1]։ Վահանները եղել են տարբեր ձևի ու մեծության՝ ձվաձև, անկյունավոր և կլոր։

Թևթև վահանները իրենց կենտրոնում ունենում են մետաղյա սրագագաթ ուռուցք, որով երբեմն էլ հարվածում էին թշնամուն. նման դեպքում վահանը ստանում էր մարտական կիրառություն։ Զորքը ունեցել է ասպայակիրներ (վահանակիրներ), որոնք երթի ժամանակ տանում էին իրենց սպայի մարտական ծանր վահանը։ Հատուկ մի զորամաս՝ վահանավորք, ծանր վահաններով փակում էր կռվողների առաջը, որպեսզի աղեղնավորները ազատ գործեին իրենց երկու ձեռքով և չզբաղվեին պաշտպանվելու հոգսով։

Հայկական զորքի թե՛ հետևակը և թե՛ հեծյալը զինված էին լինում վահաններով, միայն թե հեծյալների վահանները ծավալով ավելի փոքր էին։

Վահանով պաշտպանվում էին ոչ միայն անհատապես, այլև զինվորների առանձին խմբեր անսպասելիորեն վահանների տակ շղթայով ամուր «բերդեր» էին պատրաստում թշնամու դեմ, նման պարսկական բանակի փղերի պատնեշին։

X դարի պատմիչ Հ. Դրասխանակերտցին Սահակ իշխանի զորքի մասին հետևյալն է ասում. «Հրամայէր հետևակամարտ գնդին վահանափակ լինել, որ տեսութիւն իմն բերէր չինքն որպէս անպարտելի պարիսպ. և ի թիկանց կուսէ նոցա զհեծելազոր գունդն պատրաստէր՝ սպառազինեալս և վառեալս ի զէնս և ի զարդս և առաջապահքն առաջի վահանափակ սպային սրաւար երիվարօք խաղացեալ՝ յայսկոյս յայնկոյս երթային գային» [2]։

---

1 Տես Մ. Խորենացի, էջ 39, նաև էջ 230։
2 Տես Ն. Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, 1829, էջ 34։
3 Տես Թ. Արծրունի, էջ 220։
4 Տես Ղևոնդ, էջ 139։

1 Կարմիր բլուրում գտնվել են վահաններ, որոնց կենտրոնը բրոնզից է, իսկ շրջապատը հյուսված է ծառի ճյուղերից։ Կաշվե վահանները, երբեմն երկաթապատ, կամ երկաթե խոշոր գամերով ամրացված՝ պահպանվել են անդամ մինչև XX դարի սկզբները, սասունցիների մոտ և այլ տեղերում։

2 Տես Հ. Դրասխանակերտցի, էջ 312։

Չնայած պատմիչները մի քանի տեղ հիշատակում են նաև նիզակով ու սակրով փակելու դեպքեր, սակայն պատնեշ կազմելու համար հիմնական դերը խաղացել է վահանը։

Մանրանկարների ու քանդակների մեջ ունենք մի քանի նմուշներ, որոնցով հնարավոր է գաղափար կազմել միջնադարում գործածված վահանի մասին. այդ առումով կարևոր է Մշո Առաքելոց վանքի 1134 թվականին պատկանող դռան վրայի քանդակը, ուր զինվորի ձախ ձեռքին կա վահան։ Այս վահանը ունի կլոր ձև, կենտրոնը զարդարված է վարդաձև օրնամենտով, որ շատ տարածված է հայկական արվեստի բնագավառում։ Վահանի մի այլ նմուշ պահպանվել է Ախթամարում՝ Գողիաթի ձեռքին, այս վահանը նույնպես կլոր է, իսկ շուրջը զարդարված է բշտիկաձև ուռուցիկներով, կենտրոնում կա վարդաձև բուսական քանդակ։

Սաղավարտը համարվում է զրահի կարևոր մասերից մեկը, որը պաշտպանում է զինվորի գլուխն ամբողջովին։ Սաղավարտը տարբեր ժամանակներում պատրաստել են տարբեր մետաղներից, այն է՝ պղնձից, երկաթից և պողպատից։ Սաղավարտի գործածությանը շատ հաճախ ենք հանդիպում ուրարտական քանդակների մեջ։ Այդ սաղավարտները գմբեթաձև են և վերջանում են դագաթի սուր ելուստով [1]. մինչդեռ հույն պատմիչ Հերոդոտը հիշում է, որ հայ զինվորները, փռյուգացիների և պաֆլագոնացիների նման իրենց գլխին կրել են բուրդ սաղավարտներ։ Սաղավարտի փեշերը տարածվել են ծոծրակին և երկու կողմից ունեցել են դեպի ետ կորացած հավելվածներ՝ ականջի մասը պաշտպանելու համար։

Սաղավարտը Փավստոսի և Ղևոնդի մոտ կոչվել է նաև երկաթե գլխանոց։ Իշխանական սաղավարտները տարբերվել են շարքային զինվորի սաղավարտից՝ ունենալով տոհմական որոշ նշան [1]։ Մանվել Մամիկոնյանի սաղավարտն ունեցել է արծվի տոհմական նշան։ Բյուզանդը հիշում է, որ Մեհրուժանը իր սաղավարտի վրա նշան չուներ՝ անճանաչելի լինելու և իր զինվորներից չտարբերվելու համար։ Սաղավարտի վրա նշան ունենալու մասին մեզ տեղեկություն է տալիս և Մ. Խորենացին, երբ խոսում է Բելի մասին [2]։

Ս. Օրբելյանի մոտ Բարեկ Սյունեցու մասին կարդում ենք. «երկաթագամ և բևեռապինդ սաղավարտիւն զահեղակերպ գլուխըն և զճակատն պղնձայ և տախտակամած յօրինուածով ամրացուցանէր», ապա ավելացնում է. «վագրակերպեան սաղավարտաւն [զարդարէր] դդեղնեդիկն գլուխ» [3]։ Իսկ Վարդան պատմիչը, խոսելով վրաց Վախտանգ թագավորի մասին, հիշում է, որ նրա սաղավարտի առջևի մասում նկարված էր գայլի պատկեր, իսկ ետևում՝ առյուծի [4]։

Մեր պատմիչները թեև բազմիցս հիշատակում են սաղավարտը, սակայն ձևի մասին գրեթե ոչ մի տեղեկություն չեն տալիս։ Առաքելոց վանքի դռան վերևի մասի քանդակի մեջ հենց՝ զինվորի սաղավարտն ունի բուրթ ձև, ծածկում է ճակատի կեսը և ետևի կողմից փակում է ամբողջ ծոծրակը, իսկ ձեռագրերում հանդիպող հայկական սաղավարտները սրագագաթ են. XV դարի ձեռագրերից մեկում, ուր նկարված է Մուշեղ Մամիկոնյանի ճակատամարտը, հենց՝ յալների սաղավարտներն ավելի սրածայր են և ետևի մասում ունեն հավելված. սաղավարտի նույն ձևն ենք տեսնում 1397 թ. մի ձեռագրում և Սսի XII դարի ձեռագրերից մեկում։ Ռազմիկի դեմքը պաշտպանելու համար եղել է նաև դիմակալ պատրաստված բրոնզից կամ երկաթից։ Այդպիսի մի օրինակ գտնվել է Սևանի

---

1 Նույն ձևի են կարմիր բլուրից գտված բրոնզե սաղավարտները։

1 Նման տարբերություն նկատելի է, մեր կարծիքով, կարմիր բլուրից գտված ուրարտական սաղավարտների միջև։

2 Տես Մ. Խորենացի, էջ 38—39։

3 Տես Ս. Օրբելյան, էջ 38—39։

4 Տես Վարդան պատմիչ Հավաքումն Պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 97 պատմիչ։

շրջանում. այս երկաթն դիմակալը, որ ծածկված է պղնձի հատուկ խառնուրդի շերտով, օգտագործվել է միջնադարում. այդ պարոլ երևում է նրա վրա եղած բուսական օրնամենտներից (նկ. 28):

Հայ պինվորը, բացի սաղավարտից, կրել է նաև իրանը պաշտպանող զրահ, որ հասնում էր մինչև ազդրերը և իր գործվածքով ու ձևով տարբերվում էր զրահի մյուս մասերից: Զրահի համար պատմիչների հիշատակած «շերտաւոր» բառը ցույց է տալիս, որ մետաղի կտորները շերտ-շերտ հագցվել են իրար՝ ձկան թեփուկների ձևով: Շերտավոր զրահները կոչվել են նաև կողենք, որ հյուսվել են և ունեցել են մոտավորապես տերևի ձև: Նման հյուսվածքների հանդիպում ենք նաև պարսկական քանդակների մեջ: Զրահի մի այլ տեսակը կոչվել է վերոմ. սա պատրաստված է շղթայանման խիտ հյուսվածքով, որը չի դժվարացնում մարտիկի շարժումները: Մ. Խորենացին, խոսելով Տրդատի մասին, հիշում է. «Եւ ինքն վառեալ վերտ պահպանակօք, ուր ոչ գծէին նետք»[1]: Մ. Խորենացու հիշատակած թիկունքի և լանջերի պղնձե տախտակները[2] համապատասխանում են վարպանակին (լանջանոց, ճօշ, վերարկու): Իսկ սրունքներն ու բազուկները պաշտպանելու համար ռազմիկը կրում էր սոնապաններ ու բազպաններ, հագնում էր նաև պատերազմին հարմար կոշիկներ, որոնք կոչվել են օղ կամ մուկ. այդ մասին Թ. Արծրունու և մյուս պատմիչների մոտ կան բազմաթիվ հիշատակություններ: Բացի այդ բոլորից, պինվորը պարտադիր կերպով զրահի վրա հագնում էր պարեգոտ:

Հայկական բարձրավանդակը դարեր շարունակ ենթարկվել է օտարերկրյա զավթիչների հարձակումներին, որոնք ամեն ջանք գործադրել են ընկճելու և իրենց ենթարկելու հայ ժողովրդին: Վերջինս ծանր փորձությունների է ենթարկվել նաև հայ շահագործողների կողմից: Այդ դաժան մարտերում աշխատավոր հայ ժողովուրդը ցուցաբերել է անսահման տոկունություն ու նվիրվածություն իր հայրենիքին: Այդ դարավոր պայքարում գարդանում է ու առաջնակարգ տեղ է գրավում պինագործական արհեստը, որի համար Հայաստանն ուներ բավարար չափով թե՛ հում նյութ և թե՛ վարպետ արհեստավորներ. սրանք

Նկ. 28. երկաթե դիմակալ, միջնադարի, XIII—XIV դդ.
Պետական պատմական թանգարան
դծ. Առաքել Պարբիկի

ոչ միայն պատրաստել են մարտական զենքեր, այլև հորինել են պաշտպանության զանազան միջոցառումներ՝ թշնամիների ամեն տեսակ զենքերից պաշտպանվելու համար:

Հետագայում՝ վառոդի հանդես գալուց հետո, էլ ավելի կատարելագործվում է ռազմական զենքը. պատրաստվեցին հրացաններ, որոնք ունեին իրենց հարմարանքները վառոդը կրակելու համար: XVIII — XIX դարի հրացանների նմուշներից գտնվում են Պետական պատմական թանգարանում: Այդ

[1] Տես Մ. Խորենացի, էջ 230:
[2] Նույն տեղում, էջ 39:

հրացաններին արտաքին գեղեցկություն տալու համար հաճախ կոթառի մասը ծածկել են սադաֆով ու արծաթով, շատ անգամ զարդարել են ոսկեզօծ տառերով ու նախշերով (նկ. 29)։



Նկ. 29. Կայծաքարի հրացաններ, XVII—XVIII դդ. Պետական պատմական թանգարան

2. ՈՍԿԵՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ և օտար պատմիչների կողմից հաղորդած փաստերը հաստատում են, որ Հայաստանում, ինչպես մի շարք արհեստների, այնպես էլ ոսկերչության ու արծաթագործության զարգացման համար կար հարուստ նյութական բազա։ Հայաստանի բնիկներն արդեն ծանոթ էին ոսկու և արծաթի մշակման և օգտագործման հետ, իսկ հետագա դարերում այդ մշակումը տեխնիկական տեսակետից էլ ավելի է կատարելագործվում։

Ոսկերչությունը և արծաթագործությունը, ինչպես և մյուս արհեստները Հայաստանում, բավական զարգացման էին հասել դեռևս հնագույն շրջանում. թեև այդ մասին գրավոր փաստեր չկան, սակայն նյութական կուլտուրայի արժեքավոր մնացորդներ հայտնաբերվել են նույնիսկ 2-րդ հազարամյակի կեսին պատկանող դամբարաններից, պեղված Հայաստանի տարբեր շրջաններում՝ Նոր Բայազետում, Մարտունիում, Կիրովականի Թագավորանիստ ու Դիմացի Թաղ կոչվող դամբարաններում և այլն։ Այդ պեղումները արհեստների պատմության համար տվել են հարուստ նյութ. բրոնզյա իրերի հետ միասին հայտնաբերվել են նաև ոսկյա և արծաթյա զարդեր՝ մատանիներ, օղեր, ուլունքներ, բաժակներ, որոնք իրենց գեղարվեստական ձևավորումով բարձր արվեստի գործ են հանդիսանում։ Անհրաժեշտ է նշել, որ արհեստավոր ոսկերիչներն այդ ժամանակ աշխատել են ոչ միայն ոսկուց և արծաթից տալ բարձր որակի իրեր, այլ նույն վարպետությամբ մշակել են նաև պղնձյա ու բրոնզյա զարդեր։

Հնագարյան մարդու արհեստների մեջ կիրառվել է երկրաշափական օրնամենտը, երբ արվեստագետը գծերի տարբեր համադրական միացումներով կազմել է բազմատեսակ զարդանկարներ, որոնք իրենց ընդհանուր բնույթով հանդիպում են Հայաստանի գրեթե բոլոր հնավայրերում, այն է՝ Դիլիջանի շրջանի Ռեդկին լադերում, Նոր Բայազետում, Լոռիում, Շիրակում, Արարատյան դաշտում և այլ տեղերում։ Բրոնզե ու երկաթե դարին պատկանող պեղածո իրերի վրա եղած երկրաշափական հիշյալ զարդանկարները կան նաև Վրաստանում՝ Սամթավրոյի ու Մցխեթի պեղումներից և Հյուսիսային Կովկասից ու այլ վայրերից ստացված նյութերի վրա։

Հնագույն դամբարաններում ամենից շատ գտնվել են կանացի և տղամարդկանց ձեռքի ու ոտքի ապարանջաններ, տարբեր ձևերի ու տարբեր նյութերից (բրոնզից, երկաթից և արծաթից)։ Ապարանջաններն իրենց ձևով կլոր կամ տափակ օղակներ են. հաճախ օձի գլխով, իսկ հազվագյուտ դեպքում՝ այլ կենդանիների ֆիգուրաներով։

Դամբարաններից հայտնաբերվել են նաև մանյակներ, բազմաթիվ մատանիներ։ Վեր-

ջիններս, բացի զարդ լինելուց, ծառայել են նաև որպես կնիք, դրանցով կնքել են կավե տախտակների վրա գրված պայմանագրերն ու վավերագրերը: Կան նաև բրոնզե սկավառակներ (գլխի թասեր), որոնք ամրացվել են կտորի կամ կաշու վրա: Հետագայում այդ թասակները շինում էին մեծ մասամբ արծաթից կամ վարշադից:

Այս բոլոր նյութական մնացորդները հաստատում են, որ Հայկական լեռնաշխարհում զարգացած է եղել մետաղի մշակույթը, որոնց թվում ոսկու ու արծաթի մշակման արվեստը: Հայաստանում գոյություն են ունեցել բազմաթիվ օջախներ, որոնք կապվում են առաջավոր Ասիայի մեծ պետությունների կուլտուրայի հետ:

1948 թ. ամռանը Կիրովականից դեպի արևելք, 2 կմ հեռավորության վրա, դպրոցի նոր շենքի շինարարության ժամանակ բացվեց մի դամբարան, որը պատկանում էր երկրորդ հազարամյակի կեսին[1]: Այդ հողաբլուր դամբարանը եղել է հարուստ անասնապահական ցեղի առաջնորդի դերեզման՝ 30 բառակուսի մետր տարածությամբ և 3,5 մետր խորությամբ: Այդ դամբարանից հայտնաբերվեցին կավե ամաններ՝ սև փայլ ունեցող ու գունավոր զարդանկարներով: Կերամիկայի հետ միասին գտնվեցին նաև բրոնզյա կացին, դաշույն, դանակ, նիզակի ծայրեր, կային նաև քարից պատրաստած ոչ շատ խոր ափսեներ, սարդիոնից և ոսկուց ուլունքներ, ոսկյա բարակ թերթիկներ, որոնք եղել են զարդարանքի մասեր: Այս դամբարանից հայտնաբերվեցին նաև արծաթյա տարբեր ձևի չորս անոթներ և մեկ փոքրիկ թաս ոսկուց[2], որը զարդարված էր առյուծ ներկայացնող քանդակներով:

1 Դամբարանի պեղման աշխատանքները սկսել եմ ես, որը տևել է երկու օր, սակայն պրոֆեսոր Բ. Պիոտրովսկու գալուց հետո այդ աշխատանքները դեկավարվել են նրա կողմից: Պեղմանը մասնակցել են նաև պատմական գիտությունների թեկնածուներ բնկ. բնկ. Ա. Մ ի ր ո յ ա ն ը և վ. եղիազ ա ր յ ա ն ը:

2 Ոսկեվաճառ հայտնաբերել էին բանվորները շինարարական աշխատանքի ժամանակ, նախքան պեղումների սկսվելը:

Այս ոսկյա փոքրիկ թասի վրա դրվագման (չեկանելու) տեխնիկայով քանդակված են 6 առյուծներ, որոնք զույգ-զույգ կանգնած են իրար դիմաց: Չնայած ոսկե թասի վրա վարպետն իր փոքրիկ մուրճի հարվածներով դուրս է բերել ռելյեֆ քանդակներ, սակայն առյուծների դիմաքանդակները կոպիտ են, հատկապես կոպիտ ձևով է պատկերված դնչի մասը: Թասի շուրթը զարդարված է մի շարք դծաքանդակներով: Նույն արվեստով և չորս առյուծի քանդակներով ոսկյա բաժակ հայտնաբերել է պրոֆ. Կուֆտինը Բրիալեթի № 15 կուրգանի պեղումների ժամանակ[1] (նկ. 30):

Նկ. 30. Ոսկե գավաթ, Կիրովականի պեղումներից, 2-րդ հազարամյակ մ. թ. ա. Պետական պատմական թանգարան

Հետաքրքիր աշխատանք են նաև արծաթյա չորս անոթները, որոնք տարբեր ձևի են: Նրանցից № 1860/21 արծաթյա փոքրիկ բաժականման անոթը դրսի կողմից շրջապատված է շեշտված ալիքանման նախշերով, որոնք կազմում են յոթ շարք և դասավորված են այնպես, որ սկսվելով շուրթի մոտից՝ հետզհետե մեծանալով կազմում են կիսաշրջան, այսպիսով անոթի վրա ստացվում

1 Տես Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, стр. 62—63

են երեք կիսաշրջաններ՝ կազմված 7-ական ալիքանման գծերից, իսկ № 1860/22 արծաթյա անոթը նման է դույլի և ունի կանթ, կենտրոնական մասը ավելի ներս ընկած է, իսկ հատակը ավելի հարթ, չունի զարդանախշեր. նույն դամբարանից գտնված № 1860/23 արծաթյա անոթը դարձյալ դույլանման է, միայն բերանը ավելի լայն, շուրթերը դեպի դուրս և ունի մեկ ունկ միայն:

Այս ոսկյա և արծաթյա իրերը պատրաստելու ժամանակ ոսկերիչ վարպետները օգտագործել են միայն դրվագման տեխնիկան, որը համարվում է ոսկերչության մեջ հնագույն արվեստ, ինչպես ձուլման տեխնիկան: Բացի ձուլումից և դրվագումից ոսկերիչները ծանոթ են եղել նաև ճնշման տեխնիկային, որը հաստատվում է Հայաստանի պեղումներից հայտնաբերված ոսկյա իրերի նմուշներով:

Երկրորդ հազարամյակին պատկանող թաղումներից է նաև Օձունի դամբարանը. իրերից հիշատակության արժանի է մեդալիոնը: Մեդալիոնի կենտրոնում քանդակված է շրջանաձև նախշ, իսկ շուրջը՝ 13 փոքրիկ շրջանակներ:

Նախաուրարտական շրջանի ոսկերչության վերաբերյալ մենք հարուստ նյութեր ենք ստացել նաև քարարկղյա դամբարանների պեղումներից:

Քարարկղյա դամբարաններից գտնված բոլոր զարդերն ու նրանց վրա եղած զարդանախշերը ցույց են տալիս, որ առաջին հազարամյակում Հայաստանի ոսկերչության արվեստի մեջ կիրառվել է նաև արծաթյա թելի ու հատիկավոր զարդի տեխնիկան:

Ուրարտական պետության ժամանակ անասնապահության, երկրագործության և այգեգործության հետ միասին, բարձր զարգացման էր հասել նաև քարհեստը, որտեղ մշակվում էին երկաթից գործիքներ, զենքեր, իսկ գեղարվեստական արտադրանքը նույնպես զարգացած է եղել: Մետաղի մշակումը է՛լ ավելի է զարգանում, այդ են ապացուցում Ռուսախինայի (Բուիրախ-կալեի) ու Թեյշեբայինիի (Կարմիր բլուրի) պեղումներից դուրս եկած նյութական կուլտուրայի մնացորդները: Երկաթի, բրոնզի և ազնիվ մետաղների վրա նրանք կատարում էին նուրբ քանդակներ, որոնցից շատերը լցվում էին հատուկ ներկերով, փայլուն քարերով, արծաթով, ոսկով և այլ նյութերով: Ազնիվ մետաղներից գլխավորապես արծաթը նկարազարդում էին և ապա սևադում: Բուիրախ-կալեի պեղումների ժամանակ Լեհման-Հաուպտը ու վ. Բելքը հայտնաբերել են մի գլանաձև արծաթյա անոթ, որի մեջ լցված է եղել ծծմբարծաթի փոշի, այս փոշու անալիզով պարզվում է սևապատման տեխնիկայի գոյության հնությունը Հայկական բարձրավանդակում[1]:

Այդ արվեստը հետագայում միջնադարյան հայ ոսկերիչները, հատկապես վանեցի վարպետները, կիրառեցին իրենց աշխատանքներում և անվանեցին սևադի գործ: Բուիրախ-կալեի պեղումներից հայտնաբերված բրոնզի արձանիկները, քանդակազարդ վահանը, երկաթից պատրաստված գործիքներն ու զենքերը և կանացի բրոնզյա ու ոսկյա զարդերը հանդիսանում են լավագույն նմուշներ, որոնք հաստատում են մետաղագործության, մասնավորապես զինագործության ու ոսկերչության արհեստների զարգացումը: Ուրարտական շրջանի արհեստն ու արվեստը բնորոշում էինք միայն Բուիրախ-կալեի պեղումներից հայտնաբերված իրերի հիման վրա: Իսկ այժմ, այս վերջին 7 տարվա պեղումները[2], որոնք կատարվել են Կարմիր բլուրում, մեծապես լրացնում են մեր գիտելիքները այդ ասպարեզում: Այդ պեղումները գիտությանը տվեցին բազմաթիվ նոր նյութեր

---

1 Տես Ե. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, 2-րդ հ., 1941, էջ 132:

2 Կարմիր բլուրում պեղումները առաջին անգամ կատարվել են 1939 թ. պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ, 1941 թ. դոկտոր Սմբատ Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ, իսկ հայրենական մեծ պատերազմից հետո Կարմիր բլուրի պեղման աշխատանքները ղեկավարում է դոկտոր Բ. Բ. Պիոտրովսկին:

ուրարտական արվեստը համեմատաբար ավելի ընդարձակորեն պատկերացնելու համար: Կարմիր բլուրից հայտնաբերված սաղավարտները, կապարճները, մեծ վահանը, անոթներն ու զարդերը ցույց են տալիս, որ ուրարտացիների ժամանակ, նրանց պետության ոչ միայն հարավային մասում, այլ նաև հյուսիսային ծայրամասերում, որոնք նվաճել էին, հետագայում նույնպես զարգացած էր մետաղագործությունը և դրա հետ կապված՝ ոսկերչությունը:

Ուրարտական շրջանում, բացի ձուլման, դրվագման ու ճնշման տեխնիկայից, ոսկերչության մեջ կիրառվել է նաև հատիկավոր աշխատանքը: Ինչպես նախաուրարտական շրջանի ոսկյա զարդերը, այնպես էլ Կարմիր բլուրի 1946 թ. պեղումներից հայտնաբերված ոսկյա ականջօղերը հաստատում են ոսկերչական արվեստում հատիկավոր տեխնիկայի առկայությունը: Այդ ականջօղերը կիսալուսնաձև են՝ կազմված երկու առանձին մասերից, որոնք միացված են իրար հատուկ նյութով: Ականջօղերը ներսի կողմից դատարկ են, իսկ դրսից ծածկված են 3 շարք վերադիր մանր հատիկներով, որոնք կազմում են եռանկյուններ: Նույն արվեստով պատրաստված ոսկյա զարդեր գտնվել են առաջին հաղարամյակին պատկանող քարարկղյա դամբարաններից: Անհրաժեշտ ենք համարում հիշատակել Մարտունու շրջանի Ադիյաման գյուղի հողային աշխատանքների ժամանակ, ն. ք. մ. թվ. առաջին հաղարամյակին պատկանող քարարկղային դամբարանից գտնված ականջօղերը [1]: Այդ ականջօղերը զարդարված են եռանկյունաձև երկշար վերադիր հատիկներով, որոնք իրենց արվեստով շատ նուրբ են և նման կարմիր բլուրի ականջօղին: Հատիկավոր տեխնիկայով պատրաստված ոսկյա զարդարանքներ հայտնաբերվել են նաև Կիրովականի Թաղավորանիստ կոչվող վայրի դամբարաններում: Պեղումներից հայտնաբերված նյութական մնացորդները հաստատում են այդ արվեստի տեղական լինելը, մանավանդ որ, եռանկյունաձև հատիկավոր նախշերը կիրառվել են ոչ միայն ոսկյա ու բրոնզյա զարդարանքների, այլ նաև կերամիկայի վրա, որի տեղական լինելն արդեն ոչ մի կասկած չի հարուցում: Այդ եռանկյունաձև հատիկավոր զարդանախշերը կիրառվել են նաև միջնադարում:

Ուրարտական պետության անկումից հետո, Հայկական բարձրավանդակում կազմակերպվեց հայ ժողովուրդը, որը յուրացնելով տեղական մշակույթը, տվեց ավելի զարդացած արվեստ ոսկերչության ասպարեզում:

Հայաստանը VI—IV դարերում քաղաքականապես ենթարկվել է աքեմենյան Պարսկաստանին և ապա արևմուտքում հզորացող Հունա-մակեդոնական և սելևկյան նվաճողներին: Սակայն հայ ժողովուրդն իր ներքին զարգացման ընթացքում կարողանում է իր հետ կոնսոլիդացնել հարևան ցեղային միությունները և ավարտել հայկական ժողովրդի ու պետականության կազմավորման պրոցեսը: Այս շրջանի Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացման հարցերը լուսաբանելու համար անհրաժեշտ է տվյալ էպոխային պատկանող վայրերում կատարել սիստեմատիկ պեղումներ, առաջին հերթին Արմավիրում: Արմավիրը եղել է ոչ միայն ուրարտական պետության կենտրոն, այլև իր այդ դերը պահպանել է նաև հետագա դարերում:

Հայաստանի մի շարք հնագույն կենտրոններում դեռևս պեղումներ չեն կատարվել, որի պատճառով ոսկերչության վերաբերյալ առայժմ դրեթե նյութ չունենք. ունենք միայն մի փաստ՝ Ախտալի շրջանի Աթաբեկյան գյուղի դամբարանից գտնված վիշապագլուխ արծաթյա ապարանջանը [1], որ ոսկերչական

[1] Այդ ականջօղերը գտնվում են Պետ. պատմական թանգարանում:

[1] Աթաբեկյան գյուղի դամբարանների պեղումները ղեկավարել է պատմական գիտությունների թեկնածու Հ. Մնացականյանը: Արդյունքները հրատարակված չեն:

շատ նուրբ գործ է։ Բայց դա դեռ չի նշանակում, թե Հայաստանը այդ էպոխայում չի ունեցել ոսկերչական արվեստի լավագույն նմուշներ։

Հայաստանին անմիջական հարևան, եղբայրական Վրաստանում դամբարանային պեղումների ժամանակ հայտնաբերվել են իրեր, որոնք պատկանում են VI — IV դարերին և պատրաստված են ոսկերչական ամենաբարձր արվեստով։



Նկ. 31. Ոսկե մեդալիոն, Նոր Բայազետից, № 1638, Պետական պատմական թանգարան

Հելլենիստական ժամանակաշրջանին են պատկանում Նոր Բայազետի ու Արմավիրի մեդալիոնները, Գառնիի պեղումներից հայտնաբերված ականջօղերը։

1940 թ. Նոր Բայազետի շրջանի Հացաուատ (Փաշաքենդ) գյուղում, կարտոֆիլի հոր փորելու ժամանակ, երեք մետր խորությունից հայտնաբերվել է քանդակազարդ մեդալիոն՝ 7,7 գրամ կշռով։ Մեդալիոնի առաջին երեսին քանդակված է կնոջ դիմանկար, որը գրկած ունի երեխա։ Ոսկերիչ արհեստավորի բարձր արվեստը երևում է կնոջ կուրծքը զարդարող մանյակի պատկերով։ Այս նուրբ և բարդ աշխատանքը կատարված է ճնշման տեխնիկայով։ Մեդալիոնի հետ գտնվել են չորս ապակյա սրվակներ, որոնք ապացույց են, որ մեդալիոնը իրոք պատկանում է հելլենիստական շրջանին։

1931 թ. Արմավիրում, հողային աշխատանքների ժամանակ, գտնվել են չորս հատ վերոհիշյալից ավելի փոքր մեդալիոններ, որոնց վրա կա միայն կանացի պատկեր։ Այդ մեդալիոնները նույնպես պատկանում են հելլենիստական շրջանին[1]։ Դա հաստատվում է Նոր Բայազետում գտնված մեդալիոնի հետ ունեցած նրանց նմանությամբ՝ թե՛ արվեստով, և թե՛ պատրաստման տեխնիկայով։

Նման մեդալիոններ գտնվել են նաև Տանաիսում[2]։

Բացի Նոր Բայազետի ու Արմավիրի մեդալիոններից, 1950 թ. Գառնիի պեղումների ժամանակ[3], հռոմեական շրջանին պատկանող դամբարանից[4] գտնվել է մի զույգ ոսկյա ականջօղ, որ իր ձևով և պատրաստման տեխնիկայով շատ նման է Կարմիր բլուրի օղերին, բայց ավելի պարզ է ու չունի վերադիր հատիկավոր զարդանախշեր։

Հայաստանի տարբեր տեղերից պատահական և սիստեմատիկ պեղումների միջոցով գտնվել են ոսկյա ու արծաթյա դրամներ, որոնց մեջ կան Տիգրան 2-րդի, Արտավազդի և ավելի ուշ շրջանին պատկանող

---

1 Կուլտուրայի պատմության ինստիտուտի Տեղեկագիր, № 2։

2 Տանաիսը գտնվում է Ազովի ծովի մոտ, այդտեղի պեղումների մասին մոնոգրաֆիկ աշխատություն է գրել Տ. Ն. Կնիպովիչը՝ «Տանաիս», Մոսկվա, 1949, էջ 62—64։

3 Գառնիում պեղումները սկսվել են 1949 թ. Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի հնագիտական սեկտորի կողմից։ Պեղումները ղեկավարել է պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանը։

4 Գառնիի դամբանադաշտը հայտնաբերել է ու դամբարանի պեղումները կատարել է պատմական գիտությունների թեկնածու Մ. Հասրաթյանը։

դրամներ։ Առաջին դարի ոսկերչական արվեստի նրբությունը հասկանալու համար հետաքրքիր նյութ կարող է տալ այդ դրամների ուսումնասիրությունը։ Թեև մենք ունենք պատմիչների կողմից բազմաթիվ հիշատակություններ թագավորների թագերի ու իշխանների խույրերի մասին, սակայն այդ գրավոր ավյալներով երբեք հնարավոր չէ պատկերացնել թագերի կամ նրանց վրա քանդակված զարդերի տեխնիկան, իսկ այդ պակասը կարելի է լրացնել ոսկյա ու արծաթյա դրամների վրա եղած քանդակների ուսումնասիրությամբ։

Տիգրան Բ-ի ոսկյա դրամներից մեկը գտնվում է Հայաստանի Պետական պատմական թանգարանում։ Այդ դրամի առաջին երեսին նկարված է Տիգրան Բ-ի պատկերը, գլխին ոսկյա թագ։ Թագի կենտրոնում քանդակված է աստղաձև զարդ, որ երկու կողմից շրջապատված է արծիվների քանդակներով։ Թագից ներքև իջնում է վիժակը, որի շուրջը զարդարված է մարգարիտներով։

Դրամի երկրորդ երեսին պատկերված է Անտիոքի աստվածուհին՝ գլխին ծածկած բրգաձև թագ։ Հետաքրքրական է նաև թանգարանում պահպանվող № 16022 արծաթյա դրամը, որը հայտնաբերվել է Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղի մոտ գտնված գանձի հետ [1]։ Դրամի առաջին երեսին քանդակված է Արտավազդ Բ-ի դիմանկարը՝ գլխին թագ, որն ունի ժանիքաձև վերջավորություն, կենտրոնում՝ ճառագայթաձև աստղ, երկու կողմից արծիվների ռելյեֆ քանդակներով. վզին ունի մանյակ ու երեք շարք մարգարիտ, իսկ ականջին՝ ականջօղեր։ Տիգրանի և Արտավազդի այս դրամների դիմանկարները իրենց արվեստով շատ բարձր են ու կենդանի՝ թե՛ դիմագծերի արտահայտությամբ և թե՛ հագուստի ռելյեֆով։

Հայ ոսկերիչների ձեռքով պատրաստած թագն ունի իր յուրահատկությունը. Տիգրանի թագը իր ձևով ոչ նման է պարթև արքաների զմբեթավոր թագին և ոչ էլ մակեդոնացիների վահանաձև լայն խույրերին, որոնց նմուշները պատկերված են նրանց ոսկյա և արծաթյա դրամների վրա։ Դրամների վրա եղած դիմանկարների մեջ ընդհանուր նմանությունը նկատվում է երբեմն վիժակների միջև (խույրի հետևի մասի հավելվածք), իսկ III դարից հետո այդ վիժակների մեջ ևս կատարվում է փոփոխություն։ Այդ մասին մի քանի անգամ հիշատակում է իր պատմության մեջ Ագաթանգեղոսը [1], իսկ երբ նա խոսում է պատվական քարերի մասին, գրում է. «Զթագաւորս շքեղացուցանէ ի նմանութիւն արտախոյրն պսակի ի վերջատր փողփողելոյ» [2]։

Այս փաստերը վկայում են, որ «վերջատր փողփողեաս», այսինքն՝ վիժակները՝ գործածական են եղել Հայաստանում անգամ Սասանյան ժամանակաշրջանում, մինչդեռ սասանյան արքաների թագերի վրայի այդ հավելված մասերը 3-րդ դարից հետո այլևս չեն նկատվում. այդ պարզ երևում է սասանյան դրամներից։ Ուրեմն, չնայած Հայաստանի ոսկերիչները ազդվել են բյուզանդական և պարսկական կուլտուրայից ու արվեստից, բայց և մշակել ու ստեղծել են իրենց ուրույն ոճը։

Ա. ՈՍԿԵՐՉՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ IV — XV ԴԱՐԵՐՈՒՄ

Ֆեոդալական հասարակարգի ձևավորման շրջանում ուժեղանում է խոշոր կալվածատիրությունը, տնտեսության կազմակերպման կենտրոնը դառնում է ֆեոդալական կալվածքը։ Ֆեոդալական սեփականության կողքին ստեղծվում է նաև գյուղացիության անհատական սեփականությունը, թեև գյուղա-

[1] Տես Ա. Շահնազարյան, Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղի մոտ հայտնաբերված գանձը։ Հայաստանի Պետ. պատմական թանգարանի աշխատություններ 2-րդ հատորում, էջ 32—33։

[1] Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 24։

[2] Նույն տեղում, էջ 34։

ցին մնում էր միաժամանակ ճորտական կախյալ վիճակում իր տիրոջ նկատմամբ: Ֆեոդալական այդ ժամանակաշրջանում էլ դղյակներում կենտրոնացած արհեստավորները՝ կտրվելով գյուղատնտեսական աշխատանքից՝ հիմնականում բավարարում էին ո՛չ այնքան գյուղական տնտեսություններին, որքան ֆեոդալական արտոնյալ դասին:

Արհեստները, այդ թվում և ոսկերչությունը, արդեն դառնում են հասարակական անհրաժեշտություն և արհեստավորները համախմբվում են այնպիսի վայրերում, ուր ունենում են լայն սպառողներ: Այդպիսի կենտրոններ էին թագավորական պալատները, իշխանական դղյակները, ամրոցները, առևտրական կետերն ու վանքային հաստատությունները, ուր համախմբվում էին մեծ քանակությամբ պետական պաշտոնյաներ, առևտրականներ, արհեստավորներ և ուր գոյություն ուներ շուկա:

Ոսկերիչ արհեստավորների աշխատանքի արդյունքն էին ամենանուրբ արվեստով պատրաստված արքայական թագերը, խույրերը, վարսակալները, ոսկով ու արծաթով պատած թագավորական գահերը, դաշույնները, վահանները և այլ զենքեր: Ոսկերչական նուրբ տեխնիկայով են պատրաստվել կանացի ոսկյա մանյակներ, ապարանջաններ, մատանիներ, մեջքի կամարներ (գոտիներ), հերաղարդեր. թագավորների ու ազնվական դասի խնճույքի սեղանները զարդարվել են հայ ոսկերիչների ձեռքով պատրաստված ոսկե ու արծաթե բաժակներով, ափսեներով, դանակներով, պատառաքաղներով, դգալներով և ուրիշ այլ պարագաներով:

Ոսկերիչ ու արծաթագործ արհեստավորները բավարարել են նաև եկեղեցու և հոգևորականության բավականին բարդ պահանջները: Նրանց ձեռքով է պատրաստվել եկեղեցական սպասները, ոսկե ու արծաթե խաչերը, թագերը, սաղավարտները, վահանները, մասանց պահարանները, խորաններ, մեռոնի ամանները, սկիհները, բուրվառները, քշոցները և հոգևորականների հագուստի վրա եղած արծաթե ու ոսկե զարդերը: Նրանք զարդարել են նաև ձեռագրերի կազմերը, կիրառելով նրանց վրա ձուլման, դրվագման, շիֆֆիշիի, սևադի ու ինկրուստացիայի տեխնիկան:

Ոսկերչության և արծաթագործության վերաբերյալ նյութեր միջնադարյան վայրերից դեռևս քիչ են հայտնաբերվել. բացառություն են կազմում Դվինի պեղումներից գտնված ոսկե և արծաթե զարդերն ու ոսկերչական գործիքները, որոնք վկայում են այն մասին, որ Դվին քաղաքը միջնադարյան ոսկերչության մի օջախ է եղել: Միջնադարին վերաբերող նյութական մնացորդների այդ պակասը լրացնում են հայ պատմիչները, որոնք տալիս են բավականին շահեկան տեղեկություններ ոսկե զարդերի մասին, ուստի անհրաժեշտ ենք համարում այստեղ հիշատակել պատմիչների մոտ եղած ոսկե և արծաթե զարդերին ու իրերին վերաբերող հետաքրքիր դիտողությունները:

Հայկական թագերի ու խույրերի ճոխության և շքեղության գովքն է անում Ագաթանգեղոսը իր Պատմության մեջ. «Իբրև զմարգարիտն պատուական, զբոլորասերն, զլուսաւորն, զչքնաղագիւտն, որ ոչ ունի գեղութիւն բաժանման իւրոյ ճաճանչաւոր լուսոյն, այլ լիութեամբ զարդ անձին վայելուչ զթագս թագաւորացն զարդարեսցէ»[1]:

Հայաստանի ոսկերիչ արհեստավորների պատրաստած զարդերի մասին V դարի պատմիչ Ղ. Փարպեցին իր պատմության մեջ նշում է նաև ոսկու, արծաթի ու թանկարժեք քարերի օգտագործումը ոսկերիչ արհեստավորների կողմից. «Գանձել անձանց շահս և զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս, զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ

---

[1] Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 10—11:

զարդեօքն յօրինուածովքն, զոր ի խոյրան և ի թագն և ի հանդերձան յոսկեհուռս պաճուճեալս ընդելուզանեն»[1]։

Արհեստավորների մասին ունի հիշատակություն Մ. Խորենացին, երբ խոսում է Շամիրամ թագուհու կառուցած շինարարության մասին[2]։

Հայ պատմիչների տված տեղեկություններից պարզվում է, որ բացի թագից, միջնադարյան Հայաստանում գործածական է եղել նաև խույրը, որը, անշուշտ, թե՛ ձևով և թե՛ պատրաստման եղանակով տարբերվել է թագից։ Հայ արքաները միայն հանդիսավոր օրերին էին կրում թագ, իսկ սովորաբար, ինչպես նաև բոլոր իշխաններն ու իշխանուհիները, կապում էին վարսակալ և ծածկում էին խույր. սա ավելի փոքր ու թեթև էր և զարդարված թանկագին քարերով։ Մեր պատմիչները շատ հաճախ խույրին հոմանիշ գործածել են արտախուրակն։ VII դարի պատմիչ Սեբեոսը, երբ խոսում է Վասակի հագուստի և գլխի զարդարանքների մասին, գրում է. «Խույր ոսկեղէն դնէր ի վերայ վարսակալին, որ Սմբատայ վրայ կը կոչուի «արտախուրակս ոսկեզօծս»[3]։

Պատմիչների տեղեկությունները ցույց են տալիս, որ հայ իշխանների կրած խույրերը եղել են ճառագայթաձև և զարդարված պատվական ակներով ու ընդելուզված ոսկով և արծաթով։ Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել Վասակ Սյունեցու կրած խույրի մասին եղած հիշատակությունը, որ մեզ հաղորդում է Եղիշեն. «Կապէր և զպատիւ վարսին, (վարսակալ) և ըզխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ»[3]։ Այնուհետև պատմիչը, երբ նկարագրում է Վասակ Սյունեցու կրած զարդարանքները՝ պարսկական արքա Շապուհին այցի գնալու ժամանակ, գրում է. «Եւ նա (Վասակը) ըստ առաջին կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն զոր ունէր ի թագաւորէն, կապէր և զպատիւ վարսին և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զականակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդան յականջսն, և զգուարտակն ի պարանոցին»[1]...

Վերոհիշյալ մեջբերումները ո՛չ միայն ապացուցում են այն, որ հայ իշխանների կրած զարդարանքների պատրաստելու ժամանակ ոսկերիչ վարպետները կիրառել են իրենց արվեստում ձուլման, դրվագման, հատիկավոր ու ինկրուստացիոն տեխնիկան, այլև ցույց են տալիս, որ սովորություն է եղել առանց վարսակալը հանելու, վրայից խույր ծածկելը։ Վարսակալը, ինչպես ապացուցում են նյութական մնացորդները, հնագույն զարդարանքներից մեկն է, որ կրել են թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ։ Նոր Բայազետի, Շիրակի և Լալվարի շրջաններում պեղված քարարկղյա դամբարաններից, թեև թվով քիչ, բայց ամբողջական վիճակում գտնվել են վարսակալներ, որոնք հաստատում են այդ հերազարդի առկայությունը դեռևս հնագույն շրջանում։

Միջնադարում, երբ թագավորները կրել են թագեր, իշխանները խույրեր ու վարսակալներ, աղնվական դասի և անգամ ցածր դասի կանայք ծածկել են գլխի սկավառակներ (թասակներ) ու զանազան ձևի հերազարդեր, որոնց հնագույն լինելը ապացուցվում են Երվանդ Լալայանի՝ Նոր Բայազետում և Մորգանի՝ Մուսիերիում կատարած պեղումների նյութերով։ Հիշյալ պեղումները հայտնաբերել են գլխի բրոնզյա նկարազարդ սկավառակներ, որոնք կենտրոնում ունեն ուռուցիկ հավելված՝ նման միջնադարյան կանացի գլխի թասակների, սրանց լավագույն նմուշները պահպանվել են անգամ XVIII — XIX դարերում։

---

[1] Ղ. Փ ա ր պ ե ց ի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 21։

[2] Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Պատմութիւն հայոց, 1913, էջ 56։

[3] Վ. Հ ա յ ո ւ ն ի, Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1924, էջ 109։

[4] Ե ղ ի շ է, էջ 198։

[1] Ե ղ ի շ է, էջ 197—198։

Ոսկերիչների ձեռքով են պատրաստվել կանացի կարևոր զարդարանքներից մանյակները (վզնոցներ)։ Դրանք հնում պատրաստում էին բրոնզից, շատ հասարակ փակ կամ հյուսվածքանման շղթայի ձևով, իսկ միջնադարում՝ մաքուր ոսկուց [1], զանազան ձևի։ Անշուշտ նման զարդարանքից զուրկ էին աշխատավոր կանայք, որոնք, որպես սովորություն, իրենց պարանոցներին կրում էին բազմերանգ հուլունքների շարան, որը փոխարինում էր ոսկե վզնոցին։ Մանյակներ կրում էին ո՛չ միայն կանայք, այլև տղամարդիկ, հատկապես նախարարները և իշխանները։ Այդ երևում է Եղիշեի վկայությունից՝ Վասակ Սյունեցին իր բոլոր զարդարանքների հետ կրել է նաև «զգինդոն յականջսն, և զդոմարտակն (մանյակ) ի պարանոցին» [2]։ Խոսրով Անուշիրվանի կողմից Սմբատ Բագրատունուն տված նվերների շարքում հիշվում է. «մեծացուցանէ ահագին պատուաւք ի ճամբար ականակապ և ի դոմարտակ, և ի գահս արծաթիս» [3]։

Վզնոցին հոմանիշ դոմարտակ տերմինը, որ պահլավերեն նշանակում է զորախումբ, սովորաբար կիրառվել է մարդարտաշար վզնոցների համար և գործածական է եղել թե՛ պարթևական և թե՛ սասանյան շրջանում։ Պատմիչների հաղորդումից երևում է, որ վզնոցները անվանվել են նաև քայտ, կամ բառամանյակ։

Ոսկերիչ վարպետները պատրաստում էին նաև այնպիսի մանյակներ, որոնք ո՛չ միայն ծածկում էին կանանց պարանոցը, այլև հասնում էին մինչև լանջը. այդ առթիվ մենք հանդիպում ենք տարբեր տեղեկություն։ Եսայի Նչեցու մի երկի մեջ, որտեղ ասված է. «մանյակ պարանոցի զարդ է կանանց, զոր լանջագեղ կոչեն, որ ի պարանոցի արկեալ հասանէ մինչև ի լանջսն» [4]։

Մեր պատմիչները, երբ խոսում են թագավորների, իշխանների նիստուկացի և նրանց կանանց զարդարանքների մասին, հիշատակում են դեղեցիկ, ոսկե ու արծաթե կամարները, որոնք անպակաս են եղել կանանց ու տղամարդկանց մեջքից։ Հնագույն շրջանում գոտիները եղել են բազմազան, դրանց լայնությունը եղել է 3—11 սմ. սահմաններում. այդ գոտիների վրա փորագրված էին տարբեր տեսակի զարդանախշեր՝ բույսերի, արեգակի, խաչի, սվաստիկայի, մարդու և կենդանիների նկարներ, որոնք հաճախ դրսևորվում էին ֆանտաստիկ ձևերով։ Բացի կենցաղային նկարներից, կան նաև կրոնական բնույթի քանդակներ, որոնք պատկերված են թե՛ հեթանոսական և թե՛ քրիստոնեական շրջանում պատրաստված գոտիների վրա։

Եթե հնագույն շրջանին պատկանող գոտիների բազմաթիվ նմուշների հետ ծանոթանում ենք գամբարաններից գտնված նյութական մնացորդներով, ապա միջնադարյան գոտիների մասին տեղեկանում ենք ու որոշ պատկերացում ստանում հայ պատմիչների տվյալներից ու Պետական պատմական բանդարանի Ազգագրական բաժնում կենտրոնացած՝ XVII—XIX դդ. պատկանող ոսկե և արծաթե գոտիներից։

Միջնադարում, ինչպես ոսկյա և արծաթյա գլխի հարդարանքները, այնպես էլ կամարները (գոտիները) կրել են բոլոր դասի տղամարդիկ ու կանայք, միայն այն տարբերությամբ, որ իշխանների և առհասարակ ազնվական դասի գոտիները պատրաստված էին շատ ճոխ և ազնիվ մետաղից, իսկ ցածր դասի կանայք կապում էին մեծ մասամբ կտորից հյուսված կամ գոտիներ ուլունքներով ու կոճակներով զարդարված. միայն առջևի ճարմանդը պատրաստվում էր ոսկերիչի ձեռքով, արծաթից, վարշաղից կամ պղնձից, իսկ տղամարդկանց համար՝ կաշվից։

Հայ պատմիչներից Փ. Բյուզանդը, երբ նկարագրում է թագավորների և իշխանների

---

[1] Ոսկուց մանյակ գտնվել է Դվինում 1939 թ. պեղումների ժամանակ։

[2] Եղիշե, էջ 198։

[3] Սեբեոս, էջ 66։

[4] Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1924, էջ 220։

կենցաղը, նրանց նիստուկացը, նշում է «արքունական կամարը», որը ավելի ճոխ էր իշխանականից. ոսկերիչները այդ աղնիվ մետաղները զարդարում էին թանկագին քարերով՝ «ականակապ, մարգարտազարդ»:

Հայ իշխանների, աղնվականների և քաղաքային դասին պատկանող կանանց կարևորագույն զարդարանքներից պատմիչների մոտ հիշվում են նաև ապարանջանները, ականջօղերը և մատանիները: Ապարանջանները հայտնաբերվել են դեռևս վաղադույն մետաղի ժամանակաշրջանին պատկանող քարարկղյա դամբարաններից: Ապարանջանների մի տեսակը, որպես զարդ չի գործածվել, պատրաստվել է կոպիտ ձևով ու ավելի փոքր չափի և ծառայել է որպես դրամական չափանիշ, իսկ երկրորդ տեսակը՝ բացի դարբնելու և ձուլելու աշխատանքից, իր վրա կրել է նաև մասնագետ վարպետի ձեռքը, որը նրա վրա փորագրել է երկրաչափական, բուսական և այլ օրնամենտներ: Ապարանջանը պարսկերեն անվանել են ապրանջան, որի հոմանիշ գործածվել է նաև մեհեվանդ [1]:

Ապարանջանները եղել են տարբեր ձևի, արևելյան ապարանջանները մեծ մասամբ բոլորակ են, ծայրերը մեկը մյուսից անջատ, որոնք շատ հաճախ վերջանում են օձի գլխով, պատրաստվել են ոսկուց և արծաթից: Լինում են նաև ելուզաձև գոհարազարդ, մարգարիտներով զարդարված ապարանջաններ, որոնց նմանները հանդիպում են սասանյան և հունա-հռոմեական զարդերի մեջ:

Հայ պատմիչների հիշատակություններից երևում է, որ ինչպես դռներ, այնպես էլ ապարանջաններ կրել են ոչ միայն աղնվականները, այլ նաև քաղաքի ցածր խավի ներկայացուցիչներն ու գեղջկուհիները, միայն այն տարբերությամբ, որ իշխող դասի համար այդ զարդերը պատրաստվում էին ոսկուց և հատուկ պատվերով, իսկ աշխատավոր մասսան կրում էր ավելի պարզ ապարանջաններ, շատ քիչ դեպքում՝ արծաթից, իսկ մեծ մասամբ վարշաղից և նույնիսկ հուլունքից: Պետական պատմական թանգարանում պահպանվում է գեղեցիկ, նուրբ, ոսկե և թանկարժեք քարերով զարդարված, շատ նուրբ արվեստով պատրաստված ապարանջանների մի կոմպլեկտ, որ գտնվել է Հայաստանի հնագույն մայրաքաղաք Դվինի ավերակներից՝ պատահաբար կամ սիստեմատիկ պեղումների ժամանակ:

Ղ. Փարպեցին, երբ նկարագրում է իշխող դասի ճոխ ու ղեխ կյանքը, թվում է այն զարդերը, որոնցով պճնվում էին հայ կանայք և տղամարդիկ: «Փառացն ցանկացողք, արք և կանայք, որք անյագութեամբն համակեալք ոսկւովք և պատուական ակամբք և մարգարտովք, կապեն ախորժելով զիւրոյին անձանց զձեռս և զոտս և պարանոց» [1]:

Ողիշեն, ի միջի այլոց, գրում է. «Կապէր և զպատիւ վարսին և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ և զականակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր և զդինդան յականջսն, և զդրամարատակն ի պարանոցին»[2]: Ինչպես տեսնում ենք, ականջօղերի, ապարանջանների և մանյակների գործածությունը թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց կողմից հաստատում են V—VII դարի պատմիչները:

Թադավորի, իշխանների և աղնվական դասի գործածած ոսկու և թանկագին քարերի ճոխությունը հասնում է այնտեղ, որ, ինչպես հիշում է Ողիշեն, Վասակ մարզպանը ստիպված է լինում պարսից արքունիքի հարկերը հատուցելու համար վճարել «...և զարդս կանանց»:

---

1 վ. Հ ա յ ո ւ ն ի, Պատմութիւն հին հայոց տարազին, էջ 185: Մեհևանդ նշանակում է լար-կապ: Պարսկերենում մահուանդ բառից մեկնվում է մահիկի ձև ունեցող կանացի զարդ: Ըստ Թիրյաքյանի, այս բառը բարդվում է, ալհ մահ «լուսին» և անդ «կապիչ». իսկ Հ ա յ ո ւ ն ո ւ կարծիքով, մահևանդ պետք է լայն ապարանջան լինի, որը զարդարված էր լինում մահիկով: Այդ մասին մեր պատմիչների մոտ ունենք որոշ հիշատակություններ:

1 Ղ. Փ ա ր պ ե ց ի, 1907, էջ 199:

2 Ո ղ ի ք ն, էջ 198:

Հայ պատմիչների մոտ հիշատակվում են նաև ականջօղերը, որ միջնադարյան գրականության մեջ սովորաբար նշվում է դինդ բառով։ «Ձմարդարտեայ գնդովք»[1] կամ «չտենչանալ յոսկւոյ և ի մարդարտոյ դինդս յականջս»[2]։ Միջնադարում կանայք, բացի ականջօղերից, որպես զարդ կիրառել են ոսկյա և արծաթյա մատանիներ։ Ինչպես դիտենք, հնից ի վեր մատանին բացի զարդ լինելուց գործածվել է նաև որպես կնիք, որով հաստատում էին պետական-քաղաքական նշանակություն ունեցող հրամանագրերը, փաստաթղթերը և նամակները։ Այս սովորությունը հանդիպում է աքեմենյան և սասանյան արքաների մոտ, որոնք ունեին նաև «վարազ նկարագիր մատանիս»[3]։ Այս տիպի մատանիները շատ հաճախ մատնեբին չէին դնում, այլ պահում էին. այդ մասին հիշում են մեր պատմիչները՝ «իսնարս թագաւորին զարքունական մատանին բարձեալ ունէր»[4]։

Գեմմա մատանիներ իրենց մատներին դրել են ո՛չ միայն թագավորները, այլ նաև հայ նախարարները. վարդանաց երդումը, ինչպես հիշում են մեր պատմիչները, կնքված է եղել Վասակ Սյունեցու և ուրիշ նախարարների մատանիներով[5]։

Մեր պատմիչների մոտ շատ հաճախ մատանու կողքին հիշվում է նաև կշռապանակը։ Կան կարծիքներ, որ կշռապանակը հոմանիշ է մատանուն, սակայն մենք եկել ենք այն եզրակացության, որ այդ տերմինները չեն կարող միևնույն նշանակությունը ունենալ. մեր մատենագրության մեջ այդ երկուսը գործածվել են միաժամանակ, իրար կողքի որպես կանացի զարդեր՝ «Հանդերձս մատանի և կշռապանակս»[6]։ Ենթադրում ենք, որ կշռապանակը եղել է կանացի մի այլ զարդ։

Միջնադարյան հայ ոսկերիչների ձեռքով են պատրաստվել ո՛չ միայն արդուզարդը, այլ նաև տնային սպասները, որոնք գործածվում էին արքայական պալատներում, իշխանական, նախարարական դղյակներում, խնջույքների և հյուրընկալության ժամանակ։ Այդ առիթով մեր պատմիչները ունեն արժեքավոր հիշատակություն, երբ նրանք նկարագրում են խրախճանքներն ու ժամանցները, որտեղ հիշվում են ոսկե և արծաթե բաժակները, սափորները, ափսեները, գդալները և այլ իրեր։ Հայ պատմիչների մոտ շատ հաճախ բաժակների և ափսեների համար, որպես հոմանիշ, գործածվել են նաև այլ տերմիններ, օրինակ Փ. Բյուզանդը, երբ նկարագրում է Պարսկաստանի արքա Շապուհի կողմից կազմակերպած ճաշկերույթը, նշում է, որ Շապուհը գինի էր խմում այն բաժակով՝ «տաշտով», որի վրա նկարել էր տվել Մուշեղին ի վարձ ասպետական վարմունքի՝ իր կանանց հետ[1]։

Միջնադարում բաժակին որպես հոմանիշ գործածվել են՝ տաշտ, նուագ, թակույթ տերմինները, որոնք, անշուշտ, եղել են տարբեր չափսի և պատրաստվել են նաև ոսկուց, արծաթից։ Հետաքրքիր տեղեկության ենք հանդիպում X դարի պատմիչ Հ. Դրասխանակերտցու Պատմության մեջ, որտեղ պատմիչը գրում է. «Եւ զարդարէր զնա ծիրանագդեաց փառօք և երևելի ոսկեհուռն հանդերձիւք և ոսկետառն վառիւք և կամար ականակապ... և բաղում ըմպակս և սպաս և բազում կազմուածս ոսկեղէն և արծաթեղէն նմա պատրաստէին»[2]։ Հայ պատմիչների մոտ կա նաև հիշատակություն ոսկյա լազանների ու անոթների մասին. «Եւ ապա պարապեալ ի գործոյն՝ հրաման տայ ոսկի լականաւ ջուր պատրաստել առ ի լուանալ նմա»[3]։

Այդ անոթները անվանել են նաև «նգոյր

---

1 վ. Հ ա յ ո ւ ն ի, էջ 133։
2 Նուչնը (Ոսկ. թղթ., Ա, էջ 694)։
3 Փ. Բ յ ու զ ա ն դ, էջ 249։
4 վ. Հ ա յ ո ւ ն ի, էջ 102։
5 Ղ. Փ ա ր պ ե ց ի, էջ 178։
6 Տես վ. Հ ա յ ո ւ ն ի, էջ 125։ (Նորին յհնկուսթիւն Մատթէի, բրդ. ի դարու, Վենետիկ, 1826)։

1 Տես Փ. Բ յ ու զ ա ն դ, էջ 284։
2 Հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 285—286։
3 Ա. Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 37։

ղդաշտիշոնն ղդասպրիկն թե՛ ոսկի և թե՛ արծաթ»[1]։

Մ. Խորենացին իր Պատմության մեջ հիշում է նաև՝ «տարգալ ունել ոսկի և պատառաքաղ, և ոսկեղինօք ըմպել նուագօք»[2]։

Բացի պատմիչների հիշատակություններից, կան նաև նյութական մնացորդներ, որոնք, թեև պատկանում են XVII—XVIII դարերին, սակայն մեզ տալիս են վաղ միջնադարի մասին ևս որոշ պատկերացում։ Այդ դարերին պատկանող իրերի լավագույն նմուշները ցուցադրված են Պետական պատմական թանգարանում։

Վաղ միջնադարում Հայաստանի արհեստավորները, որոնց թվում նաև ոսկերիչները, արծաթագործները, թե՛ տնտեսական և թե՛ իրավական տեսակետից կախման մեջ են եղել ֆեոդալներից, սակայն նրանք աշխատել են իրենց սեփական գործիքներով և սրա այդ հանգամանքը՝ արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը՝ հետագայում նպաստել է արհեստների ազատ զարգացմանը։

X դարից հետո արտադրողական ուժերի և առևտրի զարգացման, մանավանդ միջազգային առևտրական հարաբերությունների աշխուժացման հետևանքով, արհեստներն է՛լ ավելի զարգացան և արհեստավորների աշխատանքը սկսեց բավարարել արդեն նաև շուկայի պահանջը։

Ֆեոդալական հասարակարգում, ինչպես հայտնի է, արհեստը արտադրության հիմնական ձևերից մեկն էր։ Որպես ապրուստի միջոց և միաժամանակ որպես ամենից պատվավոր գործ, սովորություն էր դարձել, որ Հայաստանում շատ արհեստներ անցնում էին որդուց որդի։ Այդ առթիվ Ղազար Փարպեցու մոտ կարդում ենք. «Ամենայն արուեստաւոր, որ ųիւր արուեստն ինքն դիտէ և օգտեալ է յարուեստէն՝ ընոյն և որդւոց իւրոց կամի ուսուցանել, ųի կեցցեն»[1]։ Արհեստների մեջ առաջին հերթին հենց ոսկերչությունն էր, որ, իրոք, ժառանգաբար անցնում էր որդուց որդի և շարունակվում մի բանի սերունդներ, ինչպես, օրինակ, Կ. Պոլսում Տուզյանների տունը XVIII—XIX դարերում, նույնը տեսնում ենք Վանի, Էրզրումի, Ախալցխայի և ուրիշ քաղաքների ոսկերիչ արհեստավորների ընտանիքներում։

Մեր մատենագրության մեջ արհեստավորների մասին խոսելիս ընդհանրապես գործածվել է արվեստ տերմինը։ Պատմիչներն արվեստը և արհեստը իրարից չեն տարբերել, որի հետևանքով թե՛ արհեստով և թե՛ արվեստով պարապողներին անվանում են «արուեստաւոր», «գործաւոր» կամ թե «արուեստագործ», շատ հաճախ գործածել են նաև «ձեռական արհեստ» կամ «անբան արհեստ»[2]։

Հետագա դարերում հայ պատմիչների մոտ «ճարտար արվեստ» տերմինը գործածվել է, ամենայն հավանականությամբ, արհեստավորին արվեստագետից տարբերելու համար։

Կիրառական արվեստին վերաբերող մեր ձեռքի տակ եղած նյութերից պարզվում է, որ ֆեոդալական կենցաղի պատկերները իրենց արտահայտությունն են գտել, ինչպես քանդակագործության, նկարչության, այնպես էլ ոսկերչության մեջ, որը հաստատվում է բյուզանդական, պարսկական և անդրկովկասյան ժողովուրդների ոսկե և արծաթե իրերի վրա եղած որոշ օրնամենտների ընդհանուր նմանությամբ։ Հայ ժողովուրդը, փոխազդվելով արևելյան և արևմտյան ժողովուրդների կուլտուրայից ու արվեստից, կարողացել է ստեղծել և իր ուրույն արվեստը, որով, իր հերթին, ազդել է հարևան երկրների կուլտուրայի վրա։

Ինչպես Սասանյան Պարսկաստանում, այնպես էլ Հայաստանում, ֆեոդալական կեն-

---

[1] Ա լ իշ ան, Սիսուան, էջ 475։
[2] Մ. Խ ո ր ե ն ա ց ի, էջ 170։

[1] Ղ. Փ ա ր պ ե ց ի, էջ 369։
[2] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 226—27։

ցաղում զինավարժության հետ միասին սիրված զբաղմունքներից է եղել որսորդությունը, որ մանավանդ խաղաղ պայմաններում կատարվել է առանձին հանդիսավորությամբ. այդ նպատակով էր, որ հայ Արշակունիները, նաև հետագա դարերի իշխողները, մեծ ուշադրություն էին դարձնում արհեստական անտառներ տնկելու և աճեցնելու գործին. հիշենք Խոսրով Կոտակի ժամանակ Դվինի մոտ պատրաստած արհեստական անտառը, որտեղ «զամենայն էրես, և ըզգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և լնուլ զբաղաքորմն, զի լիցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութեան թագաւորութեան նորա»[1]: Թագավորների ու իշխանների վարած ցոփ կյանքը՝ զինավարժությունը, որսորդությունը և խնջույքներն իրենց արտահայտությունն են դտել միջնադարյան կիրառական արվեստում: Պատվերով պատրաստված ոսկե և արծաթե իրերի վրա քանդակվել են ո՛չ միայն բյուզանդական, պարսկական, այլ նաև Հայաստանի թագավորների ու իշխանների կենցաղն արտահայտող պատկերներ:

Վաղ միջնադարում մանրանկարչության մեջ ու քարերի վրա եղած քանդակներում շատ ենք հանդիպում որսի, այգեկութի և խնջույքի տեսարանների. այսպես, օրինակ, Աղցի քանդակը արտահայտում է որսի տեսարան. հայտնի է նաև Պաղնի եկեղեցու հարավային մուտքի վրա եղած քանդակը, որ պատկերում է հեծյալ որսորդին՝ առյուծին հարվածելիս: Ավելի ուշ ժամանակից մեզ հայտնի է Ամիր-Հասանի բարձրաքանդակ որսի տեսարանը, այնուհետև՝ Դվինի այգեկութը, Ավագի մահարձանի վրա եղած քանդակը և այլն: Այդպիսի կենցաղային թեմաներ շատ կան քանդակագործության մեջ, սակայն մինչև օրս Հայաստանի տերիտորիայում չի գտնվել միջնադարին վերաբերող արծաթե կամ ոսկե բաժակ, ափսե և այլ իրեր, որոնց վրա արտահայտված լինեն հայ թագավորների ու իշխանների որսորդական, կամ այլ զբաղմունք արտահայտող պատկերներ: Այդպիսի իրեր ունենք միայն արծաթից, որ վերաբերում են XVII—XVIII դարերին, և սա հիմք է տալիս մեզ ասելու, որ նույն օրնամենտները, հավանաբար, կիրառվել են նաև ոսկերչական արվեստում: Սովետական Միության տերիտորիայում պեղումների ժամանակ հայտնաբերվել են Սասանյան շրջանին պատկանող պարսկական ու բյուզանդական արվեստի բազմաթիվ արծաթե իրեր՝ բաժակներ ու ափսեներ, որոնք պատկերում են պարսից շահերի ու բյուզանդական կայսրների զբաղմունքները, որսի տարբեր տեսարաններ, որսարաններում պահվող կենդանիների ու թռչունների պատկերներով: Այդ ափսեների լավագույն նմուշները, որոնք այժմ կենտրոնացած են Լենինգրադի Էրմիտաժի Արևելյան բաժնում, ցույց են տալիս թագավորների ու ընդհանրապես ազնվական դասի կենցաղն ու զբաղմունքը: Օրինակ, Շապուհ Բ-ի որսի տեսարանը, Խոսրով թագավորի զինավարժությունը և այլն: Բայց ավելի հետաքրքիր է Շապուհ Գ-ի որսի պատկերը, քանդակված ափսեի վրա, դրվագման տեխնիկայով: Շապուհ Գ-ի այս քանդակին հար և նման է, միայն ավելի կոպիտ ձևով պատրաստված, քարի վրայի քանդակը, որը գտնվել է Զվարթնոցի ավերակների պատի մեջ: Այս բարելյեֆը պատրաստվել է Հայաստանում, անշուշտ, հայ վարպետի ձեռքով, և այդ բեկորը օգտագործվել է Զվարթնոցի կառուցման ժամանակ, թեև ո՛չ մի կապ չունի շենքի ընդհանուր կառուցողական արվեստի հետ: Բարելյեֆի վրա զգեստի առաջին մասը շրջանաձև է ու երկար, նման արծաթե ափսեի վրա դրվագած սասանյան արքա Շապուհ Գ-ի տարազին, որը շատ տարածված ու գործածական է եղել Հայաստանում IV—VI դարերում: Այդ բացատրվում է հարևան երկու երկրների կուլտուրաների ու արվեստի մոտիկությամբ և փոխազդեցությամբ: Զվարթնոցում հայտնաբերված բարելյեֆը պատահական չէ. նույն տարազն արտահայ-

[1] Տե՛ս Փ. Բյուզանդ, Վենետիկ, 1832, էջ 18:

տող մի այլ բարելլեֆ դրված է նաև Արթիկի շրջանում [1] (նկ. 32)։

Այս փաստերը միաժամանակ ապացուցում են, որ Հայաստանի ոսկերիչները, քանդակագործները, նկարիչները դեռևս վաղ ֆեոդալիզմի շրջանում, սասանյան տիրապետության ժամանակ, որոշ չափով կրել են պարսկական արվեստի ազդեցությունը, մյուս կողմից, ինչպես այդ երևում է հայ Արշակունիների Աղցի դամբարանների քանդակների օրինակներից, հայկական արվեստն էլ իր ազդեցությունն է թողել պարսկական արվեստի վրա [2]։ Միջնադարյան Հայաստանում թագավորների ու առհասարակ ֆեոդալական դասի անմիջական գործածության համար ոսկե արդուզարդը պատրաստում էին ֆեոդալական դղյակներին կից ու քաղաքներում կենտրոնացած արհեստավորները, իսկ եկեղեցական սպասները, ձեռագրերի ոսկե և արծաթե կազմերը պատրաստվում էին և՛ քաղաքի արհեստավորների ձեռքով, և՛ վանքերին կից գոյություն ունեցող գործատներում ու արհեստանոցներում։ Այդ մասին մեզ տեղեկություն են տալիս հայ պատմիչները։

Որքան զարդանում և առաջ է գնում քաղաքային կյանքը Հայաստանում, այնքան բազմակողմանի է դառնում արհեստավորի աշխատանքը։ Ներքին շուկայի լայնացման գործում արդեն խոշոր դեր է կատարում արհեստավորական արտադրանքը, մանավանդ X—XIII և ավելի ուշ դարերում։

Հայ պատմիչների աշխատություններում և վիմական արձանագրություններում կան բազմաթիվ հիշատակություններ ոսկե և արծաթե զարդերի մասին, լցոլված թագավորների, իշխանների, պալատականների նիստու կացի հետ։ Հատկապես ֆեոդալիզմի վերելքի ու ծաղկման շրջանում պալատականները, իշխանները, վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները վարում էին շռայլ կյանք, և հայ ոսկերիչները նրանց համար պատրաստում էին ազնիվ մետաղներից զարդեր, իրեր ու զենքեր։ Ա. Լաստիվերտցին իր Պատմության մեջ պերճանքի արտադրանքը «ամբարտավանություն» է անվանում՝ «կարի առատ կանանց ազդի», որոնք կրում էին բանկապին դինդեր, մատանիներ, ապարանջաններ ու դոտիներ։ Նույն պատմիչը Արծն քաղաքի կործանումը նկարագրելիս ցույց է տալիս, թե ինչպես սկզբուկ զորքը

Նկ. 32. Արջառոս, բարձրաքանդակ գտնված Զվարթնոցի ավերակներում, V դար.

դաժանությամբ ու անխնա թալանում, խլում էր հայ կանանց թանկարժեք զարդերը։

Անհրաժեշտ ենք համարում այստեղ նշել, որ Հայաստանի ազնվական դասի ունեցվածքը հաճախ ավարի ու թալանի է մատնվել օտարների կողմից։ Մենք այստեղ կբավարարվենք բերել XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու այն հատվածը, որտեղ նա

[1] Գտնվում է Երևանի Պետ. պատմական թանգարանում։

[2] Այս մասին մանրամասն գրել է պատմական գիտությունների թեկնածու Բ. Ասաքելյանն իր «Հայկական պատկերաքանդակներ IV—VII դարերում» աշխատության մեջ, Երևան, 1949։

խոսում է մոնղոլների կատարած թալանի և հափշտակումների մասին. «Ապա յամենայն դաւառաց շրջեցան ի վերայ նորա առ ի բրել և յորոնել զինչսն և զանօթն, և զտանէին բազում ինչս ի նմա ոսկւոյ և արծաթոյ, պղնձոյ և երկաթոյ..., որ թագուցեալ էին ի դարանս և ի գետնափորս»[1]:

X—XIII դարերում հայ առևտրական դասի ներկայացուցիչներն ևս անմասն չէին կարող մնալ այդ թանկարժեք մետաղներից պատրաստվող զարդարանքներից ու իրերից: Նրանցից ամենահարուստները կաշխատեին մրցել ֆեոդալների հետ: Հետևաբար, Հայաստանի ոսկերիչները պետք է բավարարեին նաև քաղաքային նոր դասի պահանջները: Այդ պերճանքի առարկաներից բաժին էր ընկնում և հոգևորական դասին ու եկեղեցուն, որոնց համար քաղաքի ու վանքերին կից ոսկերիչ արհեստավորները պատրաստում էին բոլոր տեսակի եկեղեցական սպասները, չհաշված խալիֆայության և Բյուզանդական կայսրության ուղարկվելիք թանկարժեք նվերները:

X դարի պատմիչ Թովմա Արծրունին իր պատմության մեջ ոսկերչության մասին հետևյալն է գրում. «Ել հրամայեաց ածել ոսկերիչ և նորոգեալ նորացոյց զանյաղթ փայտ խաչին Քրիստոսի»[2]:

Այս քաղվածքը ցույց է տալիս, որ փայտյա խաչի վրա կիրառել են ոսկեզօծելու տեխնիկան: Նույն դիմում պատմիչը հիշում է «արուեստագործեալ ճարտարապետի ոմանց հիւսնեալ, և արծաթագործ եօթնփորձեան հրաբորբոք ճարտարապետն ի բովս հալոցացն զուտ և վճիտ արծաթ ընտրելով, արծաթեղինաւն զփայտեղէնն պատեալ արտաքուստ»[3], ուր պատմիչը նշում է արվեստագետի ճարտարությունը՝ արծաթապատման գործում, որ բավականին տարածված էր միջնադարյան Հայաստանում: Ոսկերչության և արծաթագործության մասին հիշում է Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքում» և «Առակներում»: Միջնադարում ոսկերիչ արհեստավորները նույնիսկ հին անոթները, որ այլևս գործածելի չէին, ձուլում էին և պատրաստում նորը, այդ մասին կարդում ենք. «Ամենայն ոսկեգործ մանրէ զհին անօթ, ապա ձուլէ հալացօք, կաւագործք և ոսկէգործք զբեկեալ անօթ վերստին ստեղծանին»: Մի ուրիշ տեղում. «Հրոյ զաւրութիւն, և զանպիտան աղան խառնեալ ընդ ոսկւոյն... սրբել և յառաջին պայծառութիւն ածել ի ձեռն արուեստի ոսկեգործաց»[1]:

Ինչպես գիտենք, Հայաստանի տնտեսական կյանքը խախտվեց սելջուկների տիրապետության ժամանակ, սակայն հետագայում Վրաստանի ուժեղացման ու տիրապետության ժամանակ, XII—XIII դարերի Հայաստանի համար ստեղծվում է անհամեմատ կայուն վիճակ: Արտաքին ու ներքին խաղաղ պայմանների շնորհիվ Հայաստանում մի շարք քաղաքներ սկսում են վերակենդանանալ: Այդ դարերում, ինչպես փաստերն են հաստատում, Հայաստանն առևտրական հարաբերություններով կապված էր, մի կողմից, Պարսկաստանի, Միջին Ասիայի, իսկ մյուս կողմից՝ Սև ծովի վրայով եվրոպական պետությունների հետ: Տարանցիկ առևտրի աշխուժացումը նպաստում է Հայաստանի կենտրոնական քաղաքներում կատարվող առևտրի և արհեստների զարգացմանը: Արհեստավորական արտադրանքի մեջ նաև Հայաստանի ոսկերիչների արտադրանքը բավարարում էր ո՛չ միայն պատվերների, այլև արտաքին շուկայի մասսայական պահանջը, իսկ ներքին շուկայի լայնացման գործում, ինչպես ասել ենք, արհեստավորական արտադրանքը խոշոր բաժին ուներ: X—XIII դարերում ինչպես բոլոր արհեստների, այնպես էլ ոսկերչության մեջ աշխատանքի բաժանումը ավելի է խորանում և նպաստում

1 Կ. Գանձակեցի, էջ 223:
2 Թովմա Արծրունի, էջ 393:
3 Նույն տեղում, էջ 392:

1 Նոր Հայկազյան բառարան, Վենետիկ, 1836, էջ 573:

այդ արվեստի առանձին ճյուղերի զարգացմանը: Միջնադարյան ոսկերիչները, ելնելով շուկայի պահանջներից, իրենց աշխատանքի պրոցեսում կիրառել են պատրաստման այնպիսի տեխնիկա, որը հնարավոր էր դարձնում արտադրել շատ և արագ. այդ էր պատճառը, որ ավելի տարածված էին շամպոտ ու ձուլման տեխնիկայով պատրաստված իրերը, որոնք հիմնականում բավարարում էին շուկայի պահանջները:

Հայաստանը հարուստ է եղել ոսկերչական բազմաթիվ օջախներով, ուր ոսկերիչ արհեստավորները մասնագիտացել են անդամ հատուկ ճյուղերում: Հայաստանի գլխավոր քաղաքներում՝ Անիում, Դվինում, Կարսում, Արծնում, Վանում, Խլաթում և այլուր՝ գոյություն են ունեցել խոշոր արհեստանոցներ, որտեղ ոսկերիչ վարպետը ունեցել է նաև իր քարգահն ու աշակերտը:

1907 թվականին Անիի և 1937—1950 թթ. Դվինում կատարված պեղումների ժամանակ գտնվել են արհեստանոցների մնացորդներ և նույնիսկ ոսկերչական հալոցք, որոնք ապացուցում են մեծ արհեստանոցների գոյության փաստը:

Միջնադարյան Հայաստանի քաղաքներից ոսկերչությանը վերաբերող նյութական մնացորդներ տվել է մեզ Դվինը: Դվինի պեղումներից հայտնաբերված ոսկե զարդարանքները հաստատում են, որ, ինչպես Հայաստանի քաղաքներից Վանը, Անին, այնպես էլ Դվինը հանդիսացել է Հայաստանի ոսկերչական արվեստի օջախներից մեկը: Դվինի ոսկերիչները լավագույն վարպետներն են եղել ոսկե և արծաթե թելի ու հատիկավոր գործի:

Դվինը, որպես քաղաք, հանդես է եկել դեռևս V դարում: Ինչպես Արտաշեսյան դինաստիայի ու Արշակունիների սկզբնական շրջանում Արտաշատ քաղաքը, այնպես էլ հետագայում՝ մարզպանական շրջանում ու Բագրատունիների ժամանակ Դվինը եղել է առևտրական, վարչական և կուլտուրական կենտրոններից մեկը. նրա վրայով է անցել տարանցիկ առևտրական գիծը և արևելքից արևմուտք է տեղափոխվել չինական մետաքսը և ուրիշ թանկարժեք իրեր: Ըստ Պրոկոպիոս պատմագրի՝ Դվին էին գալիս առևտրականները[1] Չինաստանից, Հնդկաստանից, Հռոմից և այլ երկրներից: IX դարից սկսած Դվինը ո՛չ միայն մասնակից է դառնում տարանցիկ առևտրին, այլև իր համար ստեղծում է ներքին շուկա, որ առիթ է տվել հայ պատմիչներին Դվինը անվանել «շահաստան», «մայրաքաղաք», «մեծ քաղաք»: Դվինում պատրաստված նուրբ գործվածքների ու ոսկե զարդերի մասին տեղեկանում ենք ո՛չ միայն հայ, այլ նաև արաբ պատմիչներից: Այդ պատմիչների հիշատակած նուրբ ոսկե և թանկարժեք քարերով զարդարված կանացի զարդերից լավագույն նմուշները պահպանվում են Պետական պատմական թանգարանում, որոնք ձեռք են բերվել սովետական կարգերի հաստատումից հետո կատարված սիստեմատիկ պեղումների և պատահական բանդումների ժամանակ:

1939 թվականի պեղումների ընթացքում Դվինի միջնաբերդից գտնվեց ոսկե մի մանյակ, որի քաշն է 46 գրամ. այդ ոսկե վրոնոցը ներկայացնում է իրենից մի շղթայանման հյուսվածք, որից ավելի փոքր շղթաներով կախված են 100 հատ փոքրիկ գնդիկներ (նկ. 33): Ոսկերչական նուրբ աշխատանք են նաև №№ 1372 և 1377 ապարանջանները, որոնք գտնվել են Դվինի տերիտորիայում պատահական բանդումների ժամանակ՝ 1936 թվականին: Այս ապարանջանները արտաքուստ չունեն որևէ զարդանախշ, իսկ ներսի կողմից սնամեջ են. այդ աշխատանքը կատարելու համար ոսկերիչ վարպետը ունեցել է հատուկ գործիքներ, որոնց միջոցով պատրաստել է կիսագլանաձև խողովակներ, որոնք իրար միացված են հատուկ նյութով: Ավելի հետաքրքիր աշխատանք են №№ 1375, 1283 ապարանջանները, որոնք գտնվել են Արտաշատի շրջանի Այգեստան գյուղում (հնում մտել է հին Դվին քաղաքի տերիտո-

[1] А. Я. Манандян, О торговле и городах Армении, стр. 81.



Նկ. 33. Ոսկե մանյակ, Դվինի պեղումներից, IX—XI դդ. Պետական պատմական թանգարան գծ. Լ. Սադոյանի

րիայի մեջ), հողային աշխատանքի ժամանակ։ Չնայած այս ապարանջանները պատրաստված են նույն տեխնիկայով, ինչպես վերոհիշյալ № 1372 ապարանջանը, սակայն դրանք արտաքուստ օձապտույտ դալարուն են, ներսից խոր ընկած, և այդ օձապտույտ հյուսվածքի վրայով անցնում է մի բարակ ոսկե շղթա՝ ամբողջովին չիֆթիչի գործ. ապարանջանի ծայրերը վերջանում են օձի գլխով, ծածկված վերադիր ոսկի հատիկներով, որոնք կազմում են եռանկյուններ։ Ապարանջանի վրա եղած հատիկները իրենց նրբությամբ ու պատրաստման ամբողջ տեխնիկայով նման են Կարմիր բլուրի ականջօղերի վրա եղած վերադիր հատիկներին (նկ. 34)։

1942 թվականին, դարձյալ պատահական պեղումների ժամանակ, Դվինի շրջակայքում գտնվեց մի ուրիշ ոսկե ապարանջան, որն իր պատրաստման տեխնիկայով և ար-

վեստով տարբերվում է նախորդներից։ Ամբողջ ապարանջանը հյուսված էր. ոսկերիչի կողմից կիրառված էր միմիայն թելի «չիֆ-

Նկ. 34. Ոսկե ապարանջան, Դվինի պեղումներից, IX—XI դդ. Պետական պատմական Թանգարան գծ. Լ. Մադոյանի

Թիշի» գործը, որը ապարանջանին տալիս է յուրահատուկ դեղեցկություն. ապարանջանի փակիչի կլոր շուրթերը զարդարված են վերադիր հատիկներով, իսկ փակիչի երկու կողմերից հյուսվածքի վրայով անցնում է բուրգաձև վերադիր հատիկների զարդանախշ. այդ հատիկների վրա երկու կողմից նկատվում է մետաղական խորացրած եռանկյունաձև բացվածք, որոնք հավանաբար զարդարված են եղել թանկարժեք քարերով։ Այս ապարանջանի գոյությունը կրկին անգամ հաստատում է, որ թելի-հատիկավոր գործը միջնադարյան Հայաստանում ոսկերչության մեջ կարևոր տեղ է գրավել։ Ինչպես հայտնի է, այս տեխնիկան ոսկերիչ վարպետները օգտագործել են Հայկական բարձրավանդակում դեռևս նախաուրարտական շրջանում. այս փաստը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ թե՛ խալդական շրջանում և թե՛ նրանից առաջ ոսկերչության մեջ հատիկավոր աշխատանքը տարածված է եղել և չպետք է այն կապել դրսի հետ։ Հայաստանում կատարված պեղումներից հայտնաբերվել են ոսկերչական լավագույն նմուշներ հնագույն շրջանից մինչև XIX դարը, որոնք ապացուցում են թե՛ շնչին փոփոխություններով, ոսկերիչ վարպետները նույն տեխնիկան կիրառել են դարեր շարունակ (նկ. 35)։



Նկ. 35. Ոսկե ապարանջան, Դվինի պեղումներից, IX—XI դդ. Պետական պատմական Թանգարան, գծ. Լ. Մադոյանի

1936 թ. Արտաշատի շրջանի Այգեստան գյուղի շրջակայքում, հողային աշխատանքի ժամանակ գտնվել են 7 հատ ականջի օղեր. յուրաքանչյուր օղը ներկայացնում է իրենից շրջանաձև լար, որի վրա հագցրած են 5-ական անամեջ գնդիկներ: Գնդիկների յուրաքանչյուր կողմում անցնում է հյուսվածքաձև թելիկ, իսկ կենտրոնի գնդիկն արտաքուստ ծածկված է չիֆթիչի նախշերով. այդ ականջօղերը պատրաստված են այնքան նուրբ, որ յուրաքանչյուր ականջօղի քաշը հավասար է մեկ դրամի: 1938 թ. Արտաշատ գյուղի մոտ, դարձյալ դաշտային աշխատանքի ժամանակ, գտնվել է ականջի նույնանման օղ՝ 5 գնդիկներով, իսկ 1937 թ. Այգեստան գյուղի տերիտորիայում գտնվեց մեկ հատ նույն արվեստով պատրաստված ոսկե ականջօղ, միայն այն տարբերությամբ, որ այս օղն ուներ միայն մի գնդիկ՝ զարդարված ամբողջապես չիֆթիչի աշխատանքով: Նույն թվականներին Արտաշատ գյուղի շրջակայքում, դարձյալ պատահական ձևով, հողային աշխատանքի ժամանակ հայտնաբերվեց մի գանձ. այդ գանձի հետ էր նաև մեկ ոսկե ականջօղ, որն իր ձևով և պատրաստման տեխնիկայով տարբերվում էր նախորդներից: Այդ կիսալուսնաձև հարթ, ոսկե պլաստինկան իր վրա չունի ո՛չ մի զարդանախշ, միայն կենտրոնում կա մի վերադիր բացվածք, որի մեջ հագցված է փիրուզյա ակը: Կիսալուսնաձև պլաստինկայի կենտրոնական մասում, վերևի կողմից ամրացված է մեկ հատ մարգարտյա մեծ հուլունք, իսկ թերթիկի դրսի երկու կողմերում և կենտրոնական մասում կան օղանման հավելվածքներ: Այս ականջօղի քաշը 10,2 դրամ է: Հետաքրքիր աշխատանք է № 1285 ականջի օղը, որը գտնվել է 1936 թ. Այգեստան գյուղի շրջակայքում: Վերոհիշյալների համեմատությամբ՝ սրա պատրաստման համար պահանջվում էր ավելի բարդ աշխատանք: Այս ականջօղն իր արվեստով ու ձևով մյուսներից տարբերվում է նրանով, որ սա ավելի երկարավուն էր և ունի կախիչներ: Ականջօղի կենտրոնական մասը կիսաշրջանաձև է, զարդարված հյուսվածքաձև նախշերով, ունի չորս կախիչ, որոնցից երկուսը իջնում են ականջօղի կենտրոնական մասով և վերջանում նոթաձև զարդերով, իսկ երկու կողքերի կախիչները ավելի երկարավուն են և ծայրերն էլ վերջանում են սրվականման զարդերով (նկ. 36):

Վերև բված ականջօղերը, որոնք ձեռք են բերվել պեղումների և պատահական գտումների ժամանակ, ապացուցում են, որ, իրոք, միջնադարյան Հայաստանի ոսկերչության մեջ զարգացած էր չիֆթիչի տեխնիկան: Միաժամանակ երևում է, որ Հայաստանի ոսկերիչները քաջ վարպետ էին «դուսի» ձևով (անամեջ) զարդեր պատրաստելու գործում, նրանք գիտեին նաև ոսկե օղերն ու ապարանջանները զարդարել թանկարժեք քարերով:

1949 թ. Դվինի պեղումների ժամանակ, միջնաբերդի № 8 հորից, ապակյա և հախճապակյա անոթների հետ միասին, երեք մետր խորությունից գտնվեց մի ոսկե մատանի, որն իր արվեստով ու գեղեցկությամբ սքանչելի մի գործ է: Ոսկե այդ մատանու օղը պատրաստված է նույն արվեստով, ինչպիսին էին Դվինից գտնված ապարանջանները, օղերը և մատանիները: Այս մատանու ամբողջ օղը անամեջ է և պատրաստված է շատ նուրբ, ունի փիրուզյա մեծ ակ: Ակի երկու կողմերում փորագրված են ձկան թեփուկների նման քանդակներ, ամբողջովին սևադի տեխնիկայով պատրաստված: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մինչև օրս պեղումների ու պատահական փորումների միջոցով հայտնաբերված ոսկե զարդարանքների մեջ սևադի աշխատանքով միակ նմուշը հանդիսանում է այս մատանին:

1946 թ. Դվինի պեղումների ժամանակ, դարձյալ միջնաբերդում, գտնվեց մի փոքրիկ մատանի, որն ուներ ակի տեղ, սակայն ակն ամբողջովին ոչնչացված էր, իսկ մատանու երկու կողքերին փորագրված էին երկու սրտաձև քանդակներ:



Նկ. 36. Ոսկե ականջօղեր, Դվինի պեղումներից, IX—XI դդ.
Պետական պատմական բանգարան դց. Լ. Սադոյանի

Ոսկերչական նուրբ աշխատանք է Դվինի ավերակներից գտնված ոսկե փոքրիկ խաչը, որի վրայի հյուսվածքաձև զարդանախշը ապացուցում է, որ այդ խաչը պատրաստված է VIII դարում։ Դվինից է գտնվել նաև մի արծաթե գոտի, որը կազմված է 12 էլիպսաձև արծաթե տախտակներից, իսկ կենտրոնում ունի շրջանաձև ճարմանդ։

Դվինի ոսկերչական օջախ լինելը հաստատվում է ո՛չ միայն վերոհիշյալ նյութական մնացորդներով, այլ նաև նրանով, որ պեղումների ժամանակ գտնվել են ոսկի հալելու անոթներ (տիգել), որոնք իրենց ձևով դրեթե չեն տարբերվում XIX—XX դարի հալոցներից։ Գտնվել են նաև չորս հատ փոքրիկ պղնձյա գդալներ, որոնք, ըստ երևույթին, օգտագործվել են ոսկերչական աշխատանքում։ 1950 թ., Միջնաբերդի № 12 քառակուսում եղած հորերից մեկում, պեղումների ժամանակ, կրծքի ոսկե զարդարանքի հետ միասին, հայտնաբերվեցին 100-ից ավելի՝ սև, մոխրագույն և սպիտակ գույնի, տարբեր ձևերի ու մեծության, անգամ ոսկրեր ձևերի ու մեծության, անգամ ոսկրեր պաշափ քարեր։ Մեր ուսումնասիրությունը պարզում է տալիս, որ այդ քարերը, հավանաբար, ծառայել են ոսկերիչների համար, որպես հում նյութ՝ ակների փոխարեն օգտագործելու, հատկապես այն մատանիների համար, որոնք պետք է ծառայեին որպես կնիք։

Այս բոլորից մենք հանգում ենք այն եզրակացության, որ Դվինում, ինչպես հյուսվածքագործությունը, դարբնությունը, կավագործությունը, ջինագործությունը և այլ արհեստները, այնպես էլ ոսկերչությունը բավական զարգացած են եղել, և արհեստավորները բավարարել են թե՛ իշխող դասին՝ ազնվականությանը և հոգևորականությանը, և թե՛ քաղաքի ու գյուղի բնակչությանը։

Բ. ՈՍԿԵ ԵՎ ԱՐԾԱԹԵ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՊԱՍՆԵՐ

Եթե երկրագործ շինականը իր գյուղատնտեսական աշխատանքին զուգահեռ զբաղվում էր նաև արհեստներով, իր անմիջական կարիքները բավարարելու համար, եթե ամրոցներին կից և քաղաքներում կենտրոնացած արհեստավորները բավարարում էին ֆեոդալների, իշխանների ու հոգևորականության պահանջը և աշխատում էին նրանց պատվերի համաձայն, ապա կար նաև արհեստավորների որոշ խավ, որը կապված էր վանքային հաստատություններին կից «գործատների» հետ և արտադրում էր նույնպես պատվերով, ու լրացուցիչ ձևով բավարարում վանքերի ու հոգևորականության բավականաչափ բարդ պահանջները։ Այդ գործատների մասին ունենք հիշատակություն XIII դարի պատմագիր Ս. Օրբելյանի մոտ, ուր նա խոսում է Տաթևի վանքի կառուցման մասին. «Շինէ և գաղտանոցս գետնափորս ի ներքոյ վանիցն ծածուկ երկրաւ՝ բազում տունս ու դարանս ի պէտս եկեղեցւոյն. և հարթեալ հաւասարեալ զվայրըն՝ շինէ և սրբաշէն տրապէզս և գործատներս, համբարանոցս և սրբատունս և դրատունս. և ի դրան եկեղեցւոյն տուն աղօթից և տեղի դամբանի իշխանաց և եպիսկոպոսաց Սիւնեաց»։

Ապա շարունակում է. «Վի էր և ծուլամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն. նաև արհեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք»[1]։

Նույն Ս. Օրբելյանը, խոսելով Տաթևի Հովհաննես եպիսկոպոսի շինարարական գործունեության մասին, գրում է. «Զարդարեաց զեպիսկոպոսարանն՝ զմեծ նախագահ տունն Սիւնեաց... և ելից բազմութեամբ կրօնաւորօք, անյաղթ փիլիսոփայիւք և անման երաֆշտօք..., նաև յոգնապատիկ արհեստաւորօք»։

Նաև. «Այլ զամենայն շինուած վանացն այրեցին և քակեալ յատակեցին զգործատներն և զտրապէզն մարմնաւոր սեղանոյն և զամենայն յարկս կրօնաւորացն և այլ

[1] Ս. Օրբելեան, Պատմութիւն նահանգի Սիսական. Թիֆլիս, 1911, էջ 225—226։

բնակչացն»[1]: Նույն հեղինակը մի այլ տեղ, երբ պատմում է Յուրաբերդի բնակչության ապստամբության մասին, գրում է. «Եւ յաւուր միում եկեալ ի դիշերի յեղակարծ ժամու՝ սկսան կողոպտել զեկեղեցին և զգործատներն և զյարկսն կրօնաւորաց»[2]:

Վերոհիշյալ փաստերը թույլ են տալիս ասելու, որ հիշված գործատները եղել են առանձին հաստատություններ, որտեղ աշխատել են տարբեր մասնագիտության արհեստավորներ:

Ոսկերչական արհեստը, ինչպես մի շարք այլ արհեստներ, սերտ կապ ունի եկեղեցական կյանքի հետ: Կիրառական արվեստների մեջ ոսկերչությունն ամենակարևոր տեղն է գրավում իր քանդակած ու ձուլածո ձեռագործներով, որը ամենասերտ կերպով կապված է պատկերապրության, մանրանկարչության, հատկապես քանդակագործության հետ. այդ է պատճառը, որ երկու դեպքումն էլ կրկնվում են նույն ոճն ու նույն մոտիվները:

Ոսկերչության ստեղծած լավագույն նմուշները մենք գտնում ենք ո՛չ միայն աշխարհիկ ոսկերչության մեջ, այլ նաև հոգևոր կենտրոններում: Եկեղեցիներում պահպանված են ձեռագրերի ոսկե և արծաթե կազմերը, ոսկեհուռ սաղավարտները, վահանները, սկիհները, խաչերը, մասնատուփերը, մեռոնի կաթսաները, թասերը, բուրվառները, քշոցները, աշտանակները և այլն: Եկեղեցական սպասների մասին արժեքավոր տեղեկություն է պահպանված X դարի պատմիչ Ուխտանեսի մոտ. վերջինս, երբ խոսում է Վրթանես տեղապահի մասին, հիշում է. «Բերեալ զսվանդն, որ ինչ նմայն էր հատատացեալ ի Մովսիսէ Հայոց Կաթուղիկոսէ և ժամ մահուան իւրոյ, նախ զսրբիկական և զկենսակիր աստուածոյ նշանն, և ապա զնըշխարս սուրբ առաքելոցն, զոր բերեալ էր սրբոյ Գրիգորի և Հռոմայ՝ պտուեալն նմա ի բարեպաշտէն Կոստանդիանոսէ. և յետ այնորիկ զԱթոռն և զգաւազանն, որ պատուով պահեալ էր և պաշտեալ, և զայլ ամենայն զսպաս սրբութեան՝ զսկիհս և զգեստս սրբոյն սեղանոյն, և զվարագոյրս, և զխնկանոցս, և զբուրվառն, և զքշոցս, և զվակաս Կաթուղիկոսին մեռաքսեայ կազմեալ յականց՝ և՛ յոսկւոյ, և՛ ի մարգարտէ»[1]:

Վանքերում էին գրվում, արտագրվում, թարգմանվում բազմապիսի բովանդակություն ունեցող գրքերը: Աստիճանաբար զարգանում էր գրչության արվեստը: Ձեռագրերի համար անհրաժեշտ մագաղաթը և կազմը պահանջում էին կաշեգործության և կազմարարության զարգացում, և, վերջապես, ավետարանների ու այլ գրքերի ոսկեպատման, արծաթապատման ու եկեղեցական մյուս սպասների պատրաստման համար պահանջվում էին որակյալ ոսկերիչ արհեստավորներ:

Ինչպես գիտենք, գրչության արվեստի մեջ կարևոր դերը պատկանում էր ձեռագրերի կազմերին ու նրանց զարդարանքներին: Կազմերի պատրաստումը կապված է գլխավորապես մագաղաթի գործածության հետ: Մենք ունենք բազմաթիվ հիշատակություններ, որտեղ նշվում է, թե ինչպես ավետարաններ գրելու համար աշխատել են մի քանի ամիս, նույնիսկ մեկ տարի, իսկ այդ երկարատև աշխատանքը ինքնըստինքյան բարձրացնում է ձեռագրի արժեքը և այն դառնում էր ոչ բոլորի համար մատչելի:

Ձեռագրերի պատրաստման գործն ավելի էր դժվարանում, երբ այն արդեն դառնում էր արվեստի ու շքեղության առարկա: Բազմաթիվ փաստեր ունենք այն մասին, որ վանականները, իշխանները, անգամ վաճառականները իրենց կողմից պատվիրած մատյանները զարդարել էին տալիս մանրանկարներով, որ շատ թանկ էր նստում, և շատ հաճախ դժվարանում էին ծախսը վճարել: Վկայություն կա, որ մի ավետարանի համար ծախսել են 4000 դրամ[2]:

---

[1] Ս. Օրբելեան, էջ 312—313:

[2] Նույն տեղում, էջ 247:

[1] Ուխտանէս, II, էջ 66:

[2] Հայոց պատմ., էջ 545:

Ինչպես տեսնում ենք, այդպիսի ծանր պայմաններում և մեծ ծախսերով պատրաստված մի օրինակ ձեռագիրը պետք է ունենար լավ և ամուր կազմ, որպեսզի կարողանար երկար դիմանալ. դրա համար էլ կազմարարությունն իր արժանավոր տեղն ուներ և շատ հաճախ հիշատակարաններում գրիչների ու նկարիչների անվան կողքին հիշվում են նաև կազմարարների անունները. օրինակ, XIII դարի ձեռագրերից մեկում հիշվում է Առաքել Հնազանդը, որ կազմել է արքայական մատյանը. 1243 թվականին Հաղպատում, որպես կազմարար, հիշատակվում է «Պետրոս սպասատար սուրբ Նշանիս Հաղբատայ»[1] և այլն: Ձեռագրերի կազմի երեսները շատ հաճախ զարդարում էին զանազան օրնամենտներով և վրան գրում կազմողի անունն ու թվականը: Ձեռագրերը գեղարվեստական տեսակետից ավելի մեծ արժեք էին ներկայացնում, երբ նրանց կազմը լինում էր ազնիվ նյութից՝ փղոսկրից, ոսկուց, արծաթից, հաճախ ծածկված թանկարժեք քարերով:

Հայաստանի վրա տեղի ունեցած հաճախակի հարձակումները՝ արաբների, սելջուկների, մոնղոլների և այլոց կողմից՝ երկիրը քայքայել էին ո՛չ միայն անտեսապես, այլև մեծ չափով կորստի էին մատնել հայ արվեստի մշակույթի թանկարժեք մնացորդները, որից շատ քիչ բան է հասել մեր ձեռքը: Հայ պատմիչները իրենց աշխատություններում հիշատակել են այն մասին, որ հայ եկեղեցու սպասները արշավանքներից ու թալանից պահպանելու համար հաճախ տեղափոխել են ավելի ապահով տեղեր: Պատմությունից մեզ հայտնի է, որ VI դարի վերջին, Մորիկ կայսեր ժամանակ, Դվինի սուրբ Գրիգոր մայր եկեղեցու սպասները տարվել են Կարին, իսկ VII դարում արաբները հարձակվել են Բագավանի սուրբ Գրիգոր եկեղեցու վրա և թալանել սպասները[2]: Ստեփանոս Օրբելյանը պատմում է, որ Սյունյաց թագավորության անկման ժամանակ, Գանձակի էմիրի կողմից Կապանի բերդի գրավման օրերին, ոչնչացվել է 10 հազարի չափ ձեռագիր: Բացի այդ, հետագա դարերում ևս պատերազմների հետևանքով, հայ ժողովուրդը մեծ կորուստներ ունեցավ կուլտուրայի ու արվեստի ասպարեզում:

Ազնիվ մետաղներից ու թանկարժեք նյութերից պատրաստված կազմերի մասին հիշատակություններ կան դեռևս VII դարի սկզբից: Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտից» աշխատության մի հատվածը պահպանվել է X դարի № 102 ձեռագրում, ուր՝ խոսելով թանկարժեք նյութերից ավետարանի կազմը պատրաստելու մասին՝ նշված է. «Քանզի զտիպս աւետարանին տեսանեմք նկարեալս ոչ միայն յոսկիոյ և արծաթոյ, այլև յոսկերաց փղաց և կարմիր մորթով կազմեալ»[1]:

Սմբատ Գունդստաբլը պատմում է, թե Հովհաննես կաթողիկոսը Հռոմկլան ամրացնելու համար «քակեց զոսկի անկազմ տուփը աւետարանին Տէր Գրիգորիսի, որ էր ակամբ մարգարտով զարդարեալ»[2]: Վաչուտյան իշխանության հիմնադիր Սարգսի որդի Վաչեն Սանահնի վանքի մի անթվական արձանագրության համաձայն նվիրել է վանքին ոսկեհուռի ավետարան[3]:

1235 թ. Վաչեի որդի Քուրդ իշխանը և իր ամուսին Խորիշահ Մամիկոնյանը Սաղմոսավանքում գրատուն են շինել և նվիրել մի ոսկեհուռի ավետարան[4]: 1262 թվականին Գրիգոր Երեցը Բաղնայրի սուրբ Աստվածածնին նվիրել է «մի տաւնական մագաղաթ, մի աւետարան ոսկեհուռի՝ «իմ դանձով գնած»»[5]:

Կոստանդին Բ. Թագավորը 1345 թվա-

---

1 Մատենադարանի № 385 ձեռագիր:

2 Ղևոնդ երեց, էջ 20:

1 Մատենադարան, № 102 ձեռագիր:

2 Տես Սմբատ պատմիչ, 1850, էջ 104:

3 Գ. Հովսեփյան, Մի էջ հայ արվեստի պատմությունից, Հալեպ, 1930, էջ 18:

4 Ալիշան, Այրարատ, էջ 163:

5 Նույն տեղում, Շիրակ, էջ 119:

նին ստացել է մի ավետարան, «որ կազմեալ արծաթեղէն և ոսկեղէն, նկարակերպ գեղեցկութեամբ զարդարեալ»[1]։

Քաջբերունեաց երկրի արքունի դիվանապաշի Կարապետ ոմն 1314 թվականին գնալով Իտալիայի Պերուճիա քաղաքը, այնտեղ գրել է տվել մի ավետարան «ոսկի կողօք և նուիրել է աստուածածին երեքխորան եկեղեցուն»[2]։

1487 թվականին Կիրակոս երեց Բաղիշեցին նվիրաբերում է «ի դուռն ս. Յակոբին...որ է ի Կապուտգեղ», մի ավետարան «ոսկի խաչով և արծաթ հագներով և կոճակով և նխշուն տփով»[3], իսկ ավելի ուշ 1621 թվականին, Խոջա Սաֆարը ստանում է Գլաձորում Կյուրիոն գրչի ձեռքով գրված 1321 թ. ավետարանը զարդարում ոսկով և ակներով[4]։

Ձեռագրերի մեջ հիշատակված է ո՛չ միայն կազմողի, նկարողի, այլև ոսկերիչի անունը։ Անհրաժեշտ ենք համարում նշել մի քանի օրինակ։

Մատենադարանի № 1039 արծաթապատ և ոսկեջրած կազմով ավետարանի հիշատակարանում ասված է.

«Զտուտղ արծաթոյ զՄելքսէթ եպս. սբ. Կրպաի. յիշ»։

«Զկազմող պատկերացս զԿրպտ., արեղբայս զԲաղիշեցիս յիշ»։

«Զոսկերիչ Սքանդարն եւ զՇահղուբաթն»[5]։

XIII դարի կեսերից ունենք մի ձեռագիր արծաթե կազմով, որի հիշատակարանից երևում է, որ այն իր ծագումով Անիից է, նվիրված Հոռոմոսի վանքին։ Իր արվեստով և մանրանկարչությամբ նման է Արևելյան Հայաստանի ոճին։ Նրա արձանագրություննե-

---

[1] Գ. Հովսեփյան, նույն տեղում, էջ 18։

[2] Ալիշան, Միսուան, էջ 520։

[3] Ե. Լալայան, Ցուցակ հայերէն ձեռագրաց, Վաղարշապատի, էջ 116։

[4] Գ. Հովսեփյան, Մի էջ հայ արվեստի մշակույթի պատմությունից, էջ 19։

[5] Նույն տեղում, էջ 43։

ից տեղեկանում ենք, որ ոմն Ջաջուռ և յուր որդի Ամիր Սմբատ նվիրել են այս ավետարանը Հոռոմոսի ուխտին ՉՂՉ (1347) թ.։ Այս թվականը դրված է կազմի առաջին երեսին, Աստվածածնի նկարի վերևից, իսկ աթոռի ներքևի մասում դրված է կազմ պատրաստող՝ «զեղուցեալ ոսկերիչս Գրիգորի» անունը[1]։

Մատենադարանի № 5540 ձեռագիրը, որ գրված է Մոկսում, հիշում է Գեղարդի արծաթե պահարանի (շինել է տվել Պռոշ իշխանը 1687 թ. Դավիթ վարդապետի ձեռքով) արծաթե կազմը պատրաստող Հովհաննես ոսկերչին։ Թերթիկի վրա եղած արձանագրության մեջ հիշվում են Գրիգոր և Սարգիս ոսկերիչների անունները։ Նույն Դավիթ Պռոշյանը շինել է տալիս մի ուրիշ պահարան՝ պատրաստված Ռճխէ (1698) թվականին, որտեղ հիշվում է քանաքեռցի ոսկերիչ Ալեքսիսը։

Մատենադարանի № 1033 ձեռագրի արծաթե ոսկեջրած տուփի վրա աշխատել է ոսկերիչ Գրիգորը։ Իսկ № 274 ձեռագրի հիշատակարանում մի շարք արհեստավորների թվում հիշվում են Ալեքսանդր և Սադաղի ոսկերիչները, որոնք նվերներ են տվել Տարոնի սուրբ Կաթողիկեի կառուցման առթիվ, իսկ վանի մի ձեռագրի հիշատակարանում նվիրատուների անունների թվում հիշվում են նաև ոսկերիչ Թումին ու Ալեքսիքը, որոնք ս. Ջորավոր եկեղեցուն նվիրել են արծաթե փիլաքներով սաղավարտ։

Ոսկերչական կազմերի մեջ իր տեխնիկայով ու արվեստով ամենաարժեքավորը հանդիսանում է Երուսաղեմի Հակովբյանց մատենադարանի № 2649—94 «Ծովէն ելած» ավետարանի կազմը, որը արծաթից է, ոսկեջրած և գրչությանը ժամանակակից. այդ ձեռագրի գրիչը եղել է տաղանդավոր մանրանկարիչ Սարգիս քահանա Պիծակը։ Ավետարանը գրված է ՉՉԱ (1332) թ., կազմել են ՉՉԳ

---

[1] Գ. Հովսեփյան, Մի էջ հայ արվեստի մշակույթի պատմությունից, էջ 37։

(1334) թ. և նվիրել Սարգիս Զորավոր եկեղեցուն։ Ավետարանի կազմի առաջին երեսի վրա խաչելության պատկերն է, իսկ երկրորդ երեսին՝ Քրիստոսի ծնունդը։ Լավագույն կազմերից է Սրուսաղեմի № 2569/14 ավետարանի կազմը. ձեռագիրը գրված է 1577—1579 թթ. Խիզան քաղաքում, կազմը արծաթից է, իսկ դուրս ընկած մասերը՝ ոսկեջրած. ավետարանը զարդավաճ է Մարտիրոսի ձեռքով, առաջին երեսը ներկայացնում է խաչելությունը, իսկ երկրորդ երեսին՝ ամենակալը բազմած աթոռի վրա և չորս ավետարանիչները՝ կազմի անկյուններում։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ ելուզավոր մասերը պատրաստված են դրվագման տեխնիկայով, իսկ դաշտի ծաղիկներն ու տերևները իրենց ցողուններով փորագրված են. այս արվեստը տեղական է ու ժողովրդի ստեղծագործության արդյունք։ Արժեքավոր տեղեկություն է տալիս մեզ № 89 ավետարանի արծաթապատ կազմը[1]։ Ձեռագիրը բերված է Լիմից, գրված է ու ծաղկված 1622 թ. Սահակ Բաղիշեցի մանրանկարչի կողմից։ Կազմի վրա եղած արձանագրությունից տեղեկանում ենք ստացողի և ոսկերչի մասին. «Յիշատակ է սբ. աւետարանս Մարտիրոս վարդապետին, որ ետ դրին Գէորգայ սբ. անապատին թուին (1639) նորոգեցաւ ձեռամբ ուսթա Զիրաքին»։

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ ձեռագրերի հիշատակարանում ընդհանրապես հիշատակվում են ո՛չ միայն գրիչների, այլ նաև ոսկերիչ վարպետների անունները։

Ոսկերչական արվեստի հետաքրքիր նմուշներից են Կոստանդին կաթողիկոսի հրամանով կազմած ձեռագրերը, որոնք միաժամանակ կազմած Կիլիկյան շրջանի մանրանկարչության լավագույն օրինակներն են հանդիսանում։

Գեղարվեստական և հնագույն գործ է Ն. Նախիջևանի Լուսավորիչ եկեղեցու մի ավետարանի կազմը, որ պատրաստված է Թանկագին մետաղից. այս ավետարանի կազմը ձեռագրի հետ բերված է Ղրիմի Կաֆա (Թեոդոսիա) քաղաքից, գաղթի ժամանակ։ Հիշատակարանից երևում է, որ գրված է Կյուրակոս գրչի ձեռքով. «Յաշխարհամուտ աթոռս Հռոմկլը, ի թագաւորութեան հայոց, Հեթմոյ բարեպաշտի, և որդւոց նորայ... Լեւոնի և Թորոսի և սրբահոգի թագուհոյ իւրոյ Զապէլի ՈՂԸ (1249). հրամանաւ և ծախիւք սուրբ և երջանիկ կաթողիկոսիս հայոց տն. Կոստանդեա»[1]։ Այս ձեռագրի կազմն արծաթից է և ոսկեջրած. մի երեսին խմբանկար խնդրվածքի պատկերն է, իսկ մյուս երեսին՝ չորս ավետարանիչների նկարները։

Հետաքրքիր աշխատանք է Թավշյա կազմի վրա արծաթով պատած և ոսկեջրած Սրուսաղեմի № 2556/1 ավետարանը, որի ստացողն էր Գագիկ Շահնշահը[2]։

Մինչև այժմ մեր ձեռքը հասած ձեռագրերի պահպանակների կազմերն ու տուփերը պատրաստված են եղել արծաթից և ոսկեջրած, իսկ դրանց գրեթե մեծ մասը պատկանել են ուշ շրջանին։ Վերջերս Թավրիզից Էջմիածնի վանքին նվեր են ուղարկել մի ձեռագիր[3] ավետարան՝ ոսկե կազմով. այդ ավետարանը պատկանում է XIV դարին։ Ավետարանի կազմը, որ ամբողջապես մաքուր ոսկուց է պատրաստված, իրենից ներկայացնում է գեղարվեստական բարձր արժեք։ Կազմի առաջին երեսի հարթ ոսկե թերթիկի վրա պատկերված է Հիսուսի խաչելությունը, իսկ երկրորդ երեսին՝ փորագրված են Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու դիմանկարները՝ ամբողջ հասակով կանգնած։

---

[1] Գ. Հովսեփյան, Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930, էջ 49։

[1] Գ. Հովսեփյան, Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, էջ 23։

[2] Գ. Հովսեփյան, Գրչության արվեստը, էջ 28։

[3] Այս ձեռագիրը Տաթևից կողոպտվել և տարվել է Պարսկաստան, իսկ 1948 թվին Թավրիզից Թանգյանների կողմից ուղարկվել է Էջմիածին։

Ոսկե այս կազմը ապացուցում է, որ, իրոք, միջնադարում ձեռագրերի կազմի վրա մեծ ուշադրություն են դարձրել, որպեսզի թե՛ արտաքինը լավ լինի և թե՛ ձեռագիրը երկար ժամանակ պահպանվի փչացումից։

Անհրաժեշտ է այստեղ հիշել նաև այն կարևոր փաստը, որ X—XV դարերի ձեռագրերից շատերը անշուշտ ունեցել են իրենց վրա ոսկե և արծաթե կազմեր, սակայն նրանցից մեզ հասել են միայն եղակի օրինակներ. բազմաթիվ ձեռագրերի հարուստ կազմեր օտար նվաճողների կողմից թալանվել, ոչնչացվել են. այդ հաստատվում է ձեռագրերի վրա մնացած կազմերի մնացորդներով և կազմի ներսի կողմից եղած հետքերով։

X—XIII դարերի մանրանկարչության բարձր արվեստին համապատասխան, ոսկե և արծաթե կազմերն էլ ոսկերչական արվեստի բարձր զարգացման արդյունքն են հանդիսանում։

XVII—XIX դարերին պատկանող որոշ կազմերի արվեստի մեջ նկատվում է մասամբ ոչ հայկական օրնամենտների պահպանում. հայ ոսկերիչ վարպետները՝ գտնվելով իրենց հայրենիքից դուրս՝ որոշ չափով աղդվել են տվյալ երկրում կիրառվող արվեստից։

Ինչպես հայտնի է, XIV դարից հետո հայ առևտրական դասը, արտագաղթելով Հայաստանից, կենտրոնացել էր հայկական նոր գաղութներում. առևտրականների հետ նաև հայ արհեստավորների որոշ մասը, որոնց թվում և ոսկերիչները, տեղափոխվել են բուն երկրից դուրս՝ իրենց հետ տանելով հայկական մանր ոսկերչական նուրբ արվեստի կուլտուրան. նրանց ձեռքով զարդարվել են Կաֆայում, Ջուղայում, Կ. Պոլսում, Կեսարիայում եղած ձեռագրերի կազմերն ու տուփերը։ Այդպիսի նմուշներից անհրաժեշտ է հիշատակել Մատենադարանի № 5653 ձեռագիրը, որը պատկանում է XVII դարին։ Հիշատակարանից պարզվում է, որ այդ ձեռագիրը արծաթապատված է 1756 թ., որի մակագրությունը կարդացվում է կազմի վրա։ Ձեռագիրը պատվիրել է հին բայազետցի Կարապետ աղայի որդի Մարգարը՝ Լիմ անապատի վանեցի Պետրոս վարդապետի հանձնարարությամբ ՌՄԸ (1756) թվականին, իսկ ավետարանը կազմել և նախշել է Օհաննես ոսկերիչը։

Մատենադարանում կան նաև այնպիսի ձեռագրեր, որոնք գրված են շուտ, իսկ կազմը պատրաստված է ավելի ուշ. ամենայն հավանականությամբ, այդ ձեռագրերը նախապես ունեցել են ոսկե կամ արծաթե կազմ, որը ոչնչացման ու թալանի է ենթարկվել, և հետո միայն կարիք է ղգացվել վերանորոգելու և պատրաստելու նոր կազմ։

Մատենադարանի № 9274 ձեռագրի հիշատակարանում կարդում ենք, որ այդ ձեռագիրը գրվել է նեոտղաց ազգի (մանզուլների) ժամանակ, իսկ կազմի վրա հիշվում է ՌՄԸ (1756) թվականը։ № 9273 ավետարանը գրված է ՋԽԳ (1494) թվականին իսկ արծաթապատված է 1801 թվականին, Խոջա Պողոսի կողմից։

№ 9272 ձեռագիր ավետարանը արծաթապատ է և գրված է 1424 թ. Ջելֆունում։ № 6740 ձեռագիրը նույնպես ունի արծաթից կազմ։ Հիշատակարանում նշվում է, որ այդ ձեռագրի կազմը արծաթապատված է 1775 թ. և նվիրել են էջմիածնին։ Արծաթապատ կազմ ունի նաև № 6792 ձեռագիր ավետարանը, որ գրված է XIV դարում։ № 2582 ձեռագրի ավետարանը գրված է վանում XVI դարում, իսկ արծաթե կազմի առաջին երեսի վրա արձանագրված է. «Սբ. աւետարանս արծաթապատ եղեւ ձեռամբ Յովսէփ վարդապետի 1785 թ.»[1]։ Արծաթապատ են նաև Մատենադարանի №№ 1632, 1522, 1658, 1375, 7546, 7547, 7573, 7673 և այլ ավետարաններ, որոնց թիվը բավական մեծ է (նկ. 37)։

Ոսկերչական լավագույն նմուշներից են Կեսարիայում պատրաստված երկու ձեռա-

[1] Վերև հիշված ձեռագրերը գտնվում են Մատենադարանում։

դրերի կազմերը. դրանցից մեկը առնացուցպարզաւոտմար ժամագրքի կազմն է, շինված բավականին հաստ արծաթե թերթիկից և ոսկեջրած: Այդ կազմի վրա կան ուռուցիկ զարդեր, որոնք ավելի են նրբացնում ոսկերչական աշխատանքը: Կազմի վրա արձանագրված է թվականը և ոսկերչի անունը [1]:

1671 թ. գրված, Վիեննայում պահպանվող ժամագրքի արծաթե կազմը պատրաստվել է Կեսարացի Մալխաս արծաթագործի կողմից[2]: Ձեռագրի հիշատակարանում գրված է. «ժամագիրքս այս արեալ. հալալ ընձից իւր զարթարեցի արծաթաւ... Կեսարիա բաղաքին անարժան ձեռոք արծաթագործ Մալխասն թիւն Ռ Ճ Խ»[3]:

Այս ձեռագրի առաջին երեսին պատկերված է Քրիստոսի ծնունդը, իսկ մյուս երեսին՝ Քրիստոսի համբարձումը:

1743 թ. ունենք տեղեկություն, որ ոսկերիչ — Կույումջի Օհան Ինջիբեկյանը Պարսկաստանից գնացել է Կեսարիա և այնտեղ շարունակել է իր արհեստը: Այդպիսի ոսկերիչների թիվը հավանաբար բավական շատ է եղել, որոնք Հայաստանից գաղթել են ո՛չ միայն X—XIV դարերում, այլև 1722 թ., երբ Պարսկաստանն անցնում է Աֆղանների ձեռքը: Արծաթե կազմերի լավագույն նմուշներ գտնում ենք նաև Ռուսաստանի ոսկերչության մեջ: Դրանք պատկանում են XIV—XV դարերին: Այդ մասին տեղեկություններ պահպանվել են տարեգրություններում: Անհրաժեշտ ենք համարում հիշատակել 1392 թ. ավետարանի կազմը՝ պատրաստված Մոսկվայի իշխանուհի Թեոդորա Անդրեևնայի պատվերով: Հայտնի է նաև 1343 թ. ավետարանի արծաթե կազմը, որ պատվիրել է Մոսկվայի մեծ իշխանը. կան նաև XV դարի կազմեր: Այս կազմերը պատրաստված են դրվագման ու չիֆթիշիի տեխնիկայով [1], և զարդարված են դուլնզգույն քարերով: Ռուսաստանում վերջին շրջանում, հատկապես XVII—XVIII դարերում ոսկերչության մեջ բավականին տարածված էր էմալի աշխատանքը, որ մեծ մասամբ կիրառում էին ավետարանների կազմեր պատրաստելու ժամանակ:

Հայկական ոսկերչական արվեստի լավագույն նմուշներից են մասանց պահարանները, որոնցից հնագույնները համարվում են ԺԳ դարի գործ: Այդ պահարաններից մեկը պատկանում է Կոստանդին Բ. Սկեվռացուն, իսկ մյուսը՝ Պռոշյաններին ու Խոտակերաց սուրբ նշանին:

Սա իր հնությամբ միակն է Արևելյան Հայաստանի ոսկերչական գործերում և շատ արժեքավոր է հայ մանր արվեստի պատմության համար. ծագումով կապված է Խոտակերաց կամ Քարկոփի վանքի անվան հետ [2]: Այս պահարանը աղյուսաձև է և շինված է արծաթից ու ոսկեջրած՝ 42×26 սմ. մակերեսով և 5 սմ. հաստությամբ: Պահարանի ծագման և նրա տիրոջ մասին արձանագրված է եռևի մասում, իսկ առաջին երեսին փոքրիկ արձանագրությամբ տրված է թվականը՝ ՉԽԹ (1400 թ.): Հայ պատմիչներից Կ. Գանձակեցին և Ս. Օրբելյանը նույնպես հաստատում են, որ պահարանի տերը եղել է Ամիր-Հասանի որդի Էշչի իշխանը:

Պահարանի առաջին երեսի վերին ճակատում Հիսուսը բազմած է չորեքկերպյա աթոռի վրա, աջ կողմից՝ մարդ և արծիվ, իսկ ձախից՝ եզ և առյուծ: Պահարանի երկու անկյուններում՝ մեկական հրեշտակ պատկավարդ արմավենիների զարդանկարներով: Ձախ դռնակի վրա պատկերված է Գրիդոր Լուսավորիչն ամբողջ հասակով, իսկ աջ դրա-

---

[1] Տես Ա ր շ ա կ Ա լ պ ո յ ա ճ յ ա ն, Պատմություն հայ կերպարվեստ, Գ հատոր, Գահիրե, 1937, էջ 1513: Հայ կեսարիոյ, Գ հատոր, Վիեննա, 1895, փետրվար, էջ 60:

[2] Տես Բազմավեպ, 1895, փետրվար, էջ 60:

[3] Հ. Տ ա շ յ ա ն, Յուցակ հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 870:

[1] Չիֆթիշի թելի գործք Ռուսաստանում ավելի շատ զարգացած էր XIV դարից սկսած: Рыбаков. Ремесло древней Руси, Москва, 1948, стр. 24.

[2] Քարկոփի վանքը գտնվում է Վայոց ձորում, լինելով տկղզում Սյունյաց սեփականություն, իսկ հետո՝ Օրբելյանների:

Նկ. 37. Աբծաթյա կազմի նմուշ Պետ. Մատենադարանի № 6771 ձեռագրի, 1747 թ.

նակին՝ Հովհաննես Մկրտչի նկարը։ Պահարանի ներքևի մասում քանդակված է երեք նկար. կենտրոնում՝ Էաչի իշխանը, ձախից՝ Պետրոսը, իսկ աջից՝ Պողոսը։ Պահարանի կողերը զարդարված են բուսական օրնամենտներով, աջ և ձախ արմավենիներ, իսկ վերջին կողին՝ հնգատերևներ։ Կողքերի զարդարուն թիթեղները ամրացված են արծաթե գամերով. զարդերը դծական են և ոչ թե պատկերների նման բարձրաքանդակ։ Պահարանի դռնակների կենտրոնական տեսարանը խաչն է՝ զարդարված հասարակ քարերով, մեջտեղի ուղղահայաց երեք քարերը ունեն մանր մարգարիտներից շարված շրջանակներ։ Արվեստի տեսակետից ավելի հետաքրքիր են ոսկեզօծ ֆոնի վրա եղած բուսական զարդարանքները, որոնց մեջ հատակապես աչքի է ընկնում արմավենիների հնգատերև, կլոր փակագծի նման զարդը։ Հնգատերևների ու արմավենիների ցողունների վրա կազմված են օղակներ, որոնք հատուկ են մանրանկարչությանն ու քանդակագործությանը և բնորոշում են նրանց արևելյան ծագումը։ Հայ ոսկերիչները կարողացել են վարպետորեն օգտագործել թե՛ մեր քարերի վրա եղած քանդակները և թե՛ մանրանկարչության մեջ եղած բուսական ու այլ օրնամենտները։ Իրերի վրա հայ ոսկերիչը, ելնելով տվյալ էպոխայի հասարակական հարաբերություններից, իր արվեստի մեջ ստեղծել է թե՛ աշխարհիկ և թե՛ եկեղեցական պահանջներին համապատասխան ոճ։ Օրնամենտներից հատկապես արմավենին հանդիպում է դեռևս Ախթամարի ժ. դարի եկեղեցու քանդակների մեջ։ Հետագայում այդ մոտիվը հանդիպում է ԺԲ և հետագա դարերի խաչքարերի վրա։ Խաչի տակ, ֆոնի վրա գծերով ձևացրած եղնիկները քրիստոնեական արվեստի մեջ գործածված են որպես սիմվոլիկ խորհրդանշաններ։ Հայ քանդակագործության մեջ ամենահին օրինակներից պետք է համարել նաև Քասախի բազիլիկայի արևմտյան դռան ճակատի քանդակը, որը պատկանում է VI դարին։ Այդ քանդակը պատկերում է երկու եղջերուների, կանգնած դեմ առ դեմ խաչի հորիզոնական բևեռի ուղղությամբ և դնչները մեկնած խաղողի ողկույզին. բացի այդ, հայ ճարտարապետության մեջ կիրառվել է նաև արծվի քանդակը, որպես խոյակների զարդ։ Հայտնի են է դարից Զվարթնոցի խոյակները։

Վերոհիշյալ փաստերը պարզ ցույց են տալիս, որ հին Հայաստանի ոսկերիչները իրենց նրբին արվեստի մեջ ընդօրինակել են հայ քանդակագործության ու մանրանկարչության մեջ եղած ավելի նուրբ ու գեղարվեստական մոտիվները։ Ոսկերչական արվեստի մեջ այդ նրբություններն արտահայտելու համար վարպետը պետք է անպայման ծանոթ լիներ ոսկերչության մեջ կիրառվող տեխնիկայի տարբեր ձևերի հետ, ինչպիսիք են՝ ձուլումը, ճնշումը, դրվագումը, թելի ու հատիկավոր-հյուսքի գործը (չիֆթիշին), փորագրությունը, սևաղը, արծնապատումը, ինկրուստացիան, ոսկեզօծումը և այլն։ Այս արվեստի բազմատեսակ ճյուղերը պահանջում էին բավականաչափ հմտություն ու վարպետություն։

Հայաստանում եղած վանքերից շատերը ընկած էին առևտրական ճանապարհների հանդույցում, իսկ այդ վանքերին կից գործատները X—XIII դարերում, բացի առանին գործածության իրեր արտադրելուց, կատարում էին նաև դրսի պատվերները. մի շարք ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ ձեռագրերի ու նրանց տուփերի վրա աշխատել են առանձին վարպետներ։ Մատենադարանի № 230/1519 ձեռագրում՝ Բագնայրի ավետարանի մեջ հիշվում է գրիչ Իգնատիոսը, իսկ ստացողը՝ իշխանաց իշխան պատրոն Խաւտաս և իւր կինը Խաթուն[1]։

№ 232/378 նկարազարդ ավետարանը գրված է գրիչ և նկարիչ Թորոսի ձեռքով, իսկ ստացողը եղել է «Վախտանգ որդի Հասանայ, որուոյ Վախտանգայ», և նորա ամուսին

---

[1] Տես Գ. Հովսեփյան, Գրչության արվեստը, էջ 33։

Խորիշահ, «դուստր մեծ սպարապետին Սարգսի»[1]։ Այս ավետարանը գրված է 1212 թվականին, երբ Խորիշահը վերաշինում էր Մեծարանց վանքերը։ Ալեքսանդրոպոլի սուրբ Աստվածածին եղեկեցու Ամենափրկիչ կոչված ավետարանը գրվել է Հովհաննես և Հովսեփ գրիչների կողմից, ոմն Կիրակոս վաճառականի համար, 988 թ.[2]։ Ահա նման պատվերների շնորհիվ էլ մեր ձեռագրերից շատերի կազմերը պատրաստվում էին ազնիվ մետաղից և հաճախ զարդարվում գույնզգույն թանկարժեք քարերով։

Վանքերում և գործատներում աշխատող ոսկերիչ արհեստավորները պատրաստում էին ո՛չ միայն ձեռագրերի կազմերը, մասանց պահարանները, այլև եկեղեցական բոլոր սպասները՝ արծաթե, ոսկե խաչերը, սկիհները, վակասները, եկեղեցական անոթները, գավազանները, մեռոնի և մասունքի ամանները, շուրջառների ճարմանդները և այլն։ Եկեղեցական սպասների մեջ մեծ տեղ էին գրավում խաչերը, որոնք պատրաստվում էին թե՛ պղնձից[3] և թե՛ ազնիվ մետաղից։ Պատրաստված խաչերը ունեցել են տարբեր մեծություններ. դրանցից մեծածավալ խաչերը օգտագործվել են եկեղեցական ժամերգությունների համար, իսկ փոքրիկ խաչերը, բացի հոգևորականներից, կրել են նաև աշխարհականները։

Հայ պատմիչներից Ստեփաննոս Օրբելյանը, երբ խոսում է Բաղաբերդի վրա անօրինների հարձակման մասին, հիշատակում է մեծ թվով եկեղեցական սպասների ու ձեռագրերի կորուստը. «ԵՒս առաւել՝ զանհամար և զաննման սրբութիւնս և սպաս եկեղեցւոյն Տաթևոյ՝ փարթամ և հարուստ աթոռոյն, խաչ և վկայարանք յոսկւոյ և յարծաթոյ, և անդին ակամբք և անհուն մարգարտով զարդարեալ, և կտակարանք յոլովք, որք թուով աւելի քան զ10.000, զորս ամբարեալ էին անդ։ Ամենայնն առ հասարակ գերի վարեցան, եւ ցան և ցիր եղեն ընդ երեսս աշխարհի»[1]։ Նույն պատմիչը նշում է նաև այն մասին, որ 500 դահեկանով Արցախի Դլենա իշխաններից գնել է նրանց հայրենական խաչը և պահարանը ոսկով ու թանկագին քարերով պատել[2]։

Բացի այդ, պատմիչը Սյունյաց Սողոմոն եպիսկոպոսի մասին գրում է. «Տայ կազմել խաչ յոսկւոյ ի մեծարհեստ ճարտարաց. և զարդարէ մեծագին ակամբք և մարգարտով. և դնէ ի նմա զփայտն. և գրէ ի վերայ զիւրն անուն, և ընծայէ ի սուրբ եկեղեցին»[3]։

Նույն պատմիչը Սյունյաց Ժողովի մասին պատմում է. «Իսկ բազմութիւն ամենայն գաւառացն Սիւնեաց՝ ժողով արարեալ եկեղեցեացն պատուիրանաց, կտակարանաց և սրբոց խաչից ոսկւոյ և արծաթոյ անթիւ, և նշխարաց սրբոց պատուականաց»[4]։

Գագիկ Բագրատունի արքան կրում էր ոսկե խաչ, որ կախված էր ոսկե շղթայով[5]։

Ոսկե խաչերի մասին կան հիշատակություններ նաև ձեռագրերի հիշատակարաններում. մենք կբավարարվենք միայն մի երկու օրինակ բերելով, որ վերաբերում է Վասպուրականի նահանգին։

1231 թ. ավետարանը, որի գրիչը եղել է Հակոբ կրոնավորը, գրվել է Բերկրիի Արգիլան անապատում։ Այդ ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Իսկ միաբանք հանդերձ դերպատիւ իշխանօք Վանայ քաղաքամիջին, արարին պատուական խաչս ոսկեայ, զարդարեալ ականակուռ քարամբ պատուականաւ»[6]։ Կա հիշատակություն, որ այս

---

1 Գ. Հովսեփյան, Գրչության արվեստը, էջ 32։

2 Նույն տեղում, էջ 24։

3 Անթիվ պեղումների ժամանակ հայտնաբերվել են պղնձե փոքր և մեծ խաչեր, որոնք իրենց վրա կրում են փորագրություններ և նույնիսկ զարդարված են ակներով։

1 Ս. Օրբելյան, էջ 336։

2 Տես նույն տեղում, էջ 489—490։

3 Նույն տեղում, էջ 215։

4 Նույն տեղում, էջ 34։

5 Տես Վ. Հացունի, էջ 184։

6 Ն. Լալայան, Ծուցակ հայերեն ձեռագրաց վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 90։

ավետարանի կազմը նորոգվել է Վարագում 1749 թվականին։

Իսկ 1253 թ. ձեռագրի մեջ հիշվում է. «Ես եառու զսբ աւետարանս ոսկի. խաչով և արծաթ հանգերով և կոճակով և նխշուն տուփով և շղթայով»[1]։

Բացի գրավոր հիշատակություններից, ունենք նաև նյութական մնացորդներ։ Անհրաժեշտ է հիշել Դվինում գտնված ոսկե խաչը, որը բարձր արվեստի անզուգական մի գործ է. այն պատրաստված է տեղական ոսկերիչների ձեռքով և պատկանում է VII—IX դարերին[2]։ Խաչի թևերի եզրերով անցնում են մանր գնդիկներ, իսկ թևերի ծայրերը վերջանում են ավելի մեծ չափի գնդիկներով։ Խաչի թևերի մեջ ամրացված են երեք ոսկե հյուսվածք (շիֆթիշի գործ)՝ նման Դվինում գտնված քարե խոյակների քանդակներին (նկ. 38)։



Նկ. 38. Ոսկե խաչ, գտնված Դվինում, VII դար, Պետ. պատմական թանգարան

1947 թ. Դվինի պեղումներից գտնվեց արծաթե ձուլածո մի փոքրիկ խաչ, որն ունի միայն կախելու հարմարություն, բայց զուրկ է որևէ զարդանախշից կամ փորագրությունից. արծաթե այս խաչը ևս պետք է համարել մեր հնագույն խաչերից։

Հայ պատմիչների մոտ շատ հաճախ եկեղեցական սպասների հետ միասին հիշվում են կաթողիկոսների, եպիսկոպոսների, քահանաների ու սարկավագների՝ եկեղեցական ծիսակատարության ժամանակ կրած հագուստները. բացի հագուստից, նրանք կրել են նաև խույրեր՝ թագեր կամ սաղավարտներ, որոնք լինում էին գմբեթաձև՝ զարդարված զարդագանգակներով։ Հոգևորականների կարևորագույն զարդարանքներից էին վակասները, որ պատրաստվում էին և շորից, և ազնիվ մետաղից ու զարդարվում առաքյալների նկարներով։ Բարձր հոգևորականությունը կրում էր նաև գավազան, իսկ սարկավագների ձեռքից անպակաս էին քշոցներն ու բուրվառները։ Վակասը կամ, ինչպես Լամբրոնացին է կոչել, «զվակասն ուսանոց», միաժամանակ կոչվել է ուրար։ Սյունյաց պատմիչ Օրբելյանը և Մխիթար Գոշը անվանում էին այն փակաղեն և նշում էին, որ քահանայի վակասը իր ձևով տարբերվել է սարկավագի ուրարից (վակասից). այս վակասները ոսկեզօծում ու զարդարում էին առաքյալների պատկերներով։ Անհրաժեշտ ենք համարում հիշատակել այստեղ № 3477 վակասը, որի վրա քանդակված են 12 առաքյալները[1]։ Սարկավագների կողմից գործածված սպասների մեջ, ինչպես հիշեցինք վերևում, կարևոր տեղ էր բռնում բուրվառը։ Սրա ցածի մասը մեր պատմիչները անվանել են հրո ընդունարան, որ ուներ երեք շղթա, որոնք վերևում միանում էին ու այդ կոչվում էր «ըմբռնելիք ի վերին ծայրքն»։ Շղթաները մեծ մասամբ զարդարվում էին մանր զանգակիկներով։ Բուրվառների մեծ մասը պատրաստվում էր պղնձից[2] ձուլման տեխնիկայով. եղել են նաև արծաթե բուրվառներ։ Եկեղեցական սպասների մեջ մեծ տեղ են բռնել նաև քշոցները։ Քշոցները իրենց ծա-

---

1 Ե. Լալայան, Ծուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 116։

2 Տես Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 172։

1 Պետ. Պատմական թանգարանի Արգագրական բաժին։

2 Անիի պեղումների ժամանակ գտնվել են տարբեր չափի պղնձից պատրաստված բուրվառներ, որոնց վրա կան առաքյալների դիմաքանդակները։

գոմով հին են, և հեթանոսական շրջանից են անցել հայ եկեղեցուն։ Քշոցները ձևով լինում էին բոլորակ, երեսը ծածկված ճառագայթանման զարդերով. մեծ մասամբ ունեին զանգակիկներ, որի պատճառով էլ Ներսես Շնորհալին անվանում է «հնչող քշոցանին»։ Եղել են նաև արծաթե քշոցներ. 1279 թ. Հովհաննավանք եկեղեցուն նվիրում են «քշոցս արծաթեայ պատեալ ոսկւոյ»[1]։

Ինչպես արդեն ասացինք, հոգևորականների բարձր դասի ներկայացուցիչները կրել են նաև հովվական գավազան, որ պատրաստվում էր տարբեր նյութից՝ արծաթից, փղոսկրից, փայտից. գլուխը վերջանում էր մեծ մասամբ արծաթից ու ոսկուց՝ զարդարված խաչով կամ վիշապներով։ Մեր պատմիչների մոտ հաճախ են հիշվում խաչագլուխ և օձագլուխ գավազանները։ Կային նաև այնպիսի գավազաններ, որոնց գլուխը վերջանում էր երկու կողմից վիշապներով, կենտրոնում խաչ կամ աղավնի։

Գավազանների մասին ո՛չ միայն հիշատակում են մեր պատմիչները, այլև բազմաթիվ նմուշներ գտնվում են էջմիածնի վանքում. դրանց թիվը 100-ից ավելի է։

Մեզ հաջողվեց մոտիկից ուսումնասիրել միայն էջմիածնի մայր տաճարի հարավային խորան-թանգարանում եղած գավազանները, որոնց մեծ մասը պատկանում է XIX դարին։ Այդ բաժնում եղած գավազաններից մեկը պատրաստված էր 1777 թվականին. վանում, սուրբ Աստվածածնի եկեղեցու մոտ եղած հայ ոսկերիչների ձեռքով. թվականը արձանագրված էր գավազանի վրա։ Հայ ոսկերիչները 1831 թ. պատրաստել են մի այլ գավազան, որը նվեր է ուղարկված էջմիածնի Սիմեոն արքեպիսկոպոսին։ Այս գավազանը ամբողջապես արծաթից է, գլուխը զարդարված 6 վիշապներով, որոնցից երկուսը նայում են դեպի ներս. վիշապների մեջքը ոսկերիչ արհեստավորը ամբողջությամբ զարդարել է ալմաստ քարերով, գավազանի երկարությամբ կան երեք վարդանման գնդիկներ, որոնք նույնպես զարդարված են թանկագին քարերով։

Մի ուրիշ գավազան պատրաստված է ՌՄԼ (1781) թ. Զմյուռնիայի հայ ոսկերիչների ձեռքով։ Պատվիրատուն եղել է Փիլիպպոս վարդապետը՝ ի հիշատակ Տեր-Ղուկաս սրբազանին։ Այս գավազանը լրիվ ծածկված է բուսական քանդակներով, իսկ արձանագրված մասը բարակ ժապավենի նման ոլորապտույտ անցնում է գավազանի երկարությամբ։

Ալեքսանդրոպոլցի Դավիթ Սարոյանը 1881 թ. պատրաստել է տալիս մի գավազան և նվիրում Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանին Նախիջևանի հայերի անունից։ Այս գավազանը փայտից է, իսկ գլուխը արծաթ, որը վերջանում է վիշապով, աղավնիով, իսկ կենտրոնում ունի խաչ։ Գավազաններից մեկը պատրաստված է ՌՃԿ (1711) թ. և նվիրված էջմիածնին՝ «ի վայելումն տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսին». գավազանը վերջանում է երկու օձի գլուխներով. ոսկերիչը տվյալ դեպքում օգտագործել է արծնապատման (էմալի) տեխնիկան։ Կան նաև սևագի աշխատանքով պատրաստված գավազաններ, որոնք պատկանում են XVIII—XIX դարերին։

Հայ եկեղեցական սպասների լավագույն նմուշները կենտրոնացած են էջմիածնի մայր տաճարի հյուսիսային խորանում։ Այդտեղ եղած հարյուրավոր ոսկե և արծաթե սպասները՝ մարդարտաշար թագերը, քանդակազարդ խաչերն ու սկիհները, գայիսոն ները, ճարմանդները, բուրվառները, անոթները, մեռոնի աղավնիները և այլն, մինչև օրս ուսումնասիրողների համար մնացել են անմատչելի։ Մեզ ևս չհաջողվեց ծանոթանալ[1] այդ նյութերին, որի հետևանքով տրվյալ բաժինը մասամբ մնում է թերի։

---

1 վ. Հ ա յ ո ւ ն ի, էջ 335։

1 1949 թ. լինձ հաջողվեց միայն մեկ օրով լինել էջմիածնի հյուսիսային խորանում, որտեղ պահված էին ոսկե և արծաթե թանկարժեք սպասները։

Նկ. 39. Աբծաթե սկիհ, XVIII դար,
Պետ. պատմական թանգարանում

Նկ. 40. Արծաթե սկիհ, XVIII դար.
Պետ. պատմական թանգարան



Նկ. 41. Արծաթե մոմակալ, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան

Նկեղեցական սպասների հատուկենտ օրինակներ պահպանվում են Պետ. պատմական թանգարանի Ազգագրական բաժնում, որոնք նույնպես պատկանում են XVIII—XIX դդ.։ Դրանցից անհրաժեշտ ենք համարում նշել 347 համարի տակ եղած սկիհը, որի պատվանդանի վրա արձանագրված է պատրաստման թվականը՝ 1798։ Այս սկիհը բերված է Աշտարակի շրջանի Կարմրավոր եկեղեցուց։ Պատրաստված է դրվագման եղանակով, իսկ բաժակը դրսից զարդարված է հրեշտակների ու նուրբ բուսական վերադիր քանդակներով։ № 2079 արծաթե սկիհը նույնպես պատվանդանով է, վրան քանդակված չորս ավետարանիչների պատկերները. ներսի կողմից ոսկեջրած է։ Պատրաստել են Կարնո ոսկերիչ վարպետները։ Բարձր արվեստով է պատրաստված նաև № 3725 սկիհը, որը Էրզրումի ոսկերիչ վարպետի ձեռքի աշխատանքի արդյունք է. պատրաստման թվականը ՌՄՀ (1821)՝ մակագրված է պատվանդանի վրա (նկ. 39)։

Ինչպես պատմիչների հաղորդած փաստերը, այնպես էլ Հայաստանում կենտրոնացած սպասները, նաև բուն Հայաստանից դուրս, զանազան երկրներից հայ ոսկերիչների ձեռքով պատրաստված ու նվեր ուղարկված իրերը ցույց են տալիս, որ միջնադարյան հայ ոսկերիչները ո՛չ միայն բավարարել են աշխարհիկ դասի պահանջները, այլև սպասարկել Հայաստանում եղած բազմաթիվ վանքերի հոգևորականությանը, կատարելով նրանց նույնպես բավականաչափ բարդ պահանջները (նկ. 40, 41)։

Գ. ՈՍԿԵՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XV—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Հայաստանը XIII—XIV դարերում, մոնղոլների տիրապետության օրով, իսկ հետագայում Լենկթեմուրի և թուրքմենական ցեղերի՝ Ղարա-ղոյունլուների և Աղ-ղոյունլուների արշավանքների ժամանակ ոտնատակ եղավ և մեծ ավերածության ենթարկվեց։ Բայց այդ, XVII—XVIII դարերում պարսկա-օսմանյան երկարատև կռիվները և նրանց վարած հարկային դաժան քաղաքականությունը նույնպես ծանր հարված հասցրին երկրի տնտեսությանը։ Հայաստանը XV—XVIII դարերում ո՛չ միայն տնտեսապես, այլև կուլտուրայի ու արվեստի ասպարեզում մեծ կորուստներ ունեցավ։ Այդ երկարատև կռիվների ընթացքում ավերակների վերածվեցին բազմաթիվ գյուղեր և մի շարք քաղաքներ. թուլացան առևտրական հարաբերությունները։ Հայաստանի վրայով անցնող հյուսիսային տրանզիտ առևտրական գիծը կորցրեց իր նախկին դերն ու նշանակությունը։ Հյուսիսային առևտրական ճանապարհի վրա ընկնող քաղաքներից Դվինն ու Անին զրկվեցին իրենց եկամուտի հիմնական աղբյուրից, քայքայվեց այդ քաղաքների ազգաբնակությունը, արհեստներն ու առևտուրը անկում ապրեցին։

Հյուսիսային առևտրական գծին հակառակ, Հայաստանի հարավային մասում առևտրական հարաբերությունները պահում են իրենց դերը։ Հարավային քաղաքներից՝ Կարինը, Երզնկան, Վանը ընկած լինելով տարանցիկ առևտրական ճանապարհի վրա, որպես Հայաստանի առևտրա-արհեստավորական կենտրոններ, կարողանում են պահպանել իրենց գոյությունը։

Ինչպես պատմությունից հայտնի է, XIV դարից սկսած, հայ իշխանական տների մեծ մասը կորցնում է իշխողի իր դերը և դրա փոխարեն հրապարակի վրա, որպես կալվածատիրական խոշոր տնտեսություններ, մնում են եկեղեցիները և խոշոր վանքերն իրենց միաբանություններով։ Աշխարհիկ իշխանների թուլացման և քաղաքային դասի քայքայման հետևանքով Հայաստանի բնակչությունը, հատկապես առևտրականների ու արհեստավորների զգալի մասը, որոնց թվում նաև ոսկերիչները, թողնում են բուն երկիրը և բնակություն հաստատում գաղութներում։ Հայաստանի ազգաբնակչությունն առաջին հերթին արտագաղթում է Վրաստան, Ադրբե-

ջան, Պարսկաստան, Հյուսիսային Կովկաս, Վոլգայի ափերը, Ղրիմ, որտեղից նրա մեծ մասն անցնում է Լեհաստան: XIV դարում Լվովում բնակություն են հաստատում նաև Հայաստանից գաղթած առևտրականներն ու արհեստավորները:

XVI—XVIII դարերում հայկական գաղութներ են ստեղծվում նաև Հոլանդիայում, Ամստերդամում, Ֆրանսիայում, Հնդկաստանում և այլ տեղերում: Օսմանյան թուրքերի կողմից 1453 թ. Կ. Պոլիսը գրավելուց հետո, արագ կերպով աճում է քաղաքի հայ բնակչության թիվը. 1475 թ. Ղրիմի անկումից հետո, Թեոդոսիա քաղաքից, իսկ 1515 թ. Թավրիզ քաղաքից Կ. Պոլիս են գնում մի քանի հազար հայ արհեստավորների ու առևտրականների ընտանիքներ, որոնց մեջ կային նաև մեծ թվով ոսկերիչներ:

XVII դարի ամենանշանավոր հայ գաղութներից էր Նոր Ջուղան, ուր Շահ-Աբբասի ժամանակ գաղթեցրել են արևելյան Հայաստանի, հատկապես Հին Ջուղայի առևտրականներին ու արհեստավորներին: Ն. Ջուղայի հայ առևտրականները և արհեստավորները մասնավորապես Ղրիմի և Լեհաստանի հայերի միջոցով սերտ առևտրական հարաբերության մեջ էին նաև Ռուսաստանի հետ: Աստրախան քաղաքը դարձել էր այդ առևտրական հարաբերությունների հանգուցային կենտրոնը: XVI դարի վերջում Թյուրքիայի կողմից ամբողջ Անդրկովկասի ժամանակավոր գավթումը, թուրք-պարսկական երկարատև պատերազմները, XVII դարում Շահ-Աբբասի կողմից հայերի բռնի գաղթը Պարսկաստանի խորքերն ու այդ նույն ժամանակաշրջանում ռուս-շվեդական պատերազմները, թեև ժամանակավորապես, թուլացրին ռուս-պարսկական առևտուրը, սակայն հայ առևտրականները իրենց կապերը չկարեցին Ռուսաստանից և Հայաստանի արհեստավորների պատրաստած արդ ու զարդը, նուրբ գործվածքները դարձրին վաճառքի առարկա:

XVII դարի 30-ական թվականներին ավելի նորմալ վիճակումն էին գտնվում հայ-ռուս առևտրական հարաբերությունները. անդամ Աստրախանից դեպի Հյուսիս տանող ճանապարհն անվանում էին «Հայկական առևտրական ճանապարհ»: Ոսկերիչ վարպետների ձեռքով պատրաստած զարդերը և շքեղ գահերը բարեկամական նպատակով հայ առևտրականներն ու արհեստավորները ուղարկում էին Ռուսաստան որպես նվեր: Օրինակ՝ 1659 թ. Ն. Ջուղայի Խոջա Զաքար Սահրադյանը Ալեքսեյ Միխայլովիչ ցարին նվեր է բերում իր հոր պատրաստած «ալմաստե գահ»-ը: Գահն այժմ գտնվում է Կրեմլի Զինապալատ-թանգարանում, պատրաստվել է 1655 թ., գահի թիկնոցի վրա, ներսի կողմից լատիներեն լեզվով գրված է «Հզորագույն և անպարտելի մոսկովյան կայսր Ալեքսեյին»: Այս գահը արծաթապատած է ու ոսկեզօծած: Ոսկեպատ և արծաթապատ ընտիր փայտի վրա ամրացված են՝ մոտ 900 ալմաստ, 1300 հակինթ, 1800 փիրուզյա թանկարժեք քարեր: Խոջա Զաքարը իր նամակում գրում է. «Իմ խեր (հայրս) սիրեց մեծ թագավորին, թախտն թամբահեց ինձ, ասեց՝ քեզ տար թագավորին փեշքյաշ արա»[1]: Սրա դիմաց նա ցարից ստանում է մեծ նվերներ, իսկ հետագայում, 1667 թ., Ալեքսեյ ցարը առևտրական պայմանագիր է կնքում և լայն արտոնություններ է տալիս նրանց. անդամ մետաքսի մենաշնորհը տալիս է հայ վաճառականներին:

Հայ և օտար պատմիչների տեղեկություններից պարզվում է, որ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանում նկատվում է առևտրական հարաբերությունների աշխուժացում և արհեստների որոշ ճյուղերի վերականգնում ու զարգացում: Միաժամանակ պետք է ասել, որ այս շրջանում միջնադարյան հայ ոսկերիչների ձեռքով պատրաստած ոսկե արդ ու զարդերի ճոխությունը չի նկատվում:

XVII—XVIII դարերում Հայաստանը, գտնվելով պարսկական շահերի ու օսմանյան

---

1 Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926 թ., էջ 615:

կառավարության դերիշխանության տակ, զրկվելով անկախությունից, կորցրել էր նաև իր ազգային կուլտուրայի ու արվեստի զարգացման բոլոր հնարավորությունները։ Այդ շրջանում ոսկերիչ արհեստավորների մեծ մասը պատրաստում էր այնպիսի իրեր, որոնք համապատասխանում էին իշխող պետության շահերին ու պահանջներին։

Բացի պատմիչների հիշատակություններից, կան նաև նյութական բազմաթիվ և բազմազան ոսկե, արծաթե զարդեր ու իրեր՝ XVIII—XIX դարերին պատկանող, որոնք տալիս են մեզ որոշ պատկերացում նաև միջնադարյան ոսկերչական արվեստի մասին։ Մեր ձեռքի տակ եղած իրերից պարզվում է, որ XVIII—XIX դարերում Հայաստանում ամենից շատ հարգի ու տարածված աշխատանքը ոսկերչության մեջ եղել է սևադի տեխնիկան։ Պետք է նշել, որ այս տեխնիկան ո՛չ միայն հնագույն է, այլև տեղական է, որը հետագայում տարածվել է նաև Հայաստանից դուրս՝ Անդրկովկաս, Ռուսաստան և եվրոպական մի շարք երկրներ։ Սևադի տեխնիկայի վերաբերյալ միջնադարից ունենք միայն մեկ հատ մատանի՝ հայտնաբերված Դվինի պեղումներից։

Այս միակ փաստը արդեն ինքնին խոսում է միջնադարում սևադի գործածության մասին։ Որ այն բավական տարածված է եղել՝ պետք է ենթադրել № 9023 ձեռագրի 238 էջում սևադի փորու պատրաստման մասին եղած նշումից. «Նախ առ մեկ մխալ խալաս արծաթ և վեց մխալ կարմիր պղինձ, 15 մխալ արճիճ, բայց արծաթն, որքան շատ լինի, այնքան ավելի լավ սավատ կլինի և դուն յառաջ պղինձն և արծաթն ի միասին լավ հալէ և եռոյ արճիճն քեզտիկ հալածիդ մեջն մինչև բոլորն ի միասին հալվին ու միանան»։ Հետագա պեղումները հավանաբար կհաստատեն այս ենթադրությունը։

Սևադապատումը կատարվում էր ո՛չ միայն արծաթե զարդերի վրա, այլ հիմնականում՝ բաճակների, ափսեների, սափորների, նաև՝ բաճկոնների, ափսեների և հարսանյաց տուփերի վրա. պատկերում էին տարբեր տեսակի բուսական քանդակներ, պատմական հուշարձանների տեսարաններ, իսկ շատ դեպքում նաև կրոնական բնույթի դիմանկարներ։ XVIII — XIX դարում սևադը մասսայական ձևով կիրառվում է նաև կանացի լայն գոտիների, ճարմանդների, ապարանջանների, ականջօղերի և կրծքի զարդարանքների պատրաստման ժամանակ։ Սևադի լավագույն վարպետները համարվում էին Վանի ոսկերիչները։

XVII—XIX դարերում Հայաստանում, բացի սևադից, զարգացած էր նաև արծաթե թելի հյուսվածքի տեխնիկան (չիֆթիշի), որով պատրաստում էին կանացի զարդեր՝ գոտիներ, ապարանջաններ, ականջօղեր, ձեռադրերի կազմեր և այլն։ Չիֆթիշի արվեստի լավագույն օջախը եղել է Էրզրումը, իսկ հետագայում՝ 1830 թ. արևմտահայերի գաղթից հետո այդ ճյուղը զարգանում է Ախալցխայում ու Ալեքսանդրոպոլում։

XVIII—XIX դարերում հատկապես Արևելյան Հայաստանի ոսկերչության մեջ բավականին զարգացած էր արծնակիտման (էմալի) տեխնիկան, որը Հայաստանի ոսկերիչները անհամեմատ ավելի ուշ են կիրառել։ Ամենայն հավանականությամբ, այդ ճյուղը Հայաստան է եկել Վրաստանից, Հյուսիսային Կովկասից և Ռուսաստանից, քանի որ էմալի լավագույն և հին օրինակները հանդիպում են վրացական և ռուսական ոսկերչության մեջ։

XVII—XIX դարերում պատմիչների մոտ և այլ աղբյուրներում ունենք հիշատակություններ՝ կանանց զարդարանքների թվում նաև գլխի ու կրծքի զանազան տեսակի հարդարանքների մասին։ Կան և համապատասխան նյութական մնացորդներ. XVIII—XIX դարերում պատրաստված գլխի արծաթե թասակները և կրծքի զարդարանքները իրենց ձևով ու պատրաստման արվեստով շատ նման են X—XIII դարերի զարդարանքներին։ Նույն ձևի զարդարանքներ հայ կանայք Հայաստանի որոշ գավառներում գործածել են նույնիսկ մինչև սովետական կարգերի հաս-

տատումը: Այդ թասակների լավագույն նմուշների մեծ մասը պատրաստված են XVIII—XIX դարերում, որտեղ Հայաստանի ոսկերիչները գործադրել են իրենց արվեստը բազմակողմանիորեն: Գլխի կոնաձև թասակները կարվում էին կոնաձև գլխարկի՝ կոտիկի վրա, իսկ հարթ թասակները՝ հարթ գագաթ

հիշել №1349 գլխի թասակը [1] պատրաստված շրջանաձև դրվագման տեխնիկայով. թասակի վրա փորագրված են 6 առաքյալների դիմանկարները, կենտրոնում ունի կոնաձև ուռուցիկ զարդ՝ ծածկված հատիկավոր զարդանախշերով: Թասակի շուրթերից կախված են 24 շղթա, որոնց ծայրերը վերջանում են շըր-



Նկ. 42. Գլխի արծաթե թասակ, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարանում

ունեցող ֆեսի վրա: Թասակների մեծ մասը պատրաստում էին կրկնակի դրվագման տեխնիկայով, որի շնորհիվ օրնամենտները ավելի ռելյեֆ ձևով էին արտահայտվում: Հայ ոսկերիչները, ժամանակի պահանջներից ելնելով, զարդարում էին այդ թասակները բուսական քանդակներով ու կրոնական բնույթի դիմանկարներով: Այդ բազմաթիվ թասակներից անհրաժեշտ ենք համարում

ջանաձև զարդանախշերով (նկար 42):

Բավական է մեջ բերել Վանի կանացի զարդարանքների նկարագիրը, որպեսզի պարզ լինի թե ոսկերչության արհեստը զարգացման ինչ աստիճանի պետք է հասած լիներ միջնադարում և հետագա շրջաններում, հատկապես XVII—XVIII դարերում: Վասն

1 Պահպանվում է Պետ. պատմական թանգարանի Ազգագրական բաժնում:

պուրականի կանայք, ինչպես և առհասարակ բոլոր կանայք, իրենց հյուսերի վրա ուսից բարձր ամրացնում էին ծամքաղ, որը արծաթե երկար շղթա էր՝ 30—35 սմ. երկարությամբ, սրա վրայից կախված էին արծաթե գնդիկներ, իսկ կենտրոնում ամրացնում էին մեկ հատ կապույտ հուլունք (աչքի համար). ծամքաղի երկու շղթաները խաչաձև անցնում էին բոլոր ծամերի վրայից և իրենց ծայրերի կարթերով ամրանում ուսերի մոտ։ Բացի կանանցից, հայ աղջիկները նույնպես զարդարում էին իրենց վարսերը. նրանք ծածկում էին ֆես, իսկ այդ ֆխանոցների վրա կապում էին մեծ մասամբ արծաթե զարդեր։ Ճակատի վրայից գցում էին մի շղթա, որից կախված էին լինում արծաթե դրամներ։ Այդ դրամներից բարձր կապում էին թիթիրման։ Քունքերի մոտ կախում էին նաև երեսոց, որը սովորաբար լինում էր սրտաձև, կենտրոնում շատ հաճախ հագցվում էր կարմիր կամ այլ գույնի քար։ Սրտաձև զարդից կախում էին նույնանման երկու սրտաձև զարդեր, իսկ վերջիններից կախվում էին 6 հատ շղթա, որոնցից յուրաքանչյուրի ծայրը վերջանում էր արծաթե շրջանաձև զարդով՝ զարդարված ակներով։ Քունքի այդ զարդերը միացվում էին առանձին արծաթե շղթայով, որն անցնում էր վզի տակով և կոչվում էր շորան։ Շղթայի մեջտեղում կախված էր արծաթե մի սրտաձև ճարմանդ, որ ընկնում էր վզի տակ։ Վանի կանայք կուրծքը զարդարում էին հատուկ զարդերով, որոնք կոչվում էին գյարդանլըղ (կրծկալ)։ Հուլունքների կենտրոնում ամրացվում էին ճաճանչաձև նախշերով զարդարված ականակուռ արծաթե 10—12 շրջանակ (քյառասատա), ներքևի հուլունքներից կախվում էին դարձյալ 12 հատ շրջանակ՝ տերևաձև. սրանցից յուրաքանչյուրի մեջ ամրացվում էր մեկական կարմիր բուրջ։ Ներքևի շղթայից կախում էին արծաթե դրամներ։ Գյարդանլըղի ծայրերին կային ճարմանդներ, որոնցով այն ամրացվում էր կրծքին։ Բացի վերոհիշյալից, կանանց կուրծքին զարդարում էին կոտիկները (գդակները)։ Մախշանները լինում էին տարբեր տեսակի. որպեսզի պարզ պատկերացում ունենանք XVIII—XIX դդ. կանանց գլխազարդերի մասին, անհրաժեշտ ենք համարում նկարագրել հետևյալ օրինակը։

№ 17 մախշան[1] բաղկացած է 7 տախտակից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է երեք սանտիմետր մեծություն, տախտակի վերին մասը բարձրանում է թագաձև և պսակված է աստղով։ Քառակուսի տախտակների կենտրոնից դեպի վեր ամրացված է մի ամբաձև վերադիր նախշ, որը շրջապատված է չորս նշաձև զարդերով. սրանց յուրաքանչյուրի կենտրոնում հագցրած է մի-մի փերուզա կամ հակինթ։ Թագաձև մասի վրա բարձրանում է մի նշաձև զարդ՝ հակինթակիր, իսկ ներքևում կան երկու տերևներ։ Մեջտեղի տախտակը, որ համեմատաբար մյուսներից լայն է, իր կենտրոնում կրում է մի կիսալուսնաձև քար։ Տախտակները իրար հետ միացած են թելքաշ ճարմանդով, վերևի մասում ունեն մի-մի գնդիկ, ներքին մասում՝ կախված արծաթե գնդիկներ։ Մախշայի միջին տախտակի ու նրա երկու կողքի տախտակիկների վերևում, աստղերի հետևի մասից բարձրանում է 5 սմ. երկարությամբ արծաթե մի շղթա, որը միանում է թուչնաձև ճարմանդի մեջ, սրանով ամրացվում է մախշան ճակատի կապի վերին մասի հետ, ու վրան ծածկում են կոտիկը (նկ. 43)։ Ինչպես աղջիկները, նույնպես էլ կանայք, նամանավանդ նորահարսները, զարդարում էին իրենց կուրծքը գյարդանլըղով, թևերը՝ ապարանջաններով, ականջները՝ օղերով, ձեռքերը՝ մատանիներով։ Կանայք, բացի սովորական մատանիներից, իրենց աջ ձեռքի բութ մատին կրել են արծաթե մի մատանի, որի երեսի մասը լայն է և վերջանում է եռանկյունաձև հավելվածքով, ունի մի շղթա, որով այն ամրացվում է թևնոցին։ Այս մատանին ծա-

[1] Տե՛ս Ե. Լալայան, Ազգագրական հանդես, XX գիրք, Թիֆլիս, 1910, էջ 138։



Նկ. 43. Արծաթե մախչա, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան

ռայել է և՛ որպես զարդ, և՛ որպես միջոց բուի մատը վերքից պաշտպանելու համար:

Տոսպի և Հայոց ձորի խուլ գյուղերում դեռևս մինչև XX դարի սկիզբը որոշ կանայք իրենց քթին խզմա էին կրում: Խզման մեկ սմ. տրամագծով կամ ավելի փոքր, մի արծաթե շրջանակ է՝ թելքաշ, որի կենտրոնում ամրացված է լինում հակինթը, անց է կացվում քթի աջ խոռոչի մեջ, այդ սովորությունը պահպանվել է նաև քրդերի մեջ:

Հայ պատմիչների կողմից հիշատակված ոսկե և արծաթե գոտիների նմուշները մեր ձեռքը չեն հասել, բացառությամբ Դվինի արծաթե գոտուց, սակայն XVII—XIX դարերում պատրաստված ոսկե և արծաթե տարբեր տեսակի գոտիներ, ապարանջաններ և այլ զարդեր պահպանվում են Պատմական թանգարանում. սրանք տալիս են մի ընդհանուր պատկեր Հայաստանի տարբեր քաղաքների ոսկերիչ արհեստավորների արվեստի ու տեխնիկայի զարգացման աստիճանի մասին. պարզվում է, որ յուրաքանչյուր քաղաքի ոսկերիչ արհեստավորները ունեցել են իրենց ոճն ու պատրաստման տեխնիկան: Ոսկերիչ վարպետները այդ գոտիների պատրաստման ժամանակ կիրառել են սևադիր, փորագրության, ինկրուստացիայի, արծնակիտման և հատիկավոր ու արծաթյա թելերի հյուսվածքի տեխնիկան: Պատրաստած իրերը և զարդերը իրենց ձևերով ավելի բազմազան էին դարձնել և նախորդ շրջանի համեմատությամբ ունեին որոշ յուրահատկություն:

XVII—XIX դարերում պատրաստում էին գոտիներ, որոնք քառակող և ձվաձիր արծաթե տախտակներ էին, միմյանց հետ միացած առանձին շղթաներով, որոնց վրա փորագրված էին տարբեր տեսակի օրնամենտներ, վրայից ծածկված սևադապատած վերադիր հատիկավոր զարդանախշերով: Այդ դարերում պատրաստում էին գոտիներ ամբողջովին հյուսվածքի տեխնիկայով, կամ թե քառակող արծաթե թերթիկի վրա ոսկե և արծաթե թելերով հյուսում էին բուսական քանդակներ և զարդարում գունավոր քարերով (նկ. 44):

XVIII — XIX դարերում Հայաստանում գործածվել են նաև այնպիսի գոտիներ, որոնց առաջին մասը՝ ճարմանդը, ծավալով ավելի մեծ էր լինում: Այդ ճարմանդը մեծ մասամբ զարդարում էին վերադիր տարբեր ձևի նախշերով, արծաթե թելերով նուրբ հյուսվածքներ էին կերտում, և ապա զարդարում այն թանկագին քարերով: Հայաստանի ոսկերիչ վարպետները գոտիները պատրաստելու ժամանակ օգտագործել են նաև արծնակիտման (էմալի) տեխնիկան: Այդպիսի օջախ-



Նկ. 44. Արծաթե դոշիկ, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան

ներից Հայաստանում աչքի էր ընկնում Ղարաբաղի Շուշի քաղաքը, որտեղ XVIII—XIX դարերում կային արծնակիտման լավագույն վարպետներ։ Այդ տեխնիկայով զարդարում էին գոտիներ, բաժակներ, ափսեներ, դաշույնի դաստակներ և այլ իրեր։ XVIII—XIX դարերում նույն ձևով պատրաստում էին նաև ապարանջաններ ու կրծքի գյարդանկըղներ։ Այդ ապարանջանները կազմված էին 7—8 արծաթե տախտակներից, որոնց վրա ոսկերիչ վարպետը փորագրում էր ցանկացած քանդակը և ապա սևադով ծածկում, իսկ վրայից երբեմն վերադիր հատիկներով և ակնյից երբեմն վերադիր հատիկներով և ակնոցով զարդարում։ XVIII—XIX դարերում Նում շատ տարածված էր հյուսվածքաձև ապարանջանը, որը վրայից զարդարում էին սևադած վերադիր նախշերով։ Այդպիսի ապարանջաններին տեղացիներն անվանում էին բլազուկ։ Տաճկահայաստանում կանայք գործածում էին ապարանջանի մի այլ տեսակ, որը կոչվում էր գյուլբաղ։ Գյուլբաղները պատրաստում էին հատկապես դեղին հուլունքներից, երբեմն էլ՝ արծաթից։ Այդ ապարանջանների վրա ոսկերիչ վարպետները համեմատաբար ավելի քիչ աշխատանք էին դործադրում, որովհետև վարպետին մնում էր միայն գյուլբաղի արծաթե տախտակի պատրաստումը։ Այդ ձևի ապարանջանները ավելի շատ գործածում էին գեղջկուհիները (նկ. նկ. 45, 46)։

XVII—XIX դարերում Հայաստանի մանավանդ աղնվական դասի հայ կանանց մոտ որպես կարևոր զարդ, ինչպես գիտենք, կիրառվում էին վզնոցները, որոնք ո՛չ միայն չէին կորցրել իրենց նշանակությունը, այլև դարձել էին ավելի բազմազան, պատրաստվում էին նույնիսկ ոչ ազնիվ մետաղից, թեև պահպանում էին պատրաստման նախկին տեխնիկան։ XVII—XIX դարերի վզնոցներից շատերը, ինչպես, օրինակ՝ Վանի Ոզմի գյուղի և այլ տեղերի վզնոցները, նման են Դվինից գտնված ոսկե հատիկավոր մանյակին։ XVII—XIX դարերում հայ կանայք կրել են նաև այնպիսի վզնոցներ (փերիշան), որոնք զարդարվում էին նաև կենդանական պատկերներով (նկ. 47)։

Ինչպես փաստերը ցույց են տալիս, Հայկական բարձրավանդակի բնակչությունը՝ թե՛ իշխող դասը և թե՛ գյուղի աշխատավոր ժողովուրդը՝ դարեր շարունակ կրել են արդ ու զարդեր։

Իշխող դասի՝ աղնվականների, հոգևորա-



Նկ. 45. Գոտու արծաթե ճարմանդ, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան

կանների ու խոշոր առևտրականների խընջույքի սեղաններից անպակաս են եղել բաղմատեսակ ոսկե և արծաթե բաժակները, ափսեները, սափորները և զանազան տեսակի տուփեր ու այլ իրեր։

Հայ ոսկերիչները այդ իրերը պատրաստելիս կիրառել են իրենց արվեստում այնպիսի օրնամենտներ, որոնք համապատասխանում էին տվյալ էպոխայի իդեոլոգիային։ Բայց չմոռանանք ասել, որ միաժամանակ արհեստավորը իր պատրաստած իրերի վրա պահպանել է այնպիսի քանդակներ (վերցրած մանրանկարչությունից, քարերի քանդակներից), որոնք դարեր շարունակ գոյություն են ունեցել և կապված են ժողովրդի ստեղծագործության հետ։ Միջնադարյան ոսկերչության թեմատիկայի մասին խոսելիս մենք պետք է նկատի ունենանք հատկապես XVIII—XIX դարերում պատրաստված իրերի վրա եղած քանդակները, որովհետև՝ բացառությամբ Դվինի արդ ու զարդի, մեր ձեռքի տակ չունենք մինչ XVII դարը եղած այնպիսի իրեր, որոնք հնարավորություն տան որոշակի եզրակացության գալու։ Եթե վաղ միջնադարում հայտնաբերված արդ ու զարդի միջոցով հնարավոր չէր պատկերացնել ոսկերչական արվեստի մեջ կիրառվող թեմատիկան, որ անշուշտ արտահայտել է իշխող դասի իդեոլոգիան, ապա XVIII—XIX դարերի ոսկե և արծաթե իրերը ո՛չ միայն հնարավոր են դարձնում ցույց տալու Հայաստանի ոսկերչական արվեստում գոյություն ունեցող առանձին ճյուղերի զարգացման աստիճանը, այլև այն, որ հայ ոսկերիչները, բացի բուսական, կենդանական օրնամենտներից ու դիմանկարներից, քաղաքացիական արդ ու զարդի վրա կիրառել են նաև կրոնական նկարներ։ Հայ ոսկերիչները թեև իրենց արվեստում տվել են ժամանակի իշխող դասի իդեոլոգիային համապատասխան թեմատի-



Նկ. 46. Արծաթե ապարանջանները, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան, գծ. Առաքել Պատրիկի

Նկ. 47. Արծաթե վզնոց, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան

կա, սակայն նրանք օգտագործել են նաև ժողովրդական ստեղծագործության արդյունքը հանդիսացող հետաքրքիր օրնամենտներ։

Դ. ՈՍԿԵՐՉՈՒԹՅԱՆ ՕՋԱԽՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ

Ոսկերչությունը և արծաթագործությունը Հայաստանում զարգացած են եղել դեռևս հնագույն ժամանակներում, որի մասին մենք արդեն մանրամասն խոսել ենք։ Պետք է նշել, որ պատմական Հայաստանում գոյություն են ունեցել այնպիսի կենտրոններ՝ օջախներ, ուր ոսկերչության առանձին ճյուղերի մասնագիտացումը ավելի է խորացել ու հասել զարգացման բարձր աստիճանի։

Տասնիններորդ դարի առաջին կիսին, արևմտահայերի գաղթի հետ միասին լավագույն ոսկերիչ արհեստավորները հատկապես էրզրումից և Վանից գնում են Արևելյան Հայաստան՝ իրենց հետ տանելով ոսկերչական բարձր արվեստի կուլտուրան. նրանք կենտրոնանում են Ախալցխայում, Ախալքալաքում, Երևանում, Ալեքսանդրապոլում, իսկ նրանց որոշ մասն էլ անցնում է նաև Անդրկովկասի քաղաքներից՝ Թիֆլիս, Հյուսիսային Կովկաս, Լեհաստան, Ռուսաստան, Պարսկաստան, Կոստանդնուպոլիս և արտասահմանյան այլ երկրներ։ Չմոռանանք այստեղ հիշելու, որ Արևելյան Հայաստանի քաղաքներից Ղարաբաղի Շուշի քաղաքը XVIII—XIX դարերում նույնպես ոսկերչական աշքի ընկնող կենտ-

րոններից մեկն էր, ուր ոսկերչության մեջ զարգացել էր յուրահատուկ ոճ և պատրաստման ուրույն տեխնիկա. Շուշի քաղաքում հայ ոսկերիչները մասնագիտացել էին հատկապես արծնակիտման (էմալի) արվեստի մեջ։

Եղել են նաև այնպիսի օջախներ, ինչպես՝ Վանը, Էրզրումը, Ախալցխան, որտեղ ոսկերիչները մասնագիտացած էին մի քանի ճյուղերում։

Վ ա ն.— Ոսկերչության հնագույն կենտրոններից պետք է համարել Վասպուրական նահանգի Վան քաղաքը։ Այս քաղաքում, որը եղել է ուրարտական պետության կենտրոնը, արդեն հնագույն ժամանակներից ըսկսած բարձր զարգացման էր հասել մետաղների մշակումը, այդ թվում նաև ոսկերչական արհեստը։ Հնագիտական հետազոտությունները Վանում, մասնավորապես Թոփրախ-կալեում կատարված պեղումների հետևանքով, հայտնաբերել են ոսկե, արծաթե և բրոնզե զարդեր, որոնք որոշակի հաստատում են, որ ոսկերչությունը համարվել է Վանի բնիկների հիմնական և ամենակարևոր արհեստներից մեկը։ Բազմաթիվ առարկաների մեջ հայտնաբերվել է նաև մի արծաթե տուփ՝ ծծմբարծաթի փոշու մնացորդով (սևադ), որը հաստատում է սևադի տեխնիկայի հնագույն լինելը։

Ինչպես մի շարք քաղաքներում, այնպես էլ Վանում ոսկերչությունը որոշ շրջանում (XIV—XVII դարերում) թուլանում է, քանի որ լավագույն արհեստավորները բուն երկրից ստիպված էին գաղթել, իրենց հետ տանելով նաև այդ արվեստը, սակայն ժամանակավոր դադարից հետո, XVII դարի առաջին կիսից սկսած, մյուս արհեստների հետ միասին ոսկերչությունը նորից վերակենդանանում է և, ինչպես փաստերը ցույց են տալիս, XIX դարի 70—80-ական թվականներին Վանի ոսկերչական արհեստանոցների թիվը արդեն հասնում է 70-ի. սրանք ըստ իրենց մասնագիտության բաժանվում էին հիմնականում հետևյալ ճյուղերի՝

1. Հատիկավոր և արծաթե թելի գործ (շիֆթիշի), որ Վանում անվանում էին գավարսալի գործ։

2. Դրվագում (շեկանկա). Վանում այդ կոչվում էր չուքուրմա։

3. Փորագրություն։

4. Տավելի (քաշվածք)։

5. Բաղթաիշի (թերթավոր)։

6. Ոսկեջուր։

Սևադի տեխնիկայի կիրառումը, ինչպես տեսնում ենք, Հայաստանի քաղաքներում, մանավանդ Վանում, գոյություն է ունեցել հնագույն շրջանից։ Դժբախտաբար, միջնադարից սևադի գործին վերաբերող նմուշներ գրեթե չենք հայտնաբերել (բացի Դվինի մատանուց). հիմնական պատճառը, կարծում ենք, այն է, որ հիշյալ վայրերում սիստեմատիկ պեղումներ չեն կատարվել։ Սակայն սևադի տեխնիկայի մասսայական կիրառումը, հատկապես Վան քաղաքում, ակընհայտ է XVIII—XIX դարերում։ Ծծմբար ծաթի գործածումով պատրաստում էին ծխախոտի տուփեր, բաժակակալներ, սափորներ, ափսեներ, դոտիներ, ապարանջաններ և այլ իրեր։ Այդ աշխատանքը բավական բարդ է և սերտորեն կապված փորագրության հետ։

XIX դարի I կիսին Վանում ուժեղանում է թաղթաիշի (թերթավոր) գործը. այս մասնաճյուղի գծով և ծծմբարծաթի գործադրումով պատրաստում էին թե՛ զարդարանքներ և թե՛ այլ իրեր։ Վանի սևադի նմուշներ կան Պետպատմական թանգարանի Ազգագրական բաժնում, որոնցից հիշատակության արժանի են մի քանիսը, պատրաստված Վանում։

№ 2429 արծաթե գավաթը ունի բարձր պատվանդան, զարդարված է բուսական քանդակներով ու նկարներով. կենտրոնում շրջանակի մեջ փորագրված է Վարագա վանքը, էջմիածինը և Երուսաղեմի ս. Հարության տաճարը։ Հետաքրքիր աշխատանք է 3326 համարի տակ եղած սափորը, պատրաստված սևադով։ Արծաթե այդ սափորը տանձաձև ու երկայնավիզ է, վրան փորագրված են երեք շարք տեսարաններ ու պատ-



Նկ. 48. Արծաթե սափոր սևագած, Վանից, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան

մական դիմանկարներ։ Առաջին շարքում՝ վերևից քանդակված են Մովսես Խորենացին, Գ. Նարեկացին, Մ. Մաշտոցը և Գրիգոր Լուսավորիչը. երկրորդ շարքում՝ Հայկ Նահապետը, Տիգրան Բ-ն, Տրդատը և Վարդան Մամիկոնյանը. երրորդ շարքում՝ Մասիսը, Անին, էջմիածինը և Տեկորի եկեղեցին (նկ. 48)։

Ինչպես տեսնում ենք, ոսկերիչ վարպետները իրենց արվեստում կիրառել են ո՛չ միայն բուսական, երկրաչափական օրնամենտներ, այլև աշխատել են փորագրել պատմության հետ կապված կարևոր անձնավորությունների դիմանկարներն ու պատմական հուշարձանները։ Վանի ոսկերիչների ձեռքով են պատրաստվել հարսանյաց արկղ-

Նկ. 49. Արծաթե բաժակակալները սևադած, Վանից, XIX դ.
Պետ. պատմական թանգարան

ները, կանացի պայուսակները, ծխախոտի տուփերը, գրիչները, տանաքի ամանները և բաժակները (նկ. 49)։

Հետաքրքիր սևադի աշխատանք է № 3346 ծխախոտի տուփիկը՝ նրբագույն քանդակնե-րով. պատկերված է սյունազարդ մի պալատ, որտեղ Շամիրամ թագուհին հանդիպում է Արա Գեղեցկին. տուփը պատրաստված է Վանում (նկ. 50)։

№ 3564 արծաթին պայուսակը ամբողջովին սևադի աշխատանք է. վրան քանդակված են ռազմական տեսարաններ. ռազմիկներից մե-կը ձեռքին բռնած ունի նիզակ և վահան, մյուսը՝ նետ ու աղեղ և այլ զործիքներ. պատ-րաստված է վանեցի ոսկերչի ձեռքով։

№ 2357 ծխախոտի սևադած տուփը նույն-պես պատրաստված է Վանում. տուփի վրա փորագրված են բուսական քանդակներ. առաջին երեսին երկու թուրան, կենտրոնում՝ Թուրքական զինանշանը։ Ինչպես օրնամենտ-ներն են հատատում, այս տուփի պատ-վիրատուն եղել է Թուրք, և հայ ոսկերիչը կա-տարել է այդ պատվերը պատվիրատուի ճա-շակի համաձայն։

Ծծմբարծաթի գործածությունը զարկ տվեց փորագրությանը, իսկ փորագրությունն իր հերթին զարգացրեց և գեղարվեստական ձև տվեց սևադին։ Այս գործի մեծ պահանջը և արտահանումը պատճառ դարձան փորա-գրական աշխատանքի է՛լ ավելի ընդարձակ-մանը։

Վանի ոսկերիչները ո՛չ միայն սևադով պատրաստած զարդերով բավարարել են տե-ղացիների պահանջները, այլև մեծ քանա-կությամբ արտահանել են այն Կ. Պոլիս ու Թյուրքիայի մյուս քաղաքները։ Սկզբում Պոլսում սևադը համարվում էր Վիեննայի գործ, սակայն շուտով, վանեցի վարպետ-ների արտահանած իրերի շնորհիվ, այդ հրա-շակը վերագրվեց Վանին։ Հետագայում սևա-դի ճյուղը զարդանում և Կովկասից անցնում է Մայկոպ, Տուապ։ Վանի վարպետները,

Նկ. 30. Մխախոտի արծաթե տուփ. Շամխորի հանդիպումն Արա Գեղեցկի հետ. փորագրութ. XIX դարի

XIX դարի վերջերին և մինչև XX դարի սկզբի գաղթը, իրենց արհեստանոցներում աշխատեցնում էին մեծ քանակությամբ աշակերտների, որոնց թիվը հասնում էր 18—20 հոգու. ամբողջ աշխատանքը կատարվում էր ձեռքով, մեքենայացում չկար։ 60—70-ական թվականներին, ոսկերչությունը մասնավոր փայլ ու համբավ էր ստացել Վանի մեջ, որի հետ միասին ծաղկել էր նաև փորագրությունը։ Վերջինս գլխավորապես կատարվում էր արծաթի ու ոսկու, քիչ դեպքում՝ «պաֆոն»-ի վրա.— սևադով (սավադ) զարդանախշում էին հատկապես արծաթե իրերը՝ տուփեր, ժամացույցի շղթաներ, ապարանջաններ, դինդեր, մատանիներ, գրիչներ, թանաքամաններ, մտրակի կոթեր, օղու բաժակներ, որոնց մեջ պատրաստում էին զսպանակավոր ձկնիկներ։ Բոլորը պատրաստվում էին արևելյան ոճով։

Պատմական փաստերն ու նյութական մնացորդները, ինչպես տեսանք, ցույց են տալիս, որ հատիկավոր տեխնիկան ամենից շատ տարածված ձևն է Հայաստանում։ Այդ տեխնիկան բավական տարածված էր նաև Վանում։ Այս արվեստով զարդարում էին եկեղեցական սպասները, կանանց գոտինները, ճարմանդները, ապարանջանները, վզնոցները, մախշաները, կրծկալները, բաժակները և զանազան տեսակի հարսանյաց տուփերը։ Վանում գավարաալի (հատիկավոր) գործի վրա աշխատող ոսկերիչ վարպետները կենտրոնացած էին Վան քաղաքի ս. Նշան կոչված եկեղեցու մոտ։

Հատիկավոր տեխնիկայի հետ սերտորեն

կապված է նաև ոսկե և արծաթե թելերից հյուսվածք պատրաստելու տեխնիկան, չիթ-բիշին։ Այս արվեստի լավագույն վարպետները նույնպես աշխատել են Վանում, նրանց ձեռքով պատրաստած արդ ու զարդերը արտահանվում էին նույնիսկ երկրից դուրս։

Քաշվածքի գործի (տավելիի) մասնագետ վարպետները պատրաստում էին և եկեղեցական և աշխարհիկ իրեր. աշխատանքը կատարվում էր ձեռքով. նրանց գործիքները նման էին պղնձագործների գործիքներին, ունեին մեծ, փոքր և տարբեր ձևի սալեր, մուրճեր՝ իրին ելևէջային ձևեր տալու համար։ Այս ձևով շինում էին խաչերի պատվանդաններ, բաժակներ, սրվակներ և այլն։ Քաշվածքի գործը ավելի լավ էր ստացվում, երբ զարդարվում էր այն դրվագման ու արծնապատման միջոցով։

Ոսկեզօծելու ձևը Վանի ոսկերիչներին հասել էր շատ հնից, այն անվանում էին պուտուկի ջուր, կատարում էին շատ պրիմիտիվ ձևով։

Իրը ոսկեզօծելու համար պղնձե ամանը լցնում էին տաք ջրով, իսկ մեջը տեղավորում էին հողե ամանով ոսկեջուրը, այդ ոսկեջրի լուծույթի մեջ կախում էին կիսաշրջանաձև ցինկից թերթիկ, որի ծայրին հագցվում էր պղնձից մի թել, սրանով ոսկեջրի լուծույթի մեջ կախվում էր ոսկեջրվելիք իրը. այս մեթոդով ոսկեզօծելու գործը Վանում շարունակվում էր մինչև XX դարի սկիզբը։ Բացի ոսկեջրիլուց, կային արհեստավորներ, որոնք դունավոր ֆոնի վրա (փայտ, պղինձ, ոսկր, էմալ, արծաթ) կատարում էին ոսկե նախշեր, մեծ մասամբ բուսական քանդակներ։ Իրը պատրաստելուց հետո, առանձին ամանի մեջ վերցնում էին վեց մաս ոսկի և մեկ մաս անդիկ, խառնելով հալում և ստանում էին հատուկ հեղուկ։ Ոսկեզօծվելիք առարկան, լիներ զարդ, անոթ, կամ զենք, ամբողջությամբ ծածկվում էր մոմով։ Այն մասը, որ ցանկանում էին ոսկեզօծել, փորագրում էին մոմի վրա, իրենց ցանկացած օրնամենտը և այդ մասն ամբողջովին ազատում մոմից և ապա հալված ոսկեջուրը լցնում էին այդ քանդակած մասը, որոշ ժամանակից հետո, երբ անդիկը գոլորշիանում էր, իրը անջատում էին մոմից և ստացվում էր ոսկե նախշ կամ գիր։ Ոսկերչության այս ճյուղը տարածված էր ո՛չ միայն Վանում, այլև Ախալցխայում, Ախալքալաքում, Ալեքսանդրոպոլում, Երևանում և հատկապես Շուշիում, որտեղ շատ հաճախ ոսկեզօծում էին նաև էմալը։

Վանի ոսկերիչները, արծաթն առանձնացնում էին ծանր մետաղից. շատ անգամ այդ ձևով զտում էին նաև արհեստանոցի աղբը (հողը), իրենց տերմինով՝ կալ անել։ Այդ գործողությունը կատարվում էր հետևյալ կերպ։ Նախ հողը լվանում էին այնքան, որ հատակին մնար միայն մետաղը խառը վիճակում՝ արծաթ, անագ, կապար, պղինձ և այլն։ Այնուհետև գետնի վրա պատրաստում էին երկու փոս, իսկ փոսերի միջև բացում էին փոքրիկ անցք. հատուկ սոսինձով շաղախում էին մետաղյա գնդիկները, ապա տաքացրած գնդիկները լցնում մի փոսի մեջ, վրան լցնում ածուխ, և վառում մինչև հալվելը, որից հետո փոսերի միջի անցքով մետաղյա հալած նյութը անցնում էր երկրորդ փոսը. այդ ամբողջ պրոցեսը տևում էր երկու օր։ Այնուհետև՝ հալած ածուխին խառնում էին կապար, որպեսզի շուտ մաքրվի, վերջում արծաթը ջրով սառեցնում և դուրս էին հանում, մնացած մետաղները մրի հետ ամրանում էին։ Այդ մնացորդը կոչվում էր քինա։

Երգնկա.— Հայաստանի հնագույն քաղաքներից Երզնկան աչքի էր ընկնում ո՛չ միայն իր նուրբ գործվածքներով, այլև ոսկերչական արհեստով, գեղարվեստական նուրբ իրերի ու զարդերի կերտումով։ Երզնկայի հայ ոսկերիչ արհեստավորները մեծ մասամբ պատրաստում էին եկեղեցական սպասներ ու ձեռագրերի կազմեր։ Հիշատակության արժանի է սուրբ Նշան եկեղեցու ավետարանի պահպանակը, որը հանդիսանում է ժե դարու գործ։ Երզնկայի հայ ոս-

կերիչները հատկապես մասնագիտացել էին դրվագման (շեկանկա) գործում, որը տեղական բարբառով կոչվել է կափարթմա:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ոսկերչությունը Երզնկայում թուլանում է և կորցնում է իր նախկին նշանակությունը:

Բաղեշ.— Հայ ոսկերչությունը զարգացած էր Բաղեշ (Բիթլիս) քաղաքում ևս, ինչպես ցույց է տալիս ուստա Զաքարի 1622 թ. շինած՝ ավետարանի արծաթե ոսկեջրած կազմը: Հիշյալ կազմի վրա հայ վարպետը կատարել է նաև արծնակիտման (էմալի) աշխատանք: Բացի այդ, Պետական պատմական թանգարանում կենտրոնացած բազմաթիվ արծաթե զարդերի մեջ մենք ունենք կանացի զլխի հարդարանքներ, ձեռքի ապարանջաններ և մեջքի կամարներ, որոնք պատրաստված են Բաղեշում և կրում են իրենց վրա նուրբ զարդեր: XX դարի սկզբներին Բաղեշի ոսկերչական արհեստն ևս ապրում է իր անկման շրջանը:

Կարին.— Հայաստանի հնագույն և հայ ոսկերչության կարևոր օջախներից է եղել Արևմտյան Հայաստանի առևտրա-արդյունագործական կենտրոն Կարինը (Էրզրում), որտեղ հայ ոսկերիչները արտադրել են նրբագեղ գեղարվեստական իրեր:

Միջնադարի վերաբերյալ Էրզրումից մենք չունենք նյութական մնացորդներ, սակայն հայ պատմիչները, երբ խոսում են Էրզրումի հյուսվածքեղենի մասին, հիշում են նաև հայ ոսկերչության գործերը: Էրզրումի ոսկերիչները իրենց աշխատանքներում կիրառել են սևազը, դրվագումը և փորագրությունը, սակայն ավելի խորը մասնագիտացած էին շիֆթիշիի արվեստում: Էրզրումը ո՛չ միայն միջնադարում, այլև XVIII—XIX դարերում ավել է թելի գործի լավագույն վարպետներ:

1829—30 թվականներին, ռուս-թյուրքական պատերազմներից հետո, սկսվում է ուժեղ գաղթ և Կարնո (Էրզրումի) արհեստավորների ու առևտրականների մեծ մասը գաղթում է. գաղթում են նաև ոսկերիչ արհեստավորներից շատերը, որոնք բնակություն են հաստատում Ախալցխայում, Ախալքալաքում և Ալեքսանդրապոլում:

XIX դարի վերջերին Հակոբ Բագրատունին իր մի հոդվածում այսպես է նկարագրում Էրզրումի արհեստավորների կատարած աշխատանքը: «Էրզրումում հայոց ձեռքն է մյուս արհեստների հետ միասին նաև ոսկերչությունը: Ահա աղնվական արհեստ մ՛ալ, որ կգտնվի Էրզրումի հայոց ձեռքը, ոսկերիչները կհալեին, կծեծեին դերձանի ու մատղի բարակությամբ արծաթը, սպիտակ ու փայլուն. ոսկին դնդին ու կարմրուկ և կշինեն տեղացի իդեալի սեռին մեջքի համար ընտիր կամարներ (գոտիներ), որոնք Պոլսի արհեստավորներին զարմանքը կգրավեն: Շապիկի թևի և կուրծքի ընտիր կոճակներ կպատրաստեն հոն, մինեի, սավառի այս երկու տեսակն էլ հարգելի են, սակայն, կոճակի տակի մասը (սուռթալը) պետք է եվրոպական ճաշակով լինի»[1]:

Հեղինակը Էրզրումի վարպետներին կոչ է անում, որ նրանք մեծ քանակով ու բարձր ճաշակով պատրաստեն զարդեր, որպեսզի բացի իրենցից դրացիները ևս գնեն:

XIX դարի սկզբներին հայկական կոտրածների ու սուլթանական դաժան լծի հետևանքով Տաճկահայաստանի մյուս քաղաքների հետ միասին Կարինը (Էրզրումը) ևս կորցնում է իր տնտեսական ու քաղաքական դիրքը. արհեստները, այդ թվում և ոսկերչությունը ապրում են անկման շրջան: Չնայած այդ բոլորին, ոսկերչական արհեստը շարունակում է իր գոյությունը պահպանել այժմ արդեն Ախալցխայում, Ախալքալաքում, ուր հայ ոսկերիչները շիֆթիշիի (թելի) գործը հասցնում են զարգացման բարձր աստիճանի. նրանց արտադրած ոսկե զարդերը հարգի էին ո՛չ միայն Հայաստանում, այլև Կովկասում ու Ռուսաստանում: Բացի շիֆթիշիից, Ախալցխայի ոսկերիչները լավ գիտեին նաև դրվագման և արծնակիտման աշխատանքը:

---

1 «Բյուզանդիոն», 1890, գիրք. 31:



Նկ. 51. Արծաթե դոռի Ախալցխայից, XIX դար։
Պետ. պատմական թանգարան

XVIII—XIX դարերում հայ ոսկերիչների թիվը Ախալցխայում և Ախալքալաքում մեծանում էր, դրա հետ մեկտեղ ուժեղանում էր ոսկերչական իրերի արտահանումը։ Թելի արվեստով պատրաստվում էին ամենանուրբ բաժակակալներ, տուփեր, ականջօղեր, ապարանջաններ, կրծքի զարդարանքներ ու դռիններ, որոնց նմուշները գտնվում են Պետ. պատմական թանգարանում։ Այստեղ արժե հիշատակել Ախալցխայի ոսկերիչների ձեռքով պատրաստած № 1131 դռին, որ ամբողջությամբ թելի և հատիկավոր աշխատանք է, պատրաստված շատ նուրբ արվեստով (նկ. 51)։

Հետաքրքիր աշխատանք է № 1181 կանացի ոսկե ապարանջանը, որի քաշը 118 գրամ է, կազմված է 8 շղթայից, բարակ, նուրբ թելերով հյուսված ապարանջանի մի կողմը հավաքված է հաստուկ ոսկե տախտակով, որպեսզի մյուս մասը բազկից կախված վիճակում լինի. սա ապարանջանին տալիս է հաստուկ դեղեցկություն։ Ոսկերիչ վարպետը այս ապարանջանի վրա գործադրել է իր ողջ հմտությունն ու արվեստի նրբությունները։ Իր պատրաստման տեխնիկայով ու դեղեցկությամբ այս ապարանջանը պետք է համարել կանացի մի անզուգական զարդ։

Ախալցխայի վարպետները, բացի կանացի զարդարանքներից, թելի աշխատանքով պատրաստել են ամենանուրբ բաժակակալներ, անոթներ, դրիշներ և գլխի թանակներ, և այլն, որոնցից արժե հիշատակել ձվաձև քաղցրավենու ամանը, որ ամբողջովին թելի գործ է (նկ. 52)։

Արևելյան Հայաստանի քաղաքներից հիշատակության արժանի է Ղարաբաղի Շուշի քաղաքը, որտեղ XVIII—XIX դարերում զարգացած էր ոսկերչական արհեստը։ Հայ ոսկերիչ վարպետները պատրաստում էին նույնպես կանացի զարդեր և այլ իրեր։ Այստեղ ավելի շատ տարածված էր արծնակիտման (էմալի) աշխատանքը։ Ղարաբաղի ոսկերիչները էմալով զարդարում էին տղամարդկանց ու կանանց դռիները, զենքերը, բաժակներն ու տուփերը։

Ոսկերիչ վարպետը նախ պատրաստում էր մաքուր արծաթից իրը, այնուհետև, նախքան էմալ լցնելը, արծաթե շենքի երեսը խազում էր՝ առաջացնելով անհարթություններ, որպեսզի էմալը ավելի լավ ամրանա, ա-



Նկ. 32. Արծաթե մատուցարան Ախալցխայից, XIX դար.
Պետ. պատմական թանգարան

պա՝ հալած էմալը լցնում էր շենքի վրա և հաճախ էմալի վրա շատ նուրբ ոսկե թերթիկներ էր պատրաստում զանազան ձևի՝ տերևներ, վարդեր, աստղեր՝ ըստ պատվիրատուի ճաշակի և ոսկե թերթիկները փակցնում էր էմալի վրա մածուցիկ նյութերով և ապա կրկին հալեցնում էմալը, որի ժամանակ մամլած ոսկե թերթիկը ամուր միանում էր էմալին, երբեմն էլ այդ ոսկե թերթիկների վրա նորից զարդարում էր գույնզգույն էմալով։

Ոսկերչական արհեստի մեջ կիրառվել է երեք տեսակի էմալ. մեկը կոչվում է սառն էմալ, որ շատ տարածված էր, երկրորդ տեսակը՝ միջպատային, որ մեծ մասամբ օգտագործում էին եկեղեցական իրերի պատրաստման ժամանակ, հատկապես ձեռագրերի արծաթե կազմերի վրա եղած դիմանկարների պատրաստման ժամանակ։ Կար նաև մաքուր կամ գեղարվեստական էմալը, որ շատ հազվադեպ է օգտագործվել, որովհետև դժվար էր այն ճարել։

Էմալի գործը Շուշիում պահպանվել է մինչև XIX դարի վերջերը. հին վարպետներից հայտնի էր ուստա Բաղամը, որի ձեռքով պատրաստված մի ամբողջ կոմպլեկտ (բաժակներ, ափսեներ, դոտի և դաշույն) պահպանվում է Պետ. պատմական թանգարանում։

* * *

Ոսկերչական արհեստի զարգացած կենտրոնը Թյուրքիայում եղել է Կ. Պոլիսը։ Հայ ոսկերիչները, սկսած բյուզանդա-

կան տիրապետության շրջանից, իրենց գեղարվեստական գործերով առաջնակարգ տեղ են գրավել և տվել հանճարեղ ոսկերչապետներ սուլթանական պալատին. հայտնի է Հարություն Տյուզյանի տունը, որ 1600 թ. նկել էր Սեբաստիայի Տիվրիկե քաղաքից: Տյուզյանները իրենց ճարտար արհեստի



Նկ. 53. Արծաթե թասակ դվին համար. XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան

շնորհիվ պալատում մեծ հեղինակություն են ձեռք բերում և բացում են առանձին ոսկերչանոց, որ իր գոյությունը պահպանում է մինչև XIX դարի սկիզբը: Պոլսի լավագույն ոսկերիչներից մեծ մասը եղել են հայ վարպետները:

1806 թ. Պոլսում հրատարակվում է մի հրաման, ուր նշվում են 18 ծեր վարպետների անուններ. դրանցից 17-ը եղել են հայեր, իսկ մեկը՝ հույն[1]:

XVIII—XIX դարերում Պոլսի հայ ոսկերիչները պահպանել են իրենց ինքնուրույն ոճը. նրանք դրվագման (չուբուրթմայի) ճյուղի մեջ գերազանցում էին ուրիշներին. լավագույն մասնագետը համարվում էր Աղնավուր անունով մի հայ ոսկերիչ, որի անունով էլ Պոլսում այդ տեխնիկայով պատրաստած գործը կոչվում էր «Աղնավուրի» գործ:

XVIII—XIX դարերում դրվագման տեխնիկայով պատրաստում էին ձեռքի հայելիների հետևի արծաթե տախտակները, որոնք մեծ մասամբ լինում էին սրտաձև, կլոր և զարդարվում էին ուռուցիկ, դուրս ցցված օրնամենտներով և իրենց վրա կրում էին սուլթան Մահմուդի կնքադրոշմը: Հիշատակության արժանի են նաև հարսանյաց արկղիկները, որոնց վրա կային հայկական ոճի քանդակներ՝ խաղողի ողկույզներ, նման Զվարթնոցի քանդակներին: Այս տուփերի երեսների վրա ևս կային կնքադրոշմներ: Վերոհիշյալ բոլոր իրերը պատրաստվում էին դրվագման եղանակով:

Հայ ոսկերիչները մեծ չափով կենտրոնացած են եղել նաև Պարսկաստանի Թավրիզ և Սպահան քաղաքներում, ուր գաղթել էին նրանք դեռևս XIV դարում, իսկ XVII—XVIII դարերում հատկապես հայ ոսկերիչ վարպետները զարգացրին այնտեղ սևադի գործը՝ պատրաստելով ծխախոտի տուփեր, ղայլոնի մասեր, չիբուխներ, մատանիներ, ապարանջաններ, բաժակակալներ. բացի սևադից, Պարսկաստանում զարգացած էր նաև արծնակիտման, դրվագման և թելի ու հատիկի գործը:

Հայ ոսկերիչների դերը Լվովի արվեստում.— Լվովի հայ գաղութը, որ գոյություն է ունեցել XIV դարից, հիմնադրման օրից որոշ չափով իր մասնակցությունն է ունեցել լեհական արվեստում:

Լոպինսկին Լվովի ոսկերչությանը նվիրած իր աշխատության մեջ նշել է Արևմըտյան Ուկրաինայի դեկորատիվ արվեստի մեջ նկատվող հայ վարպետների մասնակցությունը:

1916 թ. Հ. Օրբելին գրել է առանձին հոդված 2 արծաթե գավաթների մասին, որոնցից մեկի վրա եղած հայերեն արձանագրությունից եզրակացրում է, որ այդ գավաթը պատրաստել է 1549 թ. Լվովի ոսկերիչներից Պետ-

[1] Այս հրամանի մասին տես Ա. Ք. Սաքոյան ի աշխատությունը, «Անահիտ», 1930, № 5, հունվար, էջ 9:

Նկ. 54. Արծաթե արծնակիտած բաժակներ
Պետ. պատմական թանգարան

րոս վարպետը, կիրառելով դրվագման տեխնիկան [1]։

Պ. Էտտինգերը իր հոդվածի մեջ նշում է, որ, եթե Լվովը «Եվրոպան Արևելքի հետ կապող օղակն էր, ապա հայերն էին Արևելքը Լվովի հետ կապողները»[2]։

Լվովում գաղթած հայերի գեղարվեստական գործունեության ամենաղարգացած ու կատարելագործված բնագավառը պետք է համարել ոսկերչությունը։ Հայ ոսկերիչները Լվովի համքարության մեջ կատարել են նաև ղեկավար դեր։ Լվովը արևելյան ոճի զենքերի արտադրության կենտրոնն էր և այնտեղի արհեստավորների ձեռքով պատրաստված իրերը մեծ հռչակ էին ստացել։ Դաշույնների պատյանները ծածկված էին ադնիվ մետաղով և շատ անգամ զարդարվում էին թանկարժեք քարերով ու սևադով։ Բացի այդ, Լվովում էին պատրաստվում նաև լեհ ազնվականության զգեստի վրայի անհրաժեշտ զարդերը՝ կոճակներ, ճարմանդներ, թևնոցի զարդեր և այլն։ Այս բոլոր առարկաները, որ առաջ ներմուծում էին Արևելքից, հետագայում հաջող կերպով պատրաստում են Լվովի տեղական հայ վարպետները, որոնք ժամանակի ընթացքում մշակում են իրենց աշխատանքի սեփական ոճը։

Ըստ Լոպինսկու, XV դարում Լվովի 18 ոսկերիչներից 6 հոգի եղել են հայ, հետագայում նրանց թիվը հասնում է 30-ի, որոնք համքարության կազմի կեսն էին կազմում, թեև երկար ժամանակ այդ ոսկերիչներին արգելված էր համքարության մեջ ղեկավար դեր կատարելու շնորհը։ Միայն 1654 թվականին թագավորի հատուկ որոշումով թույլ տրվեց համքարության անդամ ընտրել հայերից միայն չորս հոգու, սրանք, այնուամենայնիվ, համքարության ավագ դառնալու իրավունք չունեին։

Իսկ 1678 թվականից սկսած համքարության ավագ էին ընտրվում նաև հայերից։

[1] Տես Орбели И., „Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями", Христианский Восток, том V, выпуск I, 1916, стр. 5—7.

[2] «Խորհրդային արվեստ», Երևան, 1940, հունիս-հուլիս, Պ. Էտտինգերի հոդվածը։

XVIII դարի կեսերին հայերին հաջողվում է ընկավար դեր խաղալ դեկորատիվ արվեստի մի այլ ճյուղի մեջ՝ հատկապես գոտիների ճարմանդներ պատրաստելու գործում: Այդ ճարմանդները ոսկերիչների ձեռքով փորագրվում էին և նուրբ վերադիր հատիկներով ու սևագով նախշվում:

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ միջնադարյան հայ ոսկերիչները, բուն Հայաստանից գաղթելով զանազան երկրներ, ժամանակի ընթացքում այդ նոր միջավայրում կիրառելով իրենց արհեստը, կարողանում են ստեղծել ուրույն ոճ՝ հայ արվեստի մեջ:

Հայ ոսկերիչները աշխատել են նաև Եգիպտոսի Կահիրե քաղաքում, ուր ոսկերչական արհեստը լայն զարգացման է հասնում մասամբ հայ ոսկերիչների շնորհիվ, որոնց ձեռագործներով բավարարվում էին տեղական բնակչության պահանջները: Կահիրեում առանձնապես զարգացած է եղել ակնագործությունը (ակների ամրացման գործը), որի համար գոյություն ունեին առանձին արհեստանոցներ: Կահիրեի հայ ոսկերիչները համարվում էին նաև շիֆթիշիի ու սևագի լավագույն վարպետներ:

Հայկական ոսկերչական արվեստի լավագույն նմուշներից է նաև բուլղարահայ ոսկերիչների ձեռքով պատրաստած արծաթե մեծ խաչը [1], որը նվիրել են Սոֆիա քաղաքում կառուցված Ալեքսանդր Նևսկու անվան եկեղեցուն՝ սրա օծման առթիվ: Այդ խաչը պատրաստված է առանձակ հայ ոսկերիչների ձեռքով, որոնք դիշեր ու ցերեկ աշխատել են և երկու շաբաթվա ընթացքում կարողացել են տալ այդ մեծ աշխատանքը: Խաչի քաշը 10 կիլոգրամ է, իսկ բարձրությունը՝ 85 սմ. այն պատրաստված է աստիճանավոր պատվանդանների վրա, ծայրերը զարդարված են շիֆթիշի աշխատանքով և յուրաքանչյուր թևի վրա ունեն թանկագին քարեր, կենտրոնում պատկերած է Քրիստոսի խաչելությունը: Այս խաչի նվիրատվության առթիվ հայ արհեստավորներին հատուկ շնորհակալական պատասխան է ուղարկված, Այս խաչից բացի, բուլղարահայ ոսկերիչ արհեստավորների պատրաստած իրերից մեր ձեռքի տակ ուրիշ ոչինչ չունենք:

Հայ ոսկերիչները գործել են նաև Հնդկաստանում, որտեղից նրանց ձեռքով պատրաստված իրերը տարածվել են զանազան երկրներ, իսկ Հնդկաստանում եղած հայ վաճառականների շնորհիվ այդ նմուշներից բերվել են նաև Հայաստան:

Կալկաթայի հայ արծաթագործ վարպետները, անգլիական Ստևֆի ոսկերչական ֆիրմայի հսկողությամբ, Հովսեփ Բեխտի պատվերով՝ շինել է Հնդկական «Բուդա-գայա» կոչված նշանավոր տաճարի արծաթե մոդելը:

Երևանում պահպանվում են մի արծաթապատ ավետարան արձանագրված կազմով և մի արծաթե սկիհ՝ արձանագրված պատվանդանով: Այս երկու իրերը բերված են Աշտարակի եկեղեցուց և նրանց վրա եղած մակագրությունից պարզվում է, որ աշտարակցի նվիրատուները եղել են հարուստ վաճառականներ, որոնք առևտրական գործերով գնացել են Հնդկաստան և այնտեղի հայ ոսկերիչներին պատվիրել են վերոհիշյալ իրերը ու իրենց անունից նվիրել են Աշտարակի եկեղեցուն:

Բացի հիշյալ գաղութներից, հայ ոսկերիչները եղել են նաև այլ վայրերում, ուր նրանք ոսկերչական արվեստում նույնպես ավել են նուրբ ձեռագործներ:

Ե. ՈՍԿԵՐՉՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջնադարյան Հայաստանի արհեստները, դրանց թվում ոսկերչությունը, քիչ են ուսումնասիրված: Առավել քիչ է ուսումնասիրված ոսկերչության տեխնիկան:

Ուսումնասիրել հին Հայաստանի արհեստները՝ նշանակում է պարզել Հայաստանի տնտեսության և կուլտուրայի հետ կապված մի շարք հարցեր: Անհրաժեշտ է ո՛չ

1 Տես Թ ե ո դ ի կ, «Ամենուն տարեցույցը», կ. Պոլիս, հուլիս 1926 թ., էջ 524:

միայն իմանալ, թե արհեստագործության ի՞նչպիսի ճյուղեր են եղել, այլև այն, թե դարերի ընթացքում արհեստի յուրաքանչյուր ճյուղի համար ի՞նչ տեխնիկա է մշակվել։

Հայաստանում IX դարից հետո, քաղաքային կյանքի զարգացման հետևանքով բուռն վերելք է ապրում նաև արհեստագործությունը։ Խորանում է արհեստագործության մեջ գոյություն ունեցող աշխատանքի բաժանումը և արհեստների առանձին ճյուղերի մասնագիտացումը։ Ոսկերիչ վարպետները պետք է բավարարեին ազնվականության և գերազանցապես քաղաքային դասի աճող պահանջները, պատրաստելով ամեն տեսակի մետաղյա զարդեր ու իրեր, թե՛ տեղական շուկայի և թե՛ արտահանման համար։ Եթե առաջ դարբինն ինքն էր միայն պատրաստում երկաթե, պղնձե և նույնիսկ արծաթե ու ոսկե բազմատեսակ իրեր ու զարդեր, այժմ նա հաղիվ հնարավորություն ուներ բավարարելու գյուղատնտեսական գործիքների աճած պահանջները։

Արհեստների մասնագիտացման համար որպես լավագույն տեղեկատու կարող է ծառայել Երևանի Պետական Մատենադարանի № 695 ձեռագիրը։ Այս ժողովածուում զետեղված է 1221 թվականին արաբերենից հայերենի թարգմանված մի երազահանի հատվածը, որտեղ մետաղագործության վերաբերող արհեստների կողքին հիշվում է նաև ոսկերչությունը [1]։

Ոսկերիչները մշակել էին ոսկուց և արծաթից իրեր, զարդեր պատրաստելու մի շարք տեխնիկական ձևեր ու եղանակներ։

Ձուլման տեխնիկան.— Ինչպես մետաղագործության մյուս ճյուղերում, այնպես էլ ոսկերչության մեջ արդուզարդի և իրերի որոշ մասը պատրաստել են ձուլման եղանակով, որը կիրառվել է դեռևս բրոնզե դարում։ Ձուլման եղանակը ո՛չ միայն հին է, այլև եղել է գերիշխող։ Այդ մեթոդով աշխատել են թե՛ գյուղական դարբինները, որոնք միաժամանակ ոսկերչի գործ էին կատարում, և թե՛ գղյակներում, վանքերում ու քաղաքներում կենտրոնացած ոսկերիչ արհեստավորները։ Ձուլման համար ոսկերիչ վարպետներն օգտագործել են տարբեր տեսակի կաղապարներ։ Կաղապարներից հնագույնը, որ կիրառվել է բրոնզե դարում, պատրաստվում էր քարից կամ կավից։

Քարե կաղապարները լինում էին մեկերեսանի և երկուերեսանի։ Այն իրերը, կամ զարդերը, որոնց մի կողմը հարթ էր և պարզ, ձուլում էին մեկերեսանի քարե կաղապարով։ Ոսկերիչ վարպետը սկզբից քարի վրա փորում էր ձուլվող իրի մոդելը, որը բնականին բարդ ու դժվարությունների հետ կապված աշխատանք էր։ Մոդելը պատրաստելուց հետո ձուլվածքը լցվում էր կաղապարի վրա եղած հատուկ անցքից, որ մեծ մասամբ լինում էր ձագարաձև։ Շատ հաճախ մեկերեսանի քարե կաղապարներն իրենց վրա էին ունենում ձուլվածքը լցնելու նման հարմարանք, այդ դեպքում հալած հեղուկ լցնող անոթն իր վրա ունենում էր այնպիսի հարմարանք, որը հնարավոր էր դարձնում հալված մետաղը պահանջված չափով լցնել կաղապարի մեջ։

Մինչև այժմ հայտնի հնագույն կաղապարը հայտնաբերվել է Շենգավիթի 1937 թ. պեղումներից, դա պատկանում է II հազարամյակի սկզբին (ն. ք. մ. թ.)։ 1936 թ. Մուխանաթթափայի պեղումների ժամանակ, վերին շերտում, ջարդված ամանի մեջ պրիմիտիվ մի հնոցի կողքին գտնվեց մի կաղապար, որով ձուլել են մեդալիոն, հերոն և կրծքի զարդ [1]։

Սակր ձուլելու կաղապարներ գտնվել են Կարմիր բլուրից և Լենինականի մսի կոմբինատի շինարարական աշխատանքների ժամանակ բացված հնավայրերից (նկ. 55)։

Դամբարաններից հայտնաբերված իրերը ցույց են տալիս, որ կանացի զարդարանքները, սակրերը, սառը զենքերից՝ փոքր և

---

1 Տես Հ ՍՍՌ Մատենադարանի № 695 ձեռագիրը էջ 187։

1 Տեղեկագիր Պատմության և գրականության ինստիտուտի, № 1, 1938, էջ 214։



Նկ. 55. Բրոնզե իրեր ձուլելու հնագույն կաղապարները, գտնված Շենգավիթում, Մուխաննաթ-Թափայում, Լենինականում և կարմիր բլուրում, Պետ. պատմական թանգարան դ. Առաքել Պատրիկի

մեծ նիզակները, նետերը, դաշույններն իրենց դաստակներով, բրոնզե գուրզերը, ձիու սանձի մասերը, արձանիկները, կրծքի կապիչները, բուրգաձև մատանիները և այլ իրեր պատրաստվել են ձուլման եղանակով՝ կըրկնափեղկ կաղապարի միջոցով, որոնք անպայման ունեցել են մետաղի հեղուկ լցնելու համար ձագարաձև հարմարանք։

Միջնադարյան Հայաստանում ոսկերչության մեջ, բացի քարե կաղապարից, շատ տարածված և գործածական էր նաև այն կաղապարը, որը պատրաստվում էր հատուկ հողից և գործածվում էր մինչև մեր օրերը։ Այդ կաղապարը պատրաստելու համար վերցնում էին մետաղից պատրաստված 6—8 սմ. բարձրություն ունեցող փոքրիկ քառանկյունի արկղիկ՝ համապատասխան կափարիչով, դրա մեջ լցնում էին հատուկ մոխրագույն հող։ Ոսկերիչ վարպետը ցանկացած իրի համար պատրաստում էր մոդելներ՝ կապարից, պղնձից և մոմից։ Բարդ հատիկավոր զարդաքանդակներ պատրաստելիս



Նկ. 56. 1. Մետաղե կաղապար, 2. Ոսկերչի հալոց, 3. Ոսկերչի հալոց Դվինի պեղումներից, 4. Կաղապար ձողերի ձուլման համար. Պետ. պատմական թանգարան

անպայման օգտագործում էին մոմից պատրաստած մոդելներ։

Երբ ոսկերիչը ցանկանում էր ձուլել ձևոքի ապարանջան, մատանի կամ խաչ և այլ իրեր, վերցնում էր հատուկ հողով լցված կրկնափեղկ արկղ, ապա կապարից կամ պղնձից պատրաստած մոդելի միջոցով հողի վրա հանում էր պահանջվող զարդերի պատճենը, այնուհետև կաղապարի վրա եղած ձագարաձև անցքից լցնում մետաղե հեղուկը՝ հրակայուն կավից պատրաստված տարբեր մեծության անոթներից։ Կաղապարի մեջ լցրած հեղուկ ձուլվածքը մնում էր մինչև սառչելը, որից հետո ոսկերիչը հանում էր պատրաստի իրը և ցանկացած դեպքում հատուկ գործիքներով նրա վրա փորագրում պահանջվող նախշերը (նկ. 56)։

Հողե կաղապարի միջոցով հնարավոր էր կարճ ժամանակամիջոցում ձուլել մեծ քանակությամբ զարդեր և այլ իրեր։ Ձուլման տեխնիկայով են պատրաստված Կիրովականի Թագավորանիստ կոչված վայրի դամբարաններից գտնված մի արծաթե ապարանջան և ոսկե մի մատանի, որն իր վրա ունի չորս ոսկե գնդիկներ՝ ակի փոխարեն։ Այդ ապարանջանը և մատանին գտնվում են Պետական պատմական թանգարանում (№ № 1533 և 1544)։ Նույն եղանակով են պատրաստված մարդկանց և կենդանիների արձանիկները բրոնզից, ինչպես, օրինակ, Ադիամանի իշխանական դամբարանում գտնված բրոնզե եղջերուն, Վանում գտնված կնոջ կերպարանքով արձանիկը, Կարմիր բլուրում գտնված Թեյշեբա աստծու արձանիկը և շատ ուրիշ արձաններ։

Նյութական կուլտուրայի մնացորդները հաստատում են, որ ձուլման եղանակը ոսկերչության մեջ լայն չափով կիրառվել է նաև միջնադարում։ Եկեղեցական մեծ և փոքր խաչերի, սկիհների, զանազան անոթների և նրբանց վրա եղած վերադիր նախշերի մեծ մասը ձուլածո են։ Ձուլածո խաչերի բազմաթիվ օրինակներ, որոնք պատրաստված են պղնձից և արծաթից, գտնվել են Անիի պեղումներից։ Այդ խաչերից շատերի վրա ոսկերիչ վարպետը ձուլելուց հետո կատարել է փորագրություններ և կամ թանկարժեք քարերով զարդարել է դրանք։

1949 թվականի Դվինի պեղումների ժամանակ Կաթողիկեի հարավ-արևելյան կող-

մում, գտնվեց արծաթե մի խաչ, որի չորս թևերի անկյունների վրա կան գնդիկանըման հավելվածներ, որոնք հաստատում են, որ այդ խաչը պատրաստված է ձուլման եղանակով։ Արծաթե խաչի հետ գտնվեցին նաև արծաթից երկու մատանիներ, նույնպես պատրաստված ձուլման եղանակով։

X դարից հետո ձուլման տեխնիկայով պատրաստվել է կանացի զարդարանքների մեծ մասը, որովհետև շուկայի համար անհրաժեշտ էին արագ պատրաստվող և ստանդարտ իրեր, որոնց պահանջը զգում էր ո՛չ միայն ազնվական դասը, այլև քաղաքի, մասամբ և դյուղի բնակչությունը։ Մեծ քանակությամբ ձուլածո զարդեր ունենք թանգարանում, որոնք պատկանում են XVII—XIX դարերին։ Ձուլման եղանակով են պատրաստված այն բոլոր բրոնզե, երկաթե, արծաթե և ոսկե մատանիները, որոնց ակն ագուցանելու մասը հատ է և բուրգաձև։

1951 թ. ընկ. Բ. Առաքելյանի ղեկավարությամբ Գառնիում կատարված պեղումների ժամանակ գտնվել են արծաթե գեմմա-մատանիներ, որոնք նույնպես պատրաստվել են ձուլման եղանակով և ծառայել են որպես կնիք՝ վավերագրեր, մուրհակներ և նամակներ կնքելու համար։ Այդպիսի մատանիների ակի մասերը բուրգաձև են և կողքից ունեն ոսկուց պատրաստված գնդաձև հավելվածք՝ բավականին դուրս ընկած ձևով, որը հեշտացնում է կնքելը։ Նման ոսկե մատանի, որ պատկանում է XVI դարին, գտնվել է 1937 թվականին Նորագավիթում՝ հողային աշխատանքների ժամանակ։ Այս մատանին ունի մեծ քառանկյունի սպիտակավուն ակ, որի վրա հայերեն տառերով գրված մակագրությունից երևում է, որ սեփականություն է եղել հարուստ մի հայ վաճառականի և ծառայել է վավերագրեր ու մուրհակներ կնքելու համար։

Ձուլման եղանակով են պատրաստված մեր ձեռագրերի արծաթե կազմերի որոշ մասը և հատկապես նրանց վրա եղած վերադիր զարդերը, որոնք մեծ մասամբ բուսական օրնամենտներ ու կրոնական դիմանկարներ են։ Պետք է նշել նաև, որ անկախ այն բանից, թե ինչ տեխնիկայով են պատրաստված այդ արծաթե կազմերը, բոլոր դեպքերում վարպետներն աշխատել են նրանց վրա դնել ձուլածո զարդեր և պատկերներ։

Բազմաթիվ օրինակներից անհրաժեշտ է հիշել մի քանի ձեռագրերի կազմեր, որոնց վրա օգտագործվել են ձուլված վերադիր զարդեր, ինչպես, օրինակ, Մատենադարանի № 5592 ձեռագիրը, որի կազմը պատրաստված է դրվագման եղանակով և իր վրա ունի վերադիր նախշեր՝ կրոնական պատկերներ և բուսական զարդեր։ Նույնանման ձուլածո վերադիր զարդեր մենք տեսնում ենք նաև № 5651 ձեռագրի արծաթե կազմի, № 7775 (սևագիր), № 6763 (էմալի) արծաթե կազմերի ու բազմաթիվ այլ ձեռագրերի կազմերի վրա։ Այդ վերադիր զարդերը և դիմանկարները մասսայական ձևով պատրաստվում և օգտագործվում էին ո՛չ միայն ձեռագրերի կազմերի համար, այլև եկեղեցական սպասները, վահասները, մեռոնի ամանները, ծնծղաները, բուրվառները զարդարելու համար։

Կռելու և դրվագման տեխնիկան.—Հին Հայաստանում ոսկերիչ արհեստավորները ձուլման տեխնիկայի հետ միասին կիրառել են նաև կռելու և դրվագելու տեխնիկան։ Այս տեխնիկայի հնագույն լինելը հաստատվում է քարարկղե դամբարաններից հայտնաբերված իրերով ու զարդերով։ Եթե ձուլման եղանակով որևէ իր կամ զարդ պատրաստելու ժամանակ պահանջվում էր մեծ քանակությամբ մետաղ, ապա դրվագման միջոցով ոսկե կամ արծաթե իրեր ու զարդեր պատրաստելու ժամանակ գործածվում էր ավելի քիչ քանակությամբ ազնիվ մետաղ և ստացվում էր ավելի շատ իր, որովհետև ոսկերչի մուրճի հարվածների տակ ոսկե, արծաթե կամ պղնձե թերթիկները ավելի նրբանում և խտանում էին։

Կռելու և դրվագման տեխնիկան սերտորեն կապված են իրար հետ։ Սկզբում ոսկերիչը կամ արծաթագործը կռելու միջոցով պետք է

պատրաստեր դրվագման ենթակա իրի կմախքը և ապա անցներ արտաքին գեղարվեստական ձևավորմանը։ Շատ հաճախ պատրաստում էին այնպիսի իրեր, որոնք, պահանջում էին միայն կռելու աշխատանք և հարկ չէր լինում արտաքին ձևավորման։ Կռելու տեխնիկայով են պատրաստվել ո՛չ միայն զենքեր ու դյուղատնտեսական գործիքներ, այլև կանացի զարդերի որոշ մասը, ինչպես, օրինակ, ապարանջաններ, հատկապես լայն տեսակի, կրծքի զարդեր, ափսեներ, բաժակներ և անգամ եկեղեցական իրերի մի մասը՝ սկիհներ, մեռոնի ամաններ և այլն։

Ոսկերչության մեջ դրվագման ամենահնագույն օրինակը հայտնաբերվել է Կիրովական քաղաքում 1948 թվականի շինարարական աշխատանքի ժամանակ բացված կուրգանում[1]։ Այդ պեղումների ժամանակ հայտնաբերվեցին մ. թ. ա. II հազարամյակի կիսին պատկանող մի շարք իրեր և զենքեր՝ բրոնզից, կավից և քարից, որոնց հետ գտնվեցին նաև ոսկուց և արծաթից պատրաստած տարբեր ձևի անոթներ։ Այդ անոթների թվին պատկանող մի ոսկե բաժակի վրա ոսկերիչ վարպետը դրվագել էր 6 առյուծների քանդակ։

Անհրաժեշտ է նշել, որ դրվագման տեխնիկան կապված է մեծ դժվարությունների հետ և պահանջում է փորձառություն և համբերատարություն։ Ոսկերիչ վարպետները դրվագումը կատարում էին հատուկ գործիքներով և տարբեր մուրճերով, հատկապես արծաթե իրերի դրվագման ժամանակ, որն ավելի տարածված էր։ Այսպես, բաժակները, ափսեները, սափորները, զանազան տեսակի տուփեր, կանացի գլխի թասակներ և կրծքի զարդարանքների մեծ մասը պատրաստում էին արծաթից, որը համեմատաբար էժան էր և մատչելի շուկայական սպառման համար։ Ոսկերիչը ոսկին օգտագործում էր այն ժամանակ, երբ թագավորների, իշխանների, առևտրական դասի հարուստ ներկայացուցիչների կողմից տրվում էր հատուկ պատվեր։

Միջնադարում և ավելի ուշ շրջանում դրվագումը կատարվում էր մի քանի ձևով՝ մանր օրնամենտների դրվագում, հարթ դրվագում, և ուռուցիկ (ռելյեֆ) դրվագում։

Ինչպես ասացինք, նախքան դրվագելը, ոսկերիչը կռելու միջոցով պատրաստում էր իրը, որից հետո ձեռնարկում էր արտաքին ձևավորման, սակայն պատահում էր նաև, որ ոսկերիչը նախ մետաղե թերթիկի վրա դրվագում էր քանդակը և ապա կռելու միջոցով պատրաստում ցանկացած իրը։ Պետք է ասել, որ այս վերջին միջոցը քիչ էր կիրառվում ոսկերչության մեջ, որովհետև դրվագումից հետո, կռելու ժամանակ քանդակները կարող էին վնասվել։ Դրվագման միջոցով սովորաբար ոսկերիչը կարող էր պատրաստել այնպիսի իր, որի վրա կիրառված լինեն միայն հարթ կամ մանր քանդակներ։ Բայց հանդիպում ենք նաև այնպիսի իրերի, որոնց վրա դրվագված են ո՛չ միայն պարզ օրնամենտներ, այլև ուռուցիկ զարդանկարներ։ Մանր տեսակի օրնամենտներ կիրառվում էին մեծ մասամբ եզրանախշերի ժամանակ։ Մանր օրնամենտների համար կային հատուկ գործիքներ՝ նման ձողերի. այդ գործիքների ծայրերին պատրաստված էին զանազան տեսակի օրնամենտների մոդելները, փոքրիկ զարդանախշերով՝ կլոր շրջանակներ, փոս ընկած, ուռուցիկ, որոնք երբեմն դասավորված էին եռանկյունի կամ քառանկյունի ձևով։ Եթե ոսկերիչը ցանկանում էր բաժակի կամ թասի շուրջը զարդարել մանր օրնամենտներով, նախքան իրը պատրաստելը, արծաթե կամ ոսկե թերթիկի վրա մուրճի հարվածներով դրոշմում էր պողպատե ձողիկների վրա եղած օրնամենտները։

Եթե ոսկերիչը ցանկանում էր որևէ իրի

---

[1] Կուրգանի պեղման աշխատանքները ղեկավարել է Բ. Բ. Պիոտրովսկին։ Մասնակցել են պատմ. գիտ. թեկնածուներ ընկ. ընկ. Արմ. Միրզոյանը, Վ. Աբրահամյանը և Հ. Եղիազարյանը։ Պեղման արդյունքների մասին զեկուցել է Բ. Բ. Պիոտրովսկին։

վրա դրվագել ուռուցիկ երկրաչափական, բուսական կամ կենդանական օրնամենտներ, այդ դեպքում գնդասեղի ծայրերով ամբողջ քանդակը պատկերում էր մետաղե իրի վրա, երբեմն էլ ոսկերչական հատուկ գրչի ծայրով դծում ցանկացած քանդակը, ապա փոքրիկ մուրճի հարվածներով ծեծում էր իրը, մինչև որ գծված քանդակը ամբողջությամբ փոխանցվեր նրա վրա։ Քանդակի դրվագումը վերջացնելուց հետո վարպետը ուղիղ երեսից խորացնում և ավելի ռելյեֆ էր դարձնում այն։ Սակայն կային օրնամենտներ, որոնց համար պահանջվում էր կրկնակի դրվագում, այսինքն՝ դրվագում իրի և՛ ներսից, և՛ դրսից։ Այդ դեպքում վարպետ օրնամենտների մի մասը ներսի կողմից մուրճով հարվածում և ստանում էր ռելյեֆ օրնամենտներ, իսկ այն մասը, որտեղ քանդակը ներս ընկած պետք է լիներ, մուրճի հարվածները տրվում էին դրսի կողմից։ Երկու դեպքում էլ թե՛ ներսի, և թե՛ դրսի կողմից իրը ծածկվում էր սև ձուլթով՝ մուրճի հարվածներից մետաղը պաշտպանելու համար (նկ. 57)։

Հայաստանում թե՛ քարարկղե դամբարաններից և թե՛ ուրարտական շրջանին պատկանող վայրերից հայտնաբերվել են մի շարք իրեր՝ ոսկուց, արծաթից, բրոնզից, որոնք պատրաստված են դրվագման եղանակով։ Այդ իրերից մեկը, ինչպես ասացինք, Կիրովականի դամբարանից հայտնաբերված ոսկե թասն է՝ առյուծի քանդակներով։ Ազգագրագետ Ե. Լալայանի պեղումների ժամանակ Նոր Բայազետի շրջանի դամբարաններից մեկում գտնվել է բրոնզե մի թաս, որի վրա դրսի կողմից դրվագման տեխնիկայով պատկերված է ճառագայթաձև մի նախշ՝ նման արևի, իսկ 1929 թ. Գոլովինոյի դամբարանների պեղումներից հայտնաբերվել է բրոնզե թասակ, բայց ավելի մեծ չափի, խոր և թագի նման։ Այս կանացի գլխի թասակի վրա ավելի ռելյեֆ ձևով են դրվագված ակոսանման զարդեր։ Վերոհիշյալ թասը և կանացի գլխի թասակը պատկանում են առաջին հազարամյակի առաջին կեսին (մ. թ. ա.)։

Մետաղամշակումը և դրա հետ կապված ոսկերչությունը Հայկական բարձրավանդակում զարգացավ և կատարելագործվեց ուրարտական շրջանում։ Ուրարտական շրջանի նյութական մնացորդները հաստատում են, որ դրվագման տեխնիկան ամենից շատ տարածված ճյուղերից է եղել։ Այդ շրջանում ոսկերիչ վարպետներն իրենց նուրբ գործիքներով աշխատել են ո՛չ միայն ոսկու և արծաթի, այլև բրոնզի վրա։ Այն իրերը, որոնք հայտնաբերվել են Թոփրակ-կալեի և Կարմիր բլուրի պեղումների ժամանակ, հաստատում են, որ ուրարտական շրջանում ոսկերիչները դրվագման տեխնիկան կիրառել են բուսական, երկրաչափական և կենդանական քանդակներ անելու համար, իսկ ռազմական իրերի վրա մենք տեսնում ենք ռազմական բնույթի քանդակներ։ Այնտեղ կենաց ծառի կողքին դրվագում էին ռազմակառքեր, հեծյալներ և անգամ վիշապների պատկերներ։ Դրվագման լավագույն օրինակներ կարող են ծառայել Կարմիր բլուրում գտնված սաղավարտի և կապարճի վրա եղած ռազմակառքերի ու ռազմիկների ռելյեֆ քանդակները։ Լավագույն ձևով դրվագված է կապարճներից մեկը, որը հայտնաբերվել է 1950 թ. և մի վահան, որը հայտնաբերվել է 1951 թ. պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ Կարմիր բլուրում կատարված պեղումների ժամանակ։ Վահանի վրայի ցուլերի ու առյուծների քանդակները համեմատած սաղավարտի հետ՝ ավելի ուռուցիկ են և որոշակի. այս վահանը իր արվեստով ու քանդակներով նման է Թոփրակ-կալեում գտնված վահանին։

Ուրարտական շրջանից հետո մեր ձեռքի տակ չունենք միջնադարին վերաբերող նյութական մնացորդներ, որպեսզի կարողանանք գաղափար կազմել այդ շրջանի ոսկերչական արվեստի մասին և պարզել Հայաստանի ոսկերչության կապը հարևան երկրների հետ ու նրանց փոխազդեցությունը։ Այդ տեսակետից Հայաստանն առայժմ ավելի աղքատ նյութ ունի, քան նրա հարևան երկրներից Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդիան։



Նկ. 57. Դրվագման գործիքների մի քանի նմուշներ

Դրվագման տեխնիկայով պատրաստված իրերի լավագույն նմուշներով հարուստ է նաև Վրաստանը։ Այդ բանը հաստատվեց նաև պրոֆ. Բ. Կուֆտինի պեղումներով, որտեղից հայտնաբերված է դրվագման եղանակով պատրաստված ոսկե բաժակ՝ նման Կիրովականում գտնվածին և դույլանման անոթներ՝ արծաթից, զարձյալ դրվագած։ Այդ իրերը գտնվել են կուրգանից և պատկանում են երկրորդ հազարամյակի կեսին (Ն.ք.ա.թ.) [1]։

Դրվագման լավ օրինակներ հայտնաբերվել են նաև Արմազիի պեղումներից, որոնք մեզ գաղափար են տալիս հելլենիստական շրջանի ոսկերչական արվեստի մասին։ Պետք է նշել, որ դրվագման տեխնիկայով պատրաստված իրերի լավագույն նմուշներ են գտնվել նաև Ռուսաստանում (IX—XV դարերին վերաբերող) [2]։

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանի անմիջական հարևան ու նրա հետ կապ ունեցող երկրներում, ոսկերչական արհեստում դրվագման տեխնիկան զարգացած և ամենից շատ տարածված ճյուղերից մեկն է եղել։

Չնայած այն բանին, որ մենք միջնադարյան Հայաստանում դրվագման լավագույն օրինակներ դեռևս չունենք, սակայն մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները՝ թագավորների ու իշխանների հարուստ խրնճույքների մասին, որտեղ գործածվում էին ոսկե պնակներ ու բաժակներ, մեզ ենթադրել են տալիս, որ այդ իրերը, անշուշտ, ունեցել են իրենց վրա զանազան տեսակի քանդակներ։

Հայաստանի Պետական պատմական թանգարանը և Ձեռագրատունը հարուստ են XVII—XIX դարերին պատկանող ոսկերչական արվեստի լավագույն նմուշներով, որոնցից կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանում ևս այդ արհեստը բավականաչափ զարգացած է եղել։ Մենք համոզված ենք, որ նոր պեղումները կգան հաստատելու մեր այդ ենթադրությունը։ Հայաստանի ոսկերիչների դրվագման լավագույն նմուշներն են հանդիսանում Մատենադարանում գտնվող ձեռագրերից մի քանիսի արծաթե և ոսկե կազմերը։

Մատենադարանի XV դարին պատկանող № 6792 ձեռագրի կազմը արծաթից է և պատկանում է ավելի ուշ շրջանի։ Նա պատրաստված է դրվագման եղանակով։ Դրվագման լավ օրինակներից է նաև 1622 թ. Բաղեշում գրված № 5580 ձեռագրի կազմը։ Նրա արծաթե կազմի վրա կատարված է թե՛ դրվագման և թե՛ փորագրական աշխատանք։ Ձեռագրի կազմը պատրաստված է 1730 թվականին, սակայն կաշվե կազմի վրա եղած հետքերից երևում է, որ մինչև այդ նոր արծաթե կազմը, ձեռագիրն ունեցել է արծաթե հին կազմ, որը հետագայում կողոպտվել է կամ ոչնչացվել, այդ հաստատվում է կազմի ներսի կողմում մնացած արծաթե մեխիկների մնացորդներով։

Դրվագման լավագույն նմուշներից է № 9273 ձեռագրի կազմը։ Հիշատակարանից երևում է, որ այդ ավետարանը գրվել է 1494 թվականին, Գրիգոր աբեղայի ձեռքով։ Կազմի առաջին երեսի վրա ոսկերիչ վարպետը շատ ռելյեֆ ձևով դրվագել է Քրիստոսի պատկերը հիվանդներին բժշկելիս։ Ավետարանի կազմի չորս կողմերին դրվագած են բուսական քանդակներ, որոնց մեջ՝ վեցթևանի թերթիկներով ծաղիկը, որ շատ տարածված մոտիվ էր այդ դարերում։ Կան ձեռագրերի կազմեր, որոնք պատրաստված են կրկնակի դրվագման եղանակով. այդպիսին է № 5653 ձեռագրի արծաթե կազմը։ Սրա երկու երեսներին դրվագած են նույն օրնամենտները։ Կենտրոնում սրտաձև զարդ, մեջտեղում՝ կիսալուսին, վրան՝ փոքրիկ խաչ։ Կազմի վրա եղած փորագրությունից պարզվում է, որ ձեռագիրը արծաթապատված է 1781 թվականին՝ վանեցի Պետրոս վարդապետի պահանջով։ Այս արվեստով պատ-

[1] Տես Ե. Կ ու ֆ տ ի ն, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, стр. 62.

[2] Տես Б. А. Р ы б а к о в, Ремесло древней Руси, Москва, 1948, стр. 291.

բասւված ձեռագրերի բազմաթիվ նմուշներ են պահպանվում Մատենադարանում։

Կրկնակի դրվագման հետաքրքիր մի նմուշ է XVIII դարում Արևմտյան Հայաստանում պատրաստված թասակը՝ քանդակված կրկնակի դրվագման եղանակով։ Նման գլխի թասակներ մինչև XX դարի սկզբները հայ գեղջկուհիները կրել են իրենց գլխներին, որպես զարդարանք (նկ. 58)։

Բացի թասակներից, Հայաստանի ոսկերիչները կրկնակի դրվագման եղանակով պատրաստում էին զանազան տեսակի տուփեր, անոթներ, ափսեներ, բաժակներ, ձեռքի հայելիների պահպանակներ, որոնց վրա փորագրում և դրվագում էին ո՛չ միայն բուսական և երկրաչափական օրնամենտներ, այլև քանդակում էին խնճույքի, որսի տեսարաններ, պատմական ու առասպելական թեմաներ։

Դրոշմելու տեխնիկան.— Ոսկերչության մեջ, դրվագումից բացի, շատ տարածված էր նաև դրոշմելու տեխնիկան։ Այդ տեխնիկան իր արվեստով նման է դրվագման տեխնիկային, որ հետագա դարերում ավելի լայն ձևով կիրառվել է և փոխարինել նրան։ Եթե դրվագման եղանակով որևիցե իր կամ զարդ պատրաստելու համար պահանջվում է երկարատև աշխատանք, յուրաքանչյուր օրինակի համար առանձին գծագրություն և ապա մուրճի բազմաթիվ հարվածներից հետո միայն նկարված քանդակն արտահայտվում էր արծաթե կամ ոսկե թերթիկի վրա, ապա դրոշմելու տեխնիկան այդ դժվարությունը չունի։ Միատեսակ օրնամենտ ունեցող մեծաքանակ իրեր պատրաստելու համար անհրաժեշտ էր միայն մի մոդել, որից յուրաքանչյուր անգամ մուրճի մեկ հարվածով ստացվում էր մեկ օրինակ։ Այս ձևով աշխատելը ավելի արդյունավետ էր դառնում, որովհետև կարճ ժամանակամիջոցում մեծ քանակությամբ զարդեր ու դրամներ կարելի էր պատրաստել։ Դրոշմելու տեխնիկայի ժամանակ, սակայն, պահանջվում էին ավելի նուրբ մետաղե թերթիկներ, որպեսզի մեկ հարվածից հետո քանդակի ռելյեֆությունն ուժեղ ձևով արտահայտվեր։

Բոլոր տեսակի դրամները թե՛ հնում և թե՛ միջնադարում պատրաստում էին դրոշմելու եղանակով։ Հայաստանը նույնպես կտրել է իր սեփական դրամը՝ դեռևս Արտա-

Նկ. 58. Արծաթե թասակ կանանց գլխի, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան

շեսյան դինաստիայի ժամանակ (Տիգրանի և Արտավազդի դրամները)։ Այդ ցույց է տալիս, որ Հայաստանի ոսկերիչները առաջին դարում (նախքան մ.թ.) ծանոթ են եղել դրոշմելու տեխնիկային և կիրառել են այն ո՛չ միայն դրամներ կռելու համար, այլև կանանց նուրբ զարդեր պատրաստելու ժամանակ։

Դրամ պատրաստելու համար անհրաժեշտ էր ունենալ դրամի երկու երեսների համար առանձին մոդելներ։ Դրամի մեկ երեսի զարդի մոդելը փորագրում էին կապարից պատրաստված առանձին ձողի մակերեսին, որի վրա դրվում էր դրամի համար նախատեսված ոսկե կամ արծաթե թերթիկը, իսկ դրամի մյուս երեսի մոդելը փոխադրվում էր հարվածող ձողի վրա։ Այդ նախապատրաստական պրոցեսից հետո մեկ հարվածով արծաթե կամ ոսկե թերթիկի վրա պատկերվում

էին երկու երեսների վրա եղած զարդանախշերը։ Բացի դրանից, դրոշմելու տեխնիկայով պատրաստում էին նաև մեդալիոններ, կանացի կրծքի նուրբ զարդարանքներ, ապարանջաններ, ականջօղեր։

Դրոշմելու եղանակով պատրաստված ոսկե և արծաթե զարդերի մեջ ամենահետաքրքրականները, որ մեր ձեռքն են հասել պեղումներից, Օձունի դամբարանից հայտնաբերված արծաթե թերթիկը և ոսկե մեդալիոնն են, որոնք պատրաստված են հատուկ մոդելի միջոցով։

Դրոշմելու տեխնիկայով է պատրաստված Բուիբրակ-կալեից հայտնաբերված ոսկե մեդալիոնը՝ կանացի պատկերաքանդակով։ Բացի դրանից, հելլենիստական շրջանի մեդալիոններ հայտնաբերվել են Նոր Բայազետի Փաշաբյանդ գյուղում և Արմավիրի ավերակներում։

Դվինի պեղումներից հայտնաբերված ոսկե զարդարանքները ցույց են տալիս, որ դրոշմելու տեխնիկան կիրառվել է ոսկերչության մեջ ո՛չ միայն հնագույն և հելլենիստական շրջանում, այլև միջնադարում։ Դրոշմելու տեխնիկայով է պատրաստված 1950 թ. Դվինի պեղումների ժամանակ միջնաբերդից հայտնաբերված կրծքի ոսկե նուրբ զարդը, որի վրա կան ութթևանի վարդանման զարդանախշեր։ Ավելի նուրբ աշխատանքի նմուշ է պեղումների ժամանակ գտնված մի ուրիշ ոսկե զարդարանքի մասը, որի վրա շատ պարզ երևում է սրատաձև ուռուցիկ մի բանդակ՝ կատարված դրոշմելու միջոցով։

XVII—XIX դարերին պատկանող ոսկի և արծաթե զարդերի վրա նույնպես նկատելի է դրոշմելու տեխնիկան։ Այդպիսի զարդերի լավագույն օրինակներ գտնվում են Պետ. պատմական թանգարանում։

Հատիկի և թելի ճյուղվածքի տեխնիկան.— Ոսկերչության կարևոր ճյուղերից է հատիկավոր և թելի (филигрань) տեխնիկան, որը նույնպես հնագույն է համարվում։ Հատիկավոր տեխնիկայի աշխատանքը սերտորեն կապված է ոսկե և արծաթե թելերի ճյուղվածքի տեխնիկայի հետ և նրա հնագույն լինելը հաստատվում է Հայաստանի պեղումներից հայտնաբերված ոսկե և արծաթե զարդերով։ Դրանցից անհամեմատ ավելի շատ նմուշներ ունենք գտնված թե՛ դամբարաններում և թե՛ միջնադարյան առևտրա-արհեստավորական կենտրոն Դվինի քաղաքի պեղումներում, որը եղել է ոսկերչության հնագույն օջախներից մեկը։ Թելի և հատիկավոր աշխատանքի համար պահանջվող գործիքներն անհամեմատ ավելի քիչ են։ Ամենակարևոր գործիքը պողպատե սալիկն է՝ անցքերով (թելքաշ, հադիդա)՝ 1 մմ.-ից մինչև 6 մմ. այդ անցքերի միջոցով ամենահաստ ոսկե կամ արծաթե լարից կարելի է հյուսվածքի համար ստանալ ամենաբարակ թելը։ Երկրորդ կարևոր գործիքը երկբերան ունելին է, որի մի բերանն ավելի լայն է, որպեսզի հեշտությամբ հնարավոր լինի հատիկները շարել և թելից հյուսել ցանկացած օրնամենտը։ Մյուս գործիքներից են սալը, զանազան չափսի բրիչներ, հալոցքի անոթը, թել ոլորող սալը, այրող ճրագը և այլն։

Նախքան իրը պատրաստելը ոսկերիչը պետք է պատրաստեր զանազան չափի հատիկներ և հյուսվածքի համար բարակ թելեր՝ ոսկուց կամ արծաթից։ Միջնադարում այդ աշխատանքը կատարվում էր ավելի պրիմիտիվ ձևով։ Դրա համար ոսկերիչը մաքուր ոսկուց կամ արծաթից պատրաստում էր երկար լարեր՝ թելքաշի օգնությամբ։ Այնուհետև այդ լարերից կտրատում էր տարբեր չափի մասեր և ապա շարում հատուկ անոթի մեջ՝ ածխի փոշու վրա, և այսպես շերտ առ շերտ դասավորելուց հետո անոթի բերանը ծածկում և թաղում էր կրակի մեջ՝ մինչև մետաղի հալվելը և կլոր գնդիկների վերածվելը։ Այնուհետև պատրաստի գնդիկները լցնում էր ջրով լիքը կոնքի մեջ՝ սառեցնելու համար, հետո արծաթե կամ ոսկե հատիկները լվանում էր, չորացնում և պահում հատուկ տուփերի մեջ՝ օգտագործելու համար։ Ինչպես հատիկները, այնպես էլ բարակ թելերը պատրաստվում էին դժվարությամբ։ Նախ և առաջ մետաղե ձողն անց էին կացնում պողպատե



Նկ. 59. Հատիկի և թելի հյուսվածքի ոսկերչական գործիքների նմուշները։
Գծ. Առաքել Պատրիկի

սալիկի տարբեր չափսի անցքերով, մինչև ամենաբարակ թել ստանալը, որից հետո փաթաթում էին հատուկ կոճերի վրա։

Ոսկու կամ արծաթի թելերով ու հատիկներով էին զարդարում միջնադարյան ոսկե կամ արծաթե բաժակները, բաժակակալները, հարսանեկան զանազան տեսակի տուփեր, կանացի զարդարանքներ, գոտիներ, ապարանջաններ, ականջի օղեր, կրծքի քորոցներ և այլն։

1952 թ. Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի շրջակայքի շինարարական աշխատանքների ժամանակ բացվեց մի մեծ և հարուստ դամբարան, որտեղ բրոնզե հարուստ իրերի հետ հայտնաբերվեցին նաև ոսկե մանյակի մասեր, որոնք պատրաստված են թելի և հատիկավոր տեխնիկայի ամենանուրբ արվեստով [1]։

Հատիկավոր տեխնիկայի տեղական լինելը հաստատվում է նաև նրանով, որ վերջին տարիների պեղումների ընթացքում նույն արվեստով պատրաստված ոսկե զարդեր գտնվել են նաև առաջին հազարամյակին պատկանող քարարկղե դամբարաններից (Կիրովական), որոնք զարդարված են նույնպես հատիկավոր, երկշարք վերադիր հատիկ-

[1] Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի դամբարանի նյութերը ձևոք են բերված Թանդարանի հնագիտական բաժնի վարիչ բնկ. Հ. Մնացականյանի միջոցով։



Նկ. 60. Արծաթե գոտի կարինից, XVIII—XIX դդ.
Պետ. պատմական թանգարան

ներով։ Առանկյունաձև հատիկավոր նախշերը կիրառվել են ո՛չ միայն ոսկե և բրոնզե իրերի վրա, այլև կերամիկայի վրա, մանավանդ ուրարտական շրջանում։ Դրանց տեղական լինելը ո՛չ մի կասկած չի կարող հարուցել։ Այդ եռանկյունաձև հատիկավոր զարդանախշերը հետագայում կիրառվել են նաև միջնադարում, ինչպես հաստատում են Դվինում գտնված ապարանջանների վրա եղած հատիկավոր զարդանախշերը։

Թելի հյուսվածքի և հատիկի տեխնիկան կիրառվել է նաև ձեռագրերի արծաթե կամ ոսկե կազմեր ու տուփեր պատրաստելու ժամանակ։ Մատենադարանում այդպիսի օրինակներ շատ կան։ Հաճախ ձեռագրի կազմը ամբողջովին պատրաստվում է հյուսվածքի աշխատանքով, իսկ երբեմն այդ թելհատիկավոր աշխատանքը խառը ձևով հանդես է գալիս դրվագման և փորագրական տեխնիկայի հետ միասին։ Մաքուր թելի և հատիկի տեխնիկայով պատրաստված աշխատանքներից անհրաժեշտ ենք համարում հիշատակել երկու օրինակ։ Դրանցից մեկը № 6785 ձեռագիր ավետարանի արծաթե կազմն է, պատրաստված 1713 թվականին։ Նրա վրա թելի աշխատանքով հյուսված են բուսական օրնամենտներ, ավետարանի չորս անկյուններում ամրացված են վերադիր ութթևանի էմալապատ վարդեր, որոնք կազմին տալիս են գեղեցկություն։ Թելի մաքուր աշխատանք է նաև № 6788 ձեռագրի արծաթակազմը, որը պատրաստված է 1782 թվականին Էրզրում քաղաքում։ Կազմի ամբողջ դաշտը ծածկված է խաղողի, նռան քանդակներով։ Նյութական մնացորդները հաստատում են, որ միջնադարում Հայաստանի ոսկերիչներն առանձնապես թելի աշխատանքում կիրառել են բուսական քանդակներ, որոնց մեջ գերիշխում էին

8 և 6 թևանի վարդերը, խաղողի ողկույզը և նռան պատկերները։

Սևադապատման, արծնակիտման, ոսկեզօծման և ինկրուստացիայի տեխնիկան.— Հայաստանի ոսկերչության մեջ թե՛ զարդերի և թե՛ իրերի արտաքին ձևավորման համար օգտագործել են սևադապատման, արծնակիտման և ինկրուստացիայի տեխնիկան։ Սևադապատումը մեծ մասամբ կատարում էին արծաթե իրերի, բաժակների, ափսեների, տուփերի, սափորների և երբեմն էլ կանացի լայն ապարանջանների և գոտիների վրա։ Սևադապատման տեխնիկայի հնագույն լինելը հաստատվել է Բովրակ-կաւեի պեղումներից հայտնաբերված սևադի փոշու մնացորդով։ Մեր ձեռքի տակ բավարար չափով նյութ չլինելու պատճառով, չենք կարող ասել, թե այդ տեխնիկան ո՛ր դարում ավելի գործածական էր, միայն XVIII դարից սկսած ունենք մեծ քանակությամբ սևադապատած արծաթե իրեր և զարդեր, որոնք պատրաստվել են թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանի ոսկերիչների ձեռքով։ Դրանք մեզ համոզում են, որ XVIII —XIX դարերում սևադապատման տեխնիկան շատ զարգացած և հարգված ճյուղ էր ոսկերչության մեջ։

Սևադապատումը երկարատև և կրկնակի աշխատանք է պահանջում։ Որևիցե իր սևադելու համար անհրաժեշտ էր լավ փորագրական աշխատանք. որքան նուրբ էր կատարվում փորագրությունը, այնքան հաջող էր լինում սևադապատումը։ Իրը կամ զարդը սևադապատելու համար ոսկերիչը նախ և առաջ դրսի կողմից ոսկերչական դրիչով խորը փորագրում էր ցանկացած օրնամենտը՝ բուսական քանդակներ, դիմանկարներ կամ պատմական հուշարձաններ. փորագրության ժամանակ վարպետն ավելի խորացնում էր այն մասերը, որոնք պետք է սևադով ծածկվեն, այնուհետև փորագրած մասերի վրա վրձինով քսում էր հատուկ հեղուկ, որից հետո խաղողականման գործիքով ամբողջ կտրվածքի վրա հավասար չափով ցանում էր սևադի փոշին. երբ իրն ամբողջովին ծածկվում էր սևադով, այն դրվում էր հնոցի մեջ և պահվում էր այնքան, մինչև սևադի փոշին հալվում և լցնում էր փորագրած մասերն ամբողջությամբ։ Դրանից հետո ոսկերիչն հատուկ գործիքով (քերիչ) մաքրում էր իրի մակերեսից ամբողջ սև լաքը. մնում էր միայն փորագրած մասի սևադը, որն արդեն հավասարված էր լինում ընդհանուր մակերեսին։

Սևադապատած իրերից և զարդերից մենք ունենք քիչ նմուշներ, բայց դա չի նշանակում, որ այդ տեխնիկան միջնադարյան Հայաստանում տարածված չէր։ Սևադապատած իրերի կամ զարդերի սակավ լինելը պետք է բացատրել նրանով, որ մենք դեռևս միջնադարյան վայրերից քիչ տեղեր ենք պեղել, բացի այդ՝ պեղումների ընթացքում չեն գտնվել արծաթե իրեր։

Հայաստանում ամենահնագույն շրջանի սևադապատած զարդը, որ մեր ձեռքն է հասել, 1949 թ. Դվինի միջնաբերդի պեղումներում գտնված ոսկե մատանին է, փիրուզակով։ Այդ մատանու երկու կողքերի զարդերը պատրաստված են սևադի տեխնիկայով։

Սևադապատման տեխնիկան կիրառվել է նաև ձեռագրերի արծաթե կազմերը զարդարելու ժամանակ։ Միջնադարյան ձեռագրերի արծաթե կազմերից անհրաժեշտ ենք համարում այստեղ հիշել № 5651 ձեռագիր ավետարանը, որը գրված է 1333 թ. Հայոց ձորի մենաստան Նորավանքում։ Այս ավետարանի ներկա կազմը պատրաստված է ավելի ուշ՝ XVII դարում։ Ոսկերիչ վարպետը կազմի վրա կիրառել է մի քանի տեխնիկա. կազմի ամբողջ դաշտը փորագրված է և ապա սևադապատված։ Այն զարդարված է վերադիր ձուլածո զարդանախշերով և գույնզգույն ակնեերով։ Հետաքրքիր աշխատանք է № 7775 ձեռագիր ավետարանի արծաթե կազմը։ Նրա առաջին և երկրորդ երեսները պատրաստված են դրվագման տեխնիկայով, և պատկերված են խաղողի տերևների նման բուսաքանդակներ,

շատ նման Տեկորի քանդակներին։ Կազմի փակելու մասը սևադապատված փորագրություն է, որից պարզվում է, որ այն պատրաստված է վաննեցի ոսկերիչի կողմից, քանի որ սևադապատման տեխնիկան ամենից շատ տարածված և զարգացած է եղել XVIII—XIX դարերում՝ Արևմտյան Հայաստանում, հատկապես Վանում։ Պետ. պատմական թանգարանում կենտրոնացած են այդ դարերին վերաբերող մեծ քանակությամբ արծաթե իրեր ու զարդեր, որոնց վրա սևադի տեխնիկայով փորագրված են ո՛չ միայն բուսական քանդակներ, այլև պատմական հուշարձաններ, տեսարաններ, և թագավորների, զորավարների ու պատմագիրների դիմանկարներ։

Պետ. պատմ. թանգարանում XVIII—XIX դարերի №№ 2514 և 2329 արծաթե գոտիները կազմված են 12—16 քառակող արծաթե տախտակներից, վրան փորագրած բուսական քանդակներ և ծածկված սևադով։

Ոսկե և արծաթե զարդերին ու իրերին արտաքին գեղարվեստական ձևավորում տալու համար նաև արծնակիտում (էմալապատում) էին։ Արծնակիտման տեխնիկան Հայաստանում հանդես է եկել ավելի ուշ և զարգացել է հատկապես XVII դարից հետո։ Գոնե առայժմ Հայաստանում ավելի հին և վաղ միջնադարից չունենք արծնակիտման նմուշներ, սակայն Հայաստանի անմիջական հարևան Վրաստանում՝ Արմազիի պեղումների ժամանակ դամբարաններից հայտնաբերվել են արծնակիտած իրեր, որոնք պատկանում են IV—III դարերին (մ.թ.ա.)։

Արծնակիտման և մասնավորապես միջապատային էմալի տեխնիկան զարգացած և շատ տարածված էր Վրաստանում և Ռուսաստանում։ Ամենայն հավանականությամբ վերջին դարերում այդ տեխնիկան մուտք է դործել և Հայաստան։

Արծնակիտման համար վարպետն իրի արտաքին մասը հատուկ դործիքով քերում է, առաջացնելով անհարթություններ և դծիկներ, որից հետո էմալապատում է։ Իսկ երբ չի ցանկանում իրի ամբողջ դաշտը ծածկել էմալով, այդ դեպքում առանձին շրջանակների մեջ՝ զանազան գույնի էմալներով պատրաստում է ցանկացած նկարը և ապա այդ շրջանակները ամրացնում իրի վրա։

Միջնադարում, բացի զարդերից ու իրերից, արծնակիտում էին նաև ձեռագրերի արծաթե կազմերը։ Այդպիսի տեխնիկայի նմուշ է № 7789 ձեռագրի արծաթե կազմը, որի առաջին երեսը պատրաստված է դրվագման եղանակով և պատկերում է արևը, իսկ չորս անկյուններում վերադիր կապույտ ֆոնի վրա կան չորս առաքյալների դիմանկարները։ № 6767 ձեռագիր ավետարանի արծաթե կազմի վրա նույնպես կիրառված է արծնակիտման տեխնիկան։ Այս ավետարանը գրվել է 1471 թ. Առեստ գյուղում։

XVIII—XIX դարերում արծնակիտման տեխնիկան բավականաչափ զարգացած է եղել Ղարաբաղի Շուշի քաղաքում։

XVIII—XIX դարերում շատ տարածված էր դաշույնների դաստակների էմալապատման տեխնիկան։

Արծաթե կամ ոսկե իրերին, շքեղություն էր տալիս նաև նրանց վրա ակնեղենի ընդելուզումը։ Հայ պատմիչները, իրենց աշխատություններում, խոսելով ոսկե կամ արծաթե զարդարանքների մասին, բազմիցս հիշում են թանկագին քարերով զարդարված կամարների, ապարանջանների, ականջի օղերի, ոսկեզօծ բաժակների, ափսեների, տուփերի, գլխի թասակների ու ձեռագրերի կազմերի մասին։ Հայ ոսկերիչները թագավորների և իշխանների պատվերով ակնիվ մետաղները զարդարում էին թանկագին քարերով, փղոսկրով և այլ նյութերով։

Փ. Բյուզանդը հիշում է «ականակապ մարդարտազարդ» ոսկե իրերը։ Հովհաննես Դրասխանակերտցին, խոսելով Աշոտի մասին, գրում է. «Այլ և Աշոտոյ՝ երիցու որդւոյ արքայի՝ նորանշան իմն պատիւ չարդարեալ իբր օդապարիկ իմն երիվար գեղեցիկ զարդուք և ղինուք և պերճապաճոյճ երանգս զգեստուց, և կամար ականակապ ընդ միջ

ածեալ, կացուցանէ զնա իշխան իշխանացս հայոց»[1]։

XIII դարի պատմիչ Ս. Օրբելյանը Տարսայիճի մասին գրում է. «Զկամարն ի համակ ոսկւոյ բազմագին ակամբք և մարգարտօք լցեալ՝ տայր ածել ընդ մէջ նորա»[2]։

Մատենադարանի № 102 ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Քանզի զտիպս աւետարանին տեսանեմք նկարեալս ո՛չ միայն յոսկւոյ և արծաթոյ, այլև յոսկերաց փղաց և կարմիր մորթով կազմեալ...»։

Նորվանքում 989 թվականին Հովհաննես Հայտնաբերվել 1948 թվականին Կիրովականում բացված կուրգանից։ Միջնադարյան քաղաք Դվինի պեղումների ժամանակ գտնվել են ապարանջաններ, ականջօղեր՝ զարդարված թանկարժեք քարերով։ Նման օրինակներ շատ ունենք մեր ձեռքի տակ, հատկապես XVIII—XIX դարերին պատկանող կանանց գոտիներ, ճարմանդներ, կրծքի և գլխի զարդեր, որոնք ամբողջությամբ զարդարված են տարբեր գույնի թանկագին և հասարակ քարերով, մարջաններով։ Հետաքրքիր ինկրուստացիոն աշխատանք է XVIII դարում պատ-

Նկ. 61. Արծաթե բաժակ և արկղիկ, XVIII—XIX դդ. Պետ. պատմական թանգարան

գրչի գրած մի ձեռագրի կազմը ծածկված է փղոսկրով, որը հանդիսանում է արվեստի ամենանուրբ գործերից մեկը։

Հնագույն շրջանում ինկրուստացիա է կատարվել ո՛չ միայն արծաթի, ոսկու, այլև բրոնզի, պղնձի և կավե իրերի վրա։ Ինկրուստացիայի տեխնիկայի հնագույն նմուշներ են

---

[1] Ց. Դրասխանակերտցի, էջ 198։
[2] Ս. Օրբելեան, էջ 423։

բասուված արծաթե բաժակը, որն ունի բարձր պատվանդան, արծաթե դաշտի վրա ամբողջ բաժակին ամրացված են կեղծ փիրուզաններ (նկ. 61)։ Միջնադարում հայ ոսկերիչները ձեռագրերի վրա նույնպես կիրառել են ինկրուստացիայի տեխնիկան։

Խոշոր նշանակություն ուներ նաև արծաթի իրերի ոսկեզօծումը։ Արծաթե իրերը ոսկեզօծում էին մի քանի ձևով. կային իրեր,

որոնք ոսկեզօծում էին թե՛ ներսից, և թե՛ դրսից, իսկ շատ հաճախ ոսկեջրած իրի վրա հատուկ դրիչով փորագրում էին բուսական կամ երկրաչափական օրնամենտներ, իսկ երբ անհրաժեշտ էր լինում՝ արծաթե իրերի վրա փորագրում էին ոսկե տառեր կամ բուսական քանդակներ։

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ոսկերչությունը իր ձուլելու, դրվագելու, դրոշմելու (ճնշման), սևադի, արծնակիտման, ինկրուստացիայի, ոսկեզօծման, վերջապես, թելի հյուսվածքի և հատիկավոր տեխնիկայով հին Հայաստանում զարգացած արհեստների թվին է պատկանել։

Ոսկերչության և արծաթագործության արհեստի ու արվեստի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս անելու հետևյալ եզրակացությունը.

1) Ինչպես պատմական փաստերը հաստատում են, Հայաստանում վաղ միջնադարում հայ արհեստավորները, դրանց թվում նաև ոսկերիչները, գերազանցապես աշխատում էին պալատներին, դղյակներին ու վանքերին կից արհեստանոցներում և հիմնականում բավարարում էին տիրող դասի՝ աղնվականության և հոգևորականության պահանջները, նրանց պատվերի համաձայն։

Հայ մատենագիրների աշխատություններում և վիմական արձանագրություններում կան հիշատակություններ ոսկե և արծաթե զարդերի ու այլ իրերի մասին։ Ոսկերիչների ձեռքով էին պատրաստվում ականակուռ թագերը, խույրերը, կամարները (գոտիները), իշխանական սեղանների արծաթե և ոսկե բաժակները, ափսեները, հարսանյաց տուփերը, դաշույնների դաստակները և այլն, ինչպես նաև կանացի նուրբ զարդերը։ Հայ պատմիչներից Ղազար Փարպեցին[1] և Ա. Լաստիվերտցին[2], երբ նկարագրում են իշխող դասի ճոխ և զեղ կյանքը, թվում են այն զարդերը, որոնցով պճնվում էին հայ կանայք և տղամարդիկ։

2) IX դարի երկրորդ կեսից արտադրողական ուժերի աճը, առևտրի զարգացումը և քաղաքների ծաղկումն է՛լ ավելի խորացնում են աշխատանքի բաժանումը արհեստների, այդ թվում նաև ոսկերչության մեջ։ Հայաստանի ոսկերիչները, հիմնականում կենտրոնացած լինելով քաղաքներում, միաժամանակ բավարարում էին թե նոր զարգացող քաղաքային դասի պահանջները, և թե՛ գյուղի կարիքները, վերջիններիս համար պատրաստելով հասարակ մետաղից զարդեր։

3) X—XIII դարերում հայ առևտրական դասի ներկայացուցիչները ևս անմասն չէին կարող մնալ. նրանցից ամենահարուստները նույնիսկ աշխատում էին մրցել ֆեոդալների հետ։ Այդ պերճանքի առարկաներից ու սպասներից բաժին էր ընկնում նաև հոգևորական դասին և եկեղեցուն, որոնց համար թե՛ քաղաքի և թե՛ վանքերին կից ոսկերիչ արհեստավորները պատրաստում էին բոլոր տեսակի եկեղեցական սպասները, չհաշված խալիֆայության և բյուզանդական կայսերություն ուղարկած թանկարժեք նվերները։

4) Հայաստանում ոսկերչական արհեստի արագ զարգացումը նպաստում է այդ արհեստի ներսում առանձին ճյուղերի մասնագիտացմանը։ Ինչպես նյութական մնացորդները ցույց են տալիս, ոսկերչական արհեստի մեջ զարգացած են եղել ձուլման, դրվագման (չեկանկա), փորագրության, սևադի, ճնշման, թելի և հատիկավոր (չիֆթիշիի), արծնակիտման (էմալի) և ինկրուստացիայի տեխնիկան։ Հայ ոսկերիչները լինելով այդ բոլոր ճյուղերի լավագույն վարպետները, որոշ բնագավառներում (սևադի, փորագրության, թելի ու հատիկավոր դործում) գերազանցել են մյուսներին։

5) Պատմական փաստերը հաստատում են, որ Հայաստանի արհեստները, այդ թվում նաև ոսկերչությունը, երկրի անընդհատ ավերածությունների պատճառով, մոտ երեք դար (XIV—XVII), արտագաղթի հետևանքով թուլանում են, անկում ապրում, իսկ XVII դարի 30-ական թվականներից, ինչպես

[1] Տես Ղ. Փ ա ր պ ե ց ի, էջ 275։
[2] Տես Ա. Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 84։

ոսկերչական արվեստի նմուշները հաստատում են, Հայաստանի ոսկերչությունը նորից թևակոխում է զարգացման մի նոր շրջան, որ տևում է մինչև XIX դարի վերջը:

Հայաստանը ունեցել է ոսկերչական բազմաթիվ օջախներ, ինչպիսիք են՝ Վանը, Էրզրումը, Խիզանը, Դվինը, Անին. իսկ հետագայում, XVIII—XIX դարերում, ոսկերչական կենտրոններ են եղել նաև Ախալցխան, Շուշին, Երևանը և Ալեքսանդրոպոլը: Հայ ոսկերիչները աշխատել ու գործել են Հայաստանից դուրս՝ Կովկասի տարբեր քաղաքներում, Ռուսաստանում և հայկական գաղութներում, իրենց արվեստը տարածելով բուն երկրից դուրս: Նրանք տվել են նուրբ, գեղարվեստական բարձր արժեքի բազմաթիվ զարդեր ու իրեր:

6) Հայ ոսկերիչների ձեռքով պատրաստված իրերի վրայի փորագրությունները ու դիմանկարները հիմնականում արտահայտել են իշխող դասի իդեոլոգիան: Ոսկե և արծաթե թասակների, բաժակների, ափսեների, տուփերի վրա փորագրում էին թագավորների, իշխանների, զորավարների, պատմական անձնավորությունների դիմանկարները: Միջնադարյան ոսկերչական զարդերի ու իրերի վրա իշխանական կենցաղային մոտիվների կողքին հանդես է գալիս հոգևոր կուլտուրայի ազդեցությունը: Հայ ոսկերիչները այդ օրնամենտները վերցնում են վիմական քանդակներից, մանրանկարչության մեջ եղած զարդանախշերից և ստեղծում ոսկերչության արվեստին համապատասխան զարդանախշեր, որոնցից շատերը հանդիսանում են ժողովրդական ստեղծագործության արդյունք:

7) Նյութական կուլտուրայի մնացորդները, պատմիչների ու արձանագրությունների տվյալները հաստատում են, որ ինչպես բոլոր արհեստավորները, այնպես էլ ոսկերիչները համախմբված են եղել առանձին համքարության մեջ դեռևս միջնադարում: Թեև այդ շրջանից չեն մնացել ոսկերչական կանոնադրեր, սակայն ոսկերչական թաղամասերի գոյությունը և XIX դարից մնացած մեկ հատիկ կանոնադիրը իրավունք են տալիս մեզ չհատկածելու այդ բանում:



ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՈՍՏԱՅՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (IV—XVIII ԴԴ.)

Ա. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Միջնադարյան Հայաստանում գոյություն ունեցող արհեստների մեջ ամենից շատ տարածված և մասսայական արհեստ էր ջուլհակությունը։ Այդ արհեստով զբաղվողների մասին ևս մատենագրական աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ ունենք։ Չնայած դրան, հայ պատմիչների մոտ բավական արժեքավոր հիշատակություններ են պահպանված զանազան տեսակի հյուսվածքների վերաբերյալ։ Բացի դրանից, ձեռագրերի կազմերի ներսի աստառները և պեղումներից հայտնաբերված շատ քիչ թվով կտորների մնացորդները հաստատում են միջնադարյան Հայաստանում արտադրվող գործվածքների բազմազանությունը, որի համար անհրաժեշտ էր հարուստ հումքի բազա։

Հայաստանի կլիմայի բազմակերպությունը նպաստավոր էր միաժամանակ անասնապահության, երկրագործության և այգեգործության զարգացման համար։ Երկրի դաշտավայրերի բնակչությունը զբաղվում էր նաև կուլտուրական բույսերի մշակությամբ։

Հայաստանի զանազան մասերի կլիմայական տարբերությունների հետևանքով, բարձրավանդակի ցածրադիր մասերում, ինչպես Արարատյան դաշտում, Արածանիի հովտում, Մշո շրջակայքում և այլ վայրերում, աճում էին բամբակ, ծխախոտ, բրինձ, վուշ և այլն։

Հայաստանի բնական պայմանները նպաստել են նաև անասնապահության զարգացմանը։ Արագածի փեշերը, Ծաղկունյաց (Ալադաղ) և այլ լեռների լանջերը հարուստ էին ջրերով ու արոտավայրերով։ Ալպյան մարգագետինները առատ կերի բազա են հանդիսացել խաշնարածության զարգացման համար։ Հայաստանի արոտավայրերում արածում էին հազարավոր ոչխարներ ու այծեր, որոնք ամեն տարի առատ բուրդ էին մատակարարում գործվածքների համար։

Այդ երկրի բերքատվության և բարեբերության մասին գաղափար կազմելու համար բավական է միայն հիշատակել հայ պատմիչներից Ղազար Փարպեցու գովքը Արարատյան դաշտի մասին։

«զԳաւառն Այրարատու, զհոյակապն և զհռչակաւորն և զականաւորն, զամենաբոյն, զամենաբուղխն, զամենալիւն, զամենա-

գիւտն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան. զդաշտս մեծատարածս և որատիցս, զլերինս շուրջանակի գեղեցկանիստս և պարարտաբուստս... անկարօտ ոռոգման արբուցանելով զդաշտս՝ մատակարարել անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն հացի և դինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զղանազանումն իւղաբուղխ սերմանցն»[1]:

Պատմիչը, շարունակելով իր նկարագրությունը, վերջում ավելացնում է. «զԱյրարատեան գաւառ, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենաւէտ, որ բերէ չինքեան զօրինակ լիութեան...»[2]:

Պատմիչի այս քաղվածքն արդեն հաստատում է Արարատյան դաշտավայրի բարերերությունը:

Ջմռռանանք այստեղ նշել, որ Հայաստանը հարուստ էր ո՛չ միայն բուսականությամբ, կենդանական աշխարհով, այլև բազմատեսակ հանածոներով: Դրանով պետք է բացատրել, որ նա երկար դարեր դարձել էր կովախնձոր Արևմտյան և Արևելյան հզոր պետությունների ձեռքին. Հայաստանը դիտվում էր ո՛չ միայն որպես ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտ, այլև որպես գյուղատնտեսական, անասնապահական մթերքներով և հանքերով հարուստ երկիր:

Ջուլհակությունը օգտագործում էր այդ երկրի մատակարարած հումքը՝ բուրդ, բամբակ, մետաքս, վուշ, որոնցից պատրաստում էին տարբեր տեսակի գործվածքներ: Բրդից գործում էին հագուստեղենի կտորներ, գորգեր, զանազան տեսակի և մեծության կարպետներ, իսկ բրդի մնացորդներից պատրաստում էին թաղիքներ:

Միջնադարյան բնակչության համար մասսայական սպառման առարկա էին նաև բամբակի գործվածքները, որոնք՝ ունենալով հումքի համապատասխան բազա՝ զարգացած արտադրվում էին տեղում: Չնայած, որ բամբակագործության վերաբերյալ ևս գրավոր հիշատակությունները քիչ են մեր մատենագրության ու վիմական արձանագրությունների մեջ, այնուամենայնիվ այդ փոքրաթիվ փաստերն էլ բավական են եզրակացնելու, որ Հայաստանի դաշտավայրերի կուլտուրական բույսերի մշակման մեջ կարևոր տեղ է բռնել բամբակը: Բացի Ղազար Փարպեցուց, բամբակի մասին մեզ որոշ տեղեկություններ են տալիս նաև մյուս պատմիչները: Այսպես՝ Մովսես Խորենացին իր Պատմության մեջ հիշում է «բամբակ անբաւ», իսկ Մ. Կաղանկատուացին գրում է. «Եւ որ շուրջ զնովաւն են դաշտք՝ գտանի ի նոսա հաց և գինի շատ,... բամբակ և անբաւ ձիթենիք»[1]:

Մխիթար Գոշն իր առակներում ամեն մի բույսը և արհեստը գնահատում է նրա հասարակական օգտակարության համեմատ: Այդ տեսակետից հետաքրքրական է բամբակենու և սոսենու մասին նրա հետևյալ առակը.

«Մերձ առ սօսի առոգանէին երկրագործք զբամբակենիսն, և միմեանց պատուիրէին զգուշանալ, զի մի՛ զծառս կոխեսցեն զբամբակենիս, և լուեալ սօսոյն զչարացաւ կոչելով զնա ծառ, ասաց՝ թէ զի՞արդ ինձ համանուն կոչի դա ծառ, զի ես այսքան սուտ ար և բարձր եմ, և զբազում տեղիս ընբռնեա ունիմ: Եւ լու ի լու ոչ զանգիտեալ՝ պատասխանեալ բամբակենի ասելով. Բարձր ես և սուտ ար, սակայն անօգուտ. ոչ ի շինուած և ո՛չ ի պտուղ և ո՛չ ի յայրումն գովելի. այլ թանձր ունելով սուտս, յորմէ բամբասիս մանաւանդ՝ քան թէ գովիս. իսկ ես թէպէտ փանաքի և տկար, այլ բազմաշաղ ո՛չ միայն մեծատանց՝ այլև աղքատաց, ի տածել, ի քաղել և ի գործել, և լինիմ հանդերձ, որպէս զասր յոչխարաց և զվուշ ի կտաւէ և զմետաքս յորդանց»[2]:

---

1 Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1907, էջ 19–20:

2 Նույն տեղում, էջ 23—24:

1 Մ. Կ ա ղ ա ն կ ա տ ու ա ց ի, էջ 15:

2 Մ խ ի թ ա ր Գ ո շ, Առակներ, Երևան, 1951, էջ 54:

Գոշի այս առակի նյութն, անկասկած, քաղված է իրական կյանքից։ Նրանից երևում է, որ Հայաստանում հյուսվածքեղենի համար, բացի բամբակից, օգտագործում էին նաև բուրդը, մետաքսը և վուշը։

XVII դարի հայ պատմիչներից Հակոբ Կարնեցին, խոսելով Երզնկայի մասին, ասում է. «Եւ ունի [երկիր Եկեղեաց] քաղաք մեծ բամբակօք, այգեստանօք և մրգաբեր ծառօք»[1]։

Բամբակի մշակման և նրա օգտագործման մասին, բացի պատմիչներից, մենք արժեքավոր տեղեկություններ ենք գտնում նաև վիմական արձանագրությունների մեջ։ Դրանցից հիշատակության արժանի է Օշականի 1286 թ. արձանագրությունը. պարզվում է, որ Արարատյան դաշտավայրում մշակվել է նաև բամբակ, որի համար գանձվող հարկից հետագայում ֆեոդալ պարոն Սահմադինը ինչ-ինչ նկատառումներով ազատում է Օշականի բնակիչներին[2]։

Բամբակի մասին արժեքավոր հիշատակություն է պահպանված նաև Անիի Աբուլ-Մամռայի մզկիթի վրա եղած արձանագրության մեջ։ Ըստ Քեյ-Սուլթանի հրամանի բամբակի ու քաթանի առևտրով զբաղվողներին հատկացվում էր հատուկ թաղամաս։

Այս արձանագրությունն առաջին անգամ կարդացել է գիտնական խանիկովը, սակայն նա այդ արձանագրության երրորդ տողը թարգմանել է՝ ոչխարի և ուղտի առևտուր բառերով, որը նույնությամբ կրկնել է Ալիշանը «Շիրակում»։

1934 թ. մեզ հաջողվեց Հնությունների Պահպանության Կոմիտեի նեգատիվների արխիվից հանել այդ արձանագրության հաջող լուսանկարը։ Այդ արձանագրության ընթերցումից պարզվեց[3], որ երրորդ տողում ասված է ո՛չ թե «ոշխարի և ուղտի», այլ «բամբակի և քաթանի» առևտրի մասին։

Բացի այդ արձանագրություններից, բամբակի վաճառքի գոյությունը հաստատվում է նաև մի ուրիշ փաստով։ Անիի 1221 թ. թարգմանված «Երազահաններից» մեկում, մի շարք արհեստների թվում հիշատակվում է նաև «բամբակածախ» տերմինը, որպես առանձին զբաղմունք[1]։

Այսպիսով, արձանագրության ճշգրիտ վերծանումը և «Երազահանի» վկայությունը հաստատում են, որ Անիում, նրա որոշ թաղամասում, կենտրոնացած է եղել բամբակի վաճառքը։ Կասկածից միանգամայն դուրս է, որ Հայաստանի քաղաքներում վաճառվող այդ բամբակը չէր ներմուծվում ուրիշ երկրներից, այլ տեղական մշակույթի արդյունք էր, այդ են ապացուցում նաև մատենագրական վերոհիշյալ տվյալները։

Բամբակի մասին հիշատակություն կա պահպանված նաև № 8314 ձեռագրի հիշատակարանում[2], ուր բամբակի թուփը հատկանշվում է բուժման համար օգտագործվող դեղնավուն ծաղկի հետ։ XIII դարի եվրոպացի ճանապարհորդներից Մարկո Պոլոն իր ուղեգրության մեջ հիշում է Արևմտյան Հայաստանի Մուշ և Մերդին քաղաքների շրջակայքում մեծ քանակությամբ մշակվող բամբակի մասին, որից պատրաստում էին բեհեզներ և ուրիշ կտորներ[3]։

Պատմիչների մոտ և վիմական արձանագրություններում հիշատակություններ կան նաև բազմաթիվ ձիթհանքների վերաբերյալ, որտեղ, բացի կտավհատից, ձեթ էր հանվում նաև բամբակի հունդից։

Հայաստանի դաշտավայրերում, շնորհիվ կլիմայական նպաստավոր պայմանների, կուլտուրական բույսերի շարքում շատ էր տարածված նաև վուշի և կանեփի կուլտու-

---

1 Հ. Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 11—12։

2 Տես Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, ՍՊԲ, 1914, էջ 129։

3 Արձանագրության ընթերցումը կատարել է պրոֆ. Հ. Աճառյանը։

---

1 Մատենադարան, № 695 ձեռագիրը, էջ 187։

2 Մատենադարան, № 8314 ձեռագիրը, էջ 126։

3 Տես Ուղեգրություններ, Ա. հատոր, էջ 181։

րան. վուշի թելերից կտորներ հյուսելու մասին հիշատակում է Մխիթար Գոշն իր առակներում[1]: Վուշի մշակումը հաստատվում է նաև նրանով, որ Անիի պեղումներում գտնված գործվածքների և մատենադարանի ձեռագրերի կազմերի աստառների մեջ կան նաև այնպիսի կտորներ, որոնք հյուսված են վուշի թելերից: Պատմիչների տված տեղեկությունները հաստատում են նույնպես, որ Հայաստանի դաշտավայրերում, հատկապես Արարատյան և Մշո դաշտերում, մշակվել է վուշը, որից բնակչությունը հյուսում է կտորներ հագուստների համար, իսկ հատիկներից հանվում է յուղ:

Հայաստանում շերամապահության զարգացմանը նպաստում է թթենիների տարածված կուլտուրան, մասնավորապես Արաքսի հովտում: Կաղանկատուացին իր Պատմության մեջ հիշում է «ապրեշում և բամբակ և անբաւ ձիթենիք»[2]: Հետաքրքիր տեղեկություն է տալիս նաև Մխիթար Գոշը: Նրա առակներից մեկում թթենին ասում է ձիթենուն, որ իր սաղարթը նյութ է մետաքսի որդերի[3]: Առակագիրը դրանով ցանկացել է հանդես բերել թթենուն, որպես օգտավետ բույս, որ ո՛չ միայն տալիս է քաղցրահամ պտուղ, այլև նրա սաղարթները սնունդ են ծառայում շերամի որդերին, որոնց հյուսած թելերից պատրաստում են ամենանուրբ կտորները: Շերամապահության և մետաքսե կտորների արտադրությունը զարգացած էր նաև Հայաստանի հարևան երկրներում՝ Աղվանքում և Վրաստանում: XV դարի եվրոպացի ճանապարհորդներից Ջոզեֆո Բարբարոն տվել է այդ երկրների մի շարք գյուղերի և քաղաքների նկարագիրը, որոնց բնակչության մեծ մասը զբաղվում էր շերամապահությամբ և մետաքսյա գործվածքներ հյուսելու արհեստով[4]:

Տեխնիկական բույսերի և շերամապահության լայնորեն տարածված կուլտուրան Հայաստանում հանդիսանում էր անհրաժեշտ նյութական բազա ջուլհակության զարգացման համար:

Բ. ՆԵՐԿԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ջուլհակության համար խոշոր նշանակություն ուներ ներկը, որի միջոցով հնարավորություն էր ստեղծվում ներկել կտորները կամ դաջել բազմատեսակ նախշեր բամբակե և մետաքսե գործվածքների վրա: Միջնադարյան Հայաստանում մեծ էր ներկարարության և դաջելու արհեստով զբաղվողների թիվը: Ներկարար արհեստավորների մասին ունի հիշատակություն XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Խոսելով մոնղոլների տիրապետության ժամանակ հարկերի գանձման մասին, պատմիչը հարկատուների թվում հիշում է նաև «շապարար» (ներկարար) արհեստավորներին: Գանձակեցու այս ցուցմունքը հաստատում է, որ ներկարարների թիվը խոշոր էր թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում, որոնք, ի թիվս մյուս արհեստավորների, ենթարկվել են հարկադրման: Հիշատակություն կա նաև Անիի վիմական արձանագրություններից մեկում, որտեղ խոսվում է Անիում եղած հարկերի, այդ թվում նաև ներկարարների հարկերի, վերացման մասին[2]: Բացի դրանից, Անիի «Երազահանում» դարձյալ հիշատակվում են ներկարար արհեստավորները[3]: Ներկարար-արհեստավորների վերաբերյալ տեղեկություններ են պահպանված ձեռագրերի հիշատակարաններում: Մենք վկայաբերում ենք XIII—XIV դդ. պատկանող ձեռագրերի հիշատակարանները:

1347 թ. № 3797 Ճառընտրի հիշատակարանում հիշվում են մի քանի արհեստավորների անուններ, որոնց թվում «զԹադէոս ներ-

[1] Տես Մխիթար Գոշ, Առակներ, էջ 54:
[2] Տես Մովսէս Կաղանկատուացի, էջ 15:
[3] Տես Մխիթար Գոշ, Առակք, էջ 50:
[4] Տես Ուղեգրություններ, հ. I, էջ 194:

[1] Տես Կ. Գանձակեցի, էջ 349:
[2] Տես Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 62:
[3] Տես Մատենադարանի № 695 ձեռագիրը, էջ 187:

կարար և զորդին իւր զՄուրատն»[1]։ Նույն ձառընտիրի մի հիշատակարանում ասված է՝ «Ողորմեա՛ ստացողի սորա ներկրար Գորգու, և կողակցին նորա Գոհար տիկնայ»[2]։ 1349 թ. ձեռագրի հիշատակարանի վերջում հիշատակվում է «զՍարգիս ներկարարն»[3] և, վերջապես, № 679 ձեռագիր ավետարանում, որ գրված է 1382 թ., հիշվում է՝ «Խերադին ներկարարն և մայր Թաջխաթունն»[4]։

Պատմիչներից, վիմական արձանագրություններից և հիշատակարաններից բերված վերոհիշյալ փաստերը կասկած չեն թողնում, որ IX—XIV դարերում Հայաստանում ներկարար արհեստավորները մեծ թիվ են կազմել թե՛ գյուղում և թե՛ քաղաքում, մյուս կողմից՝ այս վկայությունները ցույց են տալիս, որ ձեռագրերի պատվիրատուների շարքում եղել են նաև ներկարար արհեստավորներ։

Ներկարար արհեստավորները գործվածքներ ներկելու համար հիմնականում օգտագործել են կենդանական և բուսական ներկեր, որոնք ավելի կայուն էին։ Հայաստանում գործածվող ամենաարժեքավոր և հարգված ներկը եղել է «որդան կարմիրը», որով ներկում էին արքայական, իշխանական պատմուճաններ, վարագույրներ, գորգեր և այլն։ «Որդան կարմիր» ներկը, որ արաբ աշխարհագիրները «զիրմիզ» էին անվանում, շատ հռչակված էր Արևելքում։

Որդան կարմրի և այլ ներկերի մասին մի քանի հոդվածներ զետեղված են «Բազմավեպ»-ում[5], ուր պաշտպանվում է այն սխալ միտքը, թե որդան կարմիրը հաջորդել է «ծիրանի» կոչվող ներկին։ Մինչդեռ «որդան կարմիր» ներկի մասին տվյալներն ավելի հին են, քան «ծիրանի»-ի։ Որդան կարմրի հնագույն լինելը հաստատվում է նրանով, որ VIII դարում նախքան մեր թվագրությունը, Սարգոնի գրված գանձերի մեջ հիշվում է նաև «Արարատի» նշանավոր ու կարմիր հյուսվածքեղենը, որը ներկվում էր որդան կարմրով[1]։

Որդան կարմիր ներկի մասին V դարից սկսած հիշատակում են հայ պատմիչները։ Ղազար Փարպեցին Արարատյան դաշտի իր նկարագրի մեջ գրում է.

«... Նաև զարմատս եղէգնասէր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ, այլև ի նմանէ ծնեալ որդուս, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս»[2]. իսկ Ա. Շիրակացին հիշատակում է որդան կարմիրը, որ աճում է սեզ կոչվող խոտերի վրա՝ «եւ որդն սիզաբերեալ արմատոց առ ի զարդ կարմրութեանս գունոյ»[3]։

Որդան կարմիրի կիրառման վերաբերյալ տեղեկություններ կան ձեռագրերի մեջ, որտեղ մանրամասն բացատրում են այդ ներկի պատրաստման եղանակը[4]։

Որդան կարմիր ներկը հնում այնքան հռչակված և հարգված է եղել, որ այն հիշատակում են անգամ արաբ աշխարհագիրները։ Ալ-Իստահրին, նկարագրելով Դվինի կտորները, գրում է. «Ընդանց մոտն (Դվինի մոտ) էլ հենց ձեռք է բերվում «ղիրմիզ» կոչված ներկը, որով ներկում են մահուդը, ես իմացա, որ դա որդ է, իր շուրջը գործում է շերամի պես[5]»։ Ալ-Մուկադասին նույնպես հիշում է Հայաստանի որդան կարմիրը, անվանելով այն «ղիրմիզ», որի հայրենիքը համարվում էր Արարատյան դաշտավայրը, մասնավորապես Արտաշատի և Դվինի շրջակայքը։ Պատմիչը ականատես է եղել որ-

---

1 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 359։

2 Նույն տեղում, էջ 362։

3 Նույն տեղում, էջ 377։

4 Նույն տեղում, էջ 543։

5 «Բազմավեպ», 1843, № 4, էջ 56 և 1890, հատ. ԽԸ, օրոստոս, էջ 274։

1 Հ. Քյուրդյան, Որդան կարմիր, Վենետիկ, 1932, էջ 37։

2 Ղ. Փարպեցի, էջ 21։

3 Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 351։

4 Քյուրդյան, Վիշապ գորգ և որդան կարմիր, էջ 52։

5 Ал-Истахри, Сбор. мат., вып. XXIX, էջ 19—20 (пер. Н. А. Караулова).

դան կարմրի հավաքմանը և այդ մասին գրում է. «Այդ որդը հայտնվում է հողի վրա, որոնց հավաքում էին կանայք պղնձների մեջ և ապա չորացնում հացի թոնրում»[1]: «Որդան կարմիր» ներկը հիշատակում է նաև XIII դարի եվրոպացի ճանապարհորդներից Մարկո Պոլոն. «Մասիս լեռան ստորոտում, հովիտներում գտնվում է որդան կարմիրը, որով մետաքսը ներկում են բոսորագույն»[2]: Հայաստանի հարևան և հեռավոր երկրներն էին արտահանվում ո՛չ միայն որդան կարմրով ներկված նուրբ գորգեր և կտորներ, այլ ներկը՝ տեղում ընտիր մետաքսե և այլ կտորներ ներկելու համար[3]: Որդան կարմիրը որպես ներկ հայտնի էր և գործածական նաև XVII—XIX դարերում: XVII դարի ճանապարհորդներից Շարդենը նշում է, որ այդ ներկը տեսել է ո՛չ միայն Արարատյան դաշտում, այլև Կարնո գավառում[4]: XVIII դարի ռուս ճանապարհորդներից Մարկովը Մասիսի լանջերից գտել է «որդան կարմիր» միջատը: Հետաքրքրական է, որ այդ միջատներն իրենց գոյությունը պահպանել են 1500 մետր բարձրության վրա՝ սեզ կոչվող խոտերի մեջ. չնայած ցրտի բարձր աստիճանին, որդան կարմիր միջատները չեն ոչնչացել, քանի որ հալվող ձյունը նպաստել է սարի լանջում չիմանների աճմանը, որտեղ սեզն ամենից շատ է լինում[5]:

Որդան կարմիրը հիշատակում է նաև Ալիշանը. «Ամենեն ընտիր և ամենեն մեծ ճանչցած որդն կարմրոս, հռչակյալ իր շարափայլ գունով, բագավորաց ծիրանիք և հրովարտակք կնճերկվեին»[6]: Նույնիսկ անցյալ դարի 30-ական թ. որդան կարմրի օգտագործման պրոբլեմով զբաղվել է նաև ռուսական կառավարությունը[1]:

Հիշյալ ներկը օգտագործում էին նաև մագաղաթների վրա մանրանկարչական նուրբ աշխատանքներ կատարելիս:

Միջնադարյան Հայաստանում կար նաև որդերի մի ուրիշ տեսակ, որ աճում էր ո՛չ թե սեզերի վրա, այլ թփուտների ու ծառերի, հատկապես դեղձի ծառի վրա. այդպիսի կարմիր որդեր կան նաև Սպանիայում, Ամերիկայում նոփալ կոչվող ծառի վրա, որոնք իրենց որակով և գույնով բոլորովին տարբերվում են Հայաստանի որդան կարմրից[2]:

Գործվածքների համար որպես կայուն ներկ օգտագործվում էին մեծ մասամբ բուսական ներկեր: Բուսական ներկերը կիրառել են ո՛չ միայն ներկարար արհեստավորները, այլև շինական գյուղացի ջուլհակները, որ իրենց արտադրած կտորները ներկելու համար օգտագործում էին շրջապատում աճած բուսական արմատներն ու ծաղիկները, որոնցով հարուստ էին թե՛ Հայկական բարձրավանդակի դաշտավայրերը և թե՛ լեռնային շրջանները: Բուսական ներկերի մասին մեր մատենագրական աղբյուրներում և ձեռագրերի մեջ եղակի հիշատակություններ կան: Հայ պատմիչներից Ա. Շիրակացին հիշում է գխտորի մասին[3]: Այդ նույն գխտորի մասին հիշատակում են նաև եվրոպացի ճանապարհորդները: Այս գխտոր կոչվող բույսը շատ կարևոր էր և օգտագործում էին կտորներ ներկելու ժամանակ, ինչպես և դեղորայք պատրաստելիս: Գխտորն աճում էր նաև Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում, օրինակ՝ Սյունիքում, Նախիջևանում, Մեղրիում և այլուր:

---

[1] Ал-Мукадаси, Сбор. мат., вып. XXXVIII, стр. 12.

[2] Ուղեգրություններ, Ա. հատ., էջ 111:

[3] А. Я. Манандян, О торговле и городах Армении, стр. 163.

[4] «Բազմավեպ», 1890, № 4, էջ 276:

[5] Նույն տեղում, էջ 275

[6] Ալիշան, «Հուշիկք հայրենյաց հայոց», հատոր Բ, Վենետիկ, 1869, էջ 52:

[1] Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից, Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գ.Ա., 1946, № 2—3, էջ 17:

[2] Հ. Քյուրդյան, Որդան կարմիր, էջ 55:

[3] Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունն, Երևան, 1944, էջ 349:

Բուսական ներկերից ամենից շատ տարածված և ժողովրդի կողմից օգտագործվողը տորոնն էր, որով մեծ մասամբ ներկում էին բրդե կտորներ։ Տորոնի հավաքումը կատարվում էր ամռան ամիսներին ու աշնանը։ Ներկի համար օգտագործում էին այդ բույսի արմատը։ Հետաքրքիրն այն է, որ տորոնի արմատը տարվա տարբեր ժամանակներում տալիս է տարբեր գույն. գարնան ամիսներին նրա արմատներից ստանում են դեղին գույն, ամռանը՝ նարնջի, իսկ աշնանը՝ մուգ կարմիր։

Հայաստանում կային նաև այնպիսի բույսեր, որոնք ներկում էին դեղին գույն, ինչպես օրինակ՝ դեղնածաղիկը (գեաոռանկ), որ մեծ քանակությամբ աճում է Խիզանի և Սպարկետի շրջաններում[1]։ Դեղին ներկ ստանալու համար օգտագործում էին տոտոլ կամ բոքի բույսը[2], որ շատ տարածված էր լեռնային մասերում։ Դեղին գույն էին ստանում նաև ալաժահիր (շան խաղող) կոչվող բույսից, որի վրա աճող պտուղները դեռ չհասած ժամանակ տալիս են կանաչ ներկ, իսկ հասնելուց հետո՝ սև գույնի հեղուկ, որից պատրաստում են թանաք։ Դեղին ներկ ստացվում էր նաև բարբարիս կոչվող փշատերև թփի արմատներից, իսկ պտուղները տալիս էին կարմիր գույն։ Դեղնավուն ներկ է ստացվում և իշան կաթուկ կոչվող բույսից։

Կտորներ ներկելու համար ժողովրդի մոտ շատ տարածված է սոխի կեղևը, որից ստացվում է բաց շագանակագույն, նարնջի, իսկ եթե սոխի կեղևի հետ խառնում են ավելուկ կոչվող բույսը, ապա ստացվում է մուգ շագանակագույն։ Նույնանման գույն ստացվում է նաև քարաքոսից, մասուրից և դաղձ կոչվող բույսից։

Մի շարք բույսերից ու արմատներից ստացվում էին սև, կայուն ներկեր, ինչպես օրինակ, փոթոթ կոչվող բույսից[1], որի արմատի վրա աճում են մի քանի քառակող ձողեր, նրանց ծաղիկները շատ մանրիկ և մուգ կապտավուն են. այս բույսն աճում է խամհրում, ջրարբի տեղերում, մասամբ այգիներում, սրանից ստացվում է մուգ սև գույն։ Սև գույնի համար օգտագործում էին ընկուզենու տերևը և ընկույզի կանաչ կեղևը, բայց ամենից ավելի լավ ներկվում է ընկուզենու արմատի հավելված մասով, որից ստացված սև ներկը անջնջելի է ու չի գունաթափվում։

Բացի կենդանական և բուսական ներկերից, Հայաստանը հարուստ էր նաև հանքային ներկերով, որով հիմնականում ներկում էին կանաչ, կապույտ, կարմիր և դեղին գույներ։ Այս ներկերը՝ օխրաները, համեմատած կենդանական և բուսական ներկերի հետ, ավելի անկայուն էին և օգտագործվում էին մեծ մասամբ կտորներ դաջելու ժամանակ, կամ տնային կահկարասիք, փայտե իրեր, պատի զարդարանքներ ներկելու համար։

Հույն պատմիչներից Ստրաբոնը հիշում է, որ Սպերում կար մետաղ սանտիկ, այն նման էր պուրպուրին և անվանում էին հայկական ներկ, իսկ Պլինիուսի մոտ հիշատակվում է խրիզակալից պատրաստված ներկը, որ կոչվում է նաև քար.

Բյուրեղային ներկերով հարուստ էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանից՝ Լոռին, Սյունիքը, Վայոց ձորը և այլ վայրեր։

Վերոհիշյալ բոլոր ներկերի ու գույների տեսակները օգտագործվել են միջնադարյան Հայաստանում, դրանցով ներկվել են մեր պատմիչների հիշատակած տարբեր տեսակի բազմագույն նուրբ կտորները։

Մենք անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել ներկելու տեխնիկայի մասին։ Գործելուց առաջ թելը կամ բուրդը

---

[1] «Ազգագրական հանդես», գիրք XXV, Թիֆլիս, 1914, էջ 194։

[2] Այս ներկի մասին մենք տեղեկացել ենք Պետ. պատմական թանգարանի ազգագրական բաժնի № 101 արխիվից, որը գրի է առել պատմական գիտությունների թեկնածու Վ. Բդոյանը։

[1] Նույն տեղում։

ներկվում էր. այդ աշխատանքը կատարվում էր հատուկ արհեստանոցներում, որտեղ աշխատում էին մի քանի հոգի։

Ջուլհակ արհեստավորը իր տան կարիքների համար պատրաստած գործվածքը ինքըն էր ներկում պրիմիտիվ ձևով, օգտագործելով մեծ մասամբ գյուղի շրջակայքում աճող բույսերը։ Ներկարարները սկզբում պատրաստում էին հատուկ շիջուկ[1], որի վրա տարբեր նյութեր ավելացնելով՝ ներկում էին կապույտ, կանաչ, դեղին և մանիշակագույն։ Ներկում էին հատուկ կարասի մեջ, որը սովորաբար ուներ կես մետր խորություն և 30 սմ տրամագիծ, Կարասը թաղում էին թոնրի կողքին, որպեսզի ուժեղ տաքություն չզգացվի, շատ դեպքում կարասի փոխարեն օգտագործում էին պղնձե կաթսա։ Շիջուկը պատրաստելու համար վերցնում էին 1 կիլո 200 գրամ (2 նուկի) բորակ և իր ծավալի 5 չափով ջուր, եփելու ժամանակ վրան ավելացնում էին 600 գրամ կիր։ Հնդուկը եռացնելուց հետո, թողնում էին, որ հովանա ու մրուրը նստի հատակին, որից հետո մաքուր շիջուկը քամում և թողնում էին «դլուզի» (ամանի) մեջ 3—4 օր։ Այդ գործողությունից հետո կուռվե քսակի մեջ լցնում էին 60—80 գրամ լեղակ և գցում «դլուզի» շիջուկի մեջ, որտեղ մնում էր այն 10—15 օր, մինչև լեղակի կապոցը բարձրանար շիջուկի մակերեսը, որ նշան էր, թե ներկըն արդեն պատրաստ է։ Ներկը այդ ձևով պատրաստելուց հետո, սպիտակ բրդե «կանձերը» (փաթեթները), բամբակի թելերը կամ գործվածքները գցում էին այդ բաղադրության մեջ և պահում 10—12 ժամ. դրանից հետո հանում էին և լվանում սառը ջրով, ստացվում էր մուգ կապույտ գույն, իսկ բաց կապույտ ստանալու համար պատրաստված շիջուկի մեջ ներկվելիքը թողնում էին մեկ ժամ։

Մատենադարանի մի շարք ձեռագրերում, հատկապես №№ 9021 և 6246 ձեռագրերի մեջ[1] մանրամասն հիշատակվում է կապույտ (լաջվարդ) ներկի՝ նրա բաղադրության ու պատրաստման մասին։ Այս ձեռագրերի մեջ եղած տվյալներից պարզվում է, որ կապույտ ներկի համար անհրաժեշտ են՝ լեղակ, կալաքար, կիր, զառիկ և նաբաթ շաքար, յուրաքանչյուրից համապատասխան քանակությամբ։ Այդ խառնուրդից ստացվում էր ամենալավ, կայուն լաջվարդ (կապույտ) ներկը։ Այս ներկը միջնադարյան Հայաստանում ամենից շատ տարածված գույնն էր, որով ներկում էին ո՛չ միայն կոպիտ կտորներ, այլ նաև նուրբ մետաքսե շղարշներ։ Նույն ձեռագրում (էջ 58) մանրամասն նկարագրված է տարբեր գույներով ներկելու պրոցեսը (ինչպես, օրինակ, «յաղագս դեղնագոյն մինայի, յաղագս կանաչագոյն մինայի, յաղագս կապտագոյն մինայի, յաղագս մանիշակագոյն մինայի»)։ Խոսվում է (էջ 53) նաև հաղագս կարմիր (ղիրմզ) ներկի պատրաստման մասին։ Ձեռագրում հիշատակված մինա բառը վերաբերվում է ներկի շերտին, որով ծածկում էին գործվածքները։

Բրդե և բամբակե կտորները ներկում էին նաև քարաքոսի կեղևից[2] պատրաստված ներկով, որից ստացվում էր դարձյալ մուգ շագանակագույն ներկ։ Այդ բույսն աճում է բազալտ և բազալտանման գորշագույն քարերի վրա։ Տարբերությունը մյուս քարաքոսներից այն է, որ ներկանյութը սրա վրա ամրացած է առանձին առաձգական շերտերով, որոնք տերևի նման սերտորեն հյուսված են միմյանց հետ։

Նյութը (թելի կամ բրդի) ներկելուց հետո, որը կատարում էին առանձին մարդիկ, տրվում էր ջուլհակին։ Գործվածքի համար հենքը մեծ մասամբ պատրաստում էին սպիտակ գույնի թելերից. դազգահի վրա քաշելուց առաջ հենքի թելը դնում էին շրեշտաջրի մեջ, որպեսզի ամրանա, հետո ամրացնում

---

1 «Ազգագրական հանդես», գիրք XXV, էջ 194։

1 Մատենադարանի № 9021 ձեռագիր, էջ 62։

2 Պետ. պատմական թանգարանի ազգագրական բաժնի արխիվ, № 101 գործ. դրի է առնված Վ. Բդոյանի կողմից։

էին հատուկ փայտյա գործիքների վրա, չի բացնում արևի տակ և ապա քաշում դազգահին, որից հետո միայն սկսվում էր գործելու պրոցեսը:

Գործվածքները լինում էին մի քանի տեսակ. առաջին՝ միագույն կտավներ, որոնց որոշ մասի վրա դաջում էին զանազան տեսակի ու գույնի օրնամենտներ, ապա՝ գործվածքներ, որ նախշում էին գործելու պրոցեսում:

Գ. ՋՈՒՀԱԿԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԴԱԶԳԱՀ

Հայ և օտար պատմիչների մոտ պահպանված են տեղեկություններ Հայաստանում արտադրված գործվածքների մասին. սակայն ջուլհակի դազգահի ու մյուս գործիքների և նրանց ձևի վերաբերյալ հիշատակություններ չկան: Դրա փոխարեն միջնադարին պատկանող վայրերից հայտնաբերվել են հյուսվածքեղենի ու ձեռագործի մի քանի ոսկրե գործիքներ, ինչպես և կտորների մնացորդներ: Դազգահների վերաբերյալ որևէ նյութական փաստ չունենք. այդ բնույթի իրերը պատրաստվում էին փայտից և ավելի ևնթակա էին ոչնչացման: Մեր ձեռքը հասած գործիքների այդ եզակի նմուշներով դժվար է պատկերացնել նրանց ձևը, առավել ևս՝ դազգահների կառուցվածքը:

Հնագույն շրջանից[1] և միջնադարյան Հայաստանի վայրերից (Դվինի ու Անիի պեղումներից) գտնվել են թել մանելու իլիկի գլուխներ, որոնք պատրաստված են եղել ոսկրից, կավից[2]. ինչ վերաբերում է փայտե իլիկի գլուխներին, ամենայն հավանականությամբ նրանք եղել են թվով ավելի շատ և մասսայական գործածության համար ավելի հարմար, սակայն, ժամանակաբար, մեզ չեն հասել, ինչպես չի հասել ո՛չ մի իլիկի պոչ, որ նույնպես պատրաստվում էր փայտից:

Այս բացը մասամբ մեղմանում է, երբ նկատի ենք առնում միջնադարյան մանրանկարչության մեջ իլիկով մանելու գործողությունը պատկերող նկարները. ձեռագրերում հաճախ նկարված է ասեղնագործվող իլիկը ձեռքին: 385 ձեռագրում պատկերված աշխարհիկ կյանքին վերաբերող նկարների թվում կա նաև իլիկով թել մանող կնոջ նկարը. նկարիչն ամենայն մանրամասնությամբ դրսևորել է կնոջ դիմանկարը թել մանելու պրոցեսում:

Այս նկարը ո՛չ միայն հաստատում է իլիկի գոյությունը, այլև պատկերացում է տալիս իլիկի ձևի մասին:

Անիի և Դվինի պեղումներից հայտնաբերվել են նաև ոսկրից ու մետաղից գործիքներ, որոնք կիրառվել են գործելու և ասեղնագործության ժամանակ (նկ. 62):

Անիի 1906—1908 թթ. և Դվինի 1948—1951 թթ. սիստեմատիկ պեղումները հայտնաբերել են բրոնզից ու ոսկրից թել մաքրելու հերուններ, երկաթից քերիչներ և 6 հատ ոսկրե գործիք, վերջիններիս մի ծայրը շրջանաձև է և դեպի ցած՝ եռանկյունի, մյուս ծայրը՝ սրածայր է, հարմար ծակելու և հարթելու համար: Սակայն հետաքրքիր է ո՛չ միայն այն, որ Անիից ու Դվինից գտնված այդ ոսկրե գործիքները միևնույն տեխնիկայի արդյունք են, այլև այն, որ այդ գործիքների լայն ծայրերի վրա զծիկներից ու շրջանաձև նախշերից ստացվել են կանոցի դեմքեր: Սա ցույց է տալիս, որ, իրոք, միջնադարում այդ գործիքները օգտագործել են կանայք, իրենց աշխատանքի պրոցեսում: Հիշյալ գործիքները պատրաստող վարպետը դիմանկարների հետ արտահայտել է նաև կանանց գլխի ողջ տարազը: Անհրաժեշտ ենք

---

[1] Մուխանովթ-Թափա, №№ 1435/139, 1439/306, իլիկներ. Շնգավիթից № 1330 կոլ. 11, 12, 160, 166, 223, իլիկներ. Նոյեմբերյանի շրջանի կողր գյուղից գտնված կավից իլիկի գլուխ № 423 և ոսկրից №№ 404, 401: Նոր-Բայազետից, ոսկրից իլիկի գլուխ № 471:

[2] Ոսկրե իլիկի գլուխներ Անիից՝ №№ 123/1229, 1231, 1232, 1230 և Դվինից № 301 գտնվում են Պետ. պատմական թանգարանի հնագիտական բաժնում:



Նկ. 62. Ջուլհակի մետաղե գործիք, Անիի պեղումներից, IX—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան

համարում նկարագրել այդ գործիքներից մի երկու օրինակ: Անիից գտնված № 1162 ոսկրե գործիքն[1] ունի 8 սմ երկարություն և 3 սմ լայնություն: Վերևի մասից նրա վրա շրջանաձև պատկերված է կանացի դեմք: Ականջի ուղղությամբ, երկու կողմից իջնում են 5-ական շրջանաձև նախշեր, որոնք պատկերում են կնոջ հյուսքի վրայից կախված ոսկե կամ արծաթե զարդարանքները: Ոսկրե այս գործիքը վերևի երկու ծայրերից ունի մեկական անցք, որոնց միջով են անցկացրել թելերը: Նույն ձևով են պատրաստված №№ 1164 և 1203 ոսկրե գործիքները, միայն սրանց վրա շրջանաձև նախշերը քիչ են ու դեմքերի վրա կան երկուական խուլ անցքեր, մարմնի վրա երեք շրջանաձև նախշերը նույնպես ունեն իրենց նշանակությունը: Նույնատիպ ոսկրե երեք գործիքներ գտնվել են Դվինի 1949 և 1950 թվականների պեղումներում, № 1/206 գործիքի վրա կա երկու անցք և նման է Անիի № 1162 ոսկրե գործիքին, այն տարբերությամբ, որ սրա երկու կողքերի հյուսվածքների շրջանաձև զարդերը շարունակվում են գծային խազիկներով մինչև ծնոտի տակը և ծածկում բերանի մասը: Սա թույլ է տալիս մեզ ենթադրելու, որ պատրաստող վարպետը նկատի է ունեցել միջնադարյան Հայաստանի այն կանանց, որոնք սովորություն են ունեցել բերանները ծածկելու:

Բացի վերոհիշյալից, 1950 թ. պեղումների ժամանակ Դվինում գտնվեց մի ուրիշ ոսկրե գործիք, որը ներսից խողովականման անցք ուներ, իսկ արտաքուստ զարդարված էր երկշար շրջանաձև զարդերով: Սա նման էր մյուս գործիքներին, միայն ցածի մասում ուներ քառատամ հավելված:

Վերոհիշյալ ոսկրե գործիքները անշուշտ կիրառվել են հյուսվածքեղենի, գորգագործության և ասեղնագործության ժամանակ: Անիից գտնված նույնատիպ գործիքների մասին ակադեմիկոս Հ. Օրբելին գրում է. «Այդ ոսկրե գործիքները ծառայել են կոկելու և կարերը հարթելու համար»[1]: Մեր կարծիքով, ինչպես կարելի է ենթադրել ոսկրե գործիքներից երկուսի վրա եղած անցքերից, դրանք օգտագործվել են նաև ձեռքի փոքրիկ դաղգահների վրա նուրբ կտորներ գործելու համար (նկ. 63):

Հյուսվածքեղենի և ձեռագործների հետ սերտորեն կապված է մկրատների, քերիչների գործածությունը: Դվինի պեղումներից առայժմ հայտնաբերվել են միայն երկու մկրատ, մեկը՝ մեծ, մեկը՝ փոքր, ձեռագործի համար: Գործվածքների հետ կապված ուրիշ նյութական մնացորդներ առայժմ չունենք, սակայն կասկած չի կարող լինել, որ հետագա պեղումների արդյունքները մեզ հնարավորություն կտան այդ հարցը ավելի հիմնավորված փաստերով լուսաբանելու:

[1] Միջնադարյան Հայաստանի ջուլհակ արհեստավորների մասին, ինչպես արդեն ասել ենք, կան հիշատակություններ և հայ պատ-

[1] Պետ. պատմական թանգարան:

[1] И. А. Орбели, Каталог Аннйского музея, стр. 110.



Նկ. 63. Ջուլհակի և դորպազործի ոսկրե գործիքները, Դվինի և Անիի պեղումներից, IX—XIII դդ.
Պետ. պատմական թանգարան
Գծ. Առաքել Պատրիկի

միշների մոտ, և հիշատակարաններում, նույնիսկ անվանական ձևով[1], սակայն ջուլհակի դազգահի վերաբերյալ չունենք ո՛չ միայն նյութական մնացորդի օրինակ, այլև մատենադիրների մոտ բացակայում է գրավոր որևէ հիշատակություն։ Բայց ջուլհակի դազգահի գոյությունը XVIII—XIX դարերում մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ միջնադարում, մինչև XV դարը, ջուլհակի դազգահը պետք է լիներ նույն ձևի, շատ չնչին տարբերությամբ, որովհետև ջուլհակի դազգահի փոփոխությունը առհասարակ կատարվել է շատ դանդաղ և հիմնականում վերաբերել է չափերին և հենքին։

XVIII—XIX դարերի ջուլհակի դազգահը կտավի կամ բրդե շալեր գործելու համար, պիտի ունենար 70—75 սմ երկարություն, կես մետր լայնություն և կես մետր խորություն։ Այդպիսի դազգահները ունեցել են եռանկյունաձև կառուցվածք[2]։ Ամենայն հավանականությամբ նույն ձևը և նույն չափերը եղել են նաև IV—XV դդ.։ Գրավոր աղբյուրների և նյութական մնացորդների հետքերը ցույց են տալիս, որ միջնադարում դազգահները եղել են երկու տիպի։ Դազգահի մի տեսակի համար պատրաստում էին հատուկ հոր և դազգահի կես մասը տեղավորում էին այդ փորվածքի մեջ, իսկ ջուլհակը նստում էր գետնին, որով հեշտացվում էին նրա ոտքի շարժումները. այդ ձևի հորերն ունեին նաև այն առավելությունը, որ աշխատանքը ավելի արտադրողական էր դառնում։ Դազգահների այս տեսակի վերաբերյալ առայժմ հայտնի է միայն մի փաստ, որը վերաբերում է XIII դարին։ Սևանի 1282 թ. արձանագրության մեջ ասվում է՝ «զՀաստատե[ա]լ դիրս մեր խափանել ջանա եւ շարեաւ առնու, կամ հորակտաւ իջուլհակէ նղովե[ա]լ լիցիս»[3]։

Արձանագրության մեջ հիշված «հորակտավ» բառը ցույց է տալիս, որ XIII դարում ջուլհակներից վերցրել են ո՛չ միայն դրամական հարկ, այլև բնաուրք՝ հորան կտավով։ Մյուս կողմից, այդ փաստը հաստատում է, որ XIII դարում գոյություն է ունեցել ջուլհակի հորան դազգահի տեսակը։ Այդ ձևի հորերը պահպանվել են մինչև XIX դարի վերջերը, հատկապես Արևմտյան Հայաստանում։ Բացի այս գրավոր փաստից, 1939 թ. Դվինի պեղումների ժամանակ, միջնաբերդի հրապարակի մոտ բացված շենքերից մեկում հայտնաբերվեց մի փորվածք, որն իր արտաքին տեսքով ու չափերով վկայում է, որ դա եղել է ջուլհակի դազգահի հոր[1]։

Միջնադարյան Հայաստանում մետաքսե կտորներ ու գորգեր գործելու համար եղել են նաև այնպիսի դազգահներ, որոնք հարմարեցված էին գետնի երեսին։ Դրանք լինում էին տարբեր չափերի, որովհետև նրանց մեծությունը կախված էր կտորների տեսակներից։ Այդ դազգահները գետնի երեսին պատրաստում էին այն ձևով, որ գործող վարպետը կարողանա նստել ծալապատիկ կամ թե չոքած վիճակում։ Բայց պատահում էր նաև, որ դազգահները պատրաստում էին բավական բարձր և գործող վարպետը կարողանում էր նստել աթոռի կամ թախտի վրա։ Դժբախտաբար, առայժմ մենք մեր ձեռքի տակ չունենք հիմնավոր փաստեր, որպեսզի վճռականապես կարողանանք ասել, թե միջնադարում դազգահների որ ձևն էր ավելի շատ տարածված։ Նրանց տարբեր ձևերի գոյությունը պայմանավորված էր շինական գյուղացու պահանջներից։ Միջնադարյան Հայաստանում, բացի պրոֆեսիոնալ ջուլհակից, գյուղացիների մեծ մասը տնայնագործ ջուլհակներ էին, որոնք իրենց գյուղատնտեսական աշխատանքին զուգահեռ, ձմեռվա ամիսներին տնտեսության կարիքները բավարարելու՝ հագուստների, փուվածքների հա-

[1] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 363, 364, 365, 367, 369։

[2] «Ազգագրական հանդես», գիրք XXV, էջ 194։

[3] Կ. Ղաֆադարյան, Սևանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 18—19։

[1] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 180։

մար աշխատում էին իրենց տնտեսության մեջ և օգտագործում տարբեր չափի դազգահներ, նկատի ունենալով կտորի տեսակը։ Միջնադարում կային նաև փոքրիկ դազգահներ, որոնք օգտագործվում էին նուրբ և նեղ կտորների համար։ Կտոր գործելու դազգահները պատկերող երկու նմուշ պահված են XVI դարի № 5472 ձեռագրում, որոնք մեզ որոշ պատկերացում են տալիս միջնադարյան ջուլհակի դազգահի ձևի մասին։

Մենք անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել XIX դարի Վասպուրականի նահանգի բնակչության գործածած դազգահի մի նմուշ, որ իր ընդհանուր գծերով նման է միջնադարյան դազգահներին (նկար 64, 65)։

Նկ. 64. Ջուլհակի միջնադարյան դազգահ, Պետ. մատենադարանի № 5472 ձեռագրի, մանրանկարից XVI դար։



Նկ. 65. Ջուլհակի գետնահոր (ցլհահոր) դազգահ Վասպուրականից, XIX դար։ Գծ. Առաքել Պատրիկի

Դ. ՋՈՒԼՀԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անհնարին կլիներ առհասարակ մարդկության կյանքը պատկերացնել առանց սննդամթերքի, հագուստի, բնակարանի, զենքերի ու գործիքների, փոխադրական միջոցների:

Հասարակության զարգացման պատմությունից գիտենք, որ մարդկանց կենցաղային կարիքների մեջ կարևոր տեղ է բռնել հագուստը:

Ինչպես սնունդը, այնպես էլ հագուստը մարդկանց համար անհրաժեշտ է եղել բոլոր դարերում, առանց սեռի և տարիքի խտրության: Հագուստի համար գործածել են ամենանուրբ հյուսվածքից մինչև ամենակոպիտ գործվածքները, որոնք արտադրվում էին հատուկ դաղգահների միջոցով:

Ֆրիդրիխ Էնգելսը «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության մեջ, երբ խոսում է աշխատանքի առաջին մեծ բաժանման մասին, ասում է. «Զարգացման այս աստիճանի արդյունաբերական գործունեության բնագավառում եղած նվաճումներից առանձնապես կարևոր նշանակություն ունեն երկուսը: Առաջինը ջուլհակի դաղգահն է, երկրորդը— մետաղահանքերի հալումը և մետաղների մշակումը»[1]:

Ֆ. Էնգելսը ցույց է տվել, որ այս երկու ճյուղերի զարգացումը հետագայում է՛լ ավելի նպաստում են արտադրողական ուժերի բարձրացմանը և պայմաններ են ստեղծում աշխատանքի երկրորդ մեծ բաժանման համար, այն է «արհեստը բաժանվեց երկրագործությունից»[2]: Ինչպես բոլոր արհեստավորները, այնպես էլ ջուլհակը մասնագիտանում է իր աշխատանքում և արդեն հանդես է գալիս ո՛չ միայն իր կարիքների համար անհրաժեշտ գործվածքներ արտադրելով, այլև որպես պրոֆեսիոնալ ջուլհակ արհեստավոր արտադրում է միաժամանակ և հատուկ պատվերով, և շուկայի համար:

Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայկական բարձրավանդակում, դեռևս հնագույն ժամանակներից ջուլհակությունը եղել է ամենից կարևոր և տարածված արհեստներից մեկը: Ջուլհակ արհեստավորները, թե՛ տնայնագործ և թե՛ պրոֆեսիոնալ, իրենց աշխատանքները հարմարեցնում էին ազգաբնակության պահանջներին, մյուս կողմից՝ հաշվի էին առնում նաև կլիմայական պայմանները: Հայտնի է, որ տաք գոտում ընկած երկրների բնակիչները գործածում են ավելի նուրբ կտորներ և այլ տարազ, քան ցուրտ գոտում գտնվող երկրների բնակիչները: Հագուստի տարազի բազմաձևությունը կախված էր նաև աշխատանքի բնույթից ու դասակարգային պատկանելիությունից: Տարազի հարցը հատուկ ուսումնասիրության առարկա է, ուստի մենք այստեղ այդ մասին չենք խոսում:

Միջնադարյան Հայաստանում մեծ քանակությամբ արտադրված կտորները ո՛չ միայն հյուսվում էին ջուլհակի հատուկ արհեստանոցում՝ պրոֆեսիոնալ արհեստավորի ձեռքով, այլև, ավելի շատ, արտադրվում էին Հայաստանի շինականների ձեռքով, գյուղատնտեսական աշխատանքին զուգընթաց. այդ աշխատանքը ձմեռվա ամիսների ամենակարևոր զբաղմունքներից մեկն էր թե՛ տղամարդկանց, և թե՛ երիտասարդ կանանց համար: Սրանք հյուսում էին զանազան տեսակի կտավներ, քաթաններ, նուրբ գործվածքներ, դորգեր և կապերաններ: Չմոռանանք նշել, որ ջուլհակ արհեստավորների որոշ մասը կենտրոնացած էր վանքերին ու դղյակներին կից արհեստանոցներում՝ «գործատներում» և կատարում էր ազնվականների ու հոգևոր դասի պահանջները:

Մատենագրական աղբյուրները թեև հա-

---

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 212:

[2] Նույն տեղում, էջ 215:

բուստ տեղեկություններ են տալիս տարբեր տեսակի կաորների վերաբերյալ, սակայն լռում են այդ կաորները արտադրող արհեստավորների դրության և նրանց գործածած արտադրական գործիքների և տեխնիկայի մասին։

* * *

Հայկական բարձրավանդակի վրա ապրող հնագույն բնակիչների պատրաստած գործվածքների ու նրանց հագուստների մասին մենք հնարավորություն չունենք այստեղ մանրամասն խոսելու, քանի որ մեր նպատակից դուրս է. այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում համառոտակի նշել հայերից առաջ Հայկական բարձրավանդակում ապրող ուրարտացիների մասին։ Սեպագիր արձանագրությունները և նյութական մնայուրդները հաստատում են, որ այդ ժողովուրդը ունեցել է բարձր կուլտուրա։ Այլ արհեստների թվում, նրանց մոտ զարգացած է եղել նաև ջուլհակությունը։

Ուրարտական շրջանում արտադրված գործվածքներին մենք ծանոթանում ենք միայն քանդակների միջոցով, բացառությամբ մեկ-երկու գրավոր փաստի, որոնք վերաբերում են Ասորեստանի թագավոր Սարգոնի կատարած ավարառությանը՝ Մուսասիրում։ Ըստ ասորեստանյան արձանագրությունների՝ ավարի մեջ, անասունների, ոսկե և արծաթե զարդերի, թանկարժեք քարերի հետ հիշատակվում են անհամար գույնզգույն կերպասներ և զգեստներ[1]։ Պրոֆ. Գ. Ղափանցյանը հիշատակում է, որ վերոհիշյալ արձանագրության նոր ընթերցումից պարզվում է, որ այդ ավարի մեջ եղել են 130 զանազանագույն հագուստներ, անգամ վշյա շապիկ։ Մի ուրիշ տեղ դարձյալ Սարգոնի կոդոպատների մեջ հիշվում են «բազմագույն հանդերձներ ու կտավից պարեգոտներ և հյուսելի շիկակարմիր՝ բուրդ Ուրարտուի և Կիլխուի աշխարհներեն»[1]։

Ուրարտական շրջանի հագուստների ու կաորների մասին համեմատաբար լայն պատկերացում ունենալու համար անհրաժեշտ ենք համարում այստեղ հիշատակել նաև մի քանի քանդակ։ Նյութական մնացորդներից հետաքրքիր մի դոկումենտ է պատկերաքանդակ գլանակը, որի վրա գրված է «կնիք Ուրզանայի արքայի քաղաքի Մուձաձիրի»։ Այս կնիքի վրա եղած առնապատկերը իր տարազով նման է ասուրական արքաների հագուստին[2]։ Այդ քանդակի վրա եղածներից մեզ ամենից շատ հետաքրքրում է պատմուճանը, որ համարվում է թագավորի կարևոր հագուստը։ Ուրզանայի պատմուճանը պճղնավոր է, շատ ամփոփ և կարճ թևերով, որոնց առջևի մասը բաց է շարժումները հեշտացնելու համար։ Քանդակից պարզ երևում է, որ պատմուճանը պատրաստված է նուրբ և թանկարժեք կտորից, վրան ասեղնագործված, իսկ ծայրերը շրջանված են ծոպավոր հյուսքով։ Բացի այդ օրինակից, ուրարտական շրջանին պատկանող մի քանի արձանիկների վրա եղած հագուստի նախշերից պարզվում է, որ այդ շրջանում ևս գործվել են թանկարժեք հաստ կտորներ։ Բեռլինի թանգարանում պահպանված է մի արձանիկ (մարմինը պղնձից, դեմքը՝ սպիտակ քարից), որը հայտնաբերվել է Թոփրակ-կալեի պեղումներից[3]։ Հիշյալ արձանիկը պատկերում է ուրարտական շրջանի ավագանու տարազը։ Պատմուճանը պճղնավոր է և լանջերը իրար վրա բերված, իսկ թևերը երկար են ու վերջանում են ժապավենաձև, ասեղնագործ զարդանախշերով. նույն զարդանախշերը նկատվում են նաև պատմուճանի քղանցքի շուրջը. պատմուճանի վրայից, ձախ ուսով՝ դեպի առաջ կախված է մի ուրար, որը ավարտվում է երկար ծոպերով։

---

1 Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 206—207։

1 Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազի, էջ 27։

2 Նույն տեղում, էջ 18—19։

3 Նույն տեղում, էջ 24։

Գործվածքների մասին պատկերացում ունենալու համար արժեքավոր կարող է հանդիսանալ Թոփրակ-կալեի պեղումներից հայտնաբերված ոսկե մեդալիոնը, որի վրա

քերին կան գոտիներ, իսկ գլուխները ծածկված են շատ նուրբ շղարշյա քողերով, որոնք ասեղնագործված են նույն օրնամենտներով։ Մեդալիոնի վրա եղած կանանց զգեստի

Նկ. 66. Ուրարտական ոսկե մեդալիոն, գտնված Վանի Թոփրակ-կալեում։ Գ.Ա. Ալաքել Պատրիկի

պատկերված են զույգ կանայք, որոնց պատմուճանները նույնպես պճղնավոր են ու ճոխ. կտորի վրան պարզ երևում են նախշերը, քառակուսի օրնամենտներով։ Դիցուհու հագած պատմուճանի վերջավորքը ունի ասեղնագործած ծոպեր, թևերը կարճ են և վերջանում են զարդանախշերով. այդ երկու կանանց մեջ-

գործվածքին ու նախշերին հար ու նման է Վանում գտնված՝ ուրարտական շրջանին պատկանող՝ Բագրատուի արձանիկի վրա քանդակված հագուստը[1] (նկ. 66, 67)։

Վերջին տարիները՝ 1948—1951 թթ., կար-

---

1 Պետ. պատմական թանգարան։

միր բլուրի պեղումներից հայտնաբերվել են ուրարտական շրջանի բամբակի թելի և այրված կտորների մնացորդներ, իսկ 1952 թ. գտնվեցին բավական մեծ քանակությամբ

Նկ. 67. Ուրարտական բրոնզե արձանիկ, գտնված Վանի մոտ. Պետական պատմական թանգարան

բրդե հաստ գործված կտորներ՝ ածխացած վիճակում։

Ուրարտացիներից հետո էլ այդ բարձրավանդակում ապրող հայ ժողովրդի գլխավոր զբաղմունքներից մեկը եղել է ջուլհակությունը։ Այս վաղ ժամանակաշրջանի համար, դժբախտաբար, փաստերը առայժմ բացակայում են։ Գործվածքների ու հագուստների մասին հատուկտոր տեղեկություններ քաղում ենք հույն պատմիչներից։ Հերոդոտը և, հետագայում, Ստրաբոնը հայերի տարազը, զենքը նույնացնում էին փրյուգացոցի հետ։ Բայց այդ պատմիչների մոտ չկան հիշատակություններ գործվածքների տեսակների ու նրանց պատրաստման տեխնիկայի վերաբերյալ։

Արտաշեսյան դինաստիայի ժամանակ, հատկապես Տիգրանի թագավորության օրով, Հայաստանում բավական ուժեղ էր հելլենական կուլտուրայի ազդեցությունը։ Հունահռոմեական տվյալներով պարզվում է, որ Տիգրան Բ-ի պալատականները և յուրայինները հագնում էին հռոմեական տարազ, թեև գործածված կտորների մեծ մասը, հավանորեն, արտադրում էին տեղում։

Արտաշեսյան շրջանի հագուստների և կտորների մասին որոշ հիշատակություններ պահպանված են Մովսես Խորենացու Պատմության մեջ։ Խորենացին, Արտաշես թագավորի թաղումը նկարագրելիս, նշում է. «Պատմուճանն, որ զմարմնովն ոսկեթել» այնուհետև պատմիչը թվում է գույնզգույն կտորներ, որով պճնվում էին կանայք և տղամարդիկ. «Մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէսպէս գունից և անկուածոց՝ արանց միանդամայն և կանանց հասարակաց բաղմացոյց. որով տգեղագոյնքն իբրև զգեղատես երևէին սքանչելիք, և գեղատեսքն ըստ ժամանակին առ հասարակ դիւցազնացեալք»[1]։

Հայ և օտար պատմիչների մոտ կան հիշատակություններ այն մասին, որ թագավորական պատմուճանները լինում էին ծիրանի գույնի, իսկ երբեմն էլ՝ խառը սպիտակավուն գծերով։ Այդ գույները գործածական էին նույնիսկ պարսկական արքաների՝ Կյուրոսի և Դարեհի ժամանակ. այդ մասին հա-

---

1 Մ. Խորենացի, էջ 72։

դորդում է հույն պատմիչ Քսենոֆոնտը. նույն դույնի պատմուճանի գործածությունը տեսնում ենք Ալեքսանդր Մեծի մոտ[1]։

Դիոն Կասիոսը, նկարագրելով հայոց թագավոր Տիգրան Բ-ի հանդիպումը հաղթող Պոմպեոսի հետ, գրում է. «Մերկացաւ սպիտակափառն պատմուճանը և կրկնոցը համակ ծիրանի»[2]։

Հայ պատմիչներից հատկապես Փ. Բյուզանդը և Ղ. Փարպեցին հաստատում են արքայական ազնիվ կտորից ծիրանագույն պատմուճանների գոյությունը, որ գործածական էր նաև Արշակունիների ժամանակ։

Փավստոս Բյուզանդը, Հայոց Արշակ Բ թագավորին բանտից դուրս բերելու առթիվ Դրաստամատի կազմակերպած ճաշկերույթը նկարագրելիս, գրում է, որ նա իր տիրոջը հագցնում է «ազնիւ պատմուճան», իսկ Ղ. Փարպեցին հաղորդում է. «Զպատուական քարինս, զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն... ի թագսն և ի հանդերձսն յոսկեհուռս պաճուճեալս ընդելուզանեն»[3]։ Ծիրանագույն և ազնիվ կտորից պատմուճաններ հագնում էին նաև թագուհիները, իշխանուհիները և նույնիսկ ազնվական դասի կանայք։ Մ. Խորենացին գրում է, թե ինչպես Տրդատը հրամայում է Աշխենին «զգեցուցանել ծիրանիս»[4]։ Իսկ Աժդահակի տեսիլի մեջ, Հայաստանի լեռան վրա կանգնած էր «կին ոմն ծիրանազգեստ»[5]։ Հին շրջանի պատմիչներից Ագաթանգեղոսը նշում է, որ հայոց թագավոր Տրդատ Գ-ը Հռիփսիմե կույսին արքունիք բերելու համար ուղարկում է նրան «ոսկեպատ գահաւորակս», նաև՝ «հանդերձս ազնիւս գեղեցիկս, փափուկս, պայծառս և զարդարանս երևելիս»[6]։ Ագաթանգեղոսի մոտ կա անգամ Հռիփսիմե կույսի թաղման հանդիսի նկարագրությունը, որտեղ թագավորը և իշխանները բերում են գույնզգույն կերպասներ պատանքի համար, որոնք հյուսված էին ոսկեթելերով։

Վերոհիշյալ քաղվածքում հիշված բոլոր տեսակի ածականները ինքնստինքյան ցույց են տալիս կտորների նրբությունը։

Արտաշեսյան և Արշակունյաց շրջանին վերաբերյալ հայ պատմիչների մոտ գործվածքների մասին անհամեմատ քիչ տեղեկություններ կան, սակայն հետագայի փաստերը, մասնավորապես Բագրատունյաց շրջանի հարուստ հիշատակությունները, հիմք են տալիս մեզ ասելու, որ ֆեոդալիզմի վաղ շրջանում ևս ջուլհակությունը զարգացած է եղել։

IX—XIII դարերում մանվածքային գործը Հայաստանում հասնում է բարձր զարգացման, ունենալով մի քանի խոշոր արդյունաբերական կենտրոններ, ինչպիսիք են Դվինը, Անին, Էրզրումը, Երզնկան և Վանը։

Ֆեոդալիզմի ծաղկման ու վերելքի շրջանում, մի կողմից իշխանական ու արտոնյալ խավի շռայլ ու զեղ կյանքը, մյուս կողմից նոր զարգացող քաղաքային դասի հանդես գալը, պահանջ են առաջադրում, որպեսզի հյուսվածքեղենի գործը ավելի ծավալվի ու ավելի բազմատեսակ գործվածքներ արտադրվեն։ Բացի այդ, ջուլհակ արհեստավորները պետք է բավարարեին նաև հոգևորականների ու Հայաստանի ռազմիկների բարդ պահանջները։ Հայաստանում արտադրվող գործվածքների որոշ մասն էլ որպես նվեր ուղարկվում էր Խալիֆաթ և բյուզանդական արքունիք։

Միջնադարյան Հայաստանում ջուլհակության արտադրանքի մեծ մասը կազմում էին հասարակ կտորները, որով բավարարվում էր Հայաստանի աշխատավոր ազգաբնակության մոտ 70 տոկոսը. դրա մեջ մտնում էին պատմիչների ռամիկ անվանած ցածր խավի ներկայացուցիչները։

Հայաստանից խալիֆայություն և բյուզանդական կայսրություն արտահանվում էին

---

1 Վ. Հ ա յ ո ւ ն ի, Պատմություն հին հայ տարողի, էջ 73։

2 Նույն տեղում, էջ 73։

3 Ղ. Փ ա ր պ ե ց ի, էջ 21։

4 Մ. Խ ո ր ե ն ա ց ի, էջ 226։

5 Նույն տեղում, էջ 77։

6 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 90։

ո՛չ միայն հում նյութեր՝ ներկեր, «որդան կարմիր», կաշվեղեն, հայահատիկ, անտառանյութ, ձկնեղեն, այլև պատրաստի հագուստներ ու գործվածքներ, որոնցից հիշատակության արժանի են բրդե նուրբ հյուսվածքները, մետաքսե ասեղնագործ կտորները և գորգերը, որոնք հայտնի էին որպես լավագույնները՝ թե՛ իրենց գույներով, և թե՛ նախշերով։

Մեր քննարկած ժամանակաշրջանի քաղաքներում առևտրական հարաբերությունների ընդարձակման հետ միասին տեսնում ենք նաև արհեստագործական արտադրության մեջ աշխատանքի ավելի լայն բաժանում և դրամական ձևի զարգացում։ X—XIII դարերում առևտրա-վաշխառուական կապիտալն արդեն կատարում էր իր քայքայիչ դերը, որից տուժում էր ո՛չ միայն գյուղացին, այլև արհեստավորը։

Հայ մատենագիրների տվյալներից և վիմական արձանագրություններից պարզվում է, որ պետության և ֆեոդալ իշխանների կողմից հարկադրման են ենթարկվել նաև արհեստավորները, այդ թվում՝ ջուլհակներն ու ներկարարները։ Ավանի 1285 և 1287 թթ. արձանագրություններից երևում է, որ հարկերից ազատված են եղել ո՛չ միայն ավանի այգիները, այլև ջուլհականոցը կամ ջուլհակը, որ հարկատու է եղել ֆեոդալներին։

XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ արհեստավորները հարկադրման են ենթարկվել նաև պետության կողմից։ «Այլև զամենայն արուեստագէտս, եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին։ Այլև զծուլակս, և զլիճս ձկնորսաց, զերկաթահանս, զգարբինս և զշապարարս (ներկարար), և զի՞ պիտոյ է մանրամասնաբար ասել, զամենայն դուռն շահից հատից ի մարդկանէ»[1]։

Ինչպես փաստերը ցույց են տալիս, հարկատու են եղել ո՛չ միայն քաղաքի, այլև գյուղի արհեստավորները, որոնց թվում նաև ներկարարները (շապարարները), իսկ ներկարարների գոյությունը պայմանավորված էր ջուլհակության զարգացումով։

Արհեստավորների և վաճառականների հարկատվության մասին հիշում է նաև Մխիթար Գոշը իր «Դատաստանագրքում». «Այլ թէ բնակիչն ըստ արուեստի կամ ընդ վաճառի հարկեցին»[1]։

Վիմական արձանագրություններում ու ձեռագրերում հանդիպում են այնպիսի տերմիններ կամ անուններ, որոնք կապված են գործվածքների արտադրության հետ։

1285 և 1287 թթ. Ավանի արձանագրությունների մեջ հիշվում են ջուլհակ և ջուլհականոց տերմինները։ Մատենադարանի № 695 ձեռագրի մեջ մի շարք տարբեր արհեստների թվում նշված են նաև՝ «ջահրար», «ջուլհակ», «մուճկակար» և այլն, որոնք նույնպես տարածված են եղել Հայաստանում։ Կտավագործության մասին բավականին հիշատակություններ կան XIII—XIV դարերի ձեռագրերի հիշատակարաններում, որտեղ այլ արհեստավորների հետ, ավետարան ստացողներից հիշվում են նաև ջուլհակը, կտավագործը, քաթանագործը (վուշագործ) և դերձակը։ Խարբերդի ս. Նշան եկեղեցու Մատենադարանի 3276 ձեռագիր-ավետարանի հիշատակարանում կարդում ենք՝ «ՀՄասներ ջուլհակն և զամուսինն իւր Տուխթար»[2]։ № 3797 «Ճառընտիրի» XVI գլխում հիշատակվում է Թորոս ջուլհակը։ Նույն «Ճառընտիրի» 31-րդ գլխում կան ձեռագիր ստացողներ Մարգարե և Ավետիք ջուլհակների անունները[3], իսկ հաջորդ գլուխներում հիշատակվում են Վարդերես և Կարապետ ջուլհակները, որոնք ստացել են ձեռագրերը[4], կտավագործի ու քաթանագործի մասին նույնպես կան ջուլհակների անունների հիշատակություններ, ինչպես օրինակ՝ Ամպեր, Հովհաննես կտավագործները[5]։

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 349։

1 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 314։

2 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 169։

3 Նույն տեղում, էջ 362։

4 Նույն տեղում, էջ 364 և 367։

5 Նույն տեղում, էջ 363 և 366։

Նման օրինակներ բավականին շատ կան հետագա դարերին պատկանող ձեռագրերի հիշատակարաններում: Կտավագործի, ջուլհակի և դերձակի մասին հիշատակում է նաև Գոշը՝ իր առակներում[1]: Կիրակոս Գանձակեցու մոտ կա վկայություն կտավի մասսայական արտադրության մասին. Արճեշի մեծատուններից մեկը իր որդու մահից հետո, իր ունեցած ու վարձու տված կուղպակներից (խանութներից) ստացած գումարով գնում է մորթի, կտավ, պատրաստում է մեծ քանակությամբ հագուստեղեն ու բաժանում աղքատներին[2]: Եվրոպացի ճանապարհորդ Ռուբրուքը իր շրջագայության ժամանակ հանդիպում է մի հայ վանականի, որ պարապում էր կտավագործությամբ, և դժգոհելով նրանից, հայտնում է, թե՝ «Մի գիր անգամ չի ճանաչում և արհեստով կտավագործ է»[3]:

Այս փաստը, մի կողմից, վկայում է կտավագործ արհեստավորի առկայության մասին, մյուս կողմից՝ ցույց է տալիս, որ կային վանականներ, որոնք վանքերին կից գործատներում, արհեստանոցներում պարապում էին նաև ջուլհակությամբ: Վերոհիշյալ փաստերը ինքնին հաստատում են, որ ջուլհակությունը Հայաստանի տնտեսության ամենակարևոր և մասսայական արհեստներից մեկն է եղել:

Պատմիչների հաղորդած տեղեկությունները, որոնք վերաբերում են թագավորների, իշխանների, հոգևորականների նիստուկացին, նրանց հագուստներին, պարզ ու որոշ ցույց են տալիս գործվածքային արտադրանքի վիճակը միջնադարյան Հայաստանում: Մենք անհրաժեշտ ենք համարում նախ հիշատակել ընդհանրապես Հայաստանին վերաբերող հայ պատմիչների տվյալները և ձեռագրերի կազմերի ներսի աստառների մի քանի նմուշներ, ապա միայն կանդրադառնանք առանձին կենտրոններում պատրաստվող կտորների տեսակներին, որոնց մասին մեզ հաղորդում են նաև օտար պատմիչները:

Պալատականների ու իշխանների հագուստների ամբողջական պատկերը մենք դանում ենք Եղիշեի մոտ, երբ նա նկարագրում է Վասակ Սյունի մարզպանին պարսկական արքա Հազկերտ Բ-ի պալատը ներկայանալիս. «Եւ նա (Վասակը) ըստ առաջին կարդի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն, կապէր և զպատիւ վարսին և զխոյրն ոսկեղէն գնէր ի վերայ, և զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և զդումարտակն ի պարանոցին, զամոյրսն զթիկամբն»[1]: Իշխանական զգեստի ամբողջական նկարագիրն է տալիս նաև Սեբեոս պատմիչը, երբ խոսում է Սմբատ Բագրատունու հագուստի մասին:

Ղազար Փարպեցին նույնպես հիշատակում է իշխանների ոսկեհուռ կերպասյա հագուստները: Հետաքրքիր է Ուխտանեսի կողմից գրի առնված այն հիշատակությունը, որ վերաբերում է Մովսես կաթողիկոսի ժամանակ Դվինի կաթողիկոսարանի հանդերձարանում պահպանված թանկարժեք գործվածքներին և ոսկե ու արծաթե սպասներին ու զարդերին. «Ապա այնուհետև բերեալ զաւանդն՝ որ ինչ նմայն է հաւատացեալ ի Մովսիսէ Հայոց կաթողիկոսէ ի ժամ մահուան իւրոյ, նախ զփիրկական և զկենսական Աստուածոյ նշանն... և յետ այնորիկ զԱթոռն և զգաւազանն, որ պատուով պահեալ էր և պաշտեալ, և զայլ ամենայն զսպասս սրբութեան՝ զոսկիհն և զգեստ սրբոյն սեղանոյն, և զվարագոյրս և զխնկանոցս, և զբուրվառս, և զքշոցս, և զվակաս կաթուղիկոսին մետաքսեայ կազմեալ յականց և յոսկոյ և ի մարգարտէ, և զայլ... եւս պայծառ պատմուճանս պէսպէս զարդուց, դիպակաց և կերպասուց, և ծիրանեաց՝ գունակ-գունակ և երփն-եր-

[1] Մխիթար Գոշ, «Առակք», էջ 120—122:
[2] Կիրակոս Գանձակեցի, էջ 173:
[3] Ուղեգրություններ, I, էջ 3:

[1] Ն ղ ի շ ե, էջ 197—198:

փըն՝ և երանգ-երանգ՝ ծաղկազարդ գունօք գործեալ գեղեցկապէս, նաև զբարեպաշտին մերոյ թագաւորին Տրդատայ պատուական զգեստն, զոր տուեալ ի տուն Տեառն ի սպաս սրբութեան, զոր մեր տեսեալ աչօք մերովք»[1]:

Նուրբ կտորների մասին ամենից շատ հիշատակութիւններ ունենք Բագրատունիների ժամանակաշրջանի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու մոտ: Պատմիչը բերում է մի շարք վկայութիւններ ամենանուրբ գործվածքների մասին, որոնք գործածվել են հատկապես իշխող դասի կողմից. դժբախտաբար, մեր պատմիչները իրենց աշխատութիւններում լուռ են մնացել «չինական» և «ռամիկ» խավի նիստուկացը, մասնավորապես նրանց հագուստներն ու կրած զարդերը: Նրանք բավարարվել են միայն իշխող դասի շքեղ հագուստների նկարագիրը տալով:

Հովհաննես Դրասխանակերտցին, որ գրել է հատկապես Բագրատունիների տան պատմութիւնը, հիշատակում է նաև թագավորական տանը գործածված նուրբ կտորներն ու գորգերը. «Ու իբրև հարց և փորձ ընդ նոսա լեալ և գրեթէ զկէս տէրութեանն իւրոյ տայ նոցա խոստանայր, այլև բազում զգեստս և զարդս ոսկեճամուկս, և ծիրանիս և երևելի լակոնացի և բեհեզս նոցա մատուցանէր, և կամարս և մանեակս ոսկեղէնս»[2]: Նույն պատմիչը, երբ խոսում է վրաց Ատրներսեհի և հայոց Սմբատ թագավորի հանդիպման մասին, նշում է պարգևները. «Երևելի զարդս հանդերձանաց, իսկ արքայի խրախալեալ ի բարեձիր պարգևս նորա՝ և ընկալեալ մեծաւ շնորհակալութեամբ, ոչ սակաւ ինչ քան թէ բազմամասնաբար յիւրմէն ևս նմա ընծայէր բարեվայելուչ և չքնաղատես և երևելի զարդս հանդերձանաց, և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց»[3]:

Այնուհետև՝ Սմբատ Ա-ի կողմից Ատրպատականի Յուսուֆ ոստիկանին ուղարկած նվերների մեջ հիշվում են թանկարժեք կտորներ՝ ասեղնագործված հայ կանանց ձեռքով. «Ես (Սմբատ արքան) տարադէմ գնացի ի Պարսս Ատրպատականի առ ոստիկանն դառնացող ընծայիւք և պատարագօք բազմօք յարքունի թանգարանաց երևելի ոսկեճամուկ զգեստուք և ի նկարակերտ կանանց ոստայնանկութեանց բազում բազմականս կազմեալ, և բազում ձիս և ջորիս ի զարդ սև ի զէնս յարդարեալ, այլև գանձն ոսկւոյ և արծաթոյ»[1]: Իսկ Երազգավորս քաղաքի արքայական ապարանքը նկարագրելիս գրում է. «Ու չքնաղ և երևելի զարդուք ոսկեճամուկ հանդերձանաց և ի շղաշատեռ առագաստից զնա պճնեալ պայծառացուցանէր. և կամար ևս ի համակ ոսկւոյ ականակապ յարդեալ»[2]:

Նույն պատմիչը Աշոտ արքայի թաղումը նկարագրելիս ասում է. «Դիակիր դագաղօք տարան զնա ի թագաւորանիստ աւանն Բագարան, ոսկեհուտն հանդերձիւք և ոսկեզօծ վառիւք զդաչաղան զարդարեալ»[3]: Բացի Դրասխանակերտցուց, գործվածքների մասին հիշատակություններ ունեն նաև ուշ շրջանի պատմիչները: X դարի պատմիչ Մովսես Կաղանկատուացին հիշատակում է. «մետաքսաթել և ոսկեհիւսակ զգեստ»:

Մխիթար Գոշը, ելնելով իր ժամանակի իրական կյանքից, առակների միջոցով քննադատության է ենթարկում արհեստավորների միջև եղած վեճերը: Ջիթհնու և բրհնու առակի միջոցով Մ. Գոշը բացատրում է, թե ի՞նչպես և ո՞ւմ համար էին պատրաստվում կերպասները. բրհնին պարծենում է ձիթհնու առջև՝ «զի սաղարթ իւր նիւթ է մետաքսոյ, զոր որդունք ծնանին, յորմէ կերպասք լինին, զոր թագաւորք և իշխանք վայելեն»[4]: Նույն հեղինակը մի շարք արհեստավորների թվում հիշում է նաև բեհեզագործին ու դերձակին, որոնցից յուրաքանչյուրը պարծենում է իր

[1] Ո ւ խ տ ա ն ե ս, II, էջ 66:
[2] Հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 252:
[3] Նույն տեղում, էջ 198:
[1] Հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 210:
[2] Նույն տեղում, էջ 184:
[3] Նույն տեղում, էջ 143:
[4] Մ խ ի թ ա ր Գ ո շ, Առակք, էջ 50:

արհեստով և ձգտում նրա դերազանցությունը ցույց տալ մյուսին. «Արքային Սողոմոնի հանդերձ ոմն կարէր՝ արուեստիւ սքանչելի, և յոյժ ուրախացեալ պանծայր, բեհեզագործ ընդդէմ ղիւրն յարգէ արուեստս։ Եւ լուեալ արքայի կոչեաց զնոսա և ընտրեաց ի մէջ նոցա, թէ անկազմէ կտաւ առանց կարողի, սակայն զո՞ր կարէ արուեստիւն, եթէ չիցէ արարեալ կտաւ»[1]։

Նուրբ կտորների ու գդեստների մասին XIII դարի սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը նշում է. «Զգանձս ոսկւոյ և արծաթոյ անհամարս, և զոհարս ականց և մարգարտաց զշահատուրն բազմապին և ոսկեթել հանդերձից և թագաւորական ծիրանի, մարգարտայեռն պատմուճանաց»[2]։

Պատմիչների այս հիշատակությունները վերաբերում են ո՛չ միայն արքունիքին, իշխաններին, այլև ընդհանրապես աշխարհականներին։ Այդ տեսակետից արժեքավոր փաստեր է հաղորդում X դարի պատմիչ Ուխտանեսը, երբ գրում է. «Զայլ ևս պայծառ պատմուճանս պէս-պէս զարդուց, դիպակաց, և կերպասաց, և ծիրանեաց՝ գունակ-գունակ և երփն-երփն և երանգ-երանգ՝ ծաղկազարդ գունօք գործեալ գեղեցկապէս»[3]։

Գրավոր այս փաստը ինքնըստինքյան վկայում է միջնադարյան Հայաստանում պատրաստված բազմատեսակ կտորների գոյությունը, զարդարված բուսական կամ այլ նախշերով, որոնք ստացվում էին կամ դաջելու եղանակով և կամ ուղղակի գործելու ժամանակ հյուսելով՝ գլխի շալեր, ծածկոցներ, վերնազգեստի համար բազմագույն կտորներ և այլն։

Բացի Ուխտանեսից, այլ պատմիչների մոտ ևս կան հիշատակություններ հոգևորականների պատմուճանների, վակասների, ուրարների, եկեղեցական վարագույրների մասին, որոնք պատրաստված էին ազնիվ կտորներից, ասեղնագործած՝ առաքյալների դիմանկարներով։ Վերոհիշյալ գրավոր հիշատակությունները հիմնավորվում են նաև նյութական մնացորդներով։ Հայաստանում արտադրվող կտորների մասին մեզ որոշ պատկերացում են տալիս ձեռագրերի կազմերի ներսի կողմից փակցված աստառները և Անիի ու Դվինի պեղումներից հայտնաբերված (չնայած քիչ քանակով) կտորների մնացորդները։

Հայ և օտար պատմիչները թեև իրենց աշխատություններում բավական փաստեր են տալիս նուրբ կտորների մասին, սակայն շատ քիչ են նշում դույներն ու օրնամենտները։ Այդ թերին լրացնելու համար մենք ուսումնասիրել ենք նաև կազմերի աստառները. սրանց միջոցով հնարավորություն ունեցանք ծանոթանալու գործվածքների և դաջվածների վրա եղած զարդանախշերի հետ, իսկ դույների մասին լրիվ պատկերացում են տալիս ձեռագրերի մանրանկարչության մեջ կիրառված հագուստների դույները։

Մեր ուսումնասիրությունները հաստատում են, որ այդ աստառների մի մասը ժամանակակից է ձեռագրին, իսկ մյուս մասը պատկանում է ավելի ուշ շրջանի։ Այդ աստառների մեծ մասը հյուսված է տեղում, թեև կան այնպիսի կտորներ, որոնք եղել են ներմուծված և հետագայում նրանց մնացորդները ևս օգտագործվել են կազմերի համար։ Անհրաժեշտ է սակայն նշել, որ կազմի համար մեծ մասամբ գործածել են բամբակե հասարակ կտավներ, որոնք ավելի ամուր ու դիմացկուն էին, և, ուրեմն, աստառի համար ավելի հարմար։ Ձեռագրերի կազմերի աստառների որոշ մասի վրա կան դաջված զանազան զարդանախշեր։ Գործվածքների, դաջվածների ու նրանց վրա եղած զարդանախշերի մասին կխոսենք առանձին։

* * *

Պատմական տեղեկություններից երևում է, որ միջնադարյան Հայաստանում եղել են առանձին կենտրոններ, որտեղ զարգացած

[1] Մխիթար Գոշ, էջ 133—134։
[2] Ստ. Օրբելյան, էջ 33։
[3] Ուխտանես, II, էջ 66։

էր ջուլհակությունը: Այդպիսի օջախներից են Դվինը, Անին, Երզնկան, Վանը և այլն:

Արաբ և եվրոպացի ճանապարհորդները տվել են արժեքավոր տեղեկություններ Հայաստանի քաղաքների՝ հատկապես Դվինի և Երզնկայի գործվածքների մասին, սակայն նրանք նպատակ չեն ունեցել մանրամասն թվել կտորների տեսակներն ու քանակը: Հիշյալ ճանապարհորդ պատմիչները, երբ հիշատակում են Հայաստանի որևէ քաղաք, սովորաբար թվում են այդ քաղաքում եղած կարևոր շինարարական օբյեկտները և ապա տվյալ քաղաքի ապրանքափոխանակության հիմնական ըրաղումները: Այդ զբաղմունքների մեջ, ըստ նրանց տվյալների, ամենից շատ տարածված էր ջուլհակությունը, նրանք հաճախ ամենայն մանրամասնությամբ նկարագրում են արտադրված կտորները, մինչդեռ մյուս արհեստների վերաբերյալ գրեթե ո՛չ մի խոսք չեն ասում. դա ցույց է տալիս, որ Հայաստանի քաղաքներում և գյուղերում հյուսվածքի գործը եղել է գերիշխող և բնակչության եկամուտի կարևոր աղբյուրներից մեկը:

Մարզպանական և արաբական շրջանում Դվինը եղել է նաև վարչական ու առևտրական կենտրոն. այդ քաղաքի վրայով են անցել չինական մետաքսը, թանկարժեք կտորները, անուշահոտ յուղերը և համեմունքները: Բացի հայ պատմիչներից, Դվինի առևտրական քաղաք լինելու մասին և նրա գործվածքների վերաբերյալ հարուստ տեղեկություններ են տալիս բյուզանդացի և արաբ պատմիչները:

VI դարի բյուզանդացի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու վկայությամբ՝ «Դվինը շատ բարեբեր վայր է, ունի առողջարար օդ և լավ ջուր, Դվինից մինչև Թեոդոսիոպոլիս (Կարին) 8 օրվա ճանապարհ է, այնտեղ շատ հարմար է ձիով գնալու համար, բազմամարդ գյուղերն ընկած են իրար կողքի և զբաղվում են առևտրով, այնտեղ են գալիս Հնդկաստանից, Հարևան վրաստանից համարյա պարսիկ և մինչև անգամ Հռոմեացոց հպատակ բոլոր ժողովուրդները: Այնտեղ են բերում ապրանքներ, որոնցով նրանք առևտուր էին անում»[1]:

Դվինում արտադրված գործվածքների մասին արժեքավոր տեղեկություններ են տալիս արաբ պատմիչներից Իբն-Հաուքալը, Ալ-Իստահրին և ուրիշները: Ալ-Իստահրին Դվինի մեծության և նրա գործվածքային արտադրության մասին գրում է. «Դվինը մեծ է Արտաբիլից, այդ քաղաքը հանդիսանում է Հայաստանի մայրաքաղաքը և նրա մեջ կառավարչի պալատն է գտնվում, որ նման է Բարդայում եղած Ադրբեջանի կառավարչի պալատին... այս քաղաքում արտադրվում են բրդի հագուստներ և գորգեր, բարձեր, բազմոցների երեսներ, ղայթաններ և հայկական արտադրության այլ իրեր. նրանց մոտն էլ հենց ձեռք է բերվում «ղիրմիզ» կոչված ներկը, որով ներկում են մահուդը: Ես իմացա, որ դա որդ է, իր շուրջը գործում է շերամի պես և նրանից բացի ես իմացա, որ այնտեղ էլ հենց արտադրվում են շատ մետաքսյա կտորներ»[2]:

IX դարի պատմիչ Իբն-Հաուքալը, թվելով արտադրված կտորների տեսակները, միաժամանակ ավելացնում է. «Դաբիլում (Դվինում) պատրաստում էին աղվամազից (пуховый) բրդե գործվածքեղեն, գորգերի, բարձերի, նստատեղերի երեսների համար և հայկական այլ տեսակի արտադրանքներ «ղիրմիզով» ներկված:... Դաբիլում պատրաստվում են շատ մետաքսյա հագուստներ: Ինչ վերաբերում է վերջիններիս, նրանց շատ նմանները չկան Հռոմի երկրում, իսկ ինչ վերաբերում է «հայկական գործվածքներ» կոչված արտադրանքներին, դրանք գլխաշորեր (бутт) նստարարձեր[3]. գորգեր, ծածկոցներ,

[1] Прокопий Кесарийский, История войн римлян с персами, изд. 1880, стр. 181—182.

[2] Ал-Истахри, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1901, XXXVIII, пер. Караулова, էջ 92.

[3] Միջնադարյան Հայաստանում նստարարձերի սովորությունը շատ տարածված էր, այդ բարձերը ծածկում էին ամենանուրբ կտորներով, այդպիսի բարձերի բազմաթիվ օրինակներ կան ձեռագրերում եղած մանրանկարչության մեջ:

որոնց նմանը չկան երկրագնդի ծայրից ծայր և ամեն ուղղությամբ»[1]։ Այնուհետև նույն հեղինակը գրում է. «այդ քաղաքներում և նրանց միջև ընկած շրջաններում կան ապրանքներ, մուծման առարկաներ, անհրաժեշտ կենդանիների տարբեր տեսակներ, ոչխար և զանազան երկրներ տարվող կտրեղեն, որոնք այն տեղերում հայտնի են և հռչակված, ինչպես, օրինակ, Սալմասում (Սալմաստ) պատրաստվող և մեկ հատը մեկից մինչև տասը դինարի ծախվող հայկական գոտին, որի նմանը չկա այլ երկրներում։ Վերևում հիշատակված հայկական բանվածքները պատրաստվում են Դաբիլում, Մերանդում, Թեբրիզում։ Դաբիլում և Հայաստանի շրջաններում պատրաստում են հայկական բազմոցներ, գորգեր, որոնք հայտնի են հայկական «մեհֆուր» անունով, դրանց նմանը քիչ կա բոլոր երկրներում, որոնց գործվածքը նման է հայկական արտադրանքին։ Ճիշտ այդպես էլ Հայաստանում արտադրում են գլխաշորեր, նախշազարդ ծածկոցներ, շալեր, որոնք գործում են Միաֆարկինում (Տիգրանակերտում) և Հայաստանի տարբեր տեղերում»[2]։

Արաբ պատմիչ Ալ-Մուկադասին հաղորդում է, որ «Դվինը նշանավոր քաղաք է, ունի անառիկ բերդ և մեծ հարստություն, հայտնի է իր հնագույն մահուդով»[3]։ Մի այլ տեղ նա նշում է, որ «Դվինն արտահանում է մահուդ, գորգ, բարձեր և ծածկոցներ ու հնրահայտնի շնուր (դայթան)»[4]։

Արաբ պատմիչների ասույթներից ելնելով, ակադեմիկ Հ. Մանանդյանը գրում է. «Դվինի գործվածքեղենը, որ հայտնի է Մարիցին անունով (marizi), գոտիներ 1—10 դինար արժեքով, փաթթոցներ (չալմաններ), ծածկոցներ և կտորներ թախտերի համար։ Ավելի թանկարժեք կտորներ եղել են մետաքսից։ Դվին քաղաքում պատրաստում էին խայտաբղետ գույներով մետաքսե ծանր կտորներ։ Հայաստանի գործվածքեղենը արտահանվում է ո՛չ միայն խալիֆաթի արևելյան մարզերը, այլ Բյուզանդիա»[1]։

Արաբական աղբյուրների ցուցմունքից երևում է, որ Տրապիզոնում՝ միջազգային առևտրի գլխավոր նավահանգստային կենտրոնում՝ վաճառվում էին հայկական հիանալի մետաքսյա կտորներ (դիպակ) և այլ գործվածքեղեն[2]։

Չնայած հայ և օտար պատմիչների այս հարուստ տվյալներին, այնուամենայնիվ Դվինի սիստեմատիկ պեղումները առայժմ հայտնաբերել են միայն երկու կտոր գործվածքի մնացորդ. երկուսն էլ ոսկե թելերով հյուսվածք են[3]. մեկը ժապավենաձև կերպասի վրա, կարմիր թելերով գործած, իսկ մյուսը՝ կտավի մնացորդ է գործած կապտավուն բամբակյա թելից. հույս ունենք, սակայն, որ հետագա պեղումների ժամանակ Դվինից կհայտնաբերվեն գործվածքների նոր նմուշներ, որոնք հնարավորություն կտան պատմիչների ասույթները հիմնավորել նյութական մնացորդներով։

Միջնադարյան Հայաստանի առևտրա-արհեստավորական կենտրոններից էր համարվում նաև Անին, որը Բագրատունիների տիրապետության շրջանում ապրում էր իր ծաղկման օրերը։ Անի քաղաքում զարգացած էին ո՛չ միայն գործվածքային արտադրությունը, այլև բոլոր տեսակի արհեստները, որ հաստատվում է վիմական արձանագրությունների տվյալներով։

Ինչպես Դվինը, այնպես էլ Անին IX—XIII դարերում եղել է արդյունագործական կենտրոն։ Վիմական արձանագրությունների մեջ մի շարք արհեստավորական թաղամասերի

---

[1] Ибн-Хаукал. Сбор. мат., вып. XXXVIII, էջ 93.

[2] СМОМПК., вып. XXXVIII, էջ 94—95.

[3] Ал-Мукадаси, „Сбор. мат.", XXXVIII, էջ 9.

[4] Նույն տեղում, էջ 14։

[1] А. Я. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1930, էջ 161.

[2] Նույն տեղում, էջ 161։

[3] Դվինի 1951 թ. պեղումներից, № 1913/168։

կողքին, որպես առանձին թաղամաս հիշվում է բաղաղնոցը[1], ուր վաճառքի էին հանվում թե՛ տեղական գործվածքները և թե՛ ներմուծվածները:

Մետաքսե կտորները, ըստ երևույթին, եղել են բավական առատ ու մատչելի նույնիսկ միջին խավին: Ստեփանոս Տարոնեցին, խոսելով Սմբատ Ա-ի և նրա հոր՝ Աշոտի, Բագրատունյաց թագավորության առաջին շրջանի մասին, գրում է. «Եւ այսպէս ազարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ մինչև հովուաց անդէ որդոց մետաքսեայս ղգենուլ պատմուճան»[2]:

Ինչքան էլ չափազանցրած լինի պատմիչը, բայց և այնպես փաստ է, որ մետաքսը այդ շրջանում համեմատաբար լայն գործածության նյութ է եղել: Ստեփանոս Տարոնեցու հաղորդումը, հիմնականում, անշուշտ վերաբերում է Անիին: Բացի պալատական, պետական ու հոգևորական դասի ներկայացուցիչներից, Անիում էին հավաքված նաև վաճառականական ու վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները. ուստի շատ հասկանալի է, որ այդ դասերի համար անհրաժեշտ էր արտադրել տարբեր տեսակի կտորներ: Բարեբախտաբար, Անի քաղաքի գործվածքների ուսումնասիրության համար բացի մատենագրական տեղեկություններից, կան նաև նյութական մնացորդներ: Պեղումներից հայտնաբերված 12 կտոր զանազան չափսի գործվածքների նմուշներից մի մասի վրա կատարված է նուրբ ասեղնագործություն:

Մեր ուսումնասիրությունը պարզեց, որ այդ կտորներից մի քանիսը, որոնք գտնված են իշխանական դամբարանում և մինչև օրս ճանաչված էին որպես մետաքսե գործվածք, կան նաև վուշի թելից հյուսված, այսինքն քաթաններ են. ի դեպ՝ քաթանագործների անունների հիշատակություններ ունենք XIII—XIV դարերին պատկանող ձեռագրերի հիշատակարաններում[1]:

Անիից գտնված կտորների մեջ ամբողջական վիճակում պահպանված են երեխայի երկու ղգեստ, որոնցից մեկը պակասավոր է, մնացել է միայն հետևի մասը և թևերից մե-

Նկ. 68. Երեխայի մետաքսե ղգեստ Անիի պեղումներից, XIII դար. Պետական պատմական թանգարան:

կը: Ղգեստի վերևի մասում արտաքուստ երևում է կարմիր թելերից հյուսվածք, իսկ թևերն ասեղնագործված են: Ավելի լավ է պահպանված իշխանական դամբարանից գտնված երեխայի մետաքսե վերնազգեստը (նկար 68): Այս հագուստի թևզանիքի զարդարանքը շատ նուրբ է և անաղարտ պահպանված: Հատատ դիագոնալանման կտորի վրա, ոսկե թելերով հյուսված են գեղեցիկ զարդանախշեր, իսկ գոտկատեղին ամրացած է վարդագույն մետաքսե թելից հյուսված

1 Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, էջ 49:

2 Ստեփանոս Տարոնեցի, էջ 161:

1 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, էջ 364:

2 Պետ. պատմական թանգարան, № 1140:

դոտի, որի վրա արված է երկու հանգույց. այս հանգույցը ո՛չ մի կապ չունի կրոնական հատուկ նպատակի հետ, այլ պարզապես թաղման ժամանակ, փոխանակ գոտին ամբողջությամբ կապիլու, թողել են ազատ, տալով միայն երկու տեղից հանգույցներ: Նույն դամբարանից այս հագուստի հետ գտնվել է նաև մետաքսե թելի վրա շարված ուլունք, որ ապարանջանի դեր է կատարել: Երեխայի գլխին ծածկված է եղել սև գույնի շղարշե նուրբ կտոր, վրան բանված՝ կենդանական զարդանախշով: Բացի վերոհիշյա-



123/1129 ԱՆԻ

Նկ. 69. Մետաքսե գործվածք, Անիի պեղումներից, XIII դար.
Պետական պատմական թանգարան:

լից, երեխայի գլխի տակից գտնվել է մետաքսե մի կտոր, վրան թռչող թռչունների պատկերներ գործած[1]: Իշխանական դամբարանից է գտնվել նաև 46×32 չափսի մետաքսե մի ուրիշ կտոր[2]: Անիի պեղումներից գտնվել է նաև բամբակե թելից հյուսված մի շղթա, որ ծառայել է ուլունքներ շարելու համար և մետաքսե մի գործվածք, վրան բջիջաձև զարդանախշ (նկար 69): Ծաղկոցաձորի իշխանական դամբարանում գտնվել է նուրբ բարակ կապերտի մնացորդ (հավանաբար պատի զարդարանքի համար գործած կտոր), 26×20 չափսի, հյուսված կարմիր, դեղին և շագանակագույն թելերից, խառն օրնամենտով: Մեր ուսումնասիրու-

[1] Պետ. պատմական թանգարան, ինվենտար № 1180:

[2] Նույն տեղում, № 1181

թյունից և կտորի անալիզից պարզվեց, որ այդ հյուսվածքի մեջ օգտագործել են նաև վուշե թել, որը շատ տարածված էր միջնադարյան Հայաստանում: Վուշե գործվածքները մեծ մասամբ օգտագործում էին գլխի ծածկոցների, մեծ թաշկինակների, աթոռների և բարձի երեսների ու, վերջապես, պատերը զարդարող գործվածքների համար (նկար 70):

Անիի պեղումներից գտնված վերոհիշյալ կտորների նմուշները հաստատում են մեր պատմիչների ասույթները այն մասին, որ Անին նույնպես եղել է նուրբ գործվածքների արտադրության կենտրոն:

Դվինից և Անիից բացի, XII—XIV դարերում Հայաստանի արևմտյան քաղաքներից հայտնի էր Երզնկան, որպես առևտրի հանգուցակետ և նուրբ կտորների արտադրության կենտրոն:

Հայ և օտար պատմիչները և եվրոպացի ճանապարհորդները վկայում են, որ մոնղոլական տիրապետության ժամանակ, հատկապես էլխանության շրջանում, հյուսիսային ճանապարհը կորցնում է իր դերը և դրա փոխարեն աշխուժանում է հարավային կարավանային ճանապարհը: Այդ առևտրական մագիստրալի վրա էին գտնվում Վանը, Արճեշը, Երզնկան և այլ քաղաքներ:

Երզնկայում արտադրված նուրբ կտորների մասին հետաքրքիր տեղեկություններ է տվել արաբ ճանապարհորդներից Իբն-Բատուտան, ըստ որի «Արզաջան» մեծ ու շեն քաղաք է, նրա բնակիչներից մեծագույն մասը հայեր են... այնտեղ կան լավ կարգավորված շուկաներ, այնտեղ շինում են գեղեցիկ կերպասներ, որոնք կրում են նույն քաղաքի անունը»[1]:

Բացի արաբ աշխարհագիրներից, Երզնկայի կտորների մասին հիշատակում են նաև եվրոպացի ճանապարհորդները: XIII դարի ճանապարհորդ Մարկո Պոլոն, երբ տալիս է մեծ Հայաստանի նկարագրությունը, գրում է.

[1] Իբն-Բատուտա, թարգմ. պրոֆ. Ն. Ա. Ճայանի, Երևան, 1940, էջ 30:



Նկ. 70. Կապերտի կտոր, Անիի պեղումներից, X—XIII դդ.։
Պետական պատմական թանգարան։
Գծ. Առաքել Պատրիկի

«Այս մի մեծ երկիր է, սկսվում է մի քաղաքից, որ կոչվում է Արզինգա (Երզնկա), ուր հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները»[1]։ Չնայած Մարկո Պոլոն իր ճանապարհորդության ընթացքում ծանոթացել է մեծ քաղաքների բոլոր տեսակի արտադրությունների հետ, սակայն, ինչպես տեսնում ենք, նա հիացած էր Երզնկայի նուրբ կտորներով,

[1] Ուղեգրություններ, I, էջ 48։

որ նույնիսկ համարում է աշխարհի բեհեզների մեջ լավագույնը։

Կլավիխոն իր աշխատության 6 և 7-րդ գլուխներում, Տրապիզոնից Երզնկա, Երզնկայից Խոյ ճանապարհորդելու ժամանակ, մանրամասն պատմում է Երզնկա քաղաքի և այդտեղի հայ կառավարչի հյուրասիրության մասին, նկարագրելով նրանց հագուստը, նիստուկացը։ Պատմիչի տեղեկության համաձայն, Երզնկայի ամբողջ դաշտը շատ բարեբեր էր, մշակում էին որդան տունկ և հացահատիկ... Քաղաքը շատ բազմամարդ էր և այնտեղ կարելի էր տեսնել շատ գեղեցիկ փողոցներ ու հրապարակներ։ Շատ պաշտոնական անձնավորություններ ապրում էին այնտեղ, որոնց մեծագույն մասը հարուստ մարդիկ էին, և կային շատ փարթամ վաճառականներ[1]։ Կլավիխոն Երզնկայի կառավարչի հյուրասիրությունը նկարագրելիս գրում է. «Այնտեղ գտանք կառավարիչին նստած մի ցած գահի վրա, մետաքսյա վրանի ներքո, որ հենված էր երկու ձողերի վրա և կապված վրանի պարանով։ Կառավարիչը հագել էր Զեյթունի կապույտ կերպասից մի վերարկու, ոսկյա թելերով ասեղնագործած, բացի այդ, իր գլխի վրա կրում էր մի շատ բարձր գլխարկ, զարդարված գոհարեղենով և ուրիշ զարդերով... իսկ ճաշկերույթի ժամանակ դեսնի վրա փռեցին մետաքսյա սեղանի ծածկոց»[2]։

Վերոհիշյալ փաստերը հաստատում են, որ իրոք Երզնկան XII—XV դարերում եղել է ո՛չ միայն խոշոր վաճառաշահ քաղաք, այլև նուրբ գործվածքներ արտադրող կենտրոններից մեկը։

Բացի Երզնկայից, եվրոպացի ճանապարհորդները հիշում են Հայաստանի մի շարք այլ քաղաքներ՝ Մուշ, Սղերդ, Արճեշ, Խնուս, Խարբերդ և Բալու, որտեղ նույնպես, համեմատած մյուս արհեստների հետ, ջուլհակությունը եղել է ամենից շատ տարածված արհեստը։ Մարկո Պոլոն հատկապես հիշում է Մուշը, ուր ժողովուրդը զբաղվում էր առևտրով ու արհեստով և տեղում արտադրվող բամբակից հյուսում էր բեհեզ ու այլ տեսակի կտորեղեն[3]։

XV դարի եվրոպացի ճանապարհորդ Ջուլիֆան նկարագրում է Տրապիզոնից մինչև Խոյ ընկած քաղաքների ու գյուղերի ազգաբնակության զբաղմունքը, նա նշում է, որ այդ քաղաքներում և գյուղերում պատրաստում էին կտավ՝ «բաման, կերպասներ ասվի (շալյախ), շատ դորդ և բիչ մետաքս»[2]։

Նույն ճանապարհորդը արժեքավոր տեղեկություններ է տալիս նաև Սղերդի մասին. «Այդտեղի ժողովուրդն ապրում էր հողագործությամբ, նրանք ունեն հացահատիկ, պտուղներ և շատ կտավե գործվածքներ... ունեն այծեր, որ ամեն տարի խուզում են և նրանց մազերից շինում են կապերտ»[3]։

Վերը հիշված քաղաքներն ու գյուղերը ո՛չ միայն XII—XV դարերում էին աչքի ընկնում զանազան տեսակի գործվածքների արտադրությամբ, այլև XVIII—XIX դարերում, երբ, հատկապես Շատախում, հյուսում էին բոլոր ամենալավագույն գունավոր կտորներ, որոնցից կարում էին թե՛ կանացի վերնազգեստներ և թե՛ տղամարդկանց լայն շալվարներ. հայտնի էին, օրինակ, «Շատախի շալ շալվարները»։ Դրանց նմուշներից պահպանվում են Հայաստանի Պետ. պատմական թանգարանի ազգագրական բաժնում։

Լոնդոնի առևտրական ընկերության գործակալը Պարսկաստանում՝ Արթուր Էդուարդը, Լոնդոն ուղարկած իր մի նամակում հիշատակում է Պարսկաստանի մի շարք այն ապրանքների գները, որոնք Պարսկաստանից փոխադրվում էին Եվրոպա։ Այդ նամակում գրում է Վենետիկի և Թավրիզի մասին, որոնք մեծ մասամբ զբաղվում էին մետաքսի առևտրով։ Էդուարդը միաժամանակ հայտնում է, «որ Պարսկաստանի մի քաղաքում ավելի շատ մետաքս է արտադրվում, քան մուծվում

[1] Ուղեգրություններ, հատ. I, էջ 95։
[2] Նույն տեղում, էջ 87—88։
[1] Ուղեգրություններ, հատ. I, էջ 88։
[2] Նույն տեղում, էջ 198։
[3] Նույն տեղում, էջ 182—183։

է կերպաս Լոնդոն, իսկ Հայաստանի մի գյուղը՝ Գիլգամը Հալեպ է փոխադրում տարեկան 500 և երբեմն 1000 ջորու բեռ մետաքս»[1]:

Ճանապարհորդի այս հաղորդումը վկայում է այն մասին, որ Հայաստանի քաղաքները արտահանում էին ո՛չ միայն բամբակյա, բրդյա և մետաքսյա կտորներ, այլ նաև հումքի:

Եվրոպայի ճանապարհորդները, բացի Հայաստանից, բավական հարուստ տեղեկություններ են տալիս նաև Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հետ անմիջական կապ ունեցող Պարսկաստանի քաղաքներում արտադրված կտորների մասին. անհրաժեշտ ենք համարում հիշատակել մի քանի փաստ մետաքսե այն գործվածքների վերաբերյալ, որոնք առևտրի շնորհիվ կապված են Հայաստանի հետ: XV դարի ճանապարհորդ Ջուզեֆ Բարբարոնը դեպի Պարսկաստան ճանապարհորդելիս, մի քանի գլխավոր քաղաքների թվում հիշատակել է հատկապես Քաշանը, որտեղ մեծ մասամբ հյուսում էին մետաքս և կտավ, այնքան մեծ քանակությամբ, որ ով առաջարկի 10 հազար դուկատ, մի օրում այդ դումարին համապատասխան քանակով ապրանք կարելի էր գտնել: Բացի դրանից, նա հիշում է Եզդ քաղաքը, որ կոչվել է արհեստավորների քաղաք, ուր գործել են մետաքսե կտոր, կապերտ և ուրիշ նման բաներ[2]:

Նույն ճանապարհորդը խոսում է նաև Աստապատի մասին, որից և տեղական մետաքսը ստանում է «Աստապատյան մետաքս» անունը: Այդ քաղաքում և նրան հարակից գյուղերում, ուր ջուր կար, մանում էին և շինում կոպիտ մետաքս, իսկ գետերի եզերքին նավակների մեջ պահում էին մետաքսով լիքը կաթսաներ. նրանք ունեին մեծ քանակությամբ շերամ և առատորեն սպիտակ թթենիներ: Ճանապարհորդը թվում է նաև Ծովեզրյա մի շարք քաղաքներ, «որտեղ շինում էին լավագույն մետաքսեղեն»[1]: Նա Շամախու մասին գրում է՝ «Այս շատ լավ քաղաք է և ունի 4000—5000 տուն, և շինում են մետաքս, կտավ և ուրիշ բաներ... գտնվում է մեծ Հայաստանում և բնակիչների մեծ մասը հայ են»[2]:

Հայ և օտար պատմիչների տվյալները, ձեռագրերի կազմի աստառների նմուշները և, վերջապես, Անիի ու Դվինի պեղումներից ձեռք բերված գործվածքների եզակի կտորները մեզ հիմք են տալիս ասելու, որ միջնադարյան Հայաստանում ջուլհակությունը եղել է ամենից շատ տարածված արհեստը, որով զբաղվել են ո՛չ միայն պրոֆեսիոնալ արհեստավորները քաղաքներում, դղյակներում և վանքերին կից «գործատներում» (արհեստանոց), այլև Հայաստանի գրեթե ողջ գյուղական բնակչությունը, իր առօրյա կարիքները բավարարելու, մասամբ էլ փոխանակության ու առևտրի համար: Հատկապես պրոֆեսիոնալ ջուլհակները արտադրել են բազմատեսակ գործվածքներ՝ սկսած կոպիտ կտավից մինչև ամենանուրբ տեսակի կերպասները:

Ջուլհակության հետ սերտորեն կապված է նաև կարելու՝ դերձակության արհեստը: Հայաստանի ազգաբնակության պահանջով, տարբեր ձևի հագուստներ կարելու համար պետք է գոյություն ունենային հատուկ կարողներ: Ազնվական դասի՝ իշխանների, նախարարների ու նրանց կանանց վերնազգեստները, պատմուճանները անշուշտ կարվել են դերձակ արհեստավորների ձեռքով:

Միջնադարյան հագուստի ձևերը հանդիպում են մանրանկարչության մեջ ու բարձրաքանդակների վրա, իսկ ավելի ուշ շրջանին պատկանող տարազների լավագույն նմուշներ պահպանվում են Պետ. պատմական թանգարանի ազգագրական բաժնում, որոնց մեջ կան XVIII—XIX դարերին պատկանող հագուստներ՝ Կարինից, Վանից, Ջեյրունից, Արաբկիրից, Ալեքսանդրապոլից, Ախալցխա-

1 Ուղեգրություններ, հատ. I, էջ 425:
2 Նույն տեղում, էջ 193:

1 Ուղեգրություններ, հատ. I, էջ 194:
2 Նույն տեղում, էջ 199:

յից, Ղարաբաղից, Երևանից և այլ վայրերից, որոնց վրա անկասկած աշխատել են լավագույն դերձակներ։

Միջնադարում՝ հատկապես IX դարից հետո, քաղաքային դասի հանդես գալու և ծաղկման շրջանում, տարբեր ձևի զգեստներ կարելու պահանջը ուժեղանում է, որի հետևանքով դերձակների մեջ աշխատանքի բաժանումը և մասնագիտացումը դառնում է անհրաժեշտ։ Եղել են դերձակներ, որոնք կարել են կանացի լայն զգեստներ, իսկ որոշ արհեստավորներ մասնագիտացել են հատկապես տղամարդկանց վերնազգեստ կարելու գործում։

Մատենադարանի № 695 ձեռագրում մի շարք արհեստների թվում հիշատակվում է «հալաւարար» տերմինը, որ միջնադարում հասկացվել է հագուստներ կարող արհեստավոր։ Մի այլ հետաքրքիր փաստ ունենք 1223 թ. վիմական արձանագրության մեջ, որը վերաբերում է ժամանակի հայտնի վաշխառու Տիգրան Հոնենցուն. «Ես, Տիգրանս, եառ նուէրք ի սուրբ կաթողիկէս զիմ գանձակին կուղպակն, որ ի կատանոցին»[1]։

Վերոհիշյալ փաստը ցույց է տալիս, որ Անիում եղել է հատուկ թաղամաս, որտեղ աշխատել են հատկապես լայն զգեստ կարող վարպետներ։

Մենք դերձակ տերմինի գործածությանը հանդիպում ենք Մատենադարանի № 2672 ձեռագրի մեջ. հետագայում այդ տերմինը դառնում է տիրապետող։ Բազմիցս մենք հանդիպում ենք դերձակ կամ հալավարար տերմինին 1763 թ. էջմիածնի վանքի նվիրատվական ցուցակում[2]։ Ինչպես դերձակությունը, այնպես էլ գտակկարությունը (գլխի զանազան ձևի գլխարկներ կարող) տարածված արհեստներ էին միջնադարում և քաղաքներում ունեին հատուկ թաղամասեր. գտակկարության մասին հիշատակություն կա Մատենադարանի № 2672 ձեռագրում վերևում նշված ոտանավորի մեջ, որտեղ մի շարք արհեստների թվում նշվում է նաև «Գտակկարանոցն ի յիւր քովի, կարեն ոսկով արախճընի»։

Ե. ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մեր նպատակից դուրս համարելով միջնադարյան գորգագործության մանրամասն վերլուծությունը, ավելորդ չենք գտնում համառոտակի մի երկու խոսք ասել այդ մասին։

Միջնադարյան Հայաստանում ջուլհակության հետ զուգընթաց տարածված ու զարգացած արհեստ է եղել գորգագործությունը, որ սերտորեն կապված էր հյուսվածքեղենի արտադրության հետ։ Հայաստանի ազգաբնակության կենցաղում փուվածքները կարևոր տեղ էին գրավում. սկզբնական շրջանում բնակիչները օգտագործում էին մեծ մասամբ զանազան տեսակի կապերտներ, թաղիքներ, որ պատրաստում էին բրդի տականքներից, կային նույնիսկ հատուկ մարդիկ, որոնք կոչվում էին թաղիքագործներ։

Կապերտագործությունն ու գորգագործությունը ծանոթ են եղել դեռևս ուրարտական շրջանի և նույնիսկ նրանից առաջ Հայկական բարձրավանդակում ապրող բնակչությանը։ Այդ պարզ երևում է առաջին հազարամյակի (ն. ք. մ. թ.), Կիրովականի Դիմացի բաղ կոչվող դամբարանի պեղումներից հայտնաբերված նյութական մնացորդներից, ինչպես և Կարմիր բլուրի պեղումներից գտնված բրդե կապերտի կտորի մնացորդից, որը պատկանում է VIII—VII դարերին (ն. ք. մ. թ.)։

Ինչպես ջուլհակությունը, այնպես էլ կապերտագործությունը տարածված արհեստներից էր և ոչ միայն միջնադարում, այլև հին աշխարհում, հատկապես Ասիայի այն վայրերում, որտեղ բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը եղել է անասնապահությունը։

---

1 Կ. Կոստանյան, Վիմական տարեգիրը, էջ 54։ Այս արձանագրության մեջ գործածված կատանոց տերմինը նշանակում է լայն զգեստներ կարող։

2 Մատենադարանի արխիվ, կաթողիկոսական պիվան, թղթապանակ 2, վավերագիր 11։

Կապերտագործության և գորգագործության վերաբերյալ ամենահնագույն տեղեկությունները ստանում ենք Միջին և Առաջավոր Ասիայից, որոնց մեջ մտնում էր նաև Հայաստանի տերիտորիան։

Կապերտագործությունը, համեմատած գորգագործության հետ, կապված է ավելի պարզ և հեշտ գործելու տեխնիկայի հետ։ Կապերտներ էին գործում ո՛չ միայն պրոֆեսիոնալ արհեստավորները, այլև յուրաքանչյուր շինական, ձմեռվա ամիսներին, իր տան փուվածքի համար ինքն էր պատրաստում այն։ Հայաստանի բնակչության համար փուվածքները մեծ տեղ էին գրավում, հետևաբար մեզ համար զարմանալի չէ կապերտագործության մասսայական լինելու հանգամանքը, մանավանդ որ կապերտների կարիք ունեին թափառաշրջիկ քոչվոր ընտանիքները, որոնք կապերտը օգտագործում էին ո՛չ միայն որպես փուվածք, այլև նրանով ծածկում էին սայլերը, անձրևից ու ցրտից պաշտպանվելու համար։

Կապերտագործության հետ զուգահեռ հետագայում զարգանում է նաև գորգագործությունը։ Գորգագործության համար պահանջվում էր աշխատանքի եղանակի մեջ որոշ էվոլյուցիա, որովհետև խսիր գործելու փոխարեն պետք էր պատրաստել խավ ունեցող փուվածք, որ կատարվում էր բազմագույն թելերի համակցությունների սիստեմով և գործվում էր հանգուցային ձևով։ Աշխատանքի այդ եղանակը հնարավորություն էր տալիս գործվածքի մեջ բրդի հետ միաժամանակ օգտագործել վուշ, զանազան գույնի մետաքս, արտաքին գեղեցկություն տալու համար։

Դեռևս հնագույն շրջանի հույն պատմիչներից Հերոդոտը իր Պատմության մեջ նշում է, թե ինչպես «Կովկասի բնակիչները մի շարք ներկատու բույսերով ներկում էին բրդեր, որոնցով պատրաստում էին նկարազարդ գործվածքներ»[1]։

Հայաստանում գորգագործության զարգացման և արագ տարածման համար կային բոլոր անհրաժեշտ պայմանները։ Հայաստանը ուներ կենդանական ու բուսական ներկերի անհրաժեշտ հում նյութի բազա, հարուստ էր բրդի, այծի նուրբ մազի, մետաքսի, բամբակի հումույթով։ Իսկ Հայաստանի ցուրտ կլիմայական պայմաններում փուվածքների կարիքը զգացվում էր խստորեն. դրանցով ծածկում էին բնակարանների հողե հատակները, պատերը և այլն։

Թեև սկզբնական շրջանում մեծ մասամբ օգտագործում էին կապերտներ, հետագայում, հատկապես միջնադարում, գորգերով էին զարդարում աղնվականների բնակարանները, եկեղեցիները և այլն։ Գորգագործությունն ապրում է իր զարգացման շրջանը։

Միջնադարյան Հայաստանի գորգագործության վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում ո՛չ միայն հայ պատմիչները, այլև, առավել ևս, օտար պատմիչներն ու ճանապարհորդները, որոնցից հատկապես արաբ աշխարհագիրները հիացմունքով են խոսում հայկական գորգերի մասին, որ հյուսվում էին հայկական «որդան կարմրով» ներկված թելերով։ Հայկական գորգերի օրնամենտների ու գույների վերաբերյալ հարուստ նյութ է տալիս միջնադարյան մանրանկարչությունը։ Ունենք նաև նյութական մնացորդներ Անիի ու Դվինի պեղումներից։

Ինչպես ջուլհակությունը, այնպես էլ գորգագործությունը եղել է մասսայական արհեստ։ Այդ արհեստով զբաղվել են ո՛չ միայն պրոֆեսիոնալ գորգագործները, որոնք մեծ մասամբ կատարում էին հատուկ պատվերներ, այլև Հայաստանի գյուղացիության մեծ մասը՝ գյուղատնտեսական աշխատանքին զուգահեռ, հատկապես ձմեռվա ամիսներին, պատրաստել է իր անմիջական կարիքների համար գորգ-փուվածքներ (գործում էին մեծ մասամբ կանայք)։ Բացի դրանից, գորգերի լավագույն նմուշները, որպես հարկ ու նվեր, ուղարկվում էին խալիֆայությանը և բյուզանդական կայսրությանը. առանձնապես

[1] Геродот, История, том I, Москва, 1888, стр. 108.

հարդի էին որդան կարմրով ներկված թելից գործած գորգերը:

Արաբ պատմիչներից Իբն-Խալդունը հիշատակում է, որ 775—786 թվականներին Հայաստանը Բաղդադի խալիֆին վճարած հարկերի մեջ ուղարկել է նաև 20 գորգ:

911 թ. Յուսուֆ Աբուսաջն Հայաստանից խալիֆայությանը ուղարկում է 400 ձի, 30000 դինար և 7 հատ հայկական գորգ, որոնցից մեկի երկարությունն էր 60 ոտնաչափ. այդ գորգի վրա աշխատել էին 10 տարի[1]:

Արաբական խալիֆի դեսպան Իբն-Ֆադլանը X դարի 20-ական թվականներին Կամայի բուլղարական թագավորի արքունիքում իր անցկացրած կյանքի հետաքրքրական նկարագրության մեջ նշում է, որ թագավորի վրանում ամառվա ամիսներին հազար մարդ էր տեղավորվում, վրանում փռված էին հայկական գորգեր[2]:

Արաբ աշխարհագիր Շեմս-էդդին-ալ Մուկադասին, մեջ բերելով Ալ-Իստահրիի պատմածները, իր հերթին գրում է. «Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա նա մեծ երկիր է... Մայրաքաղաքը Դաբիլն (Դվին) է, իսկ քաղաքներն են՝ Բիթլիսը, Խլաթը, Արճեշը, Կալիքալան (Կարին քաղաքը) և այլն: Այս տեղից արտահանում են ծածկոցներ, բրդե կապերտներ»[3]: Անանուն տաճիկ աշխարհագիրը, որ ապրել է X դարի 80-ական թվականներին, իր «Աշխարհի սահմանները» աշխատության մեջ նույնպես գրում է, որ Դվին, Խոյ, Ամիդ, Բերկրի, Արճեշ, Խլաթ, Նախճավան, Բիթլիս մարդաշատ և հարուստ քաղաքներում արտադրվում են զիլուհա-կալի կապերտներ և այլ կապերտներ»[4]: Վերոհիշյալ քաղվածքում նշված «այլ կապերտներ» բառերի գործածությունը արդեն ցույց է տալիս, որ այն իր գործվածքով տարբերվել է կալի (=խալի) կապերտից:

Արաբ աշխարհագիր Իբն-Հաուկալը (X դար), որն այցելել է Դվին, պատմում է, որ «Դվինում և Հայաստանի մյուս քաղաքներում որդան կարմրով գործած գորգերի նմանը չկա աշխարհի մի ծայրից մյուսն իր բոլոր ուղղություններով»[1]: Թե ինչ արժեք էին ներկայացնում հայկական գորգերը և մինչև ուր կարող էր հասնել նրանց համբավը, այդ մասին վկայում է Աբուլ-Փազ-Բեհաքի պատմագիրը: Նրա վկայությամբ, երբ 1034 թվականին Խորասանի շրջանի Ղազնևյան կառավարիչ (Սահիբ-դիվան) Աբուլ Փազլ Սուրի Մուիզը Նյուշապուրից գնում է Ղազնևան Սուլթան Մասուդին տեսության, իր հետ հինգ հարյուր բեռ թանկարժեք նվերներ է տանում նրա համար, որոնց թվում հիշվում են նաև հայկական գորգեր[2]:

Արաբ պատմիչների մոտ կան հիշատակություններ նույնիսկ գորգեր արտադրող կենտրոնների մասին: XIII դարի արաբ աշխարհագիրներից մեկը Հայաստանի մասին խոսելիս հիշում է, որ Վանի մեջ գործում էին մեծ գորգեր, Կարինում (Կալի-քալա) նույնպես գործում էին մեծ գորգեր, որոնք հրուշակված էին այդ քաղաքի անունով և կոչվում էին «կալի» կամ «խալի»[3]: Ակադեմիկ Բարթոլդը հիշում է, թե Ղազնևյան Սուլթան Մահմուդի՝ Կաշկարի կադր խանին ուղարկած ընծաների թվում կային նաև հայկական գորգեր:

Մարկո Պոլոն, նկարագրելով Կոնիա ու Սվաղ քաղաքների կյանքը, հիացմունքով է խոսում այդտեղի գորգագործության մասին. «Մյուս երկու դասակարգերն են հայերն ու հույները, որոնք առաջինների հետ խառն ապրում են քաղաքներում և գյուղերում,

---

[1] Н. Марр, Ани, Москва, 1934, стр. 128.

[2] И. Ю. Крачковский, Путешествие Ибн-Фадлана на Волгу, стр. 73.

[3] Балладзори, Книга завоевания стран, пер. проф. П. К. Жузе, Баку, 1927, стр. 16.

[4] Վ. Թումանյան, Պատմական ակնարկ հայկական գորգագործության մասին, ՀՍՍՌ ԴԱ Տեղեկագիր, 1952, № 11, էջ 107:

[1] Ибн-Хаукал, Сбор. мат., XXXVIII, стр. 92.

[2] Материалы по истории туркмен и Туркмении, том 1, стр. 238.

[3] Վ. Թումանյան, Պատմական ակնարկ հայկական գորգագործության մասին, ՀՍՍՌ ԴԱ Տեղեկագիր, 1952, № 11, էջ 108:



Նկ. 71. Հնագույն գորգի մի նմուշ

զրաղվելով առևտրով և արհեստներով։ Նրանք հյուսում են աշխարհի ամենանուրբ և ամենագեղեցիկ գորգերը և նույնպես մեծ քանակությամբ մետաքս, որդան կարմիր և ուրիշ գույներով և առատությամբ ուրիշ կտորեղեններ»[1]։

Փաստերը ցույց են տալիս, որ արդեն X դարից հետո հայկական գորգերը տարածված են եղել Եվրոպայում։

Միջնադարյան հայ մատենագրության մեջ, մինչև XIII դարը, «խալի» տերմինին հոմանիշ գործածվել են կապերտ, արկանելի, անկվածոց անունները, որոնք պահպանվել են մինչև XIX դարը։

Դրանց գործածությանը հանդիպում ենք Մ. Խորենացու, Հ. Դրասխանակերտցու և ուրիշ պատմիչների մոտ։ Խորենացին գրում է՝ «Մթերս... Գունուց և անկուածոց», իսկ Դրասխանակերտցին, երբ նկարագրում է Եղիա ոստիկանի կողմից կատարած կողոպուտը, նշում է նաև «զհանդերձանս և զարկանելիս»։ Արկանել բառի գործածությունը կա 1202 թ., ամենահին գորգի վրա, որտեղ կարդում ենք՝ «Հարկանելիս Կիրակոսի բանանցիցուց ի յիշատակ Հռօիսիմէի... ՈՄԱ թվին զսա գործեսցի»։ Իսկ գորգ տերմինի հիշատակությունը հայ մատենագրության մեջ առաջին անգամ հանդիպում է 1234—1243 թթ. կառուցված Կապտավանքի վիմական արձանագրության մեջ, որ առաջին անգամ գրի է առել պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանը։ Բովանդակությունը հետևյալն է.

«Ես Սարգիս Հայրապետեան/ց թոռն միաբան

ա/յ/ս եկեղեցիս, եա/ու հող՝ խոտատեղ և գորգ»[2]։

Ինչպես տեսնում ենք, եկեղեցուն նվիրված անշարժ գույքերի հետ հիշվում է նաև շարժական նվերներից գորգը։ Հետագա դարերի (XVII—XVIII) հիշատակարաններում ավելի հաճախակի են հիշատակվում գորգերի նվիրատվությունները[1]։

Ալիշանի հաղորդած մի տեղեկության համաձայն, XIV դարի վերջերին, հայ վաճառականները եվրոպական քաղաքների շուկաներում վաճառել են գորգեր։ Ինչպես հայտնի է, XIV դարում հայկական գործվածքների սպառման շուկան կիլիկյան նավահանգիստներով հասնում էր նաև արևմտյան Եվրոպա, տարածվում էր մինչև Հոլանդիա։

Եվրոպական թանգարաններում գտնվում են մի շարք գորգեր, որոնք պատկանում են XIII—XVII դարերին։ Դրանցից անհրաժեշտ է հիշատակել ամենահետաքրքրականը՝ Վիեննայի թանգարանում գտնվող եռակամար գորգը, որի վրայի գլխավոր զարդանախշերը վարդնյակներ ու մեխակի թերթիկներ են, իսկ եզերքի շրջանակների մեջ իշխում է խաղողի օրնամենտը։ Գորգի վրայի հիշատակությունից (գրված է հայերեն տառերով) պարզվում է, որ այն հյուսված է 651 (1202) թվականին։ Հետաքրքրական գորգերից է նաև «Անահիտ» անունը կրող գորգը, որ գործված է 1330 թ., վրայի զարդանախշերի մեջ գերիշխում են վիշապի ու արծվի պատկերները։ Լոնդոնի թանգարանում գտնվող «Գոհարիկ» անունը կրող հայկական գորգը, որ իր վրա ունի մակագրություն, պատկանում է XVII դարին։ Ուշ շրջանի գորգեր շատ ունենք, որոնց մեծ մասը հյուսվել է Հայաստանից դուրս, հայ գաղութներում հայ վարպետների ձեռքով (նկ. 71)։

Ինչպես հայտնի է, XI դարից սկսած և հատկապես XII դարի վերջերին Հայաստանի քաղաքները՝ Դվին, Անի, Կարս և այլն, կորցնում են առևտրի մեջ իրենց միջազգային նշանակությունը, իսկ այդ քաղաքների հայ բնակիչների մեծամասնությունը, օտարների ճնշումներից ստիպված՝ գաղթել է երկրից դուրս, տանելով իր հետ արհեստն ու իր սովորույթները։ Հարմարվելով օտար պայմաններին, հայ տարագիրները, հայրենիքից

1 Ղեղեգրություններ, I, էջ 46։

2 Կ. Ղաֆադարյան, Շամշադինի 1935 թ. հնագիտական էքսպեդիցիան։ Ճարտարապետական հնագիտական էքսպեդիցիան։ Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի արխիվ, № 377։

1 Տես Մատենադարանի № 5552 ձեռագիրը։

դուրս, սկսում են զարգացնել բոլոր տեսակի արվեստի ու արհեստի ճյուղերը, որոնց թվում նաև գորգագործությունը։ Ա. Սաքըզյանը իր՝ գորգագործությանը նվիրված հոդվածի մեջ նշում է, որ էվկաֆուի թանգարանը հնագույն գորգեր ձեռք բերելու համար արել է հատուկ հայտարարություն, որի արդյունքը լինում է այն, որ հնագույն գորգեր են ստացվում Վանից ու Էրզրումից։ Էրզրումից ուղարկված խալիներից մեկի վրա կենտրոնում եղել է չորս խաչ, որով ապացուցվում է գորգի հայկական լինելը։

Համաձայն ռուս պատմաբանների Կարամզինի ու Գլինկայի տվյալների, XI դարի 60-ական թվականներին Կիևում հիմնվել է հայկական գաղութ, իսկ XII դարում ստեղծվել է հայկական հատուկ թաղամաս, որտեղ հայերը զբաղվել են զանազան արհեստներով, հատկապես ոսկերչությամբ, մետաքսագործությամբ և գորգագործությամբ։

Հայերը նպաստել են նաև Պարսկաստանի գորգագործության զարգացմանը։ XVII դարում, Շահ Աբբասի կողմից հայերի բռնի գաղթի ժամանակ, մեծ թվով Պարսկաստան են տարվել հայ արվեստավորներ, որոնց թվում նաև գորգագործներ։

Հայկական գորգերի հատկանշական կողմերից մեկն այն էր, որ նրանք ունեին որդան կարմրով ներկված կարմիր, փայլուն ֆոն, երկրորդ հատկանշական կողմը նրանց վրա եղած խաչանիշներն էին։ Պետք է նշել նաև, որ հայկական գորգերի վրա եղած զարդանախշերի մեջ գերիշխում էր S տառաձև զարդանախշը։ Նույնանման նախշերը շատ տարածված էին նաև գործվածքների, դաջվածքների ու Անիից գտնված ձեռագործերի վրա։ Հայկական գորգերի վրա, բացի վերոհիշյալ օրնամենտներից, ազգային հատկանիշ ունեցող զարդ են հանդիսացել խորանաձև նախշը, վեցթևանի ու երեքնուկի նմանվող ծաղկաթերթիկները և, վերջապես, վիշապի պատկերները, որոնք գալիս են խոր հնից։

Վիշապի պատկերը Հայկական բարձրավանդակում գոյություն է ունեցել ուրարտական շրջանից էլ շատ առաջ։ Այդ պատկերներն արտահայտվել են ո՛չ միայն գորգերի վրա, այլև բրոնզե, պղնձե զարդերի ու կերամիկայի վրա։ Առաջին հազարամյակին պատկանող բրոնզե ապարանջանների ծայրերը վերջանում են վիշապի գլխով[1]։ Վիշապի պատկեր է դրվագած Կարմիր բլուրից գտնված սաղավարտի ճակատին և միջնադարյան ոսկե զարդարանքների, հատկապես ապարանջանների վրա[2]։ Վիշապի պատկեր կրող գորգերը հետագայում փոփոխության են ենթարկվել. այն որպես ամբողջական սիմվոլ չեղոքանում է, բայց կմախքը շարունակում է մնալ հայկական գորգերի վրա։

Հայ գորգագործները իրենց աշխատանքի ընթացքում կրել են Բյուզանդիայի, Պարսկաստանի, Չինաստանի ժողովուրդների գորգերի զարդանախշերի որոշ ազդեցությունը, սակայն միաժամանակ ստեղծել են իրենց ուրույն ոճը և հայկական լավագույն զարդանախշերի նմուշներով, իրենց հերթին, փոխազդել են հարևան ժողովուրդների արվեստի վրա։

Ջ. ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽՇԵԼԸ ՀՅՈՒՍԵԼՈՒ ԵՎ ԴԱՋԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Պեղումներից հայտնաբերված կտորներն ու ձեռագրերի կազմերի ներսի կողմից պահպանված բրդե, բամբակե, մետաքսե վուշե աստառները տարբերվում են իրենց տեխնիկայով ու արտաքին գեղարվեստական ձևավորմամբ։

Հայաստանում արտադրված կտորների մեջ կան այնպիսիները, որոնց վրա զարդանախշերը կատարված են գործելու պրոցեսում։ Կտորների մի այլ տեսակի վրա զարդանախ-

---

1 Տես 1952 թ. Հ. Մնացականյանի ղեկավարությամբ կատարված պեղումների ժամանակ Աթաբեկյան գյուղի գամբարաններից գտնված արծաթյա վիշապագլուխ ապարանջանը։

2 Տես Դվինի ապարանջանները։ Պետ. պատմ. թանգ., №№ 123/1375, 123/1376։

շերը դաջվում էին հատուկ կաղապարների միջոցով, իսկ մետաքսե նուրբ գործվածքների վրա զարդանախշերն ասեղնագործում էին դույնզգույն ու ոսկե թելերով։

Այս աշխատության մեջ մենք նպատակ չունենք միջնադարյան գործվածքների վրա եղած օրնամենտները քննարկել արվեստի տեսանկյունով, քանի որ այդ խնդիրը պարզելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել Արևելյան և Արևմտյան երկրներում արտադրված կտորների վրայի զարդանախշերը և համեմատության միջոցով հանգել որոշ եզրակացության։ Առայժմ մեր նպատակն է հիշատակել Հայաստանում արտադրվող կտորների տեսակները և նշել նրանց վրա կիրառված զարդանախշերի ամենից շատ տարածված նմուշները։

Հայաստանի գործվածքների և նրանց վրա եղած զարդանախշերի մասին գրելիս մենք մեր ձեռքի տակ ունեցել ենք միայն Անիի ու Դվինի պեղումներից հայտնաբերված մետաքսե, բրդե և վուշե գործվածքների մի քանի նմուշները։

Հայ և օտար պատմիչներն իրենց գրավոր հիշատակություններում նշում են Հայաստանում արտադրվող միայն նուրբ կտորների մասին և ո՛չ մի տեղեկություն չեն տալիս այդ գործվածքների գույների ու նրանց վրա եղած զարդանախշերի վերաբերյալ։

Մենք մեր ուսումնասիրության ընթացքում այդ բացը հնարավորության չափով լրացրել ենք ձեռագրերի կազմերի աստառների մանրակրկիտ քննությամբ։ Այդ նմուշները մեզ տվեցին միջնադարյան Հայաստանում արտադրվող կտորների վերաբերյալ արժեքավոր նյութ։ Գործվածքների մասին մինչև օրս առանձին աշխատություն լույս չի տեսել։ Նկարիչ Ախիկյանը ձեռագրերի կազմերի աստառներից հավաքել է միայն գործվածքների ու դաջվածքների նմուշներ, որոնք որպես արխիվային նյութ պահպանված են Կերպարվեստի թանգարանում։ Նույն թանգարանի աշխատակից Լ. Դուրնովան ձեռագրերից հավաքած նմուշների դաջվածքների շուրջը ունի առանձին ուսումնասիրություն[1]։

Մեզ հաջողվեց Մատենադարանում ուսումնասիրել միայն մի քանի հարյուր ձեռագրերի կազմի աստառներ։ Այդ ուսումնասիրությունը մեզ հնարավորություն տվեց միջնադարյան Հայաստանում արտադրվող կտորների տեսակների ու նրանց վրա եղած զարդանախշերի վերաբերյալ որոշ եզրակացությունների հանգել։

Պետք է սակայն նշել, որ դեռևս լրիվ պարզված չեն Հայաստանում գործածվող զարդանախշերի բոլոր տեսակները. նախ՝ մենք հնարավորություն չենք ունեցել սպառելու բոլոր ձեռագրերի կազմերի աստառների ուսումնասիրությունը, մյուս կողմից՝ շատ հին ձեռագրերի (IX—XI դդ. պատկանող) կազմերը, որոնք ունեցել են մի ժամանակ կտորից աստառներ, զանազան պատճառներով ոչնչացվել են ու մեր ձեռքը չեն հասել։ Բացի դրանից, պետք է նկատել, որ կազմերի աստառների համար ավելի շատ օգտագործվել են միագույն, հասարակ բամբակե կտավներ, որոնք իրենց դիմացկունությամբ ավելի նպատակահարմար էին համարվում կազմի համար։ Միայն սրանց հիման վրա մեր ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանում արտադրվող բազմազան գործվածքների բնույթի ու զարդանախշերի մասին լիակատար գաղափար կազմելը հնարավոր չի լինի։

Միջնադարյան Հայաստանի գործվածքների մեծ մասը հյուսվել է տեղում, սակայն կան նաև այնպիսի կտորներ, որոնք տեղական չեն, ներմուծված են Պարսկաստանից, Բյուզանդիայից և այլ երկրներից։ Այդ հաստատվում է կտորների տեխնիկայով ու նրանց վրա եղած զարդանախշերով։ Ներմուծվող կտորների վերաբերյալ կան նաև գրավոր հիշատակություններ։ Հայ պատմիչները հաղորդում են հատկապես Բյուզանդիայից

---

[1] Л. Дурнова, Армянская набойка, Москва, 1953.

Հայաստան ներմուծվող թանկարժեք կտորների մասին։ Ղ. Փարպեցին հաղորդում է, որ Հայաստանը և Բյուզանդիան կապված են եղել նաև առևտրական հարաբերություններով։ Հայաստան են ներմուծվել նաև Բյուզանդական գործվածքներ։ «Ջկերպարան հանդերձիցս զոր ունիմքս մեք,— գրում է Ղ. Փարպեցին,—անտի գնեմք, վասն զի և ոչ յայլ աշխարհի գտանի սա ուրեք, բայց անդ՝ հարկաւորիմք անտի գնել զայս ըստ ժամանակին պիտոյից»[1]։

Գործվածքների տեղական լինելը և մոտավոր ժամանակը որոշվում է ո՛չ միայն հյուսվածքի գործելու տեխնիկայով, այլև զարդանախշերով, որոնք սակայն կարող են պահպանվել մի քանի դար՝ միայն չնչին փոփոխություններով ենթարկվելով։

Հայ պատմիչների մոտ հիշատակությունները միակողմանի են, նրանք նկարագրել են մեծ մասամբ միայն իշխող դասի նիստուկացը, զգեստներն ու զարդարանքները, մինչդեռ շինական ու ռամիկ խավի գործածած կտորների մասին գրեթե չեն խոսել. այնուամենայնիվ պատմիչների հատ ու կենտ թռուցիկ դարձվածքները այդ մասին ինքնին ցույց են տալիս հասարակ գործվածքների մասսայական արտադրության փաստը։

V դարի պատմիչ Եղիշեն անցողակի է հիշում շինական կանանց հագուստները, իսկ Ղ. Փարպեցու մոտ կա հիշատակություն այն մասին, որ չքավոր կանայք «խոշոր բրդից» գործվածքներ կհագնեին։ Վերոհիշյալից պարզ է, որ բացի նուրբ գործվածքներից, Հայաստանում, հատկապես աշխատավոր դասի շրջանում գործածվել են նաև բրդե կոպիտ կտորներ։

Շատ հաճախ հայ պատմիչների մոտ հասարակ կտորից կարված զգեստներն անվանվում են ձորձ. «ագաւ և զձորձմոյկսն հովուքեանն[2], կամ թե տնանկաց կարտոր «վասպերի միջով ձորձոյ»[1], որին որպես հոմանիշ կիրառվել են նաև ցնցոտիք, գրպիք «մուրողաց կամ աղքատաց»[2] տերմինները։

XIII դարի պատմիչ Կ. Գանձակեցու մոտ կա հետաքրքիր հիշատակություն այն մասին, թե ինչպես մի ունևոր, առևտրական-վաշխառու հոր մահից հետո, նրա հոգու փրկության համար, վարձով տված խանութներից ստացված եկամտի մի մասով գնում է ոչխարի մորթի ու կտավ և դրանցից կարում է հանդերձ ու բաժանում աղքատներին[3]։

Կտավ էին գործածում հատկապես աշխատավոր դասի ներկայացուցիչները. շինականները իրենց հագուստը գործում էին նաև բրդից, որ ձեռք էին բերում իրենց տնտեսության ներսում և զարդարում ավելի պարզ զարդանախշերով։ Մինչդեռ պրոֆեսիոնալ ջուլհակները օգտագործում էին մեծ մասամբ բամբակե ու մետաքսե թելեր, որոնցով գործում էին թանկարժեք կերպասներ՝ մի մասը առանձին անհատների հատուկ պատվերով, իսկ մեծ մասը արտադրում էին շուկայի համար։

Հիմնվելով պատմիչների հիշատակությունների վրա, նուրբ գործվածքները ըստ տեսակների կարելի է բաժանել մի քանի խմբի։

Բեհեզներ և կերպասներ (մետաքսե կտորներ)։— Հայ պատմիչները շատ անգամ նուրբ կտորներն անվանել են տեռ կամ շղարշ. երբեմն էլ՝ երկու տերմինների միացումով՝ շղարշատեռ, ինչպես օրինակ՝ Թամար «արկաւ տեռ և զարդարեցաւ» և կամ «Հռեբեկայ միայն տեռն բաւական եղև ի զարդ»[4], կամ թե «զբեհեզն և զերկնագոյն և զկարմիր շղարշատեռն և զճամկատորն և զոսկեճամուկն և զոսկեհատուն»[5]։

Մեր պատմիչները տեռին որպես հոմանիշ

---

1 Ղ. Փ ա ր պ ե ց ի, էջ 249—250։

2 Վ. Հ ա ց ու ն ի, էջ 7։ Նիւրեմի մատենագրութիւն, թարգմ. ե դարի, Վենետիկ, 1936, էջ 376։

1 Նորին մեկնութիւն Թղթոյն Պաւղոսի, թարգմ. ե դարի, Վենետիկ, 1862, էջ 504։

2 Նույն տեղում, էջ 8։

3 Կ. Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 137։

4 Վ. Հ ա ց ու ն ի, էջ 137։

5 Նույն տեղում, էջ 136։

գործածել են խլայ, որ պարսկերեն նշանակում է շքեղ հանդերձ։ Մատենագրության մեջ հիշվում է՝ «նշանակ է խլայն երևելի՝ թափանցանցալոյս առաքինութեան»[1]։ Երբեմն էլ գործածվում է այդ երկուսի բարդությամբ՝ խլատեռս։

Գործվածքների երկրորդ խումբը կազմում են գունավոր կտորները, որոնց վրա կային ղարդանախշեր։ Այդպիսի կտորները պատմիչների մոտ անվանված են ճամկավորք[2], օրինակ՝ «ազգի-ազգի դեղքն ընդ միմեանս ի ճամուկսն մտեալ» կամ թե՝ «սիրամարգի բազմաճամուկ տուտնն»[3]։ Հիշվում է նաև «ի նարօտս երփնագոյն»[4] կամ ճաճանչաւուղտ, որ նշանակում է ներկած, գունավոր։

Երրորդ խումբը ոսկեխառն պաստառներն են։ Ոսկե կամ արծաթե թելերը հյուսվում էին թե կերպասի և թե բեհեզների հետ։ Այդպիսի կտորները մեր պատմիչները անվանում են դիպակ։ Դրասխանակերտցին նկարագրելով ճոխ զգեստները, անվանում է այն «զգեստս ոսկեճամուկս»[5], իսկ Ագաթանգեղոսը Հռիփսիմեի թաղման ժամանակ նարոտի համար ստացած կտորների թվում հիշում է «զոսկեհուռն դիպակ». Ու կանայք պատուականացն և մեծամեծացն դստերք՝ բերէին ծիրանիս և զոսկեհուռն դիպակն»[6]։ Այնուհետև հիշատակվում է «Ոսկեհուռ դիպակագործ պատմուճան»[7], կամ ոսկեճամուկ, որ նշանակում է ոսկեգույն։

Ձեռագրերի կազմերի աստառների մեջ թեև քիչ թվով, բայց կան նաև ոսկեզօծ թելերով հյուսված կտորներ (դիպակներ)։

Ինչպես այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում արտադրվող կտորները օգտագործման տեսակետից հիմնականում բաժանվում են երկու խմբի։ Առաջին խմբի մեջ են մտնում կենցաղային բնույթի գործվածքները, որոնց հատկանշական գիծն այն է, որ նրանց վրայի զարդանախշերը համեմատաբար մանր են ու միահյուսված իրար հետ։ Երկրորդ խումբը՝ դեկորատիվ նպատակների համար գործադրվող կտորներ են, որոնց վրայի զարդանախշերն ավելի խոշոր են ու միմյանց հետ հյուսված շրջանաձև կամ վիթխարի նախշերով։

Ինչպես հագուստեղենի, այնպես էլ դեկորատիվ նպատակին ծառայող կտորները նկարագրվում էին հյուսելու ընթացքում և կամ դաջելու տեխնիկայով։ Իշխող դասի համար դեկորատիվ կտորները մեծ մասամբ պատրաստվում էին հյուսելու տեխնիկայով, իսկ աշխատավոր խավը այդպիսի նպատակի համար օգտագործում էր դաջած կտորները, որոնք համեմատաբար էժան էին։ Հայաստանի ջուլհակների արտադրած կտորների զգալի մասը միագույն բամբակե կտավներ էին, կամ բրդե, մետաքսե գործվածքներ, որոնք ներկված էին գլխավորապես կարմիր, կապույտ և դեղին գույնի։ Արտադրվող կտորների մեջ, բացի միագույնից, շատ տարածված էին բրդից, բամբակից և անգամ մետաքսից փոքր ու մեծ քառակուսիներով հյուսված կտորները։ Այս տեսակի կտորները մեծ մասամբ օգտագործվում էին վերնազգեստների համար։ Քառակուսաձև նախշերի մեջ տարածված էին կարմիր, կապույտ, շագանակագույն, դեղին գույներով գծազարդերը, որոնց նմուշները ամենից շատ հանդիպում են ձեռագրերի կազմերի աստառների վրա։ Դրանց մեջ ուշագրավ գործվածք է № 1333 Թ. ձեռագրի[1] կազմի աստառը։ Ձեռագիրը գրված է Երզնկայում։ Նրա աստառի

---

1 «Նորին Մեսրոպայ ի հայոց», թարգմ. Ե դարու, Վենետիկ, 1826, էջ 352։

2 Ճամակ—պահլավերեն նշանակում է կիտված կամ զարդ. Թիրաքյանի Արբահայ բառարան, Վիեննա, 1914։

3 Վ. Հ ա ց ու ն ի, էջ 137 (Ոսկ. Թղթ. Ա, 429)։

4 «Ճակոբայ Մծբնացւոյ՝ Ջրոնն», թարգմ. Ե դարու, Կոստանդնուպոլիս, 1824, էջ 356։

5 Հ. Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 198։

6 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, էջ 387։

7 Ցովհան Ոսկեբերանի մեկնութիւն Նահայեայ, թարգմ. Ե դարու, Վենետիկ, 1880, էջ 38։

1 Կենտրոնական պետական պատմական արխիվ, № 124, ինվ. 1011/1879։

կտորը հյուսված է ցանցաձև, բաց կապույտ քառակուսիներով։ Կենտրոնում ունի կարմիր թելերով խաչաձև հյուսք, մեծ քառակուսիների մեջ։ Այս կտորը իր գործվածքի տեխնիկայով նման է Երզնկայի ու Էրզրումի հյուսվածքին և ոսկերչության մեջ կիրառվող թելի գործին։

Քառակուսանման նախշերով է գործված նաև Մատենադարանի № 846 ձեռագրի կազմի աստառը, որ պատկանում է XV դարին։ Աստառի սպիտակ ֆոնի վրա մուգ կարմիր գծերով հյուսված են քառակուսի նախշեր։ Կան նաև շագանակագույն սյունիկներով հյուսված քառակուսիներ, ինչպես, օրինակ, № 46 ձեռագրի[1] կազմի աստառը, որ գործված է բամբակե թելից։ Շատ հաճախ հանդիպում են կապույտ և սպիտակ ֆոնի վրա սև ու դեղին գույնի գծազարդերով հյուսված քառակուսիներ։

Նախշերով էին զարդարվում անշուշտ նաև բրդե կտորները, որոնց նմուշներին, դժբախտաբար, մեր ուսումնասիրության ընթացքում, կազմերի աստառների մեջ տակավին չենք հանդիպել։

Գործվածքային նախշերի մեջ Հայաստանում տարածված էին նաև ջեջիմանման նախշազարդերը՝ կարմիր, դեղին, կապույտ, կանաչ, շագանակագույն գույներով։ Նման նախշերը արվում էին բամբակե, բրդե և մետաքսե թելերով։ Ջեջիմաձև գործվածքների վրա քիչ կան բուսական զարդանախշեր։

Մետաքսե թելերից հյուսված ջեջիմաձև նախշերով լավագույն գործ է Մատենադարանի XI—XIII դարերին պատկանող № 85 ձեռագրի կազմի աստառը։ Նույնպիսի զարդանախշերով է գործված № 1264 ձեռագիր[2] ավետարանի կազմի աստառը։ Վերջինիս ֆոնը սպիտակ է, մեկ շերտը մյուսից բաժանվում է կանաչավուն զարդանախշերով։ Ջեջիմաձև գործվածք է նաև XIII դարի ձեռագրի կազմի աստառը, որի վրա կիրառված են մի քանի գույներ։ Նույն տեխնիկայով են գործված Մատենադարանի №№ 5559, 5563, 5591, 5565 ձեռագրերի կազմերի աստառները, որոնք պատկանում են XII—XIV դարերին։

Ջեջիմաձև զարդանախշով է գործված № 2351 ձեռագրի կազմի մետաքսե աստառը[1], որի վրա կիրառված է ոսկեգույն և կարմիր գծանախշ։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ այդ երկու գույներն էլ ստացված են որդան կարմրից։

Նույնանման զարդանախշերով լավ գործվածքներ են Մատենադարանի №№ 664 և 1599 ձեռագրերի կազմի աստառները, որոնց վրա օգտագործված են բազմագույն թելեր։ Կան նաև ջեջիմաձև այնպիսի գործվածքներ, որոնց հենքը բամբակե թելից է, իսկ վրայի զուգահեռ նախշերը կատարված են մետաքսե թելերով։ Այս տիպի գործվածքներ ամենից շատ հանդիպում են XVI—XVII դարերում. օրինակ՝ Մատենադարանի № 2291 ձեռագրի կազմի աստառի վրա կապույտ և բաց գույնի ժապավենաձև շերտի վրայով անցնում են մուգ կարմիր մետաքսե թելերից հյուսված 3—5 շար գծանախշեր։

Ջեջիմաձև հետաքրքիր գործվածք է Մատենադարանի № 201 ձեռագրի կազմի աստառը, որ պատկանում է 1660 թ. և գործված է բարդ տեխնիկայով։ Լայն զուգահեռ սյուների մեջ, դեղին և բաց կարմիր գույնի ֆոնի վրա հյուսված են ութթևանի վարդանման տարբեր գույների ծաղիկներ, իրենց ձողուններով, տեղ-տեղ արծաթագույն սրմա թելերից գործած։ Նման գործվածքները մեր ձեռագրերի աստառների մեջ եզակի են (նկար 72)։

Ջեջիմաձև նախշերով գործվածքները հատուկ են նաև միջին ասիական ժողովուրդներին։ Դրանով պետք է բացատրել, որ այն խիստ տարածվեց Հայաստանում հատկապես սելջուկյան և մոնղոլական արշավանքներից հետո։ Այդ ձևի նախշերը հետագա-

---

1 Կերպարվեստի թանգարան, № 46, ինվ. 1000/1568։

2 Նույն տեղում, ինվենտար № 152։

1 ՀՍՍՌ Մատենադարան։

Նկ. 72. Մետաքսե գործվածք, 1660 թ., Մատենադարանի № 201 ձեռագրից։

յում, հատկապես XVII—XVIII դարերում, մասսայորեն կիրառվեցին նաև դաջածո կտորների վրա։

Վերնազգեստների ու դեկորատիվ գործվածքների վրա կիրառվում էին ավելի բարդ, բուսական օրնամենտներ, որոնց գործելու համար պահանջվում էր հմտություն և ժամանակ. պարզ է, այդպիսի գործվածքները չէին կարող մասսայական լինել։ Դրանք պատրաստվում էին հատուկ պատվերով։ Պատվերով էին պատրաստվում թագավորների, իշխանների, հոգևորականների և ընդհանրապես իշխող դասի համար՝ վերնազգեստները (պատմուճաններ, փիլոններ), գլխի ծածկոցները, վերմակի և բարձի երեսները, վարագույրները և այլն։ Երբեմն մետաքսե կտորների վրա օգտագործում էին նաև ոսկեգույն ու արծաթագույն սրմա թելեր։ Մեր պատմիչների կողմից բազմիցս հիշատակված՝ երանգ-երանգ ծաղկանախշերով զարդարված գունակ-գունակ կերպասների, ոսկեթել դիպակների արտադրությունը Հայաստանում, հաստատվում է ձեռագրերի կազմերի ներսի կողմից փակցրած աստառների նմուշներով։ Հետաքրքիր գործվածք է Մատենադարանի № 6223 ձեռագրի կազմի աստառը, որը գրված է 1314 թ.։ Աստառը հյուսված է բաց կանաչ մետաքսե թելերով, իսկ զարդանախշերը գործված են մուգ կանաչ գույնի թելերով։

Երզնկայում 1318 թ. գրված Մատենադարանի № 206 ձեռագրի կազմի ներսի աստառն ունի բաց կանաչավուն ֆոն՝ նախշված ալ կարմիր մետաքսե թելերով։ Այս գործվածքի վրա գերիշխում է աստղանման նախշը։ Նույնանման նախշեր հանդիպում են միջնադարյան մանրանկարչության մեջ։ Կտորների վրա արված աստղանման զարդանախշերը տեղական են. աստղի քանդակը դործածվել է Հայաստանում դեռևս հնագույն ժամանակներում, ինչպես ցույց են տալիս, օրինակ՝ Տիգրան Բ-ի և Արտավազդի թագերի վրա եղած աստղանախշերը։ Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի դամբարաններից մեկում[1] գտնված թանկարժեք քարի վրա ինկրուստացիայի միջոցով պատրաստված է աստղ։ Աստղանման նախշազարդեր կան հայկական հուշարձանների քանդակների վրա։

Հետաքրքիր կտոր է նաև Մատենադարանի № 2120 ձեռագրի կազմի աստառը։ Ուշագրավ է, որ ջեջիմանման զարդանախշի վրա, մեկընդմեջ, ամբողջ երկարությամբ կան վեցթևանի վարդեր, որոնց նմանները շատ են հանդիպում դաջածո կտորների, քարի, փայտի, կավի, ոսկու վրա և մանրանկարչության մեջ։ Կտոր գործող վարպետը կարողացել է երկու տարբեր զարդանախշեր միահյուսելով ստանալ նոր ոճ։ Նույր գործվածքներից է № 2137 ձեռագրի կազմի մետաքսե աստառը, որ պատկանում է XV դարին[2]։ Կարմիր ֆոնի վրա, ոսկի թելերով հյուսված են բուսական զարդեր։ Այս տիպի կտորներին, ինչպես վերևում հիշեցինք, մեր պատմիչները անվանել են դիպակ։ Դիպակ հյուսելը կապված է մեծ դժվարությունների հետ և այդ պատճառով էլ դիպակները գործում էին հատուկ փորձ ունեցող վարպետները։

Լավագույն դիպակներից է Մատենադարանի № 2171 ձեռագրի (գրված է 1412 թ. Մեծոփա վանքում) կազմի աստառը։ Կարմիր մետաքսե ֆոնի վրա ոսկե սրմաթելերով հյուսված են հայկական օրնամենտացիային հատուկ բուսական և նոան զարդանախշեր։ Նոան օրնամենտները որոշակի հաստատում են, որ այդ կտորը գործված է հայ ջուլհակի ձեռքով։ Պետք է նշել, որ նոան, խաղողի քանդակները և նկարները կիրառվել են վիմաքանդակներում, ոսկերչության, կավագործության[3] և հայկական մանրանկարչու-

---

[1] Աստղանման իրը հայտնաբերվել է Տոլորս գյուղի մոտ շինարարական աշխատանքների ժամանակ բացված դամբարաններից մեկում, որի պեղումները կատարել է պատմական գիտությունների թեկնածու Հ. Մնացականյանը։

[2] Պետ. Մատենադարան։

[3] Տես Դվինի 1946—1952 թթ. սիստեմատիկ պեղումների ժամանակ մի[illegible]ից գտնված կարասի վրայի խաղողի քանդակը և № 1905/94 ջնարակած անոթի բնկորը խաղողի ողկույզով։

թյան մեջ: Նման օրնամենտներով գործվածքներ հանդիպում են նաև Եվրոպայում, ինչպես օրինակ՝ Ֆլորենցիայում արտադրված XVI դարին պատկանող թավշյա մի նուրբ գործվածք ամբողջովին ծածկված է նման նկարներով[1]: Մեր կարծիքով, դա հայկական կուլտուրայի ազդեցության արդյունքն է. չմոռանանք պատմական այն փաստը, որ հայ վաճառականները հնում երկար ժամանակ առևտրական կապեր են ունեցել Ֆլորենցիայի հետ:

Հետաքրքիր մետաքսե գործվածք է № 2144 ձեռագրի կազմի աստառը, որը ժամանակակից է ձեռագրին, իր վրայի օրնամենտներով շատ նման է դաջածո կտորների նախշերին, որոնց նմանները քիչ են հանդիպում հյուսվածքներում: Այս գործվածքի վրա աշխատող վարպետից պահանջվում էր բավականաչափ հմտություն: Մետաքսե մուգ կարմիր թելերով հյուսված ֆոնի վրա, արծաթե սրբմա թելերով մեկընդմեջ գործված են շղթայաձև զարդանախշեր, որոնց օղակները միանում են իրար հետ ութթևանի ծաղկանախշերով, իսկ օղակների կենտրոնում հյուսված հինգ թևանի աստղեր: Այս շղթայաձև նախշերին զուգընթաց դարձյալ մեկընդմեջ հյուսված են մի շարքի վրա անընդմեջ վեցթևյան ծաղկանախշեր: Վերոհիշյալ զարդանախշերը հաստատում են գործվածքի տեղական արտադրություն լինելը:

Այսպիսի զարդանախշերով դիպակներ, որոնք չեն ընդհատվում և կապված են իրար հետ, մեծ մասամբ օգտագործվել են վիրնազգեստների համար:

Ձեռագրերի կազմերի աստառների մեջ գտնվեց նաև սև գույնի ատլաս, որ գլխավորապես գործածվում էր հոգևորականների փիլոնների ու գլխի ծածկոցների համար: Թեև հիշյալ կտորը և ձեռագիրը[2] պատկանում են XVII դարին, բայց պետք է ասել, որ սև ատլասը գործածական էր ոչ միայն XVII դարում, այլ նրանից առաջ ու հետո ևս: Այս ատլասը գործված էր սև մետաքսե շատ նուրբ թելից և փայլում էր մարմարի նման, իրենից կազմում էր գծիկներ, որոնք կտորի մի շերտին տալիս էին փայլ, մյուս շերտին՝ ավելի մուգ գույն: Նման սև ատլաս գործ էին ածում հատկապես բարձրաստիճան հոգևորականները:

Կենդանական զարդանախշերը հատուկ էին պարսկական, բյուզանդական գործվածքներին, բայց մեզ մոտ ևս հանդիպում են թեև քիչ քանակությամբ: Այդպիսի զարդանախշերով գործվածքների առայժմ հանդիպել ենք միայն երկու ձեռագրերի կազմերի վրա: Մատենադարանի՝ XIV դարի № 2326 ձեռագրի կազմի աստառի դեղնավուն ֆոնի վրա բաց կապույտ գույնի սրտաձև օրնամենտները հյուսված են մեկը մյուսից անջատ, որոնց կենտրոնում, իրար դիմաց պատկերված են 2 թռչուն, իսկ նրանց միջև եղած բաց տարածության վրա, տարբեր գույնի թելերով հյուսված են դրակոններ՝ մեկ շարքի վրա, վազքի վիճակում: Նույնանման մի ուրիշ օրինակ արված է դաջելու տեխնիկայով, որտեղ կենդանու հետ հանդես է գալիս նաև մարդու պատկերը (նկ. 73):

Ձեռագրերի կազմերի աստառների գործվածքների մեջ դեկորատիվ բնույթի կտորների քիչ ենք հանդիպում, դուցե նման կտորները նպատակահարմար չեն եղել կազմերի համար: Մեր կողմից ուսումնասիրված կազմերի աստառների մեջ հանդիպել ենք մի քանի նմուշների, որոնցից արժե հիշատակել Մատենադարանի՝ XV դարի գրված № 2281 ձեռագրի կազմի աստառը. կարմիր մետաքսե թելերով հյուսված ֆոնի վրա արված են խորանաձև զարդանախշեր՝ հյուսված դեղնավուն մետաքսե թելերով: Այս զարդանախշերը տարածված էին միջնադարում և ավելի շատ հանդիպում են դաջվածների վրա, դրանք, անշուշտ, ընդօրինակված են մանրանկարչության մեջ եղած խորանաձև նախշերից:

Բացի ձեռագրերի կազմերից ու պեղում-

---

[1] Н. Н. Соболев, Очерки по истории украшения тканей. Москва 1934, էջ 253.

[2] ՀՍՍՌ Մատենադարան:



Նկ. 73. Մետաքսե գործվածք, Մատենադարանի № 2326 ձեռագրից։

ներից հավաքած կտորների նմուշներից, հագուստի կտորի տեսակը, նրանց վրայի զարդանախշերն և նույնիսկ հագուստի ձևը որոշելու համար մեզ բավականաչափ նյութ են ընձեռում մանրանկարչության մեջ եղած բազմաթիվ նկարները, վիմական քանդակներն ու բարելյեֆները, արձաններն ու արձանիկները։ Կենդանական քանդակներ կան Հայաստանում հատկապես քարերի վրա, որտեղ պարզ երևում են հագուստների զարդանախշերը։ Գագիկ Բագրատունու արձանի վրա պատմուճանը քանդակված է վահանաձև նախշերով, որոնց մեջ կան և առյուծի պատկերներ[1], իսկ ուսերին ձգած լայն ժապավենաձև ծածկոցը հավանաբար զրվագած է ոսկե թելերով։ Նույնպիսի շրջանաձև նախշեր և թռչունի պատկերներ կան Գագիկ Արծրունու պատմուճանի վրա[2] (նկար 74)։ Առյուծանման զարդանախշերով են գործված նաև կիլիկյան թագավորներ Լևոն Բ և Լևոն Դ-ի պատմուճանները[3], իսկ Հեթում թագավորի վերնազգեստի շուրջը եզերված են շրջանաձև զարդանախշեր։ Բացի թագավորներից ու իշխաններից, զեղեցիկ զարդանախշերով հյուսված են նաև թագուհիների, իշխանուհիների վերնազգեստները, ինչպես օրինակ՝ 1346 թ. ավետարանի մեջ, Կոստանդին Բ-ի մոր՝ Մարիոն թագուհու հագուստը զարդանախշված է իննթևանի վարդերով, իսկ փեշերը գործված են սրմա թելերով[4]։

Միջնադարյան մանրանկարչության մեջ պատկերված զգեստների, վարագույրների, բարձերի կտորների վրա եղած զարդանախշերում գերակշռում են չորս թևանի, խաչանման, S տառի ձև ունեցող նախշերը. բացի դրանից, հյուսված կան նաև առյուծների, թռչունների զարդանախշեր, որոնք ավելի շատ հանդիպում են կիլիկյան թագավորության շրջանի գործվածքների վրա։

1 Վ. Հացունի, Պատմութիւն հին հայ տարազի, էջ 189։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 240։

4 Նույն տեղում, էջ 249։

Է. ԴԱՋԱԾՈ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐ

Հայաստանի ջուլհակ արհեստավորները, ինչպես ասացինք, գործում էին մեծ մասամբ միագույն կտավներ, որոնք սպառվում էին լայն մասսաների կողմից։

Այդ միագույն կտավների որոշ մասը զարդարում էին գույնզգույն զարդանախշերով, որոնք գործվածքին տալիս էին արտաքին գեղեցկություն։ Գործվածքների նախշերը բազմագույն ու բազմատեսակ էին և կատարվում էին դաջելու տեխնիկայով։ Դաջելու եղանակով նախշելը հեշտացնում էր, աշխատանքը էժան էր նստում, իսկ արդյունքը մատչելի էր դառնում նաև ժողովրդական լայն մասսաներին։

Դաջածո կտորները մեծ մասամբ լինում էին բամբակե թելից և ամենից ավելի սպառվում էին քաղաքային բնակչության մեջ։

Դաջելու տեխնիկայով նախշված կտորները, ինչպես այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում գոյություն են ունեցել տակավին հին ժամանակներից։ Կերպարվեստի գիտ. աշխատող Լ. Դուրնովան գտնում է, որ Հայաստանում դաջածո գործվածքների հնագույն նմուշները առայժմ պատկանում են XI դարին։ Մեր կարծիքով, դաջածո գործվածքները գոյություն են ունեցել ավելի վաղ շրջանում. այդ են ապացուցում X դարի հայ պատմիչներից Ուխտանես եպիսկոպոսի[1] (և Հ. Դրասխանակերտցու) վկայությունները «գունակգունակ, երանգ-երանգ» կտորների մասին, բացի դրանից, եթե մենք ունենք XI դարում դաջվածքի տեխնիկայով պատրաստված գործվածքներ, առավել ևս այն պիտի եղած լինի X դարում և նրանից առաջ, քանի որ այդ դարերը եղել են Բագրատունյաց թագավորության ծաղկման ժամանակաշրջանը, և հատկապես դաջման եղանակով հնարավոր էր շուկայի աճող պահանջը բավարարել. կարելի էր կարճ ժամանակում արտադրել ավելի էժան ու ավելի շատ գունազարդ գործվածք։

1 Ուխտանես, II, էջ 66։

Նկ. 74. Գագիկ Արծրունու տարազը, Ախթամարի ս. խաչ եկեղեցու բարձրաքանդակից. X դար

Դաջածո կտորների վրա եղած օրնամենտները ուսումնասիրելով և համեմատության մեջ դնելով Հայաստանի հարևան երկրների նույնանման արտադրանքի հետ, տեսնում ենք, որ այդ նախշերի մեջ կան որոշ ընդհանրություններ, ուստի միայն նախշերով որոշել տեղի ու ժամանակի հարցը, դժվար է։ Հիրավի՝ բյուզանդական և սասանյան շրջանի օրնամենտների որոշ նմուշներ կարող էին կիրառվել նաև Հայաստանում, կամ թե՝ հայկական դաջված նախշերը իրենց հերթին կարող էին ազդել Բյուզանդիայի և եվրոպական այլ երկրների զարդանախշերի վրա, որովհետև այդ երկրները շարունակ առևտրական

հարաբերությունների մեջ էին գտնվում միմյանց հետ, գնելով իրարից նաև գործվածքներ։ Հետևապես արհեստավոր վարպետները կարող էին լավագույն նմուշները փոխադարձաբար ընդօրինակել և հարմարեցնել իրենց ազգային ճաշակին։

Նախշերը դաջվում էին բամբակի, վուշի և մետաքսե գործվածքների վրա։ Դրա համար կային հատուկ վարպետներ, որոնց թիվը բավական մեծ էր մանավանդ քաղաքներում։

Ջուլհակները իրենց աշակերտների հետ միասին ոչ միայն կատարում էին հատուկ պատվերներ, այլև գնում էին մեծ քանակությամբ կտավ, զարդարում էին ցանկացած զարդանախշերով ու վաճառքի հանում այն։ Կար նաև արհեստավորների մի այլ, ոչ պակաս մեծ թիվ (վարպետ իր աշակերտով), որ շրջում էր գյուղից գյուղ, սպասարկում տնայնագործ ջուլհակներին՝ նրանց գործվածքները զարդանախշելու համար։

Գործվածքներ դաջելու աշխատանքը բավական դժվար էր և կապված մի շարք պրոցեսների հետ։ Այդ տեխնիկայի մասին պարզ պատկերացում ունենալու համար անհրաժեշտ ենք համարում ասել մի քանի խոսք։

Դաջելու համար անհրաժեշտ էին հատուկ կաղապարներ ու, սկզբնական շրջանում (մինչև X դարը), փորձված անհատներ, որոնք կարող էին նկարել գունավոր ներկերով. վրձինի օգնությամբ նրանք գծում և նկարում էին կտորի վրա զանազան նախշեր, իսկ այդ աշխատանքը պարզ է, որ շատ ժամանակ էր խլում։

Հետագայում նախշերի համար սկսեցին գործադրել տրաֆարետը։ Նախշելու այդ եղանակն ուներ իր բացառական կողմը. այդ այն էր, որ կտորը ներկելուց կծկվում էր և չորանալուց հետո կորցնում էր նկարի ձևը, իսկ շատ հաճախ ներկերը տրաֆարետի արանքից տարածվում էին կտորի վրա և նախշը կորցնում էր իր դեղեցկությունը։ Երկարատև փորձերից հետո, ավելի ուշ կիրառվեցին փայտե կաղապարներ, որոնք տեխնիկապես շատ ավելի հարմար էին։ Այս դեպքում ներկը չէր տարածվում և նախշը պահում էր իր ձևը։ Այս մեթոդով են դաջվել կտորները մինչև XIX դարը։ Մանքենաների առկայության պայմաններում ևս, որոշ տեղերում, նույնիսկ XIX դարից հետո էլ տնայնագործական այդ ձևը շարունակում էր պահպանվել։

Դաջելու կաղապարները մեծ մասամբ պատրաստում էին փայտից, երբեմն նաև մետաղից։ Փայտե կաղապարներ պատրաստելու համար, սկզբում բարակ թղթի վրա գծում էին ցանկացած նախշը և գծված թուղթը ամրացնում համապատասխան փայտին, ապա փոքր մուրճով հարվածում էին այնքան, մինչև նկարը ընդօրինակվեր փայտի վրա։ Այնուհետև, հատուկ գործիքով փորում էին գծված օրնամենտը։ Կաղապարը պատրաստելուց հետո ներկում էին. յուրաքանչյուր դույնի համար պահանջվում էր առանձին կաղապար։ Կաղապարները մեծ մասամբ լինում էին քառակուսաձև, որոնց միջոցով հաջորդականությամբ զարդանախշվում էին կտորները։

Եթե կտորը զարդանախշվում էր յուղաներկով, ապա ներկելուց հետո անմիջապես չորացնում և օգտագործում էին։ Իսկ եթե ներկը պատրաստված էր այլ նյութերից, այդ դեպքում ներկը ամրացնելու համար անհրաժեշտ էին մի շարք պրոցեսներ։

Դաջող արհեստավորների մեջ գոյություն ուներ աշխատանքի հետևյալ բաժանումը՝ 1. կաղապար պատրաստողներ, 2. նախշեր նկարողներ, 3. ֆոն-քաղներ կամ, ինչպես պատմիչներն են անվանում, «մինա» անողներ, 4. դաջողներ։

Փայտե կաղապարների մի քանի նմուշներ, որոնք պատրաստված են XVIII—XIX դարում, այժմ գտնվում են Պետ. պատմական թանգարանի ազգագրական բաժնում։ Նման կաղապարներ ու զարդանախշեր անշուշտ գործածվել են նաև XVIII դարից առաջ, միայն որոշ չափով տարբերություն է



Նկ. 75. Դաջիլու փայտե կազապարների նմուշներ, XVIII—XIX դդ. Պետական պատմական թանգարան

նկատվում նախշերի տեսակների մեջ։ Այդ են վկայում նաև XVII դարից հետո եղած նախշերի նմուշները (նկ. 75)։

Մինչև օրս պեղումների ընթացքում հայտնաբերված գործվածքները, որոնց մեծ մասը մետաքսից են և շատերը ասեղնագործած, առանց զարդանախշի են։ Հայաստանի դաջված կտորների մասին դաղափար ենք կազմում միայն ձեռագրերի կազմի աստառների ուսումնասիրությամբ, որոնց հնագույնը պատկանում է XI դարին, իսկ ավելի շատ դաջածո կտորների նմուշներ պահպանված են XIII դարից հետո։

Դաջածո կտորների ուսումնասիրությունից պարզվում է, որ նրանց տարբեր տեսակները օգտագործվել են տարբեր նպատակների համար, օրինակ՝ հագուստի, վարագույրի, ծածկոցի, թաշկինակի և այլն. այդ կտորների միայն մնացորդներն են օգտագործվել կազմերի համար, իսկ միագույն կտորներից աստառները պատրաստվել են մասսայական կերպով։

Ձեռագրերի կազմերի աստառների ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ դաջված նախշերը բազմազան են, դրանց մեջ ամենից շատ կիրառված են բուսական ու երկրաչափական զարդանախշեր, իսկ կենդանական ու մարդկանց ֆիգուրանները համեմատաբար քիչ են հանդիպում՝ հակառակ սասանյան և բյուզանդական կամ արևելյան մյուս պետությունների գունազարդ գործվածքների, որոնց վրա կենդանիների ու թըռչունների զարդանախշերը գերիշխում են։ Նպատակ չունենալով առանձին-առանձին կանգ առնելու յուրաքանչյուր նախշի ծագման մանրամասնությունների վրա, մենք միայն ընդհանուր առմամբ պետք է նշենք, որ դաջածո կտորները հիմնականում պատ-

բաստվում էին տեղում և շատ քիչ դեպքում էին ներմուծվում, քանի որ էժան կտորների ներմուծման փոխարեն Հայաստանը կարող էր դրսից ստանալ ավելի թանկարժեք գործվածքներ։ Ավելի շատ կատարվում էր նախշերի փոխանակություն, որ՝ ձուլվելով տեղական զարդանախշերի հետ՝ ստեղծում էին հայկական ուրույն ոճ։

Հայաստանում կիրառվող օրնամենտների մեջ բուսական զարդանախշերից գերիշխում էին 6, 8, 9 թևանի վարդյակները։ Նույնանման նախշեր կան պարսկական, բյուզանդական, ռուսական և այլ երկրների դաջածո կտորների վրա։ Այդ զարդանախշերը, սակայն, յուրաքանչյուր երկրում ունեին իրենց առանձնահատկությունները. օրինակ՝ մեր ութթևանի վարդի թերթիկները ավելի լայն են, քան պարսկականը և ծայրերի սրությամբ տարբերվում են պարսկականից. նույնը կարելի է ասել մյուս օրնամենտների



Նկ. 76. Դաջածո կտոր զարդանախշերով, Պետ. Մատենադարանի № 2144 ձեռագրի կազմի տակից

մասին, որոնցից յուրաքանչյուրին արհեստավորները տվել են ազգային հատկանշական գծեր (նկար 76)։

Հայկական դաջածո զարդանախշերի մեծ մասը վերցված է կամ ճարտարապետական հուշարձանների վրա կիրառվող քանդակներից, որոնք Հայաստանի համար եղել են հարազատ, կամ թե մանրանկարչության մեջ եղած նկարների համապատասխան զարդանախշերից, որոնց նմանները մենք տեսնում ենք նաև ոսկերչության մեջ տրված փորագրական աշխատանքներում։

Բացի վարդյակներից, կիրառվել են բուսական զանազան ծաղկազարդեր, վահանաձև ծաղկավոր նախշեր, խաղողի և նռան պատկերներ և այլն։ Դժվար է այժմ ասել, թե վերոհիշյալ զարդանախշերից որոնք են հնագույնը։ Այդ հարցի լիակատար բացատրությունը թողնում ենք արվեստագետներին։



Նկ. 77. Դաջածո կտոր XIV—XVI դդ. Պետ. Մատենադարանի № 3494 ձեռագրի կազմի տակից

Մեր ուսումնասիրությունը, որ հիմնված է նյութական մնացորդների վրա, ցույց է տալիս, որ հնագույն դաջվածքների մեջ, հատկապես դեկորատիվ կտորների վրա, վահանաձև զարդանախշերը եղել են հնագույններից, որոնք, մեր կարծիքով, ընդօրինակված են խաչքարերի կենտրոնական պորտի նախշից։ Հետագայում այդ զարդերի մեջ շրջանաձև նախշը կորցնում է իր դերը և պահպանվում է միայն կենտրոնի վարդը։ Այդ

օրնամենտի հնագույն լինելը հիմնավորվում է նրանով, որ համապատասխան ձեռագրերը պատկանում են ավելի հին շրջանին, իսկ կազմի աստառները ժամանակակից են ձեռագրերին (նկար 77)։ Վահանաձև դաջվածք ունի իր վրա Մատենադարանի № 301 ձեռագրի կազմի աստառը, որը գործված է բամբակե թելից. նրա վրայի շրջանաձև նախշը ունի կարմիր գույն։ Այդ նախշի մեջ նորից դաջված են առանձին փոքրիկ շրջանակներ, որոնց յուրաքանչյուրի մեջ պատկերված է վեցթևանի ծաղիկ, իսկ վերջին, վեցթևանի ծաղկի յուրաքանչյուր թևի մեջ նորից նախշված է ավելի փոքր չափի վեցթևանի զարդանախշ։ Այս շրջանակները հաջորդականությամբ շարունակվում են և միանում իրար հետ սեպաձև զարդերով։ Այսպիսի դեկորատիվ նախշեր ունեցող կտորները երբեմն գործածվել են նաև վերնազգեստների, պատմուճանների համար։ Նման օրնամենտներ հանդիպում են Գագիկ Բագրատունու և Լևոն Բ արքայի պատմուճանների վրա։

Ավելի ուշ շրջանի պատկանող Մատենադարանի № 307 ձեռագրի վրայի դաջված զարդանախշը նույնպես վահանաձև է, միայն տվյալ դեպքում բացակայում են դրսի շրջանակները։ Այս կտորի վրա գերիշխում է հատկապես ութ անկյունանի նախշը, իսկ սրա կենտրոնում կլոր շրջանակը՝ իր ճառագայթներով, պատկերում է արևի սիմվոլը։

Դաջվածքի տեխնիկայում բարդ զարդանախշերը արվում էին կրկնակի և ավելի կաղապարների միջոցով։ Մատենադարանի № 4813 ձեռագրի կազմի աստառը դաջված է կրկնակի կաղապարով. այդ պարզ երևում է նրանից, որ ծաղկազարդերը սպիտակ գույն ունեն։ Այդ տիպի նախշեր ստանալու համար սկզբում սպիտակ կտորի վրա դաջվում էր ֆոնը տարբեր գույնի, թողնելով զարդի մասը սպիտակ, որից հետո, երկու անդամ, տարբեր կաղապարներով կատարում էին ցանկացած նախշերը։ Նույնանման օրնամենտներով է դաջված № 233 ձեռագրի կազմի աստառը։ Այստեղ բազմանկյունի զարդի կենտրոնում դաջված է ութթևանի վարդանախշը, ինչպես այդ տեսնում ենք ո՛չ միայն հուշարձանների վրա, այլ նաև Դվինի պեղումներում հայտնաբերված ջնարակած թասերի վրա։

№ 3793 ձեռագիր ավետարանը, որը պատկանում է XI դարին, գրված է Անիում[1]. նրա կազմի աստառի նախշերի հետքերից երևում է, որ դաջված է կրկնակի կաղապարով (նկար 78)։ ՀՍՍՌ Մատենադարանի № 1283 ավետարանը գրված 1370 թվականին Բերկրիում։ Հնագույն «Մանր ոսմունք» կոչվող № 630 ձեռագիրը (գրված XIII դարում) և վերջապես № 4066 ձեռագիր ավետարանի կազմի աստառները նույնպես դաջված են կրկնակի կաղապարների միջոցով. վերջինի մեջ գերիշխում է վեցթևանի զարդանախշը։ Նույնանման զարդանախշերի հանդիպում ենք Մատենադարանի մի շարք այլ ձեռագրերի կազմերի աստառների վրա։

Դաջածո կտորների մեջ կա նաև մի խումբ, որի վրա կատարված նախշերը նման են ջեջիմաձև հյուսվածքի, այն տարբերությամբ, որ այստեղ պահպանվել են տարբեր գույնի սյուների շերտերը. սրանց վրա վարպետը մեկընդմեջ դաջել է բուսական կամ երկրաչափական օրնամենտներ, որոնց նմանը քիչ է պատահում հյուսածո կտորների վրա։ Ջեջիմաձև զարդանախշերի հանդիպում ենք մեծ մասամբ XVII դարերին պատկանող ձեռագրերի կազմերի աստառների վրա, ուր նույնպես մեկընդմեջ արված են բուսական, բայց իրարից տարբեր զարդանախշեր։

Բարդ օրնամենտներ դաջելու համար անհրաժեշտ էր ո՛չ միայն մի շարք տարբեր կաղապարների գործադրումը, այլև վարպետի հմտությունը։ Հետաքրքիր ջեջիմանման զարդանախշ է արված Մատենադարանի 1327 թ. գրված ձեռագրի կազմի աստառի վրա, որտեղ կան չորսթևանի և նռան քանդակներով զարդեր։ Նույն տիպի քանդակների մենք հանդիպում ենք Մատենադարանի №№ 20

---

1 ՀՍՍՌ Պետ. Մատենադարան։



Նկ. 78. Դաջածո կտոր Պետ. Մատենադարանի № 3793 ձեռագրի կազմի տախից

և 49 ձեռագրերի կազմերի աստառների վրա, որոնք հյուսված են մետաքսե թելից:

Ինչպես գործվածքներում, այնպես էլ դաջվածքների մեջ կիրառվել են նաև ջեջիմաձև, զուգահեռ, դիզղագավոր, խառն գույնի զարդանախշեր: Այդ տիպի նախշերը շատ տարածված էին հատկապես Բագրատունիների տիրապետությունից հետո: Դրա լավագույն օրինակը հանդիսանում է 1313 թ. գրված մի ավետարանի կազմի աստառի վրայի եղած զարդանախշը[1]:

Հետաքրքիր դաջածո կտոր է 1325 ձեռագրի կազմի աստառը, որ ժամանակակից է ձեռագրին: Աստառի վրա արված է 3 տարբեր տեսակի զարդանախշ, ուր գերիշխում են 5 և 3 թևանի ծաղկազարդերը: Նույնանման զարդեր արված են նաև Մատենադարանի № 9623 ձեռագրի կազմի աստառի վրա, որը գրվել է Տաթևում:

Դաջածո կտորների վրա աչքի ընկնող և տարածված զարդանախշերից է S տառի ձևն ունեցող զարդը, որոնք դասավորվում են և զուգահեռ և հորիզոնական դիրքում, նման զարդանախշեր արված են 1378 թվականին գրված ձեռագրի կազմի աստառի վրա: Այստեղ S տառաձևի զարդանախշը առնված է օձապտույտ գալարուն շղթայի մեջ: Հետաքրքիր դաջվածք է նաև Մատենադարանի № 2665 ձեռագիրը՝ գրված 1505 թվականին, Ակղոյունլուների ժամանակաշրջանում: Գործվածքի մոխրագույն ֆոնի վրա կրկնակի կաղապարով դաջված են սպիտակ ծաղիկներ, որոնց արանքում արված է S տառաձև նախշը: № 2078 ձեռագրի վրա S տառաձև օրնամենտը հանդես է գալիս ութթևանի նախշի հետ միասին:

1 Կեթսպարվեսոի թանգարան, № 122, ինվ. 1011/1579, Ախիկյանի արխիվից:

Վերոհիշյալ Տ տառաձև նախշը միջնադարյան Հայաստանի օրնամենտների մեջ եղել է հնագույններից և ամենից շատ տարածված նախշը, որի կիրառումը մենք տեսնում ենք նույնպես հայկական քանդակների, հյուսված կտորների, գորգերի, ասեղնագործության և կերամիկայի մեջ[1]։

Այդ փաստերը ինքըստինքյան հաստատում են, որ, իրոք, դրանք տեղական են և կիրառված Հայաստանի վարպետների ձեռքով։ Դաջված կտորների մեջ կան նաև այնպիսի զարդանախշեր, որոնք կրում են դեկորատիվ բնույթ։ Նման նախշերը մեծ մասամբ օգտագործվել են վարագույրների, ծածկոցների և երբեմն էլ իշխանական վիրնազգեստների համար. ինչպես օրինակ՝ Մատենադարանի № 2672 ձեռագրի կազմի կարմիր ֆոնի վրա շագանակագույն թելերով դաջված են խաչաձև բազմանկյունանի նախշեր, որոնք իրար հետ կապվում են շրջանաձև օրնամենտներով կամ թե՝ № 1246 ձեռագրի աստառը (պատկանում է XIV դարին), որտեղ բաց կապույտ ֆոնի վրա կազմված են խաչաձև նախշեր, իսկ կենտրոնում՝ դեմ առ դեմ երկուական աղավնի։ Նույնանման նախշ ունի նաև № 2735 ձեռագրի կազմի աստառը, որ պատկանում է XIII դարին։ Բամբակե սպիտակ կտավի վրա դաջված են կապտավուն և կարմիր գույներով խաչաձև մեծադիր նախշեր, որոնք մեծ մասամբ օգտագործվում էին եկեղեցական սպասների ու վարագույրների համար։ Հետաքրքիր տպածո զարդանախշ է Մատենադարանի № 76 ձեռագրի աստառը, որ պատկանում է XIV դարին։ Սպիտակ կերպասի վրա, դաջելու տեխնիկայով արված են խորանաձև զարդանախշեր, որոնք ներկված են բաց կապույտ գույնի։ Նույնատիպ խորանաձև դաջվածք ունի № 315 ձեռագրի կազմի ներսի աստառը։ Անհրաժեշտ է նշել, որ այդ խորանաձև նախշերը ընդօրինակված են մեր մանրանկարչության մեջ եղած նիշաձև զարդերից, ուստի տարակույս չի կարող լինել, որ դրանք հայկական են և սերտորեն կապված հայ արվեստի հետ (նկ. 79)։

Մենք ունենք նաև ձեռագրերի կազմի աստառների վրա դաջված այնպիսի զարդանախշեր, որտեղ պատկերվում են կենդանիները, որ ներկայացնում են ուժեղի ու թույլի սիմվոլը։ Որպես օրինակ կարող ենք բերել առայժմ 1549 թ. Տաթևում դրված մի ձեռագրի կազմի աստառը. կտորի սպիտակ ֆոնի վրա, սև շրջանակի մեջ դաջված են կենդանական պատկերներ (նկ. 80)։

Մեր ուսումնասիրության ընթացքում հազարից ավելի ձեռագրերի աստառների մեջ հատ ու կենտ են հանդիպել այնպիսի դաջածո կտորներ, որոնց վրա պատկերված լիներն կենդանիներ, մարդկանց դիմանկարներ կամ թե որսի տեսարաններ, ինչպես հատուկ է բյուզանդական ու սասանյան գործվածքներին։ Բայց դա դեռևս մեզ հիմք չի տալիս ասելու, որ դաջածո կտորների վրա նման օրնամենտներ քիչ են եղել, քանի որ մենք հնարավորություն չենք ունեցել լրիվ սպառելու Մատենադարանում եղած բոլոր ձեռագրերի կազմերի աստառների ուսումնասիրությունը։ XVII—XVIII դարերի պատկանող ձեռագրերի կազմերի աստառների վրա եղած օրնամենտների ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ այդ դարերում դաջածո կտորների ընդհանուր ֆոնը ավելի պայծառ ու բաց է դառնում և այդ ֆոնի վրա գերիշխում են հատկապես բուսական բազմերանգ զարդանախշերը։

Ը. ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հյուսվածքեղենի արտադրության հետ սերտորեն կապված է նաև ասեղնագործությունը, որը Հայաստանում շատ սիրված ու տարածված զբաղմունքներից մեկն էր, հատկապես կանանց համար, որովհետև ասեղնագործությունը գործվածքին տալիս էր արտաքին գեղեցկություն։ Հայ կանայք նուրբ ձեռագործներով զարդարում էին արքայա-

[1] Այդ զարդերը կան Դվինի կաթսաների ու ջնարակած անոթների վրա։

Նկ. 29. Բարձր ռելիեֆով քանդակված սյուն Հռիփսիմե եկեղեցու, Էջմիածին

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ



Նկ. 80. Դաջածո կտոր XIV դարի կենդանակերպ նկարներով։
Պետ. Մատենադարանի ձեռագրի կազմի տակից

կան, իշխանական հագուստները, պատմուճանները, կանանց վերնազգեստները, բարձի երեսները, անկողնու ծածկոցները, եկեղեցական վարագույրները, սպասի ծածկոցները, հոգևորականների շուրջառները և այլն։

Մեր պատմիչների հաղորդումներից պարզվում է, որ ասեղնագործության լավագույն նմուշները տարվել են նույնիսկ Հայաստանից դուրս թե՛ որպես նվեր, և թե՛ որպես վաճառքի նյութ։

Պատմիչների հաղորդումներից, մանրակարչությունից և հատկապես պեղումներում հայտնաբերված ձեռագործների լավագույն նմուշների միջոցով հնարավոր է լրիվ պատկերացում ունենալ միջնադարյան ձեռարվեստի նրբության մասին։ Հայ պատմիչների[1] մոտ կան մի շարք հիշատակություններ, ուր գործվածքների մասին հանդիպում ենք «ոսկեհուռ», «ոսկեճամուկ», «ոսկեթել» արտահայտություններին, որ վերաբերում են ասեղնագործությանը։

Հետաքրքիր տեղեկություն է տալիս Գանձակեցին ո՛չ միայն զգեստների, այլև եկեղեցական վարագույրների ասեղնագործության արվեստի վերաբերյալ։ Պարզվում է, որ եկեղեցու համար վարագույր պատրաստելու գործին օգնել են իշխաններ Դավիթ և Սադուն եղբայրները, իսկ ասեղնագործության համար «նաև քոյր նոցա Արզու խաթուն, կին վախթանկայ Հաթերքեցւոյ, սա բազում ինչ օժանդակ եղև. արար և վարագոյր գեղեցիկ՝ դատերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց... որ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան»[1]։ Այնուհետև պատմիչը

1 Հ. Դրասխանակերտցի, էջ 210, Ուխտանես, էջ 66, Կաղանկատուացի, էջ 15, Սա. Օրբելյան, էջ 33։

1 Կ. Գանձակեցի, էջ 203։

հիշում է, որ նույնպիսի վարագույրներ գործել են Հաղպատա, Մակարա ու Դադի վանքերի համար:

Բացի հայ պատմիչներից, եվրոպացի ճանապարհորդները նույնպես հիշատակում են ասեղնագործության վերաբերյալ որոշ փաստեր: Եվրոպացի ճանապարհորդ Ռուբրուքուսը հետևյալ ձևով է նկարագրում հայ վանականի սենյակը. «Ներս մտա սենյակ [վանականի] և գտա մի խորան գեղեցկորեն զարդարված, այնտեղ կար ոսկե մի կերպաս վրան ասեղնագործած փրկչի, կույսի, Հովհաննես Մկրտչի և երկու հրեշտակների պատկերները և մարմնի գծերը, և հագուստները ընդելուզված էին մարգարիտներով: Այնտեղ նստել էր մի վանական թուխ և նրբամարմին. նա հագել էր ամենակոպիտ մազե կտորից մի վերարկու, որի վրա կրում էր սև մետաքսե մի ուրար»[1]:

Ռուբրուքուսի հիշատակած ասեղնագործ կերպասե կտորները նվիրված են եղել եկեղեցիներին և ծառայել են սպասներ ու մասունքներ ծածկելու համար: Միջնադարյան Հայաստանի կրոնասեր կանայք իրենց ձեռքի նուրբ ասեղնագործությամբ, ինչպես տեսնում ենք, զարդարել են ո՛չ միայն կանանց և տղամարդկանց պատմուճանները, զգեստները, բարձերն ու ծածկոցները, այլև եկեղեցիների, վանքերի խորանների, սեղանների և մասունքների ծածկոցները:

Մենք գրավոր փաստերից գիտենք, որ եկեղեցիների համար, առանց խտրության՝ թե՛ ազնվական և թե՛ ցածր դասի կանայք, իրենց «հոգու փրկության» կամ իղձերի կատարման համար նուրբ կտորների վրա ասեղնագործել են կրոնական պատկերներ, զարդարել են այն բուսական նախշերով ու նվիրել վանքերին[2]:

Ասեղնագործության արվեստը իր արտահայտությունն է գտել նաև միջնադարյան գուսանական երգերում:

Մի կենար դու խամ լաթերով,
Գնա արևշում հագիր,
Որ նախշած է ոսկե թելերով,

կամ թե՝

Զգեմ խուշ թիւիւ տօշակ,
Բուլբանտէն շարշաֆն ի վերան,
Շարեմ շարաշար բարձեր,
Սրմայ պորտ եօրղանն ի վրայ,
Զարդարեմ ոսկի սեղնակ[1]...

Մեր պատմիչների ասույթները հիմնավորելու համար հարկ ենք համարում այստեղ հիշատակել Անիի և Դվինի պեղումներում հայտնաբերված ասեղնագործության մի քանի նմուշները: Անիում 1907 թ. պեղումների ժամանակ գտնված մետաքսե կտորների հետ իշխանական դամբարանից գտնվել են կրծքի զարդանախշեր և ասեղնագործած գլխի շղարշե ծածկոցներ:

Անիի իշխանական դամբարանից գտնված երեխայի հագուստներից մեկի թևերն ու կրծքի մասը ասեղնագործված են: Այդ հագուստի թևի վրա բանված է ոսկե թելերով հարթ ձեռագործ՝ երկու կողքից կայմանիրով, որոնց մեջ կան երկու զույգ իրար միահյուսված և բեկվող գծերով զարդանախշեր: Այդպիսի զարդանախշերի հանդիպում ենք Անիի՝ X—XIII դարերին պատկանող հուշարձանների վրա: Հետաքրքիր ասեղնագործություն է նույն. դամբարանից գտնված սև դույնի շղարշը, որ ծածկված է եղել երեխայի դեմքին: Այդ շղարշից պահպանված մի կտորի վրա շատ նուրբ ձևով ասեղնագործված է կենդանիների պատկեր, որոնցից մեկը վագր է, իսկ մյուսը՝ ավելի փոքր չափսի՝ առյուծ. սրանք վագրի վիճակում իրր շարժվում են իրար դեմ: Վագրի պոչը վերջանում է հատուկ բանտիկաձև նախշով, որ շատ տարածված էր սասանյան շրջանում. հետաքրքրական է, որ վագրի մեջքին բարձրանում է կենաց ծառը՝ հյուսված ոսկե թելերով, իսկ ոտքերի արանքին հյուսված է աստղա-

[1] Ուղեգրություններ, I հատ., էջ 34:

[2] Նուրբ ասեղնագործության նմուշներով հարուստ է Էջմիածնի թանգարանը:

[1] Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 224:

ձև բուսական զարդ, որը հավանաբար ծառայել է որպես հենարան: Այս աշխատանքը շատ նուրբ գործ է. կենդանիների սահմանադիծը հյուսված է ոսկե թելերով, իսկ լիցքը կատարված է մետաքսե թելերով, կենդանիների դունչը պատրաստված է մետաքսե նուրբ կտորից, որ ձեռագործին տալիս է հատուկ նուրբ շքեղություն ու նրբություն (նկ. 81):

Ըստ Ն. Մառի

Նկ. 81. Մետաքսե կտորի վրա ասեղնագործած առյուծի և վագրի պատկերներ, Անիի պեղումներից, X—XIII դդ.

Նույն դամբարանից գտնվել է մետաքսե մի ուրիշ կտոր, որ դրված է եղել երեխայի գլխի տակ, կտորի վրան ասեղնագործված է թռչունների նկար[1]: Նուրբ ասեղնագործած աշխատանք է Անիի իշխանական դամբարանից գտնված վեցթևանի զարդանախշը[2] հյուսված ոսկեթել և մուգ գույնի մետաքսե թելերից. հավանաբար օգտագործվել է հագուստի թևերի, կրծքի և գոտիների համար. այս զարդանախշը շատ տարածված էր միջնադարյան Հայաստանի ճարտարապետության, ոսկերչության և կերամիկայի մեջ: Իշխանական դամբարանից գտնվել է նաև նուրբ մետաքսե կտորի վրա բանված ծառանկար: Նախշի տերևները գործված են շղթայանման, իսկ ներսից արված է լիցքային աշխատանք ոսկե թելերով. նույն դամբարանից գտնվել է մի ուրիշ կտոր[3] վրան մուգ մանիշակագույն թելերով նախշված S տառանման զարդով, որը հատկապես շատ է հանդիպում գործվածքների և գորգերի վրա:

Ասեղնագործական նուրբ աշխատանք է մետաքսե թելերով հյուսված կրծքի բազմանկյունի զարդանախշը[1], որ գտնվել է 1906 թ. Անիի միջնաբերդի ստորոտում կատարված պեղումների ժամանակ:

Մի այլ ասեղնագործական աշխատանք է ծաղկե երկար շղթան, որ վերջանում է ճամկավոր տափակ փնջով[2]: Այս շղթայի վրա օգտագործել են ո՛չ միայն ոսկե սրմաթել, այլև մուգ շագանակագույն ու կարմիր մետաքսե թելեր: Նույնանման սրմաթելերի մնացորդներ ու բարակ, կարմիր կերպասի վրա ոսկե թելերով հյուսված ժապավենի մի կտոր գտնվել է Դվինի միջնաբերդի պեղումների ժամանակ[3] (նկ. 82):

Ասեղնագործական արվեստի լավագույն նմուշ է համարվում Գագիկ Բագրատունու, Գագիկ Արծրունու և Լևոն Բ. Թագավորի քանդակների վրա եղած ասեղնագործ զարդանախշերը, որոնց մեջ գերիշխում է շրջանաձև զարդը՝ կենտրոնում առյուծի կամ թռչունի նկարներով:

Ասեղնագործության լավագույն նմուշներ պահպանված են XVII—XVIII դարերին պատկանող ձեռագրերի, վարագույրների վրա, որ գտնվում են Պետ. պատմական թանգարանի աղգագրական բաժնում և Էջմիածնի թանգարանում:

1651 թվականին է պատրաստված եկեղեցական փոքրիկ մի վարագույր[4], որ կարմիր մետաքսի վրա, ոսկե ու արծաթե, սրմա թելերի հյուսվածքով պատկերում է սուրբ Սարգսին, ձին հեծած և նիզակով վիշապին հարվածելիս: Հետաքրքիր աշխատանք է 1753 թ. ասեղնագործած վարագույրը[5], որի վրա սրմաթելերով նախշված է Հռիփսիմե կույսի և իր ընկերների դիմանկարները: Ա-

1 И. А Орбели, Каталог Анийского музея древностей, СПБ, 1910. էջ 38.

2 Պետ. պատմական թանգարան, Հնագիտական բաժին, № 1127, Անիի յուրցակ:

3 Նույն տեղում:

1 Պետ. պատմական թանգարան, № 1138:

2 Նույն տեղում, 1139:

3 Դվինի 1950 թ. պեղումներից, № 1907/186:

4 Պետ. պատմական թանգարանի աղգագրական բաժին, № 3427:

5 Նույն տեղում, № 3421:

սեղնագործած նուրբ աշխատանքներ են Պետ. պատմական թանգարանի ազգագրական բաժնում պահպանվող №№ 1719, 1728, 1729, 3092/39, 3002, 821, 3423, 3378 ասեղնագործված վարագույրներ, փիլոններ, մասունքի ծածկոցները (նկ. 83)։

Այս բաժնում հիշատակված փաստերը մեզ բերում են հետևյալ եզրակացության.

1. Միջնադարյան Հայաստանում արտադրվող կտորները բավարարել են ոչ միայն դյուղացիության, այլև քաղաքի ազգաբնակչության պահանջները. արտադրողները եղել են թե՛ գյուղի շինականը և թե՛ քաղաքում աշխատող պրոֆեսիոնալ արհեստավորները, որոնք բացի պատվերներից, մեծ քանակությամբ (հատկապես X դարից հետո) գործվածքներ են արտադրել, մի կողմից, ներքին շուկայի աճող պահանջը բավարարելու, մյուս կողմից՝ թանկարժեք ասեղնագործված կտորների ու գորգերի որոշ մասը արտահանել են կայսրությանը և խալիֆայությանը ենթակա երկրները վաճառքի և նույնիսկ հարկի դիմաց։

2. Նյութական մնացորդների և Մատենադարանի ձեռագրերի կազմերի ներսի կողմից փակցված բազմատեսակ կտորների ուսում-

123/1139
Անի



123/1126
Անի

123/1127
Անի

Նկ. 82. Ասեղնագործության նմուշներ Անիի պեղումներից, X—XIII դդ. Պետական պատմական թանգարան

Նկ. 83. Վարագույրի և ծածկոցի դժուշներ, ասեղնագործված, XVII—XVIII դդ.

նասիրությունից պարզվեց, որ միջնադարյան Հայաստանում ջուլհակ արհեստավորները կտորներին արտաքին գեղեցկություն տալու համար, նրանց վրա կատարել են զարդանախշեր երկու տարբեր եղանակով՝ գործելու պրոցեսում և դաջելու միջոցով. վերջին եղանակի կիրառումը հետևանք էր քաղաքների և շուկայական հարաբերությունների զարգացման:

3. Գործվածքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գործելու պրոցեսում բարդ զարդանախշերի կատարումը կապված էր մեծ դժվարությունների հետ. հակառակ դրան, դաջելու եղանակով զարդանախշերի կիրառումը հնարավորություն էր տալիս արհեստավորին ձեռնամուխ լինել ո՛չ միայն պարզ բուսական, երկրաչափական օրնամենտների, այլև բարդ զարդանախշերի, անդամ կենդանիների ու մարդկանց դիմանկարների, որոնց կիրառումը, սակայն, հայկական գործվածքների վրա համեմատաբար հազվադեպ է:

4. Միջնադարյան Հայաստանի գործվածքները և դաջածո կտորները, ըստ իրենց դրծածության ու զարդանախշերի, բաժանվում են մի քանի խմբի: Այն խումբը, որ օգտագործվում էր հատկապես վերնազգեստների համար, կրում էր ավելի մանր և մեկը մյուսի հետ առանց ընդհատումների հյուսված զարդանախշեր, որոնք գործվում կամ դաջվում էին և, պետք է ասել, որ յուրահատուկ էին հատկապես հայկական հյուսվածքներին: Կտորների մի ուրիշ խումբ, որ ծառայում էր դեկորատիվ նպատակների (վարագույրներ, սեղանի, բարձի և պատի զարդարանքներ), կրում էր ավելի խոշոր և իրարից անջատ զարդանախշեր:

5. Հայկական գործվածքների և դաջածո կտորների վրա կիրառվել են մեծ մասամբ բուսական և երկրաչափական օրնամենտներ: Այդ բուսական նախշերից գերիշխողը և ամենից շատ տարածվածը խաչաձև աստղաձևն է, ուղիղ կամ իննթևանի վարդյակին նման, վեց, ութ կամ իննթևանի վարդյակն էր. խիստ տարածված են նաև S տառաձև և ոլիգոգաձև զարդերը, խաղողի ողկույզն ու նռան հատիկներով զարդանախշերը: Վերջինների մասսայական կիրառումը կապված է, մի կողմից, Հայաստանի հարուստ բուսականության, իսկ մյուս կողմից՝ բնակչության կարևորագույն զբաղմունքներից մեկի՝ այգեգործության հետ:

6. Հայաստանի ջուլհակ վարպետները իրենց աշխատանքի մեջ մեծ մասամբ օգտագործել են այնպիսի զարդանախշեր, որոնց մենք հանդիպում ենք հայկական մանրանկարչության, ճարտարապետության և կավագործության արվեստում:

7. Միագույն կտավների վրա դաջելու եղանակով զարդանախշեր կատարելու արվեստը Հայաստանում կիրառվել է ո՛չ միայն X դարից հետո, այլև նրանից առաջ, որը հաստատվում է IX—X դարերի հայ պատմիչների հիշատակություններով, սակայն ավելի մասսայական բնույթ է կրում X դարից հետո, հատկապես XVII—XVIII դարերում, որ անշուշտ կապվում է՝ քաղաքային կյանքի, առևտրական հարաբերությունների զարգացման և ազգաբնակչության գնողունակության ու պահանջի աճման հետ: Այդ էր պատճառը, որ արհեստավորը՝ հարմարվելով ներքին շուկայի պահանջին՝ ամեն կերպ աշխատում էր կիրառել նոր մեթոդը, որպեսզի կարճ ժամանակամիջոցում ավելի շատ, գեղեցիկ ու էժան արտադրի: Դրա համար էլ գծագիրն ու արտֆարետը փոխարինվում են դաջելու բազմատեսակ փայտյա կաղապարներով:

8. Դաջածո նախշերը մեծ մասամբ կատարվում էին բամբակե ու վուշե միագույն գործվածքների վրա, նախ՝ որովհետև էժան և ձեռնհաս էին բնակչության լայն մասսաների սպառման համար և, երկրորդ, ավելի հեշտ էր կտավի ու քաթանի վրա դաջելը, քան մետաքսի: Վերջինս վրա, որի գնողները լինում էին ավելի ունևոր խավի ներկայացուցիչները, գլխավորապես կատարվում էին դեկորատիվ նախշեր:

9. Հնագույն շրջանից մինչև XIII դարը դաջածո կտորները (մինչև XI դարի ձեռա-

դրերի մեծ մասի ոչնչացման հետևանքով ի վիճակի չենք եղել ուսումնասիրել X դարի և նրանից առաջ եղած ձեռագրերի կազմի ներսի աստառների օրնամենտները, որոնց մեջ թերևս լինեին այնպիսիները, որոնք չեն կրկնվել հետագա դարերում) մեծ մասամբ ունեն կարմիր ֆոն, իսկ զարդանախշերի մեջ գերիշխում են ալիքաձև կոտրված ճյուղազարդերը, վահանաձև խառն զարդերը, ուղակցված ոչ ամբողջական բուսական հինդ, վեց և ութթևանի ծաղկաթերթիկների հետ. նման օրինակների հանդիպում ենք միջնադարյան նյութական մնացորդների վրա (կերամիկայի, քարի, ոսկու, պղնձի և դիպսի)։ Ավելի ուշ շրջանում դաջածո կտորների վրա գերիշխել են շրջանաձև, բազմանկյունի, շախմատաձև շարժվածքով զարդերը, բուսական ծաղկաթերթիկները, որոնք հանդես են գալիս ավելի մեծ չափերով, ծաղիկն իր վարսանդով և այլն։ Այս դեպքում նրանց չի ղուգակցում փոքր մասշտաբի ծաղկազարդը։ Այդպիսի զարդանախշեր հանդիպում են մեծ մասամբ XIII—XVII դարերին պատկանող խաչքարերի ու փայտյա դռների քանդակների մեջ։

Հետագայում, հատկապես XV—XVII դարերում, ինչպես դրականության և արվեստի բնագավառում ուժեղանում է սիրո, բնության մոտիվների կիրառումը, այնպես էլ գործվածքների զարդանախշերի մեջ երևան են գալիս նոր մոտիվներ։ XV—XVII դարերին պատկանող ձեռագրերի կազմերի մեր ուսումնասիրությունը պարզում է, որ այդ դարերին պատկանող դաջածո կտորների ընդհանուր ֆոնը ավելի բաց է և այդ ֆոնի վրա գերիշխում է հատկապես բուսական բազմերանգ զարդանախշը. ծաղիկը հանդես է գալիս արդեն իր ամբողջությամբ՝ տերևով ու արմատով։ XVII—XVIII դարերում դաջածո կտորների վրա գերիշխում է ջեջիմաձև զարդանախշը, դույները և օրնամենտները դառնում են բազմազան, կիրառվում են հնագույն զարդանախշերի հետ նաև նորերը, որոնք դասավորվում են հարակից ղուդահեռների մեջ։

10. Հայաստանում արտադրվող կտորների վրայի զարդանախշերի մեծ մասը տեղական են. չնայած դրան, դաջելու արվեստում որոշ չափով օգտագործվել են նաև բյուզանդական, սասանյան, պարսկական առանձին զարդանախշեր, սակայն Հայաստանի ոստայնագործ վարպետներին հաջողվել է օրնամենտների առանձին միացումներով ստեղծել նոր զարդանախշեր՝ հայկական ոճին համապատասխան։

Մեր ուսումնասիրության ընթացքում մենք հանդիպել ենք թռչունների, եղնիկների, առյուծների և մարդկանց դիմանկարների զարդանախշերի, որոնք թվով քիչ են։ Նույն օրնամենտները կան նաև մեր մանրանկարչության, հուշարձանների, Դվինի ու Անիի կերամիկայի զարդանախշերի մեջ։ Պետք է միաժամանակ նշել, որ դրանք չեն եղել գերիշխող ձևը հայկական օրնամենտացիայի մեջ։

11. Մեր պատմիչների հիշատակությունները, մի կողմից, ոսկեթել նուրբ ասեղնագործության մասին, մյուս կողմից՝ պեղումներից, հատկապես Անիից, գտնված նուրբ ձեռագործների նմուշները և Հայաստանի Պատմ. թանգարանի ազգագրական բաժնում կենտրոնացած XVII—XVIII դարերին պատկանող վարագույրների, սփռոցների, եկեղեցուն նվիրած մասունքների վրայի նուրբ, ոսկեթել զարդանախշերը ապացուցում են, որ միջնադարյան Հայաստանում կտորների արտադրության հետ միատեղ զարգացած է եղել նաև ասեղնագործության արվեստը, որ ամենասիրված ու հարգված աշխատանքն է համարվել միջնադարյան Հայաստանում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՅԼ ԱՐՀԵՍՏՆԵՐ

Ա. ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Արհեստագործական արտադրության հնագույն ճյուղը Հայաստանում եղել է կավագործությունը։ Այս արհեստը գոյություն է ունեցել դեռևս տոհմատիրական հասարակարգում։

Կավագործությամբ, նրա նախնական աստիճանում զբաղվել է կինը, որը՝ աշխատելով տնտեսության մեջ՝ միաժամանակ պատրաստել է իրեն անմիջական կարիքների համար նաև կավե անոթներ։ Սակայն հետագայում, դրգի (բրուտի շարխը) հանդես գալուց հետո, այդ արհեստն անջատվում է տնտեսությունից և մասնագիտացվում է։ Այդ արհեստով արդեն զբաղվում են տղամարդիկ՝ տնտեսությունից դուրս, հատուկ արհեստանոցում։

Առօրյա գործածության համար ամանեղենը սովորաբար պատրաստում էին կավից. պղնձե անոթների գործածությունը տարածված չէր նույնիսկ ուրարտական շրջանում։ Անթիվ ամանների հնագույն նմուշներ գտնված են Սովետական Հայաստանի տարբեր շրջաններից, գլխավորապես Սևանի, Ն. Բայազետի, Մարտունու, Կիրովականի, Աղվերդու, Էջմիածնի և այլ վայրերի դամբարաններից։ Հայտնաբերվել են զանազան մեծության ու տարբեր նպատակների ծառայող անոթներ, որոնց մեջ գերակշռում են դրգի միջոցով պատրաստածները։

Հիշյալ ամանները միմյանցից տարբերվում են ո՛չ միայն իրենց ձևով ու մեծությամբ, այլև զարդաքանդակներով։ Նրանց ամենապարզ ստորակետաձև գծերը, ոլորապտույտ նախշերը, եռանկյունաձև դուրս ցցված և այլ օրնամենտները, անշուշտ, կատարվել են ձեռքով՝ նուրբ գործիքի օգնությամբ։

Պաշտամունքային նշանակություն ունեցող կավեղեն իրերը և անուշահոտ յուղերի համար գործածված հիանալի ամանները հաճախ արտաքուստ զարդարված են ծակոտիներով, որոնց մեջ լցված է երբեմն տարբեր գույնի կավ՝ ամանին գեղեցկություն տալու համար։

Բացի ամաններից, հնում կավից պատրաստում էին նաև զարդարանքներ. հիշատակության արժանի են գունավոր, իսկ մեծ

մասամբ սպիտակ կավից պատրաստված կնիքներն ու ուլունքները։

Չնայած, որ IX դարից հետո պղնձագործությունը հասել էր զարգացման իր բարձր աստիճանին, սակայն կավագործությունը դեռևս շարունակում էր պահպանել իր արժանի տեղը, քանի որ գործածության անոթների մեծ մասը պատրաստվում էր կավից՝ սկսած աղամանից, վերջացրած դինու մեծ կարասներով։

Հայաստանի բրուտները կիրառում էին տարբեր տեսակի կավ՝ կարմրավուն, դեղին, մուգ մոխրագույն և սպիտակ կավ՝ հախճապակի ամանեղենի արտադրության համար։ Այս կավերը տարրերվում էին նաև իրենց որակով։ Դվինի կավը ավելի բաց կարմիր և խիտ էր, թրծելիս դառնում էր ավելի կարծր ու դիմացկուն, քան Անիի բրուտների գործածած կավը, որ ավելի մուգ կարմիր էր և ավելի կարծր։ Կավը ալբիմիական որոշ ձեռագրերում կոչված է «հող բրուտց». հիշատակվում է «կարմիր կամ սպիտակ հող բրուտց»[1]. բայ դույնի լավորակ կավը Արարատյան դաշտի բնակիչներն այժմ էլ անվանում են կավճին։ Ինչպես գիտենք, կավագործությունը, որ լայնորեն տարածված էր գյուղերում, կրում էր ավելի պրիմիտիվ բնույթ, որովհետև շատ հաճախ, հայ շինականն, իր առօրյա պահանջները բավարարելու համար, կավե անոթները պատրաստում էր նույնիսկ ձեռքով, սակայն քաղաքներում և շատ գյուղերում կային հատուկ պրոֆեսիոնալ մարդիկ՝ բրուտներ, որոնք պատրաստում էին ո՛չ միայն հասարակ, այլև ջնարակած ու հախճապակյա նուրբ անոթներ բազմերանգ զարդանախշերով։

Թե՛ հնագույն շրջանի դամբարաններից ձեռք բերված և թե՛ միջնադարյան կենտրոններ՝ Դվինի, Անիի ու Ամբերդի պեղումներից ստացված հնագիտական նյութերի մեջ իրենց քանակով մի քանի տասնյակ անգամ գերիշխում են կավե անոթների հասարակ տեսակները[1]։

Դարերի պատմությունը մեզ ցույց է տվել, որ և՛ հնագույն շրջանում, և՛ միջնադարում բրուտը աշխատել է դրդի (ճախարակի) վրա։ Դրդի հնագույն նմուշը դտնվել է 1949 թ. Դվինի կաթողիկեի հյուսիս-արևմտյան կողմում բացված արհեստանոցում. նույնատիպ դուրգեր որոշ շրջաններում գործածվում են մինչև մեր օրերը։

Դվինից գտնված դուրգը ունի սկավառակի ձև, 23 սմ տրամագծով, իսկ սկավառակի տակը կա գլանաձև մի մաս՝ 12 սմ երկարությամբ, որ ծառայել է որպես առանցքակալ, դուրգը հորի մեջ գտնվող ծանր թափանիվին միացնելու համար[2]։

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել բրուտի աշխատանքային պրոցեսի վերաբերյալ։

Բրուտը՝ նստելով դրդի առաջ՝ մեկ կոոր կավ դնում է վերևի կլոր ու հարթ անիվի վրա և մի ոտքով պտտում ներքևի մեծ անիվը։ Պտտելու ժամանակ բրուտը վերևի փոքր անիվի վրա դրած կավին երկու ձեռքով ցանկացած ձևն է տալիս և շինում իր ուզած ամաններդ։ Նա մի ձեռքով ներսից, իսկ մյուս ձեռքով դրսից՝ կավը հավասարաչափ սղմում է, որի հետևանքով ներսի կողմից հետզհետե սկսում է դատարկվել, իսկ դրսից ստանում է

---

1 Կ. Ղաֆադարյան, Ալբիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1946, էջ 63։

1 Դվինի կերամիկայի բազմակողմանի ուսումնասիրությունը կատարել է պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆադարյանը իր «Դվին քաղաքը և նրա պեղումները» արժեքավոր աշխատության մեջ, որտեղ հեղինակը տվել է կավագործության դասակարգումը. իսկ Բ. Շելկովնիկովը 1940 և 1952 թթ. Ակադեմիայի «Տեղեկագրում» լույս ընծայած հոդվածների մեջ տվել է Դվինի կերամիկայի արտադրությունն ու որոշել նրանց ժամանակը։ Նկատի ունենալով վերոհիշյալը, մենք այդ արհեստի մասին խոսում ենք ընդհանուր գծերով։

2 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 235։

ուռուցիկ ձև. երբ արդեն անիվի վրա ամանը պատրաստ է լինում, բրուտը երկաթի բարակ լարով նրա տակը պոկում է անիվից և տեղափոխում ուրիշ սեղանի վրա։

Պատրաստի ամանները թրծելու համար կան հատուկ հնոցներ։ Հնոցների մի տիպը կառուցվում էր երկհարկանի, առաջին հարկի տանիքը ծածկված էր լինում ցանցաձև երկաթներով, իսկ երկրորդ հարկի հատակին շարվում էր թրծվելիքը։ Ամանների դասավորումը կատարվում էր վերևից։ Թրծելու ժամանակ, սկզբում կրակը լինում է շատ թույլ, որը հետո հետզհետե ուժեղանում է. թրծելուց հետո ամանները երկու օր թողնում են հնոցում սառելու համար։

Բրուտի հնոցի մի ուրիշ տեսակը բացվել է 1950 թ. Դվինի միջնաբերդում մոտ 6 մետր խորության վրա. այդ հնոցից պահպանվել են միմիայն 12 շարք աղյուսաշար պատեր[1]։ Այդպիսի հնոցներ, որոնք գտնվել են միջնաբերդում, ծառայել են տեղում աշխատավոր արհեստավորներին, որոնք բավարարել են վերնախավի պահանջները։ Այս հնոցը մեզ տալիս է որոշ պատկերացում միջնադարյան հնոցների տարածված տիպի մասին Հայաստանում։

Հին շրջանում պատահում էր, որ անոթները ներկում էին ծխով, որից հետո փայլ էին տալիս. այդպիսի անոթները շատ ուշ են ներկաթափվում։

Բրուտի թրծելու աշխատանքի հետ են կապված Դվինում և Անիում գտնված կավե եռոտանիները, որ օգտագործվել են ամաններ թրծելու ժամանակ, որպեսզի մեկ ամանը մյուսի վրա դասավորելիս իրար չկպչեն։ Բացի նյութական մնացորդներից, բրուտի մասին կա հիշատակություն Ն. Շնորհալու մոտ.

«Բրուտ մի կայր խիստ պիտանի,
Ջկուժըն ղուգեաց թուխստ ու նուկի,
Խառնեաց ի նա դեղն հիւանտի,
Խըճերն ու մեղր ի մէկ տեղի»[1]։

Այս քառյակով Ն. Շնորհալին նշում է բրուտի խիստ պիտանիությունը հասարակության համար։ Բրուտի ճախարակի մասին կա հիշատակություն Մատենադարանի № 7085 ձեռագրում, որտեղ դրված է.

«Եւ զհամատարած լարն վիճակի,
որով շարժէ զճախարակ բրտի»։

Բրուտի գործիքների մասին հիշատակում է նաև Վարդան Այգեկցին իր առակներից մեկում. «Ով նզովեալ բրտի շուն, ասա ինձ թէ՝ քեզ ի՞նչ կու տանիմ զդո՞ւրքն թէ քերո՞ցն և թէ զքթե՞րն որ կոյ կոկեն զպուտուկն»[2]։ Բրուտի հանդիպում ենք Գոշի առակներում[3]։

Բրուտի արհեստի զարգացած և տարածված լինելը հաստատվում է նյութական բազմաթիվ մնացորդներով, ուստի հարկ չկա դիմելու պատմիչների աղքատ տվյալներին։

Անհրաժեշտ ենք գտնում նշելու, որ Անիի և Դվինի պեղումներից միջնադարին պատկանող բազմաթիվ և բազմատեսակ կերամիկայի կողքին ունենք հնագույն շրջանի, նեոլիթյան տիպի կերամիկա ևս, որ հայտնի է իր սև փայլով ու իր ձևով։ Դվինում հայտնաբերվել են նաև դունաղարդ խեցեղենի մնացորդներ, իսկ Դվինի կաթողիկե եկեղեցու մոտ գտնվել է նաև ուրարտական շրջանի կերամիկա։

Վերոհիշյալ փաստերը հաստատում են, որ Դվինը և Անին քաղաք դառնալուց առաջ եղել են հնագույն բնակավայրեր։

Կ. Ղաֆադարյանը իր «Դվին քաղաքը և նրա պեղումները» աշխատության մեջ բրուտի ձեռքով արտադրված կերամիկան իրավացիորեն բաժանում է 5 խմբի։

Կերամիկայի նրբության տեսակետից պետք է նշել, որ Դվինում արտադրված ա-

---

1 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 237։

1 Ն. Շնորհալի, Բանք չափու, 383։
2 Վ. Այգեկցի, Առակներ, էջ 108։
3 Մ. Գոշ, Առակք, էջ 24։

նոթներն իրենց փափկությամբ տարբերվում են Անիի անոթներից, որովհետև վերջին դեպքում կավե հողը կոշտ է և ավելի մուգ գույնի. այդ է պատճառը, որ Դվինի կյանքում կերամիկան ավելի մեծ դեր է խաղացել. մյուս կողմից՝ քարի բացակայությունը ստիպել է ավելի խորացնել կավամշակման արհեստը. անգամ բնակարանային շինարարության համար պատրաստել են մեծ քանակությամբ տարբեր տեսակի կղմինդրներ ու ձևավոր շքաղյուսաներ:

Անիի և Դվինի պեղումներից գտնվել են բազմաթիվ հասարակ կավե կճուճներ, սափորներ և քրեղաններ, որոնց վրա դրդի ճախարակով արված են միայն դոտիներ կամ գծանախշեր:

Այդ հասարակ կավե ամանների մեջ աչքի են ընկնում կարասները, որոնց մեջ պահել են հացահատիկներ և գինի:

Կարասներ գտնվել են նաև Զվարթնոցում, իսկ ավելի վաղ՝ ուրարտական շրջանից. Կարմիր բլուրի պեղումների ընթացքում բացվել է պալատի մառանը, որի երկու կողմերից կիսաթաղ վիճակում կան 81 մեծ կարասներ:

Դվինում և Անիում արտադրվել են նաև շատ նուրբ, միագույն կարմիր կավից անոթներ, սափորներ, որոնց վրա արված են զարդանախշեր (նկ. 84):

Պեղումների բացակայության պատճառով հնարավորություն չունենք խոսելու Հայաստանի մյուս քաղաքների՝ Կարսի, Աբծնի, Խլաթի, Կարինի, Վանի և այլոց մասին, որտեղ նույնպես զարգացած է եղել կավագործությունը:

Գոտեզարդ կարասներ— Կավե հասարակ անոթները զարդարում էին տարբեր եղանակով կամ ներկում էին և փայլեցնում հղկելու միջոցով և կամ նրանց վրա, հատկապես կարասների վրա, ճնշման տեխնիկայով դրոշմում էին տարբեր տեսակի պատկերներ:

Անիից, Դվինից, Ամբերդից և Գառնիից հայտնաբերվել են մեծ քանակությամբ գոտեզարդ, կարմրավուն փայլեցրած կարասներ ու նրանց բեկորները: Այդ կարասները լինում են 2 տիպի՝ անկանթ և կանթով. վերջիններս ավելի փոքր են և ունեն ուռուցիկ փոր: Այդ մեծ ու փոքր կարասների դոտիների վրա դաջված են դանազան կենդանական, մարդկային ու բուսական պատկերներ. դրանց մեջ աչքի են ընկնում այծերի քանդակները, երկրաչափական ու վեցթևանի վարդաձև օրնամենտները:

Այդ երկու քաղաքներում (Անի, Դվին) գտնված կարասների համեմատությունը ցույց է տալիս, որ նրանց վրա գործադրվել է միևնույն տեխնիկան, միայն թե Դվինում գտնված կարասի կավն ավելի փայլուն է: Այդ կարասների բեկորների վրա կան պահպանված նաև հայկական տառեր: Անիից գտնված մի կարասի գոտու վրա կարդում ենք «Գրիգոր» անունը, որը գուցե կարասը պատրաստող վարպետի անունը լինի: Կարասների գոտիների վրա մարդկային պատկեր շատ քիչ կա. միայն մի քանի օրինակ գտնված է Անիից, իսկ մեկ բեկորի կտոր Դվինից, որի վրա այծի հետ միասին պատկերված են երեք մարդ՝ պարելիս: Վերոհիշյալ պատկերները գոտեզարդ կարասների վրա արված են պլանաձև կնիքներով, դեռևս կարասի թաց վիճակում՝ թրծելուց առաջ: Անիից գտնվել են նաև այնպիսի կարասների բեկորներ, որոնց վրա պատկերված է ուռուցիկ կենդանակերպ նկար: Ունենք նաև կարասի մի բեկոր, որի վրա կա վերադիր, խաղողի ողկույզ, որով հաստատվում է, թե դա եղել է գինու կարաս, իսկ խաղողի օրնամենտի գոյությունը ցույց է տալիս այդ կարասի հին լինելը. ուռուցիկ զարդերով կարասի դոտիները պատկանում են XII—XIII դարերին: Դրոշմելու տեխնիկան օգտագործվել է նաև թոնիրի և կարասի խուփերի վրա. դրոշմել են մեծ մասամբ բուսական և երկրաչափական օրնամենտներ:

Անիում, Դվինում գտնված դրոշմազարդ խեցանոթների մեջ կարևոր տեղ են բռնում և սովորական ամաններից տարբերվում են խիստ նեղ շուրթերով ձվաձև սնդիկամանները,

Նկ. 84. Ներքագուշն կարմրաներկ սափորիկ, Դվինի պեղումներից, XI—XII դդ.



Նկ. 85. կարասի զարդանախշ գոտիների նմուշներ Անիի և Դվինի պեղումներից. Պետական պատմական թանգարան

որոնց մեջ պահվել է օծանելիք՝ անուշահոտ յուղեր և անդիկ: Անդիկը օգտագործել են մաղերը ներկելու (հինա դնելու) համար:

Անդկամանների գործածությունն ավելի շատ հանդիպում է XI—XIII դարերում, երբ այն տարածված էր Հայաստանից մինչև Միջին Ասիա:

Այդ անդկամաններն իրենց վրա ունեն դրոշմազարդեր և նույնիսկ ուռուցիկ վերադիր նախշեր, որոնց վրա կա նաև ինկրուստացիա՝ դունավոր քարերից և հախճապակուց:

Անդկամաններ մեծ քանակությամբ գտնվել են հատկապես Անիում և Դվինում, իսկ ավելի քիչ նմուշներ հայտնաբերվել են Զվարթնոցից և Ամբերդից, սակայն Անիի անդկամանները ավելի մեծ են և զարդարուն, համեմատած Դվինի հետ: Նույնատիպ անդկամաններ կան նաև Միջին Ասիայում և Փոքր Ասիայում[1]: Իսկ մենք գիտենք, որ Անին առևտրական հարաբերության մեջ էր Միջին Ասիայի հետ և Հայաստանի արհեստավորների որոշ մասը արտագաղթել էր Սարա՝ իր հետ տանելով Հայաստանում սովորած արհեստն ու տեխնիկան, որ հարմանկան և Անիի զաղթականությունների խառն է: Մասնավորապես Թամզարա գյուղաքաղաքի բնակչությունը գուտ Անիի զաղթականություն էր: «...Թամզարացիները վերին աստիճանի ժրաջան և առանց բացառության արհեստավոր ժողովուրդ էին, գլխավոր արհեստն էր ոսկերչանկությունը: Կային շատ վարպետ բրուտներ, որոնք քաղաքի մեջ գտնված հույն բրուտներին զերազանց առավելությամբ խեցեղեն անոթներ կշինեին: ...երբ Անիի մեջ սրնդիկի ամաններ գտնվեցին, իրենց տարօրինակ ձեվով զեռ ոչ ոքի հայտնի չեզած, առաջին անգամ ես հայտնեցի այդ ամանների շինության նպատակը, որովհետև մինչև իմ օրերը գործածական էին և շինողները Թամզարացի բրուտներն էին»: Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, I, 1942, էջ 373: Անդկամաններում, բացի անուշահոտ օծանելիքներից, պահել են նաև հինա, որին խառնում էին անդիկ: Այդ անոթները շինվում էին այնպես, որ հարմար լինեն բարձր կախելու համար:

1 Պետք է գիտենալ, որ Շապին-Գարահիսարի և իր շրջակայքի հայ բնակչությունը վաստրբա-

րեցվում է հետագայում տեղական պայմաններին (նկ. 86)։

Բացի հասարակ կավե անոթներից, բրուտ վարպետները պատրաստել են այնպիսի անոթներ, ափսեներ, սափորներ և այլն, որոնք չնարկած էին մեծ մասամբ միագույն և ա-

Նկ. 86. Մոզկաման Անիի պեղումներից, X—XIII դդ. Պետական պատմական թանգարան

ռանց զարդանախշերի։ Այդ գույների մեջ իշխում են հատկապես կանաչ և բաց կապույտ գույները։ Պատրաստում էին նաև այնպիսի չնարակած անոթներ, որտեղ տարբեր գույներ միահյուսվելով առնչում էին երկրաչափական, կենդանական և մարդկանց դեմքերով անոթներ, թասեր, սափորներ։ Սրանց օրնամենտներից ու տեխնիկայից պարզվում է, որ այդ տիպերի հնագույնները պատկանում են IX—X դարերին։ Այդպիսի խեցանոթների հնագույն ձևերից, ինչպես այդ մասին նշել է Կ. Ղաֆադարյանը, հայտնի են մեծ մասամբ ծանծաղ բրեղանները, որոնց շրթերը հաճախ վեր ծալած չեն. նրանց դրսի խորդուբորդությունները հարթված են սպիտակ կավի ծածկույթով (անգոբ), վրան պատած մի քանի գույնի չնարակ։ Այդպիսի հնագույն բրեղաններ գտնվել են Անիում և Դվինի կաթողիկեի մասում[1]։

1938 թ. Դվինի պեղումներից գտնված բեկորների վրա դեղնագույն ու կանաչ գույներով կազմված քառակուսիների մեջ շախմատաձև դասավորված են դարչնագույն սլաքանման նախշեր, իսկ 1946 թ. պեղումներից գտնված մի բրեղանի կտոր կրում է ձիու բաշի պատկեր, նույնատիպ չնարակած անոթների հատակներ, մարդու, առյուծի իրանի մասերի պատկերներով գտնվել են Անիում (նկ. 87)։

Հետագայում, X—XI դարերում, Բագրատունիների տիրապետության ժամանակ թե՛ Անիի և թե՛ Դվինի չնարակած անոթների վրա գույների ընդհանուր փոփոխության հետ միասին հանդես են գալիս նոր զարդանախշեր, որոնց մեջ մեծ մասամբ իշխում է տարբեր գույնի ճառագայթաձև ցայտակային օրնամենտը. դրանց վրա արդեն նկատվում են փորագիր և երկրաչափական ու բուսական զարդանախշեր։ Դվինում տարածված է եղել նաև հյուսվածքաձև բուսական օրնամենտը։

Միջնադարյան Հայաստանում շատ հաճախ ոճավոր փորագրություններ էր արվում միագույն չնարակով պատած անոթների վրա, որոնց օրինակները կան թե՛ Անիում և թե՛ Դվինում։ Չնարակած ափսեների և բրեղանների մեջ կան բուսական այնպիսի օրնամենտներ, որոնց մենք հանդիպում ենք դաջածո կտորների, գորգերի և ոսկերչական օրնամենտների մեջ։ Չնարակած անոթների մեջ կան նաև կենդանակերպ, թռչնակերպ և մարդկանց դիմանկարներով արված զարդանախշեր, որոնց նմուշները գտնվել են Անիում, Դվինում և Ամբերդում (նկ. 88)։

---

1 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 209։



Ջնարակած թաս Դվինի պեղումներից։



Նկ. 87. Ջնարակած բրեղան Անիի պեղումներից, X—XIII դդ. Պետ. պատմական թանգարան

Միջնադարյան կերամիկայի մեջ իր պատվավոր տեղն է բռնում հախճապակյա տարբեր տեսակի անոթեղենը, որի բազմաթիվ նմուշներ գտնվել են միջնադարյան քաղաքների՝ Դվինի, Անիի պեղումներից։ Հախճապակյա կերամիկան բաժանվում է հիմնականում երկու խմբի, մեկը՝ գունավոր, վրան փորագիր քանդակներով, իսկ մյուսը՝ ամբողջովին սպիտակ և ծակոտկեն։ Թրծելու ժամանակ այդ ծակերը լցրել են թափանցիկ ջնարակով։ Այդպիսի նուրբ հախճապակյա անոթներ պատրաստել են հատկապես իշխող դասի համար երբեմն էլ արտահանվել են մոտակա քաղաքը կամ ավելի հեռավոր տեղեր։ Այս բնույթի անոթների վրա, բացի բուսական և երկրաչափական փորագրություններից, կան նաև գծված, ֆանտաստիկ ձևով պատկերված գազաններ ու թռչնակերպ կենդանիներ կամ թե մեծ վարդյակներ։ Վերջին օրնամենտները շատ



Նկ. 88. Ջնարակած քրեզան ճառագայթաձև նախշերով, Դվինի պեղումներից. Պետական պատմական թանգարան

տարածված էին նաև Ղրիմում՝ Անիից գաղթող հայ արհեստավորների մեջ եղած բուռն վարպետների շնորհիվ (նկ. 90)։

Ինչպես ասացինք, միջնադարում իր բազմազանությամբ ու պատրաստման տեխնիկայով աչքի է ընկնում փափուկ խեցեղենը. հատկապես շատ տարածված էին սպիտակ, միագույն կապույտ ու կանաչ ջնարակով ծածկված թասերը։ Այդ ջնարակները պատրաստվում էին կոբալտի կամ պղնձի ու մարգանեցի օքսիդով։ Կաթնագույն սպիտակ թասերի վրա տեղ-տեղ լինում էին նաև

կապույտ գույնի ցայտկեր. դրանց ժամանակաշրջանը, ըստ Բ. Շելկովնիկովի, ընկնում է ամենաուշը XI դարի կիսին: Հախճապակյա անոթները, բացի փորագրությունից, զարդարվել են նաև վերջնարակային շողում նկարներով: Հետաքրքիր են Անիում ու Դվինում գտնված այն ջնարակած թասերը,

Նկ. 89. Ջնարակած քրեղան Անիի պեղումներից, X—XIII դդ. Պետ. պատմական թանգարան

որոնց վրա վերադիր ձևով ամրացված են մարդկանց դիմանկարներ, վարդյակներ և դրանախշեր. դրանք իրենց հյուսվածքաձև զարդանախշերի տեխնիկայով ու օրնամենտներով ընդհանուր նմանություն ունեն իրար հետ:

Հայաստանի քաղաքներում XII—XIII դարերում արտադրվել են նաև ոսկեգույն զարդանախշերով հախճապակյա անոթներ. մինչև Դվինի սիստեմատիկ պեղումները կարծում էին, որ այդ տիպի խեցանոթները ներմուծված են Պարսկաստանից, սակայն Դվինի պեղումներից հայտնաբերված կերամիկան վկայում է, որ այդ շողում, ոսկեգույն հախճապակին տեղական արտադրություն է, որը հանդիսացել է նաև առևտրի առարկա:

Դվինում և Անիում գտնված հախճապակյա անոթների միայն մի մասը Հայաստան է

Նկ. 90. Թուչնակերպ կանացի դեմքով հախճապակե թաս Անիից, X—XIII դդ. Պետական պատմական թանգարան

ներմուծված Իրանից, Չինաստանից, Միջին Ասիայից և այլ վայրերից. դրանց վրա կան այդ երկրներին բնորոշ օրնամենտներ: Ներմուծված հախճապակյա անոթներից անհրաժեշտ ենք համարում հիշատակել 1939 թ. Դվինի միջնաբերդից գտնված շողում հախճապակյա թուչնաձև սափորը: Հետագայում նույն տեղից գտնվել է մեծ թաս, որի հատակին փորագրված են մարդկային երկու պատկեր, իսկ շուրթին կան արաբերեն արձանագրություն և բուսական օրնամենտներ: Հետաքրքիր է նաև Դվինում գտնված հախճապակյա թասը, որի հատակին պատկեր-

ված է ուղտի նկար։ 1950—1951 թթ. Դվինի միջնաբերդից և սարին բերդի պեղումներից հայտնաբերվել են երկու սափոր, որոնցից մեկը ունի նեղ վիզ և ծածկված է ուռուցիկ ու ներս ընկած ոսկեգույն զարդանախշե-

Դվինից բացի, նույնատիպ հաճխապակյա ոսկեգույն և արաբական տառերով ու լուսական զարդանախշերով թասի կտորներ և չինական սելատոնի նմուշներ գտնվել են նաև Անիում։



Նկ. 91. Հախճապակյա ոսկեզօծ սափոր Դվինի պեղումներից. Գեղակոն պատմական թանգարան

րով։ Այս սափորը իր արվեստով ու դեղեցկությամբ եղածների մեջ պետք է համարել ամենալավը (նկ. նկ. 91, 92)։

Վերոհիշյալ երկու քաղաքներում ներմուծված հախճապակյա ամբողջական անոթներն ու առանձին բեկորները հաստա-

տում են Անի և Դվին քաղաքների առևտրական հարաբերությունների զարգացման մասին եղած մատենագրական փաստերը, նրանց՝ Զինաստանի, Իրանի ու Միջին Ասիական քաղաքների հետ ունեցած առևտրական կապի մասին խոսող տվյալները։

Կավագործության արհեստը ծառայել է նաև ճարտարապետական նշանակություն ունեցող հարդարանքների պատրաստման գործին։ Դվինում և Անիում գտնվել են հատակ և ջնարակած աղյուսի կտորներ, որոնցով զարդարել են սենյակի հատակները։ Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանում շքաղյուսների օգտագործումը լայն չափով տարածված է եղել, խիստ կարիք է զգացվել նման ձևավոր աղյուսների արտադրության ընդլայնման. այդ երևում է շքաղյուսների վրա անընդհատ կրկնվող օրնամենտներից ու տարբեր վարպետների գծած նշաններից, որ տարածված էր, սկսած XII դարից։ Անիի Առաքելոց եկեղեցու ճակատի մեծահատիկ աստղաձև քանդակի ամեն մի թևի մեջ փորագրված են հայկական տառեր, որի ընթերցումից ստացվում է «Սարգիս» անունը. դա՝ անկասկած, այն արհեստավորի անունն է, որի ձեռքով պատրաստվել են խոշոր աստղաձև շքաղյուսի կտորները։



Նկ. 92. Հախճապակյա թաս, վրան մարդկանց դիմանկարներ և արաբական արձանագրություն, Դվինի պեղումներից. Պետական պատմական թանգարան

Բաքվի միջնադարյան մզկիթի պատի վրա կան զարդանախշած շքաղյուսներ, որոնց վրա գրված են տարբեր վարպետների անուններն ու թվականները։ Այս փաստը նույնպես ցույց է տալիս, որ այդ շենքի պատի երեսի շքաղյուսները արտադրված են եղել շուկայի համար տարբեր վարպետների կողմից։ Բնակելի շենքերի ներսի հարդարանքների համար (հատկապես իշխանական տների), ձևավոր աղյուսների հետ միասին, օգտագործել են դիպսից ձուլածո օրնամենտներ, որոնց վրա կան բուսական, կենդանական, երկրաչափական քանդակներ։ Այդպիսի գիպսյա ձուլվածքներ գտնվել

են Անիի ու Դվինի պալատական շենքերից։ Կավից պատրաստում էին աղյուսներ, որ օգտագործվում էին նաև ծածկերի համար, որոնք լինում էին երկու տեսակ՝ հարթ և գոգավոր։ Դվինում ու Անիում գտնվել են մեծ քանակությամբ ջրատար խողովակներ, որոնք ունեն իրար մեջ հագցվելու հարմարանք։

Վերոհիշյալ խեցանոթների տարբեր տեսակները և ճարտարապետական նշանակություն ունեցող հարդարանքները պատրաստվել են տեղում, որը հաստատվում է Անիում և Դվինում գտնված աղյուսներ թրծելու արհեստանոցների փաստերով։

Կավագործությունը, որպես մասսայական տարածված արհեստ, ո՛չ միայն մինչև XIII դարը, այլև հետագայում շարունակում է իր գոյությունը։ Բրուտը իր դրգի օգնությամբ XVII—XVIII դարերում բավարարել է զարգացած քաղաքային դասի պահանջները։ Չնայած պղնձագործությունը մեծ տեղ էր գրավում, սակայն կավագործությունը ուներ իր պատվավոր տեղը, մասնավորապես ղյուղական բնակչության համար։ Բրուտները հետագայում իրենց արտադրած անոթների զարդանախշերի մեջ որոշ փոփոխություն են մտցնում, միաժամանակ պատրաստում են զանազան տեսակի արձաններ ու զարդեր, որոնք նույնպես կապված էին, անշուշտ, առևտրական հարաբերությունների զարգացման հետ։

Ապակեգործություն— Միջնադարյան Հայաստանում կային արհեստավորներ, որոնք զբաղվում էին ապակյա իրերի, անոթների պատրաստման գործով։

Մինչև վերջերս գիտնականներից ոմանք կարծում էին, որ Հայաստանում գտնված ապակիների ծագումը պետք է կապել Փյունիկիայի և Եգիպտոսի հետ, սակայն Անիի և, վերջին տարիների (1937—1952 թթ.), Դվին քաղաքի սիստեմատիկ պեղումները ապացուցեցին, որ, իրոք, Հայաստանն ունեցել է ապակու տեղական արտադրություն[1]։ Այդ հաստատվում է նաև մեր մատենագրական տվյալներով։

Հայ պատմիչներից Ագաթանգեղոսը իր Պատմության մեջ հիշում է, որ Հռիփսիմեն և նրա ընկերները Վաղարշապատում զբաղվել են ապակեգործությամբ, իսկ Վաղարշապատի դամբարանների պեղումներից (I—III դդ.) գտնված մեծ քանակությամբ ապակե սրվակների գոյությունը հաստատում է ապակեգործության առկայությունը միջնադարյան Հայաստանում. բացի այդ, Կիլիկիայի Սիս քաղաքում արտադրված ապակին մեծ չափով օգտագործվում էր նաև Հայաստանում։ Ապակու տեղական արտադրություն լինելը ապացուցվում է նաև նրանով, որ պեղումներից գտնված ապակե դավերը, սրվակները, բաժակներն ու ափսեները իրենց ձևերով ընդհանուր նմանություն ունեն Հայաստանում արտադրվող կերամիկայի հետ, մյուս կողմից՝ ապակե անոթների զարդանախշերի նմանները հանդիպում են մեր հուշարձանների ու կերամիկայի վրա։ Օրինակ՝ խաղողի ողկույզով զարդարված ապակե անոթի բեկորի հայտնաբերումը՝ Դվինի պեղումներից, ցույց է տալիս, որ այդ ապակե անոթը արտադրվել է VII—IX դարերում. Բ. Շելկովնիկովը իր ուսումնասիրության մեջ[3] նշել է, որ IX դարին պատկանող ապակե իրեր պեղումներից առայժմ գտնվել են քիչ քանակությամբ, եղածների մեծ մասը բեկորներ են, և որ այդ դարաշրջանին հատկանշական են փորագիր, վերադիր զարդարանք ունեցող անոթներ, նռան և խաղողի ողկույզ պատկերող ապակիների տեսակները, իսկ հայտնի է, որ նռան, խաղողի ուռուցիկ քանդակը հանդիսանում է միջնադարյան հայ արվեստի բնորոշ գծերից մեկը։

Անիի և հատկապես Դվինի պեղումներից

---

1 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 238։

2 Նույն տեղում։

3 Б. Шелковников, Керамика и стекло из раскопок г. Двина, էջ 107.

գտնվել են մեծ քանակությամբ առանց գծազարդերի ու նախշերի ապակե սրվակներ, բաժակներ, գավաթներ, անոթնիկր տարբեր ձևի. դրանց մեջ կան նաև գունավոր ապակե անոթներ՝ դեղեցիկ զարդանախշերով[1], որոնք անշուշտ ընդօրինակված են կերամիկայի մեջ եղած օրնամենտներից։

Նկ. 93. Ապակե անոթ Դվինի պեղումներից. Պետական պատմական թանգարան

Դվինի և Անիի պեղումներից գտնված բազմաթիվ տարբեր գույների ապակե ապարանջանները և ուլունքները նույնպես հաստատում են այդ արհեստի գոյությունը տեղում, որովհետև ապակե իրերի ներմուծումը չէր կարող այնքան էլ ձեռնտու լինել առևտրականներին, եթե նկատի առնենք երկարատև ճանապարհորդությունը, ոչ զարգացած տրանսպորտը և ապակե իրերի շուտ փշանալու հանգամանքը (նկ. 93)։

Բ. ՔԱՐԱԿՈՓՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե գրավոր տեղեկություններն ու նյութական արտադրանքի մնացորդները համեմատաբար քիչ են մետաղագործության, մանածագործության և մի քանի այլ արհեստների մասին, ապա նույնը չի կարելի ասել շինարարության վերաբերյալ, քանի որ մեր երկրի հարուստ և հոյակապ հուշարձաններն ինքնին կենդանի վկաներ են քարակոփության ու շինարարական արհեստների գոյության։

Այդ հուշարձանները իրենց ոճով, կառուցման տեխնիկայով, նուրբ քանդակներով ու բազմաթիվ արձանագրություններով հարուստ գանձ են հանդիսանում ճարտարապետության և հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար։ Այդ տեսակետից եզակի տեղ է գրավում Անին, որը X—XIII դարերի պատմական Հայաստանի ճարտարապետական հուշարձանների անզուգական մի թանգարան է, ուր կառուցողական գործը հասել էր իր ժամանակի բարձրագույն աստիճանին։

Տվյալ դեպքում շինարարական գործը մեզ հետաքրքրում է այնքանով, որ նա կապված է քարակոփության և որմնադրության հետ. այդ հսկայական շինարարությունը կատարվել է, անշուշտ, տեղական արհեստավորների, այն է՝ որակյալ քարտաշների ու որմնադիր վարպետների միջոցով։

Հայաստանի քաղաքներում, մասնավորապես Անիում, շինարարական աշխատանքն արագ թափ է ստանում հատկապես Բագրատունիների տիրապետության ժամանակ։ Այդ դարաշրջանին է պատկանում Անիի Կաթողիկեն, որ մի անզուգական կոթող է։

Ճարտարապետական տեսակետից նշանավոր գործ է և «Հովվի եկեղեցի» կոչված հռահռակ շենքը, որի մասին ճարտարապետ Թ. Թորամանյանը գրում է. «Իր հռահռակ ձևով «Հովվի եկեղեցին» Զվարթնոցի և Անիի

---

1 Այս մասին Կ. Ղաֆադարյանը գրում է հատուկ ուսումնասիրություն։

ս. Գրիգորի մանրանկարն է, ներքին կողմեն որմնասյուներեն մեկնող վեց աղեղներու ծայրերը առանց հենարանի կախ մնացած կախարդական երևույթը, գաղափարով և շինարարական ճարպիկությունով մի մեծագործություն արժե։ Հատակագծի ձևը և արտաքին ակնահաճո տեսքը մեկ հատիկ օրինակը կրնվի ինձի ամբողջ պատմական ճարտարապետության մեջ»[1]։

Բագրատունիների շրջանին պատկանող բաղաքացիական կառուցումներից արժե հիշել Ախուրյան գետի կամուրջները, մանավանդ XI դ. երկհարկանի, յուրահատուկ ոճով շինված կամուրջը և Անիի պարիսպները, որոնց երկարությունը 2500 մետրից ավելի է և որոնք բարձրանում են երկու կողմից սրբատաշ քարերով։ Հայաստանի տարբեր շրջաններում, Բագրատունիների տիրապետության ժամանակ, ֆեոդալ իշխանների կողմից կատարված նշանավոր կառուցումներից հիշատակության արժանի են Աղթամարի վանքը, Սանահնի և Հաղպատի վանքերը, Քոբայրի հուշարձանը, Կեչառիսի վանքը (Ախտալում), Մարմաշենը (Դուզքենդի շրջանում), Ամբերդի XI դարի եկեղեցին ու պալատը (Աշտարակի շրջանում) և այլն։

Սելջուկների կատարած ավերածություններից հետո, XII—XIII դարերում, նորից մեծ թափ է ստանում շինարարական գործը Հայաստանում։ Կրկին կառուցվում են թե՛ կրոնական և թե՛ քաղաքացիական շենքեր՝ իրենց դարաշրջանին համապատասխան ոճով։ Զաքարյանների ջանքերով և նրանց ենթակա ֆեոդալների միջոցով, Արագածոտնում, Լոռիում, Սյունիքում և այլ շրջաններում կառուցվում են նորանոր շենքեր, որոնք իրենց ճոխ քանդակագործությամբ եղակի տեղ են գրավում հայ ճարտարապետության մեջ, ինչպես, օրինակ՝ Հառիճի վանքը, Հովհաննավանքը, Հաղարծինը, Գոշավանքը, Մակարավանքը, Նորավանքը, Տեղերը (Դըղըր) և այլն։ Զաքարյանների տիրապետության շրջանին և հետագայի համար բնորոշ պետք է համարել գույնզգույն մոզայիկ քարերից պատրաստված պատերը և ստալակտիտ շրջանակներն ու պսակները։ XII—XIII դարերում խաչքարերի քանդակագործությունը հասել էր բարձր աստիճանի։ Այս դարերում զարդանում է նաև ժայռափոր եկեղեցիների կառուցումը, որի ամենափայլուն օրինակն է Հանդիսանում Գեղարդի վիմափոր եկեղեցին։ Բացի եկեղեցիներից ու պալատներից, կատարվում են նաև առևտրական հարաբերությունների հետ կապված կառուցումների (XV—XVII դար), ինչպես, օրինակ՝ կամուրջներ, իջևանատներ, հյուրանոցներ և այլն։ Ահա այս շենքերի կառուցման գործի ամենանախնական բաժինը պատկանում է քարտաշ արհեստավորներին։

Քարտաշ վարպետները միաժամանակ կատարում էին քարի վրայի փորագրական աշխատանքը, սակայն այդ աշխատանքը պահանջում էր փորձառություն, նկարչության ու դծագրական ունակություն, որ չէին կարող ունենալ բոլոր քարտաշ վարպետները։

Միջնադարյան Հայաստանի նյութական մնացորդները, VII դարից սկսած մինչև XVIII դարին պատկանող կոթողներն ու խաչքարերը, ինքնըստինքյան հաստատում են այդ արվեստի ղարգացած լինելը։

Հայաստանի դրեթե բոլոր շրջանների խաչքարերը, սկսած Նոր Բայազետի Նորադուզ գյուղից և վերջացրած Հին Ջուղայով, կենդանի կոթողներ են հայ քանդակագործության արվեստի. նրանք աչքի են ընկնում իրենց ոճերի բազմազանությամբ ու օրնամենտների տարբերությամբ։

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել հայկական քանդակագործական գործիքների և նրա աշխատանքային տեխնիկայի մասին։

Քանդակագործական գործիքները փոքրաթիվ են և հասարակ. դրանցից անհրաժեշտ է նշել՝ քանոնը, կարկինը, շաղապը և պողպ-

[1] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 338։

Նկ. 85. Խաչքար, Նոր Գեղիկ վանքից, XIII դար.

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

պատե տարբեր չափսի ու ձևի ծակիչներն ու հարթիչները։

Քանդակող վարպետը սկզբում հղկում, հարթում է քարը, հետո մատիտով կամ ընկուզենու ներկով գծում է այն օրնամենտները, որ պետք է քանդակվեն։ Կորագծերը քաշում է կարկինով, իսկ ուղիղ գծերը՝ քանոնով։ Նկարը գծելուց հետո վարպետը հատուկ սրածայր պողպատե գործիքով նկարի գծային մասը խորացնում է։

Վարդյակներ կամ բուսական ու ժապավենաձև զարդանախշեր մշակելու համար նախ և առաջ պետք էր փոս տեղերը բավական խորացնել, իսկ հետո անցնել քանդակների մշակմանը. փոսեր ստանալու համար օգտագործում էին շաղապը։

Քանդակագործական լավագույն հուշարձաններ են Ախթամարի վանքը, Զվարթնոցի եկեղեցին և Անիի հուշարձաններն ու բազմաթիվ խաչքարերը, որոնք պատկանում են X—XVIII դարերին. դրանց մեջ աչքի է ընկնում Գոշի խաչքարը, որ պատկանում է XII դարին և հանդիսանում է քանդակագործության արվեստի լավագույն նմուշներից մեկը։ (Նկ. 94)։

Հայ քանդակագործության արվեստում կիրառվող բուսական և երկրաչափական օրնամենտները տեսնում ենք նաև մանրանկարչության մեջ։ Հայ վարպետների ձեռքով են բանդակվել նաև այնպիսի օրնամենտներ, որոնք արտահայտում են ֆեոդալական Հայաստանի աղնվական դասի կենցաղը. օրինակ՝ Ամիր Հասանի բարձրաքանդակը՝ որսի տեսարանով, խնջույքի տեսարաններ գերեզմանաքարերի վրա։ Բացի այդ, կան այնպիսի բարձրաքանդակներ, որտեղ պատկերված է Հայաստանի բնակչության զբաղմունքներից այգեկութը (Դվինի բարձրաքանդակը), երկրագործական աշխատանքի հետ կապված պատկերներ, ինչպես, օրինակ, Զանգեզուրի գերեզմանաքարերի վրա քանդակված սրոցով վարելու պրոցեսը (նկ. 95, 96)։

Հայկական քանդակագործության մեջ գործածվել են նաև զանազան գույնի ուլունքներ, որոնք ամրացվում էին քանդակների փոսիկներում, մեծ մասամբ կենդանական և մարդկային արձանիկների վրա։

Բավական հետաքրքրական և կարևոր նշանակություն ունեն այն նշանները, որոնք փորագրված են այս կամ այն վարպետի ձեռքով՝ շենքերի պատերի վրա։ Հայաստանում այդպիսի նշանների հանդիպում ենք VII դարից մինչև XIII դարը կառուցված շենքերի վրա։ Քարտաշ վարպետների այդ նշանները իրենց տեսակներով խիստ բազմազան են[1] և հանդիպում են ո՛չ միայն Զվարթնոցի վրա, այլև Անիի, Թալինի, Մաստարայի, Ադիամանի, Բյուրականի, Դվինի և այլ հուշարձանների վրա։ Այդ նշաններից կարելի է մոտավորապես իմանալ տվյալ շենքի վրա աշխատող վարպետների թիվը և, ըստ որակի, աշխատանքի դասավորությունը, որովհետև ամեն մի վարպետ, ըստ իր որակավորման, պատրաստել է շենքի այս կամ այն մասը՝ քարերը, կամարները, սյուները։ Զվարթնոցի վրա աստղաձև նշանը, որը փորագրված է բոլոր կամարաքարերի ու որմնասյուների վրա, ցույց է տալիս, որ, իրոք, այդ նշանն ունեցող վարպետը մասնագետ է եղել հատկապես կամարաքարեր ու որմնասյուներ տաշելու գործում։ Բացի հուշարձանների այդ հարուստ մնացորդներից և նրանց վրա եղած նշաններից, պատմիչների մոտ հիշատակություններ կան նաև քարագործ արհեստավորների մասին (նկ. 97)։

XIII դարի պատմիչ Ս. Օրբելյանը գրում է. «Եւ նա հայցեր զանձս բազումս և արուեստաւորս, զի շինեսցէ զաւերեալ տեղիսն։ Եւ առաքեցաւ առ ժամայն հազար այր, հինգ հարիւր քարագործ և հինգ հարիւր փայտագործ»[2]։ Օրբելյանի այս հիշատակությունը ցույց է տալիս, որ շինարարության մեջ աշխատել են մեծ թվով քարագործ բանվորներ։

Հայ պատմագիրները քարի հետ գործ ու-

---

[1] Գիտ. և արվեստի ինստ. «Տեղեկագիր», Երևան, 1927, № 2, Թ. Թորամանյանի հոդվածը այդ նշանների մասին։

[2] Ս տ. Օ ր բ է լ յ ա ն, էջ 84։



Նկ. 95. Խաչքարեր Ջուղայից

նեցողներին կոչել են «քարագործ», որոնք հանդիսացել են տվյալ շենքի և՛ նախագծողը, և՛ կառուցողը։ Ասողիկ պատմիչը գրում է, որ 989 թ. Կոստանդնուպոլսում պատահած երկրաշարժից վնասված Այա-Սոֆիայի վերակառուցման պլանը կազմում է Տրդատ ճարտարապետ. «Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի՝ տայ զօրինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն ու սկզբնաւորեալ զշինելն, որ և գեղեցապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն»[1]։ Ախթամարի արքունական բնակարա-

1 Ասողիկ, էջ 251։

Նկ. 96. Բարձրաքանդակ քարի վրա (այգեկութ) Դվինից, V—VII դդ. Պետական պատմական թանգարան

Նկ. 97. Բաբագործ վարպետների նշանները Զվարթնոցում, VII դար

նի և տաճարի շինության գործը Գագիկ Արծրունի թագավորը հանձնարարում է Մանվել Ճարտարապետին[1]։

Քարագործ վարպետների մասին հատ ու կենտ տեղեկություններ կան վիմական արձանագրությունների մեջ[2]։ Դրանցից մեկից երևում է, որ Կեչառիսի կառուցման գործին մասնակցել է Վեցիկ վարպետը, իսկ Շամշադինի շրջանի Վարագա վանքի կառուցման արձանագրության մեջ (1198 թ.) հիշվում է, որ այն կատարվել է՝ «ձեռամբ վարդապետի Մխիթարա եւ Ոնէ թուիս (647=1198) շինեցի զեկեղեցիս ձեռամբ հաւր՝ Գրիգորո և նորին

1 Թ. Ա ր ծ ր ու ն ի, էջ 485։
2 «Վիմական տարեգիր», էջ 106։

արբանեկին»[1]։ XIII դարի մի այլ արձանագրության մեջ նույնպես հիշվում է, որ վասակի հրամանով շինվում է եկեղեցի՝ «ձեռամբ Յովհաննէս վարդապետին...»[2]։ Այդպիսի փաստեր կան նաև այլ հուշարձանների վրա եղած կառուցողական արձանագրություններում։

Ճարտարապետական հուշարձանների մնացորդների վրայի շախադի ամրության պատճառով է, որ այդ կոթողները դարեր շարունակ, ենթարկվելով բնության բոլոր տեսակի արհավիրքներին, այնուամենայնիվ, մնացել են կանգուն։

Շենքի կառուցումը շատ հաճախ տևել է երկար, օրինակ՝ Տաթևը կառուցվել է 11, Մարմաշենը՝ 41, Գանձասարը՝ 32, Զվարթնոցը՝ 10 տարվա ընթացքում և այլն։ Սակայն այդ կառուցումների երկարատևության պատճառը չպետք է բացատրել արտադրողական ուժերի ցածր մակարդակով, այլ անշուշտ եղել են նաև այլ պատճառներ։

Շինարարության նորմալ ընթացքի վրա հաճախ բացասաբար են անդրադարձել պատերազմները. օրինակ՝ Զվարթնոցի եկեղեցին կառուցվել է 10 տարվա ընթացքում, ընդհատումներով, որովհետև այն կառուցող Ներսես Տայեցի կաթողիկոսը արաբական արշավանքների և այլ պատճառներով ստիպված էր հեռանալ երկրից և շինարարությունը ընդհատել մի քանի տարով։ Բագրեվանդի ս. Հովհաննես եկեղեցին, եթե վստահենք վիմագրի ընթերցվածքի ճշտությանը, շինվել է նույնպես 10 տարվա ընթացքում։ Թեև այստեղ ընդհատման մասին խոսք չկա, սակայն, եթե նկատի ունենանք, որ VII դարի սկզբին, նախքան արաբների արշավանքը, Սասանյանների և Հերակլի միջև տեղի ունեցած երկարատև կռիվները գլխավորապես Հայաստանի հողի վրա էին, ապա հասկանալի կդառնա տվյալ շինարարության ձգձգման պատճառը։

Հիշյալ, արտաքին կամ քաղաքական հանգամանքներից բացի, իհարկե, պակաս դեր չի խաղացել և կառուցողական տեխնիկան, որի մասին, իր բանավոր զրույցներից մեկում, տեղեկացրել է մեզ հանգուցյալ ճարտարապետ Թ. Թորամանյանը։ Կառուցվող շենքերի դիմացկունության համար կառուցման ընթացքում եղել են և դիտավորյալ ընդհատումներ, որպեսզի հնարավորություն տրվի շաղախին արևի ազդեցության տակ ամրանալու, մանավանդ որ կառուցողական այդ հրսկայական աշխատանքները կատարվում էին գլխավորապես ամառվա ամիսներին։ Մասամբ սրանով պետք է բացատրել որոշ եկեղեցիների ու վանքերի շինության երկարատևության պատճառը։

Անիում ակադ. Ն. Մառի պեղումների ժամանակ երևան հանված պարիսպներն ու աշտարակները իրենց վրա ունեն զանազան թվականներ կրող արձանագրություններ, որոնք մեծ մասամբ վկայում են հենց պարիսպների շինության տարբեր ժամանակները։ Այս տարբեր թվականները մի շարք գիտնականների բերել են այն եզրակացության, որ այդ պարիսպների կառուցումը տևել է շատ երկար և որ մեկի սկսած գործը շարունակել է նրա հաջորդը, մինչև պարիսպների շինության վերջնական ավարտումը, և առաջին ձեռնարկողից մինչև ավարտողը թողել են կառուցման վերաբերյալ վիմական հիշատակություններ։ Սակայն դրանք իրականում վերաբերում են զանազան ժամանակներում տարբեր մարդկանց կողմից կատարված նորոգումներին, և յուրաքանչյուր նորոգող պարսպի որևէ աշքի ընկնող տեղում դրոշմել է իր անունն ու տարեթիվը, այսինքն որոշ արձանագրություններ կապ չունեն հիմնական շինարարության հետ, այլ միայն մասնակի նորոգումներն է նշում՝ «շինեցի» ընդհանուր բառով, որովհետև ամեն

---

[1] Կ. Ղաֆադարյան, «Պատմա-հնագիտական դիտողություններ Նոր-Բերդի կյուրեղյան իշխանության մասին». ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1940, № 4—5, էջ 168։

[2] Նույն տեղում, էջ 171 (վարդապետ բառը այս շրջանում գործածվել է վարպետ բառի իմաստով)։

Նկ. 100. Էջմիածնի սպասքի գուրբ, 1721 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ

մի իշխող միշտ էլ ցանկացել է մեծագործ ցույց տալ իրեն: Եվ, վերջապես, այդ նույն պարիսպների վրա եղած մի շարք անբովանդակ արձանագրությունները կարող են նվիրատվական նպատակներով գրված լինել: Պարիսպների և ընդհանրապես ռազմական նշանակություն ունեցող օբյեկտների շինությունը չէր կարող այդքան երկարաձգվել, մանավանդ որ նրանց վրա մշտապես գործադրվել է ճորտական պարտադիր աշխատանքը:

ՀՅՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Պատմական Հայաստանում տարածված ու կարևոր արհեստներից է հյուսնությունը, որ X—XVIII դարերում բավականին զարգացած էր:

Հյուսները պատրաստում էին դյուղատնտեսական փայտե գործիքներ, տնային կահ-կարասի, փոխադրական միջոցներ և այլն, մասնակցում էին նաև շինարարությանը: Նրանց աշխատանքի արդյունքն են կրոնական ու քաղաքացիական բազմաթիվ շենքերի վրա եղած փայտե բոլոր մասերը՝ պատուհանի շրջանակներ, սյուներ, կամարներ, դռներ և այլն, որոնք հաճախ հանդիսանում են փայտի վրա կատարված փորագրական արվեստի բարձր նմուշներ:

Այդ տեսակետից ուշադրության արժանի են Սևանի եկեղեցու խոյակներն ու դռները, Մշո Առաքելոց վանքի դուռը, Անիի դրքակալներն ու պեղումներից հայտնաբերված, փորագրված փայտի մասերը, ինչպես և էջմիածնի փայտե դռները, որոնց վրա փղոսկրով կատարված է նաև ինկրուստացիա: Քանդակազարդ էին նաև փայտից պատրաստված տնային կահ-կարասիներ ու կենցաղային իրեր, որոնց նմուշները բավականին շատ կան Պետ. պատմական թանգարանի ազգագրական բաժնում:

Մեր մատենադիրները թեև համեմատաբար քիչ, բայց և այնպես որոշ տեղեկություններ են տալիս հյուսների և հյուսնության մասին: Ստ. Օրբելյանը հազար արհեստավորների թվում, 500 քարագործի կողքին հիշում է նաև «հինգ հարյուր փայտագործ»[1], Մ. Կաղան կատվացին նշում է մի հյուսնի և նրա որդուն՝ Հովհաննին[2], Հ. Դրասխանակերտցու մոտ հանդիպում է «հիւսանս մամուլ» դարձվածքը, մի գործիք, որով տանջում էին քրիստոնյաներին նրանց պարանոցը սեղմելով[3]: Հյուսնի արհեստը հիշատակվում է նաև առակներում: Տեղեկություններ կան (սայլեր, նավակներ, նավամատույցներ և այլն) փայտից պատրաստվող փոխադրական միջոցների մասին թե՛ մատենագրական աղբյուրներում և թե վիմական արձանագրություններում[4]: Այդ տեղեկությունները հատկապես վկայում են Հայաստանի լճերի վրա կատարվող նավագնացության մասին:

ԿԱՇԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Մատենագրական աղբյուրներում հանդիպում ենք կաշվի հետ կապված մի շարք կարևոր արհեստների՝ սառաջության, կոշկակարության, մորթեգործության, կազմարարության և այլնի:

Հայաստանում անասնապահությունը միշտ էլ ապահովել է կաշեգործության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալները: Անկասկած է, որ երկրի մի շարք վայրերում տարածված են եղել կաշի մշակելու արհեստանոցներ (դաբաղխանաներ), որոնք հում կաշի են մատակարարել կաշեգործության հետ կապված զանազան արհեստավորների՝ այն վերամշակելու համար: Գրավոր աղբյուրներում հիշյալ արհեստանոցների ու նրանց մեջ աշխատող արհեստավորների վերաբերյալ փաստերը սակավ են[5], սակայն

---

1 Ստ. Օրբելյան, էջ 84, Կ. Գանձակեցի, էջ 209:

2 Մ. Կաղանկատուացի, էջ 320:

3 Նույն տեղում, էջ 239:

4 Նույն տեղում, էջ 229. Թ. Արծրունի, էջ 479. Վիմական տարեգիր, էջ 6—8:

5 Մ. Գոշ, Առակներ, էջ 123:



Նկ. 98. Մշո Առաքելոց վանքի 1134 թվականի փորագանդակ փայտե դուռը. Պետական պատմական թանգարան

մեր մատենագիրները բազմաթիվ տեղեկություններ են տալիս կաշվեղենի արդեն պատրաստի արտադրանքի մասին։ Կաշվի հետ առնչություն ունեցող արհեստավորների արտադրանքն անշուշտ քիչ տեղ չէր գրավում գյուղատնտեսության զգալի պահանջների մեջ։ Անհրաժեշտ էին արորի, գութանի փոկեր, ճոպաններ, խարազաններ և այլն։ Կաշեգործ վարպետները կարողանում էին բավարարել զորքի, մանավանդ հեծելազորի կարիքները, ազդաբնակչության, հատկապես քաղաքային բնակչության բազմազան պահանջները. նրանք պատրաստում էին՝ թամ-



Նկ. 99. Փայտե գրակալ Անիից, 1272 թ. Պետական պատմական թանգարան

կաշվից պրիմիտիվ ձևի մաշիկների (չարուխների) նմուշները հանդիպում են նաև մանրանկարչության մեջ: Կոշկակարական արհեստը հետագա դարերում, քաղաքային դասի (առևտրական ու արհեստավորական խավի) բազմացման հետ միասին ավելի է մասնագիտացվում:

XIII դարի ձեռագրերից մեկում հիշվում է մուճակակարություն (կոշիկի տեսակ) որպես առանձին արհեստ. «մուճակակարն և ջուլհակն հանց մարդ լինեն, որ զայլոց բարի կամենան»[1]: Մխիթար Գոշի առակներում նույնպես հիշվում է այդ արհեստի մասին[2]:

XVIII դարին պատկանող մի փաստաթղթում[3] («Էսնաֆից անուանքն և թիւք են այսօքիք») նշված է 65 արհեստավորական կազմակերպություն. դրանց մեջ կան՝ սանդալչի (հողաթափ պատրաստող), մեստճի (փափուկ կաշվից կոշիկ կարող), փապուճի, ճիզմեճի (տղամարդկանց երկար վզով կոշիկներ կարող և այլն), որոնք ընդգրկված են եղել առանձին համքարության մեջ:

Վիմական արձանագրություններում ևս հիշատակվում են նաև ո՛չ միայն առանձին կոշկակարներ, այլև՝ կոշկակարների հատուկ թաղեր[4]: Կաշեգործության արհեստի կարևորությունը ու զարգացման աստիճանը հատկապես ընդգրկվում է մեծ քանակությամբ բարձրորակ մագաղաթի ու ձեռագրերի կազմերի առկայությամբ:

Միջնադարյան Հայաստանի կենտրոնական քաղաքներում գոյություն է ունեցել նույնիսկ սառաջների առանձին թաղամաս: Սառաջության, լկամարարության (սանձագործության) և թամբագործության մասին տեղեկություն կա նաև XIII դարի ձեռագրերում: Աշ-

բեր, սանձեր, կապարճներ, պատյաններ, հագուստներ, ոտնամաններ և այլն:

Հայ պատմիչների հիշատակած՝ իշխանական, հոգևորական դասի գործածած զանազան ձևի ու գույնի կոշիկների և պատրաստի

[1] ՀՍՄՌ-ի Մատենադարան, № 695 ձեռագիր, էջ 187:

[2] Մ. Գոշի առակներից, էջ 124, երևում է, որ կոշկակարն աշխատանքի պրոցեսում գործադրել է նաև իր առաձեռը կաշին ձգելու համար և այդ սովորությունը կոշկակարները պահպանել են մինչև 18—19-րդ դդ.

[3] Դիվան Հայոց պատմության, էջ 338:

[4] Վիմական տարեգիր, էջ 95:

խատանքի բաժանման վերաբերյալ Մատենադարանի № 695 ձեռագրում կարդում ենք հետևյալ հետաքրքրական տողերը. «Սառաջն և մազմանն կանայք լինեն, լկամարարն առենահաս մարդ լինի... թամբարարն իրաւտրար մարդ լինի»[1]։

Ի դեմս սառաջի, մենք տեսնում ենք արդեն աշխատանքի որոշակի մասնագիտացում. եթե մինչև այդ երասանների կաշվի մասերը ևս պատրաստում է նույն արհեստավորը, այժմ արդեն այդ աշխատանքը կատարվում է լկամարարի ձեռքով։ Թամբագործության հետ սերտորեն կապված է նաև համեստագործությունը (փալանդուզություն), թեև պետք է նկատել, որ համեստագործը համեմատաբար քիչ գործ ուներ կաշվի հետ։

Բացի վերևում թվարկած արհեստներից՝ գրավոր աղբյուրներում հիշատակվում է մի շարք այնպիսի արհեստներ, որոնցով զբաղվողները թեպետ անմիջականորեն կապ չունեին արտադրության հետ, սակայն համարվում էին արհեստավոր։ Արհեստավոր էր համարվում ո՛չ միայն հացթուխը (հացթուխը), դուսանը, պկազարկը (պարկապզուկ փչող), տոպոպզարկը (թմբկահարը), այլև պարտիզպանը, բաղնիսպանը, նաժավը, մոգերիկը (ջրեպան), աղոթարարը։ Աղոթարարությունը բավական տարածված ու հարգված էր միջնադարյան Հայաստանում. նույնիսկ յուրաքանչյուր թաղամաս ուներ իր առանձին աղոթարարը՝ հեքիմը, որ միաժամանակ կատարում էր բժշկի դեր։ Մենք հարկ չենք համարում թվարկած այս արհեստների մասին մեկ առ մեկ խոսելու, քանի որ դրանք անմիջապես չեն կապվում արտադրության հետ[1]։

[1] ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 695, էջ 187։

[1] Տես այս աշխատության վերջում դետեղված արհեստների ցանկը։



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՄԲԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Նախորդ գլխում մենք ւզդեն ասացինք, որ ֆեոդալիզմի վերելքի շրջանում (IX—XIII դդ.) թե՛ առևտուրը և թե՛ քաղաքային կյանքը Հայաստանում բավականին զարգացած էին։ Այդ շրջանի քաղաքները, իրենց նոր առաջացող քաղաքային դասով հանդիսանում էին վարչական և տնտեսական ինքնուրույն կենտրոններ։ Նրանք իրենց արտադրության եղանակով զգալիորեն տարբերվում էին շրջակա գյուղերից, մի հանգամանք, որ ինքնին առաջ էր բերում հակասություններ՝ գյուղի և քաղաքի միջև։

Մարքսը, խոսելով աշխատանքի բաժանման մասին, գրում է. «Աշխատանքի բաժանումը որևէ ժողովրդի մոտ իր հետ բերում է ամենից առաջ արդյունաբերական և առևտրական աշխատանքի առանձնացումը երկրագործական աշխատանքից, իսկ այդ նշանակում է՝ նաև քաղաքի անջատումը գյուղից և նրանց շահերի միջև հակասությունը»[1]։

Մարքսի այս բնորոշմանը լիակատար կերպով համապատասխանում են Հայաստանի տնտեսական զարգացման պայմանները՝ մեր քննարկած ժամանակաշրջանում։

Մեր քննարկած ժամանակաշրջանում, հատկապես X—XIII դդ. և հետագայում, մինչև XVIII դ., ճորտ գյուղացիությունը դրամական հարկադրման էր ենթարկվում ոչ միայն ֆեոդալների, այլև պետության ու եկեղեցու կողմից. այդ հանգամանքը գյուղացուն ստիպում էր դիմել վաշխառուներին, որի հետևանքով աշխատավորը հասնում էր ծայրաստիճան քայքայման, գնալով սրվում էին ներքին հակասությունները և ուժեղանում էր գյուղացու ատելությունը դեպի ֆեոդալներն ու քաղաքի շահագործող վաշխառուները։

Անին, որպես առաջնակարգ քաղաքներից մեկը, իր արդյունագործությամբ տարբերվում էր շրջակա գյուղերից. անհամեմատ ուժեղացել էր աշխատանքի բաժանումը, ազգաբնակչության հիմնական մասը զբաղվում էր արհեստներով և առևտրով ու իր արտադրանքով բավարարում էր նաև շրջապատի գյուղական ազգաբնակչության պահանջները։ Դեռևս XI դարում Ս. Լաստիվերտցին գրում է. «Մանաւանդ ամուրն Անի և որ շուրջ զնովաւ դաւերք իւր՝ առաւել յամբարտաւանութիւն կրթեալ՝ ընդդէմ երկնից կայթս հարկանէին»[1]։

[1] Архив К. Маркса и Ф. Энгельса, кн. I, 1928, էջ 254.

[1] Ա. Լաստիվերտցի, էջ 164։

Հայաստանի կենտրոնական քաղաքների հիմնական բնակչությունը համեմատաբար ավելի ազատ ու արտոնյալ վիճակում է եղել։ Փաստերը ցույց են տալիս, որ քաղաքի բնակիչներն ավելի բարձր են դասվել, քան շինականները։ Քաղաքային դասի արտոնյալ վիճակի մասին տեղեկություն է տալիս նույնիսկ Մ. Խորենացին, որի ժամանակ քաղաքային կյանքն անհամեմատ թույլ էր, քան X—XIII դդ. և հետագայում։ Վաղարշ թագավորի կողմից սահմանված կարգի մասին գրելիս Խորենացին բերում է թագավորի հրամանի բովանդակությունը, ըստ որի՝ պետք էր ավելի հարգել ու պատվել քաղաքացիներին, քան գյուղացիներին[1]։

Քաղաքային դասի արտոնյալ վիճակի մասին է հաղորդում X դարի պատմիչ Հ. Դրասխանակերտցին Զվարթնոցի շինարարության առթիվ խոսելիս[2]։ Ներսես Շնորհալին «Թուղթ Ընդհանրական»-ում խորհուրդ է տալիս, որ քաղաքային դասը չարհամարհի շինականներին[3]։

Վերոհիշյալ փաստերն արդեն ցույց են տալիս, որ, իրոք, քաղաքացիներն անհամեմատ ավելի բարձր են դասվել, քան շինականները, թեև երբեմն քաղաքի արհեստավորները տարել են նաև կոռային աշխատանք։ Սակայն մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում արհեստավորությունն արդեն պետք է որոշ չափով ազատագրված լիներ ֆեոդալական պարտավորություններից, որպեսզի կարողանար ներքին և արտաքին շուկայի համար արտադրել մասսայական սպառման ապրանքներ։ Չնայած այս մասին մատենադրական տեղեկություններ չունենք, սակայն այդ պետք է տեղի ունեցած լիներ միայն X դարից հետո։ Գրավոր տեղեկություններ կան ուրիշ պետությունների վերաբերյալ, որտեղ այդ պրոցեսը սկսվել է IX դարից։ Բուխարայի (Միջին Ասիա) մոտ գտնվող Խաջա վայրի բնակիչներն IX դարում զբաղվում էին բամբակի հյուսվածքի արտադրությամբ. այդ գյուղը խոշոր ֆեոդալ Սագիրբին Ահմեդադիի սեփականությունն էր, որն ամեն տարի բնակիչներից գանձել է 100.000 դիհրեմ։ Հենց այդ դարում էլ արհեստավորները 170.000 դիրհեմի փրկագին են վճարել և դարձել ազատ։

Գերմանիայում, Մագդեբուրգ քաղաքի կոշկակարները XII դարում (1157 թվականին) գնել էին իրենց վարպետներից կառավարիչ ընտրելու իրավունքը։ Նրանք իրենց դիմումի մեջ գրել էին. «Որովհետև մեր քաղաքի արհեստավորները, փոքր թե մեծ, իրենց դատարանով և վարչությամբ, այնպես կազմակերպել ենք կամենում, որ նրանք ոչ մի վարչություն իրենց վրա չունենան, բացի այդ, որ իրենք համաձայն են իրենց միջից ընտրել, այդ իրավունքի համար պարտավորվում են տարեկան երկու թարել վճարել Մագդեբուրգի արքեպիսկոպոսին»[1]։

Ֆրանսիայում ևս արհեստավորները գնում էին իրենց իրավունքները որոշ վճար կամ պատրաստի արտադրանք տալու միջոցով և այդպիսով հնարավորություն էին ստանում իրենց արհեստով ազատ զբաղվելու։

Պետք է ենթադրել, որ մոտավորապես նույն ճանապարհով էլ ընթացել է Հայաստանի արհեստավորության զարգացումը և այն էլ, ինչպես ասացինք, հավանաբար X դարից հետո, այսինքն այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանի քաղաքներն ունեին իրենց ներքին շուկան և իրենց արտադրանքով ու հում նյութով մասնակցում էին նաև արտաքին առևտրին։ Ավելի վաղ շրջանում այդ կատարվել չէր կարող, քանի որ դրանից առաջ գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունների պայմաններում քաղաքները չէին կարող դիտվել որպես առևտրա-արհեստավորական կենտրոններ, որովհետև դեռևս չկար համապատասխան շուկա, ուստի և՝ աշխատանքի լայն բաժանում։

---

[1] Մ. Խորենացի, էջ 117—118։

[2] Հ. Դրասխանակերտցի, էջ 88։

[3] Ն. Շնորհալի, Գիրք, որ կոչի ընդհանրական, Ս. Պետերբուրգ, 1788, էջ 73։

[1] «Մշակ», 1890, № 95։

Առևտրական հարաբերությունների վարգացման օգտին խոսում են հատկապես X դարից հետո եղած արձանագրություններում բազմիցս հիշատակվող կալվածների, այգիների, ձիթհանքերի ու ջրաղացների գնման և վանքերին նվիրելու փաստերը, երբ արդեն անշարժ գույքն անգամ դարձել էր առևտրի առարկա։ Բացի այդ՝ կան հիշատակություններ նաև դրամական կուտակման մասին՝ ֆեոդալ իշխաններից շատերի մոտ[1]։

Վիմական արձանագրություններում հիշվում են մեծաքանակ դրամներ ու կարմիր դուկատը[2], որ կուտակվում էր գլխավորապես վաշխառուական ճանապարհով։

XI—XIV դարերում վաշխառուական կապիտալն արդեն կատարում էր իր քայքայիչ դերը, որից տուժում էին, ի թիվս այլոց, նաև արհեստավորները։ Վաշխի կուտակումը կատարվում էր ի հաշիվ աղքատների. «Այս է բաժին անիրաւ քաղաքաց,— գրում է XI դարի պատմիչ Ա. Լաստիվերտցին,— որ շինեն զինքեանս արեամբ օտարաց և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտուն իւրեանց ամրացուցանեն»[3]։

Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» թե՛ աշխարհիկ և թե՛ կրոնական օրենքներում վաշխով զբաղվողների համար ունի առանձին հոդվածներ, որոնցով արգելվում է վաշխառությամբ զբաղվելը։ Նա նույնիսկ գտնում է, որ դրամագլուխը պետք է անփոփոխ մնա և երբեք չմեծանա վաշխի ավելացումով[4]։

Ներսես Շնորհալին, իր «Թուղթ ընդհանրական»-ում խոսելով առևտրի մասին, խորհուրդ է տալիս դրամը վաշխով չտալ, այլ որպես եղբայրներ օգնել և կարեկից լինել միմյանց։ «Մի տայք զարծաթ ձեր ի վարձու ըստ մարգարէին, այնոցիկ, որք նեղին ի բռնութենէ իշխողաց, և ուտէք զաղքատութեան վաստակս նոցա՝ ի շահս վաշխիցն. այլ՝ որպէս եղբայրք՝ կարեկիցք և օգնականք լերուք միմեանց»[1]։

Ինչպես վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, վաշխառուական կապիտալի կուտակումը կատարվում էր աշխատավոր ժողովրդի հաշվին։ Հարկերի մեծ մասը ծանրացած էր նրա վրա։ Այսպիսով ավելի վատթարանում էր աշխատավոր ժողովրդի դրությունը։ Աշխատավորները շատ հեշտությամբ ընկնում էին վաշխառուների ցանցի մեջ, նամանավանդ այնպիսի շրջանում, երբ հարկահավաքների պահանջկոտությունն շատ ավելի խիստ էր։ Այս դրությունը ստիպում է գյուղացուն և քաղաքի ցածր խավին, ապա նաև արհեստավորությանը դիմել վաշխառուին և դրավական տալով՝ տոկոսով որոշ դումար վերցնել, իսկ հետագայում հնարավորություն չունենալով ժամանակին վճարելու, զրկվում էին գրավ դրված և կամ վաճառքի հանված իրենց անշարժ կամ շարժական գույքերի որոշ մասից կամ ամբողջից։

Ավելորդ չէր լինի այստեղ հիշատակել ժամանակի վաշխառուական դասի ներկայացուցիչներից մեկին, որը Զաքարյանների տիրապետության շրջանում կատարել է բավականին խոշոր դեր։ Այդ առևտրական վաշխառուն՝ Տիգրան Հոնենցը, իր հաշվին կառուցել է Անիի սուրբ Գրիգորի եկեղեցին և այդ առթիվ թողած իր արձանագրությունից պարզվում է, որ եկեղեցուն նվիրած հողամասերի և արդյունագործական ձեռնարկությունների որոշ մասը գրավ է դրված եղել վաշխառու Հոնենցի մոտ, որն իր հերթին այն նվիրում էր եկեղեցուն[2]. այդ գրավ դնելու մեջ, հավանաբար, խոշոր դեր են խաղացել վաշխառուական մեծ տոկոսները։ Մի այլ վկայություն պահպանված է նաև XIII դարի վիմական արձանագրության մեջ[3]։

---

1 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 240։

2 Վիմական տարեգիր, էջ 124, 137։

3 Ա. Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 167։

4 Մ խ ի թ ա ր Գ ո շ, «Դատաստանագիրք», էջ 356, 357։ Այս մասին տես նաև Գունդստաբլ, էջ 76, Հովհան Մանդակունի, Ժառք, 1860, էջ 63—64։

1 Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի, Թուղթ ընդհանրական, էջ 73։

2 Ղ. Ա լ ի շ ա ն, «Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 75—76։

3 Վիմական տարեգիր, էջ 112։

XI—XIII դարերում, ինչպես ցույց են տալիս փաստերը, առևտրա-վաշխառուական կապիտալը կուտակման համար միջոցների մեջ որևէ խարուխյուն չէր դնում։

Շատ բնական է, որ շահագործման այս ցանցի մեջ պետք է ընկած լինեին նաև արհեստավորները. ուստի այստեղ անհրաժեշտ է քննել արհեստավորական դասի դրությունը, նրա իրավական վիճակը։ Սակայն, չմոռանանք, որ այս շրջանում արհեստավորության շահագործումը տարբերվում է նախորդ դարերում տեղի ունեցած շահագործման ձևերից, որին մենք կանդրադառնանք հետո։

Այս ժամանակաշրջանում արհեստավորների շարքում մենք նկատում ենք սոցիալական շերտավորում և աշխատանքի բավականաչափ խոր բաժանում։ Հայկական և օտար աղբյուրները տեղեկացնում են արհեստավորների արտադրած ապրանքների մասին, բայց ոչ այնպիսի մանրամասնությամբ, որպեսզի հնարավոր լիներ ցույց տալ արհեստավորների միջև գոյություն ունեցող աշխատանքի բաժանման ողջ պատկերը։ Մատենադիրների մոտ կան հատ ու կենտ տեղեկություններ միայն, որոնք ցույց են տալիս, թե ինչպես ֆեոդալները ձրի և պարտադիր աշխատանքով շահագործել են նաև արհեստավորությանը։

Անտարակույս, քաղաքների պարիսպների, մասամբ վանքերի և հասարակական շենքերի կառուցման մեջ գործադրվել է արհեստավորների ձրի և պարտադիր աշխատանքը։ Ապացույց կարող են ծառայել Անի քաղաքի վանքերի ու պարիսպների ներկա մնացորդները, որոնք կարող էին կառուցվել գերազանցորեն պարտադիր աշխատանք կիրառելու պայմաններում։

Եթե ճորտ դյուղացին Անիի և ընդհանրապես Հայաստանի այդ հոյակապ կառուցվածքների վրա գործադրել է իր ֆիզիկական աշխատանքը և ավելի՝ փոխադրական միջոցները, ապա արհեստավորությունը մասնակցել է իր կառուցողական վարպետությամբ։ Անիում գտնված արձանագրություններից մեկում, որ գրվել է բյուզանդացի կատապան Բագրատ Վխկացու ժամանակ, գտնում ենք շահեկան տեղեկություններ, մասնավորապես դյուղացու կոռի մասին։ Այդ արձանագրության մեջ ցույց է տրված, թե ինչպես բյուզանդացի կատապանը վերցնում է, ի թիվս մի շարք առևտրական հարկերի, նաև ձրի պարտադիր աշխատանքը[1]։ Արձանագրության մեջ հիշատակված «անգարիոն» տերմինն ընդգրկել է, հավանորեն, բոլոր տեսակի ձրի և պարտադիր մարդկային աշխատանքները, որի տակ ընկնում էին ո՛չ միայն շինականները, այլև արհեստավորների որոշ մասը, մանավանդ կառուցողները։ Իդեպ, մինչև վերջերս Թյուրքական բանակում գոյություն ուներ որոշ զորական միավոր, որը կոչվում էր ուղղակի «անգարիա» և որի պարտականությունն էր պարտադիր աշխատանքներ կատարել տվյալ զորական միավորի համար։

Պարտադիր աշխատանք է կիրառվել նաև X դ. Ախթամարի վանքի կառուցման վրա։ Այդ մասին ընդարձակ նկարագրություններ են պահված Թովմա Արծրունու մոտ, ուր և հիշատակվում է արհեստավորների մասնակցությունը[2]։

Բացի այդ կոռային աշխատանքից՝ արհեստավորները հարկատու էին նաև պետությանը։ Մենք այստեղ կբերենք Բյուզանդական կառավարության կողմից փոխարքա նշանակված Բագրատ Վխկացու թողած արձանագրության այն մասը, որը վերաբերում է առևտրական մի շարք հարկերի թեթևացման. «Եւ դինեւոր Անեցի, եթէ սայլով, եթէ գրաստով ազատ է։ Եւ Անեցի, որ իւրենն մորթելիք գնէ, բաժն ազատ է։ Եւ շալակաւոր Անեցի յամէն ցեղ բաժին կէան ազատ

---

1 Վխմական տարեգիր, էջ 27։
2 Թ. Արծրունի, էջ 478—479։

է»։ Ապա վերջում ավելացնում է. «Եւ ի նստոին կարէէն Ո. դրամն ազատ է»[1]։

Այս արձանագրության վերջին նախադասությունից կարելի է ենթադրել, որ այն տարածված պետք է լիներ նաև արհեստավորության վրա, որովհետև «նստոին» բառը ցույց է տալիս նստակյաց մի որևէ աշխատանք կատարելը՝ կապված տեղի հետ, լինի այդ առևտրական թե արհեստավոր։

Ալվանի 1285 և 1287 թթ. արձանագրություններից երևում է, որ հարկից ազատված են եղել ո՛չ միայն Ալվանի այգիները, այլև ջուլհականոցը, որ դրանից առաջ երևի հարկ էին տվել հորակտավով[2]։

XIII դարի պատմիչ Կ. Գանձակեցին, խոսելով մոնղոլների վարած հարկային քաղաքականության մասին, նշում է, որ արհեստավորները ևս հարկադրման են ենթարկվել պետության կողմից. «...Այլ և զամենայն արուեստագէտս, եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին։ Այլ և զծովակս, և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս, զդարբինս, և զշապարաս, և զի՞ պիտոյ է մանրամասնաբար ասել, զամենայն դուռն շահից հատից ի մարդկանէ»[3]։ Ինչպես տեսնում ենք, հարկատու են դառնում ո՛չ միայն քաղաքի, այլև գյուղի արհեստավորները։

Արհեստավորների և վաճառականների հարկատվության մասին Մ. Գոշը իր «Դատաստանագրքում» գրում է. «Այլ թէ բնակիչն ընդ արուեստի և կամ ընդ վաճառի հարկիցին»[4]։ «Դատաստանագրքում» կան արժեքավոր փաստեր նաև արհեստավորների իրավունքների և պարտականությունների մասին.

«Արուեստաւորք ամենայն ըստ որում և իցեն արուեստի, եթէ հատուածով գործիցեն և եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեառն գործիցեն, այլև զնիւթն ապականիցեն, դատաստանաւ է ըստ հաճոյից նոցա առնել դարձեալ, կամ զապականեալն ի զնոյն ըստ արժանաւոյն լնուլ և ապա լիովին հասանել վարձու։ Ապա թէ ոչ պակասեալ ի վարձէ ըստ արժանւոյն, որպէս տեսանին դատաւորք, արասցին»[1]։

«Դատաստանագրքի» այս կանոնը ցույց է տալիս արհեստավորական դասի հարաբերությունը պատվիրատուի հետ (լինի նա առևտրական թե ֆեոդալական դասից)։ Արհեստավորները պատասխանատու էին պատվիրած ապրանքի որակի և քանակի կամ մեծության համար, հակառակ դեպքում, անտարբեր վերաբերվողները և կամ չարամտորեն յուրացում կատարողներն ու փչացնողները ենթարկվում էին դատական պատասխանատվության։ Այստեղից էլ իմանում ենք, որ արհեստավորներն աշխատում էին թե՛ «հատավարձով» և թե՛ «վարձով»։ Աշխատանքի այդ ձևերը, անշուշտ, նպաստում էին աշխատանքի ինտենսիվացմանը։ «Վարձով» աշխատանք կատարելը, մեզ թվում է, պետք է հասկանալ նաև այն, որ որոշ խավի արհեստավորները, ինչպես միշտ, աշխատել են ո՛չ իրենց սեփական արհեստանոցում, այլ եղել են օրավարձով աշխատողներ, որոնք դարձյալ պատասխանատու էին իրենց հանձնարարված պատվերի որակի, և ժամանակին ուղարկելու համար։

Արհեստավորը թեպետ իր ապրանքի ազատ վաճառողն էր և ձեռք էր բերել անկախություն, սակայն փաստերն ասում են, որ ֆեոդալ իշխանների ու վաշխառուների կողմից նա հաճախ ենթարկվել է հարկադրման, շահագործման։ Այսպիսի պայմաններում արհեստավորությունը պետք է որ իր շահերը պաշտպանելու համար միջոցներ ձեռնարկեր՝ կազմակերպեր համքարություններ և հանդես գար միացյալ ուժերով։ Այս ճանապարհով է ընթացել թե՛ Եվրոպայի և թե՛

1 Վիմական տարեգիրք, էջ 27։

2 Կ. Ղաֆադարյան, Ալվանի երկլեզվյան ձեռագիրը արձանագրություն, Երևան, 1946, էջ 18—20։

3 Կ. Գանձակեցի, էջ 349։

4 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 314։

1 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 436։

Արևելքի քաղաքների արհեստավորության զարգացումը։ «Միացյալ ավազակային ազնվականության դեմ միավորվելու անհրաժեշտությունը, շուկայական ընդհանուր շենքերի կարիքն այն դարաշրջանում, երբ արդյունագործողը եղել է միաժամանակ և վաճառորդ, դեպի ծաղկող քաղաքները ներհոսող փախստական ճորտերի կոնկուրենցիայի աճը, ամբողջ երկրի ֆեոդալական հասարակարգը, այս ամենը ծնեցին համքարություններ»[1]։

Անհավանական չէ, որ X—XIV դարերում համքարություն եղած լինի նաև Հայաստանի գլխավոր քաղաքներում. սակայն մի հանգամանք չպետք է մոռանալ, այն, որ Հայաստանի արհեստավորական կազմակերպության հարատևությանը և լիակատար ձևակերպմանը զգալի չափով խանգարել են երկրի վրա տեղի ունեցող հաճախակի արշավանքները։ Հայաստանի մանավանդ արհեստավորական դասը ենթակա է եղել անընդհատ և բռնի տեղահանման, գերեվարման և արտագաղթի՝ դեպի հարևան երկրները։

Հայաստանը տնտեսական ու կուլտուրական սերտ կապեր ուներ հարևան և հեռավոր այնպիսի երկրների հետ, որտեղ այդ դարերում արդեն կային համքարություններ. օրինակ՝ Պարսկաստանում և Միջին Ասիայում գոյություն են ունեցել արհեստավորական կազմակերպություններ IX—X դարերում, և Հայաստանը հազիվ թե բացառություն կազմեր, քանի որ մոնղոլների տիրապետության ժամանակ նա հանդիսանում էր այդ երկրների միջև տեղի ունեցող առևտրական հարաբերությունների հանգուցակետը, գտնվում էր միևնույն տիրապետության ներքո։ Հայաստանը մինչ այդ էլ առևտրական հարաբերության մեջ էր Պարսկաստանի, Միջին Ասիայի և Բյուզանդիայի հետ։ Սակայն, տեսականորեն կամ համեմատական եղանակով նման ենթադրություններ անելը բավական չէ, անհրաժեշտ է ցույց տալ իրական փաստերով, այն է՝ մատենագրական կամ նյութական կուլտուրայի մնացորդների մեզ հասած տվյալներով։ Պրոֆ. Ա. Յակուբովսկին Սարայ-Բերքեի մասին խոսելիս, գրում է, որ Ղրիմից և այլ վայրերից այնտեղ գաղթել են արհեստավորներ։ Սարայից հանված նյութական կուլտուրայի մնացորդները ևս հաստատում են Հայաստանի ու Միջին Ասիայի քաղաքների առևտրական կապը և հայ արհեստավորության առկայությունն այնտեղ։ Շուկայի համար արտադրված իրերի նմանությունը նկատվում է ո՛չ միայն կերամիկայի, այլև մետաղե իրերի վրա։ Սարայում գտնված մի կավե բեկորի վրա արաբերեն տառերով պարզ գրված է հայ վարպետի անունը՝ «Սարգիս»։

Ավելին. Միջին Ասիայում կառուցված շենքերի և իրերի վրա նկատվում են արհեստավոր վարպետների նույն այն նշանները, որոնցից կան նաև Հայաստանում։

Փոքր Ասիայի ցեխային կազմակերպությունների վերաբերյալ նույնպես կան բազմաթիվ հիշատակություններ։

XIV դարի արաբ պատմիչ Իբն-Բատուտան գրում է. «Պարսկաստանի հարավարևմտյան մասի խոշոր քաղաքներից Սպահանում և Շիրազում, ինչպես և Փոքր Ասիայի քաղաքներում տվյալ բնագավառի արհեստավորներն ընդգրկված են եղել համապատասխան կազմակերպությունների մեջ, նրանք ունեցել են իրենց գլխավորը, որը կոչվում է «քելու»։ Այդ կազմակերպությունների հատկանշական գծերից մեկն այն է, որ նրանք հյուրասիրություն են ցույց տալիս ճանապարհորդներին»։

Փոքր Ասիայում արաբ պատմիչը ծանոթացել է երիտասարդ արհեստավորների հետ, որոնք կոչվում էին «ախիա», որ նշանակում է եղբայրներ, երիտասարդ մարդիկ. դրանք զանազան արհեստների ենթավարպետներ էին։ Այս եղբայրությունները, թևպետ իրենց հիմքում ունեին արտադրական բնույթ, սակայն շատ հեռու էին գնացել ի-

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, IV, էջ 14—15.

րենց արհեստավորական խնդիրներից, դարձել էին հասարակական ուժ, խառնվում էին քաղաքական կյանքի մեջ և համառ կռիվներ մղում անհաճելի իշխանության դեմ: Նրանց եղբայրության արտաքին հատկանշական գիծն էր՝ բարձր թաղիքե գլխարկը և դոտուց կախված դանակը: Նրանք ունեին իրենց ղեկավար շեյխերը, առանձին դանձարաններ, շենքեր, հատուկ նշաններ, բացի այդ՝ ունեին ընդհանուր սեղան և հավաքվում էին միասին: Ապա պատմիչը նշում է, որ ինքը Անատոլիայում ծանոթացել է կոշկակարների ցեխի շեյխի հետ, որը ղեկավարում է 200 արհեստավորի աշխատանք: Սվազում հանդիպել է Ալֆատա ախի պիչակի (դանակ պատրաստողների) ցեխի մարդկանց, Լոտիկի քաղաքում՝ զենքեր պատրաստող ցեխի արհեստավորներին[1]:

Եվրոպացի ճանապարհորդներից Շարդենը 1672 թ., խոսելով Պարսկաստանի համքարային միությունների մասին, հիշում է նաև էջմիածնի զանգակատան վրա գրված արձանագրությունը, ըստ որի Թիֆլիսի արհեստավորները, համախմբված համքարության մեջ, պարտավորված են եղել էջմիածնին մոմ տալ տարեկան ամեն մի դուքանից (խանութից) մի չարեք (մի քառորդ), որի փոխարեն միաբանությունը իր հերթին պարտավոր էր ամեն տարի նավակատիկի օրը հիշել նրանց՝ պատարագի ժամանակ[2]:

Ս. Եղիազարովը ուսումնասիրել է նաև Երևանի, Կարսի և այլ քաղաքների արհեստավորական կազմակերպությունների կյանքը XVIII—XIX դարերում[3]:

Չնայած Եղիազարովի փաստերը վերաբերում են XVIII—XIX դարերի արհեստավորության կյանքին, սակայն դրանք մեզ հնարավորություն են տալիս այդ միավորությունների սկզբնավորումը տանել ավելի առաջ, քանի որ հիշյալ դարերում արհեստավորական կազմակերպությունները երևան են գալիս իբրև կատարելապես կազմակերպված, որոշ կանոնադրությամբ առաջնորդվող միություններ, իսկ այդ վիճակին հասնելու համար անհրաժեշտ էր երկար ժամանակի փորձառություն: Ամենայն հավանականությամբ համքարությունները Հայաստանում ձևակերպվել են Բագրատունիների շրջանում:

Անդրկովկասում համքարային կազմակերպությունների հնության մասին մեզ տեղեկացնում է ակադեմիկ Ն. Մառը, որը, խոսելով Կովկասի և Հայաստանի արհեստավորության մասին, գտնում է, թե արհեստավորները հաջորդել են իրար ժառանգաբար, կիրառել են ընտրական սկզբունքը, ունեցել են արհեստակցական եղբայրություններ, որոնք և հետագայում վեր են ածվել համքարությունների[1]:

Եղիազարովը, խոսելով XIX դարի էվոլյուցիայի մասին, գտնում է, որ այդ կազմակերպության արմատները գալիս են ավելի հին շրջանից՝ XIII—XIV դարերից: Նա միաժամանակ օրինակ է բերում, թե ինչպես Արևմտյան Եվրոպայում, 1253 թ. էտտիենն Բուալոյի ժողովում հավաքված էին Փարիզի արհեստավորները, որոնք խոսում էին իրենց ցեխային կազմակերպությունների հնության մասին, չնայած մինչ այդ նրանք չեն ունեցել գրավոր կանոնադրություն: Նույն ձևով էլ Արևելքում համքարությունները ղեկավարվել են սովորություններով և գրավոր կանոնադրություն չեն ունեցել իրենց կազմակերպության համար[2]: Անշուշտ, նույն վիճակում են գտնվել համքարությունները նաև մեզ մոտ:

Մեր հին բանաստեղծներից Շանշյանը, Մարանգյուզյանը և ուրիշները, որոնք զբաղ-

---

[1] А. Ю. Якубовский, К вопросу о происхождении ремесленной промышленности Сараберке. Ленинград, 1931 էջ 21—23.

[2] Հ. Եպ. Շահխաթունյան, Ստորագրություն կաթողիկէ էջմիածնի, հատ. I, էջ 40:

[3] С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказьи, ч II, Городские цехи, Казань, 1891.

[1] Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения. Петроград, 1915, էջ 16—17.

[2] «Մշակ» օրաթերթ, 1890, № 95:

վել են Անդրկովկասի, ինչպես նաև Հայաստանի էնաֆուլյան խնդրով և նյութեր են հավաքել մեծ մասամբ վերջին դարերի վերաբերյալ, գտնում են, որ այդ կազմակերպությունների գոյությունը դալիս է հնից։

Ակադ. Մանանդյանը իր «О торговле и городах Армении» աշխատության մեջ, խոսելով արհեստավորական կազմակերպությունների մասին, գրում է. «Արհեստավորների միությունները գոյություն են ունեցել Բագրատունիների շրջանի թե՛ Բյուզանդական կայսրության և թե՛ խալիֆայության ենթակա քաղաքներում»[1]։

Ինչպես միջնադարյան քաղաքների պատմությունից հայտնի է, արհեստավորական և առևտրական ցեխերը թե՛ Բյուզանդիայում և թե՛ եվրոպական քաղաքներում, ըստ իրենց արհեստների տեսակների, տեղավորված էին առանձին թաղամասերում և նրանց համար պետության կողմից սահմանված էր որոշ կարգ ու կանոն։

Ֆ. Ուսպենսկին իր «История Византийской империи» աշխատության մեջ հիշատակում է մի կանոնագիրք, ուր, ի միջի այլոց, խոսվում է նաև 27 ցեխերի մասին։ Այդ կանոնադրությունը պատկանում է X դարին և տալիս է մանրամասն տեղեկություններ Բյուզանդական ցեխերի կոլեգիաների մասին, ծանոթացնում է նրանց իրավունքների ու պետության հանդեպ ունեցած պարտավորությունների հետ։ Կանոնադրության մեջ հիշվում են նաև ցեխերի ավագներն ու նրանց պարտականությունները։ Այդ կոլեգիայի կանոնադրությունը, որ բաղկացած է 26 պարագրաֆից, իր մեջ ամփոփում է առևտրական և արհեստավորական ցեխերի ներքին կանոններն ու իրավունքները։ Այս նույն երևույթը գոյություն է ունեցել արևելյան երկրներում՝ Պարսկաստանում, Միջին Ասիայում, անշուշտ, նաև Հայաստանի մի շարք քաղաքներում։

Երզնկայում XII—XIV դարերում եղել են եղբայրական կազմակերպություններ, որոնք ունեցել են իրենց՝ «Սահմանք և կանոնք միաբանության եղբայրաց...»։

Ինչպես պատմական փաստերը ցույց են տալիս, XII—XIV դարերում Հայաստանի քաղաքների մեջ Երզնկան միջազգային առևտրի կարևորագույն հանգուցակետ էր և արհեստավորական կենտրոն։ Երզնկայի լավագույն բեհեզների ու կարգավորված շուկաների մասին վկայում է եվրոպացի ճանապարհորդ Մարկո Պոլոն։ Այդ քաղաքի մասին ունի հիշատակություն նաև Իբն-Բատուտան և իսպանական ճանապարհորդ Կլավիխոն։ Ինչքան էլ տվյալները սուղ լինեն, բավական է միայն Անիի և մյուս քաղաքների արհեստավորական թաղամասերի գոյությունը, Երզնկայի վերոհիշյալ կանոնագիրը և, վերջապես, Մ. Գոշի առակներում հիշատակված տարբեր արհեստավորների միջև եղած վեճերը՝ հաստատելու, որ Հայաստանի քաղաքներում X դարից սկսած գոյություն են ունեցել արհեստավորական կազմակերպություններ։

Արհեստավորական և առևտրական թաղամասերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են տալիս XII—XIV դդ. նվիրատվական արձանագրությունները, որոնցից պարզվում է, որ Հայաստանում, իրոք, արհեստավորներն ունեցել են իրենց հատուկ թաղամասերը։ Անիում Շապադինի թողած մի արձանագրության մեջ հիշվում է «Դտակկարոցի» թաղը[1]։

Արջո-Առիճի անթվական մի արձանագրություն նշում է. «փոլկարարոց» և «սարաճփոլոց» թաղերը[2]։

Բագնայրի մի նույնպես անթվական արձանագրության մեջ հիշվում է «նալալնդնոց» փողոցը[3]։

XIII դարի մի շարք վիմական արձանագրություններում հանդիպում են «կաւշկակա-

---

1 А. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1930, էջ 165.

1 Վիմական տարեգիրք, էջ 169։
2 Նույն տեղում, էջ 223։
3 Նույն տեղում, էջ 78։

րոց», «դարբնոփողոց», «կաւատնոց», «բազզնոց» և նման տերմիններ[1]։

Այս բոլորից պարզվում է, որ Հայաստանում կենտրոնական քաղաքներում արհեստավորները, դրանց հետ միասին նաև առևտրականները, կենտրոնացած են եղել առանձին թաղամասերում։ Վերև հիշատակված թաղամասերից յոթն արհեստավորական են, իսկ մեկը (բազզնոց)՝ առևտրական։ Անտարակույս, այս թաղամասերի գոյությունը սերտորեն կապված է համքարային կազմակերպությունների հետ, որոնք պահպանվել են մինչև XVIII—XIX դարերը։ Այս առթիվ Ս. Եղիազարովը հիշում է Թիֆլիսի Հավլաբարի փողոցներից «Շիլաչի» թաղը, նույն անունով է կոչվում նաև Երևանի թաղերից մեկը, ուր կենտրոնացած են եղել ներկարարները։ Անիի մի ուրիշ արձանագրության մեջ հիշվում է, որ բամբակի և քաթանի առևտրի համար իշխանության կողմից որոշված է եղել հատուկ վայրեր և այդ օրենքին պարտավոր են եղել ենթարկվել այդ գործով զբաղվող բոլոր առևտրականները։ Պեղումների ժամանակ այս նույն շրջանից հայտնաբերվել են մի շարք արհեստավորական և առևտրական շենքերի, խանութների մնացորդներ։

Հայաստանում արհեստավորական թաղամասեր են ունեցել գրեթե բոլոր գլխավոր քաղաքները, ինչպես՝ Դվինը, Անին, Կարինը, Խլաթը, Վանը, Կարսը, Երևանը և այլն. առանձին համքարությունները համապատասխան թաղամասերում շարունակել են իրենց գոյությունը մինչև XX դարի առաջին տասնամյակը, ունենալով նույնիսկ իրենց հատուկ կանոնները[2]։

Ղրիմում 1607 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում քաղաքի գովքն անելիս նկարագրվում են արհեստավորական և առևտրական թաղամասերն ու նրանց տեսակները։ Գրիչը, ինչպես երևում է, մեծ ափսոսանքով է հիշում անցյալը.

Աւերեցին և քանդեցին
Զայն շէն բոլոր ըզքաղաքնին,
Երեք անգամ կողոպտեցին
Մինչ ճառաքաղըս ասրին...
Կայր պեզաստան մինն գմբէթի.
Բազում խանութք ի յիւր միջին
Շատ դուվաթորք նստեալ կարգի.
Ծախեն քրթան եւ քեսայի։
Գըտակկարնոցն ի յիւր քովի
Կարեն ոսկով արախճընի.
Եւ վարպետայք խանութք ի լի։
Մէջն էր դումաշ ու չուխանի։
Ոսկերչնոցն էր գովելի,
Շամայ սպահի պազար նմանի
Կայր շատրուան մի ի միջի
Եւ վարպետայք խանութք ի լի։
Ելնէր աղէկ թաս ու թափսի
Վարպետարան մեծ կըղպաքնի
ԵՒ գոյնզգոյն սախտիաննի
Եւ այլ բաներ զարմանալի։
Զոր մէկն ասեմ զմութախնին.
Զսանիաթ-քարքն և զարուեստին,
Սիրտս կայրի և կըսկըծի[1]։

Թեև այս հիշատակարանը վերաբերվում է XVII դարի սկզբին, սակայն փաստերը ցույց են տալիս, որ սելջուկյան և ապա մոնղոլական տիրապետության վերջին շրջանում Հայաստանի քաղաքային կյանքի անկման հետ միասին, արհեստավորներն ու առևտրականները գաղթելով Ղրիմ, Միջին Ասիա և այլ վայրեր, իրենց հետ տարել են հայկական կուլտուրան, արհեստն ու արվեստը՝ հարմարեցնելով այն նոր ապրած միջավայրին. դրա համար էլ դառնացած և մեծ ափսոսանքով են հիշում անցյալը։

Արհեստավորական կազմակերպությունների հարցի հետ սերտորեն կապված է նաև առևտրա-դրամական հիմնարկների գոյության խնդիրը։ Սրանց, ինչպես և մյուս վարչական մարմինների գոյության արմատները

---

1 Վիմական տարեգրեր, էջ 93—241, 54, 49։

2 Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., էջ 140—146։

1 ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարան, ձեռագիր № 2672, էջ 400ա։

ևս գալիս են հնից։ Վիմական արձանագրությունների մեջ բազմիցս հիշվում են «գազմաչինները», որոնք հավաքում էին առևտրական մաքսը։ Եղել են չափ ու կշիռների և շուկայի հսկիչներ, կամ գլխավորներ, որ կոչվել են «մութսիբն, «մուխթարնին»։

Այս հիմնարկի մասին հիշում է Ս. Գունդստաբլը իր «Դատաստանագրքում»[1]։ Այդ նույն օրգանի մասին հիշատակություն կա նաև բյուզանդացի կատապան մագիստրոս Ահարոնի 1045—1054 թթ. թողած արձանագրության մեջ «...Այլ և ի խնդրո իշխանաւորացս խափանեցի եւ զգիւտ երկուց լտերց, զօր տայր մուրսիբն...»[2]։

Վերոհիշյալ հիմնարկի գոյությունը պահպանվել է նույնիսկ XIX դարում։ Երվանդ Շահազիզն իր «Հին Երևան» աշխատության մեջ, խոսելով առևտրի մասին, ասում է. «Առևտրի շուկայի հսկողությունը հանձնված է շուկայապետին և այդ ձևը պահպանվել է Երևանում և Հայաստանի մյուս քաղաքներում XIX դարում, որ կոչվել է «բազարբաշի»[3]։

Եղիազարովը իր գրքում տվել է նաև որոշ տեղեկություններ Երևանի, Լենինականի համքարությունների թվի ու նրանց մեջ ընդգրկված վարպետների, քարգահների ու աշակերտների քանակի մասին։ Նրա ուսումնասիրությունից պարզվում է, որ XVIII դարի և XIX դարի առաջին կեսին Երևանում եղել են 60 տեսակ արհեստների և առևտրականների ներկայացուցիչներ։ Նրանց թիվը հասել է 2329 հոգու, Նախիջևանում՝ 172, Ախալցխայում՝ 1032 հոգի։ Արխիվային տվյալները ցույց են տալիս, որ XIX դարի առաջին կեսին Երևանում գոյություն են ունեցել 38 համքարություն։ Դրանց մեջ վարպետներ՝ 722 հոգի, ենթավարպետներ՝ 692 հոգի, աշակերտներ՝ 667 հոգի, իսկ Լենինականում՝ վարպետներ՝ 750 հոգի, ենթավարպետներ՝ 603, աշակերտներ՝ 780[1]։

Վերոհիշյալ համքարություններն ունեցել են իրենց հատուկ արհեստավորական դրոշակը և հավաքի տեղը։ Երևանում նրանք հավաքվում էին Գեթսեմանի այգում, որտեղ կառուցված էր հատուկ շենք տոն օրերին կերուխում անելու համար։

Վիմական արձանագրություններում և մատենագրական աղբյուրներում կան հիշատակություններ քաղաքների գլխավորների՝ երիցանիների մասին[2]։

Փաստերը հաստատում են, որ քաղաքի այդ «երիցանիների» (գլխավորների) ինստիտուտը գոյություն է ունեցել մեզ զբաղեցնող ժամանակաշրջանում, որի մասին Ա. Եղիազարովը իր աշխատության մեջ գրում է. «Ավագների սիստեմը և վարչական օրգանների իշխանությունը մնում է, ինչպես գոյություն է ունեցել XI—XIV դարերում, միայն անվանական փոփոխությամբ»[3]։

Արհեստավոր վարպետը, որ արհեստանոցի տերն ու տնօրենն էր, ինքը միայնակ չէր կարող արտադրել այն, ինչ որ անհրաժեշտ էր լայն շուկայի պահանջները բավարարելու համար։

X—XIV դարերում Հայաստանի արհեստավորության մեջ իրենց ուրույն տեղը պետք է ունենային ենթավարպետները և աշակերտները։ Այլ կերպ հնարավոր չէ պատկերացնել արհեստագործության այս զարգացած վիճակը, և այդ հատկապես XVII—XVIII դարերում, երբ արհեստների թիվն անհամեմատ մեծանում է։

Հայաստանի կենտրոնական և գլխավոր քաղաքներում գոյություն են ունեցել խոշոր արհեստանոցներ, որտեղ կարող էր աշխա-

---

1 Ս. Գունդստաբլ, Դատաստանագիրք, էջ 63։

2 Վիմական տաբեգիր, էջ 27։

3 Ե. Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 77։

1 С. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказьи, часть II, Городские цехи, Казань, 1891.

2 Ա. Լաստիվերցի, էջ 61, 116, 119։ Սա. Օրբելյան, էջ 384։

3 С. Егиазаров, Городские цехи, Казань, 1891, ներածական, էջ XLI։

տել վերպետը իր քարգահների և աշակերտների հետ։ 1907 թ. Անիում և 1939 թ. Դվինում կատարված պեղումների ժամանակ գտնվել են մեծ քանակությամբ պղնձի և այլ կահկարասիքի, ինչպես և արհեստանոցների մնացորդները, որոնք նշում են նրանց առկայության փաստը։

Մ. Գոշի «Դատաստանագրքում» «հատվածով» և «վառոդով» աշխատելու մասին եղած արտահայտությունը ցույց է տալիս արդեն արհեստավորների աշխատանքի տեսակն արհեստանոցում և վարձատրման ձևը[1]։

Համքարային կազմակերպություններն, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Արևելքում, մեծ մասամբ եղբայրական և կրոնական որոշ սկզբունքներով են կազմակերպվել։ Տվյալ համքարությունը իր անդամի առօրյա կյանքին, դժբախտությանն ու ուրախությանը մասնակից է. արհեստավորները ցույց են տալիս իրար փոխադարձ օգնություն։ Այսպիսի հարաբերություն պետք է որ գոյություն ունեցած լիներ նաև մեզ մոտ։

«Չի կարասցեն զարուեստակիցս ի տագնապէս ապրեցուցանել։ Եթէ արուեստագէտք առ արուեստակիցսն այնչափ խնամակալութիւն ցուցանեն։ Ժողովէին մաքսատրքն առ արուեստակիցն»[2]։

Արհեստավորական կազմակերպությունների հարցը քննելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրանց ներքին կարգերին՝ կանոններին։ Համքարությունները ունեցել են իրենց համայնական կարգերը, նրանց ներքին վեճերը լուծվել են արհեստավորական առանձին խորհուրդներում։

Մխիթար Գոշը իր մի շարք առակներում հանդես է բերում տարբեր արհեստավորների մեջ գոյություն ունեցող վեճերը, օրինակ՝ երկաթագործի և պղնձագործի, բրուտի և կտավագործի, դերձակի և ջուլհակի միջև և այլն։

Այդ բոլոր վեճերը ոչ այլ ինչ են, բայց եթե կազմակերպված տարբեր ցեխերի վեճեր միմյանց դեմ, որ իր ժամանակ Մխիթար Գոշը ենթարկել է քննադատության։ Նա իր առակներից մեկում, նկարագրելով տարբեր արհեստներ ունեցող արհեստավորների միջև ծագած վեճը, ցույց է տալիս նաև այդ վեճի լուծումը առանձին ատյանի միջոցով։

«Պղնձագործ և երկաթագործ ի խնամենալն՝ արուեստիւ ճոխաբանէին. և ի լինել հակառակութեանն, յատեան եւս երթային ծերոց։ Եւ նոքա մեծարգոյ ցուցին զերկաթագործ ասելով, թէ հասարակաց օգտակարն պատուական է»[1]։

Գոշի այս կարևոր հիշատակությունը ցույց է տալիս, նախ՝ որ պղնձագործի և երկաթագործի վեճը լուծվում է ծերերի առանձին ատյանում, և երկրորդ՝ վեճը լուծվում է հօգուտ այն արհեստավորի, որի արտադրությունն ավելի մեծ օգուտ է տալիս տվյալ միջավայրի և ժամանակի հասարակության ընդարձակ շրջանին։

Եթե այդ ինստիտուտը (ծերերի ատյանը) գոյություն է ունեցել Հայաստանի քաղաքներում, ապա համքարային կազմակերպությունների գոյությունը ևս անհերքելի փաստ է. այլ կերպ չէր էլ կարող լինել։

Կբերենք մի անուղղակի փաստ ևս, որը դարձյալ հաստատում է արհեստավորական համքարային կարգերի հնությունը։

Բանասեր Մարանգյոզյանը, որ զբաղվել է համքարության խնդրով, իր մի հոդվածում, խոսելով Կարինի (Էրզրումի) արհեստավորական համայնական կարգերի մասին, գտնում է, որ այդ կարգերը գալիս են հնուց և, որ այդ հնության մասին ինքը տեղեկություն է ստացել Ախալցխայի ծխատեր քահանա տեր Զորաբաբել Ղոլանջյանից, որը,

---

1 Մ. Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 314։

2 Հայկազյան բառարան, էջ 373։

1 Մ. Գ ո շ, Առակներ, 1951, էջ 122։

Ախալցխայում քահանա եղած ժամանակ, իր ազգական Յայլախանյանցների մոտ եղած մի հին ձեռագրում կարդացել է այն մասին, թե Մուրադ Բեյը (Մուրադ Ա—օսմանյան սուլթան), որ երբեմն ծպտյալ շրջում էր ժողովրդի մեջ, մի անգամ ներկա է գտնվում մի դատավարության, ուր քննվում էր մի թուրք աշակերտի բողոքը հայ վարպետի դեմ՝ իրեն ծեծելու համար։ Վարպետը դատարանում հայտնում է, որ արհեստավորների մեջ գոյություն ունեն համայնական կարգեր և իրենց միջև եղած վեճերը քննվում են համայնական այդ դատարանում և ոչ թե պետական դատական ատյանում։ Սուլթանը այդ դեպքից հետո էնաֆության ավագներ է նշանակում տաճիկ շեյխերից և հրամայում է աջակցություն ցույց տալ էնաֆությանը։

Այս բոլոր փաստերը անվիճելիորեն ապացուցում են համքարական կազմակերպությունների գոյությունը միջնադարյան Հայաստանում։

ԱՐՀԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հայաստանի կենտրոնական քաղաքներում՝ Անիում, Դվինում, Կարսում, Երզնկայում, Երևանում և այլն, ինչպես տեսանք, զարգացած էին արհեստի տարբեր ճյուղերը, որոնք կազմակերպված էին առանձին համքարությունների մեջ։ Սրանք ունեցել են իրենց կանոնագրերը։

Միջնադարյան Հայաստանի X—XIV դարերում կազմակերպված համքարության գրավոր կանոնագրերի բացակայության պատճառով, հնարավոր չէ տալ այդ կազմակերպությունների ներսում եղած ներքին կարգերի, օրենքների ու փոխհարաբերությունների լրիվ պատկերը։ Բացառություն է կազմում Երզնկայի «Եղբայրության» կանոնագիրը, որը պահպանվել է Մատենադարանի № 2329 ձեռագրում[1], և վերաբերում է XIII դարին։ Այդ կանոնագրի մեջ խոսվում է «Եղբայրության» ներքին հարաբերություններին վերաբերող մի շարք կանոնների մասին։ Նույնանման կետեր ունեն ավելի ուշ շրջանի (XVIII—XIX դարեր)՝ Կարինի, Ախալցխայի դարբինների, դաֆաֆների (կոշկակար) և ոսկերիչների կանոնագրերը։

Մատենադարանի № 448 ձեռագրում վիճեղված կանոնագիրը, որ պատկանում է XVIII դարին, բաղկացած է 48 կետից։ Այս կանոնագիրը արժեքավոր է այն տեսակետից, որ նախ՝ վերաբերում է բոլոր արհեստավորներին, նշված են այնպիսի կետեր, որոնք ընդհանուր են բոլորի համար, մյուս կողմից՝ գրիչը հիշատակում է, որ այն կանոնները Հնթում թագավորի ժամանակներից է հասել. սրանով հաստատվում է համքարության կանոնագրերի հնադույն լինելը։

XVIII—XIX դարերի կանոնագրերում կան արդեն մանրամասն տեղեկություններ համքարության ներքին կարգ ու կանոնի, վարպետների, ենթավարպետների ու աշակերտների փոխհարաբերությունների վերաբերյալ։ Այդ կանոնագրերի մեջ իր արտացոլումն է գտել նաև համքարությունների պայքարը իշխող դասի՝ ֆեոդալների, առևտրականների դեմ, շուկայական գների սահմանման և արտադրած ապրանքների վաճառման իրավունքը իրենց ձեռքում պահելու համար։ Ուշ շրջանի համքարական կազմակերպությունների կանոնագրերի առանձին կետերի ուսումնասիրությունը հիմք է տալիս ասելու, որ նույնանման կանոններ կամ «ադաթներ», ինչպես ասում էր ժողովուրդը, եղել են X—XVII դարերում, շատ չնչին տարբերությամբ։ Այդ տեսակետից հիմք կարող է ծառայել մեզ արդեն ծանոթ Երզնկայի Եղբայրական ընկերության կանոնագիրը։

Մի շարք փաստեր հաստատում են, որ ոչ միայն մինչև XVII դարը, այլև ավելի ուշ շրջանում, XVIII—XIX դարերում, գործածական էր «եղբայրություն» անունը, որը համընկնում էր համքարությանը։ «Եղբայրություն» անունը տարածված էր նույնիսկ Հա-

[1] Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը», ԳՄ Տեղեկագիր, 1951, № 12, էջ 76։

յաստանից դուրս։ Փոքր Ասիայի քաղաքներում «ախի» (եղբայր) էին կոչվում նման կազմակերպությունները։ «Եղբայրություն» էր կոչվում նաև Վրաստանում[1] դեռևս X—XII դարերում վանքերի շրջապատում արհեստով զբաղվողների կազմակերպությունը։

Ինչպես գիտենք, XVIII—XIX դարերում արհեստավորական կազմակերպությունները Արևմտյան Հայաստանում կոչվել են էսնաֆություններ, իսկ Արևելյան Հայաստանում՝ համքարություններ։ Սակայն նրանք իրենց գրավոր կանոնագրերի մեջ շարունակում են պահպանել «Եղբայրություն» անվանումը։

Անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի փաստեր XVIII—XIX դարերի դարբինների, կոշկակարների և ոսկերիչների գրավոր կանոնագրերից։

Կարինի դարբինների կողմից գրված կանոնագրերում կարդում ենք հետևյալը. «Այս յարգելի գանձապետ եղբայրն մեր կատարեալ ջանադրությամբ ամենայն հոգածությամբ և ճշմարիտ հաւատարմությամբ պարտական է մուխայէթ լինել և մեր քեօշէի էսնաֆի բոլոր ծախած ապրանքին...»[2], իսկ «Օրհնության թղթի» մեջ, որ վերաբերում է «զաֆաֆների» (կոշկակարների) տարբեր ճյուղերը ընդգրկող կազմակերպությանը, հիշատակվում է՝ «Քաղաքիս մերում գտնվարեալ համայն քրիստոնեայ հաւատացեալ էսնաֆ եղբարցն մերո զկնի այնոցիկ մերս զաֆաֆ, խասչարխճի և էսկիճի էսնաֆիս՝ վարպետապետս յարգելի անձանց, վարպետաց ուստարաշի և իկիտրաշի եղբարց և ժրաջան գանձապետաց և համայն մեծ և փոքր նորաբողբոջ խալիֆայից...», կամ թե՝ նույն կանոնագրի մեջ ասվում է՝ «գիտե՞ք սիրելի հարք և եղբարք խալֆաներ, թէ ինչու եմք եկեալ յայս տանս մէջն և յայս յօդաիս եմք եկեալ նստեալ եմք»[3]։

Ինչպես տեսնում ենք, արհեստավորական կազմակերպությունների «եղբայրություն» անվանումը և զանազան նորմաները շարունակվել են գոյություն ունենալ նաև XVIII—XIX դարերի կանոնագրերի մեջ։ Մեր կարծիքով, որ մենք X—XVI դարերից չունենք (բացի Երզնկայից) եղբայրական կազմակերպությունների վերաբերյալ կանոնագրեր, պատճառն այն է, որ ֆեոդալիզմի վերելքի շրջանում (X—XIII դարեր), նոր կազմակերպված արհեստավորական «եղբայրությունները» ի վիճակի չէին ուժեղ պայքար տանել ֆեոդալների ու վաշխառուական կապիտալի դեմ, իրենց իրավունքը ամրապնդելու և քաղաքական կշիռը բարձրացնելու համար, այն, ինչ որ նրանք կարողացան կատարել միայն հետագայում՝ XVIII—XIX դարերում։

Երզնկայի «Եղբայրության» կանոնագրի մեջ էլ, պետք է ասել, չեն արտացոլվել համքարության վերաբերյալ մի շարք կարևոր փաստեր, հատկապես վարպետների, ենթավարպետների ու աշակերտների փոխհարաբերության ու նրանց պարտավորությունների հարցը։ Այդ կանոնագրի վրա նկատելի է նաև կրոնական ազդեցությունը, որը անշուշտ ունի իր պատճառը։ Միջնադարյան Հայաստանի համքարության կարգ ու կանոնները պահպանվել են՝ ավանդաբար անցնելով մի վարպետից մյուսին. բացի այդ, հայտնի է, որ թուրքմենական ցեղերի պարբերական հարձակումների և պարսկա-օսմանյան պատերազմների շնորհիվ քայքայվում էին Հայաստանի քաղաքները, իսկ արհեստավորությունը թողնում էր հայրենիքը և գաղթում դեպի Միջին Ասիա, Պարսկաստան, Ղրիմ, Լեհաստան և այլ վայրեր։ Այդ հանգամանքը բնականաբար առաջ է բերում արհեստավորական ընկերությունների քայքայում կամ լավագույն դեպքում թուլացում, որ մեծապես խանգարում էր արհեստագործների կազմակերպություններին՝ դրի առնելու իրենց դարավոր սովորությունները։ Դրան հակառակ, հայ արհեստավորները բուն երկրից դուրս էլ շարունակում են

---

[1] Вл. Гордлевский, Из жизни цехов... Записки Коллегии Востоковедов, вып. 2, Ленинград, 1927.

[2] С. Егиазаров, Городские цехи, էջ 364.

[3] Նույն տեղում։

պահպանել եղբայրական կազմակերպությունների գոյությունը՝ Լվովում, Ղրիմում, Միջին Ասիայում և Պարսկաստանում։

Հնում հայ արհեստավորական եղբայրությունները ղեկավարվել են ավանդական սովորույթներով ու կանոններով, այդ պարզ երևում են նաև XIX դարի առաջին կիսին պատկանող «Կանոն ոսկերիչ արհեստատրաց»[1] փաստաթղթից։ Սրա XIX դլխում դետեղված կանոնը, որ նվիրված է համքարության խորհրդի համար առանձին շենք ունենալու անհրաժեշտությանը, ուր պետք է պահպանվեին նույնպես ոսկերչական համքարության բոլոր փաստաթղթերն ու դանձարանը, ասում է՝

«Իրենց ժողովի համար անվայել է մի կրպակում կամ բացօթյա և կամ եկեղեցիների առաջ նստել ու վեր կենալ հին ու անվավեր սովորության պես, ինչպես լինում էր սորանից առաջ նախնիքների պարզամտության ժամանակ»։

Այս քաղվածքից պարզվում է, որ XVIII դարից առաջ արհեստագործական կազմակերպություններից շատերը չեն ունեցել համքարության անդամների համար հատուկ շենք իրենց ժողովների գումարման և փաստաթղթեր պահպանելու համար։ Հնում եղբայրությունները հավաքվել են մասնավոր տներում, կրպակներում և երբեմն եկեղեցիների բակերում ու լուծել իրենց առօրյա հարցերն ու վեճերը։

XVIII դարի № 448 ձեռագրում գետեղված «Յաղագս արհեստաւորաց» կանոնագրում, XIX դարի կիսից մեզ հասած ոսկերչական համքարության կանոնագրում և Կարինի դարբինների ու Ախալցխայի կոշկակարների կանոնագրերում գոյություն ունեցող կարևոր կետերից մեկն է արհեստակիցների փոխօգնության հարցը։ XVIII դարի «Յաղագս արհեստաւորաց» կանոնագրի 10 հոդվածը և ոսկերչական կանոնագրի 23 և 29 հոդվածները (որտեղ խոսվում է ննջեցյալի տիրոջը օգնելու և մեռնողի թաղման ծախսերը հոգալու մասին) նման են նրղնկայի եղբայրական կազմակերպության կանոնագրի այն հոդվածին, որտեղ ասվում է՝ «եղբայրների» միմյանց հանդեպ ունեցած պարտավորություններից առաջինն է միասնական ջանքերով օգնել և աղատել այն եղբորը, որը փորձանքի մեջ է ընկնում և նեղվում է իշխողների կողմից։

Աղքատության մեջ ընկնողին, ըստ իրենց կարողության, պարտավոր են օգնել բոլոր եղբայրները, հիվանդին պարտավոր են մխիթարել այցելությամբ, դեղով, բժշկով, հանգուցյալի թաղմանը նույնպես պիտի մասնակցեն բոլորը[1]։ Մի ուրիշ տեղ հիշվում է՝ «Ներկող ոմն մեռաւ, և եկեալ արուեստակիցքն նորա բացին զտապանն»[2]։ Իսկ մի այլ տեղ՝ «Չի կարասցեն զարուեստակիցան ի տագնապէն ապրեցուցանել։ Եթէ արուեստագէտք առ արուեստակիցան այնչափ խնամակալուի ցուցանեն։ Ժողովէին մաքսաւորքն առ արուեստակիցն»[3]։

Այդ մեջբերումները հաստատում են, որ արհեստակիցների մեջ շատ ուժեղ են եղել փոխադարձաբար իրար օգնելու պարտավորությունները։

Ինչպես հնում, այնպես էլ XVIII—XIX դարերի կանոնագրքերում կան հատուկ հոդվածներ արվեստակիցների իրար հարգելու և խաղաղասեր լինելու մասին։ Նույնը մենք գրտնում ենք Երզնկայի եղբայրական կազմակերպության կանոնագրի մեջ, որտեղ ասվում է՝ «Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել և զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին և յիմաստութենէն շահեսցին՝ առանց հակառա-

---

1 Այս կանոնագիրը բաղկացած է 34 հոդվածից, «Լումա» 1898, Տփխիս, գիրք Ա։

1 Լ. Խաչիկյան, 1280 թվականին Նրղնկայում կազմակերպված «եղբայրությունը», էջ 77, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1951, № 12։

2 Հայկազյան բառարան, Վենետիկ, 1836, էջ 373։

3 Նույն տեղում։

կութեան»[1]: Կան նաև կեղծիք ու գողություն կատարող արհեստավորներին պատժի ենթարկելու և տուգանելու համար մշակված առանձին կետեր, որոնք ղետեղված են առանձին հոդվածներում:

Համքարություններից յուրաքանչյուրն ուներ իրեն հովանավորողը: Այդ մասին կանոնագրքի մեջ արված են հատուկ նշումներ: Այդ նշումներից պարզվում է, որ ատաղձագործների «նախահայրը» համարվել է Հովսեփը, կաշեգործներինը՝ Սիմեոն Ծերունին, դարբիններինը՝ Դավիթ Մարգարեն, կոշկակարներինը՝ Եղիա Մարգարեն և այլն:

Ինչպես փաստերը հաստատում են, միջնադարյան Հայաստանի քաղաքներում կազմակերպված համքարությունների սովորութային կանոնների ասույթները ըստ էության համապատասխանում են XVIII—XIX դդ. կանոնագրերի հիմնական կետերին:

XVIII—XIX դարերին պատկանող կանոնագրերում եղած հիմնական կետերից պարզվեց, որ բոլոր արհեստավորների մոտ համքարության ներքին կյանքի կարգ ու կանոնի հիմնական նպատակն ու սկզբունքը նույնն է եղել, սակայն յուրաքանչյուր արհեստավորական կազմակերպություն, հենելով իր արհեստի բնույթից, ունեցել է որոշ առանձնահատկություն, օրինակ՝ աշակերտ ընդունելու հարցում: Աշակերտի վարժվելու ժամանակամիջոցը, անշուշտ, կախված էր արհեստի դժվարությունից. միատեսակ ժամանակամիջոց չէր կարելի սահմանվել դարբնի և ոսկերիչի աշակերտների վարժության համար. քանի որ ոսկերչության տեխնիկան ավելի բարդ էր, ուստի պահանջվում էր ավելի երկար ժամանակ և ավելի շատ համառություն, այդ էր պատճառը, որ աշակերտների սովորելու ժամանակը, միջին հաշվով, սահմանված էր 2—6 տարի:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ «Կանոն ոսկերիչ արհեստատրաց»-ի և Կարինի ու Ախալցխայի համքարների կանոնագրերի կետերի մասին նշել հետևյալը:

Ոսկերչական համքարության կառավարությունը բաղկացած էր չորս ներկայացուցիչներից, որոնցից մեկը կոչվում էր ուստաբաշի, իսկ երեքը համարվում էին նրա խորհրդատուները, որ ընտրվում էին մեկ տարով: Ընտրված ղեկավարները պետք է երդում տային ավետարանին: Այդ ղեկավար ներկայացուցիչները միմյանց հետ պետք է վարվեին հարգանքով և լինեին իրար հավատարիմ, նրանք ունեին իրենց դանձապետը:

Համքարության մեջ ընդգրկված արհեստավորները աշակերտ ընդունելիս պետք է անպայման իրազեկ դարձնեին չորս գլխավոր կառավարիչներին: Ընդունված աշակերտը պարտադիր կերպով պետք է մնար մեկի մոտ մինչև վարպետ օրհնվելը և ուրիշ վարպետներ իրավունք չունեին հանել նրան իր վարպետի մոտից, իսկ եթե աշակերտը ցանկանում էր հեռանալ, չորս գլխավոր կառավարիչները այս դեպքում ևս պետք է տեղյակ լինեին:

Ոսկերիչի մոտ աշակերտը պետք է սովորեր 3—4 տարի՝ նայած նրա ընդունակությանը, երբեմն պատահում էին դեպքեր, որ ժամկետը երկարում էր (դարբնի կամ ուրիշ արհեստավորի մոտ՝ ավելի քիչ ժամանակ էր սահմանված):

Յուրաքանչյուր ոսկերիչ վարպետ պարտավոր էր իր աշակերտին սովորեցնել ու վարժեցնել նախ ծաղկարարության, ծանոթացնել կարկինի և քանոնի հետ, նաև չափերի ու ձևերի ճանաչողության հետ, որովհետև առանց այդ իմանալու ոսկերիչ դառնալը անհնար էր: Իսկ աշակերտը իր հերթին պետք է վերահասու լիներ փորագրությանը, դրվագմանը, չիֆթիշին, հակառակ դեպքում չէր կարող վարպետ օրհնվել:

Աշակերտները, բացի իրենց անմիջական մասնագիտությունը սովորելուց, վարպետի

---

1 Լ. Թաչիկյան, 1280 թվականին երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը», էջ 78:

մոտ կատարում էին նաև տնային ծառայություն[1]։

Աշակերտը վարպետ օրհնվելուց հետո պարգևատրվում էր հետևյալ ձևի վկայականով, որ ոսկերիչների համքարությունից վերցված մի օրինակ է։

«Խորհրդարան պատուելի ժողովոյն ոսկեգործութեան, վերահասու եղեալ կատարելութեան արուեստի (Սարգիս, Օհաննէս և այլն), վստահորոյ ձեռնադրեցաք զքեզ վարպետ, տալով զայս վկայութիւն ի մշտնջենաւոր պարծանաս եւ անուան քոմ»[2]։

Այս վկայագրի համար աշակերտը պարտավոր էր գանձարանին նվիրել մի ընծա։ Ընդհանուր գանձարանի եկամուտները պահվում էին հատուկ արկղի մեջ չորս խորհրդականների հսկողության տակ և կնքվում հատուկ կնիքով, որ մակագրված էր լինում, օրինակ՝ «Կնիք ժողովոյ ոսկերչաց», իսկ կնիքի նշանը մի օձ է՝ գլխին պսակ, որ նշանակում է թե խոհեմությամբ պսակվում է ամեն մի գործ։

Հավաքված գումարի մասին ուսուցաբաշին ամեն տարի տեղյակ էր պահում ժողովականներին, ներկայացնելով ելք ու մուտքի մատյանները, որ հանձնվում էր ժողովի կողմից ընտրված երեք անձնավորության ձեռքով։

Համքարական հարկը, տուգանքները, եկեղեցական շինարարության ծախսերը, հիվանդներին բուժելը, հաշմանդամներին օգնելը, նույնիսկ համքարության անդամի թաղման ծախսերը կատարում էին ընդհանուր գանձարանից, ոսկերիչ արհեստավորին իրավունք էր տրվում նաև փոխարինավար գումար վերցնել գանձարանից։

Ոսկերիչ վարպետները իրար չպետք է խանդարեին։ Եթե պատվիրատուն իր ցանկացած վարպետի մոտ ոսկե իր կամ զարդ է պատրաստել տալիս, ապա տվյալ վարպետը պետք է կատարի պատվերը և շահի մեկ տասերորդը պետք է հանձնի գանձարանին, իսկ եթե ոսկերիչ վարպետը նենգությամբ մաքուր ոսկուն արծաթ խառնի և կամ թանկարժեք ակը փոխարինի հասարակով, հանած կտորից պահի կամ փչացնի, այդ դեպքում նրանից պետք է գանձվի տուգանք կառավարչի կողմից՝ հօգուտ գանձարանի։

Համքարության կառավարիչները, ուսուցաբաշու գլխավորությամբ, շաբաթը երկու օր պետք է լսեն բողոքներ, վեճեր, իսկ անհրաժեշտության դեպքում կարող են մեկ օր ևս ավելացնել, բացի կիրակի օրերից։

Ժողովի անդամները պետք է իրար հարգեն, փոքրերը մեծերին լսեն և խորհուրդ հարցնեն, իսկ մեծերը, իրենց հերթին, սիրեն փոքրերին, չլսողը ժողովի կողմից ենթարկվում է նախատինքի, իսկ եթե կրկնվում է չորս անգամ, նրան հանձնում են պետությանը, որտեղ նա ստանում է իր արժանի պատիժը։

Համքարության ընդհանուր ժողովի համար, որ կոչվում է «Խորհրդարան ժողովոյն ոսկեգործաց», պետք է լինի պատշաճավոր տեղ՝ անհրաժեշտ բոլոր հարմարություններով։ Այստեղ կայանում են ժողովներ, պահվում են կանոնագիրը, տոմարները, դավթարները, դաշինքները, դատաստանի վճիռների թղթերը, մուրհակները և այլն։

Միջնադարյան կանոնագրերից պարզվում է, որ համքարությունների միջև տեղի է ունեցել պայքար, ոչ միայն իրենց ներսում՝ մեկը մյուսի արհեստի նկատմամբ գերիշխանությունը շահելու համար, այլև պայքար ֆեոդալներ-կեղեքիչների և հարուստ վաշխառուների դեմ, որոնք ցանկանում էին ամ-

---

[1] Աշակերտը պարտավոր էր առաջին երկու տարին դրազիվել ածուխ ջարդելով, փուքս փչելով, ածուխը լեհեմից մաքրելու աշխատանքով, դրա հետ մեկտեղ կատարում էր վարպետի տան և շուկայի գործը։ Նա աշխատում էր առավոտից մինչև երեկո։ Աշակերտն Ախալցխայում ստանում էր շաբաթ երեկոյան «թլաշի» 5—10 կոպեկ, ուտել-խմելը, և տրեկան մեկ զույգ կոշիկ՝ վարպետի հաշվին։

Աշակերտի պարտավորությունների մասին մենք տեղեկացել ենք ախալցխացի ոսկերիչ Կարապետ Գրիգորյանի և վանեցի ոսկերիչ Հ. Արիստակեսյանի հուշատետրերից։

[2] «Լումա», կանոն ոսկերիչ արհեստաւորաց, 1898, Տփխիս, դիւք Ա, էջ 328։

բողջ մենաշնորհը պահել իրենց ձեռքը։ Այդ պայքարը եղել է ո՛չ միայն XVIII—XIX դարերի համքարության մեջ, այլև Երզնկայի «Եղբայրության» ժամանակ։ Այդ «Եղբայրության» կանոնագրում կարդում ենք. «Վասն զի, աշխարհս այս ծով է և մարդիկ ալեկոծին ի սմա պէս-պէս պատահմամբ գործոց։ Եթէ ոք յեղբայրութենէս ի փորձութիւն մարդկան անգանիցի և բռնաւորաց նեղիցի, ամենայն եղբայրքն չան եդեալ հանցեն զնա ի հասանել վշտացն... Եւ եթէ ոք յաղքատութիւն անգցի և ի չքաւորութիւն մարմնոյ՝ այլ եղբայրքն, ըստ կարողութեան և ըստ ուժոյ օգնեսցին»[1]։

Դժբախտաբար, այս կանոնագրի մեջ մենք չենք գտնում այնպիսի հարցեր, որոնք ցույց տային, թե եղբայրները իրենց հավաքատեղում ինչ խնդիրներ էին քննում, և կամ ինչ դեր են խաղացել քաղաքի ղեկավարման գործում։

Ինչպես տեսանք, Մ. Գոշի առակներում արտահայտված՝ արհեստավորների միջև եղած վեճերը այնքան են սրվում, որ երբեմն ստիպված էին այդ հարցերը լուծել ծերերի (ավագների) առյանում։

Սակայն համքարության ներսում եղած պայքարը իր ամբողջությամբ հանդես է գալիս XVIII—XIX դարերում, որոնց վերաբերյալ նյութեր կան թե՛ Անդրկովկասից և թե՛ Հայաստանից։ Մենք անհրաժեշտ ենք համարում հիշել Ախալցխայի համքարական կազմակերպությունների ներքին պայքարից մի փաստ։

XIX դարի առաջին կեսերին Ախալցխայում ուժեղ պայքար կար ոսկերչական համքարության անդամների և միջնորդների միջև։ Այդ պայքարը մեծ մասամբ գնում էր հին ու նոր վարպետների և միջնորդների միջև։ Այդ մասին մենք արժեքավոր տեղեկություն ենք քաղել ոսկերիչ Կարապետ Գրիգորյանի արխիվից[1], որի օրով համքարության կանոնների մեջ կատարվել են որոշ փոփոխություններ[2]։

Ոսկերիչ Կարապետը և նրա նման երիտասարդ վարպետները ուժեղ պայքարի մեջ են եղել հին ոսկերիչ վարպետների և միջնորդ առևտրականների հետ։ Ախալցխայի հին ոսկերիչները և մի քանի առևտրականներ (որոնք զբաղվում էին հատկապես ոսկերչական իրերի առևտրով) ոսկերչական արհեստի արտադրանքի ողջ մենաշնորհը վերցրել էին իրենց ձեռքը և շահագործում ու խանգարում էին երիտասարդ վարպետներին, որոնք Ախալցխայում արտադրված ոսկե իրերը վաճառքի էին տանում Թիֆլիս, Հյուսիսային Կովկաս, Ռուսաստան։ Այս ծանր վիճակից դուրս գալու համար 12 երիտասարդ ոսկերիչ վարպետներ, որոնց թվում նաև Կարապետ Գրիգորյանը, համաձայնում են բոլոր դժվարությունները տանել, միայն թե կարողանան ստեղծել համքարության ներսում ներքին կարգ ու կանոն և միասնական դին, իսկ կարգը խանգարողներին ենթարկել խիստ պատասխանատվության։ 6 ամսվա պայքարից հետո երիտասարդ վարպետները հաղթանակով են դուրս գալիս։ Այս հաղթանակից հետո Ախալցխայի ոսկերիչ վարպետները ընտրում են նոր ավագ (ուստաբաշի)՝ Կարապետ Գրիգորյանին։ Սա իր ավագության ժամանակ, համքարության ներսում, կատարում է որոշ փոփոխություններ, որոնցից անհրաժեշտ է նշել հետևյալը. եթե առաջ աշակերտ էին ընդունում 7—8 տարեկան հասակում, համքարության ժողովում այժմ որոշում են՝ ընդունել

---

[1] Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «եղբայրությունը», ԳԱ Տեղեկագիր, 1951, № 12, էջ 77։

[1] Տես Պետ. պատմական թանգարանի արխիվում։

[2] Ախալցխայի համքարային կազմակերպության ներքին կարգ ու կանոնների մասին հաղորդող Կարապետ Գրիգորյանը 51 տարի անընդհատ զբաղվել է ոսկերչական արհեստով և համարվել է Ախալցխայի լավագույն ոսկերիչներից, հայտնի է որպես չիֆթիշիի մասնագետ, նա միաժամանակ, XIX դարի կեսերին, եղել է Ախալցխայի ոսկերիչների համքարության ուստաբաշին և տեղեկություններ է հաղորդում նաև անցյալի և իր ժամանակի համքարության ներսում եղած ներքին պայքարի մասին։

ից աշակերտը պետք է լիներ որոշ չափով դրագետ, իսկ ինքին պետք է լրացներ ինքը՝ վարպետը։ Բացի այդ, ընդառաջելով աշակերտների պահանջին, որոշում են վարպետի հաշվին նրանց համար դնել մեկ ձեռք հագուստ տոն օրերի համար և ազատել նրանց տնային ծառայությունից։ Չնայած այս հարցերը երկար ժամանակ դառնում են վեճի առարկա, սակայն վերջում լուծվում են հօգուտ աշակերտների, կրճատվում է նաև աշակերտների պատրաստման ժամկետը, քանի որ ազատվելով կողմնակի աշխատանքներից, նրանք հնարավորություն ունեին ավելի շատ զբաղվելու մասնագիտությամբ։ Սովորություն է եղել, որ նոր ուստային անպայման ապտակել, կապել գոգնոց, փողոցով շրջեցնել և բարձրաձայն կանչել, թե սա արդեն ուստա է։ Ուստան կարող էր բանալ իր սեփական արհեստանոցը, եթե ուստայության վեց տարին արդեն լրացել էր, հակառակ դեպքում, որպես օրենքը խախտողի, ժողովի չէին հրավիրում և «բառա»՝ բոյկոտի էին ենթարկում. միայն ներողություն խնդրելու դեպքում վերացնում էին «բառան»։ Բոլոր արհեստի համքարները ունեցել են իրենց տոն օրերը։

Ամեն մի համքարը ունեցել է իր ուստաբաշին, իգիթբաշին և գանձապահը։

Այս պաշտոնյաները ընտրվում էին համքարության անդամների ընդհանուր ժողովում։ Եթե համքարության անդամը վատ գործեր էր կատարում, նրան աուգանում էին կամ խանումը փակում, իսկ դերպդուշն պատիժը լինում էր համքարությունից վտարելը և արհեստավորների կողմից մեղավորներին հալածանքի ենթարկելը։

Ինչպես միջնադարում, այնպես էլ XVIII—XIX դարերում, Հայաստանի բոլոր քաղաքներում արհեստավորները ունեցել են իրենց թաղամասերը։ Երևանի կաշեգործները (դաբաղներ), ներկարարները (բոյախաններ), որոնց համար ջուրը շատ անհրաժեշտ էր, իրենց դաբախանաները պատրաստել էին Հրազդան գետի մոտ, իսկ շիլաջիները (կարմիր կտոր ներկողները) աշխատել են քաղաքի ծայրամասում, որը կոչվել է «Շիլաջի մահլա». այդ փողոցը մինչև այսօր էլ պահպանում է իր հին անունը։ Համքարությունները ունեցել են իրենց հատուկ դրոշակները, որից մեր ձեռքն է հասել Լենինականի XIX դարի պղնձագործների դրոշակը։

Վերոհիշյալ վկայությունները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ համքարությունները Հայաստանի բոլոր քաղաքներում կազմակերպվել են միևնույն նպատակով ու նույն սկզբունքներով։ Նրանք գոյություն են ունեցել X դարից և պահպանվել են մինչև XX դարի սկիզբը։ Արդյունաբերական կապիտալիզմի զարգացման հետ միասին աստիճանաբար քայքայվում են նաև համքարային կազմակերպությունները։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ IX—XIII ԴԴ.

1. Դարբնություն
2. Պղնձագործություն
3. Ջինագործություն (սլեհարարություն)
4. Նալբանդություն
5. Փականագործություն (կողպայքարարություն)
6. Ոսկերչություն
7. Արծաթագործություն
8. Ջահրար
9. Կտավագործություն
10. Մետաքսագործություն
11. Բհեզագործություն
12. Գորգագործություն
13. Կապերտագործություն
14. Բաղնիքագործություն
15. Դերձակություն
16. Գպակկարություն
17. Փոլկարություն
18. Հալավարարություն
19. Կատնոց (լայն գգեստ կարող)
20. Մաղմանություն
21. Ասեղնագործություն
22. Ներկարարություն
23. Բրուտագործություն
24. Ապակեգործություն
25. Թամքագործություն
26. Լկամարարություն (սանձի կաշվե մաս պատրաստող)
27. Լարարություն
28. Կաշեգործություն
29. Կոշկակարություն
30. Մորթեգործություն
31. Հյուսանություն
32. Նետրար
33. Քարտաշություն
34. Որմնադրություն
35. Հուլնարարություն
36. Սանրարություն
37. Կազմարար
38. Մոմող
39. Փորագրող
40. Ծաղկող

ԱՐՀԵՍՏՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԿԱՊՎԱԾ ՉԵՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1. Պկաղարիկ (պարկապզուկ փչող)
2. Տոպոպզարիկ (զուռնաչի)
